ԱՆԱՏՈԼԻ ԳՐՈՄԻԿՈ

# ԱՄՆ-ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## ԴԱՍԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. 60-70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

ԱՆԱՏՈԼԻ ԳՐՈՄԻԿՈ

# ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## ԴԱՍԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
## 60—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

1704

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 1981

ԳՄԴ 66.2 (4/8) 7 ԱՄՆ
Գ 921

Խմբ. պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյան

Ռուսերենից թարգմանեց Հ. Հ. ԱՅՎԱԶՅԱՆԸ

**Գրոմիկո Ա. Ա.**

Գ 921 *ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը: Դասեր և իրականություն: 60—70-ական թվականներ.— Եր.: Հայաստան, 1981.— 428 էջ:*

*Մենագրությունում ցույց է տրված ամերիկյան հասարակական կյանքում տարբեր ուժերի պայքարը հատկապես [illegible] Քենեդու և Ջոնսոնի կառավարման ժամանակաշրջանում: Վերլուծված են արտաքին քաղաքական հայեցակարգերի ձևավորման պրոցեսը, համաշխարհային քաղաքականության մի շարք հանգուցային հարցերի վերաբերյալ ամերիկյան վարչակարգի ստրատեգիան և տակտիկան 60—70-ական թվականներին.*

*Նախատեսված է միջազգային հարաբերությունների մասնագետների, գիտական և պրակտիկ աշխատողների, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության պրոբլեմներով հետաքրքրվող ընթերցողների համար:*

Գ $\frac{0204000000}{701\ (01)\ 81}$ 63—81

ԳՄԴ 66.2 (4/8) 7 ԱՄՆ
32 И

© «Международные отношения», 1978
© *Թարգմանված է հայերեն, «Հայաստան» հրատարակչություն, 1981*

## ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆ

Երբ հայ ընթերցողն ուշադրության առնի այս գիրքը, աշխարհը հավանաբար թևակոխած կլինի 80-ական թվականները: Ինչպիսի՞ն կլինեն այդ տարիները: Այդ հարցը չի կարող չհուզել երկրագնդի բոլոր ժողովուրդներին, այդ թվում և սովետական մարդկանց: Եվ այստեղ կցանկանայի արտահայտել, իմ կարծիքով, մի կարևոր միտք: Այդ տարիները միջազգային հարաբերություններում բոլոր մարդկանց համար կարող են դառնալ կամ խաղաղության և լիցքաթափման վերջնական հաստատման տասնամյակ, կամ էլ համաշխարհային քաղաքականության մեջ մեծ վտանգավորության, բարձր լարվածության տարիներ: Համենայն դեպս, ալտերնատիվների մրցավազքը սանձահարելու համար ժամանակը չի սպասում:

Վերը հիշատակված երկու ալտերնատիվները զգալի չափով կախված կլինեն սովետա-ամերիկյան հարաբերությունների վիճակից, այն բանից, թե դրանք ինչպիսի ուղղությամբ կզարգանան: Այս տեսանկյունից սույն աշխատությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

Այսպիսով, երկու հնարավոր պրոցես է սպասվում՝ մեկը դեպի լիցքաթափման ամրապնդումը, բարիդրացիությունը, մյուսը՝ տանում դեպի «սառը պատերազմ», «հոգեբանական պատերազմ», վիճակ, որի դեպքում մեծանում է ռեալ պատերազմի վտանգը: Վերջին ալտերնատիվի դեմ վճռական

պայքար են մղում սոցիալիստական երկրների կառավարությունները։

Եվ այսպես, առկա է երկու պրոցես։ Մեկը, առանց բացառության, բոլոր մարդկանց բարօրության հույսեր է ներշնչում։ Մյուսը՝ իմպերիալիզմի կողմից հսկայական, դժվար գնահատելի համատարած չարիք է տարածում։

Ձեզ առաջարկվող գիրքը, ինչպես ենթադրում է հեղինակը, հույսեր է ներշնչում, որ խաղաղությունը Եվրոպայում, լիցքաթափումը ամբողջ աշխարհում այնուամենայնիվ կպահպանվեն։ Եվ կապիտալիստական աշխարհում, առաջին հերթին Վաշինգտոնում, «աղավնիների» խելամտությունը վերջիվերջո հաղթանակող դուրս կգա «անգղների»՝ բռնության մահաբեր մտածելակերպի նկատմամբ։

70-ական թվականները, որոնց և զգալի չափով նվիրված է այս գիրքը, լավ սկիզբ հանդիսացան լիցքաթափման համար։ Դրանք իսկապես հագեցված էին երկրագնդի բոլոր մասերում իմպերիալիզմի սանձազերծած ագրեսիաների դեմ ամենաակտիվ պայքարով։ Այլ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ գոյություն ունի թիրտ բուրժուական լագերը, և դեռ ավելին, որը կատաղաբար մարտնչում է մարդու կողմից մարդու շահագործման վրա հիմնված իր «իրավունքների» համար։

Ամերիկյան բուրժուազիայի այդ ագրեսիվ թևի ներկայացուցիչների մոտ առկա են նոր եղանակով երգվող հին պատրանքները։ Նրանք, օրինակ, երազում են ամերիկյան ռազմական առավելության վրա կառուցված աշխարհի մասին։ Այդ պատրանքից նրանք չեն ուզում հրաժարվել, քանզի իրականում վախենում են ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ռազմաստրատեգիական հավասարազորությունից, որ հաստատվեց 70-ական թվականներին։ Նման պարիտետի ձգտումը պաշտոնապես ընդունված է ամենաբարձր մակարդակով սովետա-ամերիկյան փաստաթղթերով։

Ստացվում է, որ 70-ական թվականներն ընդհանուր առմամբ հանդիսացան միջազգային լարվածության լիցքաթափման լավ սկիզբ։ Փաստերը խոսում են այն մասին, որ սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների



հյուսվածքը բավական ամրացել է, որոնք վատ չեն զարգանում ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական բնագավառներում։ Է՞լ ավելի կայունացավ մթնոլորտը Եվրոպայում։ Եվ հենց այդ հանգամանքը, ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա զարգացումը, Վաշինգտոնի շատ ստրատեգների սրտովը չէր։

Ինչպես հայտնի է, լավ սկիզբը գործի միայն կեսն է։ Ահա թե ինչու 80-ական թվականները, հավանաբար, կվերածվեն կատաղի պայքարի մարտադաշտի հանուն նրա, որպեսզի ետ մղվեն «անգղների» գրոհները, որոնք ներկայումս ԱՄՆ-ում տառացիորեն կպչել են կառավարական բազկաթոռներից, կոցահարել «աղավնիներին» և միլիտարիստական մոլեգնության ու ավանտյուրիստական ոլորտագծերի մեջ մոռացել են, որքան էլ դա ծիծաղաշարժ չէ, ոչ միայն իրենց սեփական, այլև միլիոնավոր ուրիշ մարդկանց կյանքի իրավունքի մասին։

Գործի մյուս կեսը, կապված լիցքաթափման ամրապնդման հետ, հանգեցնում է նրան, որ այդ պրոցեսն անդառնալի դառնա։ Դա, իհարկե, արտակարգ բարդ խնդիր է, բայց պետք է լուծվի, քանի որ մարդկանց խաղաղ կյանքն ապահովելու համար այլ ելք պարզապես գոյություն չունի։

Անկողմնակալ բոլոր պատմաբանների համար պարզ է, որ արագընթաց լիցքաթափման և միջազգային լարվածության սաստկացման միջև փոխանցավորության ջրբաժան դարձավ Արևմտյան Եվրոպայում միջին հեռավորության ամերիկյան նոր հրթիռամիջուկային միջոցների արտադրության և տեղաբաշխման մասին 1979 թվականի դեկտեմբերին ՆԱՏՕ-ի ընդունած չարագուշակ որոշումը։ Դա որոշում էր ամերիկյան որակապես նոր զենքի մասին և որի ակնհայտ նպատակը ռազմական առավելության հասնելն էր։ ՍՍՀՄ-ը, սոցիալիստական ընկերակցության երկրները դա չէին կարող թույլ տալ։

Դարձյալ վերցնելով «ուժի դիրքերից» քաղաքականության կուրս, ամերիկյան ստրատեգները կայսերական իսկական դողէրոցքի մեջ են ընկել և իրենց ագրեսիվ գործողությունները արդարացնելու համար սկսել են ամենատարբեր առիթներով նոր թափով վախեցնել ԱՄՆ-ի և Արևմտյան

Եվրոպայի քաղաքացիներին «սովետական վտանգի» մասին առասպելով:

Ստեղծված պայմաններում սովետական կառավարությունը ցուցաբերում է լենինյան զսպվածություն և կայունություն: Սովետական Միությունը սոցիալիստական ընկերակցության բոլոր երկրների հետ միասին շարունակում է իրականացնել միջոցառումների լայն ծրագիր այն նպատակով, որպեսզի ինչպես սովետա-ամերիկյան հարաբերություններում, այնպես էլ եվրոպական մասշտաբով ապահովվի միջազգային հարաբերությունների թեքում դեպի «սառը պատերազմի» վտանգույն ժամանակները գլորվելու և սպառազինությունների մրցավազքի դադարեցման հարցի լուծման ուղղությամբ: ԱՄՆ-ի կառավարության, մեղմ ասած, անհեռատես քայլերի հետևանքով, կառավարություն, որում գերակշռում էին Բժեզինսկու տիպի պոլիտիկաները, ամերիկացիներից շատերին երկրի մասսայական ինֆորմացիայի միջոցները կրկին մոլորության մեջ գցեցին: Նրանք համոզում էին, որ միջուկային զենքով մարդկանց ոչնչացումը գրեթե անխուսափելի է: Այս առումով պաշտոնական Վաշինգտոնի ձայնը համընկավ Պենտագոնի ղեկավարների պնդումներին, որ երրորդ համաշխարհային պատերազմը «այնքան էլ վատ գործ չի լինի», քանզի նրա ընթացքում կոչնչանա մարդկության մի մասը: Միլիտարիստական պնդումների այդ կակոֆոնիայում, սակայն, հետապնդվում էր մարդկությանն ընտելացնել սպառազինության, այդ թվում նաև միջուկային, մրցավազքի նոր թափի անխուսափելիության մասին մտքին: Արդյունքները երկար սպասեցնել չտվին: 1980 թվականին ռազմական ծախսերը աշխարհում անցան 500 միլիարդ դոլարից*:

Այդ վտանգավոր տենդենցին կրկին հակադրվեցին սովետական խաղաղասիրական նախաձեռնությունները: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի XXXV նստաշրջանում ՍՍՀՄ-ը ներկայացրեց «Ռազմական վտանգի նվազեցման ուղղությամբ որոշ անհետաձգելի միջոցառումների մասին» բանաձևի նախագիծը: Արվեցին նաև այլ առաջարկություններ խաղաղու-

* «Պրավդա», 28 սեպտեմբերի, 1980 թ.:



թյան համար պայքարի բոլոր ուղղություններում ջանքերն ավելացնելու համար: 1980 թվականի սեպտեմբերին Սոֆիայում հրավիրվեց խոշորագույն միջազգային ֆորում՝ խաղաղության համար ժողովուրդների համաշխարհային պառլամենտ: Համաշխարհային հասարակայնությունն արտահայտվեց 1981 թվականը խաղաղասեր ուժերի վճռական հարձակման տարի դարձնելու օգտին:

Մեր պատկերացմամբ, ընթերցողի ուշադրությանն առաջարկվող այս գրքում կատարված վերլուծությունը ցույց է տալիս այն վտանգը, որ սպառնանում է ամերիկյան քաղաքական սիստեմը խաղաղության համար, որտեղ քաղաքական պատվարով ռեկլամը, մարդկանց, այդ թվում նաև քաղաքական գործիչների տգիտության վրա հիմնված հակասովետիզմը հաճախ ավելի մեծ դեր են խաղում, քան պետական իմաստունությունը, այնպես և լիցքաթափման հետագա ամրապնդման ռեալ հնարավորությունները:

Այս վերջին հնարավորությունները ունեն լայն և ամուր հիմքեր, այն է՝ սոցիալիզմի ու կապիտալիզմի միջև ուժերի իրական հարաբերակցությունը: Ընդամին վերջինիս չի վիճակված իր կամքը թելադրել սոցիալիստական երկրներին, որոնք համախմբված են մարքս-լենինյան ուսմունքով, իրենց և սերունդների համար խաղաղությունը պահպանելու միասնական և անշեղ ձգտումով: «Սառը պատերազմի» կործանարար պրոցեսներին սկսել է վերջ տալ: Հենց այս ուղղությամբ տիտանական աշխատանք են տանում ՍՄԿԿ-ն և սովետական կառավարությունը, խաղաղություն ապահովելով բազմազգ ընտանիքի համար, որի անունն է՝ սովետական ժողովուրդ:

Հեղինակ

# ԱՌԱՋԱԲԱՆ

1971 թվականի գարնանը, ԱՄՆ-ում գիտական գործուղման ժամանակ, ինչպես նաև այդ երկրում աշխատելու հետագա տարիներին, ինձ արվող ամենատարածված հարցերից էր հետևյալը. «Վերջապես ե՞րբ են մեր երկրների՝ Ամերիկայի և Սովետական Ռուսաստանի միջև նորմալ, բարիդրացիական հարաբերություններ հաստատվելու»: Այդ հարցին սովորաբար հաջորդում էր երկրորդը. «Ի՞նչն է դրան խանգարում»: Այդ հարցերն, իհարկե, տարբեր մարդիկ էին տալիս, բայց որում երբեմն զգացվում էր, որ զրուցակիցն ավելի հաճելի կլիներ բացասական պատասխան ստանալ սովետա-ամերիկյան լայն համագործակցության կազմակերպման հնարավորության մասին: Շատ ամերիկացիների ուղեղներում արմատավորվել էին հնացած, բայց առ այսօր դեռ չփլուզված դոգմաներ «սառը պատերազմի» անխուսափելիության մասին: Ստիպված էի լինում համբերատարությամբ բացատրել Սովետական Միության արտաքին քաղաքական քայլերի էությունը միջազգային ասպարեզում:

Խաղաղության ծրագիրը, որ ընդունվեց ՍՄԿԿ XXIV և զարգացվեց XXV համագումարներում, շատ ամերիկացիների համար հայտնություն էր: Երկար ժամանակ նրանց գլուխներն էր մտցվում



այն միտքը, որ Սովետական Միությունն ագրեսիվ է պատրաստվում Արևմուտքի դեմ: Դրանք, իհարկե, անհեթեթ գրպարտություններ են: Եվ այսուհանդերձ ԱՄՆ-ի ոչ քիչ թվով քաղաքացիների գիտակցությունն է մթագնած նման հերյուրանքներով:

Սակայն կարելի է նշել, որ 70-ական թվականների սկզբի ամերիկյան կառավարության համար 50—60-ական թվականների ամերիկյան արտաքին քաղաքականության բազմաթիվ ճգնաժամերի ու ձախողումների դասերը, երբ միջազգային կյանքում կապիտալիստական Արևմուտքի մեղքով սուրում էին «սառը պատերազմի» սարսռեցնող քամիները, ապարդյուն չանցան: Համաշխարհային ասպարեզում ավելի լայն ճանապարհ էր հարթում խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքների լիակատար ճշմարտությունը հաստատող ռեալ իրականությունը: Դրա հետ մեկտեղ այդ տարիներին Արևմուտքում չէին դադարում առճակատման կողմնակիցների՝ լիցքաթափումը խափանելու ջանքերը: Ցավոք, այդ նույնպես մեր օրերի ռեալ իրավիճակն է: Եվ այդ մշտապես օրակարգի հարց է դարձնում երկրագնդի վրա խաղաղության պահպանման համար պայքարի անհրաժեշտությունը, այն ուժերի ազդեցության հետագա սահմանափակումը, ովքեր դեռևս երազում են ցնցել ու շրջել միջազգային հարաբերությունների զարգացման անիվը:

Ողջամիտ ամերիկացիներն այսօր հանդես են գալիս ռեալիզմի, իրադրության ողջախոհ կշռադատման օգտին, ընդդեմ վտանգավոր և չմտածված քաղաքական գործողությունների վերադարձի: Իհարկե, նման ձայներ ԱՄՆ-ում և առաջներում, 60-ական թվականներին էլ էին լսվում: Դրանք հնչում էին ԱՄՆ-ի կառավարության համար բարդ պայմաններում, կրում դաժան էմոցիոնալ մեծ ուժ և միլիտարիստական լոզունգներով իրենց խաբել թույլ չտալու համառ ձգտում: Առանձնապես բարձր էր հնչում երիտասարդ Ամերիկայի բողոքի ձայնը, որը 50-ական թվականներին, որպես կանոն, համակերպվում էր հակակոմունիզմի հերյուրանքներին: Նրա համար 60-ական թվականներն արդեն ոչ միայն ամերիկյան քաղաքական Օլիմպոսից քարոզվող «սառը պատերազմի» և

ամերիկյան դարի» ճշմարտացիության, այլև անկեղծության մեջ տատանվող կասկածների տարիներ հանդիսացան։ Արտաքին քաղաքական հին կուրսի սնանկությունն ավելի ակնհայտ էր դառնում։

70-ական թվականների սկզբում պարզ դարձավ, որ սոցիալիզմի և առաջադիմական ուժերի դեմ ամերիկյան իմպերիալիզմի ճակատային գրոհի վրա կառուցված բուռն ակտիվությունը ձախողվեց։ Աշխարհում ստեղծվեց ուժերի նոր հարաբերակցություն, որը բացահայտեց սոցիալիզմի, որպես հասարակական սիստեմի, հսկայական առավելությունները։ Ստիպված լինելով պաշտպանական հզոր զենք ստեղծել, ՍՍՀՄ-ը դրանով իսկ ապացուցեց Ջոն Ֆոսթեր Դալլեսի երևակայությամբ երբեմնի պատկերվող Արևմուտքի հաշվարկների պատրանքայնությունը խաղաղասեր երկրի նկատմամբ «առավելության» հասնելու մասին։ Դրա հետ մեկտեղ սրվեցին միջիմպերիալիստական հակասությունները, ուժեղացան «Ընդհանուր շուկայի» երկրների և Ճապոնիայի արտաքին քաղաքական ամբիցիաները, ծանրացավ ԱՄՆ-ի տնտեսական վիճակը, սաստիկ ընկավ բուրժուական ֆինանսական շուկաներում երբեմնի ամենակարող դոլարի հեղինակությունը։ Եվ, վերջապես, Վիետնամում պաշտոնական Վաշինգտոնի մեծամտությանը տասնամյակյան դաս տրվեց՝ անհաղթ է իր ազատությունը պաշտպանող ժողովուրդը։ Արևմտյան Եվրոպայում «ճգնաժամային դիվանագիտությունը» զգալիորեն տեղը զիջեց փոխընդունելի որոշումների որոնմանը, չնայած, ինչպես, և այսօր արևմտյան որոշ երկրների կառավարություններ մի շարք դեպքերում տեղի են տալիս միջազգային մթնոլորտը բարդացնել ձգտող ԱՄՆ-ի պահպանողական ուժերի ճնշման տակ։ Դրա վառ ապացույցն է ՆԱՏՕ-ի վերջերս ընդունած որոշումը Արևմտյան Եվրոպայում միջին շառավղի գործողության ամերիկյան նորագույն հրթիռների տեղադրման մասին։

70-ական թվականների ընթացքում սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացումը Սովետական Միության Կոմունիստական կուսակցության XXIV համագումարի կողմից ընդունված ՍՄԿԿ-ի և սովետական կառավարության լենինյան կուրսի կենսագործման խոշոր նվաճումն է։



ՍՄԿԿ XXV համագումարում իր զարգացումն ստացած այդ ծրագիրը պաշտպանում են սովետական բոլոր մարդիկ, քանի որ այն արտահայտում է խաղաղության, առանց պատերազմների, իրենց հույսերը։

1972—1973 թվականները միջազգային հարաբերությունների պատմության մեջ նոր, անտարակույս, նշանակալի էջ գրեցին։

ՍՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը և ԱՄՆ-ի պրեզիդենտը 1972 թվականին Մոսկվայում ստորագրեցին Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև փոխհարաբերությունների հիմունքները։ Այդ պատմական փաստաթղթում դրված է սովետա-ամերիկյան հարաբերությունների մշտական արդյունավետ զարգացման հիմքը։ Առաջին անգամ հետպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի կառավարությունը, գնահատելով անցյալի դասերը, դեմքը դեպի ռեալ իրականությունը շրջեց և ընդունեց խաղաղության գործի համար խաղաղ գոյակցության սկզբունքների հսկայական նշանակությունը։ Որպես դրա հետևանք վերոհիշյալ փաստաթղթի մեջ արձանագրված է, որ երկու կողմերը ելնելու են այն ընդհանուր համոզվածությունից, որ միջուկային դարում նրանց միջև հարաբերությունների պահպանման համար այլ հիմք չկա, բացի խաղաղ գոյակցությունից։

ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը իրենց վրա պարտավորություն վերցրին խուսափել ռազմական առճակատումներից և տարաձայնությունները լուծել խաղաղ ճանապարհով։ Որպես դրա անհրաժեշտ նախադրյալներ ընդունվեցին կողմերի անվտանգության շահերը, ուժ գործադրելուց կամ այն գործադրելու սպառնալիքից հրաժարվելը։ 1972 թվականին Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ վավերացվեց մեկ ուրիշ պատմական փաստաթուղթ՝ ժամանակավոր համաձայնագիր ստրատեգիական հարձակողական սպառազինությունների սահմանափակման բնագավառում որոշ միջոցառումների կիրառման մասին։ Այդ համաձայնագիրը հիմնված է կողմերի հավասար անվտանգության սկզբունքի վրա։ Այն զսպում էր սպառազինությունների մրցավազքը, նվա-

զեցնում հրթիռամիջուկային ընդհարման սպառնալիքը։ Իհարկե, ստրատեգիական հարձակողական սպառազինությունների մասին Մոսկվայում ընդունված համաձայնագիրը դեպի ընդհանուր զինաթափում տանող ճանապարհի միայն առաջին, չնայած և չափազանց կարևոր քայլն էր։ Այդ ճանապարհին դեռևս շատ դժվարություններ պետք է հաղթահարվեն։ Դրա պարզորոշ օրինակն է Քարտերի դիմումը կոնգրեսին՝ հետաձգել 1979 թվականի հունիսին Վիեննայում ստորագրված ՍՍՍ—2 պայմանագրի վավերացումը։

Արգասավոր էին նաև սովետա-ամերիկյան բանակցությունների արդյունքները երկկողմանի համագործակցության մասին։ Այստեղ ստորագրվեցին մի ամբողջ շարք համաձայնագրեր առևտրատնտեսական հարաբերությունների, գիտատեխնիկական համագործակցության, տիեզերքի, առողջապահության, շրջապատող միջավայրի պահպանման բնագավառում համագործակցության, գիտության, տեխնիկայի, կրթության և մշակույթի ասպարեզում փոխանակումների զարգացման մասին։ Սովետա-ամերիկյան համատեղ կոմյունիկեում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունները համոզմունք հայտնեցին, որ փոխհարաբերությունների հիմունքներում ձևակերպված դրույթները «նոր հնարավորություններ են ստեղծում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև խաղաղության և փոխշահավետ համագործակցության հարաբերությունների զարգացման համար»։ Այսպիսով, սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունները բոլոր շանսերն ունեն վերաճելու հավասարակշռված բազայի վրա կառուցված, փոխադարձ վստահությամբ ցեմենտված հարաբերությունների։

70-ական թվականների առաջին կեսին միջազգային ասպարեզում լիցքաթափման ամրապնդման ուղղությամբ տեղի ունեցող էական տեղաշարժերն ուղեկցվում էին գաղափարաքաղաքական կատաղի պայքարով, քանզի բուրժուական քաղաքագետների և զինվորականների զգալի մասը շարունակում էր մնալ «սառը պատերազմի», սպառազինության մրցավազքի դիրքերում։ Նրանք դեռ կառչում էին անցյալից, փորձում վիժեցնել մեր ժամանակի հիմնական արտաքին քաղաքական կուրսը՝ միջազգային լարվածության լիցքաթափումը։ Նրանց գործողությունների վտանգավորության



վրա ուշադրություն հրավիրեց Լ. Ի. Բրեժնևը Մոսկվայում 1973 թվականին կայացած խաղաղասեր ուժերի համաշխարհային կոնգրեսում. «Անտարակույս, իմպերիալիզմի ագրեսիվ շրջանների կողմից սպառազինության մրցավազքի հրահրվող հետագա ընդլայնումը և միջազգային լարվածության սկսված լիցքաթափումը հակադիր ուղղություններով ընթացող երկու պրոցես են։ Անվերջ զարգանալ, այսպես ասած, զուգահեռ կուրսերով նրանք չեն կարող»[1]։ Իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, որ լիցքաթափման հարցի շուրջը պայքարը ոչ միայն չի թուլանում, այլև սաստկանում է։ Շրջադարձը դեպի միջազգային լարվածության լիցքաթափումը շարունակվում էր, բայց միաժամանակ հաճախակի դարձան դիվերսիաները նրա դեմ, գրոհներն ամենատարբեր դրոշների ու լոզունգների ներքո, սկսած «անցկացնել խաղաղության քաղաքականություն՝ հենվելով ռազմական ուժի վրա» պահանջներից և վերջացրած «մարդու իրավունքների պաշտպանության» երկերեսանի կամպանիայով։

Լիցքաթափման հակառակորդները, ինչպես հայտնի է, վարում են ժամանակի և իրադարձությունների հաշվառում սկսած միջազգային հարաբերությունների այն ժամանակաշրջանից, երբ նրանցում տիրում էր սարսափի ու թշնամանքի մթնոլորտ։ Նրանք ոգևորվում են Արևմուտքի հասարակայնությանը երկրին մոլորության մեջ գցելու հույսից, ԱՄՆ-ի պետական գործիչներին ամեն կերպ մղելով «սովետական սպառնալիքի» դեմ պայքարի, անհեռատես քայլերի, ձգտելով բթացնել նրանց մեջ սեփական ժողովրդի առաջ պատասխանատվության զգացումը։

ԱՄՆ-ի «սառը պատերազմի» կողմնակիցների ջանքերով լիցքաթափումը 1978—1979 թվականներին առանձնապես ծանր փորձությունների ենթարկվեց։ Այդ հանգամանքը բազմիցս ընդգծում էին սովետական պետական գործիչները և մամուլը։ Այսպես, «Պրավդան» «ԱՄՆ-ի կառավարության ներկայիս քաղաքականության մասին» հոդվածում նշել է, որ «վերջին շրջանի փաստերը խոսում են այն մասին, որ ԱՄՆ-ի քաղաքականության մեջ խաղաղության գործի հա-

մար վտանգավոր փոփոխություններ են տեղի ունենում և գնալով ավելի են խորանում նշանները այն բանի, որ այդ պայքարում սկսում են հաղթություն հասնել այն խմբավորումների ներկայացուցիչները, որոնք կցանկանային վիժեցնել լիցքաթափումը, աշխարհը վերադարձնել դեպի «սառը պատերազմ», նոր առճակատումների և ռազմական անզուսպ մրցակցության»[2]։ Հակասովետական տենդի մթնոլորտում սենատոր Բ. Գոլդուոթերը ուղղակի հայտարարեց, որ «վատ չէր լինի վերադառնալ դեպի Ջոն Դալլեսի օրերը», որին, գտնելով 1980 թվականի սահմանագծին Քարտերի ադմինիստրացիայի մեղքով ստեղծված միջազգային ճգնաժամով, ըստ երևույթին, համաձայն են նաև նախկին պրեզիդենտին շրջապատող որոշ գործիչներ։ Այսպիսով, 70-ական թվականների «անգղները» հաճախ են դիմում նախապատերազմյան շրջանի միջազգային հարաբերությունների «փորձին», այլափոխելով այն իրենց հարմար ձևով։ Նրանք, հավանաբար, հույսը դնում են ԱՄՆ-ում այն մարդկանց թույլ հիշողության վրա, ովքեր մոռացել են 50-ական և 60-ական թվականների դասերը։ Ահա թե ինչու այն շրջանի ամերիկյան արտաքին քաղաքականության իսկական բնույթի բացահայտումը ակտուալ խնդիր է, որը և գրքի հեղինակը ձգտել է լուծել, ինչպես նաև լուսաբանել արդի սովետա-ամերիկյան հարաբերությունների որոշ գծեր, լիցքաթափման ոգով նրանց հետագա զարգացման ուղիները։ Հենց վերջինն էլ հանդիսանում է ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների հետագա առաջընթացման միակ խելամիտ հիմքը։ Ինչպես վկայում են պատմության դասերը, այս բնագավառում այլընտրանք չի կարող լինել։

## ԳԼՈՒԽ I

# ԱՄՆ-Ի ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ետպատերազմյան տարիներին ԱՄՆ-ում ոչ քիչ կառավարություններ են փոխվել։ Սպիտակ տանը շուքով կամ առանց շուքի պրեզիդենտական բազկաթոռ էին զբաղեցնում ինչպես դեմոկրատները, այնպես և հանրապետականները։ Ամերիկայի նշանավոր պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտից հետո Վաշինգտոնում մի քանի տարով հաստատվեց մի մարդ, որն, ինչպես նրա մասին ասում էին, բարակ շուրթեր ուներ և քար սիրտ։ Այդ բանդգացի Հարրի Տրումենն էր, որը պնդում էր, թե ինքը անկաշառ պրեզիդենտ է։ Համենայն դեպս, նրա առանձնասենյակ մտնող այցելուների աչքին զարնում էր սեղանի վրա ցուցադրաբար դրված ցուցանակը՝ «Այստեղ վերջանում է դոլարի ուժը» մակագրությամբ։ Այստեղ ակնհայտորեն նկատի էին առնվում հարստացման անմաքուր հնարքները։ Բայց կարելի է ամենայն վստահությամբ ասել, որ ամեն տեսակ քաղաքագետների ու ֆինանսական գործարարների ուժն ու ազդեցությունը պրեզիդենտական սեղանի մոտ ամենևին չէին վերջանում։ Նրա սեղանի զարդարված մակերեսին, ինչպես արևաշողքի կենտրոնում, բույն էր դրել ԱՄՆ-ի հզորագույն ուժերի էպիկենտրոնը, որը ամերիկյան քաղաքական կյանքում հիմնահատակ այրում էր բոլոր նրանց, ով-

քեր վառ գիտեին կամ հաշվի չէին առնում ամերիկյան վերնախավի և ֆինանսական «արքաների» շահերը։

Մի փոքրիկ շեղում, որը, մեր կարծիքով, բացատրում է ամերիկյան ապրելակերպի, սիստեմի, քաղաքականության որոշ պարադոքսները։

Մեզ վիճակվել է երկար տարիներ ապրել և աշխատել ԱՄՆ-ում։ Այո, իհարկե, շատ բաներում ոչ հասարակ երկիր է. բնակեցված աշխատասեր և հիմնականում հավասարակշռված ու հումորի յուրատեսակ զգացում ունեցող մարդկանցով։ Ամերիկացին և, առավել ես, ամերիկուհին, թերևս, ոչինչ այնպես չի ձգտում, ինչպես անձնական բարեկեցության։ Որպես կանոն, ամերիկացիները սենտիմենտալ են, սիրում են սպորտն ու դասական երաժշտությունը, բնությունն ու սարսափի կինոնկարները, մենությունն ու աղմկոտ, ուրախ տոնավաճառները։ Յուրաքանչյուրին, ինչպես ասվում է, իրենը։ Բայց հասարակ ամերիկացիների մեջ, չնայած առօրյա հոգսերով ծանրաբեռնված, նրանցից շատերը չեն գիտակցում կամ բավական աղոտ են այդ գիտակցում, կա բռնության դեմ սարսափի սրված զգացում, բռնություն, որը կարող է կատարվել ոչ թե վերացական ձևով, այլ հենց իրենց նկատմամբ։ Այդ զգացումը հետապնդում է շատերին ինչպես ամենօրյա կյանքում, այնպես և քաղաքականության մասին մտորումներում։

Սովետական գիտնականների և ժուռնալիստների գրչին են պատկանում այդ երևույթի արմատները բացահայտող ոչ քիչ թվով խորը աշխատություններ, ակնարկներ և հոդվածներ։ Ընդ որում միանգամայն արդարացիորեն նշվում է, որ իրենց կյանքի սոցիալական պայմանների հանդեպ հասարակ ամերիկացիների սարսափը կապիտալիստական սիստեմի պարագլուխները փորձում են շրջել «արտաքին թշնամու» դեմ։ Եվ «արտաքին թշնամին» են հայտարարվում սոցիալիզմն ու կոմունիզմը, չնայած և այն մասին, ինչ են դրանք իրենցից ներկայացնում, ամերիկացիները գրեթե ոչինչ չգիտեն։ Իսկ եթե նրանց են հասնում Սովետական Միությունում դինամիկ կյանքի արձագանքները, ապա դրանք հազիվ են թա-



1704

փանցում բուրժուական մասսայական ինֆորմացիայի խիտ շղարշի միջով։

Վերլուծենք ԱՄՆ-ի հետպատերազմյան արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնական գործոնները։ Առանց դրանք հաշվի առնելու դժվար է ըմբռնել ամերիկյան արտաքին քաղաքականության ներկան և առանձնապես նրա, գոնե մոտավոր, ապագան։

Ամերիկյան, մասնավորապես, Ջ. Քենեդու կառավարության արտաքին քաղաքականության վրա խիստ բացասաբար ազդող հիմնական գործոններից մեկը եղան հետպատերազմյան շրջանի ամերիկյան արտաքին քաղաքականության ու դիվանագիտության ստրատեգիական և տակտիկական դրույթները և հատկապես ԱՄՆ-ի պետական քարտուղար Ջոն Ֆոստեր Դալլեսի ժառանգությունը։ ԱՄՆ-ի հետպատերազմյան, այդ թվում նաև դեմոկրատների կողմից գլխավորվող, կառավարությունների գործունեության հիմնական ուղղությունների վերլուծությունը օգնում է ավելի խորը գնահատել պրեզիդենտ Քենեդու արտաքին քաղաքականությունը, ցույց է տալիս այն իսկապես խիստ շրջանակները, որոնց պայմաններում անց էր կացվում այդ կառավարության քաղաքականությունը միջազգային ասպարեզում։ Ավելին, այն օգնում է լավ հասկանալու սովետա-ամերիկյան հարաբերությունների ճանապարհին կանգնած արհեստական և մշտապես գործող խոչընդոտների էությունը։ Այդ խոչընդոտների թվում նկատելի տեղ են գրավում միլիտարիստական դրույթները, այդ թվում նաև այժմ, 70-ական թվականների երկրորդ կեսին։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո մեծ փոփոխություններ կրեցին, որոնք առաջացել էին այդ երկրի ինչպես ներքին զարգացման, այնպես և արտաքին գործոններով։ Լավ հայտնի է, որ 50-ական և 60-ական թվականներին ամերիկյան իմպերիալիզմը ձեռք է բերել նոր էքսպանսիոնիստական հատկություններ, սկսել է մյուս ժողովուրդներին փաթաթել այսպես կոչված ամերիկյան ապրելակերպը։

ԱՄՆ-ը այն հիմնական ուժը հանդիսացավ, որը «սառը



ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

«պատերազմ» սանձազերծել ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների դեմ: Եվ ներկայումս ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունն այնպիսի ուժեր են իրականացնում, որոնք հարցականի տակ են դնում ՍՍՀՄ-ի, սոցիալիստական մյուս պետությունների շահագրգռվածությունը միջազգային լարվածության արմատական թուլացման ուղղությամբ: Ամերիկյան իմպերիալիզմի ստրատեգիական այդ գիծը դիրքորոշվեց 1945 թվականից հետո: Դրա իրականացումը, սակայն, գնալով դժվարանում է, քանզի միջազգային իրադրությունը 70-ական թվականների երկրորդ կեսում արմատապես փոխվեց: Վավերացվեցին միջազգային բազմաթիվ համաձայնագրեր, առաջին հերթին Հելսինկիում տեղի ունեցած եվրոպական պետությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի և Կանադայի ղեկավարների պատմական հանդիպման ժամանակ: Համընդհանուր եվրոպական խորհրդակցության եզրափակիչ ակտը, որ ստորագրվել է 35 պետությունների ղեկավարների, այդ թվում և պրեզիդենտ Ջ. Ֆորդի կողմից, հանդիսացավ պատմական իրադարձություն և փաստաթուղթ, ճիշտ այնպես, ինչպես և մի շարք սովետա-ամերիկյան երկկողմանի համաձայնագրեր, որոնք հատկապես վերաբերում են Սովետական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև փոխհարաբերություններին և ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման բնագավառում հասած պայմանավորվածությանը:

Այսպիսով, լիցքաթափումը սովետա-ամերիկյան հարաբերություններում ցեմենտված է փոխադարձ պայմանավորվածություններով և համաձայնագրերով: Սակայն ԱՄՆ-ում այդ տենդենցը միշտ մեծաթիվ ազդեցիկ հակառակորդներ է ունեցել: Նրանց ճնշումը, ինչպես ցույց տվեց իրադարձությունների զարգացումը, ազդեց Սպիտակ տան քաղաքականության վրա իշխանության գլուխ նոր դեմոկրատ-պրեզիդենտ Ջ. Քարտերի անցնելուց հետո: Վերջինիս գործունեությունը Սովետական Միության նկատմամբ սկսվեց այնպիսի դիրքերից, որոնք այլ կերպ չես կարող անվանել, քան անհեռատես Ամերիկյան քաղաքական շրջանառության մեջ դարձյալ ԱՄՆ-ի, որպես «ազատ աշխարհի բարոյական լիդերի» մա-



սին փարիսեցիական պատկերացում մտցվեց, որին իրավունք է ընձեռվում սովորեցնել մյուսներին ինչպես «պաշտպանել մարդու իրավունքները», չհոգալով այդ հարցում իր սեփական երկրում տիրող գործերի վիճակի մասին:

Այդ ամենը որպես մեծ դիսոնանս հնչեց 70-ական թվականների երկրորդ կեսի միջազգային հարաբերություններում, որոնցում որոշիչը լիցքաթափումն էր: Ի լրումն այդ բոլորին, 1976—1977 թվականներին ամերիկյան արտաքին քաղաքականությունը հերթական շեղում կատարեց այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին ստրատեգիական սպառազինությունների սահմանափակումն է, ըստ էության կասկածի տակ դնելով Վլադիվոստոկում բարձր մակարդակով 1974 թվականի նոյեմբերին վավերացված պայմանավորվածությունը:

Այդ բարդ իրադրությունում կրկին դրսևորվեցին Սովետական Միության արտաքին քաղաքականության սկզբունքայնությունն ու հետևողականությունը, որը հանդես եկավ ի պաշտպանություն այն պոզիտիվ տեղաշարժերի, որոնք տեղի էին ունեցել սովետա-ամերիկյան հարաբերություններում անցած տարիների ընթացքում: Մերժելով պաշտոնական Վաշինգտոնի՝ ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման գծով պայմանավորվածությունները ռևիզիայի ենթարկելու անհիմն մոտեցումը և «տիեզերական բարոյախոսի» դերը ստանձնելու անհեթեթ հավակնությունները, սովետական կառավարությունը շարունակում է հսկայական աշխատանք տանել Եվրոպայում և մյուս ռեգիոններում լիցքաթափման խորացման, միջազգային ասպարեզում, այդ թվում և սովետա-ամերիկյան հարաբերություններում լարվածության թուլացման կուրսի ուղղությամբ:

ԱՄՆ-ում գործող այն մարդկանց հասցեին, ով ցանկանում է «խիստ կուրս» անցկացնել ՍՍՀՄ-ի հանդեպ, Կրեմլից հնչեցին սովետական պետության համընդհանուր ճանաչում ստացած հեղինակության, համագործակցության երկրների համախմբվածության ու հզորության վրա հիմնված իմաստունության, արժանապատվության ու ռեալիզմի խոսքերը: Այդ սկզբունքային գիծը շարունակվեց ողջ այն

ուղերձում, որը Լ. Ի. Բրեժնևը 1977 թ. հուլիսի 4-ին հղեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Քարտերին, այդ երկրի ազգային տոնի՝ Անկախության օրվա կապակցությամբ։ «Կցանկանայի հույս հայտնել այն առումով,— ընդգծեց սովետական պետության ղեկավարը,— որ, օգտագործելով վերջին տարիներին կուտակած դրական փորձը, մենք կկարողանանք ապահովել ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների կայուն զարգացումը համագործակցության և փոխգործողության ուղիով, ի շահ խաղաղության ամրապնդման և լիցքաթափման պրոցեսի խորացման»¹։

Եկեք, սակայն, հարց տանք մեզ, թե ինչո՞ւ, այդուհանդերձ, ամերիկյան արտաքին քաղաքականությունն անցյալ 70-ական թվականների երկրորդ կեսում, հատկապես դեմոկրատների իշխանության գլուխ անցնելուց հետո, կրկին զիգզագաձև բնույթ ընդունեց։ Ինչո՞ւ նրանում սկսեցին գերակշռել վերամբարձությունն ու հարգանքի բացակայությունը միջազգային համաձայնագրերի հարցում ժառանգականության սկզբունքի հանդեպ։ Հակիրճ պատասխան այստեղ, ինարկե, չի կարող լինել։ Եվ բացատրությունը հարկ չկա փնտրելու ամերիկյան քաղաքական բեմահարթակի այս կամ այն անձի մեջ։

Ամերիկյան արտաքին քաղաքականությունը դասակարգային հիմք ունի՝ պետական իշխանության գլուխ կանգնած են մոնոպոլիստական կապիտալի խոշոր խմբավորումները։ Այդ խմբավորումները չեն սիրում քաղաքական այն լիդերներին, որոնք կոպիտ վրիպումներ են թույլ տալիս։ Դրա օրինակն է դեմոկրատ-պրեզիդենտ Վ. Ջոնսոնը, որը քաղաքական կրախի ենթարկվեց Վիետնամում ամերիկյան ավանտյուրայի ձախողման հետևանքով։

Եթե խոսելու լինենք ամերիկյան արտաքին քաղաքականության գաղափարա-տեսական պլատֆորմի մասին, ապա այն հենվում է դոկտրինաների և կոնցեպցիաների ճյուղավորված ցանցի վրա, որոնք շաղկապված են «ամերիկյան բացառիկության» գաղափարներով և էքսպանսիոնիզմի ոգով։ Այդ բազմատեսակ դոկտրինաների և կոնցեպցիաների ետևում, որ դիմակավորված են ամերիկյան բուրժուական քաղա-



քական մտքի նորագույն «նվաճումներով», նկատվում է մեկ ընդհանուր նպատակ՝ ամրապնդել ամերիկյան կապիտալիզմի դիրքերը, այդ թվում ի հաշիվ մյուս պետությունների, իսկ 1917 թվականից հետո, երբ Ռուսաստանի աշխատավորներն իշխանությունն իրենց ձեռքը վերցրին, սոցիալիզմի զարգացման ճանապարհին հարուցել ամեն տեսակի խոչընդոտներ, իսկ եթե հնարավոր է, ապա և դադարեցնել այդ օրինաչափ պրոցեսը։

Հենց «սառը պատերազմի» արտաքին քաղաքական դոկտրինաների և կոնցեպցիաների ուսումնասիրությունից էլ սկսենք 40—60-ական թվականների ամերիկյան քաղաքականության հիմնական ուղղությունների վերլուծությունը։

Այդ ի՞նչ դոկտրինաներ և կոնցեպցիաներ են։

Ամերիկյան արտաքին քաղաքական դոկտրինաների և կոնցեպցիաների թվում կան այնպիսիները, որոնք ծառայել են և, հավանաբար, դեռևս երկար կծառայեն ԱՄՆ-ին։ Պատմական այդպիսի ժառանգորդությունը բացատրվում է այն հանգամանքով, որ հատկանշական է ամերիկյան իմպերիալիզմին ինչպես XX դարի սկզբին, այնպես և ներկա ժամանակներում՝ էքսպանսիայով, ագրեսիվությամբ, մյուս ժողովուրդների սուվերեն իրավունքների ոտնահարումով, ուժի գործադրումով։

Անհրաժեշտ է առանձնահատուկ կանգ առնել իզոլյացիոնիզմի դոկտրինայի վրա, որը իշխում էր XVIII դարի վերջերից ընդհուպ մինչև XX դարի 30-ական թվականները։ Այն ստեղծողներից է եղել ԱՄՆ-ի առաջին պրեզիդենտ Ջ. Վաշինգտոնը, որը գտնում էր, որ Ամերիկան պետք է հեռու կանգնի ամեն տեսակ միջազգային կոնֆլիկտներից։ Դոկտրինայի հիմնական նպատակը սկզբնական շրջանում եղել են եվրոպական ավելի ուժեղ պետությունների ոտնձգություններից ԱՄՆ-ի պաշտպանումը և ամերիկյան ազգի համախմբման ու նրա պետության ամրապնդման համար պայմանների ստեղծումը։ XIX դարում ամերիկյան բուրժուազիան իր հիմնական ջանքերը գործադրում էր այն ուղղությամբ, որպեսզի առավելագույն չափով ընդլայնի ԱՄՆ-ի սահմանները հյուսիսամերիկյան մայրցամաքում։ Իզոլյացիոնիզմի

դոկտրինան լավագույն կերպով նպաստում էր այդ նպատակին հասնելուն։ Համաձայն իզոլյացիոնիզմի դոկտրինայի, ԱՄՆ-ը երկար ժամանակ խուսափում էր միանալ ռազմաքաղաքական որևէ միության։

Աստիճանաբար իզոլյացիոնիզմի բովանդակությունը էվոլյուցիա է ապրում, բարդանում է։ Իզոլյացիոնիզմը վերածվում է դոկտրինայի, որն ԱՄՆ-ին հնարավորություն է տալիս համեմատաբար ազատ մանևրել իր իմպերիալիստական ախոյանների հետ համաշխարհային ազդեցության համար մրցակցային պայքարում։ Տակտիկական առումով, իզոլյացիոնիզմի դոկտրինայի համապատասխան, ԱՄՆ-ի կառավարությունը գերադասում էր միաժամանակ հեռու մնալ միջազգային որևէ ընդհարումից և առավել ևս ռազմական գործողություններից, այն հաշվով, որպեսզի իր համար նպաստավոր պահին ակտիվորեն միջամտեր միջիմպերիալիստական պայքարի ընթացքին։ Դրա վառ օրինակն է՝ ԱՄՆ-ի դիրքը առաջին համաշխարհային պատերազմում։

Ժամանակի ընթացքում իզոլյացիոնիզմն ավելի ու ավելի է համարվում ԱՄՆ-ի իմպերիալիստական քաղաքականության շահերին։ Այն լրիվ մի կողմ է նետվում Լատինական Ամերիկայի հետ հարաբերությունների հարցում։ Իզոլյացիոնիզմի բնույթն էքսպանսիոնիստական երանգ ընդունեց այն բանից հետո, երբ 1823 թվականին հռչակվեց «Մոնրոյի դոկտրինան»։ Նրա հիմքում ընկած էր եվրոպական պետությունների ազդեցության սահմանափակման, այնուհետև և Արևմըտյան կիսագնդից դուրսմղման գաղափարը։ «Մոնրոյի դոկտրինան» նշանակում էր, որ ԱՄՆ-ը XIX դարի առաջին քառորդում սկսել էր հետզհետե հեռանալ «դասական» իզոլյացիոնիզմի դիրքերից և Լատինական Ամերիկան դիտել որպես իր «առանձնահատուկ շահերի» ոլորտ։ Ամերիկյան կապիտալիզմի զարգացմամբ և նրա՝ իմպերիալիզմի վերաճմամբ «Մոնրոյի դոկտրինան» մոդիֆիկացվեց։ XX դարի սկզբներին այն արդեն օգտագործվում է Լատինական Ամերիկայի երկրների գործերին Վաշինգտոնի իմպերիալիստական միջամտությունն արդարացնելու համար։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը «Մոնրոյի դոկտրինան» կի-



րառում է գլխավորապես իր ոստիկանական գործողությունները հիմնավորելու, Լատինական Ամերիկայում ազգային-ազատագրական շարժումը ճնշելու և Ռիո-Գրանդեից դեպի հարավ սոցիալիստական գաղափարների տարածման փորձերը կանխելու համար։ Այդ դոկտրինան լույս աշխարհ հանվեց նաև 1962 թվականի կարիբյան ճգնաժամի ժամանակ՝ Կուբայի և Սովետական Միության հանդեպ ԱՄՆ-ի կառավարության վտանգավոր գործողություններն արդարացնելու համար։ Այսպիսով, ընդհուպ մինչև մեր օրերը «Մոնրոյի» նորացված «դոկտրինան» գտնվում է ամերիկյան արտաքին քաղաքականության և դիվանագիտության զինանոցում։

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, երբ երկիրը թևակոխեց իմպերիալիզմի փուլը, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն ընդունեց ակտիվ էքսպանսիոնիստական բնույթ։ Նոր քաղաքականությունը պահանջում էր թարմ գաղափարների, դոկտրինաների և կոնցեպցիաների մշակում։ Աստիճանաբար ամերիկյան իմպերիալիզմի դիվանագիտության համար ավելի ծավալուն պլատֆորմ էր մշակվում։ Այդ շրջանում մի խումբ պետական գործիչներ և գիտնականներ՝ պրեզիդենտ Թ. Ռուզվելտը, սենատոր Գ. Լոջը, ծովակալ Ա. Մեհենը մշակում են նոր դոկտրինաներ։ Հռչակվում է, օրինակ, «բաց դռների» դոկտրինա, որը նախատեսված էր նախ և առաջ Ասիայի համար։

Բոլոր երեք հիմնական դոկտրինաները, որոնց վրա այդ շրջանում զգալի չափով հենվում էին ամերիկյան արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունը, լրացնելով մեկը մյուսին, նպատակ էին հետապնդում ապահովել ԱՄՆ-ի շահերն աշխարհի երեք աշխարհագրական շրջաններում՝ իզոլյացիոնիզմը՝ Հյուսիսային Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում, «Մոնրոյի դոկտրինան»՝ Լատինական Ամերիկայում, «բաց դռների» դոկտրինան՝ Ասիայում։ Ավելի կամ պակաս չափով այդ դոկտրինաներն էին որոշում ամերիկյան դիվանագիտության ստրատեգիան և տակտիկան ընդհուպ մինչև XX դարի 30-ական թվականները։

Ամերիկյան արտաքին քաղաքականության նպատակների հետևողականությունը, դիվանագիտության հնարքների և մե-

թողների նորացումը տեղի ունեցան երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և նրա ավարտից հետո։ Հետպատերազմյան շրջանի ամերիկյան արտաքին քաղաքականության և դիվանագիտության էությունը հանգեցվում է հին նպատակին՝ Pax americana, այսինքն՝ ամերիկյան ձևով աշխարհ, համաշխարհային ամերիկյան կայսրության ստեղծելու փորձերին, որտեղ ոչ մեկը չպետք է համարձակվեր կասկածի տակ վերցնելու ամերիկյան քաղաքացիների և մենաշնորհների գերակայությունը։ ԱՄՆ-ի կառավարող վերնախավի նման մոտեցումը միջազգային գործերին բացատրվում է մի շարք պատճառներով։

Ամերիկյան իմպերիալիստները ենթադրում էին, որ 1945 թվականի մայիսից հետո ստեղծված իրադրությունում ԱՄՆ-ը միակ երկիրն է, որը երկրորդ համաշխարհային պատերազմից դուրս է եկել ամրապնդված տնտեսական և ֆինանսական սիստեմով։ Ֆորտ-Նոքսում և ԱՄՆ-ի ոսկու պաշարի մյուս պահեստարաններում մոտավորապես 23 միլիարդ դոլարի ոսկի էր կենտրոնացված։ ԱՄՆ-ի իմպերիալիստական հակառակորդները՝ Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան ջախջախված էին, Անգլիայի և Ֆրանսիայի նման հակառակորդները՝ լրջորեն թուլացած։ Վաշինգտոնին էր պատկանում միջուկային զենքի մոնոպոլիան։ Բացի այդ, Վաշինգտոնում ենթադրում էին, որ ֆաշիստական Գերմանիայի դեմ պատերազմի հիմնական ծանրությունն իր ուսերի վրա տարած Սովետական Միությունն ի վիճակի չի լինի դիմակայել աշխարհի վրա «խնամակալությունն» հաստատելու ԱՄՆ-ի հաշվարկներին։ Այդ եզրակացություններն ակնհայտորեն հապճեպ էին և թերագնահատում էին Սովետական Միության իրական և պոտենցիալ հնարավորությունները, ինչպես նաև սոցիալիստական և կոմունիստական գաղափարների ձգողական ուժը։

Աշխարհի քաղաքական վերակառուցման՝ Վաշինգտոնի մտադրության համար հարկավոր էր նոր դոկտրիններ և կոնցեպցիաներ մշակել։ Այդ ուղղությամբ ձեռնարկված գործնական քայլերն իրենց երկար սպասեցնել չտվեցին։ Նրանք պարզորոշությամբ ցույց տվեցին, որ համաշխարհային տիրապետության համար պայքարում ԱՄՆ-ի կառավարող վեր-



նախավը մտադրություն ուներ հենվելու նախ և առաջ իր ռազմական և տնտեսական պոտենցիալի վրա։

Արդեն 1947 թվականին մշակվում են «զսպելու» տխրահռչակ կոնցեպցիան, ուղղված Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների դեմ, «Տրումենի դոկտրինան» ու «Մարշալի պլանը», որոնք Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի գերիշխանության նպատակ էին հետապնդում։ 1949 թվականին ստեղծվում է ՆԱՏՕ-ի ագրեսիվ ռազմական բլոկը։ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարող շրջանները ձեռնամուխ եղան ամերիկյան ձևով համաշխարհային կարգ սահմանելու գաղափարի իրականացմանը՝ ծնունդ տալով ամերիկյան հետպատերազմյան արտաքին քաղաքականության և դիվանագիտության այլանդակ զավակը՝ «սառը պատերազմը»։

«Զսպման» կոնցեպցիան լրացվեց ամերիկյան կառավարության մի շարք քաղաքական, տնտեսական և ռազմական ակցիաներով։ Բացահայտելով «զսպման» կոնցեպցիայի իրական նպատակները, ԱՄՆ-ի պետական քարտուղար Դալլեսը 50-ական թվականների սկզբներին առաջ քաշեց իր ագրեսիվ էությամբ էլ ավելի բացահայտ «ազատագրման» դոկտրինան, ազդարարելով ԱՄՆ-ի նպատակը՝ սոցիալիստական կարգերի ոչնչացումը Արևելյան Եվրոպայում։ «Սառը պատերազմը» հասավ իր գագաթնակետին։

«Սառը պատերազմի» շրջանի ամերիկյան քաղաքականությունը հիպերտրոֆիկ այլանդակ ձևեր ընդունեց։ Այն մի կողմ նետեց Ռուզվելտի պրեզիդենտության օրոք կուտակված միջազգային պրոբլեմների լուծման դրական փորձը։ Դեռ ավելին, լիակատար հիմունքով կարելի է համարել, որ ամերիկյան դիվանագիտության մեջ, սկսած 1946 թվականից, մոռացության տրվեց այն բոլոր ռուզվելտականը, ինչը դրական նշանակություն էր ունեցել ինչպես միջազգային, այնպես և սովետա-ամերիկյան հարաբերությունների համար։ Թեհրան, Յալթա, Պոտսդամ՝ միջազգային դիվանագիտության այս բոլոր պատմական ուղենիշները Վաշինգտոնում դիտավորյալ նշավակվում էին, Ռուզվելտի անունն սկզբում զուսպ, այնուհետև բացեիբաց հեղինակազրկվում էր։ Ամերիկյան

դիվանագիտությունից արմատախիլ էր արվում Սովետական Միության հետ համատեղ միջազգային պրոբլեմների՝ փոխընդունելի որոշումների որոնումը։ Սովետա-ամերիկյան հարաբերությունները սառեցվեցին։

Կարծում ենք, որ սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացման ներկայիս փուլի որոշակի պահեր, համենայն դեպս արտաքուստ, հիշեցնում են ետպատերազմյան այդ շրջանը. որոշ ազդեցիկ պարոններ ձգտում են նվազագույնի հասցնել 70-ական թվականների առաջին կեսում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերություններում կուտակված դրական փորձը։ Հսկայական տարբերությունը, սակայն, կայանում է նրանում, որ այդ ուսանելի փորձը դժվար է, թերևս, անհնարին է ջնջել։ Ամերիկյան շատ քաղաքագետներ և գործարար աշխարհի ներկայացուցիչներ լավ են հասկանում, որ սովետա-ամերիկյան հարաբերությունների մեջ լարվածության էսկալացիայի տակ հենց իր, ԱՄՆ-ի համար մեծ մինաներ են թաքնված։ 40-ական թվականների երկրորդ կեսում նման ըմբռնողություն չէր նկատվում։

Այնտեղ, ուր հաշվարկները կառուցվում են ուժի գործադրման վրա, միջազգային վեճերի կարգավորման միջոցները մի կողմ են դրվում։ Ֆաշիստական Գերմանիայի դեմ հաղթանակից հետո ԱՄՆ-ում, թվում էր, երկար տարիներ մոռացել էին ինչ բան է պատասխանատու, բարիդրացիական վերաբերմունքը Սովետների երկրի, նրա բարեկամների ու դաշնակիցների նկատմամբ։ Դրա փոխարեն Ամերիկայի կառավարող էլիտան իր ջանքերը կենտրոնացնում էր մեկուսացնելու, իսկ եթե հաջողվի, ապա և սովետական ժողովրդի սոցիալիստական նվաճումները քայքայելու փորձերի վրա։ Ամերիկյան շատ քաղաքագետներ բացեիբաց արտահայտվում էին հօգուտ ՍՍՀՄ-ի դեմ պատերազմի, դրա համար փնտրելով ամեն կարգի «հարմար» պատրվակներ։ Ինչպես այն մեկը, որ Սովետական Միությունը նախապատրաստում է «միջազգային դավադրություն» ամերիկյան կառավարությունը «տապալելու» նպատակով։ Հիշենք, ինչպես էր մոլեգնում ԱՄՆ-ում ֆաշիստացող սենատոր Ջ. Մաքքարտին։ Ցավոք, նա մենակ չէր։ Իհարկե, ամերիկյան ոչ բոլոր քաղաքագետ-



ները էին բաժանում այդ հայացքները, բայց նրանք գերադասում էին լռել։

Սովետական Միության կողմից 1949 թվականին անցկացված միջուկային զենքի փորձարկումները ստիպեցին ԱՄՆ-ի առավել կատաղի տրամադրված շրջաններին փոքր-ինչ մեղմացնել տոնը։ Սակայն խաղաղության գործի համար վտանգավոր ԱՄՆ-ի քաղաքականությունն ու դիվանագիտությունը, ուղղված այն ամեն դրականի ոչնչացմանը, որ ձեռք էր բերվել պատերազմի տարիներին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի փոխադարձ համագործակցության ոլորտում, իրականացվում էին ամբողջ թափով։ ԱՄՆ-ը աշխարհով մեկ բազմաթիվ ագրեսիվ ռազմական բլոկներ էր ստեղծում՝ ՆԱՏՕ, ԱՆԶՅՈՒՍ, ՍԵՆՏՕ, ՍԵԱՏՕ, ԱՋՊԱԿ։ Դրանց մասնակիցների մեջ ընկան ոչ միայն կապիտալիստական, այլև որոշ զարգացող երկրներ։ Այդ բլոկների մեծ մասում ԱՄՆ-ը ղեկավար դիրք գրավեց։ Մյուս բլոկների մեջ, ինչպես, օրինակ, ՍԵՆՏՕ-ն է, ԱՄՆ-ը ձևականորեն չմտավ, բայց ակտիվ մասնակցություն էր ունենում նրա մշտական մարմինների աշխատանքներին։

«Փաստարկները», որոնց միջոցով ամերիկյան դիվանագետները հիմնավորում էին ագրեսիվ բլոկների ստեղծման անհրաժեշտությունը, տարբեր էին։ Հայտարարվում էր, օրինակ, որ ՆԱՏՕ-ն ստեղծվում է Արևմտյան Եվրոպան «սովետական ագրեսիայից փրկելու» նպատակով, ՍԵԱՏՕ-ն՝ Հարավ-Արևելյան Ասիայի «կարգն ու անվտանգությունը» երաշխավորելու համար, ՍԵՆՏՕ-ն՝ Միջին և Մերձավոր Արևելքում «քայքայիչ գործունեության» դեմ պայքարելու համար։

Միանգամայն պարզ է, թե ինչ էր իրականում թաքնված ամերիկյան դիվանագիտության ֆասադի ետևում, երբ նա ուժեղ թափով աշխարհը առճակատող խմբավորումների էր բաժանում։ Արևմտյան Եվրոպայում ՆԱՏՕ-ն վերածվեց միջազգային լարվածության թուլացման արգելակի։ ՆԱՏՕ-ն, ըստ էության, սահմանափակում է արևմտաեվրոպական երկրների ճնշող մեծամասնության սուվերենությունը, զսպում նրանց դիվանագիտական նախաձեռնությունը Եվրոպայում միջազգային իրադրությունը բարելավելու ուղղությամբ։ Բուրժուական պրոպագանդայի կողմից քարոզվող «Արևելքից եկող

վտանգը» առաջացել դուրս եկավ, իսկ Արևմտյան Եվրոպայում ամերիկյան հեգեմոնիայի, սոցիալիստական երկրների դեմ քայքայիչ գործունեության, ԳՖՀ-ում ռևանշիզմի գոյատևման վտանգը՝ իրականություն։ ՍԵԱՏՕ-ի քողի տակ ԱՄՆ-ը 50-ական թվականների վերջերին Հնդկաչինը նետեց արյունահեղ պատերազմի մեջ։ Եվ, վերջապես, ՍԵՆՏՕ-ն։ Այդ բլոկը ստեղծվել է 1955 թվականին։ Իսկ արդեն 1956 թվականին սանձազերծվեց Եգիպտոսի դեմ ագրեսիան, 1958 թվականին՝ Լիբանանի և Հորդանանի դեմ ԱՄՆ-ի և Անգլիայի ագրեսիան, 1967 թվականի հունիսին՝ Եգիպտոսի, Սիրիայի և Հորդանանի դեմ Իսրայելի ագրեսիան։

Արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում ԿՀՎ-ի (Կենտրոնական հետախուզական վարչություն) (ЦРУ) և պենտագոնի բացեիբաց ներխուժումները սկսեցին ավելի խիստ քննադատության ենթարկվել և բուն Ամերիկայում։ Ի պատասխան այդ քննադատության, ԱՄՆ-ում ակտիվացվեց բուրժուական գիտնականների և պրոպագանդիստների գործունեությունը, որոնք փորձում էին ապացուցել, որ «սառը պատերազմի» ծնունդով աշխարհը «պարտական է կոմունիստներին»։ 60-ական թվականներին ավելի ճկուն վարկած է լույս աշխարհ հանվում։ Հաստատվում էր, որ «սառը պատերազմի» առաջացման մեջ մեղավոր են ինչպես ԱՄՆ-ը, այնպես և ՍՍՀՄ-ը, բայց, վերջինը, իհարկե, «ավելի մեծ չափով»։

Այսպես, օրինակ, ամերիկյան պատմաբան Ա. Շլեզինջերը առաջ քաշեց վերսիա այն մասին, որ ԱՄՆ-ում գոյություն ունեցող օրթոդոքսալ մոտեցումը, որին հետևում է պատմաբանների մեծ մասը «սառը պատերազմի» ակունքները բացատրելիս, կայանում է նրանում, որ այն իբր «կոմունիստական ագրեսիայի» դեմ «ազատ աշխարհի» համարձակ ու անհրաժեշտ պատասխանն է և այժմ վերագնահատման կարիք ունի[2]։

Շարադրելով իր մոտեցումը «սառը պատերազմի» ակունքների վերաբերյալ, Շլեզինջերը գրում է, որ 1945 թվականին ԱՄՆ-ի կառավարությունում աշխարհի կարգի վերաբերյալ այնպիսի տեսակետ էր իշխում, համաձայն որի բոլոր պե-



տությունները համաշխարհային բոլոր գործերում ընդհանուր շահեր ունեն և պետք է համագործակցեն միջազգային կազմակերպություններում։ Ինչպես, վերագրանալով Յալթայի կոնֆերանսից, Ռուզվելտը հայտարարեց, որ նա «վերջ կդնի առանձնացած միությունների միակողմանի գործողությունների, ազդեցության ոլորտների, ուժերի հավասարակշռման և մյուս բոլոր հնարքների սխեմային, որ հարյուրամյակների ընթացքում փորձարկվում և անփոփոխ կերպով ցանկալի արդյունք չէին տալիս»։ Բայց տեղին է նկատել, որ այդ իր հայտարարությունը Ռուզվելտն արել է հակահիտլերյան կոալիցիայի մասնակիցների փոխօգնության քաղաքականության ոգով, նա լիակատար հույսով էր նայում և ՍՍՀՄ-ի հետ հետպատերազմյան համագործակցության հնարավորությանը։ Ամերիկյան արտաքին քաղաքականության պրակտիկան Ռուզվելտի մահից հետո լրիվ հակադրության մեջ մտավ այն մոտեցման հետ, ինչպես այն հանգանակում էր պրեզիդենտը։ Զրկվելով համագործակցության ոգուց, այն արագորեն էվոլյուցիա ապրեց դեպի նրանց կողմը, ովքեր, արբենալով ատոմային ռումբի տիրապետումից, կոչ էին անում միջազգային հարաբերություններում ԱՄՆ-ի դիկտատը հաստատելու օգտին։

Բնորոշ է, որ անգամ «ազդեցության ոլորտների» կոնցեպցիան, երբ ԱՄՆ-ի կառավարող վերնախավի սրտով չէր լինում, նույնպես մի կողմ էր նետվում և, հակառակը, ուժեղ թափով օգտագործվում էր, երբ այդ նրան ձեռնտու էր լինում։ «Ազդեցության ոլորտների» կոնցեպցիան մերժվում էր, եթե այն գոնե նվազագույն չափով նշանակում էր չմիջամտել սոցիալիստական համագործակցության երկրների ներքին գործերին, և միևնույն ժամանակ նրանով էին ղեկավարվում, օրինակ, Արևմտյան Եվրոպայի երկրների հետ հարաբերություններում։ Անտարակույս, նման մոտեցումն ընդհանուր ոչինչ չուներ հետպատերազմյան իրականության հետ և աստիճանաբար խտացնում էր լարվածությունը կապիտալիստական ու սոցիալիստական երկրների, այդ թվում նաև ԱՄՆ-ի ու ՍՍՀՄ-ի միջև։

Ա. Շլեզինջերն, օրինակ, խոստովանում է. «Միացյալ

Նահանգների քննադատները և անգամ բարեկամները երբեմն նշում են ունիվերսալիզմի նկատմամբ ամերիկյան ձգտման, երբ հարցը վերաբերում է Ամերիկայի ափերից հեռու գտնվող տերիտորիային, և այն նախապատվության միջև անհամապատասխանությունը, որ Միացյալ Նահանգները տալիս են տեղական հետաքրքրություններին: Չերչիլը, ձգտելով ստանալ Վաշինգտոնի բարեհաճությունը Արևելյան Եվրոպայում անգլիական «ազդեցության ոլորտների» քաղաքականության ոգով նախաձեռնության համար, չկարողացավ դիմանալ և հիշեցրեց ամերիկացիներին՝ «Մենք հետևում ենք Հարավային Ամերիկայում Միացյալ Նահանգների օրինակին»:

Հենց պրեզիդենտ Տրումենը հանդիսացավ այն մարդը, որ Չերչիլի հետ միասին «սառը պատերազմ» սանձազերծեց: Պաշտոնական Վաշինգտոնում, ընդգծում է Շլեզինգերը, այն կարծիքն ստեղծվեց, որ «եթե Ռուսաստանի հետ ընդհարումն անխուսափելի է, ապա խելամտության բոլոր դատողությունները հուշում են, որ այն պետք է տեղի ունենա արևելյան, այլ ոչ թե Արևմտյան Եվրոպայում»[3]: Ամերիկյան իմպերիալիզմը աշխարհը ազդեցության ոլորտների բաժանելուն չհամաձայնվելու պատրվակով սկսեց ակտիվ պայքար մղել Արևելյան Եվրոպայում ժողովրդա-դեմոկրատական պետությունները վերացնելու համար: Լատինական Ամերիկայում ազդեցության ոլորտը ապահովելու իրավունքը իրեն վերապահելով և, ըստ էության, այն հաստատելով Արևմտյան Եվրոպայում, ամերիկյան իմպերիալիզմը 40-ական թվականների վերջում իր հայացքն ուղղեց դեպի ֆաշիստական տերությունից ազատագրված արևելաեվրոպական պետությունները: ԱՄՆ-ի կառավարությունը Անգլիայի հետ համատեղ որոշեց իր «ազդեցության ոլորտը» հաստատել նաև Արևելյան Եվրոպայում:

Այսպիսի՝ գործնական քայլեր ձեռնարկեց Տրումենի կառավարությունը, որպեսզի ի չիք դարձնի ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հետպատերազմյան համագործակցությունը և «սառը պատերազմ» սկսի: Բերենք դրանցից միայն մի քանիսը:

Ռուզվելտի մահից հետո, 1945 թվականին, պրեզիդենտ Տրումենը չպատասխանեց ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև տնտեսա-



կան կապերի զարգացման մասին առաջարկությանը: 1945 թվականի մայիսին ԱՄՆ-ը հանկարծակի դադարեցրեց Սովետական Միությանը տրվող լենդլիզի գծով մատակարարումները: Ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա ատոմային ռումբեր պայթեցնելու մասին բարբարոսական հրամանը զգալի չափով թելադրված էր ՍՍՀՄ-ի վրա ճնշում գործադրելու ամերիկյան կառավարող շրջանների ձգտումով: Արդեն 1945 թվականի աշնանից ԱՄՆ-ը և Անգլիան սկսեցին Սովետական Միության նկատմամբ «սառը պատերազմի» գիծ անցկացնել: ԱՄՆ-ի պետական քարտուղար Բիռնսը, ինչպես նշում է ամերիկյան հետազոտող Ջ. Ուորբերգը, մեկնեց արտաքին գործերի մինիստրների լոնդոնյան խորհրդակցություն ատոմային զենքը որպես ներթադրական սպառնալիք օգտագործելու վճռական մտադրությամբ»[1], ստանալով պրեզիդենտ Տրումենի համապատասխան ցուցումը:

Այսպիսով, ԱՄՆ-ի կառավարությունը փորձում էր իր երկրի սահմաններից հազարավոր կիլոմետրեր այն կողմ լուծել միջազգային գործերը, հաշվի չառնելով երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքները, Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող սոցիալական տեղաշարժերի և Սովետական Միության անվտանգության շահերի հետ: Բայց այսպիսի եզրակացության բուրժուական գիտնականները, անգամ Շլեզինգերի նման լիբերալները, անել չկարողացան: 1945 թվականից հետո ԱՄՆ-ի վարած քաղաքականության նրանց անհետևողական քննադատությունը և «սառը պատերազմի» ակունքների մասին հարցի վերջնական պատասխանը ամենևին չեն համընկնում: Նրանք այդ հարցերում միանում են օրթոդոքսների հետ և հիմնականում քարոզում են «սառը պատերազմի» առաջացման մասին հին տեսակետը, գրեթե ամեն ինչում մեղադրելով Սովետական Միությանը:

Ա. Շլեզինգերը, օրինակ, հայտարարում է, որ «սառը պատերազմից» հնարավոր կլիներ խուսափել միայն այն դեպքում, եթե «Սովետական Միությունը հավատարիմ չլիներ կոմունիստական ուսմունքի անսխալականության ու կոմունիստական աշխարհի առեղծման անխուսափելիության իր

համոզմունքներին»[5]: Պարզվում է, որ ամեն ինչում դարձյալ «մեղավոր է անհաշտ լենինյան գաղափարախոսությունը»: Ինչ վերաբերում է Ռուզվելտին, ապա նա այն պատճառով էր այդքան հաջողությամբ համագործակցում Սովետական Միության հետ, որ «տգետ էր... մարքսիզմ-լենինիզմի դավանքների հարցում», իսկ դա «աններելի է»[6]: Այստեղ ակնհայտորեն երևում է բուրժուական դիտանկյունի դասակարգային դիրքորոշումը, որը չի ցանկանում հասկանալ խաղաղ գոյակցության սովետական արտաքին քաղաքականության էությունը, որը ելնում է նրանից, որ կապիտալիստները և նրանք, ովքեր ծառայում են այդ հասարակարգին, չեն կարող հրաժարվել մարդկային հասարակության կազմակերպման հիմունքների հանդեպ իրենց մոտեցումից և, ինչարկե, ընդունել այն տեսակետի անօրինաչափությունը, որը պաշտպանում է համաշխարհային մասշտաբով կապիտալիզմի պահպանումը և ապա «նրա հաղթանակը»: Չեն կարող, որովհետև այդ դեպքում կապիտալիստները և նրանց քաղաքական ապարատը կվերածվեին ապադասակարգային ինստիտուտների:

Եթե խոսենք Արևելյան Եվրոպայում ամերիկյան քաղաքականության նպատակների մասին, ապա երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո դրանք հետապնդում էին նախ և առաջ այն, որպեսզի թույլ չտրվի այդ շրջանի երկրներում կապիտալիստական կարգերի վերացումը և նրանց սոցիալիստական ճանապարհով զարգացումը:

Լավ հայտնի է, որ ֆաշիզմի դեմ ազատագրական շարժումը, որում հիմնական դերը կատարում էին կոմունիստները, դարձավ այն գլխավոր ուժը, որը 1945 թվականից հետո կանխորոշեց հեղափոխությունների զարգացումը արևելաեվրոպական երկրներում: Այդ չէր ուզում ընդունել ԱՄՆ-ը: Նրանք այդ երկրների բոլոր առաջադիմական ուժերի նկատմամբ անց էին կացնում քայքայիչ քաղաքականություն: Իր արևելաեվրոպական քաղաքականությունում ԱՄՆ-ը համառորեն ընթանում էր իրական փաստերի դեմ: Ամերիկյան դիվանագիտությունն այդ շրջանում սկսեց ղեկավարվել բացառապես գաղափարական և ռազմաստրատեգիական



նպատակներով: Հետևանքը եղավ այն, որ Արևելյան Եվրոպայի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականությունում և ամերիկյան դիվանագիտության գործողություններում երկար ժամանակ գերակշռում էր «խիստ» գիծը: Այն մեթոդները, որոնց միջոցով ԱՄՆ-ը փորձում էր խոչընդոտել Արևելյան Եվրոպայում առաջադեմ ռեժիմների ամրապնդմանը, հանգում էին հետևյալին:

Պետական դեպարտամենտը սկսեց կյանքում իրականացնել «բողոքի դիվանագիտությունը»[7]: ԱՄՆ-ի կառավարությունը սկսեց բողոքել ազատագրված տերիտորիաներում անցկացվող բոլոր միջոցառումների դեմ: Արդեն 1946 թվականին ամերիկյան պրոպագանդան ակտիվորեն դիմում էր «Սովետների կողմից Արևմտյան Եվրոպան նվաճելու մտադրության» մասին առասպելին: Այդ նպատակի համար օգտագործվում էին պրոպագանդայի ամերիկյան կառավարական և մասնավոր ծառայությունները՝ մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը: Ինֆորմացիայի տեղական ազգային բուրժուական օրգանները նույնպես ակտիվորեն ներգրավվեցին սովետական խաղաղասիրական արտաքին քաղաքականության դեմ ուղղված ապակողմնորոշող պրոպագանդային: Աստիճանաբար ոտքի կանգնող արևմտաեվրոպական բուրժուաները հաճույքով օգնում էին «Սովետների ագրեսիվության» մասին առասպելի տարածմանը, քանի որ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների անցումը կապիտալիստական սիստեմից նրանց լրջորեն վախեցրել էր: Եվ այդ տարածվում էր Սովետական Միության մասին, որը ֆաշիզմի դեմ պայքարում կորցնելով 20 մլն. զավակներ, ձգտում էր խաղաղության, վերականգնում պատերազմից քայքայված տնտեսությունը, որպեսզի առաջ ընթանա սոցիալիզմի ամրապնդման ճանապարհով: Հորինված առասպելը անհրաժեշտ էր ԱՄՆ-ին, որպեսզի, օգտվելով Արևմտյան Եվրոպայի երկրների տնտեսական ու ռազմական թուլությունից, նրանց փաթաթի իր հեգեմոնիան, իր հսկողության տակ վերցնի, Եվրոպայում հաստատի ամերիկյան ռազմական ներկայությունը: Եվ պետք է խոստովանել, որ «բողոքի դիվանագիտության» մեթոդը Արև-

մտյան Եվրոպայում ամերիկյան արտաքին քաղաքականությանը որոշակի հաջողություն բերեց։

Եվ այսպես, 40-ական և 50-ական թվականների երկրորդ կեսում Եվրոպայում ամերիկյան արտաքին քաղաքականության և դիվանագիտության մեջ պարզորոշ ի հայտ եկավ երեք հիմնական նպատակ, որոնցից մեկը զուտ պրոպագանդիստական էր, իսկ մյուս երկուսը՝ քաղաքականապես ռեալ։ Քանի որ Եվրոպայում «սովետական և ոչ մի ագրեսիա» գոյություն չուներ, ապա շատով ակնհայտորեն բացահայտվեցին ամերիկյան «զսպման քաղաքականության» իրական նպատակները, որոնք, ըստ էության, Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների ժողովուրդների ներքին գործերին միջամտելու և Արևմտյան Եվրոպայի ժողովուրդների նկատմամբ էքսպանսիոնիստական բնույթ էին կրում։

Միջազգային ասպարեզում սոցիալիզմի երկրների ազդեցության թուլացմանն ուղղված իր գործունեության մեջ ամերիկյան քաղաքականությունը և դիվանագիտությունը առայսօր հույսը դնում է սոցիալիստական երկրների միասնության ու համախմբվածությունը թուլացնելու վրա։ ԱՄՆ-ի կառավարության ղեկավարները չեն թաքցնում իրենց հույսերն այն ուղղությամբ, որ ազգայնական տենդենցները սոցիալիզմի որոշ երկրներում հաղթանակող դուրս կգան ինտերնացիոնալիզմի սկզբունքների նկատմամբ։ Ամերիկյան քաղաքագետների և պրոպագանդիստների բառապաշարում անգամ ծնվեց «ազգային կոմունիզմ» հատուկ տերմինը, որի տակ նրանք հասկանում են պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներից սոցիալիստական համագործակցության որևէ երկրի հրաժարումը։ Ամերիկյան արտաքին քաղաքականության ղեկավարների այդ հույսերը 60-ական թվականներին հատկապես մեծացան, կապված Չինաստանում Մաո-Ցզեդունի խմբի պառակտողական քաղաքականության հետ, որը կանգնեց մարքսիզմ-լենինիզմի հետ ընդհանուր ոչինչ չունեցող ծայրահեղ նացիոնալիզմի և շովինիզմի ուղու վրա։ Նրանք ոգեշնչվում են նաև Պեկինի ներկայիս ղեկավարության հակասովետական կուրսով։

Ամերիկյան գիտնական Ջոն Քեմպբելը ուղղակիորեն խոստովանում է, որ պետական դեպարտամենտը 50-ական



թվականների սկզբից «հույս է փայփայում», որ «ազգային կոմունիզմի» միկրոբները տարածում կգտնեն սոցիալիստական երկրներում։ Ըստ որում ամերիկյան դիվանագիտությունը, եզրակացություն է անում Քեմպբելը, խաղադրույք դնում էր այն բանի վրա, որպեսզի «փորձ կատարի անտագոնիզմ հարուցել» արևելաեվրոպական սոցիալիստական երկրների և Սովետական Միության կառավարությունների միջև[8]։

Դեռևս 1955 թվականին Ժնևում, չորս մեծ պետությունների կառավարությունների ղեկավարների հանդիպման ժամանակ, ԱՄՆ-ի կառավարությունը փորձեր արեց միջամտելու Արևելյան Եվրոպայի ներքին գործերին։ Պրեզիդենտ Էյզենհաուերը համառում էր, որպեսզի արևելաեվրոպական սոցիալիստական երկրներում ներքին իրավիճակի մասին հարցը դրվի հանդիպման օրակարգում։ Սովետական կողմը մերժեց այդ նկրտումները։ 1956 թվականի դեկտեմբերին պետական քարտուղար Դալլեսը քարոզում էր արևելաեվրոպական սոցիալիստական երկրների «չեզոքության» գաղափարը[9]։ 50-ական թվականների վերջերին ԱՄՆ-ի կառավարությունը սկսեց ավելի ակտիվորեն օգտագործել տնտեսական լծակները, փորձելով թուլացնել Եվրոպայի սոցիալիստական երկրների միասնությունը։ Այդ տակտիկան Դալլեսն անվանում էր տրոյականձիական ակտ։ Նրա ֆասադի ետևում խնամքով թաքցվում էին ամերիկյան դիվանագիտության հին նպատակները՝ Արևելյան Եվրոպայում սոցիալիզմի երկրների միասնության խախտումը։

60-ական թվականներին Վաշինգտոնը, հենվելով Բոննի ու Լոնդոնի աջակցության վրա, Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների նկատմամբ իր արտաքին քաղաքական ստրատեգիայում մտցնում է զգալի ուղղումներ։ Այս կապակցությամբ առաջ էին քաշվում «խաղաղ ներթափանցման» և այնուհետև «կամուրջներ գցելու» դոկտրինաները։ Դեռևս 1960 թվականին սենատոր Ջ. Քենեդին իր անհամաձայնությունն արտահայտեց Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների նկատմամբ պրեզիդենտ Էյզենհաուերի վարած տակտիկայի հետ։ «Նոր սահմանագծերի» քաղաքականության ապագա մունետիկն առաջ քաշեց սոցիալիստական համագործակցության դեմ «խաղաղ հարձակման» գաղափարը։ Քե-

ների պահանջեց տարբերակված մոտեցում հանդես բերել արևելաեվրոպական երկրների նկատմամբ, կոչ անելով օգտագործել ԱՄՆ-ի տնտեսական հնարավորություններն Արևելյան Եվրոպայի սոցիալիզմի երկրների հետ ՍՍՀՄ-ի կապերը թուլացնելու համար:

«Խաղաղ ներթափանցման» և «կամուրջներ գցելու» քաղաքականությունը բնավ էլ խաղաղ գոյակցության քաղաքականության համանիշ չէ: Այն լրացնում է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մյուս ուղղությունները, կրում վառ արտահայտված հակասոցիալիստական բնույթ: ԱՄՆ-ում ոմանք չեն թաքցնում, որ դրա նպատակն է սոցիալիստական այն երկրների «քայքայումը», դեպի ուր «կամուրջներ են գցվում»:

Ամերիկյան արտաքին քաղաքական ստրատեգիայի հայրը համարվում է պետական քարտուղար Ջ. Դալլեսը[10]: Նրա գաղափարների ծանրությունը մինչև այժմ զգացնել է տալիս ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ու դիվանագիտության մեջ:

Յոթը տարի, 1953-ից մինչև 1959 թվականը, նա ղեկավարում էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքական կուրսի ղեկը: Դալլեսի մասին ասում էին, որ «պետական ամբողջ դեպարտամենտը նրա գլխարկի տակ էր»[11], այսինքն՝ ամերիկյան դիվանագիտության միանձնյա ղեկավարն էր: Իրականում դա հենց այդպես էր:

Լինելով ԱՄՆ-ի պետական քարտուղար, Դալլեսն այնպիսի արտաքին քաղաքականություն էր վարում, որը նրան կնքեց «սառը պատերազմի ասպետ» մականունը: Նա համառորեն անցկացնում էր Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ հարաբերությունների վատացման գիծը: Դալլեսը քարոզում էր ՍՍՀՄ-ի վրա «բարոյական հարձակման» քաղաքականություն, չթաքցնելով, որ իր գործունեության գլխավոր նպատակն է համարում ՍՍՀՄ-ում սոցիալիստական կարգերի տրանսֆորմացիան կապիտալիզմի կողմը[12]: Դրան հասնելու համար Վաշինգտոնը դիմում էր ամենատարբեր հնարքների և մեթոդների, բացառելով միայն ռազմական գործողությունները:

Դալլեսը միջազգային հարաբերությունները գնահատում էր, նախ և առաջ, Սովետական Միության նկատմամբ ԱՄՆ-ի



քաղաքականության պրիզմայով: «Ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում հազիվ թե մի ժամ լիներ,— նշում է Ա. Բերդինգը,— որ Կրեմլի պատկերը չառաջանար պետական քարտուղարի մտքերում»[13]: Ամերիկյան արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնական խնդիրները Դալլեսն այսպես էր ձևակերպում. «Նախ և առաջ, մենք պետք է ուժեղ մնանք: Մենք պետք է դիմադրենք սովետական հետագա առաջխաղացմանը: Մենք պետք է նրանց հասկացնել տանք, որ յուրաքանչյուր գծայի ագրեսիա կապված է պատերազմի ռիսկի հետ, երկրորդ, մենք պետք է ամրապնդենք ազատ աշխարհի միասնությունը: Մենք չենք կարող հույսներս դնել մեր սեփական ուժի վրա. երրորդ, մենք պետք է հնարավոր ամեն ինչ անենք խուչընդոտելու Սովետական Միության էվոլյուցիան դեպի ավելի շատ անհատական ազատությունը...»[14]: Դրանք միլիտարիստական, կեղծ, քարոզչական պնդումներ էին, որոնք միջազգային լարվածությունը սաստկացնելու նպատակ էին հետապնդում:

Դալլեսը մշտապես ընդգծում էր, որ Սովետական Միությունից «հարկավոր է վախենալ», քանզի նրա նպատակը «ամբողջ աշխարհին տիրելն է»: Պետական քարտուղարը գիտակցաբար խեղաթյուրում էր երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային ասպարեզում տեղի ունեցող երևույթների բնույթը: Օրինակ, նա հավասարման նշան էր դնում աշխարհում սոցիալիզմի և կոմունիզմի գաղափարների ազդեցության աճի և «սովետական առաջխաղացման» միջև, բացասում մարքսիզմ-լենինիզմի ինտերնացիոնալ բնույթը և իմպերիալիզմի բոլոր անհաջողությունները կապում «Մոսկվայի դավերի» հետ: Ըստ Դալլեսի, «ուժեղ մնալ» նշանակում էր սիստեմատիկաբար ավելացնել սպառազինությունների մրցավազքը ԱՄՆ-ում, իսկ ամրապնդել «ազատ աշխարհի միասնությունը»՝ նշանակում էր ստեղծել ագրեսիվ ռազմական բլոկներ:

Հարց է առաջ գալիս, ինչո՞ւ էին Դալլեսը և ամերիկյան մյուս առաջատար քաղաքագետներն ու դիվանագետները, ինչպես և նրանց նախորդները, դիմում միջազգային մաշտաբով ՍՍՀՄ-ի «ագրեսիվ ձգտումների» մասին առասպելին: Ինչո՞ւ էր ամերիկյան արտաքին քաղաքականության ղեկա-

վարն ընտրում հենց այդ հնարքը ամերիկյան հասարակական կարծիքը մշակելու համար։ Այդ հարցերի պատասխանը մեկ անգամ անկեղծորեն տվեց... ինքը Դալլեսը։ Նա խոստովանեց, որ «Միացյալ Նահանգների և Սովետական Միության ժողովուրդները գժտվելու ոչինչ չունեն... Միացյալ Նահանգների և Սովետական Միության միջև միշտ խաղաղություն է տիրել... Երկու կողմերը զգալի չափով անհրաժեշտ ամեն բանով ապահովված են...»[17]։ Այսպիսով, եթե անգամ, Դալլեսի կարծիքով, սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերություններում ոչինչ չի եղել դրանք լրջորեն փչացնելու համար, ապա դրա համար «հարկավոր էր» պատրվակ փնտրել միջազգային ոլորտում։ Նա ճիշտ այդպես էլ վարվում էր։ Մինչև օրս այդ են շարունակում անել ամերիկյան որոշ պատասխանատու քաղաքական գործիչներ։

Այսպիսին էին Դալլեսի հիմնական խնդիրներն ու հանձնարարականները 50-ական թվականների ամերիկյան դիվանագիտությանը, որով նրան զրկեցին դրական հիմքից, ավելի քան նախկինում այն դարձրին «պատերազմի եզրին հավասարակշռման» քաղաքականության կամակատար։ Հիմնականում այդ նույն խնդիրներն էին շարունակում լուծել ամերիկյան արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունը 60-ական թվականներին, թեև, կարելի է նշել, երևան էին գալիս, ինչպես այդ տեղի ունեցավ 1963 թվականին, մի շարք միջազգային պրոբլեմների հարցում ավելի ողջամիտ մոտեցման նշաններ։

Ջ. Դալլեսը տխուր հետք թողեց միջազգային հարաբերությունների պատմության մեջ։ Երկար ժամանակ նրա հայացքները զգալի չափով որոշում էին ամերիկյան արտաքին քաղաքականության գործունեության ուղղությունն անգամ այն դեպքում, երբ իշխանության գլուխ կանգնում էին դեմոկրատները։ Նա հեղինակն էր 1952 թվականին հռչակված Արևելյան Եվրոպայի երկրների «ազատագրման» դոկտրինայի, 1954 թվականին առաջ քաշված «զանգվածային հատուցման» կոնցեպցիայի, իր դաշնակիցների նկատմամբ դիվանագիտական ճնշման, ավելի ճիշտ շանտաժի տակտիկայի, որ հայտնի է իբրև Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի քաղաքականության «տանջալից վերագնահատման» հնարա-



վորության տակտիկա, որին Դալլեսը դիմեց 1954 թվականին, 1956 թվականին բացեիբաց ազդարարված «պատերազմի եզրին հավասարակշռման» սկզբունքի, չեզոքության, որպես «անբարոյական երևույթի», դատապարտման հեղինակը։ Ամբողջությամբ վերցրած հենց այդ հայացքներն էլ մարմնավորում էին ամերիկյան արտաքին քաղաքականությունը, որն այդպիսի ակտիվությամբ իրականացնում էր Դալլեսը միջազգային հարաբերություններում՝ «սառը պատերազմի» քաղաքականությունը։

Այդ քաղաքականության գործնական արդյունքը եղավ ՍԵԱՏՕ-ի ստեղծումը և նրանում ԱՄՆ-ի մասնակցությունը, ռազմական պայմանագրերը Ճապոնիայի, Հարավային Կորեայի, չանկայշիստական իշխանությունների հետ, «Էյզենհաուերի դոկտրինայի» ազդարարումը, ԳՖՀ-ի ներգրավումը ՆԱՏՕ-ի ու Արևմտաեվրոպական դաշինքի մեջ։ Այդ «ռազմական բլոկների» յուրատեսակ դիվանագիտություն էր։ 50-ական թվականներին այդպիսի դիվանագիտությունը հույսեր չէր ներշնչում միջազգային պրոբլեմների լուծման և սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացման հարցում համաձայնության հասնելու ուղղությամբ։

60-ական թվականներին ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ ի հայտ եկան նոր գծեր։ Արտաքին քաղաքականության տենդենցների կանխատեսման բարելավման նպատակով, հատկապես իշխանության գլուխ Քենեդիի կառավարության անցնելով, ամերիկյան դիվանագետներին օգնելու համար մի շարք գիտնականներ են ներգրավվում։

ԱՄՆ-ում հանդես եկավ միջազգային հարաբերություններում քաղաքական գիտության և պրակտիկայի ջանքերի ավելի սերտ փոխգործողության և կոորդինացման անհրաժեշտ տենդենց։ Այդ երևույթը բացատրվում է մի շարք պատճառներով։ Նախ և առաջ նրանով, որ ամերիկյան արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունը մի շարք բավական խոշոր անհաջողություններ ու պարտություններ կրեցին՝ Վաշինգտոնին չհաջողվեց հետպատերազմյան աշխարհում չեզոքացնել Սովետական Միությանը, տապալվեցին Արևելյան Եվրոպայի երկրներում սոցիալիստական նվա-

ճումները քայքայելու ու ոչնչացնելու փորձերը, այդ թվում և «սոցիալիզմի փափկացման» տակտիկայի միջոցով, սոցիալիզմի ուղու վրա կանգնեցին մի շարք ասիական և աֆրիկյան պետություններ, հաղթանակով պսակվեց սոցիալիստական հեղափոխությունը Կուբայում։ Սոցիալիզմի դիրքերն ամբողջ աշխարհում ամրապնդվեցին, չնայած դրան խանգարելու ամերիկյան դիվանագիտության ջանքերին։

Դեռ ավելին, զգալի չափով թուլացավ Վաշինգտոնի քաղաքական ազդեցությունն Արևմտյան Եվրոպայում, ավելի ուժգնորեն սկսեցին արտահայտվել հակասություններն ԱՄՆ-ի և կապիտալիստական աշխարհի մյուս առաջատար երկրների միջև։ Ծավալվում էր Լատինական Ամերիկայի ժողովուրդների պայքարն ընդդեմ ամերիկյան մոնոպոլիաների։

Այդ պայմաններում ամերիկյան արտաքին քաղաքականության ու դիվանագիտության ղեկավարների առջև, բնականաբար, առաջացավ հետագայում ինչպես գործելու հարցը։ Պաշտոնական Վաշինգտոնում եկան այն համոզման, որ ամերիկյան արտաքին քաղաքականությանն ու դիվանագիտությանը ծայրաստիճան անհրաժեշտ են «նոր ինյեկցիա», արտաքին քաղաքական նոր դոկտրիններ և կոնցեպցիաներ, որոնք ԱՄՆ-ի քաղաքականության համար ավելի ամուր և, գլխավորը, ավելի ճկուն տեսական բազա կառուցեին և լուսաբանող կողմնացույցի դեր կխաղային 60—70-ական թվականների ամերիկյան դիվանագիտության համար։ Ջ. Քենեդին Ամերիկայի կառավարողներին ուղղակի կոչ էր անում՝ վերացնել «գաղափարների երաշտը» ԱՄՆ-ի քաղաքականությունում։

Քենեդիի օրոք ամերիկյան արտաքին քաղաքականության պլանավորումը գլխավորում էր Ու. Ռոստոուն, պրեզիդենտի հատուկ օգնականը։ Պրեզիդենտ Ջոնսոնի ժամանակ նա անգամ գլխավորեց պետդեպարտամենտի արտաքին քաղաքականության պլանավորման գծով խորհրդի աշխատանքը։ 1964 թվականին Ռոստոուն հրապարակեց «Տեսարան յոթերորդ հարկից»[16] գիրքը, որտեղ նա մի տեսակ հանրագումարի բերեց անցյալը և նշեց ամերիկյան արտաքին քաղաքականության ու դիվանագիտության ստրատեգիայի և տակտիկայի ապագան։ Ինչպես երևում է, Ռոստոուի առանձ-



նասնյակի պատուհանից միջազգային քաղաքականության վրա բացվող տեսարանը շատ չէր տարբերվում այն բանից, ինչը երևում էր Դալլեսի օֆիսից։ Չնայած, իհարկե, առկա էին նաև որոշ նորություններ։ Չէ՞ որ կյանքն ուղղում և անգամ դեն էր շպրտում 50-ական թվականների ամերիկյան դիվանագիտության հին դոգմաները։

Ու. Ռոստոուն գտնում էր, որ ամերիկյան քաղաքականության ու դիվանագիտության հիմնական նպատակը պետք է լինի երկու ֆորմացիաների հակամարտում սոցիալիզմի նկատմամբ կապիտալիզմի հաղթանակի ապահովումը։ Կապիտալիստական երկրները, նրա կարծիքով, «ազատության» են մարմնավորում, որն իբրև գոյություն չունի սոցիալիստական երկրներում։ Եվ քանի որ ԱՄՆ-ը, ասացեք խնդրեմ, չի կարող համաձայնվել նման իրավիճակի հետ, ապա նրանք, հետևաբար, իրավունք ունեն պայքարելու «ազատության համար» համաշխարհային մասշտաբով։ Իհարկե, Ու. Ռոստոուն երկերեսանության մեջ չի կարելի մեղադրել։ Նա, բացությամբ, խոստովանեց, որ իմպերիալիստների «խաչակրաց արշավանքը» սոցիալիզմի և կոմունիզմի դեմ շարունակվում է։ Ամբոխավարություն անելով «ազատության» և «դեմոկրատիա» բառերով, Ռոստոուն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ու դիվանագիտության առջև Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների նկատմամբ «լիակատար հաղթանակի» նպատակ էր դնում։ Այդ մոտեցման նշաններն արտահայտվեցին 1976 թվականի պրեզիդենտական ընտրություններում դեմոկրատների հաղթանակից հետո։ Մի շարք ամերիկյան քաղաքագետներ վերադարձան դեպի հին երգերը, ներկայացնելով դրանք իբրև «նոր մոտեցում» միջազգային գործերին։ Իսկ նորն այստեղ իսկապես միայն նոր գործիչների անուններն են։

Ձևակերպելով սոցիալիզմի նկատմամբ «լիակատար հաղթանակի» նպատակը, Ռոստոուն վկայակոչում էր ԱՄՆ-ի պետական քարտուղար Դին Ռասկի հեղինակությունը։ Վերջինս, նշում է Ռոստոուն, ասել է հետևյալը. «Երբեմն կարելի է լսել, որ մեր խնդիրները կամ քաղաքականությունը հաղթանակի նպատակ չեն հետապնդում։ Այդ միանգամայն սխալ է։ Իհարկե, մենք մտադիր ենք հաղթել։ Եվ մենք

կհաղթենք։ Մեր նպատակը ամբողջ մարդկության համար հաղթանակն է... Այդ կլինի հաղթանակ համաշխարհային մասշտաբով հանուն ազատության»[17]։ Այդպիսի դատողություններ էր անում ամերիկյան արտաքին քաղաքականության ու դիվանագիտության պաշտոնական ղեկավարը։

60-ական թվականների կեսերին պարզ դարձավ, որ ամերիկյան իմպերիալիզմն իր արտաքին քաղաքական նպատակներում հաջողության հասնելու հույսը շարունակում է կապել, որպես միջոց, ռազմական ուժի հետ։ Միջազգային վեճերի կարգավորման խաղաղ միջոցները Վաշինգտոնը ետին պլան տարավ։ Այդ մասին էին, մասնավորապես, վկայում ԱՄՆ-ի ագրեսիան Վիետնամի ժողովրդի դեմ, Կուբայի ժողովրդի հետ ռազմական միջոցներով հաշվեհարդար տեսնելու փորձերը, ինտերվենցիան Դոմինիկյան Հանրապետությունում և ուրիշ շատ փաստեր։ Ահա ինչպես էր, օրինակ, Ռասթոուն բնութագրում ամերիկյան դիվանագիտությունը. «Ազգային անվտանգության քաղաքականության մեջ գլխավորը ժամանակակից պայմաններում ռազմական և ոչ ռազմական նպատակների, ուժի և քաղաքականության համապատասխանությունն է... Հազիվ թե գոյություն ունենան մեր կողմից իրականացվող դիվանագիտական հարաբերություններ, որոնց վրա չազդեր ԱՄՆ-ի ռազմական հզորության գնահատականը և այն պայմանները, որոնց առկայության դեպքում մենք, հավանաբար, կօգտագործեինք այդ հզորությունը գործնականում։ Ազգային կարևոր շահերի և նպատակների համար դրանց օգտագործման մեր ռազմական հնարավորությունները ու մեր կամքը մեր ամբողջ քաղաքացիական քաղաքականության անխուսափելի ֆոնն են»[18]։ Մեկ ուրիշ անգամ Ռասթոուն ավելի հստակ է անցկացնում այդ նույն միտքը. «Հազիվ թե մեր կողմից ամբողջ աշխարհում իրականացվող դիվանագիտական հարաբերություններում կամ դիվանագիտական քայլերում լինեն այնպիսիները, որոնք կատարելիս հարց չառաջանա՝ ունե՞ն արդյոք Միացյալ Նահանգները ռազմական ուժն օգտագործելու հնարավորություն և կամք իրենց քաղաքականությունը պաշտպանելու համար»[19]։ Եվ չնայած Ռասթոուն պնդում է նաև, որ «ավելի լայն իմաստով մեր նպատակները քաղաքական են, այլ ոչ



թե ռազմական»[20], քիչ հավանական է այն պատճառով, որ Վաշինգտոնը հենց ռազմական ուժին է բացահայտ նախապատվություն տալիս խաղաղ դիվանագիտության նկատմամբ։

Եթե անգամ ամերիկյան քաղաքականության ու դիվանագիտության անիրականանալի նպատակը՝ ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետության հաստատումը, առաջին հայացքից քաղաքական է թվում, ապա միևնույն է դրա ճանապարհը կարող է հարթվել միայն լոկալ պատերազմներով և մեծ պատերազմով։ Լոկալ պատերազմի ամերիկյան ռազմավարները բազմիցս են դիմել։ 50—60-ական թվականների ամերիկյան մեծ քաղաքականությունում ռազմական ասպեկտը ռեալ իրականություն էր, իսկ քաղաքական նպատակներին հասնելու համար խաղաղ համագործակցությունը՝ զգալի չափով բարի մտադրություն։ Այդ տարիների միջազգային հարաբերությունների փորձը վկայում է, որ այն պահերին, երբ միջազգային հարաբերությունները սրվում էին, երբ կապիտալիզմը միջազգային ասպարեզում հերթական պարտություն էր կրում, երբ ազգային-ազատագրական շարժման ուժերը ակտիվորեն էին մարտնչում հանուն իրենց ազատության, ամերիկյան իմպերիալիզմը դիմում էր անգամ ռազմական ուժին, դրա համար օգտագործելով Միացյալ Նահանգների կանոնավոր բանակի մեծ կոնտինգենտներ։

Միջազգային արդի հարաբերություններում ամերիկյան ռազմական քաղաքականության և նրան սպասարկող ճգնաժամային դիվանագիտության հետագա ակտիվացման տենդենցը բխում է սոցիալիզմի երկրների և, առաջին հերթին, Սովետական Միության պաշտպանական հզորության ամրապնդումից։ Ահա թե ինչու հենց այդ նույն Ռասթոուն ստիպված էր արձանագրել, որ «մեծ նպատակի արդյունավետ ծառա հանդիսացող ռազմական քաղաքականությունը (Ռասթոուն խոսում է սոցիալիզմի նկատմամբ կապիտալիզմի լիակատար հաղթանակի մասին։— Ան. Գ.)» պետք է սկսվի հիմնական այսպիսի գործոնների ընդունումից. «Ներկայումս Սովետական Միությունն ունի բավականաչափ միջուկային ուժ և նրա փոխադրման միջոցներ, որպեսզի հսկայական ավերվածություններ պատճառի Արևմտյան Եվրոպային և ոչ նվազ չափով՝ Միացյալ Նահանգներին։ Ուստի

ազգային քաղաքականության բաղկացուցիչ մասը հանդիսանում է մեր նպատակներին հասնելը այնպիսի միջոցներով, որոնք նվազագույնի հասցնեն ատոմային պատերազմի հավանականությունը, միաժամանակ ընդունելով, որ այն միշտ հնարավոր է և պետք է նախատեսվի մեր կարևոր շահերի պաշտպանության համար»[21]։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Սովետական Միության քաղաքականությունը Միացյալ Նահանգների դեմ ատոմային պատերազմ սանձազերծելու նպատակ չի հետապնդում, չնայած այդ երկրի կառավարող շրջանները հաճախ գերի են դառնում այն հուզավառությանը, որ ժամանակ առ ժամանակ առաջանում է ամերիկյան քաղաքական կյանքում խոշոր ալիքների նման տարածվող հակասովետիզմի հետևանքով, ահաբեկում ժողովրդին «կոմունիստական սպառնալիքով», այդ թվում նաև ռազմական ատոմով։ Այդ հարաբերությունները էլ ավելի սրվեցին 1979 թ. վերջում— 1980 թ. սկզբում, կապված ԱՄՆ-ի կառավարող շրջաններին համակած հակասովետական հիստերիայի հետ, որը, Լ. Ի. Բրեժնևի արտահայտությամբ, խփեց բոլոր ռեկորդները։ Չնայած հակասովետական սանձարձակ կամպանիայի համար պատրվակ համարվեցին Աֆղանստանի իրադարձությունները, իրականում նրա հիմքում ընկած էր միջազգային իրադրությունը սրելու ամերիկյան ադմինիստրացիայի ձգտումը և, օգտվելով առաջացած ճգնաժամից, Եվրոպայում նոր հրթիռամիջուկային զենք տեղաբաշխելու և իր պահանջները ներկայացնելու զարգացող երկրների բնական ռեսուրսների վրա հսկելու ուղղությամբ։

Ինչպես դժվար չէ նկատել, սովորաբար հակասովետիզմի յուրատեսակ «իններորդ ալիքը» վրա է հասնում ԱՄՆ-ի կոնգրեսում ռազմական հատկացումների քննարկման և հաստատման շրջանում։ Իսկ եթե անհրաժեշտ է արդարացնել նոր սիստեմի ստրատեգիական զենքի, ինչպես ասենք նեյտրոնային ռումբի, մշակումն ու գործարկումը, ապա հակասովետիզմի ալիքներն ԱՄՆ-ում սկսում են ուժեղ թափով տարածվել ցանկացած ժամանակ, մասսայական ինֆորմացիայի միջոցով։ Այսպես, ԱՄՆ-ում հակասովետական կատաղի կամպանիա հրահրվեց կապված ամերիկյան զինվորականության՝



«թևավոր հրթիռներով» զինվելու պահանջի հետ, ընդ որում այն պայմաններով, որոնք խախտում էին Վլադիվոստոկում վավերացված սովետա-ամերիկյան պայմանագիրը։ Դեմոկրատների քաղաքական վերնախավը 1977 թվականի գարնանը ու ամառը տեղի տվեց այդ ճնշմանը, որով բարդացրեց ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունները։

«Ռազմական ռացիոնալ քաղաքականության» սկիզբը 50-ական թվականներին դրեց գեներալ Մ. Թեյլորը և այն «կատարելագործվեց» պրեզիդենտ Ջ. Քենեդու, Լ. Ջոնսոնի և Ջ. Քարտերի ժամանակ։ Նրա էությունը կազմում էին հետևյալ հիմնական տարրերը՝ միջուկային զենքի հետագա կուտակումը, նպատակին հասնելու նրա փոխադրման միջոցների և արձակման սիստեմների կատարելագործումը, բոլոր տիպերի սովորական սպառազինությունների մեծ քանակությամբ արտադրությունը, ինչպես նաև հատուկ զորամասերի՝ «կանաչ բերետների» և «արագ արձագանքման կորպուսի» կազմավորումն ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարելու համար։ Անիրավական են, սակայն, 70-ական թվականների երկրորդ կեսում միջազգային հարաբերություններին ռազմականացված այդպիսի մոտեցման փորձերը, երբ մարդկությունը սկսել է աստիճանաբար մոռանալ 50-ական թվականների «սառը պատերազմը», ձգտելով կայուն խաղաղության սիստեմի, այլ ոչ թե ռազմաքաղաքական պերմանենտային առճակատման կարգավորման։

ԱՄՆ-ում բավական ընդարձակ քաղաքական դպրոց է ստեղծված, որի ներկայացուցիչները ամեն կերպ փորձում են ապացուցել, որ ամերիկյան և սովետական դիվանագիտության միջև համագործակցությունն իբր անհնարին է այն պատճառով, որ վերջինս ղեկավարվում է մարքսիզմ-լենինիզմով։ Ամերիկյան այդ դպրոցի ներկայացուցիչները, հակառակ գոյություն ունեցող փաստերի, բացառում են ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի, ինչպես նաև կապիտալիստական մյուս պետությունների և սոցիալիստական երկրների միջև դիվանագիտական կոնտակտների ընթացքում դրական արդյունքների հասնելու հնարավորությունը, առաջ քաշելով արդեն վաղուց ձախողված տեսությունն այն մասին, որ «դիվանագիտությունը կարող է արդյունավետ գործել միայն այն

դեպքում, երբ գաղափարական և սոցիալական արմատական պրոբլեմները դադարեն վեճի առարկա լինելուց[22]։ Այդ մոտեցման կողմնակիցներն ապացուցում են, որ քաղաքագետները միայն այն ժամանակ են միջազգային ասպարեզում մեծ հաջողությունների հասնում, երբ նրանք համաձայն են հակառակ կողմի գաղափարախոսությանը և սոցիալական կարգին։ Եվ քանի որ սովետական քաղաքագետները հետևում են մարքս-լենինյան գաղափարախոսությանը և բացառում բուրժուական կարգերի արդարացիությունը, ապա, հետևաբար, «նրանց հետ գործեր վարելն անհնարին է»։

Տվյալ տեսությունում ակնհայտ է պետական դիվանագիտական ֆունկցիաների լրիվ շփոթումն աշխարհայացքի հետ։ Այստեղից հետևում է, որ միայն նույնանման հասարակական ֆորմացիա ունեցող պետությունների ներկայացուցիչները կարող են իրար միջև պայմանավորվածության հասնել, եթե անգամ այդ երկրները միմյանց հետ պատերազմի մեջ են, քանի որ նրանք կասկածի տակ չեն դնում հիմքերի հիմքը՝ հակառակ կողմի սոցիալական կարգը։ Ինչ վերաբերում է միջազգային և երկկողմանի պրոբլեմների լուծման հարցում կապիտալիստական առաջատար պետությունների դիվանագիտության և սոցիալիստական երկրների դիվանագիտության փոխգործողությանը, ապա այդ իբր անհնարին է գաղափարական արմատական տարբերությունների հետևանքով։ Կյանքն, ինչպես հայտնի է, վաղուց հերքել է այդ անհեթեթ մոտեցումը։

Դժվար չէ կռահել դեպի ուր են տանում նման հայացքների հեղինակները։ Նրանք սոցիալ-տնտեսական տարբեր կարգերով պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքի տակ իսկական ական են դնում։ Իրենց գործունեության մեջ խաղաղ գոյակցության սկզբունքը բացասողներն ամեն տեսակ անազնիվ հնարքների են դիմում, սովետական արտաքին քաղաքականությանը վերագրելով այնպիսի նպատակներ, որոնք նա երբեք չի հետապնդում և, ընդհակառակը, թաքցնելով նրա իսկական ձգտումները։

Քաղաքական ձեռնածության այդպիսի «դպրոցի» ներկայացուցիչ էր, օրինակ, Պենսիլվանիայի համալսարանի պրոֆեսոր Վ. Աստատուրյանը։ «Սովետական դիվանագիտու-



թյունը» հոդվածում նա պնդում էր, որ խաղաղ գոյակցության տեսությունը «չի ձգտում» միջազգային հիմնական պրոբլեմների «կարգավորմանը»։ Այնուհետև նա եզրակացնում էր, որ խաղաղ գոյակցության տեսության վերջնական նպատակն Արևմուտքի երկրների սոցիալական սիստեմների վերացումն է ինչպես ուժի, այնպես էլ խաղաղ միջոցներով։ «Գոյակցությունը,— խոստում էր Աստատուրյանը,— ուղղակի խաբեություն է դրա համար շահավետ կանոններին համապատասխան «սառը պատերազմ» վարելու համար»։ Պրոֆեսորն այդ համոզմունքը հիմնավորում է նրանով, որ խաղաղ գոյակցությունն «ամենևին էլ չի նշանակում կապիտալիզմի վերացման նպատակ հետապնդող գաղափարական պատերազմի թուլացում»[23]։ Իհարկե, խաղաղ գոյակցությունը բուրժուական գաղափարախոսության դեմ պայքարի թուլացում բնավ էլ չի նախատեսում։ Իսկ ինչ վերաբերում է «կապիտալիզմի վերացմանը», ապա այստեղ տեղին է հիշեցնել Վ. Ի. Լենինի խոսքերն այն մասին, որ հեղափոխությունները «պատվերով» չեն կատարվում և որ «կապիտալիզմի տիրապետությունը հնարավոր չէր լինի վերացնել, եթե կապիտալիստական երկրների տնտեսական ամբողջ զարգացումը դրան չհանգեցներ»[24]։

1969 թվականի հունիսի 7-ին Մոսկվայում կայացած կոմունիստական և բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցությունում ունեցած իր ելույթում ՍՄԿԿ-ի պատվիրակության ղեկավար Լ. Ի. Բրեժնևն ընդգծեց, որ պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքը «նշանակում է, որ երկրների միջև առաջացող վիճելի հարցերը պետք է լուծվեն ո՛չ թե զենքի ուժով, ո՛չ թե պատերազմով, այլ խաղաղ ճանապարհով։ Այն արդեն միջազգային լայն ընդունելություն է գտել։ Նշելով խաղաղ գոյակցության քաղաքականության մեջ պարունակվող մեծ հնարավորությունները, Լ. Ի. Բրեժնևը հայտարարեց. «Այս հարցում կապիտալիստական և ոչ մի երկրի, այդ թվում և ԱՄՆ-ի, համար մենք բացառություն չենք անում։ Խաղաղ գոյակցությունը մեզ համար ոչ թե ժամանակավոր տակտիկական հնարք է, այլ խաղաղասիրական սոցիալիստական արտաքին

քաղաքականության հետևողականորեն անցկացվող կարևոր սկզբունքը»[25]։

ԱՄՆ-ում խաղաղ գոյակցության քաղաքականության հակառակորդներն ամեն կերպ թաքցնում են այն փաստը, որ այն ոչ միայն ազդարարում է պատերազմից, որպես պետությունների միջև վեճերի հարցերի լուծման միջոցից հրաժարվելը, այլև միջազգային իրավական ամուր բազա է նախատեսում միջազգային և երկկողմանի բնույթի պրոբլեմների լուծման ուղղությամբ տարբեր պետությունների հաշտ համագործակցության համար, որը հենվում է պետությունների միջև իրավահավասարության, փոխըմբռնման և վստահության, միմյանց հետաքրքրությունները հաշվի առնելու, միմյանց գործերին չմիջամտելու, բոլոր երկրների սուվերենությունն ու տերիտորիալ անձեռնմխելիությունը հարգելու, լրիվ իրավահավասարության և փոխադարձ շահավետության հիմունքներով տնտեսական և կուլտուրական համագործակցության զարգացման սկզբունքների վրա։ Մի՞թե այդ պատճառով չէր, որ ԱՄՆ-ում լռեցվեց Հելսինկյան համաձայնագիրն ամբողջությամբ։ Իսկ չէ՞ որ վերջինս խաղաղ գոյակցության քաղաքականության մեծագույն նվաճումն է։

Ամերիկյան գիտնական Ռ. Սթրաուս-Հյուպեն, որը հնարավոր է համարում միջուկային պատերազմը, էլ ավելի անկեղծ է խաղաղ գոյակցության սկզբունքները հետագայում ևս քայքայելու ուղղությամբ ԱՄՆ-ի կառավարությանը տրվող հանձնարարականներում։ Ընդունելով, որ կոմունիստներին «հնարավոր չէ հաղթել մարդկանց մտքերի համար պայքարում»[26], նա կոչ է անում «կոմունիստների հետ խաղաղ գոյակցության պատրանքը հետապնդելու փոխարեն» ամրապնդել «Արևմուտքի, ՆԱՏՕ-ի դաշինքը և կյանքում կենսագործել ատլանտյան կոնցեպցիաները»։ 60-ական թվականները Սթրաուս-Հյուպեն ընդամենը «անկայուն դադարի» ժամանակաշրջան է համարում։ Ցավով խոստովանելով, որ Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխությունից հետո անցած տարիներում «ամբողջ աշխարհում կոմունիստական սիստեմի նվաճումները պատմության մեծագույն հաջողություններն են», միջազգային լարվածության սաստկացման այդ



կողմնակիցը պահանջում է, որ ԱՄՆ-ը ակտիվացնի «սառը պատերազմը»[27]։

Ռ. Սթրաուս-Հյուպեի նման «սառը պատերազմի» ապոլոգետները ԱՄՆ-ի ակադեմիական շրջաններում քիչ թիվ չեն կազմում։ Նրանք այսօր էլ քայքայիչ աշխատանք են տանում խաղաղ գոյակցության դեմ, ամերիկացիների սրտերում անգամ հեռավոր ապագայում միջազգային լարվածության թուլացման հնարավորության նկատմամբ անվստահություն սերմանելով։

Սակայն, ամերիկյան քաղաքական գործիչների, գիտնականների և դիվանագետների մեջ կան այնպիսիները, որոնք հանդես են գալիս Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ համագործակցության հնարավորության և անհրաժեշտության օգտին։ Բավական է, օրինակ, տալ ՍՍՀՄ-ում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ա. Հարիմանի և սենատոր Է. Քենեդիի, ՄԱԿ-ին կից ԱՄՆ-ի նախկին մշտական ներկայացուցիչ Չ. Յոսթի, արտաքին գործերի գծով սենատական հանձնաժողովի նախկին նախագահ Ու. Ֆուլբրայթի, դիվանագետ և գիտնական Ջ. Քենանի, պրոֆեսոր Ռ. Նիլի, հրապարակախոս Ջ. Ուորբերգի[28], գործարար շրջանների ներկայացուցիչներ Դ. Քենդալի, Ա. Համերի և Ս. Իթոնի անունները։ Բայց և անգամ այս կարգի մարդկանց մոտ առկա են տարբեր մոտեցումներ և «համագործակցության բուն գաղափարի» տարբեր ըմբռնողություն։ Ոմանց համար դա միայն այսօրվա իրականությունը նայելու փորձ է, գործնականում մնալով ամերիկյան էքսպանսիոնիզմի դիրքերում, մյուսների համար՝ դա հիմք է, որպեսզի ամերիկյան դիվանագիտական գործունեության նոր ձևերի, հատկապես միջազգային կազմակերպություններում, հետագա զարգացման պահանջ ներկայացնեն, երրորդների, առավել ռեալիստորեն մտածողների համար՝ դա այն անհերքելի փաստի ընդունումն է, որ իր ժամանակին ԱՄՆ-ի ագրեսիան Վիետնամում գլխավոր խոչընդոտը հանդիսացավ միջազգային մի շարք կարևոր պրոբլեմների լուծման ճանապարհին և որ հարկավոր է հետևել խաղաղ գոյակցության քաղաքականությանը։ Հարցը, սակայն, միշտ կայանում է նրանում, թե կառավարական շրջաններում որքանո՞վ են ընկալում այդ տեսակները, ար-

դյո՞ք ազդում են դրանք ամերիկյան արտաքին քաղաքականության վրա:

Այդ տեսակետները ողջամիտ են, եթե հակադրենք դրանք այն շրջանների տեսակետին, որոնք ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև խաղաղ գոյակցության դեմ են հանդես գալիս այն պատճառով, որ սովետական ժողովրդի աշխարհայացքը հանդիսանում է մարքսիզմ-լենինիզմը: Ռեալիստորեն դատող ամերիկյան քաղաքագետները այն եզրակացության են գալիս, որ ներքին սոցիալական և քաղաքական պրոբլեմների լուծման հարցում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի մոտեցման տարբերությունները չպետք է խանգարեն միջազգային այնպիսի պրոբլեմների լուծմանը, ինչպես երկկողմանի հարաբերությունների զարգացումը, զինաթափումը, տարածաշրջանային սպառազինությունների սահմանափակումը, միջուկային փորձարկումների լրիվ արգելումը, միջուկային զենքի չտարածումը, միջուկային զենքն առաջինը կիրառելու արգելումը:

Արդի աշխարհում առաջնահերթ կարևորության պահանջ է «միջուկային պատերազմի կատակլիզմից խուսափելը»[29], Ողջամի՞տ տեսակետ է: Աշխարհը սոցիալական, քաղաքական և տնտեսական առումով այնքան բազմազան է, որ ռեալ չէր լինի նրանում մեկ որևէ պետության կամ մի խումբ երկրների հեգեմոնիա հաստատելը: Հետևապես, Pax americana-ի գաղափարը ֆիկցիա է: Բայց եթե նրանք, ովքեր կարծես թե հանդես են գալիս խաղաղ գոյակցության օգտին, հայտարարում են, որ ԱՄՆ-ը միակ պետությունն է, որը ներկայումս ունի հարստություն, հրազենային հզորություն..., կազմակերպական ունակություններ և, մենք հուսով ենք, քաղաքական իրատեսություն այն բանի համար, որպեսզի մի ամբողջության մեջ միավորի խաղաղ փոփոխությունների օպերատիվ միջազգային սիստեմը[30], ապա այդպիսով հակասում են հենց իրենց, «խաղաղ փոփոխությունների» համար բացահայտ ու խաղաղ միջոցներ առաջարկելով:

Վերջին երեք տասնամյակների ամերիկյան արտաքին քաղաքականության վերլուծության հիման վրա կարելի է եզրակացություն անել այն մասին, որ աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները հասկանալու փորձերի և հին մեթոդներով արդի պրոբլեմների լուծման դեղամիջոցների



միջև հակասությունները ներկայացնում են ամերիկյան մեծ թվով գիտնականների և դիվանագետների քաղաքական ժամանակավրեպի և գործունեության բնորոշ գիծը: Նրանք մինչև օրս հույսերը կապում են միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի «դիրքերի երևակայական բացառիկության» հետ, բայց որում միջազգային իրադրության նման մեկնաբանումը փորձում են փաթաթել ԱՄՆ-ում իշխանության գլուխ անցնող յուրաքանչյուր նոր պրեզիդենտի:

Սովետական Միության հետ ԱՄՆ-ի խաղաղ գոյակցության հնարավորության մասին հարցի վերաբերյալ տեսակետների քաղաքական ներկապնակի մեջ պետք է հատկապես կանգ առնել Նախկինում հայտնի դիվանագետ, ՍՍՀՄ-ում ԱՄՆ-ի նախկին դեսպան, Պրինսթոնի համալսարանի պրոֆեսոր Ջ. Քենանի տեսակետի վրա, որը սովետա-ամերիկյան հարաբերությունների ուսումնասիրման մեծ փորձ ունի: Քենանը նշում է, որ ԱՄՆ-ում «հասարակական կարծիքի լուրջ ճգնաժամ է» ապրում սոցիալիստական երկրների նկատմամբ անզիջողական քաղաքականության հարցում և ուղղակի հայտարարում է, որ Արևմուտքը «ընտրություն չունի, նա պետք է խաղաղ գոյակցության սկզբունքներն իր քաղաքականության հիմքը դարձնի»: Նա Արևելքի և Արևմուտքի միջև առևտրի ընդարձակման կողմնակից է[31]:

Անհրաժեշտ է նաև կանգ առնել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նեոգաղութատիրական ասպեկտի վրա: Զարգացող երկրներում ամերիկյան իմպերիալիզմի էքսպանսիոնիստական նպատակների իրականացման այդ սիստեմը 70-ական թվականներին մեծ տարածում ստացավ: Նա իրենից ներկայացնում է տնտեսական, քաղաքական, գաղափարական և ռազմական մեթոդների ամբողջություն, որոնց օգնությամբ զարգացող երկրներին, ըստ էության, փոքր-ինչ նորացված տեսակի իմպերիալիստական շահագործում է փաթաթվում:

Անգլիայի, Ֆրանսիայի և եվրոպական մյուս գաղութատիրական տերությունների քայքայումը, որ տեղի ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությամբ առաջացած ազգային-ազատագրական պայքարի վերելքի, ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակարգի

կառուցման ակնառու փորձի և երկրորդ համաշխարհային պատերազմում հակաֆաշիստական կոալիցիայի երկրների մեծ հաղթանակի շնորհիվ, անդրադարձավ զարգացող երկրներում իմպերիալիստական տերությունների քաղաքականության ստրատեգիայի ձևերի և մեթոդների, այդ թվում և ամերիկյան արտաքին քաղաքականության և դիվանագիտության վրա։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո զարգացող երկրներում ստեղծված իրավիճակը, որտեղ թուլացան եվրոպական երկրների տնտեսական և քաղաքական դիրքերը, ամերիկյան արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունն անմիջապես փորձեցին օգտագործել ԱՄՆ-ի մոնոպոլիաների օգտին։ Այդ ամենն արվում էր տարբեր պատրվակներով, մասնավորապես նախկին գաղութային երկրներում «կոմունիստական վտանգի» դեմ պայքարելու պատրվակով։ ԱՄՆ-ը, որը ժամանակին չհապաղեց մասնակցել «գաղութային բլիթի» բաժանմանը, այժմ ձգտում էր իր իմպերիալիստական ախոյաններից ամենը վերցնել։ Իրենց այդ ձգտման մեջ ամերիկյան մոնոպոլիաները բավական հաջողության ունեցան՝ նրանք կարողացան Ասիայում և Աֆրիկայում զգալի չափով դուրս մղել մրցակիցներին։ Ինչ վերաբերում է Լատինական Ամերիկային, ապա այս շրջանում, նախկինի պես, շարունակում է տիրություն անել ԱՄՆ-ը։

Զարգացող երկրներում ամերիկյան արտաքին քաղաքականության և դիվանագիտության նպատակներն են՝ նախ և առաջ, ձգտել թույլ չտալու Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում սոցիալիզմի ստեղծումն ու զարգացումը, աշխարհի այդ շրջանները և առանձին երկրներ կապիտալիստական համաշխարհային տնտեսության սիստեմում, նախ և առաջ, ամերիկյան մոնոպոլիաներից կախման մեջ պահելը և, երկրորդ, իմպերիալիստական մյուս երկրների մոնոպոլիաների դուրս մղումը տնտեսապես առավել կարևոր շրջաններից։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան դիվանագիտության համար բնորոշ դարձավ զարգացող երկրներում, ի շահ ԱՄՆ-ի, ոչ միայն արտաքին քաղաքական պետական մեխանիզմի, պրոպագանդայի միջոցների և ռազմական ուժի, այլև ամերիկյան տնտեսական և ֆինանսական պոտենցիալի օգտագործումը։ Պետական դեպարտամենտն ավելի լայն կերպով է հենվում տնտեսական լծակների՝ կապիտալի արտահանման և տնտեսական օգնության վրա։ Այդ գիծն անցկացնելու ընթացքում որոշակի աշխատանք է կատարվում ամերիկյան կոմպանիաների և ֆիրմաների հետաքրքրությունները՝ նոր պայմաններին հարմարեցնելու ուղղությամբ, երբ զարգացող երկրների բնական հարստությունների շահագործումը բախվում է նրանց քաղաքական անկախությանը։

Նեոգաղութատիրական քաղաքականությունը, չնայած և նա հիմնականում հին նպատակներ է հետապնդում, ամենևին էլ հավասարազոր չէ գաղութատիրությանը։ Եթե գաղութարարները, օրինակ, իրենց քաղաքականությունը գաղութներում անց էին կացնում և այժմ անցկացնում են տնտեսապես բռնի միջոցների օգնությամբ, ապա նեոգաղութարարները հասնում են դրան նախ և առաջ անուղղակի հարկադրման ճանապարհով։ Միևնույն ժամանակ վերջինները, երբ այդ նրանց հարմար է, դիմում են բռնի հին մեթոդներին։ Բավական է հիշեցնել ԱՄՆ-ի միջամտությունը Գվատեմալայում, Կոնգոյում (Քինշասա), Դոմինիկյան հանրապետությունում և, վերջապես, ամերիկյան իմպերիալիզմի ագրեսիան Վիետնամում։ Այն, ինչ 70-ական թվականներին տեղի ունեցավ Անգոլայում, Լիբանանում, Զիմբաբվեում, Նամիբիայում և Զաիրում, պարզապես հաստատում է, որ ԱՄՆ-ը ուժի գործադրման իր մեթոդներից չի հրաժարվել։ Չնայած պարզ է և մեկ այլ հանգամանք։ Վիետնամում ամերիկյան ավանտյուրայի ձախողումից հետո ԱՄՆ-ի քաղաքագետներն ու գեներալները, այս կամ այն երկրում առաջացող կոնֆլիկտային իրավիճակների ժամանակ, սկսեցին ավելի շատ դիմել անուղղակի ճանապարհների, քան ուժի ուղղակի գործադրմանը։ Գլխավոր հույսը դրվեց օլիգարխիական և ռազմական ուժերի ամրապնդման, վարձկանների օգտագործման, տնտեսական ճնշման վրա։

Գաղութատիրական պրոբլեմը Ջ. Դալլեսը ժամանակին անվանեց «Ամերիկայի դիլեմմա»[32]։ Դալլեսը և նրա օգնա-

կանները լուծում էին այդ դիլեմման, փորձելով համատեղել անհամատեղելին. ՆԱՏՕ-ի շրջանակներում դաշնակիցների հետ հարաբերությունները զուգակցվում էին պաշտոնական հայտարարություններով այն մասին, որ ԱՄՆ-ը «գաղութատիրության նկատմամբ օպոզիցիոն դիրք է գրավում»։ Այդ պայմաններում ամերիկյան դիվանագիտությունը մի կուրս վերցրեց, որը Դալլեսն այսպես ձևակերպեց. «Մենք պետք է միջնորդի դեր կատարենք եվրոպական գաղութատիրական պետությունների և իրենց անկախության համար պայքարող ժողովուրդների միջև»։ Բայց երբեք և ոչ մի աջակցություն զարգացող երկրներում տեղի ունեցող ազգային-ազատագրական և ոչ մի շարժմանը ԱՄՆ-ը և նրա դիվանագիտությունը չցուցաբերեցին։ Դեռ ավելին, ամերիկյան քաղաքագետները, պատեհ առիթն օգտագործելով, ՄԱԿ-ում և միջազգային մյուս կազմակերպություններում ապագաղութացման դեմ էին պայքար մղում։ Դալլեսը, իր ենթականերին օրինակ ծառայելով, պնդում էր. «Ես համոզված չեմ, որ գաղութային յուրաքանչյուր ժողովուրդ պետք է մեխանիկորեն անկախություն ստանա հենց այն պահանջով, որ պահանջում է այդ»[33]։ Ահա՛ քեզ և միջնորդ։

ԱՄՆ-ի պաշտոնական ինֆորմացիայի միջոցները, առաջատար քաղաքագետները քիչ ջանք չգործադրեցին ազգային հարցում սովետական քաղաքականությունը սև գույներով ներկայացնելու համար։ Եվ այսօր ամերիկյան պրոպագանդան տարածում է «սովետական գաղութատիրության» մասին առասպելը։ 50—60-ական թվականներին Ջ. Դալլեսը, իսկ այնուհետև Դ. Ռասկը ձգտում էին իրենց ունկնդիրների և ընթերցողների ուշադրությունը հրավիրել գոյություն չունեցող «սովետական գաղութատիրության» վրա։ Այդ նույն կեղծ պնդումներն են լսվում այսօր, օրինակ, Աֆրիկայում սովետական քաղաքականության հասցեին։ Դրանք, ինչպես, միանգամայն անհիմն են։

Մարտնչելով «սովետական գաղութատիրության» դեմ, ԱՄՆ-ի պետական քարտուղարներն ամեն գնով խուսափում էին անգամ հանդիպել գաղութատիրության դեմ պայքարող ժողովուրդների ներկայացուցիչների հետ։ Ե՛վ Դալլեսը, և՛ Հերթերը, օրինակ, չցանկացան հանդիպում ունենալ Ալժիրի



ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ներկայացուցիչների հետ, որովհետև այդ կարող էր «վիրավորել» ֆրանսիական գաղութարարներին։ Ամերիկյան քաղաքականությունը և դիվանագիտությունն այդ հարցում փոքր-ինչ փոփոխվեցին միայն պրեզիդենտ Քեննեդու իշխանության գլուխ անցնելուց հետո։

ԱՄՆ-ի քաղաքականությունն ու դիվանագիտությունը միջազգային ասպարեզում մշտապես ծաղկեցվում և պաշտպանվում են հարյուրավոր բուրժուական, ոչ միայն ամերիկյան, գիտնականների կողմից։ ԱՄՆ-ի հրատարակչությունները ամեն տարի տասնյակ հազարավոր գրքեր են լույս ընծայում, որոնցում համառորեն այն միտքն է անցկացվում, որ ամերիկյան արտաքին քաղաքականությունը ղեկավարվում է ինչ-որ «ալտրուիստական» մոտիվներով և իրականացվում «լուսավորյալ» քաղաքագետների միջոցով, որոնք հոգ են տանում միայն մյուս ժողովուրդների «օգնելու» մասին։ Այդ կարգի աշխատություններում խնամքով շրջանցվում է հարցը ամերիկյան արտաքին քաղաքականության դասակարգային բնույթի, ի դեմս մոնոպոլիստական կապիտալի, քաղաքական վերնախավի և ռազմաարդյունաբերական կոմպլեքսի՝ նրա շարժիչ ուժերի մասին։

Ամերիկյան արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունը գովաբանող բուրժուական գիտնականների, քաղաքագետների և դիվանագետների աշխատությունները լայնորեն տարածվում են ԱՄՆ-ի սահմաններից դուրս, նրանցով սնվում են Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունների միլիոնավոր ուսանողներ։ Թեև ամերիկյան դիվանագիտության մասին այդ կարգի գրականությունից ստացվող օգտակար գործողության գործակիցը Վաշինգտոնի համար բավական ցածր է, բայց այդ չի նշանակում, որ նման ապոլոգետիկան մարդկանց, հատկապես երիտասարդության գիտակցության մեջ հետք չի թողնում, որը պատմական իրադարձությունների մասին միայն գրքերից է տեղեկանում։

Որպես օրինակ կարելի է բերել ՍՍՀՄ-ում անգլիական նախկին դեսպան Ուիլյամ Հեյթերի «Մեծ տերությունների

դիվանագիտությունը» գիրքը։ Այդ համեմատաբար ոչ մեծ աշխատությունում գլուխներ են պարունակվում ամերիկյան, սովետական, անգլիական և ֆրանսիական դիվանագիտությունների մասին։ Ու չնայած գրքի առաջաբանում Հեյթերն ընդգծում է, որ դա հետազոտական բնույթ չունի և Վաշինգտոնում, Լոնդոնում, Փարիզում ու Մոսկվայում դիվանագիտական ծառայության ընթացքում ստացած «անձնական տպավորությունների» արդյունք է, այնուամենայնիվ, անգլիական դիվանագետի կողմից արտահայտված գնահատականները հետաքրքրություն են ներկայացնում գոնե այն իմաստով, որ ունեն ամբողջապես նպատակային բնույթ և պրոպագանդիստական մեծ ծանրաբեռնվածություն։

Ու. Հեյթերն ամերիկյան դիվանագիտությանն ամենաբարձր գնահատականն է տալիս։ Նա նշում է, որ ԱՄՆ-ը ավանդաբար գաղութատիրության դեմ է հանդես գալիս, և ցավում է միայն, որ ամերիկյան դիվանագիտության նման դիրքը «հաճախ դժվարացնում է նրա փոխգործողությունը գաղութատիրական երկրների, Անգլիայի և Ֆրանսիայի հետ»[34]։

Դրանով իսկ Հեյթերը փորձում է համոզել, որ ամերիկյան քաղաքականությունը չի խառնվել աշխարհի գաղութատիրական բաժանմանը և զուրկ է գաղութատիրական ձգտումներից։

Գրքում գովաբանվում է ամերիկյան տնտեսական «օգնությունը», որը հատկապես մեծացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և դարձավ ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի մի շարք երկրների տնտեսական և այնուհետև քաղաքական ներթափանցման միջոց։ Հեղինակը պնդում է անգամ, որ եթե ԱՄՆ-ը զբաղվեր միայն «սեփական այգու մշակմամբ», ապա «մնացած ամբողջ աշխարհը կքայքայվեր»։ Անգլիական դիվանագետն է՛լ ավելի զարմանալի հայտնություն է անում։ Ըստ նրա պարզվում է, որ «ամերիկյան իմպերիալիզմ» «պարզապես չկա»։ Այն գոյություն չունի, քանզի ԱՄՆ-ում «լայնորեն հակագաղութատիրական տրամադրություններ են տարածված»։ Ուստի Վաշինգտոնի համար դժվար կլիներ իմպերիալիստական քաղաքականություն վարել, «եթե անգամ երբևիցե դրա կարիքը ունեցել է, իսկ դա երբեք չի եղել»[35]։



Հեյթերի գրքի օրինակը ասում է այն մասին, որ ամերիկյան քաղաքականությունն ու դիվանագիտությունը բավական ակտիվորեն են պաշտպանվում, այդ թվում և մեմուարային գրականությունում, ինչպես նաև համալսարանական և ակադեմիական ոլորտներում։

Եթե խոսելու լինենք ամերիկյան քաղաքական ինստիտուտների և արտաքին քաղաքականության վրա նրանց ազդեցության մասին, ապա, անտարակույս, առաջին տեղը պետք է հատկացնենք ԱՄՆ-ի պրեզիդենտին, որն իրականացնում է պետության ղեկավարի և կառավարության ղեկավարի ֆունկցիաները։ Հանդիսանալով գործադիր իշխանության ապարատի ղեկավար, ԱՄՆ-ի պրեզիդենտն, իհարկե, մեծապես ազդում է արտաքին քաղաքական կարևորագույն որոշումների ընդունման վրա։

Սահմանադրությամբ ԱՄՆ-ի պրեզիդենտին այնքան մեծ լիազորություններ են տրված, որ կարող է թվալ, թե նրա ձեռքում են կենտրոնացած իրական իշխանության բոլոր սանձերը, որոնք արտաքին քաղաքական հարցերում գրեթե միանձնյա գործելու հնարավորություն են ընձեռում։ Իրականում ճիշտ այդպես էլ լինում է արտաքին քաղաքական առանձին որոշումներ ընդունելու դեպքում։ Սակայն գործն այլ բնույթ է կրում ամերիկյան արտաքին քաղաքականության ստրատեգիական ընդհանուր կուրս մշակելու ժամանակ։ Այդ պրոցեսին հարյուրավոր մարդիկ, բազմաթիվ պետական հիմնարկներ են մասնակցում։ ԱՄՆ-ի քաղաքական և պետական մեխանիզմի ընդերքում խմորվող որոշումների մշակումն ու իրականացումը կյանքում դառնում է միջազգային ասպարեզում ամերիկյան իմպերիալիզմի կողմից անցկացվող քաղաքական գիծ։

ԱՄՆ-ի պրեզիդենտը կարող է ընդհատել և անգամ արգելել այն որոշումների իրականացումը, որոնք, իր կարծիքով, կարող են վնասել երկրի շահերին։ Սակայն եթե պրեզիդենտը մերժում է իրեն ոչ ողջամիտ թվացող առաջարկությունները, ապա նա այստեղ ընդհարման մեջ է մտնում այդ առաջարկությունները առաջ քաշած ԱՄՆ-ի պետական ապարատի մարդկանց, խոշոր չինովնիկների, ռազմաարդյունաբերական կոմպլեքսի ներկայացուցիչների

հետ։ Ընդ որում, ԱՄՆ-ի պրեզիդենտները գալիս են ու գնում, իսկ չինովնիկները պետական դեպարտամենտում, պենտագոնում, ԿՀՎ-ում, ՀԴԲ-ում, մինիստրություններում ու գերատեսչություններում, որպես կանոն, երկար տարիներ շարունակում են ծառայել, գրեթե չփոխելով միջազգային հարաբերությունների վերաբերյալ հայացքները, իսկ եթե անգամ փոխում են, ապա միայն սերնդափոխության հետևանքով, որոնք յուրովի են գնահատում ուժերի հարաբերակցությունը միջազգային ասպարեզում։ Հենց այդպիսի քաղաքական տատանումների հետևանքով, երբ տեղի է ունենում ոչ միայն սոսկ պրեզիդենտի փոփոխություն, այլ իշխանության գլուխ է անցնում մրցակցող կուսակցությունը, մի ամբողջ խումբ մարդիկ, որոնք որոշում են ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ստրատեգիական գիծը, հաճախ սովետա-ամերիկյան հարաբերություններում սկսում են երբեմն հին արմատներ ունեցող բարդություններ առաջանալ, այդ թվում արտահայտություն է ստանում «կիրեբրայնների» կիրքը հանդեպ բարոյախոսությունները, տատանումները և անհետևողականությունը արտաքին քաղաքական գործերում։

ԱՄՆ-ի հետպատերազմյան բոլոր պրեզիդենտները լոյալ էին քաղաքական իշխող կուսակցությունների նկատմամբ։ Տրումենը, Էյզենհաուերը և Ջոնսոնը գերադասեցին ընդհանրապես «սառը պատերազմի» և անգամ «սահմանափակ տաք պատերազմների» հոսանքի դեմ չգնալ։ Իսկ պրեզիդենտ Քենեդին միայն իշխանության ղեկի մոտ գտնվելու վերջին տարում փորձեց մի շարք միջոցառումներ ձեռնարկել, որոնք, ինչպես այժմ հայտնի է, զգալի չափով տարբերվում էին պետական դեպարտամենտում, պենտագոնում և ԿՀՎ-ում տիրող գաղափարներից։ Քենեդին մեկ անգամ չէ, որ հրաժարվում էր համաձայնություն տալ Կուբայի և Լաոսի, Սովետական Միության և Վիետնամի նկատմամբ ամերիկյան ռազմամոլների ավանտյուրային պլաններին։ Առնվազն երկու տարով նա հետաձգեց ԱՄՆ-ի ուղղակի ագրեսիան ՎԴՀ-ի դեմ։ Միաժամանակ նա, անտարակույս, Վիետնամում ամերիկյան լայն ագրեսիայի նախաձեռնողներից էր։

Եվ այդպես, ԱՄՆ-ի պրեզիդենտն ամենևին էլ «միայնակ գեմբը» չէ Սպիտակ տանը։ Նրա թիկունքում գործում են ԱՄՆ-ի



արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները որոշող հարյուրավոր մարդիկ և ուժեր։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության և դիվանագիտության մեջ մեծ է պենտագոնի և ԿՀՎ-ի դերը։ Ահա թե ինչպես է բնորոշում այն ամերիկյան գիտնական Ջեյմս Մաքամին. «Նրանք (զինվորականները— Ա. Գ.) այժմ հավասարազոր պարտնյորներ են արտաքին քաղաքական գործերում որոշումներ ընդունելու և կյանքում իրագործելու հարցերում և այնքան ժամանակ են այդ դերը կատարելու, քանի դեռ պետությունները իրենց գործերը վարելիս մերկ ուժի են դիմում»[38]. Պենտագոնը ամերիկյան զինվորականության և ռազմաարդյունաբերական մենաշնորհների յուրատեսակ «խոսնակն» է հանդիսանում։ Իրենց գործողություններով նրանք հաճախ արտաքին քաղաքական ոլորտ են ներխուժում, ուղղություն տալով նրան, հատկապես, ինչպես ամերիկացիներն են ասում, «թույլ» պրեզիդենտների ժամանակ։

Ինչպես և մյուս խոշոր կապիտալիստական երկրներում, ԱՄՆ-ում արտաքին քաղաքականության բնագավառում որոշումների մշակման պրոցեսը բարդ բնույթ է կրում։ Դասակարգային շահեր հետապնդելով, որոնք առանձնապես վառ կերպով են արտահայտվում արտաքին քաղաքականության բնագավառում, բուրժուական իշխանության հիմքը կազմող մրցակցող գործարար շրջանները ու քաղաքական խմբավորումները տակտիկայի, մոդեռնացման և բուն ստրատեգիական գծի համար պաշ որոշելու հարցերում մշտապես գտնվում են իրենց մրցակցային շահերն արտահայտող պայքարի պրոցեսում։ Այնպես որ հաճախ ԱՄՆ-ի մամուլում այդ երկու մրցակցող ներկայացուցիչների միջև տարաձայնություն է սկսվում, սուր վիճաբանություններ են գնում։ Այդ մրցակցող կողմերի պայքարն իրենց շահավետ որոշումների համար մշտական է, հատկապես ֆինանսատնտեսական շահերը շոշափող հարցերում։ «Արտաքին քաղաքականության բնագավառում որոշումների ընդունման պրոցեսը,— նշում է Ջ. Մաքամին,— այնքան բարդ է, որ վերլուծության գրեթե չի ենթարկվում։ Այն պայմանավորվում է մի շարք գործոններով և անցկացվում ինչպես կառավարությունում, այնպես և նրանից դուրս

գտնվող բազմաթիվ ներկայացուցիչների միջոցով։ Միջազգային հարցերին վերաբերող պետական քարտուղարի ստորագրած յուրաքանչյուր հեռագրի, պրեզիդենտի յուրաքանչյուր հայտարարության, շտաբների հրամանատարների միացյալ կոմիտեի որոշումների, կոնգրեսի հանձնաժողովում յուրաքանչյուր քվեարկության ետևում բոլոր այդ գործողություններին ծնունդ տվող ուժեր են կանգնած։ Եվ այնուհետև Մարքամին խոստովանում է. «Յուրաքանչյուր որոշում ընդունելուց առաջ բազմաթիվ փաստեր շարադրվում են որևէ ներկայացուցչի, մարդկանց որևէ խմբի կողմից, որոնք գործում են հրապարակով կամ քողարկված և մասնավոր ինֆորմացիայի միջոցներով ազդում են մարդկանց ուղեղների վրա, որոնք ունեն որոշումներ ընդունելու պատասխանատվություն»[37]։ Այդ ոչ այլ ինչ է, քան, ըստ էության, ԱՄՆ-ի կառավարության և ամերիկյան դիվանագիտության գործունեության նկատմամբ ճնշման տարբեր խմբերի՝ ամենօրյա հսկողության ընդունում։

Ամփոփելով շարադրվածը, անհրաժեշտ է նշել, որ ամերիկյան քաղաքականությունն ու դիվանագիտությունը 50—60-ական թվականներին իրենց դրսևորեցին որպես ակտիվ կոնսերվատիվ ուժ, որոնք ձգտում էին միջազգային հարաբերությունների զարգացման անիվը դեպի ետ, դեպի այն ժամանակները շրջել, երբ ԱՄՆ-ը քաղաքական և տնտեսական առումով իշխում էր Արևմտյան Եվրոպայում, հաշվի չէին առնել գաղութային երկրների և ժողովուրդների կենսական հարցերը և փորձում էին «կոմունիզմը դուրս մղել» Արևելյան Եվրոպայից և Ասիայից։ Եվ շատ ցավալի է, որ ԱՄՆ-ի կառավարող շրջանները 70-ական թվականների երկրորդ կեսին վերստին սկսեցին խորհրդածել իրենց դարն ապրած քաղաքական կատեգորիաներով և սովետա-ամերիկյան հարաբերություններում կանգնեցին կատարված սխալների կրկնման ուղու վրա։

ԳԼՈՒԽ II

# ՔԵՆԵԴԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. «ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԾԵՐ» ԵՎ ՀԻՆ ՎՐԻՊՈՒՄՆԵՐ

1961 թվականի հունվարին իշխանության ղեկին անցած դեմոկրատների կառավարության գործունեության սկզբնական շրջանի առանձնացումը նպատակահարմար է այն առումով, որպեսզի առանձին կարևորագույն պրոբլեմների միջոցով վերլուծենք, թե ինչի՞ վերածվեցին պրեզիդենտ Քենեդիի «նոր սահմանագծերը» արտաքին քաղաքականության մեջ, որքանով էր նոր կառավարությունը ձգտում հեռանալ հին կուրսից, որն ինքը Քենեդին քննադատում էր նախքան պրեզիդենտ դառնալը։

ԱՄՆ-ի նոր պրեզիդենտների գործունեության առաջին տարին հատկանշական է մի շարք առումներով։ Չնայած քաղաքականության մեջ ժառանգորդության գործոնի առկայությանը, արդեն այդ ժամանակ ստուգվում են նոր արտաքին քաղաքական պլատֆորմի հատկանությունը, նրա համապատասխանությունը նախընտրական խոստումներին։ Շատ բանի մասին է խոսում նաև նոր կառավարության կազմը, նրա կազմավորման պրոցեսը։

Նոր պրեզիդենտի ու նրա կառավարության կողմից օգտագործվելիք մեթոդները պարզաբանելու համար 1960 թվականի նոյեմբերին և դեկտեմբերին ամերիկյան մամուլում մի շարք հան-

դրվատացնող հոդվածներ երևացին: Դրանց մեծ մասը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կազմակերպում էին պրեզիդենտին մոտ կանգնած մարդիկ: «Յու. Ս. Նյուս էնդ ուորլդ ռիպորտ» ամսագրում մեծ հարցազրույց ունեցավ ամերիկյան քննադատ և Քենեդիի կենսագիր Ջեյմս Բեռնսը: Նա հավաստիացնում էր, որ նոր պրեզիդենտն «ուժեղ մարդ է», որն օրինական աշխատելու է «ցանկացած իրադրությունից դուրս գալու համար»[1]: Ֆրանկլին Ռուզվելտն անակնկալներ մատուցելու հակումներ ուներ, իսկ Քենեդին «համոզմանորեն նախապատրաստելու և տակտիկապես պլանավորելու է իր գործողությունները»: Հարցազրույցի վերջում Ջ. Բեռնսը հավաստիացնում էր, որ միջազգային ասպարեզում Քենեդին «ինտերնացիոնալիստական» (ավելի ճիշտ կլինի, ինչպես, ասել «էքսպանսիոնիստական») կուրս է անցկացնելու: Նման պարզաբանումներից հետո ամսագիրը եզրակացություն էր անում, որ «Սպիտակ տուն եկած Քենեդին շատ բանով տարբերվելու է ընտրական շրջանի Քենեդիից»[2]:

Բնորոշ է, որ Բեռնսի հարցազրույցից հետո տպագրված էր Քենեդիի մեծ հոդվածը, որ նա գրել էր դեռևս 1960 թվականի հունվարին, այսինքն՝ ընտրություններից շատ առաջ, որում նա շարադրում էր իր հայացքներն այն բանի վերաբերյալ, թե 60-ական թվականներին ինչպես պետք է գործի ԱՄՆ-ի պրեզիդենտը: Քենեդին շեշտը դնում էր ԱՄՆ-ի կառավարության «ավելի արդյունավետ» աշխատանքի անհրաժեշտության վրա. Նա նշում էր, որ այսօրվա պրեզիդենտը պետք է «վտանգավոր խնդիրներ» լուծի և Սպիտակ տան աշխատանքին «իսկական մարտնչողական ոգի» հաղորդի: Ֆրանկլին Ռուզվելտի կողքին նա «մեծ իդեալների» մարտիկներ անվանեց Թեոդոր Ռուզվելտին, Վուդրո Վիլսոնին և (որպես կուսակցական պատկանելության տուրք) Հարրի Տրումենին[3]:

Ամերիկյան մամուլում բազմաթիվ հոդվածներ երևացին նաև, որոնցում նոր կառավարությանը ակնարկում էին, որ նրանից հաստատուն գիծ են սպասում միջազգային գործերում: Կառավարող դասակարգը պահանջում էր կայունացնել դոլարը, «ծնկի բերել Կաստրոյին», ամրապնդել պաշտպանու-



թյան մինիստրությունը, նախազգուշացնելով, որ ՍՍՀՄ-ի կողմից հնարավոր են միայն «սառը պատերազմի» ոգով գործողություններ[1]: Նոր պրեզիդենտի Սպիտակ տուն գալով, այդ կարգի մոտիվներն ամերիկյան մամուլում մշտական դարձան:

1961 թվականի հունվարին, երբ Քենեդին պետության ղեկավարի պաշտոն ստանձնեց, ամերիկյան արտաքին քաղաքականությունը դեռևս պատված էր «սառը պատերազմի» սառույցով: «Պետական դեպարտամենտ—պենտագոն—ԿՀՎ» ֆիրմայի սառցարանային սարքը աշխատում էր լրիվ հզորությամբ: «Սառը պատերազմի» հեղինակավոր կողմնակիցներն ԱՄՆ-ում հանդես էին գալիս այն ամենի դեմ, ինչը որևէ չափով կարող էր նպաստել միջազգային կլիմայի ջերմացմանը:

Վաշինգտոնում կարծում էին, որ տակտիկական և ստրատեգիական առումով ամերիկյան կապիտալիզմի համար միջազգային ասպարեզում շահավետ են միլիտարիստական կուրսի պահպանումը, սոցիալիստական երկրների դեմ պայքարի ուժեղացումը: ԱՄՆ-ում գերադասում էին սոցիալիզմի և կոմունիզմի դեմ պայքարել սպառազինությունների մրցավազքի, ռազմական ինտերվենցիաների և քայքայիչ գործողությունների, մյուս երկրների ներքին գործերին միջամտելու միջոցով: Դրանք իմպերիալիստական պետությունների հին փորձված մեթոդներ էին, որոնք երբեմն նրանց որոշակի քաղաքական և տնտեսական դիվիդենդներ էին բերում: Այսպիսով, երբ հունվարյան ցրտաշունչ մի օր Քենեդին պրեզիդենտական երդում էր տալիս, ԱՄՆ-ի քաղաքական ասպարեզում իշխում էին «սառը պատերազմի» կողմնակիցները, որոնք ձգտում էին ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ ամեն ինչ թողնել նախկին ձևով:

Այդ ամենն էլ, նախ և առաջ, պայմանավորեց այն, որ պրեզիդենտության սկզբնական շրջանում առաջնությունը տրվեր ռազմական քաղաքականությանը: Հենց այդ խնդիրն էր գրավում դեմոկրատների կառավարության ուշադրությունը: ԱՄՆ-ի բանակն ամրապնդելու, ռազմական պլանավորման ուղղությամբ պենտագոնի ագրեսիվությունն ուժեղացնելու և ռազմական ուժերի «մոդեռնացման» ուղիների որոշ-

ման՝ կառավարության պլաններն արդեն 1960 թվականի դեկտեմբերին գովաբանում էր ամերիկյան մամուլը[4]։ Քենեդին դժգոհ էր նրանից, թե ինչպես է Էյզենհաուերը վարել ԱՄՆ-ի ռազմական քաղաքականության հետ կապված գործերը։ Ավելին, նա համաձայն չէր դրան։

Ինչպես հայտնի է, Էյզենհաուերի կառավարությունը երկար ժամանակ «մասսայական հատուցման» դոկտրինայի կողմնակից էր։ Էյզենհաուերն այնպիսի սրբությամբ էր հավատում այդ դոկտրինայի անթերիությանը, որ անգամ թոշակի ուղարկեց բանակի շտաբի պետ գեներալ Մ. Թեյլորին, երբ վերջինս փորձեց լրացնել և ձևափոխել այն։ Թեյլորի գործողություններում պրեզիդենտն ընդամենը նկատել էր միջուկային զենքի նշանակությունը նվազեցնելու և զենքի սովորական տեսակների՝ տանկերի, հրետանու, հրացանների, ականանետների համար լրացուցիչ հատկացումներ ստանալու ձգտումը։

Թեյլորի պահանջների հիմնական իմաստը, սակայն, կայանում էր ոչ այնքան ամերիկյան բանակի և սովորական սպառազինումների քանակական ավելացման, որքան ռազմական ստրատեգիայի նկատմամբ «մասսայական հատուցման» դոկտրինայից տարբերվող մոտեցման մեջ[6]։ Գեներալը նոր ռազմական դոկտրինա առաջ քաշեց, որն ստացավ «ճկուն արձագանքման» ստրատեգիա անվանումը։ Սա կոչված էր ԱՄՆ-ի արտաքին և ռազմական քաղաքականությունը հարմարեցնել 60-ական թվականների իրադրությանը, երբ ԱՄՆ-ն արդեն չէր էլ մտածում այն մասին, որ սոցիալիստական երկրների դեմ միջուկային պատերազմի դեպքում կհաջողվի խուսափել ոչնչացնող հատուցումից։ Թեյլորի դոկտրինան ուներ նաև այլ նպատակներ։

Գեներալին մտահոգում էր այն, որ, ինչպես ինքն էր գտնում, ԱՄՆ-ը «չունի» բավականաչափ, այդ թվում հատուկ նշանակության, ռազմական ուժ, որպեսզի կարողանա պայքար մղել ազգային-ազատագրական շարժման դեմ։ Իսկ չէ՞ որ ԱՄՆ-ի բանակի առջև համաշխարհային ժանդարմի դեր կատարելու խնդիր էր դրվում։ Այդ առաքելության կատարմանը, Թեյլորի կարծիքով, լավագույն



ձևով համապատասխանում էր ամերիկյան ռազմական հզորության լայնակի ծավալման իր դոկտրինան, մի խոսքով, միջուկայինի հետ միաժամանակ նաև սովորական սպառազինությունների մրցավազքը։

Քենեդու հայացքները բավական մոտ էին այդ դոկտրինային։ Դեռևս սենատոր եղած ժամանակ Քենեդին դեմ էր արտահայտվում «մասսայական հատուցման» դոկտրինայով հրապուրվելուն՝ ի վնաս սովորական ռազմական ուժերի։ Այդ նույն տեսակետն էր նա պաշտպանում պրեզիդենտական ընտրական կամպանիայի շրջանում։ Ճիշտ է, այնուհետև Քենեդին կներկայացնի ոչ միայն սովորական սպառազինությունների մրցավազքի, այլև ստրատեգիական հրթիռների արտադրության արագ ավելացման պահանջ։

Սակայն տուն գալով, Քենեդին սկզբում Թեյլորին նշանակեց իր անձնական օգնական, իսկ հետո՝ նաև շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահ։ Թեյլորն անմիջապես ձեռնամուխ եղավ իր պլանների իրականացմանը, որոնց կողմնակիցները Քենեդու կառավարությունում քիչ թիվ չէին կազմում, նրանց մեջ էր նաև ԱՄՆ-ի պաշտպանության մինիստր Ռ. Մակնամարան։ Դեռևս 1960 թվականի դեկտեմբերին Քենեդին հանձնարարեց Մակնամարային «զննել» ԱՄՆ-ի ռազմական ստրատեգիան։ Այդ առթիվ նա Մակնամարային մի նկատառում արտահայտեց, որը հետաքրքիր էր գոնե նրանով, որ վկայում էր ամերիկյան պաշտպանական պրոպագանդայի երկերեսանիության մասին ու հավաստիացնում էր, թե 1961 թվականի ամառն ու գարունը ԱՄՆ-ում ծավալված սպառազինությունների մրցավազքն իբր երևան է եկել Սովետական Միության կողմից «Արևմուտքի հանդեպ առաջացած սպառնալիքի» հետևանքով։

Իսկ իրականում գործն այսպես է եղել։ Ինչպես հետագայում խոստովանեց Քենեդու օգնական Թ. Սորենսենը, Քենեդու առաջին, հեռուն տանող ցուցումը Մակնամարային այսպիսին էր. «Ոչ մի պարագայում մենք չպետք է սահմանափակենք մեր ստրատեգիան կամ զինված ուժերի մակարդակը [illegible], նախապես պլանավորված ֆինանսական սահմանափակումներով»[7]։ Ավելի պարզ, հաշվա-

նարար, հնարավոր չէ անել։ Սպառազինությունների մրցավազքում պենտագոնի համար բուռն էության «կանաչ ճանապարհ» էր բացվում։

Քեննեդին՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ դառնալուց արդեն մեկ շաբաթ անց Մաքնամարան զեկուցեց կառավարությանը, որ կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ «ամերիկյան ռազմական ստրատեգիան նախապես պլանավորված բյուջեի խորթ զավակն է» և որ ռազմական հատկացումների «ֆինանսական առաստաղը» լրիվ չափով չի բավարարում ԱՄՆ-ի «ազգային անվտանգության» պահանջմանը։ Մաքնամարայի կարծիքով, ստացվում էր, որ ԱՄՆ-ի բանակում անբավարար էր հեռահարային դիվիզիաների, սուզանավերի, միջուկային հրթիռների, սովորական սպառազինությունների և անգամ ռազմամթերքի քանակը։ Եվ այդ ամենը, այդ թվում նաև ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարի համար հատուկ ստորաբաժանումների ստեղծումը փող, շատ փող է պահանջում։ Եվ այդ հաստատում էր այն պետության պաշտպանության մինիստրը, որն ուներ աշխարհում ամենամեծ ռազմական բյուջե՛ն և ամենաուռճացած ռազմական մեքենա՛ն։

Քեննեդու կառավարության արտաքին և ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները իրենց արտացոլումը գտան 1961 թվականի հունվարի 30-ի՝ երկրի վիճակի մասին ուղերձում. «Ես կարծում եմ, որ պետք է տեղեկացնեմ կոնգրեսին,— նշում էր Քեննեդին այդ ուղերձում,— որ վերլուծությունը... միանգամայն անկեղծաբար վկայում է այն մասին, որ ճգնաժամային բոլոր հիմնական շրջաններում... ժամանակը մեր բարեկամը չէ»[5]։ Ընդ որում դեմոկրատների կառավարության արդեն ծրագրային այդ առաջին փաստաթղթում իշխող տեղ էր զբաղեցնում սպառազինությունների պրոբլեմը։ Այն, ինչ Մաքնամարան մշակում էր, պրեզիդենտական ուղերձում հիմնավորվում էր դրանից «ագրեսիան» և «քայքայիչ գործունեությանը» կանխելու անհրաժեշտությամբ։ Քեննեդին կոչ էր անում վերանայել ԱՄՆ-ի ռազմական զինանոցը տարբեր տեսակի զենքերի ավելացման և մոդեռնացման ուղղությամբ։ Նա կարծիք հայտնեց,



որ ԱՄՆ-ը մտնել է անորոշ ռիսկի և մեծ պարտավորությունների ժամանակաշրջան, որում ռազմական և դիվանագիտական հնարավորությունները պահանջում են, որպեսզի ազատ աշխարհն այնքան զորեղ ուժեր ձեռք բերեր, որ ցանկացած ագրեսիան բացահայտ անմիտ դառնար»[9]։ Պրեզիդենտը հայտարարեց նաև, որ ԱՄՆ-ի կառավարությունը կանցկացնի իր ամբողջ «պաշտպանական ստրատեգիայի» վերանայում։ Մի խոսքով, ԱՄՆ-ի նոր կառավարությունը բավական պարզորոշությամբ արտահայտեց ամերիկյան արտաքին քաղաքական ստրատեգիայի իրականացման «ռազմական միջոցների» ամրապնդման մտադրությունը։ Պրեզիդենտի ուղերձում հատուկ ուշադրություն էր դարձվում միջուկային սպառազինությունների մրցավազքի անհրաժեշտության հիմնավորմանը, ռազմաօդային տրանսպորտային միջոցների ստեղծման տեմպերի ավելացմանը, «Պոլարիս» ատոմային սուզանավերի կառուցմանը[10]։

Քեննեդու կառավարության առաջին տարվա գործունեության ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները առավել լրիվ արտահայտվեցին 1961 թվականի մարտի 28-ին կոնգրեսին պրեզիդենտի հղած ուղերձում[11]։ Այդ ուղերձում բավական պարզորոշ էին ձևակերպված միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ստրատեգիայի նպատակները։ Դրանք զգալի չափով հենվում էին ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրության հանձնարարականների վրա, որտեղ Մաքնամարայի օրոք սկսեց կիրառվել «պլանավորում—ծրագրավորում—բյուջետավորում» (ՊԾԲ) սիստեմը, որն այնուհետև մեծ տարածում ստացավ ԱՄՆ-ի պետական ապարատում։ Հիշյալ սիստեմի հիմնական նպատակը զենքի նոր սիստեմների ստեղծման համար հատկացումների օգտագործման արդյունավետության բարձրացումն էր։

Հավատացնելով, որ ամերիկյան զինված ուժերի հիմնական նպատակը «խաղաղությունն է, այլ ոչ թե պատերազմը», որ ԱՄՆ-ը ձգտում է բոլոր պատերազմների արգելմանը, «լինեն դրանք ընդհանուր կամ սահմանափակ, միջուկային կամ սովորական, մեծ կամ փոքր», Քեննեդին միաժամանակ հանդես էր գալիս հօգուտ նրա, որպեսզի ԱՄՆ-ի

դրնված ուժերն «ապահովեն վճռերի դիվանագիտական կարգավորման աջակցությունը»։ Այդ, ըստ էության, «ճգնաժամային դիվանագիտությանը» տրվող տուրք էր։ Ճիշտ է, պրեզիդենտը ստիպված էր խոստովանել, որ «աշխարհի առջև այսօր կանգնած հիմնական պրոբլեմները ենթակա չեն ռազմական լուծման»։ Միաժամանակ Քենեդին կողմնակից էր այն բանի, որ ԱՄՆ-ը օգտագործի դիվանագիտությունը և «պաշտպանության միջոցները» որպես արտաքին քաղաքականության վարման «մեկը մյուսին լրացնող» լծակներ[12]։

1961 թվականի մարտի 28-ի ուղերձում Քենեդին փորձեց անցյալ տեսակետներեն հիմնավորել ԱՄՆ-ի սանձազերծած սպառազինությունների մրցավազքի նոր շրջանը։ Պրեզիդենտը սպառազինությունների մրցավազքի անհրաժեշտությունը հիմնավորում էր նրանով, որ ԱՄՆ-ին «անհրաժեշտ էր պոտենցիալ ուժեր և հնարավորություն ունենալ «ագրեսորին», եթե նա առաջինը հարձակվի Ամերիկայի վրա, պատժելու համար։ Քենեդին կոչ էր անում «դադարեցնել սահմանափակ պատերազմների հետևանքով տեղի ունեցող ազատ աշխարհի մշտական էրոզիան»։ Այդ գիծը նա բնորոշեց որպես «օվկիանոսից այն կողմ մեր ուժերի հիմնական նպատակ»։ Պրեզիդենտական այդ ուղերձում ձևակերպված էին «ճկուն արձագանքման» քաղաքականության հիմունքները, արդարացված էր ռազմական միջոցների «ընտրականության» անհրաժեշտությունը դրանք Վաշինգտոնի կողմից կիրառելու դեպքում։ Այն, որ «ճկուն արձագանքումն» ու «սահմանափակ պատերազմները» հակադրվում էին «միջուկային համընդհանուր պատերազմին» իբրև կոմունիզմի դեմ պայքարի մի ինչ-որ «խելամիտ» միջոց, իր մեջ, ինչպես, խաղաղության գործի, հատկապես զարգացող երկրների համար մեծ վտանգ էր պարունակում։ Այդ հաստատեց ԱՄՆ-ի վիետնամական ավանտյուրան։ ԱՄՆ-ի կառավարությունը, սակայն, պնդում էր, որ Վաշինգտոնի «պաշտպանական կոնցեպցիաները» իբր «նվազեցնում են իռացիոնալ գործողությունների և չկանխամտածված համընդհանուր պատերազմի վտանգը»։ Իր ուղերձի երկրորդ բաժնում Քենեդին պահանջում էր արագացնել միջուկային զենքի ստրատեգիական սիստեմների



ստեղծումը։ Նա կոչ էր անում կոնգրեսին 1961/62 ֆինանսական տարում լրացուցիչ միջոցներ հատկացնել «Պոլարիս» սիստեմի 10 ատոմային սուզանավերի համար[13]։ Կառավարությունը ընդհանուր առմամբ պլանավորել էր ստեղծել ԱՄՆ-ի մի «անխոցելի» միջուկային ուժ, բաղկացած «Պոլարիս» տեսակի 29 սուզանավերից։ Լրացուցիչ հատկացումներ պահանջվեցին «Պոլարիս Ա—3», «Մինիթմեն», «Սքայբոլթ» նոր տիպի հրթիռների և միջուկային այլ տեսակի զենքերի ստեղծման համար։ «Ճկուն արձագանքման» ստրատեգիան ապահովելու նպատակով մեծ գումարներ էին պետք ռազմական և ռազմատրանսպորտային ավիացիայի, ռազմական լրացուցիչ անձնակազմի ուսուցման համար։

Ամբողջ վերը շարադրվածից հետևում է հետևյալ տրամաբանական եզրակացությունը՝ դեմոկրատների նոր կառավարությունը «գերազանցող ուժի դիրքի» ստեղծման կուրս է վերցրել և հույս ուներ այդ դիրքից վարել գործերը ՍՍՀՄ-ի և ազգային-ազատագրական շարժման դեմ։ Այդ նպատակով էլ ստեղծվում էր նոր զենքը։

ԱՄՆ-ում սպառազինությունների մրցավազքի հետագա ուժեղացման իրական պատճառները բացատրվում էին «ճկուն արձագանքման» դոկտրինայի նյութական բազայի հիմնավորման՝ կառավարության ձգտումով և ամերիկյան էկոնոմիկայի խթանման նրա ցանկությամբ։ ԱՄՆ-ի ռազմական ստրատեգիան հետազոտող Մորթոն Գալպերինը ստիպված էր հետագայում խոստովանել, որ «Քենեդիի տնտեսական խորհրդականները հավատում էին, որ ամերիկյան էկոնոմիկային սպառնացող վտանգը, այն բանի բացատրությունը, որ 50-ական թվականներին էկոնոմիկան ցածր տեմպերով էր զարգանում, կայանում էր կառավարության՝ փող ծախսելու ցանկություն չունենալու մեջ։ Նրանք գտնում էին, որ էկոնոմիկան կարող է դիմանալ և խթանվել պաշտպանության վրա ծախսերի ավելացումով»[14]։ Այդ եզրակացությունները մեկնում են Քենեդիի և նրա շրջապատի տրամադրությունները, որոնք խորապես անհանգստացած էին 60-ական թվականների սահմանագծում ԱՄՆ-ում տիրող տնտեսական վիճակով։ Բացի

այդ, Քենեդու համար, պրեզիդենտ ընտրվելուց հետո, շահավետ էր ցույց տալ, որ ընտրական կամպանիայի ժամանակ ՍՍՀՄ-ի ռազմական գերազանցության և այդ կապակցությամբ ԱՄՆ-ի ռազմական հզորությունն ուժեղացնելու անհրաժեշտության մասին խոսքերն ու գործը համընկնում են։ Ռազմաարդյունաբերական կոմպլեքսը պետք է որ գոհ լիներ. ռազմական պատվերների նոր ոսկե անձրև էր տեղում։ Այն տեղում էր անդադար, Քենեդու պրեզիդենտության բոլոր երեք տարիների ընթացքում։ Բավական է ասել, որ միայն լրացուցիչ ռազմական հատկացումներն այդ երեք տարիներում կազմեցին 17 մլրդ դոլար[15]։

Առանձնապես անհրաժեշտ է կանգ առնել հետևյալ մոմենտի վրա։ Մակնամարայի ղեկավարած պաշտպանության մինիստրության գործունեության մեջ նկատվում է մինիստրի և նրա շրջապատի՝ առանձին ռազմական նախագծերի հաշվին տնտեսելու ձգտումը։ Իրոք, զինվորականների առանձին ո՛չ ռացիոնալ նախագծեր պաշտպանության մինիստրության ղեկավարությունը խոտանում էր։ Այսուհանդերձ իրողությունն այն է, որ Քենեդու կառավարության նոր մինիստրի օրոք ռազմական բյուջեն ամբողջությամբ արագ աճեց, որը շարունակվեց նաև Ջոնսոնի կառավարման տարիներին։ Մ. Գալբրեյթն այսպես է բնորոշում այն պայմանները, որոնցում գործում էր պաշտպանության մինիստրությունը. «Որոշակի ուշադրություն էր հատկացվում կառավարական ծախսերի կրճատմանը, բայց միևնույն ժամանակ բացակայում էր ձգտումը պաշտպանության մինիստրության բյուջեի աճը կանխելու համար։ Այդ զսպող ուժի բացակայությունը հնարավոր դարձրեց պաշտպանության բյուջեի կայուն աճը»[16]։

60-ական թվականների սկզբներին դեմոկրատների կառավարության՝ սպառազինությունների մրցավազքն աշխուժացնելու ձգտումը հանգեցրեց նրան, որ նա, ըստ էության, սկսեց իրականացնել սպառազինությունների, հատկապես ստրատեգիական, նոր շրջապտույտ։ Այնուհետև Ջոնսոնի կառավարությունը շարունակեց այդ գործը։ Այդ ակնառու կերպով հաստատվում է 60-ական թվականների ԱՄՆ-ի ռազմական ծախսերի վերաբերյալ հետևյալ տվյալներով.



ԱՄՆ-Ի ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (ընթացիկ գներով)[17]

| Ֆինանսական տարի | Ռազմական ծախսեր | |
|---|---|---|
| | մլրդ. դոլար | համախառն ազգային արդյունքի % |
| 1961/62 | 47,5 | 9,4 |
| 1962/63 | 51,2 | 9,4 |
| 1963/64 | 52,2 | 9,1 |
| 1964/65 | 53,7 | 8,8 |
| 1965/66 | 49,6 | 7,6 |
| 1966/67 | 56,8 | 7,9 |
| 1967/68 | 70,1 | 9,2 |
| 1968/69 | 80,5 | 9,8 |

Բերված աղյուսակից հետևում է, որ սկսած 1961 թվականից մինչև 1968 թվականը Միացյալ Նահանգների ռազմական ծախսերը խիստ աճել են (47,4 մլրդ-ից մինչև 80,5 մլրդ դոլ.)։ Ընդ որում, դժվար չէ նկատել, որ ռազմական ծախսերի բաժինը ԱՄՆ-ի համախառն ազգային արդյունքում գրեթե անփոփոխ է մնացել (9,4% 1961 թ., 9,1% 1967 թ.), չնայած բացարձակ թվերով ռազմական բյուջեն անշեղորեն աճել է ՀԱԱ-ի աճի հետ միաժամանակ։ Քենեդու և այնուհետև Ջոնսոնի կառավարությունները, հավանաբար, գտնում էին, որ ռազմական ծախսերի այդ մակարդակը, համախառն ազգային արդյունքի համեմատ, ԱՄՆ-ի համար առավել «նպատակահարմար» էր ինչպես ռազմական, այնպես և տնտեսական տեսակետներից։

Դեմոկրատների կառավարման շրջանում, 60-ական թվականներին բարձր մակարդակի վրա են պահպանվել նաև ստրատեգիական միջուկային զենքին տրամադրվող բյուջետային հատկացումները։ Նա ավելացրեց ստրատեգիական սպառազինությունների մրցավազքի թափը, դրեց նրա առաջին, ապա և երկրորդ շրջապտույտի հիմքը։ Այդ երևում է հետևյալ տվյալներից.

## ԱՄՆ-Ի ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱՐ[18]

| Ֆինանսական տարի | Հատկացումներ | |
|---|---|---|
| | մլրդ. դոլար | ընդհանուր ռազմական բյուջեի % |
| 1961/62 | 10,2 | 22,6 |
| 1962/63 | 10,4 | 20,3 |
| 1963/64 | 9,2 | 18,0 |
| 1964/65 | 7,0 | 13,9 |
| 1965/66 | 6,7 | 10,5 |
| 1966/67 | 6,9 | 9,4 |
| 1967/68 | 7,9 | 10,8 |
| 1968/69 | 9,6 | 12,1 |

*Այսպիսով, Քեննեդու կառավարությունը միայն երեք տարիների ընթացքում ստրատեգիական միջուկային ուժերի վրա ծախսել է 30 մլրդ դոլար։ Այդ միջոցառումների հիմքում ընկած է ամերիկյան կառավարող շրջանների այսպես կոչված «պաշտպանող զսպման» դիրքն ապահովելու ձգտումը, որ նշանակում էր ՍՍՀՄ-ի նկատմամբ ստրատեգիական առավելություն ապահովելու ձգտում։ Այդ 60-ական թվականների վերջում ընդունեց ազգային անվտանգության հարցերի գծով Քեննեդու հատուկ օգնական Կարլ Կայզենը, երբ գրեց, որ 1961—1963 թվականներին «մեր հարձակողական ուժերի ծավալն ու հաջողվածությունը որոշվում էին ԱՄՆ-ի ստրատեգիական առավելության կոնցեպցիայով»[19]։*

*Հանրագումարի բերելով վերը շարադրվածը, կարելի է նշել, որ Քեննեդու պրեզիդենտության ժամանակաշրջանին է ընկնում ամերիկյան ռազմա-քաղաքական ստրատեգիայի զարգացման որոշակի փուլը։ Երբ ակներև դարձավ միջուկային հարվածից ԱՄՆ-ի տերիտորիայի խոցելիությունը, դալլեսյան «մասսայական հատուցման» ստրատեգիան սկսեց քննադատության ենթարկվել և 1961 թվականին փոխարինվեց «ճկուն արձագանքման» դոկտրինայով, որը պրեզիդենտ*



*Քեննեդին այսպես է ձևակերպել. «Մեր դիրքորոշումը պաշտպանության բնագավառում պետք է լինի և՛ ճկուն, և՛ վճռական... Մենք պետք է ունակ լինենք մտածված ընտրելու զենքի տեսակներն ու ստրատեգիան, փոխելու ռազմական պատրաստության տեմպերը և մեր զորքերի կառավարումը, որպեսզի սուղ ժամկետներում և ցանկացած հանգամանքներում հարմարվենք փոփոխվող պայմաններին և նպատակներին։ Մենք պետք է զենքի այնպիսի սիստեմներ ունենանք, որոնք կարելի լինի այնպես օգտագործել, որպեսզի կարողանանք մտածված պլանավորել ժամանակը, գործողությունների ծավալը և նրանց նպատակները՝ համաձայն քաղաքացիական ղեկավարության ցուցումների»[20]։*

*ԱՄՆ-ի կառավարության կողմից «ճկուն արձագանքման» ստրատեգիայի ընդունմանը մղում էր այն փաստի գիտակցումը, որ ԱՄՆ-ը այլևս չունի այսպես կոչված «գերազանցող ուժի մենաշնորհը»։ Նման հասկացողությունը ԱՄՆ-ում ստացավ «միջուկային հավասարակշռում» և անգամ «միջուկային փակուղի» բնորոշումը։ Այսպես, պաշտպանության մինիստր Մակնամարան, 1963 թվականին ելույթ ունենալով կոնգրեսում, այսպես արտահայտեց ԱՄՆ-ի համար միջուկային պատերազմի վտանգի գիտակցումը. «Եթե երկու երկրների (ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի — Ա. Գ.) ստրատեգիական ուժերը գործողության մեջ դրվեն, ապա մեր երկիրն այնքան մեծ ավերածությունների կենթարկվի, որ մեր ապրելակերպը կփոխվի և կփոխվի անդառնալի ուղղությամբ։ Այդ պատճառով ես կասեի, որ մենք դժվար թե հաղթել կարողանանք... Մենք չենք կարող հաղթել միջուկային պատերազմում, ստրատեգիական միջուկային պատերազմում, «հաղթել» բառիս բնական իմաստով»[21]։*

*Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով 60-ական թվականներին սոցիալիզմի և կապիտալիզմի միջև ռազմական ուժերի հարաբերակցության ռեալ վիճակը, ԱՄՆ-ի կառավարությունը չէր ցանկանում ուրիշ շատ իրականություններ ընդունել և, առաջին հերթին, համաշխարհային հեղափոխական պրոցեսի օրինաչափ զարգացումը, ազգային-ազատագրական շարժումները։ Այստեղից էր բխում «ճկուն արձագանքման»*

տարածաշրջանի վճռորոշ բնույթն ազգային անկախության և սոցիալական առաջընթացի ձգտող զարգացող երկրների ժողովուրդների համար։ «Ճկուն արձագանքման» ստրատեգիան, այսպիսով, դարձավ ամեն կարգի «լոկալ պատերազմների» սանձազերծման պրակտիկայի մեջ։ Նախատեսելով ԱՄՆ-ի կողմից միջազգային ասպարեզում ռազմական միջոցների լայն սպեկտրի օգտագործում, սկսած հակապարտիզանական հատուկ միավորումներից և վերջացրած միջուկային հարվածով, «ճկուն արձագանքման» դոկտրինան իր հիմքում, անտարակույս, ագրեսիվ էր։ Դա միայն այն դեպքում էր ընդունում օբյեկտիվ իրականությունը, երբ չընդունելը ԱՄՆ-ի համար կարող էր վտանգ ներկայացնել։ «Ճկուն արձագանքման» դոկտրինան իր մեջ ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ստրատեգիայի նոր տարրեր էր պարունակում։ Միաժամանակ նրանում իր արտահայտությունը գտան ամերիկյան ռազմական ուժի օգտագործման կարողությունները կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլի խորացման, 60-ական թվականների միջազգային ասպարեզում սոցիալիզմի և ազգային-ազատագրական շարժման ամրապնդման պայմաններում։

Պետք է ասել, որ պրեզիդենտ Քեննեդին, ինչպես հետագայում ընդունում էին նրա կենսագիրներից շատերը, առաջնությունը տալիս էր արտաքին քաղաքական պրոբլեմներին և ոչ թե ներքին պրոբլեմներին։ «Մեծ տարբերություն կա օրենքի ձախողման և երկրի լրիվ ոչնչացման միջև»[23],— նկատել է նա մեկ անգամ պրեզիդենտական ընտրություններից անմիջապես հետո։ Քեննեդու այդ խոսքերն արտահայտում են այն անհերքելի փաստի գիտակցումը, որ 60-ական թվականների սկզբներին ԱՄՆ-ը դադարել է առաջին և երկրորդ համաշխարհային կատակլիզմներից հեռու Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների ջրերով պատսպարված «անառիկ ամրոց» լինելուց։

Դժվարությամբ էր ամերիկյան իմպերիալիզմն ընտելանում աշխարհում ԱՄՆ-ի զբաղեցրած նոր դիրքին, երբ նրա գեներալները կորցրեցին երբեմնի ռազմաստրատեգիական մի շարք առավելությունները։ Կորցրեցին հանգիստը նաև ԱՄՆ-ի



քաղաքական գործիչները, որոնք երկար տարիներ իրենց և ուրիշների գլուխներն էին մտցնում այն միտքը, որ «ռուսները ուր որ է հարձակվելու են» և թե միայն «մեր ռազմական հզորությունը թույլ չի տալիս նրանց այդ անելու»։ Չիրականացան նաև ԱՄՆ-ի մամուլի քարոզչական օրգանների կանխատեսումները «Ամերիկայի և Ռուսաստանի միջև պատերազմի սկզբի ժամկետների մասին»։ Նաև ամերիկացիների գիտակցության մեջ ավելի խոր էր թափանցում սոցիալիզմի երկրների հետ հաշտ ապրելու անհրաժեշտության մասին միտքը։

ԱՄՆ-ի կառավարական շրջաններում, սակայն, դժվար չէ նկատել սարսափը կապիտալիստական և սոցիալիստական երկրների խաղաղ գոյակցության քաղաքականության նկատմամբ, որ հետևողականորեն անց են կացնում վերջիններս։ Թեև այդ շրջանների պահանջները հանգեցվում են նրան, որպեսզի պահպանեն միջազգային լարվածությունը, թույլ չտան «սառը պատերազմի» ատաղձների վերջնականապես հաղթահարումը։ Իսկ հնարավորություն գտնելու դեպքում փորձել միջազգային հարաբերությունների ոլորտից վերացնել խաղաղ գոյակցության բուն ոգին ռազմական ավանտյուրաների միջոցով։

Իհարկե, ԱՄՆ-ի ոչ բոլոր ազդեցիկ մարդիկ էին այդպես մտածում և կամ շարունակում այդպես մտածել։ Այլախոհների հայացքներն իր պրեզիդենտության վերջում սկսեց հաշվի առնել նաև Քեննեդին։ Քաղաքական գործիչների այդ խումբը, ինչպես նաև սառը պատերազմի և ռազմական ավանտյուրաների քաղաքական կողմնակիցները ամենևին էլ հիացած չէին, նրանով, որ խաղաղ գոյակցության սկզբունքները գնալով ավելի հաստատուն դեր էին խաղում միջազգային հարաբերություններում։ Նրանք լավ էին հասկանում, որ յուրաքանչյուր հաջորդ օրը, յուրաքանչյուր նոր տարին ամրապնդում է սոցիալիզմի ուժերը։ Մեկ հարցում, սակայն, այդ խումբը բավական շատ էր տարբերվում առաջիններից։ Նրա մեջ մտնող գործիչները հույսերը կապում էին այն բանի հետ, որ կապիտալիզմին կհաջողվի կախարդական «երիտասարդացման էլիքսիր» հայտնագործել, որը հնարավորություն կտա դեռ երկար ժամանակ մարտնչել սո-

ցիալիզմի դեմ։ Ի՞նչ կա որ, այդ, իհարկե, իրենց գործն է։ Հավատամքը, ինչպես հայտնի է, կարող է և սխալական լինել։ Հետաքրքրական է մեկ այլ հանգամանք։ Որպես կանոն, հենց այն մարդիկ, որոնք հավատում են կապիտալիզմի խարխլվող, բայց իրենց դեռևս անսասան թվացող հիմքերին, առավել անաչառորեն դատող քաղաքագետներն են։ Նրանք հաշիվ են տալիս իրենց, որ «սահմանն անցնելը» կհանգեցնի, ինչպես և նշում էր Քեննեդին, ԱՄՆ-ի ոչնչացմանը։ Ցավոք, նրան շրջապատող ոչ բոլոր մարդիկ էին բաժանում այդ տեսակետը։ Մեծամասնությունը պահանջում էր միջազգային պրոբլեմների լուծումը փնտրել «ուժի դիրքերից» քաղաքականության հին ճանապարհներին։ Եվ սկզբնական շրջանում Քեննեդին հետևեց նրանց։ Նախկին ագրեսիվ ոգին արտահայտություն գտավ 1961 թվականի գարնանը Կուբայի դեմ արտաքին քաղաքական ավանտյուրայի օրինակում։ Կո-չինսը ծավալախոսում տեղի ունեցած ավանտյուրայի մասին գրքում ամեն ինչ արդեն հայտնի է։ Ուստի այն մանրամանորեն նկարագրելու անհրաժեշտություն չկա։ Այդ արված է արդեն սովետական մի շարք միջազգայնագետների, այդ թվում և սույն գրքի հեղինակի, աշխատություններում[23]։ Անօգտակար չէր լինի, սակայն, տալ այդ ավանտյուրայի պատճառների վերլուծությունը։ Դրանք վկայում են, թե որքան մեծ է ԱՄՆ-ում վաղօրոք նախապատրաստված պլանների իրագործման իներցիան, եթե նրա ետևում կանգնած են քաղաքական մեխանիզմի ազդեցիկ օղակները և միջազգային լարվածության պահպանման կողմնակիցները ԿՀՎ-ից և պենտագոնից։

Կուբա ներխուժման նախապատրաստումը «Պլուտոնի պլանը» ծածկագիր անվանումով սկսվել էր դեռևս էյզենհաուերի ժամանակ[24]։ Ըստ որում առավել ակտիվորեն էր գործում Կենտրոնական հետախուզական վարչությունը։ Նրանից ետ չէին մնում նաև մյուս գերատեսչությունների՝ պետդեպարտամենտի, պենտագոնի և, վերջին հաշվով, Սպիտակ տան ներկայացուցիչները։ Նրանք պարբերաբար հավաքվում և քննարկում էին ինչպես խեղդել հեղափոխությունը Կուբայում։ Ամերիկյան պետական ապարատի ամենախոշոր գաղտնարաններում հետզհետե հասունանում էր Կուբա ներխուժելու պլանը։



Ասպարեզից հեռացող էյզենհաուերի կառավարությունը 1960 թվականի գարնանն ու աշնանը շարունակում էր ամերիկյան հասարակական կարծիքը նախապատրաստել այդ ավանտյուրային։ 1961 թվականի հունվարի 3-ին ԱՄՆ-ի կառավարությունը հայտնում է Կուբայի հետ դիվանագիտական հարաբերությունները լրիվ խզելու մասին[25]։ Հունվարի 20-ին Քեննեդին պաշտոնապես պրեզիդենտ է դառնում։ Մեկ օր անց Ալլեն Դալլեսը և գեներալ Լեմնիցերը հանդիպում են Ռասկի, Մակնամարայի և Ռոբերտ Քեննեդու հետ։ Այդ հանդիպումից վեց օր հետո Ջոն Քեննեդին Սպիտակ տանը հրավիրում է նոր կառավարության առաջին նեղ խորհրդակցությունը, որտեղ քննարկվում են ներխուժման պլանները։

Դժվար չէ պատկերացնել այն տրամադրությունը, որում 1961 թվականի գարնանը գտնվում էր դեմոկրատների պրեզիդենտը։ Քեննեդու երազանքն իրականացավ՝ նա ԱՄՆ-ի պրեզիդենտ դարձավ։ Ամենուրեք խոսում են նրա ազդարարած «նոր սահմանագծերի» քաղաքականության մասին։ Արտասահմանյան մամուլը լայնորեն մեկնաբանում է նրա պրեզիդենտ դառնալը։ Ավարտված է կառավարության կազմավորումը։ Աշխարհի բոլոր ծայրամասերից շնորհավորական հեռագրեր են տեղում։ Այդ ամենից մարդ կարող է գլուխը կորցնել։ Հենց այդ մթնոլորտում է նա ընդունում այն չարաբաստիկ որոշումը, որը նրա քաղաքական կենսագրության ամենասև բիծը դարձավ։ Քեննեդին գնաց կուբայական ավանտյուրային։

Քեննեդու վերջին կասկածները փարատել որոշեց ԿՀՎ-ի ղեկավար Ալլեն Դալլեսը։ Քեննեդու հետ հերթական զրույցի ժամանակ նա ասաց բառացիորեն հետևյալը. «Մի որոշ ժամանակ առաջ ես կանգնած էի այստեղ էյզենհաուերի առաջ և հայտնեցի նրան, թե համոզված եմ, որ Գվատեմալայում մեր օպերացիան (պրեզիդենտ Արբենսի օրինական կառավարության տապալման։— Ան. Գ.) հաջող կավարտվի։ Պարոն պրեզիդենտ, ներկայիս պլանի հեռանկարները նախորդից ավելի լավ են»։

Այն, որ Պլայա-Խիրոնի արկածախաղն սկզբից մինչև վերջ ԱՄՆ-ի կառավարության օպերացիան է, հետագայում արդեն առանց այլևայլության ընդունեց Քենեդիի խորհրդական Սորենսենը։ Իր հուշերում նա նշում էր, որ վարձկանների դեսանտը «ղեկավարվել, կազմակերպվել, զինվել, վայրէջքի տեղ է հասցվել ու կառավարվել է ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության կողմից»[25]։ Սորենսենը, ըստ էության, ակնարկում է օպերացիայի համար ԿՀՎ-ի պատասխանատվության մասին։ Բայց նա ասելիքը չի վերջացնում՝ օպերացիայի գլուխ ոչ միայն ԿՀՎ-ն էր կանգնած, գործնականում նրանով զբաղվում էր ԱՄՆ-ի կառավարության ամբողջ քաղաքական և ռազմական վերնախավը, ներառյալ պրեզիդենտը։

Անհաջող ավանտյուրայից հետո Քենեդին շփոթված էր։ «Եվս այսպիսի մի ձախողում,— հայտարարել է նա,— և իմ կարիերան ավարտված է»։ Ավելի ուշ Քենեդին խոստովանեց, որ, ինչպես ինքն էր սպասում, Կուբայի դեմ ինտերվենցիայի ձախողման համար «իր գլուխը թռցնելու էին»։ Պլայա-Խիրոնում ինտերվենցիայի ջախջախումից մի քանի օր անց Քենեդին դժգոհում էր իսթեբլիշմենթի մոնոպոլիաների ներկայացուցիչ փաստաբան Կլիֆորդին, որ օգնականներն իրեն վատ խորհուրդներ են տալիս։ Սելինջերին նա հարց տվեց. «Ինչպե՞ս կարող էր ԿՀՎ-ի և պենտագոնի այդ ամբողջ ամբոխն այդպես սխալվել»։ Նա առանձնապես չարացած էր Ալլեն Դալլեսի վրա։ Այդ մասին է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ Կուբայի դեմ ավանտյուրայի ձախողումից անմիջապես հետո պրեզիդենտն իր եղբորը, Ռոբերտին, առաջարկեց զբաղեցնել ԿՀՎ-ի ղեկավարի պաշտոնը, բայց այնուհետև, խորհրդակցելով, նրանք գտան, որ դա աննպատակահարմար է։ Քենեդին իր մոտ է հրավիրում փոխպրեզիդենտ Ջոնսոնին և նրա հետ զրույցի ժամանակ խիստ քննադատում է Դալլեսին։ Քենեդին և Ջոնսոնը, սակայն, գալիս են այն եզրակացության, որ կառավարության համար Դալլեսին անմիջապես հեռացնելը ձեռնտու չէր լինի։ Քանի դեռ նա ԿՀՎ-ի ղեկավար է, ասել է պրեզիդենտը, հանրապետականները զրկված կլինեն ձախողման համար մեզ խստորեն քննադատելու հնարավորությունից։ Ջոնսոնը համաձայնեց Քենեդիի այդ փաստարկի հետ։ Ձգտելով վանել իրենից կուբայական ժողովրդի դեմ ձախողված արկածախաղի համար պատասխանատվության գոնե մի մասը, Քենեդին հանձնարարում է գեներալ Թեյլորին՝ կատարել ներխուժման ձախողման պատճառների մանրազնին հետաքննություն։ Միաժամանակ նա ցուցում է տալիս գաղտնի պահել արկածախաղի նախապատրաստումն արտացոլող բոլոր նյութերը։ Ճշմարտությունը չափազանց անդուրեկան էր, որպեսզի այն վստահվեր անգամ ամերիկյան քաղաքական մեկնաբաններին։



Դրա հետ մեկտեղ ԱՄՆ-ի կառավարությունը չի հրաժարվում պարտությունից հետո հաշիվը «հավասարեցնելու» մտքից։ Ապրիլի 20-ին ելույթ ունենալով ամերիկյան լրագրերի խմբագիրների առջև, Քենեդին ասաց, որ Կուբայի վրա հարձակման Ամերիկան մասնակցություն չի ունեցել, և որ «մեր ավանդույթը հանդիսացող ոչ միջամտելու» դոկտրինան չպետք է նշանակի անգործունեության քաղաքականություն։ «Եթե մեր կիսագնդի պետությունները,— հայտարարեց պրեզիդենտը,— չկատարեն իրենց պարտավորությունները դրսից կոմունիստական ներթափանցման վերաբերյալ, ապա ես կուզենայի ճիշտ հասկացած լինել այն բանում, որ ԱՄՆ-ի կառավարությունը չի տատանվի իր գլխավոր պարտավորությունները՝ մեր պետության անվտանգության հանդեպ կատարելու մեջ»[27]։ Դա մյուս երկրների նկատմամբ ԱՄՆ-ի միջամտության և ագրեսիայի «օրինաչափությունը» հիմնավորելու մի նոր հայտ էր։

Քենեդին մի ամբողջ շարք հանդիպումներ է կազմակերպում նաև երկրի առաջատար, հատկապես հանրապետականների թվից, քաղաքական գործիչների հետ։ Նա զրույցներ է վարում նախկին պրեզիդենտ Դ. Էյզենհաուերի, համընդհանուր ընտրությունների ժամանակ իր ախոյան Ռ. Նիքսոնի, սենատոր Բ. Գոլդուոթերի, նահանգապետ Ն. Ռոքֆելլերի հետ։ Դա քաղաքական վերնախավի հետ յուրատեսակ մի կոնսուլտացիա էր, որ նպատակ ուներ մեղմացնել պրեզիդենտի հասցեին քննադատությունը։ Որոշ ժամանակ այդ տակտիկան ցանկալի արդյունք էր տալիս։ Ապրիլի վերջը դեմոկրատական կառավարության համար համեմատաբար հանգիստ ան-

ցավ, բայց մայիսին պրեզիդենտի հասցեին քննադատությունը բռնկվեց նոր թափով։ Հիմնականում այն հանգում էր հետևյալին՝ Քենեդիի մոտ բացակայում են փորձն ու վճռականությունը։

Ինչ վերաբերում է Գոլդուոթերի ղեկավարած ծայրահեղ աջերին, նրանց ներկայացուցիչները մեղադրում էին Քենեդիին, որ նա չհամարձակվեց ամերիկյան զորքեր ուղարկել Կուբայի ժողովրդի դեմ և դրանով իսկ մտահղացումը ձախողման ենթարկեց։

Կոչինոս ծովախորշում իմպերիալիզմի և հակահեղափոխության ուժերի ձախողումը ստիպեց դեմոկրատների կառավարությանը ավելի ճկուն և զգույշ իրականացնել իր արտաքին քաղաքականությունը։ Չափազանց մեծ էին այդ անփառունակ ձախողումների քաղաքական մինուսները ԱՄՆ-ի հեղինակության համար արտասահմանում։ Անգամ ԳՖՀ-ի կանցլեր Կ. Ադենաուերը Դ. Աչեսոնի հետ զրուցելիս հեգնորեն նկատել է. «Քանի որ աստված սահմանափակել է մարդկանց մտածելու ունակությունը, հավանաբար, անարդարացի է, որ նա չի սահմանափակել բթության սահմանները»։ Արևմտագերմանական «Ֆրանկֆուրտեր նոյե պրեսսե» թերթը գրում էր. «Կարելի է համարել, որ Քենեդին քաղաքական և բարոյական պարտություն կրեց»։ Իսկ իտալական «Կոռյերե դելլա սերան» եզրակացնում էր, որ «Ամերիկայի հեղինակությունն ավելի շատ ընկավ, քան Էյզենհաուերի պրեզիդենտության բոլոր ութ տարիների ընթացքում»։

1961 թվականի գարնանն ամերիկյան քաղաքական գործիչներն այն կարծիքին էին, որ միջազգային իրադրությունն ԱՄՆ-ի համար չափազանց անբարենպաստ է։ Պրեզիդենտի եղբայր Ռոբերտ Քենեդին բավական պատկերավոր բնորոշեց այդ տրամադրությունները. «Մենք միայն փորձ ենք անում գլուխներս ջրի մակերևույթի վրա պահել..., մեր գործերը վատ են»։ Եվ իսկապես, Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում ԱՄՆ-ի հեղինակությունն ու ազդեցությունը ընկնում էին։ Արևմտյան Եվրոպան հաճախակի սկսեց կասկածանքի տակ առնել ԱՄՆ-ի եվրոպական քաղաքականության անառարկելի հեղինակությունը։ Եվ, վերջապես, ամենից գլխավորը, որ միջազգային գործերում մեծանում էր սոցիալիստական երկրների դերը։



Այդ իրադրության պայմաններում Քենեդին որոշում է հանդիպումներ կազմակերպել Արևմտյան Եվրոպայի երկրների լիդերների՝ Ֆրանսիայի պրեզիդենտ դը Գոլի և Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր Մակմիլանի հետ։ Նա զգալի հետաքրքրություն է ցուցաբերում նաև սովետական կառավարության ղեկավարի հետ հանդիպման հնարավորության նկատմամբ։ ՍՍՀՄ-ի կառավարությունը, ղեկավարվելով խաղաղ գոյակցության սկզբունքներով, պաշտպանեց ամերիկյան նոր պրեզիդենտի հետ սովետական ներկայացուցիչների հանդիպման մասին գաղափարը։ Հետագա բանակցությունները Վիեննայում, սակայն, ցույց տվեցին, որ 1961 թվականին Քենեդին դեռևս չի ազատագրվել «սառը պատերազմի» դոգմաների գերությունից։ ԱՄՆ-ի պրեզիդենտը լրջորեն նախապատրաստվում էր արտասահմանյան ուղևորության, գտնելով, որ ծայրահեղ անհրաժեշտ է ցուցադրել ոչ միայն իր «հավասարակշռվածությունը», այլև «հաստատակամությունը», հատկապես ՍՍՀՄ-ի հետ հարաբերություններում։

ԱՄՆ-ի կառավարող շրջանները գտնում էին, որ հանդիպումը Վիեննայում ոչ մի դեպքում չպետք է լինի վերևների, երկու կառավարությունների ղեկավարների բանակցություն։ Գլխավոր խնդիրը սովետական կառավարության ղեկավարի հետ անմիջական կոնտակտի հաստատումն էր, այլ ոչ թե միջազգային ակտուալ պրոբլեմների վերաբերյալ կոնկրետ հաջողությունների հասնելը։ Այդ հանգամանքը Քենեդին մեկ անգամ չէ որ ընդգծել է իր օգնականների հետ զրույցներում։ Ավելի անկեղծ տրամադրության ժամանակ նա Վիեննայի հանդիպման հիմնական նպատակը բացատրում էր այսպես՝ Սովետներին անհրաժեշտ է հասկացնել, որ ամերիկյան կառավարության գործողությունները Լաոսում և Կուբայի դեմ ամենևին իր, Քենեդիի թուլությամբ չեն բացատրվում։ Մի խոսքով, Քենեդին ձգտում էր Սովետական Միությանը ցուցադրել «ուժի դիրքերից» քաղաքականությունը։ Այսպիսով,

Քենեդին Վիեննա էր մեկնում ոչ թե արդյունավետ բանակցությունների, այլ «ԱՄՆ-ի ինչ-որ ուժի ցուցադրման»:

Ի լրումն այս ամենի ԱՄՆ-ի կառավարությունը պրեզիդենտի դեպի Եվրոպա ուղևորվելու տառացիորեն նախօրյակին դիմեց այնպիսի քայլի, որ վկայում էր, թե Վաշինգտոնն այն ժամանակ լրջորեն չէր էլ մտածում միջազգային լարվածության թուլացման մասին: Մայիսի 25-ին Քենեդին հանդես եկավ կոնգրեսում երկրին ուղղված ուղերձով[28]:

Ամերիկյան ժողովրդին կրկին հրամցվեցին հին պրոպագանդիստական երգերը: ԱՄՆ-ի կառավարությունը նոր ռազմական հատկացումներ էր պահանջում, որպեսզի կարողանա «ազատության պաշտպանի» լիդերի դեր ստանձնել: Խաղաղ ժամանակում երբևիցե գոյություն ունեցող ուռճացված ռազմական բյուջեին ավելացվեց ևս 2 մլրդ դոլար՝ սպառազինության նոր տեսակների արտադրության և ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարի համար դիվերսիոն ջոկատների նախապատրաստման, օտարերկրյա պետություններին ռազմական «օգնություն» ցույց տալու և ԱՄՆ-ում ատոմային ապաստարաններ կառուցելու, ինչպես նաև «Ամերիկայի ձայն» կայանի պրոպագանդիստական ռադիոհաղորդումներն ընդլայնելու համար: Այդ միջազգային լարվածության հետագա սրման իսկական հայտ էր: «Իմ կարծիքով,— ասաց կոնգրեսում պրեզիդենտը,— մեր երկրի կյանքում և ամբողջ երկրագնդի ազատության ճակատագրում սկսվում են ամենալուրջ ժամանակները»[29]:

ԱՄՆ-ի կոնգրեսին ուղղված պրեզիդենտի հատուկ ուղերձում առանձնապես վառ արտահայտվեց կառավարության մտադրությունը՝ հետևել «սառը պատերազմի» հին, ճիշտ է, փոքր-ինչ ձևափոխված կուրսին: «Մենք ապրում ենք,— հայտարարեց Քենեդին,— անսովոր ժամանակներում: Մենք կանգնած ենք անսովոր մարտահրավերի առաջ: Բայց մեր ուժը, ինչպես և մեր համոզմունքները ստիպում են մեր պետությանը ստանձնել ազատության գործի պաշտպանության լիդերի դերը»: Այնուհետև Քենեդին ասաց. «Ես գտնվում եմ այստեղ (Սպիտակ տանը:— Ա. Գ.) ազատության դոկտրինան կյանքում կենսագործելու համար»[30]: Նա իրեն և, հետևաբար, ԱՄՆ-ի կառավարությանը Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում և Մերձավոր Արևելքում տեղի ունեցող սոցիալական հեղափոխությունների կողմնակից էր հայտարարում: Դա, իհարկե, պարզապես դեմագոգիա էր: Նման դեմագոգիան պետք եղավ պրեզիդենտին, որպեսզի կոնգրեսի ուշադրությունը շեղի ուղերձի գլխավոր նպատակից՝ սպառազինությունների մրցավազքի համար լրացուցիչ հատկացումներից: Ընդգծվում էր նաև, որ ԱՄՆ-ի կառավարությունն իր առաջնահերթ խնդիրն է համարում 40—50-ական թվականներին ստեղծված ռազմական բլոկների ամրապնդումը: ԱՄՆ-ն իր վրա պարտավորություն էր վերցնում ամերիկյան միջուկային հզորության հետ մեկտեղ ավելացնել ՆԱՏՕ-ի սովորական սպառազինությունների ամրապնդման ուղղությամբ ներդրումները: ՆԱՏՕ-ի հրամանատարությանը խոստանում էին տրամադրել «Պոլարիս» տիպի ամերիկյան հինգ միջուկային սուզանավ: ԱՄՆ-ի դաշնակիցների ռազմական «օգնության» համար արդեն պահանջվում էր 1885 մլն դոլար, այսինքն՝ 285 մլն դոլար ավելի, քան էր մեկ ամիս առաջ, մարտի 28-ի ուղերձում: Ամբողջ ուղերձում զինաթափման պրոբլեմին չնչին տեղ, մոտ 20 տող էր հատկացվել: Պրեզիդենտը, օրինակ, խոստանում էր ստեղծել զինաթափման պրոբլեմով զբաղվող կառավարական կազմակերպություն: Եվ այսպիսի ուղերձով Քենեդին հանդես եկավ տառացիորեն Եվրոպա ուղևորվելու նախօրյակին:

1961 թվականի մայիսի 30-ին ԱՄՆ-ի պրեզիդենտի ինքնաթիռն Ատլանտիկայի վրայով յոթժամյա թռիչքից հետո վայրէջք կատարեց Օրլի օդանավակայանում: Ֆրանսիայի կառավարությունը հանդիսավորությամբ դիմավորեց Քենեդիին: Հանրապետական գվարդիականները մերկացրած սրերով, բարձրաճիտ, փայլելու աստիճան մաքրած սապոգներով շարվել էին պրեզիդենտական օդանավասանդուղքի երկու կողմերում: Բարձրաստիճան հյուրին դիմավորելու էին ժամանել պրեզիդենտ դը Գոլը և ֆրանսիական կառավարության անդամները:

Դը Գոլի հետ Քենեդիի բանակցությունները տեղի ունեցան Ելիսեյան պալատում[31]: Զգալով հենց սկզբից ընդհանուր

լեզու գտնել Ֆրանսիայի պրեզիդենտի հետ, Քենեդին առաջին հերթին հարց բարձրացրեց Եվրոպայի կենտրոնում տիրող դրության և Արևմտյան Բեռլինի մասին։

Քենեդին գիտեր, որ ֆրանսիական կառավարությունը, որի զորքերը ամերիկյան և անգլիական ռազմական ստորաբաժանումների հետ մեկտեղ գտնվում էին Արևմտյան Բեռլինում, այն ժամանակ համաձայն չէր Կենտրոնական Եվրոպայում վիճակը նորմալացնելու վերաբերյալ սովետական առաջարկներին։ Սովետական առաջարկների իրագործումը կյանքում կնշանակեր գերմանական երկու պետությունների գոյության ընդունում և նրանց ու նրանց հարևանների միջև սահմանների հաստատում։ Վերջ կդրվեր Բոննի ռևանշիստական նկրտումներին, որն առանց որևէ հիմքի հայտարարում էր, թե իբր Արևմտյան Բեռլինը ԳՖՀ-ի անբաժան մասն է։

Քենեդին գերմանական խաղաղ պայմանագիր կնքելու վերաբերյալ սովետական առաջարկները բնորոշեց իբրև «սպառնալիք» Արևմուտքին։ ԱՄՆ-ը և դաշնակիցները, հայտարարեց Քենեդին, եթե անհրաժեշտ լինի, Արևմտյան Բեռլինի համար պետք է դիմեն միջուկային պատերազմի ռիսկի։ Դը Գոլը պատասխանեց Քենեդիին, որ, իր կարծիքով, Ռուսաստանը պատերազմ չի ուզում, բայց Արևմուտքը պետք է հաստատուն գիծ անցկացնի, պաշտպանելով իր շահերը։ Թվում էր Քենեդիի և դը Գոլի միջև սերտ հարաբերություն և փոխըմբռնում հաստատվեցին։ Ամերիկյան պրեզիդենտի համար այդ հաճելի նոտայով ավարտվեց բանակցությունների առաջին մասը։

Այնուհետև քննարկման դրվեց Լաոսի պրոբլեմը։ Դը Գոլի խորհուրդը Քենեդիին միանգամայն պարզ էր։ ԱՄՆ-ը գտնում էր, որ միտք չունի լաոսյան պրոբլեմը փորձել լուծել ռազմական միջամտության ճանապարհով։ Այդ հարցում նրանք կարող են սպասել Ֆրանսիայի դիվանագիտական աջակցությանը, բայց ոչ ավելին։ Ինչ վերաբերում է Լաոսի ռազմական գործողություններին ֆրանսիական զինվորների մասնակցությանը, ապա այդ ընդհանրապես բացառվում է։ Պետք է նշել, որ հետպատերազմյան տարիների ամերիկյան պրեզիդենտները արևմտաեվրոպական լիդերների կողմից իրենց տեսակետները այդպիսի անկեղծ կերպով արտահայ-



տելուց հետ էին սովորել։ Առաջներում Փարիզում նրանց ավելի հաճախ «այո» էին ասում, կամ վատագույն դեպքում լուռ համաձայնում էին։ Քենեդին ստիպված եղավ համոզվել, որ Արևմտյան Եվրոպայում նոր ժամանակներ են սկսվում։

Դա առանձնապես պարզ դարձավ, երբ գործը հասավ ՆԱՏՕ-ի պրոբլեմների քննարկմանը։

ՆԱՏՕ-ի պրոբլեմները քննարկվեցին բանակցությունների երկրորդ օրը։ Պրեզիդենտ դը Գոլը մանրամասն շարադրեց իր հայացքները միջազգային հարաբերությունների էվոլյուցիայի, աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ։ Ֆրանսիան, հայտարարեց նա, մտադիր չէ այլևս ապրել ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպության ստվերի ներքո։ Ցանկություն չունենալով «պայթեցնել» ՆԱՏՕ-ն, ասաց դը Գոլը, ֆրանսիական կառավարությունը մտադրություն չունի այս ուղղությամբ անմիջապես որևէ բան ձեռնարկել։ Դրա հետ մեկտեղ նա անկեղծորեն հայտարարում է, որ ամենամոտ ապագայում Ֆրանսիայի՝ ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպությունում գտնվելու հետ կապված իրավիճակը փոփոխվելու է։ Ինչպես հետագայում հիշում էր Սորենսենը, Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպան Գևինը նրանից հետո խոստովանեց իրեն, որ «դրեթե վախեցած էր այդ սառը, հաստատուն և անառարկելի հայտարարությունից այն մասին, որ ԱՄՆ-ը չպետք է միջամտի Եվրոպայի գործերին»։

Քենեդին ջանք չէր խնայում համոզելու դը Գոլին, որ նրա տեսակետները ՆԱՏՕ-ի ու Ֆրանսիայի կողմից սեփական միջուկային զենքի ստեղծման հարցերի վերաբերյալ սխալ են։ Ընդգծելով, որ «Եվրոպայի վրա հարձակվելու դեպքում ԱՄՆ-ը պատերազմի մեջ կմտնի», Քենեդին ասաց անգամ, որ ամերիկացիները կարող են առաջինը միջուկային հարված հասցնել «հարձակվողներին»։ ԱՄՆ-ը միջուկային հարձակում կգործի, եթե կառավարությունը որոշի, որ այդ «անհրաժեշտ է», կամ որ ամերիկյան զորքերը «վտանգի մեջ են գտնվում», կամ էլ եթե անգամ իրեն միայն հայտնի դառնա, որ Սովետական Միությունը «պատրաստվում է հարված հասցնելու»։ Այսպես, հետևելով պենտագոնի և պետդեպարտամենտի խորհուրդներին, Քենեդին ԱՄՆ-ի կառավարության «իրավունքը»

էր վերապահում վճռել, երբ առաջինը ատոմային հարված հասցնել սոցիալիստական երկրներին: Դրանք անպատասխանատու դատողություններ էին, հիմնված «Արևելքից ագրեսիայի մասին» հին, վաղուց ձախողված կոնցեպցիայի վրա: Բայց հենց այդ «փաստարկն» էր առաջ քաշվում ԱՄՆ-ի՝ առաջին հարվածի «իրավունքը» հիմնավորելու համար: Եվ Քենեդին հետևում էր ամերիկյան ռազմամոլներին ու հակասովետական պրոպագանդա կազմակերպողներին:

Դը Գոլը, սակայն, հասկացնել տվեց, որ ՆԱՏՕ-ի և Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի դերի վերաբերյալ իր տեսակետը անփոփոխ է մնում:

Այդ ժամանակ Քենեդին ֆրանսիական պրեզիդենտին իր վերջին խաղաթուղթն է բացում: ԱՄՆ-ը պատրաստ է ՆԱՏՕ-ի հովանու տակ ստեղծել ատոմային ուժեր, որոնք կգտնվեն ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Անգլիայի հսկողության ներքո: Խաղաղության գործի համար այդ վտանգավոր առաջարկությունը, չնայած այն ուղղակի չէր ասվում, ԳՖՀ-ի, որպես ՆԱՏՕ-ի անդամի համար ճանապարհ էր հարթում դեպի միջուկային զենքը:

Սակայն Քենեդիի այդ փաստարկը նույնպես ներգործություն չունեցավ: Դը Գոլը չհամաձայնեց նաև այդ առաջարկին: Նա միայն նկատեց, որ այն կուսումնասիրվի: Դիվանագիտական լեզվով այդ հաճախ «ոչ» է նշանակում: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, հենց այդպես էլ եղավ:

Բանակցությունները, այնուհանդերձ, ավարտվեցին կորեկտ մթնոլորտում: Դը Գոլի և Քենեդիի միջև, ինչպես նշում էին շատերը, անգամ անձնական լավ հարաբերություններ հաստատվեցին: Սակայն պարզ էր նաև հետևյալը: Միջազգային մի շարք խոշոր պրոբլեմների վերաբերյալ ամերիկյան և ֆրանսիական պրեզիդենտների կարծիքները զգալիորեն տարբերվում էին: Արևմտյան Եվրոպան, Ֆրանսիան արդեն այն չէին, ինչ մի քանի տարի առաջ: Աստիճանաբար Փարիզի դիվանագիտական և ժուռնալիստական շրջաններում հայտնի է դառնում, որ դը Գոլի հետ Քենեդիի բանակցությունները մեծ որոշումների չհանգեցրին: Այդ էր վկայում դը Գոլի հետ Քենե-



դիի բանակցությունների արդյունքներն ամփոփող 1961 թվականի հունիսի 2-ի կոմյունիկեն[32]:

Հունիսի 3-ին Վիեննայում սկսվեցին պրեզիդենտ Քենեդիի բանակցությունները սովետական կառավարության ղեկավարի հետ:

Վիեննայում տեղի ունեցող բանակցությունների ընթացքում[33] Քենեդին նպատակադրվել էր ապացուցել, որ միջազգային լարվածությունը ոչ թե իմպերիալիստական պետությունների էքսպանսիոնիստական արտաքին քաղաքականության, այլ իբր երկրագնդի վրա կոմունիզմի գաղափարների տարածման հետևանք է: Քենեդին պնդում էր, որ կոմունիստները ձգտում են դրսից ոչնչացնել դեպի Արևմուտք հակված ռեժիմները: Ըստ էության, պրեզիդենտը պաշտպանում էր ստատուս-քվոն, սոցիալիզմի և կապիտալիզմի միջև հավասարակշռության գաղափարը: Նա այնպես էր ձևացնում, որ իբր ազգային-ազատագրական շարժումները չեն արտահայտում այս կամ այն ժողովրդի կամքը, այլ հրահանգվում են «փոքրամասնության ներկայացուցիչների կողմից և ապա մեծ պետությունների ընդհարման պատճառ կարող են դառնալ»: Քենեդիի այդ խոսքերում դրսևորվում էր ամերիկյան կապիտալիզմի ձգտումը կանխելու ժողովուրդների մեջ սոցիալիզմի և կոմունիստական գաղափարախոսության տարածումը: Քենեդին մարտնչում էր սոցիալիզմի և կոմունիստական գաղափարների նկատմամբ ամբողջ երկրների և անգամ մայրցամաքների «իմունիտետի» համար: Անտարակույս, դրանք լոկ ռեալիզմի լրիվ բացակայությունը ցուցադրող պատրանքներ էին, քանի որ սոցիալիստական առաջավոր գաղափարներն անհնարին է կանգնեցնել արհեստական արգելքների միջոցով:

Ռեալիզմը բացակայում էր նաև գերմանական խաղաղության պայմանագրի հարցին Քենեդիի մոտեցման մեջ:

Գերմանական խաղաղ պայմանագրով Եվրոպայի կենտրոնում սահմանները ամրապնդելու հարցում ԱՄՆ-ի կառավարության ցանկության բացակայությունը վկայում էր, որ պաշտպանելով միջազգային հարաբերություններում ստատուս-քվոյի մասին ամերիկյան թեզիսը, որը մերժում էր սովետական կողմը, Քենեդին ոչ միայն ռեալիստ, այլև անկեղծ

չէր։ Չէ՞ որ, երբ զրույցները վերաբերում էին Եվրոպայի կենտրոնում ստեղծված պետական սահմանների ամրապնդմանը, ինչը իսկապես անհրաժեշտ էր խաղաղության համար, նա ոչ միայն չհամաձայնվեց, այլև վճռականորեն ընդդիմացավ այդպիսի քայլին։

Միջազգային գործերին Քենեդու մոտեցման մեջ առանձնակի տեղ էր զբաղեցնում Լաոսի պրոբլեմը։ Պրեզիդենտին հաջողվեց որոշակի չափով հակադրվել Լաոսում ամերիկյան ռազմական լայն միջամտություն իրականացնելու էքստրեմիստների և ռազմամոլների պահանջներին։ Նա ունկնդրեց դը Գոլի խորհուրդներին, որ այնտեղ ստեղծված իրավիճակից ելք կարող է լինել կոալիցիոն կառավարության ստեղծումը։ Այդ դիրքն ընդունեց Քենեդին Վիեննայում, որտեղ սովետական կողմն արեց առավելագույն հնարավորը, որպեսզի Լաոսը կարողանա կանգնել իր անկախության կայունացնելու ուղու վրա և խուսափել տարբերկյա ինտերվենցիայից։

Երկու կառավարությունների ղեկավարների ստորագրած կոմյունիկեում Լաոսի ապագայի մասին հարցի համաձայնությունը կենտրոնական կետը դարձավ։ Արդյունքներն իրենց երկար սպասեցնել չտվեցին։ Լաոսի պրոբլեմի կարգավորմանն ուղղված Ժնևի բանակցություններում ԱՄՆ-ի պատվիրակությունը դադարեց խոչընդոտներ հարուցել և որոշ ժամանակ անց, ինչպես հայտնի է, Լաոսի հարցում համաձայնություն ստորագրվեց։

Ահա այդպիսին էին Վիեննայի բանակցությունների արդյունքները, որոնց էությունը Քենեդին ԱՄՆ վերադառնալուց հետո բազմիցս փորձում էր գաղտնաբար բացատրել ամերիկյան ժուռնալիստներին։ Այդ զրույցների ժամանակ նա շեշտը դնում էր այն բանի վրա, թե ինքը «ոչ մի հարցում չի զիջել»։ Շատ ավելի լավ կլիներ, իհարկե, եթե նա զրուցակիցներին կարողանար պատմել իր առաջարկի մասին։ Բայց, ինչպես նշվեց, Վիեննայի բանակցություններում նրա դիվանագիտական պայուսակը դատարկ էր։ Նրանում գործնական առաջարկներ գրեթե չգտնվեցին։

1961 թվականի հունիսի 6-ին պրեզիդենտ Քենեդին հանդես է գալիս «երկրի առաջ հաշվետվությամբ» Եվրոպա կատարած ուղևորության մասին[34]։ Նրա ելույթը, որ հաղորդվում էր ռադիոյով և հեռուստատեսությամբ, հակասական էր։ Մի կողմից, պրեզիդենտը պնդում էր, որ իր ուղևորությունը Եվրոպա ամենևին էլ հանդիսավոր բնույթ չէր կրում, այլ ամուր խաղաղության հասնելու նպատակ էր հետապնդում։ Բայց, մյուս կողմից, նա հայտարարեց, որ իր այցելության արտաքին քաղաքական պատճառը «ազատ աշխարհի միասնությանը հասնելու» ձգտումն էր։ Ինչ վերաբերում է առաջին նպատակին, ապա Քենեդին խաղաղասիրական ուղղությամբ ԱՄՆ-ի կառավարության գործունեության համոզիչ օրինակներ չկարողացավ բերել։ Ավելին, նա ուղղակի ասաց, որ Վիեննայում ինքը ոչ մի համաձայնության չէր ձգտում և «ապագա հանդիպումներ վերևներում մենք չենք պլանավորում»։ Հարձակվելով ՍՍՀՄ-ի վրա, որը ձգտում էր հանրագումարի բերել երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքները, և ազգային-ազատագրական շարժման վրա, պրեզիդենտը պնդում էր, որ հանդիպումը Վիեննայում հաստատում է ԱՄՆ-ի կոնգրեսի կողմից իր կառավարությանն առաջարկված ռազմական և տնտեսական «օգնության» ծրագրերի բավարարման անհրաժեշտությունը։ «Ճակատամարտը շարունակվում է, և մենք պետք է նրանում մեր դերը կատարենք»,— եզրակացրեց Քենեդին։

1961 թվականին դեմոկրատների կառավարությունը միջազգային մի ամբողջ շարք կարևորագույն պրոբլեմների համատեղ լուծման հարցում պատրաստակամություն չէր ցուցաբերում։ Ընդհանուր առմամբ նմանվելով ԱՄՆ-ին, արևմտյան մյուս պետություններն ուժեղացնում էին իրենց ռազմական նախապատրաստությունը, հայտնելով իրենց զինված ուժերի ավելացման և ռազմական մասնակի զորակոչի պլանների մասին։ ԳՖՀ-ի մամուլում անգամ ԳԴՀ-ի տերիտորիա ներխուժելու ռազմական պլաններ էին քննարկվում։ Արևմտյան Բեռլինը, որտեղ 80-ից ավելի քայքայիչ կենտրոններ էին բույն դրել, ԳՖՀ-ի կառավարությանն օգտագործում էր ԳԴՀ-ի էկոնոմիկան թուլացնելու և այնտեղ լրտեսներ ու դիվերսանտներ ուղարկելու համար։ Այդ նպատակների համար առանձնապես

լայնորեն էր օգտագործվում Արևմտյան Բեռլինի և ԳԴՀ-ի մայրաքաղաքի միջև բաց սահմանը[35]։

Այդ իրադրության մեջ ԳԴՀ-ի կառավարությունը 1961 թվականի օգոստոսի 13-ին օգտագործեց սուվերեն պետության իր իրավունքը Արևմտյան Բեռլինի հետ սահմանի վրա արդյունավետ հսկողություն հաստատելու համար, այնտեղ արգելափակիչ կառույցներ կանգնեցնելով։ ԱՄՆ-ում ԳԴՀ-ի կառավարության այդ օրինական ակցիան ռեակցիոն պրոպագանդան օգտագործեց հակակոմունիստական և ռազմական հիստերիայի հերթական ալիքի համար։ Քեննեդու կառավարությունը ավելի լավ բան չգտավ, քան փորձել միջամտել Գերմանական Դեմոկրատական Հանրապետության ներքին գործերին։

Օգոստոսի 17-ին ԱՄՆ-ի կառավարությունը սովետական կառավարությանը նոտա ներկայացրեց, որում վիճարկում էր ԳԴՀ-ի կառավարության պաշտպանական միջոցառումների օրինականությունը և հայտարարում Բեռլինի արևելյան մասը որպես ԳԴՀ-ի մայրաքաղաք չճանաչելու մասին[36]։ Օգոստոսի 18-ի իր պատասխանում սովետական կառավարությունը լիովին պաշտպանում էր ԳԴՀ-ի կառավարության գործողությունները և բնորոշում սուվերեն սոցիալիստական պետության ներքին գործերին ամերիկյան կառավարության միջամտության փորձերը որպես անհիմն ու անտեղի[37]։

Քեննեդու կառավարության հետագա գործողությունները էլ ավելի շիկացրին իրադրությունը Եվրոպայում։ Ինչպես հետագայում վերհիշում է Սորենսենը, օգոստոսի կեսերին ճգնաժամը ճգնաժամի մեջ վտանգավոր չափով մոտեցավ պայթյունի կետին։ Սորենսենը նկատի ուներ ԱՄՆ-ի կառավարության վերաբերմունքն իր սահմանները պաշտպանելու ուղղությամբ ԳԴՀ-ի կառավարության միջոցառումների հանդեպ։ Այսպիսով, ԱՄՆ-ում տրամադրություններ էին տարածված միջազգային հարաբերություններում «պայթյունի» մոտալուտ լինելու մասին։

Ինչպիսի՞ գործողություններ է ձեռնարկում Քեննեդին ստեղծված բավական բարդ իրադրությունում։ Անչափ վտանգավոր։



ԱՄՆ-ը, ինչպես նաև Անգլիան շտապփույթ Արևմտյան Բեռլին են փոխադրում զինվորական նոր ստորաբաժանումներ։ ԳԴՀ-ի տարածքով անցնող ավտոուղիով շարժվեցին զինվորներով լեցուն ամերիկյան զրահապատ բեռնատարները։ Միաժամանակ Քեննեդին Արևմտյան Բեռլին է ուղարկում փոխնախագահ Ջոնսոնին և գեներալ Քլեյին, որն այնուհետև մնում է այնտեղ իբրև պրեզիդենտի անձնական դեսպանորդ»[38]։ Այդ ժամանակ ԱՄՆ-ում և ՆԱՏՕ-ի մյուս երկրներում անընդհատ ավելացնում էին զինված ուժերի քանակը։ Այդ բոլոր գործողությունները ոչ այլ ինչ էին, քան ուժի նոր ցուցադրում ի պատասխան գերմանական խաղաղ պայմանագիր կնքելու մասին սովետական առաջարկների և իր երկրի սուվերենությունը պաշտպանելու ուղղությամբ ԳԴՀ-ի կառավարության պաշտպանական օրինական միջոցառումների։

Դեռ ավելին, 1961 թվականի ամռանը ԱՄՆ-ում քիչ թիվ չէին կազմում այն տաքգլուխ մարդիկ, որոնք պատրաստ էին էլ ավելի վտանգավոր կուրսով ընթանալու։ Նրանց մեջ բավական ազդեցիկ գործիչներ կային, այդ թվում նաև ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղար Դին Աչեսոնը։ Նա էր պրեզիդենտին ավանտյուրիստական կուրսի մղում եվրոպական գործերում։ Աչեսոնն, օրինակ, գործադրեց իր բոլոր հնարավորությունները, որպեսզի կարողանա ստիպել Քեննեդուն ԱՄՆ-ում «ազգը վտանգի մեջ է» հայտարարելու և 1 մլն պահեստայինների բանակ զորակոչելու[39]։ Պրեզիդենտին ներկայացրած իր զեկուցագրում Աչեսոնը պահանջում էր նաև Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի ռազմական հզորության արագ ավելացում, միաժամանակ հրաժարում գերմանական պրոբլեմի գծով որևէ բանակցություններից։

Նման պրովոկացիոն առաջարկություններին Քեննեդին չհետևեց։

Անհրաժեշտ է սակայն, ընդգծել, որ եթե Քեննեդին որոշակամություն ունեցավ լրիվ չափով չհետևելու ավանտյուրիստական կուրսին, որ նրան առաջարկում էին Դ. Աչեսոնն ու պետդեպարտամենտի ղեկավարները, ապա, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ 1961 թվականի ամռանը ի պատասխան սովետական խաղաղ առաջարկներին ԱՄՆ-ի կառա-

վարության ձեռնարկած մի շարք քայլերը աշխարհը կանգնեցրին չափազանց վտանգավոր եզրի։

ԱՄՆ-ը շարունակում էր ավելացնել իր ռազմական հատկացումները, խնկական ծառայության զորակոչվեց 250 հազար պահեստային, իսկ Արևմտյան Բեռլինում ընդարձակվում էր ամերիկյան կայազորը[40]։ Քեննեդու կառավարությունը որոշում ընդունեց ատոմային սուզանավերի և ստրատեգիական հրթիռների արտադրության ժամկետների կրճատման, ինչպես նաև հին ռազմանավերն ու ինքնաթիռները մարտաշարք վերադարձնելու մասին։ Զենք շաչեցնելը դեռևս շարունակում էր մնալ ամերիկյան արտաքին քաղաքականության լեյտմոտիվը։

Հուլիսի 25-ին Քեննեդին մեծ ճառով հանդես եկավ ամերիկյան հեռուստատեսությամբ, որում հաղորդում էր ԱՄՆ-ի կառավարության հետևյալ քայլերի մասին. 3 247 մլն դոլարով ռազմական հատկացումների, մինչև 1 մլն ցամաքային զորքերի թվի, 29 հազ. մարդով նավատորմի և 63 հազ. մարդով ռազմաօդային ուժերի, մոտակա ամիսներին երեք անգամ զորակոչիկների թվի ավելացում, զինծառայության ժամկետի երկարացում[41]։

Քեննեդին դիմեց ԱՄՆ-ի կոնգրեսին «քաղաքացիական պաշտպանության» կարիքների համար 207 մլն դոլար լրացուցիչ հատկացումներ տալու մասին խնդրանքով[42]։ Նա կոչ արեց երկրում ատոմային ապաստարանների շինարարություն ծավալել՝ մթերքների, ջրի և դեղամիջոցների պաշարով, որոնք անհրաժեշտ կլինեն «կենդանի մնալու» համար։

Քեննեդու ելույթի եզրափակիչ մասն ամերիկացիների վրա պայթող ռումբի տպավորություն թողեց։ Սպառազինությունների մրցավազքին նրանցից շատերն արդեն սովորել էին, բայց խլուրդի նման հողի տակ «թաղվելու» ԱՄՆ-ի պրեզիդենտի կոչերին դեռևս չէին ընտելացել։ Քեննեդու ելույթը, ինչպես խոստովանում էր ամերիկյան քաղաքական մեկնաբան Հյու Սիդին, ԱՄՆ-ում ընկալվեց որպես «ճառ, որից պատերազմի հոտ էր փչում»[43]։ Երկրում, որն առանց այդ էլ ահաբեկված էր հակակոմունիստական և հակասովետական պրոպագանդայով, խուճապ սկսվեց։



ԱՄՆ-ի կոնգրեսը շատ կարճ կարգով կառավարությանը տրամադրեց ռազմական նոր հատկացումներ։ Աջ շրջանները ուժեղ ճնշում էին գործադրում պրեզիդենտի վրա ռազմական ուժի օգնությամբ լուծելու համար միջազգային քաղաքականության պրոբլեմները։ Այդ համառ նկրտումներից բորբոքված, Քեննեդին բացականչեց. «Բոլորն ինձ համոզում են, որ ես պետք է «հաստատակամ» լինեմ։ Դրա տակ ի՞նչ նկատի ունեն։ Անմիջապես նետվե՞մ Կուբա կամ Լաոս»[44]։

ԱՄՆ-ի անընդհատ աճող ագրեսիվության և Եվրոպայի կենտրոնում իրավիճակը նորմալացնելուց նրա հրաժարվելու պայմաններում սովետական կառավարությունը ստիպված էր ամենայն ուշադրությամբ գնահատել ստեղծված իրադրությունը։ Ի՞նչ էր այն վկայում։ Նախ և առաջ այն, որ Քեննեդու «նոր սահմանագծերը» արտաքին քաղաքականության մեջ իրականում 1961 թվականին հնացած դուրս եկան։ Ավանտյուրան Կուբայի դեմ, սպառազինությունների մրցավազքը, ռազմական հիստերիայի մթնոլորտի ստեղծումն ԱՄՆ-ում, երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքները հանրագումարի բերելուց հրաժարվելը, ԳՖՀ-ի ռևանշիստական շրջաններին աջակցելը՝ այդ բոլորը կարող էին միայն մեկ եզրակացության հանգեցնել՝ դեմոկրատների կառավարությունը մտադրություն ունի շարունակել միջազգային լարվածության ուժեղացման կուրսը։ Առանձնապես վտանգավոր էր իր միջուկային զենքն այսուհետև էլ կատարելագործելու նրա ձգտումը։

Վերջինի մասին, մասնավորապես, վկայում էր Ժնևի բանակցություններում ամերիկյան ներկայացուցիչների դրսևորած դիրքը։ Այնտեղ նրանք հանդես եկան առաջարկություններով, որոնք առաջին հերթին թելադրվում էին հետախուզական նպատակներով, այլ ոչ թե միջուկային փորձարկումները դադարեցնելու ձգտումով[45]։ Միաժամանակ ԱՄՆ-ի որոշ աչքի ընկնող ներկայացուցիչներ բավական պարզորոշ հասկացնել էին տալիս, որ եթե միջուկային զենքն արգելելու մասին համաձայնագրերը ստորագրվեն ոչ ամերիկյան պայմաններով, ապա ԱՄՆ-ի կառավարությունը կվերսկսի միջուկային զենքի փորձարկումները[46]։ Եվ իսկապես, ԱՄՆ-ը արդեն կանգնած

էր ստորգետնյա միջուկային փորձարկումների նոր շրջանի շեմին։

Ռազմաարդյունաբերական կոմպլեքսը միջուկային փորձարկումների վերսկսում էր պահանջում։ Ըստ որում վկայակոչում էին «ամերիկյան ատոմային ռումբի հայր» գիտնական Թելլերի, մի քանի այլ ամերիկյան գիտնական-ատոմագետների կարծիքը, որոնք գտնում էին, որ ԱՄՆ-ը (արդեն երկրորդ անգամ) առանց միջուկային զենքի նոր փորձարկումների «չի կարող մնալ»։

Դեռևս 1961 թվականի փետրվարին շտաբների պետերի միացյալ կոմիտեն պահանջ ներկայացրեց մթնոլորտում միջուկային փորձարկումները վերսկսելու մասին։ Ամենաչարը, ինչին համաձայն էին ադմիրալները՝ Ժնևում 60-օրյա բանակցությունների անցկացումն էր, որից հետո ԱՄՆ-ը «իրավացիորեն» պետք է վերսկսի փորձարկումները։ Պենտագոնը պահանջում էր վերսկսել ստորգետնյա պայթեցումները։ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը խորհուրդ էր տալիս հետաձգել միջուկային փորձարկումներ վերսկսելու ժամկետները։ Հետաձգել, բայց ոչ ավելին։

Հօգուտ միջուկային փորձարկումների վերսկսման հանդես եկավ կոնգրեսի ատոմային էներգիայի գծով միացյալ կոմիտեն։ ԱՄՆ-ում իսկական պրոպագանդիստական կամպանիա ծավալվեց հօգուտ փորձարկումների։ Կազմակերպվում էին հասարակական կարծիքի հարցումներ ապացուցելու համար, որ ամերիկացիները ԱՄՆ-ում միջուկային փորձարկումների վերսկսման կողմ են։ Օգոստոսի սկզբներին գեներալ Թեյլորը և շտաբների պետերի միացյալ կոմիտեն կրկին պահանջեցին անմիջապես վերսկսել միջուկային փորձարկումները։ Քենեդին սկսեց տեղի տալ։ Նա ցուցում տվեց ստորգետնյա պայթեցումների նոր սերիա անցկացնելու մասին[47]։ Դա դեռ առաջին քայլն էր զինվորականության պահանջները բավարարելու ուղղությամբ։ Դեմոկրատների կառավարությունը պատրաստվում էր վերսկսել միջուկային փորձարկումները ԱՄՆ-ի համար հարմար պահին։

Այդ պայմաններում, 1961 թվականի օգոստոսի 30-ին, ստեղծված միջազգային վտանգավոր իրադրությունը հան-



գամանքներն վերլուծելուց հետո սովետական կառավարությունը որոշում ընդունեց միջուկային զենքի փորձնական պայթեցումներ անցկացնելու մասին[48]։ Սովետական Միության պաշտպանական հզորության ամրապնդումն ամերիկյան իմպերիալիստների կողմից սպառազինությունների մրցավազքի և զենքով սպառնալիքի առկայությամբ փոքր-ինչ ուշքի բերեց ամերիկյան որոշ տաքգլուխների։ Բայց այդպիսիք այնտեղ քիչ չեն։

ԱՄՆ-ի կառավարությունը, օրինակ, մերժեց 1961 թվականի սեպտեմբերի 1—6-ը Բելգրադում տեղի ունեցող չմիացած պետությունների կառավարությունների ղեկավարների կոնֆերանսի հիմնական առաջարկությունները։ Ինչպես հայտնի է, կոնֆերանսը հատուկ ուշադրություն հրավիրեց պատերազմի վտանգի վրա և ՍՍՀՄ-ին ու ԱՄՆ-ին ուղերձներ հղեց, որոնցում խորը մտահոգություն էր արտահայտվում միջազգային իրադրության վատթարացման և պատերազմի վտանգի ավելացման կապակցությամբ և ՍՍՀՄ-ին ու ԱՄՆ-ին կոչ էր արվում անհապաղ սկսել բարձր մակարդակով բանակցություններ։ Ի պատասխան սովետական կառավարությունը հայտարարեց, որ նա պատրաստ է բանակցությունների «ցանկացած ժամանակ, ցանկացած տեղում և ցանկացած մակարդակով»[49]։ Ինչ վերաբերում է Քենեդիի կառավարությանը, ապա նա հրաժարվեց բարձր մակարդակով բանակցություններ վարել և բացասական պատասխան տվեց չմիացած պետությունների կառավարությունների ղեկավարներին։ Իսկ այնպիսի ազդեցիկ քաղաքագետ, ինչպես Ջոն Մաքլոյն է, ասաց, որ ԱՄՆ-ը ընդհանրապես չպետք է ուշադրություն դարձնի համաշխարհային հասարակական կարծիքին։ «Համաշխարհային հասարակական կարծի՞ք,— բացականչել է Մաքլոյը բանավեճերից մեկի ժամանակ։— Միակ բանը, որ նշանակություն ունի, ուժն է։ Արդի պայմաններում մենք պետք է ցուցադրենք, որ հզոր երկիր ենք, և եկեք ժամանակ չկորցնենք, ընկնելով համաշխարհային հասարակական կարծիքի ստվերի ետևից»։ Այդպես էր արտահայտվում հենց նոր ստեղծված սպառազինությունների ու զինաթափումների հսկողության գծով գործակալության ղեկավարը, անցյալում

Արևմտյան Գերմանիայում ԱՄՆ-ի գլխավոր կոմիսարը։ Դժվար չէ պատկերացնել ինչ էին ասում մյուս մինիստրները, այդ թվում զինվորականները։

ԱՄՆ-ը արագացրեց իր միջուկային փորձարկումները, որոնց այդքան երկար ու հանգամանորեն նախապատրաստվում էր։ 1961 թվականի սեպտեմբերի 5-ին Քեննեդին հրաման արձակեց Նևադա նահանգի հանքահորերում և ստորգետնյա արահետներում միջուկային ստորգետնյա փորձարկումները վերսկսելու մասին[50]։ Փորձարկումներն անմիջապես սկսվեցին, և դա ավելորդ անգամ վկայում էր, որ ԱՄՆ-ը դեռ մինչև Սովետական Միությունում փորձնական պայթեցումներ անցկացնելը ամեն բան նախապատրաստել էր առաջինը դրանք սկսելու համար։ Քեննեդին արդեն 1961 թվականի սեպտեմբերի 15-ին հայտնեց ԱՄՆ-ում միջուկային զենքի ստորգետնյա փորձարկումներ անցկացնելու մասին[51]։

1961 թվականի վերջերին, ամբողջ 1962 թ. և 1963 թվականի սկզբներին Քեննեդիի կառավարությունը միջուկային փորձարկումների դադարեցման հարցում երկակի դիրք էր բռնում։ Մի կողմից, նա այդ պրոբլեմի ուղղությամբ պրոպագանդիստական գիծ էր անցկացնում, լավ գիտակցելով, որ Սովետական Միությունը երբեք չի գնա միջուկային փորձարկումների (առանց համապատասխան զինաթափման) արգելման մասին համաձայնությունը կիրառելու ուղղությամբ «հսկողության» այն ձևերին ու ծավալին, որոնք առաջարկում էր ԱՄՆ-ը։ Այն ժամանակ ուժերի ռազմաստրատեգիական հարաբերակցության, ՍՍՀՄ-ի սահմանների մոտ ամերիկյան ռազմական բազաների առկայության պայմաններում, հսկողության մասին ամերիկյան առաջարկությունների ընդունումը, առանց հեռուն գնացող զինաթափման, կարող էր վնաս հասցնել ՍՍՀՄ-ի անվտանգությանը։ Մյուս կողմից, զգալի չափով անգլո-ամերիկյան միացյալ ուժի ճնշման տակտիկայի ձախողման հետևանքով ԱՄՆ-ի պրեզիդենտի մոտ սկսում է ամրապնդվել այն համոզմունքը, որ երեք միջավայրերում (մթնոլորտում, տիեզերքում և ջրի տակ) միջուկային փորձարկումների արգելման մասին համաձայնագիրը ձեռնտու կլինի ԱՄՆ-ին։



1961 թվականի աշնանը Սպիտակ տունը ինքն սկսեց շեշտը դնել սովետական փորձնական միջուկային պայթեցումների դատապարտման վրա։ Այդ նպատակին էին հետապնդում, օրինակ, հոկտեմբերի 17 և 30-ի հայտարարությունները[52], երբ ԱՄՆ-ի կառավարող շրջանները կանգնեցին այնպիսի փաստերի առաջ, որոնք վկայում էին, որ ՍՍՀՄ-ը ցանկացած ագրեսիային հակահարված հասցնող միջուկային հզոր զենքի է տիրապետում։ Նոյեմբերի 2-ին պրեզիդենտ Քեննեդին հանդես եկավ հայտարարությամբ, որով հայտնեց Միացյալ Նահանգներում միջուկային զենքի փորձարկումների նոր մեծ սերիայի նախապատրաստման մասին։ Նա կրկին այդպիսի որոշում ընդունելու համար մեղքը փորձեց գցել ՍՍՀՄ-ի վրա։ Սակայն, դա, իհարկե, չափազանց անհամոզիչ էր հնչում։ Դեռ ավելին, Քեննեդիի տվյալ հայտարարությունը կարելի է նրա կառավարության ամենաանհաջող դիվանագիտական քայլերից մեկը համարել։ Ինչպես, հակասովետական հարձակումներից հետո ԱՄՆ-ի պրեզիդենտն ասաց. «Մենք (ԱՄՆ-ը։— Ան. Գ.) վերջին մեկ տարվա ընթացքում մի շարք կարևոր քայլեր ձեռնարկեցինք, որպեսզի պահպանենք մեր առավելությունը (միջուկային զենքի բնագավառում։— Ան. Գ.), և մենք դրանից հրաժարվելու մտադրություն չունենք»։ Այնուհետև Քեննեդին ապացուցում էր, որ ԱՄՆ-ը պետք է տիրի ողջ աշխարհը պաշտպանելու գերազանց հնարավորություններին[53]։ Այդպիսով, նա ընդունեց, որ ԱՄՆ-ի կառավարությունը միջուկային փորձարկումների մասին հարցը լուծելիս ղեկավարվում էր ոչ թե միջուկային սպառազինությունների մրցավազքի և հենց միջուկային փորձարկումների դադարեցման շահերով, այլ առաջին հերթին ձգտում էր ռազմական առավելության հասնել Սովետական Միության նկատմամբ։

Միջուկային զենքի փորձարկումների դադարեցման մասին հետագա բանակցությունների համար առաջին քայլը կատարեց ՍՍՀՄ-ի կառավարությունը, որը նոյեմբերի 27-ին առաջարկեց վերսկսել բանակցությունները Ժնևում և համապատասխան համաձայնագիր կնքել մթնոլորտում, տիեզերա-

կան տարածությունում և ջրի տակ միջուկային զենքի փորձարկումներն արգելելու մասին[54]։ Սակայն 1962 թվականի ապրիլի 25-ին ԱՄՆ-ը վերսկսեց միջուկային փորձարկումները մթնոլորտում։

Միջազգային ամենից սուր և լուծվելիք հրատապ հարցերից էր զինաթափման պրոբլեմը։ Պետական դեպարտամենտի համար այլևս դժվար էր այդ պրոբլեմը շրջանցելը։ Սովետական Միությունը դեռևս 1959 թվականի սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի քննարկմանն էր ներկայացրել համընդհանուր և լիակատար զինաթափման ծրագիրը։ Զինաթափման սովետական կոնկրետ և հստակ պլանի առկայության պայմաններում զինաթափման մասին դատարկ խոսակցություններ շարունակելը, ինչպես այդ երկար տարիներ անում էին ամերիկյան քաղաքագետները, առնվազն անմտություն էր։ ԱՄՆ-ի վիճակը բարդանում էր նրանով, որ ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունները միաձայն հավանություն տվեցին բանաձևին, որը պաշտպանում էր համընդհանուր և լիակատար զինաթափման գաղափարը։ Ամերիկյան պատգամավորը ստիպված էր քվեարկել այդ բանաձևի օգտին։

1961 թվականի սկզբներին, ինչպես արդեն վերը նշվել է, ամերիկյան մի մեծ խումբ ղեկավար քաղաքական գործիչներ, նրանց թվում նաև պաշտպանության մինիստր Մակնամարան, ձեռնամուխ եղան ռազմական պրոբլեմների ուղղությամբ ԱՄՆ-ի դիրքորոշման մշակմանը։ Դրույթներ էին մշակվում, որոնցով երկար ժամանակ ղեկավարվելու էր ամերիկյան արտաքին քաղաքականությունը։ Հիմնականում նրանք հանգում էին հետևյալին՝ համընդհանուր և լիակատար զինաթափումը դիտել որպես շատ հեռավոր նպատակ, որը, բացի այդ, կարող է ուժեղացնել պատերազմի վտանգը։ Տվյալ հարցում ամերիկյան քաղաքականության առանցքը դարձնել սպառազինությունների նկատմամբ հսկողության սահմանումը[55]։

1961 թվականի հունիսին սկսվեցին զինաթափմանը նվիրված սովետա-ամերիկյան բանակցությունները։ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ներկայացուցիչների միջև կարծիքների փոխանակումն անցնում էր երեք փուլով. Վաշինգտոնում՝ հունիսի 19-ից



30-ը, Մոսկվայում՝ հուլիսի 17-ից մինչև 29-ը և Նյու-Յորքում՝ սեպտեմբերի 6—19-ը։ Սովետական կողմը գործի անցավ ամենալուրջ մտադրություններով։ Ամերիկյան կողմը, ի դեմս զինաթափման պրոբլեմների գծով պրեզիդենտի խորհրդական Մակլոյի, ինչպես պարզվեց, հարցը գործնականորեն քննարկելու և, գլխավորը, զինաթափման ուղղությամբ գործնական ուղի նախանշելու մտադրություն չուներ։ Այդ դիրքորոշումն արտահայտում էր ԱՄՆ-ի կառավարող վերնախավերի իսկական տրամադրությունները։ Այսուհանդերձ զինաթափմանը նվիրված սովետա-ամերիկյան բանակցությունների փաստը ինքնին նշանակալի էր։ Զինաթափմանը նվիրված բանակցությունների ուղին բռնելով, Քեննեդիի կառավարությունն արդեն չէր կարող շեղվել նրանից։ Բայց և առաջ ընթանալ այդ ճանապարհով ձգտում էր որքան հնարավոր է դանդաղ։ Մակլոյի դիրքը բանակցություններում կարելի է «նվազագույն քայլերի» տակտիկա անվանել։ Այսպես, չնայած սովետական կառավարությունն ամերիկյան կողմին համընդհանուր և լիակատար զինաթափման պլան ներկայացրեց, Մակլոյը հայտարարեց, որ նա պատրաստ է միայն զինաթափման «ընդհանուր սկզբունքները» քննարկել։ ԱՄՆ-ի այդ դիրքը լավ երևում է պրեզիդենտ Քեննեդիին զինաթափման բանակցությունների ընթացքի մասին 1961 թվականի հոկտեմբերի 6-ին Մակլոյի ներկայացրած զեկուցագրից[56]։

1961 թվականի հունիսի 19-ին Քեննեդիի դեսպանորդներն իրենց պայուսակներից դուրս բերեցին սկզբունքների մասին հայտարարությունը։ Նրանում առաջարկվում էր «համընդհանուր ունիվերսալ զինաթափման» գաղափարը, և ուրիշ ոչինչ։ Իսկական զինաթափում, ըստ էության, չէր էլ նախատեսվում։ Փոխարենն առաջարկվում էր հսկողություն սահմանել դեպի տիեզերք արձակվող հրթիռների նկատմամբ, առանց արգելելու միջուկային զենքի օգտագործումը[57]։

Ձգտելով թույլ չտալ բանակցությունների ձախողում և զինաթափման պրոբլեմի բանակցությունները մեռյալ կետից տեղաշարժելու համար 1961 թվականի հուլիսի 27-ին սովետական կառավարությունը ԱՄՆ-ին ներկայացրեց «Սովետա-ամերիկյան համատեղ նախագիծ համընդհանուր և լիակա-

տար զինաթափման վերաբերյալ պայմանագրի հիմնական սկզբունքների մասին»[58]։ Քեննեդին ցուցում է տալիս «սկզբունքների մասին հայտարարության» ամերիկյան նոր տարբերակ ներկայացնել։ Սեպտեմբերին ԱՄՆ-ի կառավարության հայտարարության այդ նախագիծը արդեն պատրաստ էր և ամսի 14-ին ներկայացվեց սովետական կողմին[59]։ Նրանում հիմնականում կրկնվում էին ամերիկյան հին դիրքորոշումները, բայց մի նկատելի փոփոխությամբ։ Քեննեդու կառավարությունն ընդունում էր, որ վերջնական նպատակը պետք է լինի համընդհանուր և լիակատար զինաթափումը։ Բայց այդ նույն ժամանակ ամերիկյան կողմը այդ դրույթը բոլորապատել էր մի ամբողջ շարք անընդունելի վերապահումներով։ Առանձնապես անիրական էր ԱՄՆ-ի կառավարության այն պահանջը, որ միջազգային հսկողություն սահմանվի ոչ միայն զինաթափման, այլև զինված ուժերի նկատմամբ։ ԱՄՆ-ը ակնհայտորեն «հակառակորդի» պաշտպանական պոտենցիալը մանրազնին ուսումնասիրելու հնարավորություն էր փնտրում։

ԱՄՆ-ի կառավարության «խաղաղասիրական ժեստ» էր հանդիսանալու պրեզիդենտ Քեննեդու ճառը ՄԱԿ-ում 1961 թվականի սեպտեմբերի 25-ին։ Բնորոշ է, որ ԱՄՆ-ի պրեզիդենտը, որն ընդամենը մեկ ամիս առաջ չէր համաձայնվում ՄԱԿ-ում ԱՄՆ-ի ներկայացուցիչ է. Սթիվենսոնի հետ այն հարցում, որ զինաթափման պրոբլեմը պետք է ավելի մեծ տեղ գրավեր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ, հատկապես ՄԱԿ-ում, ստիպված էր հետևել վերջինիս խորհրդին։ Նկատելով, որ «յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա ապրում են միջուկային դամոկլյան սրի տակ», Քեննեդին ասաց, որ «պատերազմի միջոցները պետք է ոչնչացվեն կամ դրանք կոչնչացնեն մեզ»[60]։

1961 թվականի սեպտեմբերի 20-ին հենց նոր բացված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանին ներկայացվեց ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի համատեղ հայտարարությունը զինաթափման գծով բանակցությունների համար համաձայնեցված սկզբունքների մասին[61]։ Քեննեդու կառավարությունը գնաց այն բանին, որպեսզի հայտարարությունից հանի կրճատման



կամ ոչնչացման ոչ ենթակա սպառազինությունների նկատմամբ հսկողության մասին դրույթը։ Այդ, սակայն, չէր նշանակում, որ ԱՄՆ-ի կառավարությունը հրաժարվում է տվյալ հարցում իր հին դիրքերից։ Այդ մասին, համատեղ հայտարարության հրապարակման հետ գրեթե միաժամանակ, զինաթափման գծով բանակցություններում մյուս պետությունների ղեկավարներին տեղեկացրեց ամերիկյան ներկայացուցիչը։ Նման դիրքը վկայում էր այն մասին, որ զինաթափման պրոբլեմի հարցում ԱՄՆ-ը ավելի շատ զբաղված էր քաղաքական խուսանավումով, քան լուրջ բանակցություններով[62]։

Այնուամենայնիվ համատեղ հայտարարության դրական նշանակությունը նրանում էր, որ ԱՄՆ-ի կառավարությունը պաշտոնապես հայտարարում էր համընդհանուր և լիակատար զինաթափման սկզբունքին իր համաձայնության և համապատասխան պայմանագիր կնքելու անհրաժեշտության մասին։ Կողմերը նաև պայմանավորվածության հասան, որ «համընդհանուր և լիակատար զինաթափման ուղղությամբ բոլոր միջոցառումները պետք է հաշվեկշռվեն այնպես, որպեսզի պայմանագրի իրագործման և ոչ մի փուլում ոչ մի պետություն կամ պետությունների խումբ չկարողանա ռազմական առավելություն ստանալ և բոլորի համար հավասար չափով անվտանգություն ապահովվի»[63]։ Սովետա-ամերիկյան համատեղ հայտարարությունը լավ հիմք էր ստեղծում համընդհանուր և լիակատար զինաթափման պայմանագրի նախագծի համար։

Սովետա-ամերիկյան համատեղ հայտարարության մեջ ազդարարվող բոլոր հիմնական նպատակներն ու սկզբունքներն ուղղակի հակասության մեջ էին գտնվում ԱՄՆ-ի զենքի ֆաբրիկանտների շահերի հետ։ Նրանք, բնականաբար, զինաթափման մասին չէին էլ մտածում։ Ամերիկյան ռազմական արդյունաբերությունը շարունակում էր թափ վերցնել։ Դեմոկրատների կառավարությունը չէր փորձում ընդհատել այդ պրոցեսը։ Այդ բոլորը և պայմանավորեց «Ամբողջ աշխարհում խաղաղության պայմաններում համընդհանուր և լիակատար զինաթափման մասին պայմանագրի հիմնական դրույթների սխեմա» անվանումով փաստաթղթի երևան գալը[64], որն ԱՄՆ-ը 1962 թվականին ներկայացրեց Ժնևում 18-ի

կամիտեի քննարկմանը։ Դրանք մշուշապատ առաջարկություն-ներ էին, որոնք անորոշ ժամանակով հետաձգում էին զի-նաթափման պրոբլեմի լուծումը։ Զինաթափման հսկողությու-նը կրկին փոխարինվում էր սպառազինությունների հսկողու-թյամբ։ Այսպես պետդեպարտամենտի, պենտագոնի և ԿՀՎ-ի ընդհանուր ջանքերով զգալի չափով ի չիք եղան նշմարվող դրական տեղաշարժերը կապված սովետա-ամերիկյան համա-տեղ հայտարարության ստորագրման հետ։

Զինաթափման բնագավառում որևէ միջոցառում անց-կացնելու դեմ առանձնապես կրքոտ էր հանդես գալիս ամե-րիկյան զինվորականությունը։ Իր հուշերում Քեննեդիի նախ-կին խորհրդական Շլեզինջերն ուղղակի խոստովանում է, որ «շտաբների պետերի միացյալ խումբը... հանդես էր գալիս ընդդեմ համընդհանուր և լիակատար զինաթափման»[65]։ Զին-վորականությունը զինաթափման պլաններն «ուտոպիա» ան-վանեց։ Նրանք կրքով էին դիմադրում ամերիկյան արտա-քին քաղաքականության, հատկապես միջուկային փորձար-կումների արգելման և զինաթափման հարցերում ռեա-լիզմի յուրաքանչյուր դրսևորում։ Սպառազինությունների մրցավազքն ԱՄՆ-ում շարունակվում էր։ Քեննեդիի կառա-վարությունը համոզում էր երկրին, որ ամերիկացիներին անհրաժեշտ է կատարելագործել միջուկային զենքի փոխա-դրման միջոցները, ավելացնել տարբեր տեսակի հրթիռների արտադրությունը, դրանցից շատերի մեկնարկային հրապա-րակները փոխադրել ջրանի տակ, արագացնել «Պոլարիս» հրթ-իռներով զինված ատոմային սուզանավերի ստեղ-ծումը։ Կոչեր էին արվում «կատարելագործել» ատոմային ռումբեր կրող ինքնաթիռների օդային մշտական հերթապահու-թյան սիստեմը։

Հանրագումարի բերելով ամբողջ վերը շարադրվածը, կա-րելի է նշել հետևյալը։ 1962 թվականի հունվարի 11-ին, այ-սինքն՝ պրեզիդենտի պաշտոն ստանձնելուց մեկ տարի անց, երկրի վիճակի մասին կոնգրեսին հղած ուղերձում Քեննեդին այսպես ձևակերպեց ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության «ուժի աղբյուրները». ԱՄՆ-ի քաղաքական և փաստացի հզո-րությունը, ատլանտյան համագործակցության ինտեգրացիան,



ռեգիոնալ հարաբերությունների կայունությունը Արևմտյան կիսագնդում, ԱՄՆ-ի կառավարության քաղաքականության «պոզիտիվ ուժը» երիտասարդ զարգացող երկրներում, «խա-ղաղության պաշտպանության» ուղղությամբ ՄԱԿ-ի դիրքերի ուժը[66]։ Եվ, իրոք, այդ մշուշապատ ձևակերպումներն արտա-հայտում էին ԱՄՆ-ի կառավարության արտաքին քաղաքա-կանության հիմնական գծերը 1961 թվականին և նրա ուղղու-թյուններն ապագայում։ Պատահական չէ, որ ամերիկյան արտաքին քաղաքականության «ուժի աղբյուրներում» բոլոր հինգ ուղղություններում կրկնվում են «ուժ», «հզորություն», «կայունություն» (strength) բառերը։ Միևնույն ժամանակ «ուժի աղբյուրների» մեջ չեն մտել «խաղաղությունը», «համա-գործակցությունը», «հարաբերությունների բարելավումն» ար-տահայտությունները։ Պրեզիդենտը հստակ չի նշում սոցիա-լիստական երկրների հետ հարաբերությունները բարելավելու ԱՄՆ-ի ձգտումը։ Նա միայն հիշատակում է, որ ԱՄՆ-ի «հիմ-նական նպատակն է» «ազատ և անկախ պետությունների խա-ղաղ ընկերակցությունը, որոնք ազատ են ընտրելու իրենց ապագան և սեփական սիստեմը այնքան ժամանակ, քանի դեռ չեն սպառնում մյուսների ազատությանը»[67]։ Նման մո-տեցումների մեջ շատ անհասկանալի և վտանգավոր տարրեր էին պարունակվում։ Բավական է նշել թեկուզ այն, որ պետու-թյունների միջև հարաբերությունների «խաղաղ վիճակի» գո-յությանը «մյուսների ազատությանը չսպառնալու» պայման էր դրվում։ Ամերիկյան իմպերիալիզմի ներկայացուցիչների մեկնաբանմամբ այդ կարող էր Կուբա ներխուժման և Վիետ-նամում ինտերվենցիայի էսկալացման արդարացում նշա-նակել։ Դա խոսում էր այն մասին, որ սկսած 1962 թվակա-նից դեմոկրատների կառավարության ներսում բավական ռազմատենչ տրամադրություններ էին իշխում։ Այս առթիվ ինչպե՞ս չհիշել Դալլեսի խոսքերը. «Երկրին խոշոր զինված ուժերի պահպանմամբ պայմանավորված ծանրություն կրել ստիպելու համար անհրաժեշտ է այնպիսի էմոցիոնալ մթ-նոլորտ ստեղծել, որը հոգեհարազատ լինի պատերազմի հո-գեբանությանը։ Անհրաժեշտ է դրսից սպառնալիքի մասին պատկերացում ստեղծել»[68]։

1962 թվականի սկզբին ԱՄՆ-ի կառավարությունն իր բանակի անձնակազմի գրեթե կեսը պահում էր արտասահմանում։ ԱՄՆ-ի սահմաններից դուրս էր գտնվում ամերիկյան մարտական զորամասերի կեսից ավելին։ Աշխարհով մեկ սփռված ամերիկյան տասնյակ ռազմական բազաներում էր տեղադրված ԱՄՆ-ի ռազմա-օդային ուժերի և ռազմա-ծովային ուժերի մեծ մասը։

Բուն ԱՄՆ-ում ամենազորեղ գերատեսչությունը պենտագոնն էր։ Մակնամարայի ենթակայության տակ կար 3,5 մլն մարդ, իսկ ռազմական արդյունաբերության մեջ աշխատում էր ևս 4 մլն մարդ։ Այդ նշանակում էր, որ գրեթե 8 մլն մարդ անմիջապես ծառայում էր ռազմական գերատեսչությանը։ Ընդհանուր առմամբ, ընտանիքների հետ միասին, ռազմաարդյունաբերական կոմպլեքսից կախման մեջ էր 25 մլն ամերիկացի[69]։

Սպառազինությունների մրցավազքն ԱՄՆ-ում շարունակում էր ծավալվել չեշտակի պարագծով։ Արդեն Քենեդիի առաջին բյուջեն իր ետևում թողեց էյզենհաուէրի ռազմական բյուջեն, գերազանցելով այն 6 մլրդ դոլարով[70]։ Հսկայական ռազմական բյուջե էր պլանավորվում նաև 1962 թվականին։ Որպես օրինակ կարելի է բերել հետևյալ թվերը. ամերիկյան զինվորականության ծախսերը 1962 թվականին պետք է գերազանցեին էյզենհաուէրի կառավարության համապատասխան ծախսերը 7—10 մլրդ դոլարով[71]։ Դեմոկրատների կառավարությունը չկանգնեցրեց սպառազինությունների մրցավազքը, այլ, ընդհակառակը, արագացրեց այն։

«Պոլարիս» սուզանավերի կառուցման և «Մինիթմեն» տիպի ՄՄՀ-ի (միջմայրցամաքային մեծ հրթիռների) արտադրության տեմպերը կրկնապատկվեցին։ «Վտանգ» ազդանշանից հետո 15 րոպեի ընթացքում թռիչքի պատրաստ ստրատեգիական ռմբակոծիչների թիվն ավելացավ 50 տոկոսով։ ԱՄՆ-ի պրեզիդենտը հայտնեց, որ 1962 թվականին կառավարությունը հատկացումներ է առանձնացնում «Պոլարիս» և «Մինիթմեն» տիպի 300 հրթիռների կառուցման և գործողության մեջ դնելու համար։ 1961 թվականին արդեն ԱՄՆ-ը կրկնապատկեց մարտական գործողությունների պատրաստ «ստրատեգիական ռեզերվի» դիվիզիաների թիվը, ավելացվեց Արևմտյան Եվրոպայում գտնվող ամերիկյան զորքերի քանակը, ուժեղացվեց ռազմածովային հետևակի կորպուսը, ստեղծվում էին «հակապարտիզանական զորքեր»[72]։



Խաղաղության համար անչափ վտանգավոր էր ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ Քենեդիի կառավարության վերցրած գիծը։ Իրենց ազատության և անկախության համար մարտնչող ժողովուրդների ճնշման քաղաքականությունը ԱՄՆ-ը առաջներում էլ էր անցկացնում։ Սակայն Քենեդիի օրոք այն նոր թափ ստացավ։ Այդ բնագավառում ամերիկյան կառավարության պլանների մասին 1961 թվականի փետրվարին հայտնեց պաշտպանության մինիստր Մակնամարան. «Մեր քաղաքականության նպատակն է՝ սահմանել ռազմական հնարավորությունների առավելագույն հավասարակշռություն երկրագնդի այն բոլոր շրջանների ցանկացած պոտենցիալ ընդհարումների նկատմամբ, որտեղ ազատ աշխարհը կենսականորեն կարևոր շահեր ունի»[73]։ Եվ այսպես, մյուս ժողովուրդների նկատմամբ ռազմական բռնության մեթոդները, կիսատ ռեֆորմների միջոցով սոցիալական հեղափոխությունները խոչընդոտելու փորձերի մեթոդի հետ մեկտեղ, ոչ միայն կիրառվում, այլև կատարելագործվում էին։ Դրանց էր ծառայեցվում նյութական և ռազմական բազան։

Պրեզիդենտ Քենեդիի սանկցիայով ԱՄՆ-ում սկսվեց այսպես կոչված հատուկ նշանակության զորքերի ստեղծումն ու ուսուցումը ռազմական ճամբարներում։ Այդ նշանակում էր ոչ այլ ինչ, քան մյուս երկրների ներքին գործերին ԱՄՆ-ի ռազմական միջամտության լայն նախապատրաստում։ 1962 թվականի հունվարին «Նյու-Յորք ջոռնըլ» թերթը գրում էր, որ հատուկ նշանակության ստորաբաժանումները «մոտ ապագայում կսկսեն հատուկ ուսուցում Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում՝ զենքերի առանձնահատուկ տեսակների և տակտիկայի օգտագործմամբ, գործողությունների նախապատրաստվելու ուղղությամբ, այն ժամանակ, երբ արդեն գոյություն ունեցող ստորաբաժանումները պատրաստվում են գործողությունների Արևելյան Եվրոպայում ու Ասիայում։ Այդ մարտիկները քաջ ծանոթ են լինելու այդ եր-

կրոնների լեզվին, ավանդույթներին, պատմությանը և քաղաքակրթությանը»[78]։

Դեմոկրատների կառավարությունը շարունակում էր իրականացնել ամերիկյան ռազմական պլացդարմի ընդարձակումը Հարավային Վիետնամում։ Վիետնամի ափերի մոտ էր մշտապես գտնվում ԱՄՆ-ի 7-րդ նավատորմը։ Հարավ-Արևելյան Ասիայում Քենեդիի կառավարության քաղաքականության հիմքում ընկած էր այդ շրջանում ԱՄՆ-ի տնտեսական, քաղաքական և ռազմական տիրապետությունը հաստատելու ամերիկյան իմպերիալիստների ձգտումը։ Բայց այդ ամենը քողարկվում էր «Հարավային Վիետնամի ազատությունն ու անկախությունը պաշտպանելու» ֆրազներով։

ԱՄՆ-ի կառավարությունը վտանգավոր կուրս էր վարում նաև միջազգային մյուս պրոբլեմների հարցում։ Նա հրաժարվեց ստորագրել գերմանական խաղաղ պայմանագիրը, համառորեն կառչում էր ՆԱՏՕ-ի, ՍԵԱՏՕ-ի, ՍԵՆՏՕ-ի ռազմական բլոկների քաղաքականությանը։ Վերջապես նա չէր հրաժարվել, ինչպես այդ ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ազատ Կուբայի հետ հաշվեհարդար տեսնելու մտադրություններից։ Եվ ոչ միայն Կուբայի։

Ամերիկյան քաղաքագետների արտաքին քաղաքական բոլոր բազում դոկտրինաներում կարմիր թելով մի ընդհանուր միտք էր անցկացվում՝ ԱՄՆ-ի կառավարող շրջաններն իրենց իրավունք են վերապահում, երբ այդ ցանկանան, միջամտել մյուս ժողովուրդների գործերին, նրանց փոխարեն լուծել ինչպես և ինչ ճանապարհով զարգանալ։ Նման դիրքը, որ իր հիմքում ավանտյուրիստական էր, համընդհանուր խաղաղության համար լուրջ վտանգ էր պարունակում։ Պետական քաղաքականության մակարդակի հասցված այդպիսի դիրքորոշման վերածնության դեպքում այն ավելի մեծ վտանգ կարող էր ներկայացնել, հատկապես եթե այն սկսեր իրականացվել ընդհանուր սովետա-ամերիկյան հարաբերությունների նման կարևոր ուղղությունում, որոնցից էր զգալի չափով կախված և խաղաղության բախտը։ Սովետական Միությունն անշեղորեն ձգտել և ձգտում է նրան, որպեսզի այդ տեղի չունենա։

ԳԼՈՒԽ III

# 1962 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻԲՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

## ԿԱՐԻԲՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ

Հետպատերազմյան միջազգային ճգնաժամերից ամենասուր և ամենավտանգավորներից մեկը 1962 թվականի կարիբյան կամ, ինչպես այդ երբեմն անվանում են Արևմուտքում, հատկապես ԱՄՆ-ում, «կուբայական», «հրթիռային» ճգնաժամն էր։ Միջազգային այդ կարճատև ճգնաժամը համընդհանուր խաղաղության գործի համար մեծագույն վտանգ էր պարունակում։

Նրան նախորդող և ուղեկցող իրադարձությունների մասին արդեն շատ է խոսվել ու գրվել։ Ամերիկյան բուրժուական դիվանագետները, քաղաքագետներն ու ժուռնալիստները յուրովի և բավական միակողմանի են մեկնաբանում այն օրերի դիվանագիտական պայքարը։ Կարելի է հիշատակել սենատոր Ռ. Քենեդիի «Տասներեք օր» աշխատությունը[1], Ջ. Քենեդիի օգնականներ Ա. Շլեզինջերի[2] և Թ. Սորենսենի[3] հուշերը, որոնցում կարիբյան ճգնաժամի պատմությանը կանխակալ մեկնաբանություն է տրվում. ԱՄՆ-ի պարբերական մամուլում դեռևս քննարկվում է այն հարցը, թե ինչ «ձեռք բերեց և կորցրեց» Ամերիկան այդ ճգնաժամի հետևանքով։ Կարիբյան ճգնաժամին են հաճախ անդրադառնում ամերիկյան գիտնականները միջազգային հարաբերությունների, միջազգային ընդհարումների և ճգնաժամերի վերլուծության ժամանակ։ Ընդ որում նրանք հաճախ օգտվում են

կարիբյան ճգնաժամի պատմության խեղաթյուրված տարբերակից: Այդ տարբերակի համար բնորոշն այն է, որ փորձ էր արվում Քենեդիի կառավարության այդ շրջանի գործողությունները ներկայացնել շահեկան լույսի տակ: Այդ ամենը առանձնապես կարևոր է դարձնում 1962 թվականի աշնանը տեղի ունեցած իրադարձությունների բազմակողմանի և օբյեկտիվ վերլուծությունը:

Միջազգային մթնոլորտը 1962 թվականի ամռանն ու աշնանը ծայրահեղ անկայուն էր: Պենտագոնն ընդարձակում էր իր ինտերվենցիան Հարավային Վիետնամում: Խաղաղ օվկիանոսի վրա մթնոլորտում միջուկային զենքի փորձարկումներ էին անցկացվում: Ադենաուերի Բոննի կառավարության կողմից Եվրոպայում հետպատերազմյան իրականությունն ընդունելուց հրաժարվելու հետևանքով այստեղ իրադրությունը բավական լարված էր: Դրա հետ մեկտեղ զինաթափման գծով բանակցություններ էին վարվում, ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև եվրոպական պրոբլեմների վերաբերյալ կարծիքներ փոխանակվում: Նրանց դիրքերի որոշ մոտեցում անգամ նկատվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ժառանգության վերացման պրոբլեմի հարցում: Բայց պոզիտիվ առանձին տենդենցներ դեռևս հիմք չէին տալիս հուսալու, որ ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ միջազգային կարևորագույն պրոբլեմների մոտեցման հարցում հաղթող դուրս կգա ռեալիզմը:

Առանձնապես վտանգավոր էին ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանների գործողությունները Կարիբյան ծովի շրջանում: Կուբայի նկատմամբ ամերիկյան արտաքին քաղաքական կուրսը, ինչպես և նախկինում, ուղղված էր այդ երկրի դեմ նոր ագրեսիայի գաղտնի նախապատրաստմանը: 1961 թվականի ապրիլին Կոչինոս ծովախորշում կրած պարտության դասերն ամերիկյան ռեակցիոներները փորձեցին մոռացության տալ: ԱՄՆ-ի կոնգրեսը անգամ բանաձև ընդունեց, որը պրեզիդենտին առաջարկում էր պահանջվող «բոլոր միջոցներով», ընդհուպ մինչև զենքի կիրառումը , պայքարել Կուբայի դեմ[1]:

ԱՄՆ-ի հարավում, Ֆլորիդայում, Կենտրոնական հետա-



խուզական վարչությունը ուժեղ սնում և ֆինանսավորում էր կուբայական հակահեղափոխականներին: Ռեակցիոն ամերիկյան շրջանները երկրում հակակուբայական կամպանիա ծավալեցին, մամուլի միջոցով ուռճացնում էին «սովետական սպառնալիքի» մասին առասպելը, գիտակցաբար սաստկացնելով միջազգային լարվածությունը: Միևնույն ժամանակ Վաշինգտոնում փորձում էին կասկածի տակ վերցնել Կուբայի ժողովրդական կառավարության իրականացրած պաշտպանական միջոցառումների օրինականությունը: 1962 թվականի սեպտեմբերի 4-ին պրեզիդենտը հատուկ հայտարարության մեջ առաջ քաշեց խիստ պայմաններ այն առումով, ինչ, ամերիկյան կառավարության կարծիքով, կարող էր և չէր կարող ձեռնարկել Կուբայի կառավարությունն իր պաշտպանունակության ամրապնդման համար: Միջազգային իրավունքի նորմաներին հակառակ այդ հայտարարության մեջ Կուբայի հասցեին՝ ամերիկյան պահանջները չկատարելու դեպքում՝ սպառնալիքներ էին պարունակվում[2]: Այսպիսով, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը «կոմունիզմի դեմ պայքարի» արագացման նպատակ էր հետապնդում Արևմտյան կիսագնդում և, մասնավորապես, ժողովրդական Կուբայում: Երկրում ծավալվում էր ագրեսիայի նախապատրաստումը Կուբայի դեմ, ուժեղացվում հակակուբայական սանձարձակ պրոպագանդան: Զորակոչվեց 150 հազար պահեստայիններ: Շարունակվում էին միջոցառումները կղզու տնտեսական բլոկադայի կազմակերպման ուղղությամբ:

Սովետական Միությունը 1962 թվականի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի կառավարությանը կոչ արեց զգուշամտություն հանդես բերել, չկորցնել ինքնատիրապետումը և սառնասրտորեն կշռադատել, թե ինչի՞ կարող են հասցնել նրա գործողությունները պատերազմի դեպքում»: Սովետական հայտարարության մեջ Կարիբյան ծովի շրջանում իրադրության նորմալացման ռեալ ճանապարհ էր առաջարկվում: «Նման գործողություններով մթնոլորտը շիկացնելու փոխարեն,— ասվում էր ՏԱՍՍ-ի հայտարարությունում,— շատ ավելի խելամիտ կլիներ, եթե ԱՄՆ-ի կառավարությունը, իմաստնություն հանդես բերելով, բարի քայլի դիմեր՝ Կուբայի հետ դի-

վանագիտական և առևտրական հարաբերություններ հաստատեր, որի ցանկալիության մասին վերջերս հայտարարեց Կուբայի կառավարությունը»[6]: Պրեզիդենտ Քենեդին 1962 թվականի սեպտեմբերի 13-ին արված հայտարարության մեջ անպատասխան թողեց Սովետական Միության առաջարկներն ամերիկակուբայական հարաբերությունների նորմալացման ուղիների մասին: Թվարկելով ԱՄՆ-ի դիվանագիտության մեծ ճնշման տակ ամերիկյան պետությունների կազմակերպության (ԱՊԿ՝ OAГ) ձեռնարկած գործողությունները Կուբայի նկատմամբ, պրեզիդենտն ասաց. «Եթե Միացյալ Նահանգները երբևիցե անհրաժեշտ համարեն ռազմական գործողություններ սկսել Կուբայում կոմունիզմի դեմ, ապա կոմունիստների մատակարարած զենքն ու տեխնիկական խորհրդատուները ի վիճակի չեն լինի փոփոխել հետևանքները կամ էապես հեռացնել ժամանակը այդպիսի արդյունքի հասնելու համար»[7]: Սեպտեմբերի 13-ի հայտարարության մեջ նաև մի շարք «հանգստացնող», բայց երկիմաստ արտահայտություններ էին արված: Այսպես, նրանցից մեկում ասվում էր. «Մենք երբեք այս կիսագնդում ագրեսիա չենք ծավալի, բայց և նրա երևան գալը թույլ չենք տա»[8]:

ԱՄՆ-ի կառավարող շրջանների նկրտումները բացահայտ ռազմատենչ բնույթ էին կրում: ԱՊԿ-ում և լատինաամերիկյան մյուս ռեգիոնալ կազմակերպություններում հակակուբայական գործունեություն ծավալվեց: Այս առթիվ կարելի է հիշատակել լատինաամերիկյան պետությունների արտաքին գործերի մինիստրների և հատուկ ներկայացուցիչների 1962 թվականի հոկտեմբերի 2-ին և 3-ին տեղի ունեցած խորհրդակցությունում ընդունված կոմյունիկեն: Նրանում ասվում էր, որ Կուբան իբր «ռազմական բազայի է վերածվում Ամերիկա կոմունիստական ներթափանցման համար...»[9]: Հանդիպման մասնակիցները, հակառակ փաստերի, հայտնում էին Կուբայի կողմից «ամերիկյան պետությունների և նրանց դեմոկրատական ինստիտուտների միասնությանը» սպառնացող սպառնալիքի և դրա դեմ անհատական և կոլեկտիվ կարգի հատուկ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին»[10]: Այսպես, լատինական Ամերիկայում «կոմունիստական ին-



տերվենցիայի» դեմ պայքարելու դիմակի տակ նախապատրաստվում էր իմպերիալիստական միջամտություն Կուբայի գործերին: Հոկտեմբերի 3-ին ԱՄՆ-ի կոնգրեսն ընդունեց բանաձև, որով ԱՄՆ-ի կառավարությանը կոչ էր անում միջոցներ ձեռնարկել Կուբայի դեմ, որը «սպառնալիքի տակ է դնում ԱՄՆ-ի անվտանգությունը»[11]:

ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանների պլանների և գործողությունների հետևանքով Կարիբյան ծովի շրջանում Կուբայի նկատմամբ ստեղծված իրադրության սրման պայմաններում սովետական և կուբայական կառավարությունները, միջազգային իրավունքի նորմաններին լրիվ համապատասխան, դեռևս 1962 թվականի ամռանը պայմանավորվածություն հասան Կուբայի պաշտպանունակության ամրապնդման մասին: Դեպի կղզի պաշտպանական նպատակներով միջին շառավիղի գործողության հրթիռներ փոխադրվեցին: Այդ կուբայական ժողովրդի դեմ ուղղված ագրեսիայի նոր փորձերին հակահարված տալու միջոց էր: 1962 թվականի հոկտեմբերի 8-ին Կուբայի պրեզիդենտ Օ. Դորտիկոսը, ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, հայտարարեց՝ եթե ԱՄՆ-ը էֆեկտիվ երաշխիքներ տա, որ Կուբայի վրա ռազմական հարձակում չի կատարի և չի օգնի դեպի կղզի ներխուժման փորձ անող մյուս երկրներին, ապա Կուբան հարկադրված չի լինի միջոցներ ձեռնարկել իր պաշտպանունակության ամրապնդման ուղղությամբ: ԱՄՆ-ի կառավարող շրջանները, սակայն, ոչ մի կերպ չարձագանքեցին այդ հայտարարությանը[12] և շարունակեցին ուժեղացնել իրենց ռազմական բազաները Կարիբյան ծովի շրջանում: ԿՀՎ-ն Կուբայի շուրջը դավադրությունների ու դիվերսիաների ցանց էր հյուսում:

Լավ հայտնի է, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի իմպերիալիզմի ագրեսիվ գլոբալ ստրատեգիայի բաղկացուցիչ մասը դարձավ ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների շրջապատումը հարձակողական ռազմական բազաների խիտ ցանցով: Դրանցից շատերը ստեղծվում էին Սովետական Միության սահմանների անմիջապես մոտերքում, ընդ որում հագեցած հեռավոր գործողության ռմբակոծիչ ավիացիայով, իսկ ավելի ուշ՝ նաև հրթիռ-

ներով։ Լավ հայտնի է նաև, որ սովետական կառավարությունը հանուն աշխարհում խաղաղության պահպանման և ժողովուրդների անվտանգության ապահովման բազմիցս դիմել է ԱՄՆ-ին մյուս երկրների տերիտորիաներում տեղադրված ռազմական բազաները վերացնելու առաջարկություններով։ Բայց այդ առաջարկները մերժվում էին։ Այս լույսի տակ պարզ է Սովետական Միության հասցեին արվող մեղադրանքների լիակատար անհիմն լինելը, որն իբր իր «միակողմանի գործողություններով» առաջացրեց կարիբյան ճգնաժամը, որի պատճառներն այլ տեղում պետք է փնտրել։ Դրանք թաքնված են ոչ միայն 1962 թվականի «ճգնաժամային դիվանագիտության», այլև ԱՄՆ-ի ռազմաարդյունաբերական կոմպլեքսի ծավալապաշտական արտաքին քաղաքական ստրատեգիայի էության, միջազգային ասպարեզում «ուժի դիրքերից» քաղաքականության, մյուս ժողովուրդների անվտանգությունը վտանգելու համառ փորձերի մեջ։ Անգամ ամերիկյան բուրժուական գրականության մեջ ժամանակ առ ժամանակ երևան են գալիս հայտարարություններ, որոնք լույս են սփռում ճգնաժամի իրական պատճառների և հեղափոխական Կուբայի դեմ ԱՄՆ-ի գործողությունների վրա։ Այսպես, պրոֆ. Ֆ. Գրինը խոստովանում է, որ «հրթիռային ճգնաժամի քաղաքական պատճառները բացատրվում են Կուբան խորը սոցիալիստական հեղափոխության ճանապարհով տանելու՝ Կաստրոյի կառավարության որոշմամբ...»[13]։

Իրադրությունը Կարիբյան ծովի շրջանում գնալով շիկանում էր։ Կուբայի երկնքում, կոպիտ կերպով ոտնահարելով միջազգային իրավունքի նորմաները, անընդհատ վխտում էին ամերիկյան ՈՒ—2 ինքնաթիռ-հետախույզները։ Այդ ինքնաթիռների թռիչքներն ավելորդ անգամ ապացուցում էին, որ ԿՀՎ-ն և պենտագոնը ինֆորմացիա են հավաքում Կուբայի ժողովրդի դեմ հնարավոր հարձակողական գործողության համար։ Պրեզիդենտ Քենեդին ոչ միայն գիտեր այդ թռիչքների մասին, այլև դրանք անմիջականորեն թույլատրել էր, հիմնվելով ԿՀՎ-ի և իր որոշ խորհրդականների տենդենցիոզ ինֆորմացիայի վրա։ 1962 թվականի հոկտեմբերի 14-ին հերթական ՈՒ—2-ը խախտեց Կուբայի օդային տարածությու-



նը[14]։ Նա Կուբայի տերիտորիայի աէրոլուսանկարում էր կատարում։ Ինքնաթիռի՝ բազա վերադառնալուց հետո սկսվեցին հետախուզական տվյալների մշակումն ու ուսումնասիրումը, որոնք, ինչպես հաղորդվում էր, վկայում էին Կուբայի պաշտպանունակության, նրա ռազմական, այդ թվում և հրթիռային, պոտենցիալի հետագա ամրապնդումը։ Այդ տվյալների մասին զեկուցեցին ԿՀՎ-ի և պենտագոնի ղեկավարներին, այնուհետև տեղեկացրին պրեզիդենտի հատուկ օգնական Մ. Բանդիին։ Բնորոշ է, որ վերջինս այդ մասին անմիջապես չզեկուցեց պրեզիդենտին։ Հոկտեմբերի 16-ի վաղ առավոտյան Մ. Բանդիի և ամերիկյան հետախուզության ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ հանգամանալի զրույց[15]։ Կարիբյան ճգնաժամի բորբոքման մեջ ԿՀՎ-ի վճռական դերի ընդունումն է արվում, մասնավորապես, Ֆ. Գրինի «60-ական թվականների արտաքին քաղաքականությունը։ Պրոբլեմներ և գործիքներ» գրքում[16]։ Միայն ԿՀՎ-ի աշխատակիցների մանրամասն հրահանգավորումից հետո Բանդին ներկայացավ պրեզիդենտին և արագորեն շարադրեց իրենց տարբերակը։ Քենեդին այդ հաղորդման մեջ անսովոր ոչինչ չտեսավ։ Պրեզիդենտի այն հարցին, թե «Ի՞նչ է այդ բոլորի բուն էության նշանակում»,— Բանդին պատասխանեց, որ հայտնաբերված հրթիռները կարող են «հարձակողական նպատակներով» օգտագործվել ԱՄՆ-ի դեմ[17]։

Քենեդին, իհարկե, հասկանում էր, ինչպես հետագայում գրում է Թ. Սորենսենը, որ Կուբայում միջին շառավիղի գործողության հրթիռների տեղադրումը չէր կարող փոփոխություն մտցնել ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ուժերի հավասարակշռության մեջ, որը գլխավորապես հիմնվում էր միջմայրցամաքային ստրատեգիական հրթիռների վրա։ «Տասներեք օր» գրքում Ռ. Քենեդին, հիշելով այդ ժամանակ ԱՄՆ-ի քաղաքական վերնախավում տիրող տրամադրությունները, խոստովանում էր, որ պրեզիդենտի շրջապատում այն կարծիքն էր տարածված, որ Կուբայում տեղադրված սովետական հրթիռները «ուժերի հարաբերակցությունում փոփոխություններ չեն մտցնում»[18]։ Մոտավորապես նույն եզրակացության է հանգում միջազգային անվտանգության հարցերի գծով ԱՄՆ-ի պաշտ-

պանության մինիստրի օգնականի նախկին տեղակալ Մ. Գալպերինը «Համամանակակից ռազմական ստրատեգիան» գրքում նշում է, որ կարիբյան ճգնաժամի ժամանակաշրջանում ԱՄՆ-ի կառավարությունը ղեկավարվում էր ավելի շատ քաղաքական, քան ռազմական նկատառումներով[19]:

Հոկտեմբերի երկրորդ կեսին, մինչև Կարիբյան ծովի շըրջանում ճգնաժամի սկսվելը, պենտագոնը ռազմական «ուսուցումներ» պլանավորեց: Դրանք որպես քողարկում էին ծառայում Ֆլորիդայում և Կուբայի մոտերքում ամերիկյան մյուս ռազմական բազաներում մեծ քանակությամբ զորքեր կենտրոնացնելու համար[20]: «Զորաշարժին» մասնակցելու համար թվով 40 հազար ծովային հետևազոր ժամանեց, ընդ որում նրանցից 5 հազարը տեղադրված էր անմիջապես Կուբայում, Գուանտանամո բազայում: Մարտական դրության մեջ էին գտնվում 82-րդ և 101-րդ օդադեսանտային դիվիզիաները: Ֆլորիդայում 100-հազարանոց զորախմբավորում էր կուտակված, որը ցանկացած պահին կարող էր ներխուժել Կուբա: Զորակոչված էր 14 հազար պահեստային՝ տրանսպորտային ավիացիայի ինքնաթիռները սպասարկելու համար: Սեպտեմբերին և հոկտեմբերին ԱՄՆ-ի կոնգրեսը հատուկ նախագիծ էր պատրաստում, որը ստորագրվեց 1962 թվականի հոկտեմբերի 23-ին[21]: Այն նախատեսում էր, որ ԱՄՆ-ը կդադարի «զգոնություն» ցույց տալ այն երկրներին, որոնք Կուբային կվաճառեն սպառազինություն և ստրատեգիական նշանակության ապրանքներ և դրանք կտեղափոխեն Կուբա: Այդ բոլորի նպատակն էր թուլացնել Կուբայի պաշտպանությունը:

Կուբայի նկատմամբ գործողությունների պլան մշակելու համար Քենեդիի ադմինիստրացիան մի շարք խորհրդակցություններ անցկացրեց: Նրանցից առաջինը հրավիրվեց Սպիտակ տանը հոկտեմբերի 16-ին[22]: Հատուկ հանձնարարականում պրեզիդենտը պահանջում էր գաղտնի պահել քննարկվող պլանները: Սպիտակ տանը տեղի ունեցած հանդիպմանը հետևեց խորհրդակցություն պենտագոնում: Նույն օրը Քենեդին ևս մի խորհրդակցություն հրավիրեց, այս անգամ կրկին Սպիտակ տանը: Վստահված անձանց այն նեղ խումբը, որի վրա այդ օրերին հենվում էր պրեզիդենտն իր



քաղաքական գիծը մշակելիս, բաղկացած էր փոխպրեզիդենտ Լ. Ջոնսոնից, պետական քարտուղար Դ. Ռասկից, պաշտպանության մինիստր Ռ. Մակնամարայից, արդարադատության մինիստր Ռ. Քենեդիից, գեներալ Մ. Թեյլորից, ինչպես նաև իր օգնականներ և խորհրդականներ՝ Մակոունից, Դիլոնից, Սթիվենսոնից, Բանդիից, Սորենսենից, Բոլից, Հիլպատրիկից, Թոմպսոնից, Ա. Ջոնսոնից, Աչեսոնից և Լովետից[23]: Ամերիկյան «անգղները» Քենեդիին առաջարկեցին Կուբայի վրա օդային հարձակում իրականացնել պաշտպանական օբյեկտները, պահեստներն ու օդանավակայանները ոչնչացնելու նպատակով: Պահանջներ էին լսվում հաշվեհարդար տեսնել Կուբայի հետ ծովից ամերիկյան դեսանտ իջեցնելու միջոցով: Ոմանք անհրաժեշտ էին գտնում 500 ինքնաթիռներով զանգվածային հարձակումների սերիա անցկացնել[24]: Դրանք բացահայտ ագրեսիվ պլաններ էին: Հոգեբանական առումով չափազանց հետաքրքրական է Ռ. Քենեդիի հետևյալ խոստովանությունը: Լսելով այդ ռազմատենչ առաջարկությունները, նա խորհրդակցության ժամանակ պրեզիդենտին այսպիսի երկտող է գրում. «Այժմ ես գիտեմ, ինչ էր զգում Տոձիոն Պերլ-Հարբորը պլանավորելիս»: Ջ. Քենեդիի խորհրդականների թվում կային նաև ավելի հավասարակշռված մարդիկ: Նրանք չէին ընդունում ուղղակի ագրեսիայի տեսակետը, նման ուղին ԱՄՆ-ի համար չափազանց վտանգավոր համարելով: «Կուբայի վրա անմիջական հարձակումը կարող էր պատերազմ սանձազերծել (ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև — Ա. Գ.), որը միջուկային զսպող միջոցը կոչված էր կանխելու[25],— հետագայում գրում էր ամերիկյան հայտնի հրապարակախոս Ջ. Սթոսինջերը: Բավական զգուշավոր դիրք էր բռնել ՍՍՀՄ-ում ԱՄՆ-ի նախկին դեսպան Թոմպսոնը: Հաշվենկատ կուրսի կողմնակից էր նաև պրեզիդենտի եղբայր Ռ. Քենեդին[26]: Սակայն պենտագոնին և ԿՀՎ-ին այնուամենայնիվ հաջողվեց ստանալ պրեզիդենտի համաձայնությունն ամերիկյան Գուանտանամո բազան ուժեղացնելու համար:

Ճգնաժամային իրավիճակի ստեղծման ժամանակ ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակիցների հանդեպ ԱՄՆ-ի վերաբերմունքի մասին կարելի է ասել, որ նրանք պարզապես ան-

տեսնում էին անգամ ամենաբարձր մակարդակում։ Նման դիրքորոշման մասին որոշումը պրեզիդենտն ընդունեց արդեն առաջին գաղտնի խորհրդակցություններում։ Այն արևմտաեվրոպական պետությունների ղեկավարներին ցույց տվեց, որ ԱՄՆ-ը ճգնաժամային սուր իրադրություններում մշակում է գործողություններ իր կուրսը առանց նրանց հետ համաձայնեցնելու և տեղեկացնելու։ Ագրեսիվ պլանները գաղտնի պահելու և դրանց իրականացումն իրենց գլխավոր դաշնակիցներից թաքցնելու «անհրաժեշտության» վկայակոչումը չէր կարող կարիբյան ճգնաժամից հետո անգամ պրագմատիկորեն տրամադրված արևմտաեվրոպացիների մոտ թաքցնել ԱՄՆ-ի գործողությունների հանդեպ տարակուսանքի ծանր զգացումը։ Իհարկե ճգնաժամի օրերին արված պաշտոնական հայտարարություններում Արևմտյան Եվրոպայի բուրժուական կառավարությունները համերաշխություն ցուցաբերեցին Քենեդիի կառավարության հետ։ Դա Վաշինգտոնի քաղաքականության նկատմամբ խորը անհանգստությունը թաքցնող հերթապահ դիրքավորում էր, որն արտահայտվեց այնուհետև ՆԱՏՕ-ի երկրների միջև հակասությունների ուժեղացման վրա։

Եվ այսպես, միջազգային ճգնաժամը թխվում էր ԱՄՆ-ի մայրաքաղաքում։ Հետագայում Ռ. Քենեդին հիշում է, որ պրեզիդենտի մի շարք խորհրդականներ «ասես կորցնում էին իրադրությունը ողջամտորեն և սառնասրտորեն գնահատելու ունակությունը»[27]։ Ամերիկյան «անգղները» համառորեն պահանջում էին ուղղակի ագրեսիա սկսել Կուբայի դեմ։ Վերջիվերջո, պրեզիդենտ Քենեդին եկավ այն համոզման, որ ամերիկյան նավատորմի, բանակի և ավիացիայի լայն ագրեսիան պաշտպանական առումով ուժեղացված Կուբայի դեմ կարող էր չափազանց վտանգավոր լինել ԱՄՆ-ի համար[28]։ Հիմնական քաղաքական խորհրդականները, վերջին հաշվով, արտահայտվեցին հօգուտ ծովային բլոկադայի։ Քենեդին պաշտպանեց այդ պլանը, որը միջազգային իրավունքի նորմաների և ՄԱԿ-ի կանոնադրության խախտում էր նշանակում։ Հոկտեմբերի 18-ին պրեզիդենտը երկու գաղտնի խումբ (ենթակոմիտեներ) ստեղծեց այն մարդկանցից, ովքեր մասնակցել էին ճգնաժամի ստրատեգիայի մշակմանը։ Նրանց հանձնա-



րարվեց Սպիտակ տուն ներկայացնել Կուբայի վրա ինչպես օդային հարձակման, այնպես և ծովային բլոկադայի իրագործման մանրամասն պլանը[29]։

Հոկտեմբերի 18-ին տեղի ունեցավ ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստր Ա. Ա. Գրոմիկոյի և պրեզիդենտ Ջ. Քենեդիի հանդիպումը։ Այն լայնորեն մեկնաբանվում էր ամերիկյան մամուլում կարիբյան ճգնաժամի օրերին, իսկ 1963 թվականին Ջ. Քենեդիի սպանությունից հետո ամեն կարգի մեմուարային գրականությունում, այդ թվում և Ռ. Քենեդիի գրքում։ Այդ բոլոր մեկնաբանությունների հիմնական նպատակն էր սքողել զրույցի իրական բնույթը և հորինել ևս մի պատրվակ միջազգային իրավունքի նորմաներին հակասող ԱՄՆ-ի կառավարության 1962 թվականի աշնան գործողությունները Կուբայի և Սովետական Միության նկատմամբ արդարացնելու համար։ Մինչդեռ հայտնի է, որ երբ Կարիբյան ծովի շրջանում ճգնաժամային սիտուացիան կարգավորելու դիվանագիտական հնարավորություն էր ստեղծվում, Քենեդիի կառավարությունը երկար ժամանակ հրաժարվում էր դրանք օգտագործել։ Դա հիմնականում վերաբերում է Վաշինգտոնում կարիբյան ճգնաժամի նախապատրաստման վաղ, «թաքուն» շրջանին։ Այն ժամանակ ԱՄՆ-ի կառավարությունը միտումնավոր մերժում էր տարբեր կարգի դիվանագիտական միջոցները, որոնց օգնությամբ հնարավոր կլիներ կանխել ընդհարումը։

1962 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսին պրեզիդենտ Քենեդին և նրա գլխավոր դիվանագիտական խորհրդականները չէին մտածում Կուբայի ուժեղացվող պաշտպանունակության հետ կապված պրոբլեմները լուծել դիվանագիտական ճանապարհով։ Այսպես, 1962 թվականի հոկտեմբերի 18-ին Ա. Ա. Գրոմիկոյի հետ պրեզիդենտ Քենեդիի զրույցի մեծ մասը նվիրված էր ոչ թե «կուբայական պրոբլեմին», այլ միջազգային մյուս կարևոր հարցերին, առաջին հերթին գերմանական խնդրի խաղաղ կարգավորմանը և դրա հիմքի վրա Արևմտյան Բեռլինում վիճակի նորմալացմանը։ Այդ զրույցի ժամանակ կուբայական հարցը բարձրացրեց սովետական կողմը։ Ըստ որում պրեզիդենտի ուշադրությունը հրավիրվեց

հետևյալ հանգամանքների վրա՝ արդեն երկար ժամանակ ԱՄՆ-ում ակտիվ հակակուբայական կամպանիա է գնում։ Ակնհայտ է, որ դա ամերիկյան կառավարության որոշակի քաղաքականության հետևանք է։ ԱՄՆ-ը համառ ջանքեր է գործադրում Կուբայի առևտուրը մյուս երկրների հետ շրջափակելու համար։ Այդ ճանապարհն ամբողջ մարդկության համար վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ, ինչը, ինչպես համոզված են ՍՍՀՄ-ում, չի կարող ցանկանալ և ոչ մի, այդ թվում և ամերիկյան ժողովուրդը։ Պրեզիդենտի ուշադրությունը հրավիրվեց նաև այն բանի վրա, որ ԱՄՆ-ում Կուբայի դեմ ագրեսիայի կոչեր են արվում ու պատասխանատու անձինք փորձեր են կատարում արդարացնելու ագրեսիվ գործողությունները ու վտանգավոր ավանտյուրաները[30]։

Զրույցի ընթացքում պրեզիդենտ Քենեդիին ասվեց, որ միջազգային պրոբլեմների ճնշող մեծամասնության լուծումը պետությունների միջև հարաբերությունների և բանակցությունների արդյունք է, որոնցում կառավարություններն արտահայտում են իրենց տեսակետը այս կամ այն հարցի վերաբերյալ[31]։ Ամերիկյան պրեզիդենտին դրանով պարզ հասկացնել էին տալիս, որ եթե ԱՄՆ-ը որևէ «պահանջ» ունի Կուբայից կամ Սովետական Միությունից, ապա անհրաժեշտ է դրանք լուծել խաղաղ միջոցներով։ Սովետական ներկայացուցչի այդ հայտարարությունը պրեզիդենտ Քենեդին դարձյալ անհետևանք թողեց։ Նման տակտիկա էր նա շարունակում վարել անգամ այն բանից հետո, երբ իրեն բացատրեցին պատճառները, ըստ որոնց ՍՍՀՄ-ը օգնություն է ցույց տալիս Կուբային նրա պաշտպանունակությունն ամրապնդելու ուղղությամբ։ Պրեզիդենտին հայտարարվեց, որ ստեղծված պայմաններում, երբ ԱՄՆ-ում հակակուբայական կամպանիա է բորբոքվում և թշնամական գործողություններ են տարվում ինչպես Կուբայի, այնպես և նրա հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանող երկրների նկատմամբ, որոնք հարգում են նրա անկախությունը և նրա համար դժվարին պահին օգնություն ցույց տալիս, Սովետական Միությունը կողմնակի դիտողի դերում չի մնա[32]։ Պրեզիդենտ Քենեդիին նաև ասվեց, որ XX դարի 60-ական թվականները XIX դարի



կեսերը չեն, գաղութների բաժանման ժամանակները չեն և ոչ էլ այն ժամանակը, երբ ագրեսիայի զոհը կարող էր ձայնը բարձրացնել միայն հարձակման ենթարկվելուց հետո՝ շաբաթներ կամ ամիսներ անց։ ԱՄՆ-ի կառավարության որոշումը 150 հազ. պահեստայինների լրացուցիչ զորակոչելու մասին ընդունվեց որպես չափազանց վտանգավոր, միջազգային լարվածությունը սրելու նպատակով արված ակցիա[33]։ Այսպիսով, ամերիկյան պրեզիդենտն անկեղծորեն տեղեկացվեց, որ ՍՍՀՄ-ի և Կուբայի կառավարությունները զգուշանում են վերջինիս վրա ռազմական հարձակումից, և այդ պայմաններում Սովետական Միությունը չի կարող անգործության մատնվել։ Սովետական Միության օգնությունը Կուբային միայն նպաստում է նրա պաշտպանունակության և էկոնոմիկայի ամրապնդմանը։ Սովետական մասնագետները կուբացիներին սովորեցնում են զենքի հետ վարվել իրենց երկրի պաշտպանության համար, և այդ հանգամանքը որևէ մեկին չի կարող սպառնալիք ներկայացնել[34]։

Զրույցի ընթացքում պրեզիդենտը խոստովանեց, որ 1962 թվականի ամռանը կուբայական հարցն «ինչպես լուրջ բնույթ ստացավ»։ Նա անհանգստություն արտահայտեց այն առիթով, որ ՍՍՀՄ-ն արագ թափով Կուբային զենք է մատակարարում[35]։ Այնուհետև Քենեդին ասաց, որ իր կառավարությունը Կուբայի վրա հարձակվելու պլաններ չունի։ Նա ասաց նաև. «Ես որպես պրեզիդենտ զսպում եմ այն ամերիկացիներին, որոնք Կուբայի վրա հարձակման կողմնակիցներ են»[36]։ «Ես չգիտեմ ո՞ւր է այս ամենը մեզ հասցնելու»,— նկատեց նա Կարիբյան ծովի շրջանում տիրող դրության կապակցությամբ։ Սակայն տպավորություն էր ստեղծվում, որ նա գործը տանում էր դեպի ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի միջև առճակատման, չնայած Սովետական Միության բոլոր գործողությունները Կուբայում լրիվ համապատասխանում էին միջազգային իրավունքի նորմաներին և ՍՍՀՄ-ի ու Կուբայի սուվերեն իրավունքներին։

Կուբայում տեղադրված սովետական հրթիռների մասին Քենեդին հարց չէր բարձրացնում, սահմանափակվելով միայն ընդհանուր հայտարարություններով այն մասին, որ Սովե-

տական Միության գործողությունների հետևանքով իրադրությունը Կարիբյան ծովի շրջանում «անսպասելիորեն վատացել էր»: Պրեզիդենտը նկատի ուներ Կուբայի պաշտպանունակության ամրապնդումն ամենալայն պլանով: Այս անգամ Քեննեդու ուշադրությունը կրկին հրավիրվեց այն բանի վրա, որ հարցի էությունը հանգում է նրան, թե Կուբայի կառավարությունը պատրաստ պետք է լինի թե ոչ երկրի վրա նոր հարձակումը և ագրեսիայից պաշտպանվելու համար քայլեր ձեռնարկելու: ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստրը հայտարարեց, որ Սովետական Միությունն արձագանքել էր Կուբայի օգնության ցույց տալու խնդրանքին միայն այն պատճառով, որ այդ կոչը Կուբայի վրա կախված վտանգը հեռացնելու նպատակ էր հետապնդում[37]: Եթե Սովետական Միությունն օգնում է կուբացիներին զենքի հետ վարվել սովորել, ապա դա ոչ մի կերպ չի կարելի դիտել իբրև սպառնալիք ԱՄՆ-ին: Ի պատասխան Քեննեդին կրկնեց, որ ԱՄՆ-ը Կուբայի վրա հարձակվելու պլաններ չունի, իսկ անձամբ ինքը ձգտում է թույլ չտալ պատերազմի հասցնող գործողություններ, եթե միայն այդ գործողությունները մյուս կողմի մեղքով չառաջանան: Այնուհետև պրեզիդենտն ընթերցեց կուբայական հարցի վերաբերյալ 1962 թվականի սեպտեմբերի 4-ին արված իր պաշտոնական հայտարարությունը, որում տրվում էր Կուբայում տիրող իրավիճակի ամերիկյան մեկնաբանությունը:

Վերը նշվածից բխում է, որ 1962 թվականի հոկտեմբերի 18-ին ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստրի հետ զրույցի ժամանակ ԱՄՆ-ի պրեզիդենտ Քեննեդին ոչ մի անգամ ուղղակի հարց չբարձրացրեց Կուբայում առկա միջին շառավիղի գործողության սովետական հրթիռային զենքի մասին: Հետևապես նրան չէր էլ կարող պատասխան տրված լինել՝ կա՞ այդպիսի զենք Կուբայում, թե ոչ[38]: Դեռ ավելին, կարելի է համարել, որ պրեզիդենտ Քեննեդին միտումնավոր մոլորության մեջ էր գցում սովետական կողմին, թաքցնելով Կուբայի նկատմամբ ամերիկյան կառավարության իսկական մտադրությունները և ընդգծելով Կուբայի վրա հարձակվելու պլաններից ԱՄՆ-ի կառավարության հրաժարվելը հենց այն ժամանակ, երբ նրա մերձավոր մարդկանց խումբը հույժ



գաղտնի պայմաններում ամերիկյան զինված ուժերի՝ կղզի ներխուժելու զանազան տարբերակներ էր մշակում: Իրենց գործողություններում նրանք հետևում էին իմպերիալիստական դիվանագիտության ավանդույթներին՝ միջազգային սուր պրոբլեմների հաստատման ընթացքում խստագույն խորհրդապահության քող ստեղծել, գործել, ելնելով միայն սեփական շահերից, իր հակառակորդի վրա որպես ճնշման լծակ ակտիվորեն օգտագործելով ռազմաստրատեգիական իրադրությունը և քաղաքական շանտաժի մեթոդները: «Ճգնաժամային դիվանագիտության» այդ բոլոր տարրերն ԱՄՆ-ի կառավարող շրջանները գործադրեցին կարիբյան ճգնաժամի ընթացքում:

Անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել, որ ԱՄՆ-ի իմպերիալիստական ուժերի ռազմական գործողությունները մյուս պետությունների տերիտորիաներում հրթիռային բազաներ կազմակերպելու ուղղությամբ նրանց ընդհանուր ռազմաքաղաքական ստրատեգիայի պլանում իսկապես ագրեսիվ բնույթ էին կրում, մինչդեռ Կուբայի անվտանգության ամրապնդման գծով ՍՍՀՄ-ի բոլոր քայլերը զուտ պաշտպանական նշանակություն ունեին:

1962 թվականի հոկտեմբերի 18-ին տեղի ունեցավ նաև Ա. Ա. Գրոմիկոյի հանդիպումը ԱՄՆ-ի պետական քարտուղար Դ. Ռասկի հետ: Այդ ընթացքում ամերիկյան դիվանագետը, պնդելով, որ ԱՄՆ-ը մտադրություն չունի ռազմական հարձակում իրականացնել Կուբայի վրա, հայտարարեց, որ կղզին ռազմական պլացդարմի է վերածվել «ԱՄՆ-ի և Լատինական Ամերիկայի վրա հարձակվելու համար»[39]: Կուբայի ներքին ռեժիմը Ռասկը բնութագրեց իբրև Արևմտյան կիսագնդի անվտանգության շահերին չհամապատասխանող երևույթ: Ռասկն այնուհետև վերացականորեն խոսեց Արևմտյան կիսագնդի երկրների «շահերի ընդհանրության» մասին: Անմիջապես չշոշափելով «Մոնրոյի դոկտրինան», նա, ըստ էության, փորձում էր պաշտպանել այն, ընդգծելով Արևմտյան կիսագնդի բոլոր երկրների «համերաշխությունը» և նրանց անվտանգության շահերի «ընդհանրությունը»: Ռասկն առանձնապես դժգոհեց Կուբայում սովետական զենք հայտնվելու կապակցությամբ: Սակայն նա, ինչպես և պրեզիդենտ Քեննեդին,

սովետական ներկայացուցչին չհարցրեց Կուբայում հրթիռների առկայության մասին։ Նրա բոլոր անհանգստություններին լրիվ պատասխան տրվեց։ Ա. Ա. Գրոմիկոն նշեց, որ Կուբան ստիպված էր անհրաժեշտ եզրակացություններ անել ԱՄՆ-ում պատրաստված և նրա միջոցներով զինված հակահեղափոխականների՝ կղզի ներխուժելու փաստից։ Ռասկին ասվեց նաև, որ եթե Վաշինգտոնը որևէ պահանջ ունի Կուբայից, օրինակ, նյութական, ապա ԱՄՆ-ը կարող է կուբացիների հետ կոնտակտի մեջ մտնել դրանք կարգավորելու համար[40]։ Այդ դիտողությանը Ռասկը չպատասխանեց։

Այնուհետև, սովետական և ամերիկյան ներկայացուցիչների միջև բավական նշանակալից խոսակցություն տեղի ունեցավ ՍՍՀՄ-ի սահմաններին անմիջապես մոտ, ԱՄՆ-ի սահմաններից դուրս գտնվող ամերիկյան ռազմական բազաների մասին։ Ռասկին ասվեց, որ նա, հավանաբար, չի ժխտում ամերիկյան ռազմական բազաների և բազմաթիվ ռազմական խորհրդատուների առկայությունը Թուրքիայում և Ճապոնիայում, չխոսելով արդեն Անգլիայի, Իտալիայի և Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների, ինչպես նաև Աֆրիկայի ու Ասիայի մասին։ Ստացվում է, որ ԱՄՆ-ը կարող է ռազմական բազաներ ունենալ նշված երկրներում, նրանց հետ ռազմական պայմանագրեր կնքել, իսկ ՍՍՀՄ-ը իրավունք չունի օգնություն ցույց տալ Կուբային նրա անկախությունը պահպանելու և պաշտպանունակությունն ամրապնդելու համար[41]։ Ռասկն ասաց, որ Սովետական Միությունը չափազանցնում է ամերիկյան ռազմական բազաների դերն արտասահմանում։ Հետագա զրույցի ընթացքում ամերիկյան ներկայացուցիչը, ըստ էության, խուսափեց քննարկել այն հարցը, թե որ երկրներում կան ամերիկյան բազաներ և հրթիռներ։ Ըստ նրա, բացի ԱՄՆ-ի տարածքից, միայն երեք երկրներում կան ամերիկյան բազաներ։ Ա. Ա. Գրոմիկոյի այն դիտողությանը, որ Անգլիան նման երկրների թվին է պատկանում, Ռասկը դրական պատասխան տվեց, քանզի այդ փաստը լայնորեն հայտնի էր, և Լոնդոնը դա գաղտնի չէր պահում։ Սովետական ներկայացուցիչն ամերիկյան դիվանագետի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքին, որ մի շարք երկրների հետ ԱՄՆ-ը



ռազմական պայմանագրեր ունի, և նրանք կապված են ԱՄՆ-ի զենքի զանազան տեսակներ ցանկացած ժամանակ իրենց տերիտորիաներում տեղադրելու պարտավորությամբ։ Այդ դիտողությանը Ռասկը նույնպես պատասխան չտվեց։ Ըստ երևույթին նա, երբ շոշափվեց ամերիկյան ռազմական ստրատեգիայի ու տակտիկայի վերաբերյալ հարցը, գերադասեց խիստ գաղտնի պահել ՍՍՀՄ-ի շուրջը տեղադրված ռազմական բազաների հետ կապված հարցերը։ Հետևաբար, նա ոչ մի հիմք չուներ սպասելու, որ մյուս կողմը հանկարծ կսկսի ԱՄՆ-ի ներկայացուցիչների հետ քննարկել բարեկամ երկրի պաշտպանության ամրապնդման ուղղությամբ իր կողմից անցկացվող միջոցառումները։

Այն փաստը, որ 1962 թվականի աշնանը այդ ժամանակի մի ամբողջ շարք պրոբլեմներ դեռևս դիվանագիտական լուծման էին սպասում, օրակարգի հարց էր դառնում միջազգային վեճերի խաղաղ կարգավորման բոլոր հնարավոր միջոցների օգտագործումը, ներառյալ սովետական կառավարության ղեկավարի և ԱՄՆ-ի պրեզիդենտի միջև բարձր մակարդակով հանդիպումները։ Սովետական կառավարությունը, հետևելով լենինյան խաղաղասիրական քաղաքականության սկզբունքներին, Սովետական Միության արտաքին գործերի մինիստրի միջոցով 1962 թվականի հոկտեմբերի 18-ին Ջ. Քենեդիին հանձնեց այդպիսի հանդիպման մասին առաջարկը՝ միջազգային վիճելի պրոբլեմների կարգավորման և ՍՍՀՄ-ի ու ԱՄՆ-ի տարակարծություններ առաջացնող հարցերի քննարկման համար[42]։ Պրեզիդենտը դրականորեն արձագանքեց Սովետական Միության այդ առաջարկին։ Նա միայն նկատեց, որ կցանկանար այդպիսի հանդիպման ժամանակ պրոբլեմները քննարկել առանց ձևական օրակարգի և չառանձնացնելով քննարկման ենթակա կոնկրետ հարցերը։

Այդ նույն օրը Թոմփսոնը Ռասկի մոտ ճաշկերույթի ժամանակ հայտնեց ԱՄՆ-ում ՍՍՀՄ-ի դեսպան Ա. Ֆ. Դոբրինինին, որ Սպիտակ տունը նպատակահարմար է գտնում հետաձգել բարձր մակարդակով հանդիպումը։ Ամերիկյան կողմի կարծիքով 1962 թվականի նոյեմբերի հանդիպումը հանպատրաստից բնույթ էր կրելու և հազիվ թե դրական ար-

դյունքներ ունենար։ Պրեզիդենտը գտնում է, ասաց Թոմփսոնը, որ այդպիսի հանդիպումները բացառիկ կարևոր նշանակություն ունեն և այդտեղ անհաջողությունն անթույլատրելի է։ Իսկ Ջ. Քեննեդին ձգտում է, որպեսզի սովետական կառավարության ներկայացուցիչների հետ իր երկրորդ հանդիպումը «կոնկրետ արդյունքի հասցվի»[43]։ Լիովին չժխտելով Սովետական Միության ներկայացուցիչների հետ բարձր մակարդակով հանդիպման հնարավորությունը, ամերիկյան կողմն այն անորոշ ժամանակով հետաձգում է։ Այդ դրվագում առանձնապես պարզորոշ դրսևորվեց ամերիկյան ղեկավարության մոտ հասունացած պրոբլեմը խաղաղ, դիվանագիտական ճանապարհով լուծելու ձգտման բացակայությունը. նա դերադասում էր վարել «ճգնաժամային դիվանագիտություն»։

Պլանավորվող ճգնաժամային իրադրությունում ԱՄՆ-ի կառավարության գծի մշակումը շարունակվեց և այն բանից հետո, երբ պրեզիդենտ Քեննեդին հոկտեմբերի 19-ին, թողնելով մայրաքաղաքը, մեկուկես օրով ուղևորվեց դեպի արևմտյան նահանգները՝ մասնակցելու ընտրական կամպանիային։ Դա ավելի շատ ուշադրություն չգրավող քայլ էր։ Այդ ընթացքում ԿՀՎ-ի և Պենտագոնի ներկայացուցիչները կրկին սկսեցին պնդել Կուբան ռմբակոծելու վրա։ Նրանք ասում էին, որ մնացած բոլոր միջոցները «բացահայտ անբավարար են»։ «Այժմ, կամ երբեք»[44], պահանջում էին «տաք պատերազմի» կողմնակիցները։ Սակայն շուտով պրեզիդենտի խորհրդականների մեծ մասը սկսեց եզրակացության գալ, որ նման քայլը կործանարար հետևանքներ կունենա ԱՄՆ-ի համար։ Այդ մասին գաղտնի խորհրդակցություններից մեկի ժամանակ ուղղակի հայտարարեցին Ռ. Քեննեդին և Թ. Սորենսենը[45]։ ԱՄՆ-ի պետական քարտուղար Դ. Ռասկը դերադասում էր հիմնականում լռել։ Ռ. Քեննեդին հետագայում նույնիսկ հավաստիացնում էր, թե Ռասկը տագնապով ասում էր, որ ամերիկյան զինվորականությունը ինչպիսի փաստարկներ էլ առաջադրելիս լինի, «վերջին հաշվով պաշտպանում է շատ մեծ երկրի հանկարծակի հարձակումը շատ փոքր երկրի վրա»[46]։



Պրեզիդենտի խորհրդականների շրջանում, այսպիսով, երկու խումբ գոյացավ, որոնցից յուրաքանչյուրը պաշտպանում էր իր տեսակետը նախանշված ճգնաժամում օգտագործվելիք ռազմական ուժերի տեսակների, ծավալի և նրանց գործողությունների հաջորդականության վերաբերյալ։ Ոմանք առաջարկում էին ծովային բլոկադայի ենթարկել, մյուսները՝ ուղղակի ագրեսիա սկսել ռազմաօդային, ռազմածովային և ցամաքային զորքերի միջոցով[47]։ «Անգղների» խումբը դարձյալ զանգվածային օդային հարձակում գործելու պահանջ ներկայացրեց, երբ պրեզիդենտն «ընտրական կամպանիայից» հետո Սպիտակ տուն վերադարձավ։ Ուղղակի ագրեսիա սկսել էին պնդում շտաբների պետերի կոմիտեի անդամները։ Ռազմաօդային ուժերի շտաբի պետ գեներալ Կ. Լեմեյը «վճռականորեն վիճաբանում էր պրեզիդենտի հետ, ասելով, որ ռազմական հարձակումն անհրաժեշտ է»[48]։ Օդային հարձակման կողմ արտահայտվեց նաև նախկին պետական քարտուղար Դ. Աչեսոնը[49]։ Շտաբների պետերի կոմիտեի անդամներից մեկը կոչ էր անում միջուկային զենք կիրառել[50]։ Պրեզիդենտ Քեննեդին, վերջ ի վերջո, համաձայնություն տվեց ծովային բլոկադայի ենթարկելու առաջարկին։ Միայն փաստաթղթերի տեքստերում, որոնք ինչ-որ չափով կարող էին «արդարացնել» նախապատրաստվող ագրեսիվ ակտը, «բլոկադա» բառը նա փոխարինեց, իր կարծիքով, ավելի հանգստացուցիչ «կարանտին» բառով[51]։ ԱՄՆ-ի կառավարությունը, այսպիսով, բռնեց միջազգային իրավունքի նորմաները խախտելու ուղին։

Հոկտեմբերի 22-ին պրեզիդենտ Քեննեդին տեղեկացրեց նախկին պրեզիդենտներ Հուվերին, Տրումենին և Էյզենհաուերին պլանավորվող գործողությունների մասին։ Նա արագորեն նաև հանդիպում կազմակերպեց ԱՄՆ-ի կոնգրեսի ամենաազդեցիկ 20 անդամների հետ[52]։ Հանդիպման ժամանակ սենատոր Ռասելը պահանջեց ուղղակի ներխուժել Կուբա[53]։ Այդ նույն երեկոյան, պրեզիդենտ Քեննեդու հեռուստատեսությամբ ելույթ ունենալուց մեկ ժամ առաջ, պետական քարտուղար Դ. Ռասկն իր մոտ հրավիրեց Ա. Ֆ. Դոբրինինին։ Ռասկն առանց այլևայլության հայտնեց սովետական դեսպանին, որ ցուցում ունի չպատասխանել երկու փաստաթղթերի տեքստե-

րի վերաբերյալ որևէ հարցի և չմեկնաբանել դրանք։ Այնուհետև Թասկը մեր զրույցին հանձնեց պրեզիդենտ Քենեդիի հոկտեմբերի 22-ի անձնական ուղերձը սովետական կառավարության ղեկավարին, ինչպես նաև պրեզիդենտի դիմումի տեքստը ամերիկյան ժողովրդին[54]։ Այդ փաստաթղթերին ծանոթանալուց հետո ԱՄՆ-ի դեսպանական քարտուղարին հայտարարվեց, որ ԱՄՆ-ի կառավարությունը դիտավորյալ վտանգավոր ճգնաժամ է ստեղծում[55]։ Ամերիկյան դիվանագետի ուշադրությունը հրավիրվեց այն հանգամանքի վրա, որ ԱՄՆ-ը, ըստ էության, հրաժարվեց բանակցություններ վարել սովետա-ամերիկյան երկկողմանի հանդիպումների ժամանակ պրեզիդենտի ելույթում բարձրացված բոլոր հարցերի վերաբերյալ։ Թասկը ոչինչ չպատասխանեց այդ դիտողությանը։ Եվ հարցն ամենևին հրահանգները չէին, այլ այն, որ նա պարզապես ոչինչ չուներ ասելու։ Չէ՞ որ ընդամենը մի քանի օր առաջ ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստրի հետ զրույցի ժամանակ նա Սովետական Միության սահմանների մոտ տեղադրված ամերիկյան ռազմական հրթիռային բազաների թեմայով չծավալվեց ու Կուբայում «սովետական բազաների» մասին ոչ մի հարց չտվեց։ Վաշինգտոնյան ժամանակով ժամը 19-ին պրեզիդենտ Քենեդին հեռուստատեսությամբ հրապարակեց հայտարարություն, ձգտելով արդարացնել իր կառավարության գործողությունները[56]։ Սկսվեց կարիբյան ճգնաժամը։

## ՍՍՀՄ-Ի ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՋԱՆՔԵՐԸ ՃԳՆԱԺԱՄԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1962 թվականի հոկտեմբերի 22-ին ԱՄՆ-ի կառավարությունը Կարիբյան ծովի շրջանում ռազմածովային նավատորմի (183 միավոր), ռազմաօդային ուժերի, պարաշյուտիստների և ծովային հետևակի խոշոր միավորումներ կենտրոնացրեց։ Մարտական պատրաստության բերվեցին ամերիկյան զորքերն Արևմտյան Եվրոպայում։ Օդ բարձրացան (ընդհանուր թվի 50%) ստրատեգիական ավիացիայի ռմբակոծիչները[57]։ «Պոլարիս» հրթիռներով միջուկային սուզանավերն օպերատիվ դիրքեր գրավեցին, սպառնալով սոցիալիստական եր-



կրներին[58]։ Աշխարհը կանգնած էր ջերմամիջուկային պատերազմի շեմին։ Մի քանի տարի անց Ռ. Քենեդին խոստովանեց, որ հոկտեմբերի 22-ի գիշերը նա լի էր անհանգստությամբ և սարսափով[59]։

Կուբայի և ՍՍՀՄ-ի նկատմամբ միջազգային իրավունքներին հակառակ իր գործողությունները գոնե մի կերպ «լեգալացնելու» նպատակով ԱՄՆ-ի պետդեպարտամենտը հոկտեմբերի 23-ին Վաշինգտոնում շտապ հրավիրեց Ամերիկյան պետությունների կազմակերպության խորհուրդ, որտեղ ընդունվեց ԱՄՆ-ի կառավարության գործողություններն արդարացնող բանաձև, որը լատինաամերիկյան երկրներին կոչ էր անում «Կուբայի դեմ ռազմական ուժ գործադրել»[60]։ Հոկտեմբերի 23-ին պրեզիդենտ Քենեդին ստորագրեց Կուբայի դեմ 1962 թվականի հոկտեմբերի 24-ից «կարանտին» սահմանող «3504 պրոկլամացիան»։ Պրոկլամացիան «հարձակողական զենքի» մեջ էր ընդգրկում ոչ միայն «երկիր-երկիր» տիպի հրթիռները, այլև ռմբակոծիչներ։ Պաշտպանության մինիստրությունը ցուցում տրվեց կենսագործել պրեզիդենտի դիրեկտիվը[61]։

Հոկտեմբերի 23-ին սովետական դեսպանություն այցելեց պրեզիդենտի եղբայր Ռ. Քենեդին։ Նա հայտարարեց, որ իր այցելությունը թելադրված է անձնական նկատառումներով և որ պրեզիդենտից որևէ հանձնարարություն չունի[62]։ Այնուհետև նա սկսեց շարադրել ամերիկյան վերսիան այն մասին, որ անձամբ պրեզիդենտը գտնում է, որ իրեն մոլորության մեջ են գցել։ Ա. Ֆ. Դոբրինինի այն հարցին, թե ինչո՞ւ ամերիկյան կառավարությունը, նախքան ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ռազմական ընդհարումով հղի ճանապարհ բռնելը, չդիմեց սովետական կառավարությանը իրադրությունը պարզաբանելու համար, Ռ. Քենեդին համոզիչ պատասխան չտվեց։ Սովետական կողմը հույս հայտնեց, որ ԱՄՆ-ի կառավարությունն այնուամենայնիվ ողջամտորեն կգնահատի իրադրությունը և չի դիմի աղետի հանգեցնող գործողությունների։

Ռ. Քենեդին, ամերիկյան կաբինետի առավել ազդեցիկ անդամներից մեկը լինելով, սովետական դեսպանություն այցելության ժամանակ զրույցի ընթացքում հնարավոր չգտավ

քննարկելու ճգնաժամի կարգավորման կոնկրետ ուղիները։ Սակայն զգացվում էր, որ նա բացահայտորեն անհանգստացած է ստեղծված վիճակից։ Հրաժեշտ տալով, Ռ. Քեննեդին մեկ անգամ ևս հաստատեց Կուբայի ծովային բլոկադայի իրականացման պլանը։ Սովետական դեսպանն ըստ այդմ հայտարարեց, որ բաց ծովում ԱՄՆ-ի ձեռնարկած միջոցառումները խախտում են նավարկության ազատության միջազգային նորմանները և անօրինական են[63]։

1962 թվականի հոկտեմբերի 23-ին սովետական կառավարությունը արեց հայտարարություն, որտեղ ԱՄՆ-ի կողմից Կուբայի ծովային բլոկադան գնահատվում էր իբրև սանձարձակ ագրեսիվ գործողություն։ Մյուս երկրների կառավարությունների ուշադրությունը հրավիրվում էր այն հանգամանքի վրա, որ ԱՄՆ-ի իմպերիալիստները պատրաստ են «աշխարհը ատոմական աղետի անդունդը նետել»։ «Բոլոր երկրների ժողովուրդները,— ասվում էր հայտարարության մեջ,— պետք է լավ գիտակցեն, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներն, այդպիսի ավանտյուրայի դիմելով, քայլ են կատարում դեպի համաշխարհային ջերմամիջուկային պատերազմի սանձազերծումը»։ Հայտարարության մեջ ընդգծվում էր նաև, որ «եթե ագրեսորները պատերազմ սանձազերծեն, ապա Սովետական Միությունը ամենահզոր պատասխան հարված կհասցնի»։ ԱՄՆ-ի կառավարությանն առաջարկվում էր ընդունել բազմիցս ներկայացվող սովետական առաջարկություններն աշխարհի տարբեր երկրների տերիտորիաներում գտնվող ատոմական բազաները վերացնելու մասին։ Սովետական կառավարությունն առաջարկեց ՄԱԿ-ին շտապ Անվտանգության խորհուրդ հրավիրել «ՄԱԿ-ի կանոնադրությունը խախտելու և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից խաղաղությանը սպառնացող վտանգի մասին» հարցը քննարկելու համար[64]։

Կարիբյան ճգնաժամի ընթացքում դիվանագիտական ուղիով անընդհատ նամակագրություն էր իրականացվում սովետական կառավարության ղեկավարի և ԱՄՆ-ի պրեզիդենտի միջև։ Սովետական կողմն ուղիներ էր փնտրում ԱՄՆ-ի մեղքով առաջացած՝ աշխարհի խաղաղությանը սպառնացող ճգնաժամը խաղաղ կարգավորելու համար։ 1962 թվականի հոկտեմբերի 23-ին պրեզիդենտի հասցեով ուղարկած նամակում ՍՍՀՄ-ի Մինիստրների խորհրդի նախագահն ընդգծեց, որ Կուբայում գտնվող զենքը, ինչ տեսակի էլ լինի, նախատեսված է միայն պաշտպանական նպատակների համար։ ԱՄՆ-ի պրեզիդենտի հոկտեմբերի 22-ի հայտարարությունը բնութագրվում էր իբրև Կուբայի, ՍՍՀՄ-ի և ուրիշ շատ պետությունների ներքին գործերին չթողարկված միջամտություն։ Հույս էր հայտնվում, որ ամերիկյան կառավարությունը խոհեմություն կցուցաբերի և կհրաժարվի չմտածված գործողություններից, որոնք ամբողջ աշխարհում խաղաղության գործի համար կունենան աղետալի հետևանքներ[65]։

Հոկտեմբերի 24-ին ԱՄՆ-ի դեսպանությունը հանձնեց ԱՄՆ-ի պրեզիդենտի պատասխանը սովետական կառավարության ղեկավարի նամակին։ Նրանում կրկին փորձ էր արվում Կարիբյան ճգնաժամի առաջացման մեղքը գցել Սովետական Միության վրա։ Դրա հետ մեկտեղ ԱՄՆ-ի պրեզիդենտն անհանգստություն էր արտահայտում իրադարձությունների հետագա հնարավոր զարգացման կապակցությամբ։ Նա հույս էր հայտնում, որ ԱՄՆ-ը և ՍՍՀՄ-ը ռեալիստորեն կմոտենան և չեն ձեռնարկի իրադարձությունները հսկողության տակ պահելու հնարավորությունը դժվարացնող քայլեր։ Իր նամակում Քեննեդին հայտնում էր նաև, որ ԱՄՆ-ի սահմանած կարանտինն ուժի մեջ է մտնելու հոկտեմբերի 24-ից[66]։

ՍՍՀՄ-ի Մինիստրների խորհրդի նախագահի հոկտեմբերի 24-ի պատասխան նամակում նշվում էր, որ ԱՄՆ-ի կառավարության գործողությունները ուլտիմատիվ բնույթ են կրում և նպատակ ունեն վախեցնել Սովետական Միությանը[67]։ Ամերիկյան պրեզիդենտին կոչ էր արվում սառնասրտորեն, առանց կրքերին ազատություն տալու, գնահատելու ստեղծված իրավիճակը[68]։ Մեկ օր չանցած Քեննեդին պատասխան ուղարկեց սովետական կառավարության ղեկավարի այդ նամակին, որում փորձում էր 1962 թվականի ամռան և աշնան իրադարձությունների հաջորդականությունը մեկնաբանել այնպես, որպեսզի արդարացնի իր գործողությունները Կուբայի նկատմամբ։ Կուբայի պաշտպանունակության ամրապնդման համար

ձեռնարկված միջոցառումները, որում էր Քեննեդին, պատասխան գործողություններ էին պահանջում, որոնց մասին նա հայտարարել էր։ Միաժամանակ ցավով էր նշում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների վատացումը։ Սակայն նա շարունակում էր կրկնել մտացածին վերսիան, որ միայն սովետական կառավարության միակողմանի գործողությունները կարող են վերականգնել նախկին վիճակը[69]։

Կարիբյան ճգնաժամի շրջանում ամերիկյան դիվանագիտությունը ՄԱԿ-ում մեծ ակտիվություն ծավալեց, որի հիմնական նպատակն էր արդարացնել ԱՄՆ-ի գործողությունները Կուբայի և ՍՍՀՄ-ի նկատմամբ։ Հոկտեմբերի 23-ին ՍՍՀՄ-ի ներկայացուցիչ Վ. Ա. Զորինի նախագահությամբ տեղի ունեցավ Անվտանգության խորհրդի նիստը։ Նիստի օրակարգում մտցվել էին ՄԱԿ-ի կանոնադրության խախտման և ԱՄՆ-ի գործողությունների հետևանքով խաղաղությանը սպառնացող վտանգի մասին հարցը, Կուբայի նկատմամբ ԱՄՆ-ի ագրեսիվ գործողությունների մասին Կուբայի կառավարության հարցումը, ինչպես նաև ԱՄՆ-ի նամակը։ Անվտանգության խորհրդի նիստերի դահլիճը լեփ-լեցուն էր դիվանագետներով և մամուլով։ Նիստում առաջինը ելույթ ունեցավ ամերիկյան պատգամավոր Է. Ստիվենսոնը, որը նախօրոք, դեռևս հոկտեմբերի 22-ին, ամերիկյան ռադիոյով և հեռուստատեսությամբ Քեննեդիի ելույթի ժամանակ ցուցակագրվել էր ելույթ ունենալու համար։ Նրա ամբողջ ելույթը հանգում էր Կուբայի ծովային բլոկադայի արդարացմանը։ Այնուհետև Ստիվենսոնը Անվտանգության խորհրդին ներկայացրեց բանաձևի ամերիկյան նախագիծը, որում պահանջներ էին առաջադրվում Կուբայից սովետական հրթիռները դուրս բերելու և այնտեղ ՄԱԿ-ի դիտորդներ ուղարկելու մասին՝ ընդունված բանաձևի կատարումն ապահովելու համար։ Այդ պահանջները կատարելու դեպքում էր միայն ԱՄՆ-ը համաձայնվում կարանտինը չանցկացնել[70]։ Ամերիկյան նախագծում նաև կետ կար այն մասին, որպեսզի ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը շտապ կերպով քննարկեն «Արևմտյան կիսագնդում և ամբողջ աշխարհում խաղաղության համար անվտանգության գոյություն ունեցող սպառնալիքի» վերացման ուղղությամբ



միջոցառումների հարցը և այդ մասին զեկուցագիր ներկայացնեն Անվտանգության խորհրդին։ Եվ այդպես, բանաձևի հիշյալ նախագծում, թեկուզև սքողված, դեմագոգիկ ձևով, նշմարվում էր ԱՄՆ-ի նախկին, ծայրահեղ մարտական դիրքերից նահանջը կարիբյան ճգնաժամի լուծման ուղիների վերաբերյալ հարցում։ Կուբայի ներկայացուցիչն իր ելույթում նշեց, որ ամբողջ աշխարհի խաղաղությանը սպառնացող ԱՄՆ-ի ագրեսիվ գործողությունները Կուբայի նկատմամբ հանդիսանում են Կուբայի հանդեպ թշնամական քաղաքականության շարունակությունն ու խորացումը, քաղաքականություն, որ ԱՄՆ-ի կառավարող շրջաններն անց են կացնում Կուբայում հեղափոխության հաղթանակից հետո։ Այդ գործողություններն իրենցից ներկայացնում են Կուբայի ներքին գործերին ուղղակի միջամտություն, ՄԱԿ-ի կանոնադրության և միջազգային իրավունքի ընդունված նորմաների կոպիտ խախտում։

ՍՍՀՄ-ի ներկայացուցիչն իր ելույթում Կուբայի նկատմամբ ԱՄՆ-ի նման գործողությունների բազմաթիվ փաստեր բերելով և ընդգծելով, որ ԱՄՆ-ի կառավարությունն իր համար ոչ պարզ ՍՍՀՄ գործողությունները բանակցությունների և անձնական կոնտակտների միջոցով, մասնավորապես վերջերս տեղի ունեցած ԱՄՆ-ի պրեզիդենտի և ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստրի հանդիպման ժամանակ պարզաբանելու փոխարեն Կարիբյան ծովում միջազգային ընդունված նորմաների հակառակ միակողմանի ագրեսիվ գործողություններ ձեռնարկեց, որոնք աշխարհը կանգնեցրին ջերմամիջուկային պատերազմի վտանգի առաջ։ ՍՍՀՄ-ն այդ ագրեսիվ գործողությունները դադարեցնելու վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ ներկայացրեց և կոչ արեց բանակցությունների մեջ մտնել մթնոլորտը նորմալացնելու և պատերազմի սպառնալիքը կանխելու համար։

Հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ Անվտանգության խորհրդի հերթական նիստը, որտեղ մեծ բանավեճ ծավալվեց Կարիբյան ծովի շրջանում իրադրության շուրջը։ Նրան մասնակցեցին Վենեսուելայի, Անգլիայի, Ռումինիայի, Իռլանդիայի, Ֆրանսիայի, Չիլիի, ԱՄՀ-ի, Գանայի պատգամավորները, ինչ-

պես նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ու Տանը։ Ռումինիայի ներկայացուցիչը լիովին պաշտպանեց ՍՍՀՄ-ի և Կուբայի դիրքը, որոնք դատապարտում էին ԱՄՆ-ի կողմից խաղաղությանը սպառնացող վտանգը[71]։ ԱՄՀ-ի և Գանայի ներկայացուցիչները բանավեճի ընթացքում պաշտպանեցին իր քաղաքական ռեժիմն ինքնուրույն ընտրելու և անկախության ու տերիտորիալ ամբողջականության պաշտպանության նպատակով պաշտպանական անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու Կուբայի իրավունքը։ Նրանք ընդգծեցին, որ Կուբան բլոկադայի ենթարկելու ուղղությամբ ԱՄՆ-ի գործողությունները ծովերի ազատության սկզբունքի խախտում են և սպառնում են խաղաղությանն ու համընդհանուր անվտանգությանը։ Գանան և ԱՄՀ-ն ներկայացրեցին բանաձևի իրենց նախագիծը, որով ԱՄՆ-ին, Կուբային և ՍՍՀՄ-ին կոչ էր արվում կոնֆլիկտը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով[72]։ Բոլորովին այլ էր ՆԱՏՕ-ի անդամ-պետությունների դիրքը, որը պայմանավորված էր ռազմա-բլոկային շահերով և նրանց վրա ԱՄՆ-ի գործադրած ճնշմամբ։ Անգլիայի ներկայացուցիչ Ա. Դինը պաշտպանեց Կուբայի և ՍՍՀՄ-ի նկատմամբ ագրեսիվ գործողությունները։ Գիտակցելով, հավանաբար, այն մեծ վտանգը, որ Անգլիայի համար ներկայացնում էր իր տերիտորիայում ՍՍՀՄ-ի դեմ ուղղված ամերիկյան հրթիռների առկայությունը, Ա. Դինը միաժամանակ արտահայտվեց հօգուտ շահագրգռված կողմերի միջև բանակցությունների։ Բանակցությունների կողմ արտահայտվեց նաև Ֆրանսիայի ներկայացուցիչ Ռ. Սեյդուն։ Քանի որ ամերիկյան պետությունների կազմակերպությունը ԱՄՆ-ի ճնշման տակ հակակուբայական դիրք գրավեց, Վենեսուելայի ու Չիլիի ներկայացուցիչներն Անվտանգության խորհրդում պաշտպանեցին Սթիվենսոնի առաջարկը։ Իռլանդիայի ներկայացուցիչ Էյկենը առաջարկեց ստեղծված ճգնաժամը կարգավորել խաղաղ բանակցությունների միջոցով։ Անվտանգության խորհրդի նիստին մասնակցող Ու Տանն ընթերցեց Սովետական և ԱՄՆ-ի կառավարություններին հղած իր ուղերձի տեքստը, որով ցանկություն էր հայտնվում, որպեսզի կոնֆլիկտի մեջ ներքաշված բոլոր կողմերը հանդիպեն և



քննարկեն իրավիճակը[73]։ Նա հայտնեց նաև, որ պատրաստ է ծառայություններ մատուցել և գտնվում է երկու կողմերի տրամադրության տակ։ Նիստի ավարտից հետո աֆրիկա-ասիական 45 երկրներ պաշտպանեցին Ու Տանի առաջարկը։ Բայց նրա դիրքն առաջացրեց Սթիվենսոնի դժգոհությունը, որը գլխավոր քարտուղարին հայտնեց, թե Քենեդին դեռևս դիմումին պատասխանելու որոշում չի ընդունել[74]։

Սովետական կառավարությունն ի պատասխան Ու Տանի ձեռնպահ մնալ իրավիճակը սրող և դրանով իսկ պատերազմի վտանգն ավելացնող բոլոր գործողություններից կոչին, հայտնեց, որ ընդունում է այդ առաջարկը[75]։ Քանի որ միջազգային իրադրությունը, կապված Ու Տանի առաջին ուղերձին ԱՄՆ-ի կառավարության ըստ էության պատասխանի ձգձգման հետ, շարունակում էր սրվել, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնակատարը հոկտեմբերի 25-ին ՍՍՀՄ-ին և ԱՄՆ-ին նոր ուղերձներ հղեց, որոնցում մեկ անգամ ևս բարձրացնում էր ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան խաղաղ ճանապարհով պրոբլեմների կարգավորմանն ուղղված համաձայնագրի համար հիմունքներ մշակելու մասին հարցը[76]։ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի հասցեով ուղարկած հեռագրում Ու Տանը խնդրում էր [illegible] Կուբայի ճանապարհին գտնվող սովետական նավերին ցուցում տալ հեռու մնալ պատնեշման շրջանից» Համաձայնագրի բազմատարբերակների քննարկման ժամանակ Միացյալ Նահանգների նավերի հետ հնարավոր ընդհարումից խուսափելու համար[77]։ Ու Տանը դիմեց նաև ԱՄՆ-ի պրեզիդենտին՝ համապատասխան կազմակերպություններին ցուցում տալ սովետական նավերի հետ անմիջական ընդհարումից խուսափելու մասին։

ԱՄՆ-ին հղած Ու Տանի երկրորդ ուղերձն անպատասխան չմնաց։ Ամերիկյան կողմը համաձայնվեց ամերիկյան և սովետական նավերի ընդհարումը բացառող միջոցներ ձեռնարկել։ Քենեդին արեց այդ հակառակ «սանդղներին» կամքի, որոնք նորից պահանջում էին ամերիկյան ռազմանավերի գործողությունները տարածել կարանտինի գոտուց այն կողմ, բաց օվկիանոսում։ Այդ պահանջները երկու կողմերի նավերի միջև ընդհարում առաջացնելու նպատակ էին հետապնդ-

դում։ Ինչպես հեռագրում գրում էր Թ. Սորենսենը, այդ հարցի շուրջը սուր վեճ տեղի ունեցավ ռազմածովային ուժերի ներկայացուցիչների հետ»[78]։ Ու Տանի նամակին Ջ. Քենեդիի պատասխանի տոնն արդեն զգալիորեն տարբերվում էր հեռուստատեսությամբ հաղորդվող ելույթից, երբ պրեզիդենտը Կուբային և ՍՍՀՄ-ին սպառնում էր կարանտինով։ «Ստացա Ձեր այսօրվա ուղերձը,— գրում էր նա Ու Տանին,— Ես առաջվա պես հասկանում և ողջունում եմ բավարար լուծման ուղղությամբ Ձեր ջանքերը։ Ես հասկանում և բաժանում եմ Ձեր մտահոգությունը այսուհետև, նախքան քննարկման անցնելը, ավելի մեծ զգուշություն հանդես բերելու անհրաժեշտության վերաբերյալ»[79]։ Քենեդին խոստանում էր Ու Տանին, որ Կարիբյան ծովում գտնվող ամերիկյան ռազմանավերը հնարավոր բոլոր միջոցները կձեռնարկեն, որպեսզի խուսափեն սովետական նավերի հետ անմիջական ընդհարումից։ Ու Տանին ուղարկած նամակում ԱՄՆ-ի պրեզիդենտը կրկին պնդում էր, որ Կուբայում գտնվող սովետական «հարձակողական զենքը» իբր սպառնում է խաղաղությանը[80]։ Ամերիկյան պրեզիդենտը դարձյալ խեղաթյուրում էր ընդհարման պատճառը, որը ԱՄՆ-ի իմպերիալիստական ուժերի ագրեսիվ և ավանտյուրիստական քաղաքականության արդյունք էր։

Հոկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Անվտանգության խորհրդի նոր նիստ, որի ժամանակ Սթիվենսոնը ընթերցեց Ջ. Քենեդիի պատասխանը Ու Տանի երկրորդ դիմումին։ Սովետական ներկայացուցիչն իր հերթին հրապարակեց սովետական կառավարության պատասխանը[81]։ Նիստում ամերիկյան ներկայացուցիչը կրկին փորձում էր արդարացնել ԱՄՆ-ի գործողությունները Կարիբյան ծովի շրջանում, որոնք ՄԱԿ-ի կանոնադրության խախտում էին։ Սթիվենսոնը ձգտում էր ԱՄՆ-ի՝ ՄԱԿ-ին շրջանցելով ձեռնարկած գործողությունները ներկայացնել որպես ամերիկյան պետությունների կազմակերպության համերաշխ գործողություններ։ Սովետական ներկայացուցիչ Վ. Ա. Զորինը բացահայտեց այդ հայտարարությունների սնանկությունը, նշելով, որ ԱՄՆ-ի սկսած ագրեսիվ գործողությունները դեմ առան ժողովուրդների և ՄԱԿ-ի անդամ պետությունների մեծ մասի դիմադրությա-



նը[82]։ ԱՄՀ-ի և Գանայի ներկայացուցիչներն առաջարկեցին դադարեցնել Անվտանգության խորհրդի նիստը, որպեսզի շահագրգռված կողմերին հնարավորություն ընձեռվի Ու Տանի աջակցությամբ անհրաժեշտ բանակցություններ սկսել։ Այս առաջարկը Անվտանգության խորհրդի կողմից ընդունվում է։

ԱՄՆ-ի կառավարող շրջանների տակտիկան կարիբյան ճգնաժամի շրջանում վկայում է, որ նրանք 1962 թվականի հոկտեմբերի իրենց գործողություններում նշանակալի չափով ձգտում էին օգտագործել քաղաքական շանտաժը։ Ամերիկյան դիվանագիտության հակումը դեպի ետպատերազմյան ստրատեգիայում և տակտիկայում քաղաքական շանտաժի բավականին լայն օգտագործումը կապված էր այն հանգամանքի հետ, որ ամերիկյան իմպերիալիզմի կողմից իրական ռազմական ուժի կիրառման շրջանակները սոցիալիստական երկրների ու նախ և առաջ ՍՍՀՄ-ի պաշտպանական պոտենցիալի ամրապնդմամբ նեղանում էին։ Դա ամենևին չէր նշանակում, որ ԱՄՆ-ի ռազմատենչ ուժերը չէին դիմում ռազմական ուժի, սպառազինման «դասական» տեսակների կիրառմանը։ Դրանում համոզվելու համար բավական է հիշեցնել իրադարձությունները Կորեայում, Լաոսում, Վիետնամում, Դոմինիկյան Հանրապետությունում, Կուբայում։ Սակայն, ինչ վերաբերում է Սովետական Միության հետ ուղղակի առճակատմանը, ապա ԱՄՆ-ը ձգտում էր խուսափել դրանից, չնայած պենտագոնն ու ԿՀՎ-ն հաճախ իրենց դժգոհությունն էին հայտնում այդ կուրսից։ Ամերիկյան պրեզիդենտներն այդ իրողություն էին ընդունում, բայց ուղղակի ռազմական ընդհարման, այնուհանդերձ, չէին համարձակվում։

Ետպատերազմյան շրջանում քաղաքական շանտաժի տակտիկայի ձևերն ու մեթոդները ուշադրությամբ ուսումնասիրվում էին միջազգային պրոբլեմներով զբաղվող ամերիկյան գիտահետազոտական ինստիտուտներում։ Ամերիկյան տեսաբանները գտնում էին՝ որպեսզի այդ տակտիկան գործուն լինի, նրան օգնության պետք է գան ինֆորմացիայի և դեզին-

ֆորմացիայի մասսայական միջոցները, ընդ որում այն պահին, երբ ավարտվում է «նյարդերի պատերազմում» այս կամ այն դրվագի նախապատրաստման ուղղությամբ գործողության գաղտնի փուլը։ Այդպես էր նաև կարիբյան ճգնաժամի օրերին։

Այն բանից հետո, երբ ընկավ կարիբյան ճգնաժամի գաղտնի նախապատրաստումը փարատող խորհրդապահության քողը, մասսայական ինֆորմացիայի միջոցների օգնությամբ սկսվեց հոգեբանական ուժեղ ճնշումը ամերիկյան հասարակական կարծիքի, ռազմական բլոկների գծով դաշնակիցների, զարգացող երկրների և, իհարկե, Սովետական Միության վրա՝ ԱՄՆ-ի կառավարության համար ցանկալի ուղղությամբ։ Մամուլի ներկայացուցիչների համար հրավիրված հատուկ հրահանգավորման ասուլիսում ԱՄՆ-ի պաշտպանության մինիստր Ռ. Մակնամարան հայտարարեց անգամ, որ ԱՄՆ-ը կանգ չի առնի Կուբա «հարձակողական տեսակի» զենք հասցնող սովետական նավերի խորտակման առաջ[83]։ Այդ կարգի արտահայտությունները արագորեն ներթափանցում էին մամուլ, ռադիո և հեռուստատեսություն, որոնք ակտիվորեն խորացնում էին անհանգիստ մթնոլորտը, «ուժերի մոտալուտ փորձարկումը» կանխագուշակելով։ Իհարկե, քաղաքական շանտաժի տակտիկան ինքնին չէր սպառում ստեղծված իրավիճակը։ Ռ. Քենեդին հետագայում խոստովանեց, որ «պրեզիդենտ Քենեդին իրադարձությունների դեմ նախանշեց, դրանք շարժման մեջ դրեց, բայց հսկողության տակ վերցնել այլևս անկարող էր»[84]։ Իրադարձությունները հսկողության տակ վերցնելու հարցում վճռական դեր խաղաց սովետական կառավարությունը։ Իսկ պրեզիդենտ Քենեդիի դերը նրանում էր, որ նա, վերջ ի վերջո, դիմացավ Կուբայի և Սովետական Միության դեմ պատերազմի կոչ անելու «ան-գղների» ճնշմանը։

Հոկտեմբերի 25-ին և 26-ին մթնոլորտը շարունակում էր շիկանալ։ Հոկտեմբերի 26-ին սովետական կառավարության ղեկավարը պատասխանեց ԱՄՆ-ի պրեզիդենտի հոկտեմբերի 25-ի նամակին։ Նրանում ընդգծվում էր, որ սոցիալիստական երկրների ժողովուրդները, ինչպես և առաջադեմ ամբողջ մարդ-



կությունը խաղաղություն է ձգտում, պատերազմը դիտելով որպես աղետ, այլ ոչ թե խաղաղ միջոց քաղաքական կամ մյուս նպատակներն իրագործելու համար, և առավել ևս՝ ոչ ինքնանպատակ[85]։ Ամերիկյան պրեզիդենտին մեկ անգամ ևս ասվեց, որ Կուբայում «հարձակողական զենքի» վերաբերյալ իր փաստարկները ոչ մի հիմք չունեն, իսկ Կուբայի կարանտինի մասին ԱՄՆ-ի որոշումը միանգամայն արդարացիորեն համապատասխանում է ծովահենական գործողության[86]։ Այնուհետև նամակում կոնկրետ առաջարկություններ էին արվում, որոնք հետագայում դարձան կարիբյան ճգնաժամը զգալի չափով կարգավորելու հիմքը։ «Եկեք նորմալացնենք իրավիճակը»,— առաջարկվում էր ամերիկյան պրեզիդենտին։ Եթե ԱՄՆ-ի պրեզիդենտը և կառավարությունը համաձայնեցնեին, որ չեն հարձակվի Կուբայի վրա և այդպիսի գործողություններից կզսպեն մյուսներին, ապա միջազգային իրադրությունն արագորեն դեպի բարելավում կգնար[87]։ Դրա հետ մեկտեղ հատուկ կերպով հայտարարվել էր, որ եթե ԱՄՆ-ի սահմանած կարանտինն առաջին քայլն է դեպի պատերազմի սանձազերծումը, ապա ՍՍՀՄ-ին ոչինչ չի մնում, քան ընդունել այդ մարտահրավերը[88]։

Բնորոշ է, որ Ռ. Քենեդին իր «Տասներեք օր» գրքում մի շարք մեջբերումներ է անում (ուղղակի և անուղղակի ձևով) սովետական կողմի հոկտեմբերի 26-ի ուղերձից[89]։ Նա, սակայն, չի խոսում այն մասին, որ Սովետական Միությունը ստիպված կլինի ընդունել մարտահրավերը, եթե այն փաթաթի ամերիկյան կողմը։ Հոկտեմբերի 26-ի սովետական ուղերձն այդ դրույթը վկայում էր ԱՄՆ-ի իմպերիալիստական ուժերի ագրեսիվ գործողությունների հանդեպ Սովետական Միության հաստատակամության մասին։ Միաժամանակ այդ հաստատակամությունը, ինչպես երևում է ուղերձից, զուգակցվում էր ճկունության հետ։ Պատահական չէ Ռ. Քենեդիի հետագայում արված խոստովանությունը, որ սովետական ուղերձում «ինչ-որ կոմպրոմիսի, ինչ-որ համաձայնության գալու սաղմեր էին նշմարվում», և այդ լավատեսության զգացում էր ներշնչում[90]։

Կուբայի կառավարությունը, ինչպես հայտնի է, նույնպես

ցույցեր էր ձեռնարկում կարիբյան ճգնաժամի կարգավորման խաղաղ ուղիներ գտնելու ուղղությամբ։ Նա դրականորեն արձագանքեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնակատարի գործողություններին։ Հոկտեմբերի 26-ին Ու Տանը Կուբայի հեղափոխության առաջնորդ Ֆիդել Կաստրոյին ուղերձ հղեց, որով Կուբային կոչ էր անում իր լուման ներդնել խաղաղության պահպանության գործում «ներկայիս ճգնաժամային պայմաններում»[91]։ Հոկտեմբերի 27-ին Կուբայի պրեմիեր մինիստրը պատասխան ուղարկեց, որտեղ նշվում էր, որ Կուբան պատրաստ է Միացյալ Նահանգների հետ քննարկել իր տարաձայնությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ հարցերը և ՄԱԿ-ի հետ համագործակցելով անել իրենից կախված ամեն բան ներկայիս ճգնաժամը վերացնելու համար։ Դրա հետ մեկտեղ պատասխանում միանգամայն արդարացիորեն նկատվում էր, որ Կուբան վճռականորեն դեմ է իր սուվերենությանը խանգարող գործողություններին, ինչպիսին, օրինակ, ծովային բլոկադան է՝ բռնության և պատերազմի ակցիան։ Կուբայի կառավարությունը հայտնում էր, որ պատրաստ է ընդունել Ու Տանի առաջարկած պայմանները, «եթե միայն այդ նույն ժամանակ Միացյալ Նահանգների կառավարությունը բանակցությունների ընթացքում ձեռնպահ մնա Կուբայի հանդեպ սպառնալիքներից և ագրեսիվ գործողություններից, ներառյալ իր երկրի ծովային բլոկադան»։ Դա արդարացի և հստակ դիրք էր։ Ֆ. Կաստրոն նաև պատրաստակամություն հայտնեց ուշադրությամբ քննարկել Ու Տանի բոլոր նոր առաջարկությունները և հրավիրեց նրան այցելել Կուբա՝ անմիջապես կարիբյան ճգնաժամի հետ կապված հարցերը քննարկելու համար[92]։ Ու Տանը բարձր գնահատեց Կուբայի կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը և Ֆիդել Կաստրոյին ուղարկած իր պատասխանում համաձայնություն տվեց այցելել կղզի՝ «ընդհանուր ջանքերով պրոբլեմի խաղաղ կարգավորումը շարունակելու համար»[93]։

Հոկտեմբերի 26-ի ուշ երեկոյան ԱՄՆ-ում սովետական դեսպան Ա. Ֆ. Դոբրինինին իր մոտ հրավիրեց Ռ. Քենեդին։ Զրույցը ընթանում էր երկուսի միջև։ Ռ. Քենեդին ասաց, որ ճգնաժամը շարունակում է արագ թափով սրվել։ Կուբայի



երկնքում խփված ամերիկյան հետախուզական ինքնաթիռի պատճառով պենտագոնը խիստ նեղում է իր եղբորը։ Այնուհետև նա անհանգստություն արտահայտեց, որ պատերազմ սկսելու դեպքում միլիոնավոր ամերիկացիներ կզոհվեն։ ԱՄՆ-ի կառավարությունը, հայտնեց նա, ձգտում է խուսափել դրանից։ Այնուհետև նա այն կարծիքը հայտնեց, թե համոզված է, որ Սովետական Միությունը ևս ձգտում է դրան, և որ ճգնաժամից ելք գտնելու հապաղումը կապված է մեծ վտանգի և ռիսկի հետ։ Ռ. Քենեդին նկատեց, որ ԱՄՆ-ի բարձրաստիճան գեներալների թվում քիչ չեն հիմար գլուխները, որոնք ձգտում են մի բանի՝ կռվելու։ Նա չբացառեց այնպիսի հանգամանքի հնարավորությունը, երբ իրավիճակը կարող է դուրս գալ հսկողությունից, իսկ այդ կարող է անուղղելի հետևանքներ ունենալ։ Ռ. Քենեդին ասաց նաև, որ, պրեզիդենտի կարծիքով, կարիբյան ճգնաժամի կարգավորման համար հարմար բազա կարող են հանդիսանալ հոկտեմբերի 26-ի սովետական առաջարկությունները և ամերիկյան կողմի պատասխան-նամակը։ ԱՄՆ-ի կառավարությունը պատրաստ է հավաստիացնելու, որ Կուբայի վրա ոչ մի հարձակում չի կատարվի, և Արևմտյան կիսագնդի բոլոր երկրները, դրանում նա համոզված է, պատրաստ են համանման հավաստիացումներ տալու[94]։

Սովետական դեսպանը հարց բարձրացրեց Թուրքիայում ամերիկյան հրթիռային բազաների վերացման անհրաժեշտության մասին։ Ռ. Քենեդին մերժեց այդպիսի հնարավորությունը։ Նա նկատեց, որ միայն ՆԱՏՕ-ն պետք է այդ հարցը լուծի, և ավելացրեց, որ պրեզիդենտ Քենեդին արդեն վաղուց ձգտում է դուրս բերել այդ հրթիռները Թուրքիայից և Իտալիայից։ Որոշ ժամանակ առաջ նա կարգադրել է այդ հրթիռները հանելու մասին, և մենք գտնում ենք, որ շուտով, ներկա ճգնաժամի ավարտից հետո այդ հրթիռները դուրս կբերվեն»[95]։ Այդ արդեն բավականաչափ որոշակի խոսում էր ի լրումն Կուբայի վրա հարձակում չգործելու մասին ԱՄՆ-ի կառավարության երաշխիքներ տալու հիմնական համաձայնության։

Զրույցի ընթացքում Ռ. Քենեդին համառորեն վերադառ-

նում էր հետևյալ մտքին՝ ժամանակը չի ներում, չի կարելի այն բաց թողնել։ Այդ խոսքերով էլ նա հրաժեշտ տվեց սովետական դեսպանին, տալով Սպիտակ տան իր հեռախոսի ուղիղ գիծը և ընդգծելով, որ համարյա միշտ պրեզիդենտի մոտ է։ Այսպիսով, Ջ. Քենեդին և նրա շրջապատը, հանդիպելով սովետական կառավարության հաստատուն և միևնույն ժամանակ ճկուն դիրքին, հրաժարվեցին հոկտեմբերի 22-ին ԱՄՆ-ի պրեզիդենտի ներկայացրած ուլտիմատիվ պահանջներից, և կարիբյան ճգնաժամը վերացնելու համար կոմպրոմիսային հիմք փնտրելու կուրս վերցրին։ ԱՄՆ-ում սովետական դեսպանին հանձնարարվել էր հայտնել ամերիկյան կողմին, որ Քենեդիի խնդրանքով արտահայտված նկատառումները Մոսկվայում դրական արձագանք են գտել[96]։

Սովետական կառավարության հոկտեմբերի 27-ի պաշտոնական ուղերձում առաջադրվեցին կոմպրոմիսային առաջարկություններ, որոնք և հիմք ծառայեցին ճգնաժամի կարգավորման համար։ ՍՍՀՄ-ը համաձայնեց Կուբայից դուրս բերել հրթիռները, որոնք ԱՄՆ-ը «հարձակողական էր» համարում, բայց այն պարտադիր պայմանով, որ ամերիկյան կառավարությունը համաձայնություն տա հարգել Կուբայի սահմանների անձեռնմխելիությունը և պարտավորվի նրա հանդեպ ագրեսիա չձեռնարկել[97]։ Վաշինգտոնում սովետական ուղերձը հակառակ ռեակցիա ունեցավ։ Ճգնաժամի վերացման հակառակորդները պնդում էին, որ ԱՄՆ-ը չպետք է համաձայնվի Թուրքիայից ամերիկյան հրթիռների դուրսբերման վերաբերյալ ՍՍՀՄ-ի պահանջի հետ[98]։ Այդ կարգի ագրեսիվ տրամադրությունների արտացոլում էր 1962 թվականի հոկտեմբերի 27-ի Սպիտակ տան հայտարարությունը, որով փորձում էին ապացուցել, որ Արևմտյան կիսագնդի և Եվրոպայի անվտանգության պրոբլեմների միջև փոխադարձ կապ չկա, և որ կարիբյան ճգնաժամը պետք է կարգավորվի նախքան մյուս պրոբլեմների լուծմանն անդրադառնալը[99]։ Այդպիսով, ամերիկյան կառավարությունը ցանկություն չուներ հրապարակորեն քննարկել Թուրքիայում ԱՄՆ-ի հրթիռային բազաների վերացման հարցը։ Միևնույն ժամանակ, ինչպես նշում է Ռ. Քենեդին, գաղտնաբար այդ



հարցը քննարկվել էր, և պրեզիդենտ Քենեդին սկզբունքային որոշում էր ընդունել Թուրքիայից ամերիկյան հրթիռները դուրս բերելու մասին։

Հոկտեմբերի 27-ի սովետական առաջարկությունները վերին աստիճանի արդարացի էին։ Այդ ստիպված էին ընդունել նաև կարիբյան ճգնաժամով զբաղվող մի շարք հայտնի ամերիկյան հետազոտողներ։ Այսպես, Ջ. Սթայնբերգն իր «Պետությունների հզորությունը» գրքում գրում է, որ սովետական առաջարկությունները «խելամիտ էին, նրանք արտահայտում էին չեզոքության կողմնակիցների շրջանում լայնորեն տարածված այն կարծիքը, որ երկու կողմերը պետք է կոմպրոմիսի և զոհողությունների գնան։ Այդ գիծը լիովին պաշտպանում էր ՄԱԿ-ը, իսկ արևմտյան ականավոր մեկնաբաններից ոմանք, օրինակ, Լիպմանը, ողջունում էին այն»[100]։

Պրեզիդենտի հիմնական խորհրդականներին այդ ժամանակ արդեն լավ հայտնի էին Ջ. Քենեդիի տրամադրությունները։ Արդյունքն այն եղավ, որ հոկտեմբերի 27-ի երեկոյան Վաշինգտոնում պատրաստվեց սովետական կառավարության ուղերձի պատասխանը, որով ԱՄՆ-ի պրեզիդենտը հավաստիացնում էր Կուբայի վրա հարձակվելուց հրաժարվելու և կարանտինը վերացնելու մասին[101]։ Բայց անգամ այդ ժամանակ Պենտագոնի որոշ ներկայացուցիչներ շարունակում էին պրեզիդենտին ներշնչել, որպեսզի հրաժարվի կոմպրոմիսային քայլերից։ Ռ. Քենեդին, օրինակ, այսպիսի փաստ է բերում. «Այն հիշարժան կիրակնօրյա առավոտը, երբ ռուսները հայտնեցին, որ դուրս են բերում հրթիռները, մի բարձրաստիճան ռազմական խորհրդական առաջարկեց, որպեսզի Միացյալ Նահանգները երկուշաբթի օրը բոլոր հանգամանքներում հարձակողական գործողությունների անցնեն»։ Եվ այնուհետև. «Պրեզիդենտ Քենեդին ծայրահեղորեն անհանգստացրեց սահմանափակ ռազմական բնագավառից այն կողմ զինվորականների անկարողությունը»[102]։

Հոկտեմբերի 28-ին սովետական կառավարությունը ԱՄՆ-ի կառավարությանը նոր ուղերձ ներկայացրեց, որում հաստատում էր կարիբյան ճգնաժամի հետ կապված բոլոր պարտավորությունները կատարելու պատրաստակամությունը և

միաժամանակ հայտնում էր, որ ՍՍՀՄ-ը շարունակելու է օգնել Կուբային ագրեսիայի դեմ պայքարում[103]։ Հոկտեմբերի 28-ին պրեզիդենտ Քենեդին հայտարարություն արեց, որով խոստացավ, որ կարիբյան ճգնաժամի լրիվ վերացումից հետո ԱՄՆ-ը մեծ ուշադրություն է հատկացնելու սպառազինությունների մրցավազքի կանխման և միջուկային լարվածության թուլացման պրոբլեմներին։ Ջ. Քենեդին հանդես եկավ հօգուտ միջուկային զենքը չտարածելու համաձայնագրի, ընդդեմ միջուկային փորձարկումների և առաջարկեց այդ պրոբլեմների վերաբերյալ «կոնստրուկտիվ ոգով» բանակցություններ սկսել[104]։

1962 թվականի նոյեմբերի 1-ին կարիբյան ճգնաժամի պրոբլեմի վերաբերյալ Կուբայի կառավարության հետ կարծիքներ փոխանակելու համար այնտեղ մեկնեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ա. Ի. Միկոյանը։ Կուբայի ճանապարհին նա կանգ առավ Նյու-Յորքում, որտեղ զրույց ունեցավ Ու. Տանի, ինչպես նաև Է. Ստիվենսոնի հետ՝ միջազգային լարվածության թուլացման ուղիների մասին։ Կուբայում Ա. Ի. Միկոյանի և Ֆիդել Կաստրոյի միջև կարծիքների փոխանակման ընթացքում համաձայնեցվեցին կարիբյան ճգնաժամի խաղաղ կարգավորման մասին տեսակետները։ Նոյեմբերի առաջին կեսին դիվանագիտական ճանապարհով և ՄԱԿ-ի միջոցով կարծիքներ էին փոխանակվում ԱՄՆ-ի գործողությունների հետևանքով առաջացած ճգնաժամի մնացորդների վերացման ուղղությամբ։ Բանակցությունները անցնում էին, առաջին հերթին, սովետական և ամերիկյան կողմերի միջև բանավոր հայտարարություններ փոխանակելու միջոցով, և, երկրորդ, ամերիկյան ներկայացուցիչ Դ. Մաքլոյի և ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրի առաջին տեղակալ Վ. Վ. Կուզնեցովի միջև զրույցների ընթացքում։

Կարիբյան ճգնաժամի կարգավորման վերաբերյալ տեղի ունեցող սովետա-ամերիկյան կոնտակտների ընթացքում պրեզիդենտ Քենեդին և ամերիկյան պաշտոնական մյուս անձինք բազմիցս անհետևողականություն էին հանդես բերում իրենց մեղքով առաջացած սուր իրավիճակի հետ կապված պրոբլեմների լուծման հարցում։ Նրանք, օրինակ, փորձեր



էին անում, դուրս գալով նախապես հասած պայմանավորվածության շրջանակներից, քմահաճորեն մեկնաբանել «հարձակողական զենք» տերմինը, ամեն կերպ բարդացնում պայմանավորվածության ձևի հարցը, որի համաձայն պարտավորություն էին վերցրել Կուբայի հանդեպ ագրեսիվ գործողությունների չդիմել։ Այդ ամենն արտահայտում էր ԱՄՆ-ի քաղաքական շրջաններում տեղի ունեցող սուր պայքարը, որտեղ ձեռք բերված կոմպրոմիսից դժգոհ էքստրեմիստները ճգնում էին եթե չխափանել այն, ապա, համենայն դեպս, հասնել այնպիսի վիճակի, որը ԱՄՆ-ին առավելություն տար։ Ջնայած դրան, պրեզիդենտ Քենեդին հիմնականում շարունակում էր հետևել արդեն ձեռք բերված պայմանավորվածությանը։ Նոյեմբերի 16-ին նա հանդես եկավ հօգուտ այն բանի, որպեսզի ամերիկյան հավաստիացումները պաշտոնապես ձևակերպվեն[105]։ ԱՄՆ-ը պետք է ստանձներ Կուբայի վրա չհարձակվելու և Արևմտյան կիսագնդի մյուս երկրներին դրանից ետ պահելու, ինչպես նաև Կուբայի բլոկադան դադարեցնելու պարտավորություն։ Դիվանագիտական բարդ պայքարի հետևանքով, որի ընթացքում սովետական կառավարությունը նախաձեռնող և ճկուն գիծ բռնեց, կարիբյան ճգնաժամի հիմնական պրոբլեմները լուծվեցին։ Նոյեմբերի 20-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում պրեզիդենտ Քենեդին հայտնեց կարանտինը վերացնելու մասին։ Նոյեմբերի 21-ին սովետական կառավարությունը միջմայրցամաքային և ստրատեգիական նշանակության հրթիռային զորքերին ցուցում տվեց մարտական լրիվ պատրաստությունից անցնել մարտական նորմալ պատրաստության ու զգոնության։ Ստրատեգիական ավիացիայում նույնպես վերացվեց մարտական պատրաստության վիճակը[106]։

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ին՝ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի համաձայնեցված հայտարարությունների ներկայացմանը, որոնք սանս կողմերի փոխադարձ պարտավորությունների (որոնք առաջադրվել էին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունների ղեկավարների ուղերձներում) ընդհանրացումն էին հանդիսանում, ապա ամերիկյան կողմը բոլոր միջոցներով ձգտում էր այդ գործն ավարտին հասցնել։ Նման վարքագիծն արդարացնելու համար առաջ էին քաշվում պատրվակներ, որ

իրր թե ՍՍՀՄ-ը իր մի շարք պարտավորություններից, օրինակ, ստուգման մասին հարցում, «հրաժարվել է»։ Դրա հետ մեկտեղ Ջ. Քեննեդին սկզբունքորեն համաձայնվեց շարունակել դեկլարացիաների տեքստերի վրա աշխատանքը և առաջարկեց սովետական տեքստն անմիջապես ներկայացնել ամերիկյան կողմին[107]։ Այդպիսով, հաջողվեց համաձայնության գալ այն հարցի վերաբերյալ, որ կարիբյան ճգնաժամի կարգավորումը պետք է ձևակերպվի երեք կողմերի՝ ՍՍՀՄ-ի, Կուբայի և ԱՄՆ-ի՝ Անվտանգության խորհրդի հաստատմանը ներկայացված դեկլարացիաների ձևով։

Մնում էր համաձայնեցնել դեկլարացիաների տեքստերը[108]։ Ամերիկյան ներկայացուցիչները, սակայն, սկսեցին պնդել, որ դեկլարացիաները Անվտանգության խորհուրդ չներկայացվեն, այլ պարզապես «արձանագրվեն» ՄԱԿ-ում։ Շուտով պարզ դարձավ, որ ԱՄՆ-ի կառավարությունը որոշում է ընդունել ձգձգել, և այնուհետև խափանել դեկլարացիաների մշակման ուղղությամբ ընթացող բանակցությունները։ Իրադարձությունների նման ընթացքն արդարացնելու համար համաշխարհային և ամերիկյան հասարակայնության առաջ ԱՄՆ-ի մամուլում, պրեզիդենտի թույլտվությամբ, երևան եկան Սպիտակ տանը մոտ կանգնած ժուռնալիստների մի շարք հոդվածներ, որոնք դարձյալ խեղաթյուրված ձևով էին ներկայացնում կարիբյան ճգնաժամին նախորդող իրադարձությունները։ Մասնավորապես, «Saturday Evening Post» ամսագրում հրապարակվեց «Սպիտակ տունը կուբայական ճգնաժամի օրերին» հոդվածը։ Նրանում ամեն գույնով գովաբանվում էր պրեզիդենտ Քեննեդիի գործունեությունը կարիբյան ճգնաժամի ընթացքում և սուր քննադատության ենթարկվում ՄԱԿ-ում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Է. Սթիվենսոնը, որը դեռևս ճգնաժամի սկզբնական շրջանում ՍՍՀՄ-ի հետ բանակցությունների և ոչ թե ռազմական ընդհարման վտանգ պարունակող «վճռական» կուրսի կողմնակից էր։ Փորձեր էին արվում ՍՍՀՄ-ին մեղադրելու այն բանում, որ նրա ներկայացուցիչներն «ամերիկյան պրեզիդենտին մոլորության մեջ էին գցում»։ Այդ քայլերն արվում էին Կուբա չներխուժելու վերաբերյալ ԱՄՆ-ի պարտավորությունների



մասին հարցի կապակցությամբ Նյու-Յորքում տեղի ունեցող բանակցությունները բարդացնելու ակնհայտ նպատակով։

1963 թվականի հունվարի 7-ին կարիբյան ճգնաժամի կարգավորման բանակցություններում ՍՍՀՄ-ի ներկայացուցիչ Վ. Կուզնեցովը և ՄԱԿ-ում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Է. Սթիվենսոնը համատեղ նամակով դիմեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Ու. Տանթին։ Նրանք նշեցին, որ չնայած երկու կառավարություններին «չհաջողվեց լուծել կարիբյան ճգնաժամի հետ կապված բոլոր պրոբլեմները», կողմերը գտնում են, որ «իրենց միջև ճգնաժամի կարգավորման ուղղությամբ ձեռք բերված համաձայնության նման աստիճանը» անհրաժեշտ է դարձնում տվյալ պրոբլեմը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի օրակարգում թողնելը։ Այնուհետև նամակում ասվում էր. «Ամերիկայի Միացյալ Նահանգների և Սովետական Միության կառավարությունները հույս են հայտնում, որ ճգնաժամի կապակցությամբ պատերազմի սպառնալիքի կանխման ուղղությամբ գործադրված միջոցները կհանգեցնեն նրանց միջև մյուս տարաձայնությունների լուծմանը և լարվածության ընդհանուր թուլացմանը, որը կարող էր պատերազմի սպառնալիքը տևական դարձնելու պատճառ դառնալ»[109]։

«Պլայա Խիրոնից հետո կուբայական հարցը ռազմական ճանապարհով լուծելու իմպերիալիստների համառ ձգտումը առաջ բերեց կարիբյան ճգնաժամը,— ասել է Կուբայի կոմունիստական կուսակցության ԿԿ առաջին քարտուղար Ֆ. Կաստրոն,— որի հետևանքով ԱՄՆ-ի կառավարությունը, աշխարհը միջուկային աղետի առաջ կանգնեցնելուց հետո, ստիպված եղավ կոմպրոմիսի գնալ, Կուբայի վրա հարձակում չգործելու պարտավորություն վերցնել, մի հանգամանք, որը Սովետական Միության հաստատուն դիրքի և վճռական աջակցության հետ մեկտեղ մեր երկրի անվտանգության կարևոր երաշխիքը հանդիսացավ»[110]։

Սակայն անգամ 1963 թվականի սկզբներին «կատաղիները» դեռևս փորձեր էին անում ԱՄՆ-ի կառավարությանը նոր ավանտյուրիստական գործողությունների մղել Կուբայի և ՍՍՀՄ-ի հանդեպ։ 1936 թ. փետրվարի 7-ի իր մամուլի կոնֆերանսում պրեզիդենտ Քեննեդին խոստովանեց, որ ԱՄՆ-ի

կառավարությունն ամեն ամիս հարյուրավոր հաղորդագրություններ է ստանում Կարիբյան ծովի շրջանում տիրող իրավիճակի մասին, որոնք իրականությանը չեն համապատասխանում։ Նա հաստատեց, որ անգամ կոնգրեսի մի շարք անդամներ են այդպիսի «ինֆորմացիաներ» ստանում, միաժամանակ հրաժարվելով հայտնել նրանց աղբյուրները։ «Մենք չենք կարող պատերազմի և խաղաղության հարցերի լուծումը հիմնավորել, ելնելով հարցի լուծումը չշոշափող լուրերից կամ հաղորդումներից»[111], — եզրակացրել է պրեզիդենտը։ Այնուհետև նա կառավարության գործունեության քննադատներին ուղղակիորեն հայտարարել է, որ չի համաձայն նրանց, որ Սովետական Միությունը «մեծ պատերազմ է ուզում»[112]։ Ամերիկյան պրեզիդենտի պաշտոնական հայտարարությունները Կուբա չներխուժելու մասին ցույց տվեցին, որ ԱՄՆ-ը իր արտաքին քաղաքականության մեջ ստիպված է հաշվի առնել ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունների միջև 1962 թվականի վերջին տեղի ունեցած բանակցությունների արդյունքները։

ԳԼՈՒԽ IV

# ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ (1961—1968 թթ.)

Ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ ագրեսիվ ստրատեգիական դիրքորոշման հին բնույթ ակնհայտորեն ազդում էր սովետա-ամերիկյան հարաբերությունների վրա։ Այն, մասնավորապես, կանխորոշեց Քենեդիի կառավարության ամբողջությամբ վերցրած բացասական մոտեցումը սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների զարգացմանը։ Այդ ժամանակ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև երկկողմանի հարաբերությունները ցածր մակարդակի վրա էին և նրանց զգալի վերելքի մասին խոսք լինել չէր կարող։

ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունները որոշվում են մի ամբողջ շարք գործոններով։ ՍՍՀՄ-ը կոմունիզմ կառուցող հզորագույն սոցիալիստական պետություն է, եղբայրական սոցիալիստական համագործակցության անդամ։ Սովետական կառավարությունն անփոփոխ խաղաղասիրական քաղաքականություն է վարում։ ԱՄՆ-ը կապիտալիստական աշխարհի ուժեղ տերություն է։ Ամերիկյան կառավարությունը, պաշտպանելով կապիտալիզմի շահերը, ակտիվորեն իրականացնում է էքսպանսիոնիստական արտաքին քաղաքական կուրս, ղեկավարում սոցիալիզմի երկրների դեմ ուղղված ռազմական բլոկները։ Եվ չնայած այդ քաղաքականությունն անցկացվում է հանուն

մի դասակարգի՝ առաջին հերթին մոնոպոլիստական բուրժուազիայի շահերի, այնպիսի կարևոր հարցերում, ինչպես, օրինակ, միջպետական, ու նախ և առաջ Սովետական Միության հետ հարաբերությունների ստրատեգիան և տակտիկան է, նա մշտապես դողէրոցքի մեջ է: Սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացման և ամրապնդման ձգտման ժամանակաշրջանները փոխարինվում են խռովահույզ ժամանակներով, երբ քաղաքական տարբեր ուժերի միջև պայքարի հետևանքով Ամերիկայում տեղի է ունենում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ կուտակված դրական փորձի յուրատեսակ մոռացում և համաձայնությունների ու կոմպրոմիսների որոնման խելամիտ կուրսում հնչում են «սառը պատերազմի» շրջանի կոնցեպցիաների հակասովետական չարագուշակ նոտաները:

ԱՄՆ-ի հետ հարաբերություններում Սովետական Միությունն իր քաղաքականությունը կառուցում է խաղաղ գոյակցության ամուր սկզբունքների վրա, ընդգծելով իրավահավասարությունը և միմյանց գործերին չմիջամտելը: ՍՄԿԿ-ն, սովետական կառավարությունը, հիմնվելով կապիտալիստական պետությունների կառավարող շրջանների քաղաքականության վերլուծության լենինյան ստեղծագործական սկզբունքների վրա, ռեալիստորեն են գնահատում իրավիճակը բուն ԱՄՆ-ում, նրա գործունեությունը միջազգային ասպարեզում:

Պաշտոնական Վաշինգտոնում ներքաղաքական իրավիճակի ցանկացած գնահատականը տալիս (այն, որ ամերիկացիների ճնշող մեծամասնությունը սովետական ժողովրդի հետ բարեկամության կողմնակից է, կասկած չի հարուցում) հարկավոր է ելնել, նախ և առաջ, դասակարգային վերլուծությունից:

Վ. Ի. Լենինը, ինչպես հայտնի է, ընդգծում էր, որ արտաքին քաղաքականությունում հարկավոր է հաշվի առնել ինչպես իմպերիալիստական ավանտյուրիստների մտադրությունները, այնպես և բուրժուազիայի ավելի ողջամիտ ներկայացուցիչների դիրքորոշումը: Նա սկզբունքորեն հնարավոր և անհրաժեշտ էր գտնում անգամ կոմպրոմիսները Սովետական Ռուսաստանի և կապիտալիստական երկրների, այդ



թվում և ԱՄՆ-ի միջև[1]: Նրա ցուցումով 1918 թ. մարտ-մայիս ամիսներին պատրաստվեց Միացյալ Նահանգների հետ առևտրական համաձայնագրի նախագիծը: Վ. Ի. Լենինը 1919 թվականին ընդունեց «խաղաղասիրական առաքելությամբ» Մոսկվա ժամանած ամերիկյան գործարար շրջանների ներկայացուցիչ Ու. Բուլիթին: Դրանով իսկ սովետական կառավարությունը ցուցադրեց կապիտալիստական աշխարհի հետ գործնական հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն, եթե վերջ տրվեր օտարերկրյա միջամտությանը երիտասարդ սոցիալիստական հանրապետության ներքին գործերին[2]:

Ինչպիսի՞ գործոններ են հատկապես դրսևորվում սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերություններում:

Բացասաբար է ազդում դրանց վրա, ինչպես ցույց տվեց նախապատերազմյան փորձը, ամերիկյան իմպերիալիզմի համաշխարհային տիրապետության ձգտելու տենդը (ինչպես սիրում են ասել նրա ներկայացուցիչները, «համաշխարհային լիդերության»), որի հիմքում ընկած են մոնոպոլիստական կապիտալի էքսպանսիոնիստական շահերը: Նախապատերազմյան ամբողջ ժամանակաշրջանում ԱՄՆ-ի կառավարությունն ապարդյուն կերպով ձգտում էր այդ նպատակին: Այդպիսի քաղաքականության անհեռատեսությունն ավելի պարզորոշ էին սկսում հասկանալ ԱՄՆ-ի կառավարող շրջանների ներկայացուցիչները: Ինչ-որ չափով «սառը պատերազմի» անհեռատեսությունն ու վտանգավորությունը հասկանում էր նաև պրեզիդենտ Քենեդին, բայց ավելի շատ, թերևս, անձնական առումով, քան որպես պետական գործիչ:

Դեմոկրատների այդ կառավարության օրոք ԱՄՆ-ում շարունակվում էր սպառազինությունների մրցավազքը, ճիգեր էին գործադրվում ամրապնդել ագրեսիվ բլոկները, զինել արևմտագերմանական ռևանշիստներին, միջամտել մյուս երկրների ներքին գործերին, քայքայիչ գործունեություն ծավալել սոցիալիստական պետությունների դեմ: ԱՄՆ-ը 60-ական թվականների իր գործողություններով նույնպես խթանում էր «սառը պատերազմը», որի մթնոլորտում հեշտ էր ամրապնդել սեփական դիրքերը և իրականացնել էքսպանսիոնիստական պլանները: Խաղաղության առավել մեծ

սպառնալիք էր ներկայացնում, ինչպես, ազգային-ազատագրական շարժման առաջավոր ջոկատների դեմ ռազմական ուժի կիրառումը։ ԱՄՆ-ի ագրեսիվ քաղաքականության ամենաանձարձակ արտահայտությունն էր Վիետնամի ազատասեր ժողովրդի դեմ պատերազմը։ Ամերիկյան զինվորականության հանցագործությունները սաստիկ բարդացրին սովետա-ամերիկյան հարաբերությունները և մարդկությանը մոտեցրին ծայրահեղ վտանգավոր եզրին։

Այսպիսով, ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի հարաբերությունների վրա առաջին հերթին բացասական ազդեցություն են ունենում այնպիսի գործոններ, ինչպես ամերիկյան արտաքին քաղաքականության ագրեսիվությունն ու էքսպանսիոնիստական բնույթը, դրանցում արմատացած հակակոմունիզմը և հակասովետիզմը, քայքայիչ, չնայած և խնամքով սքողված, գործունեությունը սոցիալիստական երկրների դեմ, սպառազինությունների մրցավազքը և ռազմական բլոկների վրա հենվելը, հալածված ժողովուրդների ազատագրական պայքարն ի չիք դարձնելու ձգտումը։

Սակայն միջազգային հարաբերություններում բացի վերը թվարկած գործոններից, որ բխում են ամերիկյան կապիտալիզմի էությունից, անհամեմատ ավելի հզոր գործոններ են ազդում։ Անշեղորեն ավելանում է ՍՍՀՄ-ի և սոցիալիզմի մյուս երկրների տնտեսական հզորությունը, նրանց միասնությունն ու պաշտպանական հզորությունը։ Սոցիալիստական երկրների բանակները զինված են նորագույն մարտական տեխնիկայով։ Ուստի ԱՄՆ-ի ագրեսիվ շրջանները ՍՍՀՄ-ի դեմ պատերազմի դեպքում հաջողության հասնելու նվազագույն հույս անգամ չունեն[3]։

ՍՄԿԿ-ի և սովետական կառավարության կողմից իրականացվող արտաքին քաղաքականությունը միջազգային ասպարեզում ավելի մեծ հեղինակություն է վայելում, քանի որ խաղաղության և հեղափոխական ու առաջավոր ուժերի հետ համագործակցության քաղաքականություն է։

Դրա հետ մեկտեղ աճում է իմպերիալիզմի ագրեսիվ ուժերի մեկուսացումը, խարխլվում են նրա ստեղծած բլոկները։ Արևմտյան որոշ կառավարություններ ավելի պարզորոշորեն են արտահայտում ԱՄՆ-ից կախվածությունը թուլացնելու և ազգային անկախ քաղաքականություն վարելու ձգտումը։ Կապիտալիզմի վալյուտա-ֆինանսական սիստեմը մշտապես լարվածության մեջ է գտնվում։ Տենդագին է ներքին քաղաքական մթնոլորտը նույն ԱՄՆ-ում։ Անտարակույս, ԱՄՆ-ի կառավարությունները ձգտում են դիմագրել այդ բոլոր տենդենցներին։ Միջազգային ասպարեզում կապիտալիզմի ուժերի համախմբման ուղղությամբ էին գործում նաև Քենեդու և Ջոնսոնի կառավարությունները։

Հենց վերը թվարկված դրական ու բացասական գործոնների ներգործությամբ է աշխարհում ստեղծվում ներկայիս, հաճախ չափազանց բարդ իրադրությունը, զարգանում սովետա-ամերիկյան հարաբերությունները։

Չի կարելի չտեսնել, որ ԱՄՆ-ի վարած արտաքին քաղաքականության մեջ երբեմն ռեալիստական տենդենցներ են նշմարվում, խելամիտ քայլեր են ձեռնարկվում միջազգային լարվածությունը թուլացնելու ուղղությամբ։ Պարզ է նաև մեկ ուրիշ հանգամանք։ Հաճախ Սպիտակ տունը վերադառնում է Սովետական Միության հետ հարաբերությունների զարգացման հեռանկարների սառը, եթե չասենք ավելին, քաղաքականության հին ակունքը։ Այդպիսի տատանումները որոշ չափով բացատրվում են նրանով, որ ԱՄՆ-ի կառավարական շրջաններում բացակայում է միասնությունը այն հարցի կապակցությամբ, թե որն է նրանց համար ամենաարդյունավետ ու խելամիտը միջազգային ասպարեզում։ Ողջամիտ քաղաքականության կողմնակիցները հաշվի են առնում սոցիալիզմի համաշխարհային սիստեմի տնտեսական, քաղաքական և գաղափարական հզորությունն ու ջերմամիջուկային զենքի քայքայիչ ուժը։ Սակայն բավական հաճախ այդպիսիք փոքրամասնություն են կազմում։ Դրան հակառակ, պենտագոնում, ԿՀՎ-ում և մասամբ պետական դեպարտամենտում վստահ հենարան ունեցող Ամերիկայի կառավարող էլիտայի ռազմատենչ շրջանները ամեն կերպ ընդլայնում են իրենց ներգործությունն ամերիկյան քաղաքականության և դիվանագիտության վրա։ Նրանք հակված են թերագնահատել սոցիալիզմի ուժերի պոտենցիալ հնարավորությունները, ղեկավարվելով, որպես կանոն, կոնյունկտուրային նեղ գերատեսչական շահերով, զրկված են անկաշկանդ և գլխավորը խոր-

մտածելու ունակությունից։ Նրանք սովորաբար մի նպատակ են հետապնդում՝ պառակտել սոցիալիզմի երկրները, առաջին հերթին Սովետական Միության հետ համագործակցության աննպատակահարմարությունը, կամ, եթե որևէ համաձայնության անհրաժեշտությունը ԱՄՆ-ի ազգային շահերի տեսակետից ակնհայտ է, հասնել մյուս կողմից այնպիսի զիջումների, որոնք նման համաձայնությունն անընդունելի, անշահավետ դարձնեին Սովետական Միության համար։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ում, նախկին պրեզիդենտ Էյզենհաուերի հեղինակավոր վկայությամբ, ձևավորվում է յուրատեսակ ռազմաարդյունաբերական կոմպլեքս, որտեղ ներդրված են սպառազինությունների մրցավազքի շնորհիվ հարստացող մոնոպոլիաները, պենտագոնի գեներալների վերնախավը և նրանց հետ կապված՝ առաջին հերթին կոնգրեսի քաղաքագետները։ Այդ ռեակցիոն ուժերի ներկայացուցիչները համառորեն հանդես են գալիս ընդդեմ խաղաղ գոյակցության քաղաքականության, հօգուտ սպառազինությունների մրցավազքի և ազգային-ազատագրական շարժումները ռազմական և այլ միջոցներով ճնշելու։ Այդ նրանք էին խթանում պատերազմը Վիետնամում և աջակցում ԳՖՀ-ի ռևանշիստներին, փորձում հնարավոր բոլոր միջոցներով քայքայել սոցիալիստական պետությունների միասնությունը, ամեն կերպ խոչընդոտում միջազգային կարևորագույն պրոբլեմների կարգավորմանը։ Ռազմաարդյունաբերական կոմպլեքսի ուժեղ ազդեցության տակ է մեծապես գտնվում նաև Սպիտակ տան տերը։

Սովետական Միությունը միշտ իր տեսադաշտում է պահում այդ հանգամանքը և հաշվառության ու մի հույս չի թողնում նրանց, ովքեր կրկին կձգտեն «համաշխարհային լիդերի» դառնալու փորձ կատարել։

ԱՄՆ-ի հանդեպ ՍՍՀՄ-ի վերաբերմունքի մասին բազմիցս նշվել է ՍՄԿԿ-ի համագումարներում և սովետական կառավարական հայտարարություններում։ Այսպես, ՍՄԿԿ-ի XXIII համագումարին Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը նշում էր. «Մենք մեկ անգամ չէ, որ հայտարարում ենք ԱՄՆ-ի հետ մեր հարաբերությունը զարգացնելու պատրաստակամության մասին և այժմ նույն



դիրքն ենք պաշտպանում։ Բայց դրա համար պահանջվում է, որպեսզի ԱՄՆ-ը դադարեցնի սպառազինությունների մրցավազքը։ Ագրեսիայի և բռնության թունավոր հողում խաղաղ գոյակցության արգասավոր պտուղներ չեն աճեցվի»[1]։

Ամերիկյան իմպերիալիզմի հենց ագրեսիաների և պրովոկացիաների քաղաքականությունը, անհեռատեսությունը, ԱՄՆ-ի պետական գործիչների ճնշող մեծամասնության կույր հակակոմունիզմն ու հակասովետիզմը սովետա-ամերիկյան հարաբերություններին երկար ժամանակ հնարավորություն չէին տալիս զարգանալ պոզիտիվ ուղղությամբ։ Ավելին, երբ ամերիկյան քաղաքական ասպարեզում հանդես էին գալիս միջազգային մի շարք պրոբլեմների և ՍՍՀՄ-ի հետ համագործակցությունն ընդլայնելու հարցում ողջամիտ մտածելու հակված գործիչներ, ապա աջ ռեակցիոներներն անհապաղորեն հարձակվում էին նրանց վրա սուր քննադատությամբ և անգամ սպառնալիքներ տեղում։

Միևնույն ժամանակ միանգամայն պարզ է, որ սովետա-ամերիկյան հարաբերությունների նորմալացումը բարեբար է ազդում ընդհանուր միջազգային մթնոլորտի վրա։ Սովետական և ամերիկյան ներկայացուցիչները բազմիցս են նստել բանակցությունների սեղանի շուրջը։ ՍՍՀՄ-ի կառավարությունը ելնում է այն բանից, որ բանակցություններն արդի բարդ պրոբլեմների խաղաղ կարգավորման զորեղ միջոցներից են։ Սակայն նախկինում Վաշինգտոնը մեծ մասամբ այլ կերպ էր մոտենում նման հանդիպումներին։ Ամերիկյան կողմը հաճախ մասնակցում էր բանակցություններին կամ պրոպագանդիստական նպատակով, կամ ձգտելով ՍՍՀՄ-ի վզին փաթաթել նախապես անընդունելի պայմաններ։ Չնայած դրան, սովետական դիվանագիտության սկզբունքային, եռանդուն պայքարը հանուն խաղաղության, այդ թվում և ԱՄՆ-ի ներկայացուցիչների հետ բանակցությունները դրական արդյունքներ տվեցին։ 50-ական և 60-ական թվականներին Սովետական Միության համառ ջանքերի շնորհիվ զգալի հաջողություններ ձեռք բերվեցին մի շարք կարևոր պրոբլեմների լուծման հարցում. կնքվեցին Ավստրիայի հետ Պետական պայմանագիրը, Լաոսի համաձայնագիրը, երեք միջավայրում միջուկային փորձարկումների արգելման մա-

ոին Մոսկովյան պայմանագիրը. ԱՄՆ-ը և ՍՍՀՄ-ը ստորագրեցին և վավերացրին միջուկային զենքը չտարածելու մասին պայմանագիրը։

Սկզբունքորեն սովետական կողմը երկու մեծ պետությունների ղեկավարների բարձր մակարդակով անձնական կոնտակտների կողմնակից էր։ Նա հանդես է գալիս հօգուտ այդպիսի հանդիպումների այն հույսով, որ ամերիկյան կողմը կընդառաջի սովետական առաջարկություններին և կդադարի ավելացնել միջազգային լարվածությունը։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սովետական պետության ղեկավարների և ԱՄՆ-ի պրեզիդենտների այդպիսի ինը հանդիպում է տեղի ունեցել՝ Տրումենի հետ Պոտսդամի խորհրդակցությունում 1945 թ., Էյզենհաուերի հետ՝ Ժնևում 1955 թ. և Քեմփ-Դեյվիդում 1959 թ., Քենեդիի հետ՝ 1961 թ. և Ջոնսոնի հետ՝ Գլասբորոյում 1967 թվականին։

1972 թվականին պաշտոնական այցով ՍՍՀՄ ժամանեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Նիքսոնը, իսկ 1973 թվականին ՍՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը պատասխան այցով եղավ ԱՄՆ-ում։ 1974 թ. տեղի ունեցավ Լ. Ի. Բրեժնևի հանդիպումը Նիքսոնին հաջորդած պրեզիդենտ Ջ. Ֆորդի հետ։ ԱՄՆ-ի ոչ ռեալիստական գործողությունների հետևանքով հիշյալ առաջին հինգ հանդիպումների օգտակարությունը, բացի, թերևս, Պոտսդամի խորհրդակցությունից, նվազագույն էր։

ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ներկայացուցիչների հետպատերազմյան առաջին հանդիպման վրա պետք է առանձնահատուկ կանգ առնել։ Երեք պետությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Պոտսդամի խորհրդակցությունում, ինչպես հայտնի է, պատմական որոշումներ ընդունվեցին։ Դրանք նախատեսում էին, մասնավորապես, Գերմանիայի ապառազմականացումը, դեմոկրատացումը և դենացիֆիկացումը։ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները այնուհետև խախտեցին այդ որոշումները, «սառը պատերազմ» սանձազերծելով։ Դրա հետևանքով իրադրությունը Եվրոպայում կտրուկ դեպի վատը փոխվեց։ ԳՖՀ-ն մտավ ՆԱՏՕ-ի ագրեսիվ բլոկի մեջ, սկսեց արագորեն սպառազինվել, գլուխ բարձրացրին նեոֆաշիստները։ Սովետա-ամերիկյան համագործակցության



բարելավման հեռանկարները Վաշինգտոնի կողմից գիտակցաբար երկար տարիներ տորպեդահարված էին։

Սովետա-ամերիկյան հարաբերությունների բարելավման համար որոշակի հնարավորություններ է ստեղծում 1955 թ. չորս պետությունների ներկայացուցիչների Ժնևյան խորհրդակցությունը։ Դա 1945 թվականից հետո ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունների ղեկավարների առաջին հանդիպումն էր միջազգային խորհրդակցությունում։ Նրանում Վաշինգտոնի համար «սառը պատերազմի» կուրսից հրաժարվելու, միջազգային մի շարք պրոբլեմներ կարգավորելու հնարավորություններ էին նախանշվում, ինչը, անկասկած, կթուլացներ միջազգային լարվածությունը և, անտարակույս, կբարելավեր սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունները։ ՍՍՀՄ-ը մտադրվում էր ամենայն լրջությամբ քննարկել զինաթափման, եվրոպական անվտանգության և Արևելքի ու Արևմուտքի միջև կոնտակտների զարգացման պրոբլեմները։ Սովետական պատվիրակությունը, օրինակ, առաջարկեց Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության մասին համաեվրոպական պայմանագիր կնքել։ ՍՍՀՄ-ը կոչ արեց ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին զինաթափման բնագավառում որոշ քայլեր կատարել և պայմանավորվել միջուկային զենքի լրիվ արգելման մասին։ Ամերիկյան կողմը մերժեց այդ առաջարկությունները։ Պրեզիդենտ Էյզենհաուերի առաջ քաշած «բաց երկնքի» գաղափարը հետախուզական նպատակներ էր հետապնդում։ «Արևելյան Եվրոպայի երկրների պրոբլեմը» քննարկելու պահանջը վկայում էր ԱՄՆ-ի կառավարող շրջանների՝ սոցիալիստական երկրների ներքին գործերին միջամտելու մտադրությունը։

Եվ այնուհանդերձ, Ժնևի բանակցությունների ավարտից հետո միջազգային հարաբերություններում դեռ որոշ ժամանակ զգացվում էր «Ժնևի ոգին»։ Բոլոր ժողովուրդները, այդ թվում և ամերիկյան ժողովուրդը, հանդես էին գալիս հօգուտ լարվածության թուլացման, միջազգային կարևորագույն պրոբլեմների լուծման։

Ձգտելով պաշտպանել այդ դրական տենդենցները, սովետական կառավարությունը 1956 թվականի հունվարին ԱՄՆ-ին առաջարկեց պայմանագիր ստորագրել բարեկամու-

թյան և համագործակցության մասին։ Այդ բարի կամքի քայլ էր, փոխադարձ ընդունելի համագործակցության համար մեկնած ձեռք։ Այդ պայմանագրի նախագծում նախատեսվում էր, որ կողմերը զարգացնելու և ամրապնդելու են բարեկամական հարաբերությունները իրավահավասարության, պետական սուվերենության և ներքին գործերին չմիջամտելու փոխադարձ հարգանքի սկզբունքի հիման վրա։ ԱՄՆ-ը չընդունեց նաև այդ առաջարկը և դրանով իսկ մեկ անգամ ևս գրանցվեց տվյալ փուլում ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունները բարելավելու ցանկության բացակայությունը։

1956 թվականին սովետական կառավարությունը մի շարք գործնական միջոցառումներ առաջարկեց երկու երկրների միջև հարաբերությունները նորմալացնելու ուղղությամբ։ Դրանք նախատեսում էին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև էկոնոմիկայի և կուլտուրայի բնագավառում կապերի զարգացում, գիտատեխնիկական համագործակցության ընդլայնում։ Այդ տեսական լուրջ քայլ էր առեղծելու ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերություններում, օգնելու էր ժողովուրդներին լավ ճանաչել և, հետևապես, հասկանալ միմյանց։ Վաշինգտոնը չընդունեց նաև այդ առաջարկությունները։

Հարկ է նշել, որ սովետա-ամերիկյան հարաբերությունների պատմությունը վկայում է, որ ՍՍՀՄ-ի կառավարությունը կապիտալիստական աշխարհի խոշորագույն երկրի հետ տնտեսական լայն համագործակցության կողմնակից է եղել։ Սկսած 30-ական թվականներից ՍՍՀՄ-ը հանդիսանում էր, ինչպես հայտնի է, ամերիկյան արդյունաբերության այնպիսի առաջատար ճյուղերի արտադրանքի հուսալի գնորդը, ինչպիսին են մեքենաշինությունը, հաստոցաշինությունը, ձուլման սարքավորումների արտադրությունը։ Առևտրի զարգացման համար մեծ հնարավորություններ կային նաև երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որից ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը դուրս եկան որպես հաղթանակած դաշնակիցներ։ Սակայն Սպիտակ տունը սկսեց ՍՍՀՄ-ի նկատմամբ խտրականության քաղաքականություն վարել։ Կոնգրեսի որոշումների շրջանակներում 1948 թվականի մարտին ԱՄՆ-ի առևտրի մինիստրությունն արտահանման վրա հսկողության խտրականության կանոններ մշակեց, որը հանգեցրեց սովետա-ամերիկյան առևտրի խիստ կրճատման։ 1951 թվականի մարտին նա նոր կարգադրություն հրապարակեց՝ Սովետական Միություն առաքվող բոլոր ապրանքների համար հարկավոր էր հատուկ թույլտվություն ստանալ։ 1951 թ. հունիսին ԱՄՆ-ը լուծարքի ենթարկեց ՍՍՀՄ-ի հետ 1937 թվականին կնքված առևտրական համաձայնագիրը։ 1951 թվականի օգոստոսին կոնգրեսն ընդունեց Բեթլի օրենքի նախագիծը, որը սովետա-ամերիկյան առևտրական կապերի հետագա սահմանափակում էր նախատեսում։

Ինչո՞ւմն էր այդ բոլոր քայլերի ստրատեգիական նպատակը։ Պատասխանն այստեղ ակնհայտ է։ Վաշինգտոնը ենթադրում էր կարևորագույն արդյունաբերական ապրանքների՝ արտահանման վրա էմբարգոյի քաղաքականությամբ վնաս հասցնել ՍՍՀՄ-ին, դանդաղեցնել նրա էկոնոմիկայի զարգացումը։ Դրանից, ինչպես հայտնի է, ոչինչ չստացվեց։ Ներկայումս Սովետական Միությունն ինքն է մյուս երկրներին տարբեր ապրանքներ, այդ թվում արդյունաբերական սարքավորումներ առաքում։ Ինչ վերաբերում է ամերիկյան բիզնեսմեններին, ապա նրանք երկար ժամանակ զրկված էին սոցիալիստական երկրների ընդարձակ և կայուն շուկաները օգտագործելու որևէ արդյունավետ հնարավորությունից, զիջելով դրանք, ըստ էության, իրենց արևմտաեվրոպական մրցակիցներին։

Այդ քաղաքականության հետևանքով ՍՍՀՄ-ի հետ ԱՄՆ-ի ապրանքաշրջանառությունը մինչև 1955 թվականն անընդհատ կրճատվում էր։ Այնուհետև այն սկսեց աճել, բայց շատ ցածր տեմպերով։ Այսպես, օրինակ, եթե 1946 թվականին ապրանքաշրջանառությունը հասնում էր 304 մլն. դոլլարի, ապա 1955 թվականին՝ 22 մլն., 1960-ին՝ 76 մլն., 1965-ին՝ 89 մլն., 1966-ին՝ 99 մլն. դոլլար[3]։

Հանուն միջազգային բարդ պրոբլեմների կարգավորման, լարվածության թուլացման Սովետական Միության հետևողական ելույթները, փոխադարձաբար ընդունելի որոշումների որոնումը 50—60-ական թվականներին գործնական զգալի արդյունք տվեցին։ Դրանք ձեռք բերվեցին ամերիկյան արտաքին քաղաքականության ագրեսիվ տենդենցների և անհեռատես քայլերի դեմ ՍՄԿԿ ԿԿ-ի և սովետական կառավարության

համառ պայքարի շնորհիվ: Վերջ ի վերջո, երևացին լենինյան այդ հետևողական կուրսի արդյունքները: 1959 թվականին վավերացվեց Անտարկտիդայի վերաբերյալ միջազգային պայմանագիրը, որը նախատեսում էր նրա օգտագործումը միայն խաղաղ նպատակներով»[6]:

1961 թվականին ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը հրապարակեցին համատեղ հայտարարություն զինաթափման գծով բանակցությունների համար համաձայնեցված սկզբունքների մասին: Նշանակալի էր հետևյալ փաստը՝ սովետական դիվանագիտությանը հաջողվեց փաստաթղթի մեջ մտցնել նաև դրույթ այն մասին, որ բանակցությունների նպատակն է լինելու համընդհանուր և լիակատար զինաթափումը[7]: Սակայն հետագայում էլ ԱՄՆ-ի կառավարությունը խոչընդոտում էր արդիականության այդ կարևորագույն պրոբլեմի լուծմանը:

1963 թվականին ՍՍՀՄ-ն, ԱՄՆ-ը և Անգլիան պայմանավորվածության հասան հույժ կարևոր հարցում՝ երեք միջավայրում միջուկային զենքի փորձարկումների արգելման վերաբերյալ: Մոսկովյան պայմանագիրն աշխարհում առաջինն էր, որ ուղղված էր միջուկային սպառազինությունների մրցավազքի հետագա խթանման դեմ: Դա սովետական դիվանագիտության մեծ նվաճումն էր: Երեք միջավայրում միջուկային փորձարկումների արգելման պրոբլեմի լուծման հարցում դրական դեր խաղաց նաև պրեզիդենտ Ջ. Քենեդին: Տվյալ դեպքում նա որոշակի չափով ուլտրա-ռեակցիոն քաղաքագետների և ԱՄՆ-ի զինվորականության պահանջներին հակառակ քայլի դիմեց:

1963 թվականին սովետա-ամերիկյան բանակցությունների հետևանքով կողմերը պայմանավորվածության հասան միջուկային զենքով օբյեկտները դեպի ուղեծիր չարձակելու մասին: Հոկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան բանաձև ընդունեց, որտեղ ողջունում էր ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի մտադրությունը տիեզերական տարածությունում միջուկային կամ մասսայական ոչնչացման զենքի այլ տեսակներով օբյեկտներ չտեղադրել[8]:

Այդ համաձայնությունների շնորհիվ տեղի ունեցավ միջազգային որոշակի լիցքաթափում: Բնորոշ է, որ բուն ԱՄՆ-ում ուլտրաաջերը մեղադրեցին պրեզիդենտին տագնա-



լին շահերի դավաճանության մեջ: 1963 թվականին Ջոն Քենեդին չարանենգորեն սպանվեց Դալլասում:

1964 թվականից սկսած, պրեզիդենտ-դեմոկրատ Ջոնսոնի օրոք ԱՄՆ-ի կառավարության գործունեության մեջ պոզիտիվ տարրերը սկսեցին նվազել: Պահանջվեց չորս տարի, մինչև որ Սովետական Միության նախաձեռնությամբ ստորագրվեց մի նոր կարևոր միջազգային համաձայնագիր՝ Պայմանագիր միջուկային զենք չտարածելու մասին: Ինչ վերաբերում է դեմոկրատների կառավարության այլ ուղղություններով գործունեությանը, ապա այն այլ կերպ չի կարելի անվանել, քան խաղաղության և միջազգային համագործակցության շահերին հակասող գործունեություն:

1964 թվականից հետո ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի միջև հարաբերությունները, ընդհանուր առմամբ, վատացան: Այդ առաջացավ միջազգային ասպարեզում ամերիկյան իմպերիալիստների ագրեսիվ մի շարք գործողությունների հետևանքով: Դիմենք փաստերին:

Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի կառավարությունը պաշտպանեց այսպես կոչված «ատոմային ականային գոտու» ստեղծման պլանը, այսինքն՝ ԳԴՀ-ի և ՉՍՍՀ-ի հետ ԳՖՀ-ի սահմաններում ստորգետնյա միջուկային լիցքերի տեղադրումը: Դա Պոտսդամի խորհրդակցության նոր խախտում էր: Սովետական կառավարությունը 1965 թվականի հունվարին նախազգուշացրեց, որ նման կարգի ավանտյուրիստական պլանների պատասխանատվությունն ընկնում է, նախ և առաջ, Ջոնսոնի կառավարության վրա: Լատինական Ամերիկայում 1965 թվականի մայիսին ԱՄՆ-ը զինված ինտերվենցիա կատարեց Դոմինիկյան Հանրապետություն: Սակայն սովետա-ամերիկյան հարաբերություններն առանձնապես լարված բնույթ ստացան այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի դեմոկրատական ադմինիստրացիան Վիետնամում պատերազմի էսկալացիայի կուրս վերցրեց: Դա բացահայտ և աներկիմաստ մարտահրավեր էր սովետական ժողովրդի, սոցիալիստական մյուս երկրների ժողովուրդների բարի կամքին: Դա չքողարկված ձգտում էր քայքայել այն ժամանակ դեռ բավական խարխուլ միջազգային լարվածության թուլացման շենքը սովետա-ամերիկյան հարաբերություններում: Քենե-

դիրն հաջորդած Լ. Ջոնսոնը պրեզիդենտի պաշտոնի համար մանրմասշտաբային գործիչ դուրս եկավ։ Բայց կարո՞ղ էր արդյոք Ջ. Քենեդին կռահել, որ 1960 թվականի ընտրական շրջանում, վերջին պահին, հարավային նահանգներն իր կողմը բերելու համար զուտ տակտիկական նկատառումներով այդ տեխասցուն փոխպրեզիդենտի իր թեկնածու ընտրելով, իր պրեզիդենտ լինելու իրավունքը ոտնահարելու են մարդասպանները և արտաքին քաղաքականության հարցերում ոչ այնքան գիտակ մարդը պրեզիդենտ է դառնալու։

Մինչդեռ միջազգային իրադարձությունները զարգանում էին այսպես։ 1965 թվականի փետրվարից ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերը սկսեցին սիստեմատիկորեն ռմբակոծել Վիետնամի տերիտորիան։ Ամերիկյան իմպերիալիզմի այդ բարբարոսական գործողություններն առաջացրին սովետական ժողովրդի զայրույթն ու դատապարտումը։ ՍՍՀՄ-ի կառավարությունը հայտարարեց, որ ԱՄՆ-ը չպետք է պատրանք սնուցի, թե ագրեսիան Վիետնամում կարող է անպատիժ մնալ։ «Սովետական Միությունն անփոփոխ հանդես է եկել և այժմ էլ ԱՄՆ-ի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու, դրանք բարելավելու կողմնակից է։ Բայց հարաբերությունների զարգացումը երկկողմանի պրոցես է, և դա շրջանցել չի կարելի։ Այդ պրոցեսն անհամատեղելի է քաղաքականության մեջ ագրեսիվ դրսևորումների հետ, որ կարող են ի չիք դարձնել սովետա-ամերիկյան հարաբերությունների բարելավման ուղղությամբ ձեռնարկված այս կամ այն քայլը»[9]։ ՍՍՀՄ կառավարությունը նախազգուշացրեց Միացյալ Նահանգներին, որ «սովետական ժողովուրդը կկատարի իր ինտերնացիոնալ պարտքը եղբայրական սոցիալիստական երկրի նկատմամբ»[10]։ Այդպես էլ եղավ։

1965 թվականի մարտին ՍՍՀՄ-ը կրկին Վաշինգտոնի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, թե հեռուն տանող ինչ հետևանքներ կարող է ունենալ «իրադարձությունների զարգացումը Վիետնամում սովետա-ամերիկյան հարաբերությունների հարցում, մասնավորապես, և միջազգային իրադրության համար ընդհանրապես», եթե ԱՄՆ-ը շարունակի ագրեսիվ կուրս վարել։ ՍՍՀՄ-ում ամերիկյան



դեսպան Ֆ. Քոլերին ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստրությունում հայտնեցին. «ԱՄՆ-ի գործողություններն անհամատեղելի են Սովետական Միության հետ հարաբերությունները բարելավելու մասին հայտարարությունների հետ։ Ավելին, դրանք քայքայում են այն հիմքը, որի վրա միայն կարող են կառուցվել ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունները, հատկապես խաղաղ գոյակցության սկզբունքը»։ Պրեզիդենտ Ջոնսոնը չհետևեց այդ խորհուրդներին։ Սպիտակ տունը գտնվում էր միլիտարիստական տենդի մեջ։

Չի կարելի ուշադրություն չդարձնել հետևյալ հանգամանքի վրա։ Ամեն անգամ, երբ ԱՄՆ-ում, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, իշխանության գլուխ էր անցնում դեմոկրատական կուսակցությունից նոր պրեզիդենտ, ամերիկյան արտաքին քաղաքականությունը խիստ կուրսի էր դիմում, նրանում գլուխ էին բարձրացնում արտաքին քաղաքական հապճեպ գործողությունների ու ավանտյուրաների կողմնակիցները։ Հ. Տրումենը (որը նախքան պրեզիդենտ ընտրվելը նույնպես «սառը պատերազմի» կողմնակից էր) հաջողացրեց ամերիկյան ժողովրդի ռազմական ընդհարումը կորեական ժողովրդի հետ, Ջ. Քենեդին հետևեց ԿՀՎ-ին ու պենտագոնին և հավանություն տվեց ամերիկացիների աջակցությամբ վարձկանների զորքերի ռազմական հարձակմանը Կուբայի վրա։ Ջոնսոնն իր ինքնուրույն պրեզիդենտության առաջին տարիներին ռազմական գործողություններ իրականացրեց լատինական Ամերիկայում, արագ թափով ծավալում էր ռազմական էսկալացիան Վիետնամում։ Այդ ամենը գրեթե մեթոդաբար էր տեղի ունենում և յուրատեսակ ռազմաքաղաքական ցիկլ էր հիշեցնում։ Ընդ որում դա իր բացատրությունն ուներ։ Նոր պրեզիդենտից «հաստատակամություն» էին պահանջում հենց այն քաղաքական և ռազմական գործիչները, որոնք նախորդ ադմինիստրացիայի ժամանակ հեռու էին գործերից։ Ավելին, նրանք երբեմն նոր պրեզիդենտին այնպիսի գործողությունների են մղում, որպեսզի, ըստ էության, ի չիք դարձնեն ՍՍՀՄ-ի հետ վաղօրոք վավերացված համաձայնագրերը։ Այդ նույն ժամանակ ռազմարդյունաբերական կոմպլեքսն առաջ է մղում ԱՄՆ-ի ռազմական պոտենցիալի ուժեղացման նախկինում սառեցված պլանները, բացատրելով նոր պրե-

զիդենտին, որ, իբր, այդ նրա հետ կապ չունի, քանզի նա ընդամենը միայն սանկցիա է տալիս նախօրոք ադմինիստրացիայի մշակումների և որոշումների իրականացմանը։

Այդ բոլոր գործողությունների նպատակը Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների վրա ճնշում գործադրելն էր։ Նշանակալից էր, որ այդ բոլոր փորձերն անխուսափելիորեն ձախողվում էին։ ՍՍՀՄ-ում դրանք մշտապես դատապարտվում և վճռական բողոք էին առաջացնում։

1965 թվականի դեկտեմբերին ՍՍՀՄ Գերագույն սովետը վճռականորեն դատապարտեց ԱՄՆ-ի ռազմական ինտերվենցիան Հարավային Վիետնամում և ՎԴՀ-ի դեմ ագրեսիան։ ՍՍՀՄ Գերագույն սովետը սովետական ամբողջ ժողովրդի անունից միաձայն հավանություն տվեց Վիետնամի ժողովրդի պաշտպանության ուղղությամբ ՍՍՀՄ-ի կառավարության քաղաքականությանը և գործնական քայլերին։

1966 թվականի ապրիլի 8-ին ՍՄԿԿ XXIII համագումարը հատուկ հայտարարություն արեց Վիետնամում ամերիկյան ագրեսիայի կապակցությամբ։ Արտահայտելով կոմունիստների և սովետական ամբողջ ժողովրդի կամքն ու զգացմունքները, համագումարը զայրույթով դատապարտեց Վիետնամի եղբայրական ժողովրդի դեմ ուղղված իմպերիալիստների բարբարոսական գործողությունները։

1966 թվականի օգոստոսի 3-ին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ա. Ն. Կոսիգինը, անդրադառնալով սովետա-ամերիկյան հարաբերություններին, ՍՍՀՄ-ի Գերագույն սովետի հերթական նստաշրջանում ասաց. «Եթե մի քանի տարի առաջ Վաշինգտոնի բարձր շրջաններում կարելի էր արդի պրոբլեմների շուրջը ավելի ռեալիստական մոտեցման նշույլներ նկատել, եթե այն ժամանակ զգացվում էր հասկանալի ըմբռնումն այն բանի, որ ԱՄՆ-ը չի կարող իր կամքը թելադրել մյուս ժողովուրդներին, ապա այսօր ամերիկյան քաղաքականությանն ավելի ու ավելի շատ են տոն տալիս ագրեսիվ ռազմական ուժերը»[11]։ Միաժամանակ արտահայտվեց սովետական սկզբունքային դիրքը՝ երկու պետությունների միջև հարաբերությունների առողջացումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե ԱՄՆ-ը պահպանի միջազգային իրավունքի նորմաները և դադարի միջամտել մյուս երկրների ու ժողովուրդների ներքին գործերին։ Դրանում է ամուր հիմքի գրավականը միջազգային իրադրության կայունացման ուղղությամբ։



60-ական թվականներին, երբ միջազգային հարաբերությունների վիճակը սաստիկ անկայուն էր դարձել Վիետնամում ամերիկյան ագրեսիայի պատճառով, Սովետական Միության քաղաքականությունն այն ժամանակ ստեղծված միջազգային բարդ իրադրությունում հաստատուն սկզբունքայնությունը զուգակցում էր դիվանագիտական անհրաժեշտ ճկունության հետ։ Բազմակողմանի օգնություն ցույց տալով Վիետնամի հերոսական ժողովրդին, Սովետական Միությունը միևնույն ժամանակ մեծ ջանքեր էր գործադրում, որպեսզի սանձազերծված ռազմական ընդհարումը խաղաղ բանակցությունների ոլորտը տարվի, վերջ դրվի ամերիկյան զորքերի գոյությանը վիետնամական հողում և պայմաններ ստեղծվի կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար։

Այս մոտեցման մեջ դրսևորվեցին սովետական ժողովրդի բարի զգացմունքներն ամերիկյան ժողովրդի նկատմամբ, որը հակառակ իր կամքի ներքաշվել էր գաղութային կեղտոտ պատերազմի մեջ։ Այդպիսով, սովետական կողմի վարած արտաքին քաղաքականությունը նպատակ էր հետապնդում վերջ դնել երկու երկրների քաղաքացիների ոչնչացմանը, նախ և առաջ՝ ամերիկյան ագրեսորների՝ Վիետնամից դուրս գալու հիման վրա։

Ինչպես ՍՄԿԿ ԿԿ-ի, ՍՍՀՄ Գերագույն սովետի և ՌՍՖՍՀ-ի Գերագույն սովետի 1967 թ. նոյեմբերի 3-ին տեղի ունեցած համատեղ հանդիսավոր նիստում նշեց ՍՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, ով ուզում է մարդկությանը փրկել համաշխարհային հրթիռամիջուկային պատերազմի աղետներից, պետք է կրկնապատիկ, եռապատիկ եռանդով պայքարել իմպերիալիստների ագրեսիվ դավերի ու ելույթների դեմ[12]։ Հենց այդպիսի պայքար էր մղում ՍՍՀՄ-ը Վիետնամում պատերազմը դադարեցնելու համար։

Վիետնամի հայրենասերները համառ դիմադրություն էին ցույց տալիս ինտերվենտներին։ Ամերիկյան զինվորականու-

թյան պարտությունները սրեցին իրադրությունը և բուն ԱՄՆ-ում։ Ամերիկյան ագրեսորների հանցագործությունները խարազանվում էին ամբողջ աշխարհում։ Իմպերիալիստական գլխավոր պետությունը մի ճգնաժամից դեպի մյուսն էր գնում, այդ թվում և ֆինանսների բնագավառում։ Ճգնաժամի հետևից տատանվեց նաև դոլարը, որին սկսեց դևալվացիա սպառնալ։ 1968 թվականի մարտ ամսի տվյալներով ԱՄՆ-ի ոսկու պաշարն իջավ մինչև 11,5 մլրդ դոլարի։ Վալյուտա-ֆինանսական ճգնաժամ սկսվեց։ ԱՄՆ-ի կառավարությանը հաջողվեց այն միաժամանակ հանդարտեցնել արտակարգ միջոցներ ձեռնարկելով։

Երկրում ծավալվում էր պայքարն ընդդեմ վիետնամական ագրեսիայի։ Անգամ ԱՄՆ-ի բուրժուական գործիչները ստիպված էին խոստովանել, որ իրենց պետությունը «հիվանդ հասարակարգ է», որտեղ բոլոր խավերը անվստահություն են տածում վաղվա օրվա հանդեպ, իսկ երկիրն ամբողջությամբ համազգային մասշտաբով նյարդային քայքայվածություն էր ապրում։

Ինչպես վկայում է սովետական արտաքին քաղաքականության պատմությունը, ՍՍՀՄ-ը մշտապես բարեկամական զգացմունքներ է տածում ամերիկյան ժողովրդի հանդեպ, բայց անհաշտ է ամերիկյան իմպերիալիզմի զավթողական գործողությունների նկատմամբ։ Դեռ 1919 թվականին Սովետների Համառուսաստանյան VII համագումարը հավանություն տվեց Վ. Ի. Լենինի բանաձևին, որն ազդարարում էր. «Ռուսաստանյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը ձգտում է հաշտ ապրել բոլոր ժողովուրդների հետ և իր բոլոր ուժերը մղել դեպի ներքին շինարարությունը...»[13]։ Սովետական արտաքին քաղաքականությունն ԱՄՆ-ի հետ հարաբերություններում հիմնվում է լենինյան սկզբունքի վրա։ Այն հաշվի է առնում սովետական և ամերիկյան ժողովուրդների շահերը, պաշտպանում արդարացի խաղաղությունը, ձգտում բարիդրացիական հարաբերություններ հաստատել երկու երկրների միջև։ Դրա հետ մեկտեղ Սովետական Միությունը հակահարված է տալիս այնտեղ, ուր անդրօվկիանոսյան զինվորականությունը կոնֆլիկտների և պատերազմների հրդեհ է բորբոքում։



Հարկ է նշել, սակայն, մեկ ուրիշ հանգամանք ևս։ ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի միջև հարաբերությունների բարելավման հեռանկարը կախված է նրանից, թե չի վերադառնա արդյոք Վաշինգտոնն ագրեսիվ քաղաքականությանը, Ամերիկյան քաղաքական հեռատես գործիչներին և գործարար աշխարհի ներկայացուցիչներին կհաջողվի ակտիվորեն դիմակայել երկրի արտաքին քաղաքականության կուրսը «սառը պատերազմի» ռելսերի վրա շրջելու փորձերին այն ճանապարհից, որը հաստատվեց 70-ական թվականներին ողջամիտ քաղաքականության շնորհիվ։

Այս իմաստով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Քեննեդիի գլխավորությամբ դեմոկրատների գործունեության վերլուծությունը սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների կարգավորման հեռանկարների ուղղությամբ։

Սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերություններով այս կամ այն ձևով զբաղվել են այնպիսի անվանի դիվանագետներ, ինչպես, օրինակ, Չարլզ Բոլենը, Ավերել Հարիմանը, ՍՍՀՄ-ում ԱՄՆ-ի դեսպան Լյուելին Թոմփսոնը, Ջորջ Քենանը։ Քեննեդիի պրեզիդենտ ընտրվելուց արդեն մեկ ամիս անց, 1961 թվականի փետրվարին, նա Վաշինգտոն է կանչում Թոմփսոնին և մի շարք խորհրդակցություններ անցկացնում, որտեղ քննարկում է ՍՍՀՄ-ի նկատմամբ ամերիկյան քաղաքականության ընդհանուր գիծը։ Այդ շրջանում ԱՄՆ-ի մայրաքաղաքում լայնորեն արծարծվում էր այն միտքը, թե Քեննեդին մտադիր է «լուրջ ջանքեր» գործադրել սովետա-ամերիկյան հարաբերությունների բարելավման ուղղությամբ։ Կարելի է նշել, որ այդ կարգի վերախոն միայն մասամբ համապատասխանեց իրականությանը։ Ինչպես ցույց տվեցին ամերիկյան կառավարության հետագա քայլերը, նա դիվանագիտական գծով սովետական ներկայացուցիչների հետ ամենատարբեր մակարդակներով ամենալայն կոնտակտների վերսկսման կուրս վերցրեց։ Այդ մի շարք դեպքերում օգնում էր միջազգային պրոբլեմների լուծմանը, բայց երկկողմանի հարաբերություններում թույլ արտահայտվեց։

Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ի կառավարության 1960 թ. մայիսի 1-ի պրովոկացիայից հետո (Ու—2-ի հետ կապված

միջադեպը), որը հանգեցրեց Փարիզում բարձր մակարդակով խորհրդակցության ձախողմանը, բարձր մակարդակով սովետա-ամերիկյան կոնտակտները հապավեցին նվազագույնի։ Ամենածայրահեղական ամերիկյան քաղաքագետները, բուրժուական պրոպագանդան դիմեցին ՍՍՀՄ-ի հետ «բանակցությունների անհնարինության» մասին թեզիսով։ Այդ, իհարկե, երկերեսանի դիրք էր, կոչված արդարացնելու 1960 թվականի գարնանն ամերիկյան «ուժի դիվանագիտության» լրիվ ձախողումը։ Պետդեպարտամենտը ոչ միայն չէր խոչընդոտում Սովետական Միության նկատմամբ պրովոկացիոն քայլերի իրականացմանը, այլև ակտիվորեն խրախուսում էր դրանք։

Պրեզիդենտ Քենեդին բավական արագ վերջ տվեց սովետա-ամերիկյան դիվանագիտական կապերի «սառեցման» տակտիկային։ Ամերիկյան դիվանագիտությունը սկսեց ՍՍՀՄ-ի հետ կոնտակտներն ամրապնդելու մտադրություն ցուցադրել։ Այդ կոնտակտները հաստատելու Վաշինգտոնի փորձերին սովետական կողմը դրականորեն արձագանքեց։

ՍՍՀՄ-ի հետ հարաբերություններում ամերիկյան դիրքորոշման մեջ նկատվող յուրատեսակ ձնհալը չթափանցեց, սակայն, սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների էության մեջ։ Այն չազդեց այդ բնագավառում ԱՄՆ-ի կառավարության բռնած դիրքորոշման բովանդակության վրա։ Դրա հետ մեկտեղ ԱՄՆ-ի կառավարությունն իր պաշտոնական փաստաթղթերում, ամերիկյան պաշտոնական անձանց հրապարակային ելույթներում սկսեց խուսափել ՍՍՀՄ-ի հասցեին չափից ավելի խիստ արտահայտություններից։ Քենեդին անգամ ցուցում տվեց «հսկողություն» սահմանել ամերիկյան զինվորականության առավել հայտնի ներկայացուցիչների ելույթների նկատմամբ, երբ վերջիններս շոշափում էին միջազգային հարաբերությունների պրոբլեմներ։

Այն բանից հետո, երբ սովետական կառավարությունը, ձգտելով բարենպաստ կլիմա ստեղծել սովետա-ամերիկյան հարաբերություններում, ազատեց և ամերիկյան իշխանություններին հանձնեց ՍՍՀՄ-ի պետական սահմանը խախտելու ժամանակ խփված ՌԲ-47 ինքնաթիռի ամերիկյան երկու օդաչուներին, պրեզիդենտ Քենեդին մամուլի ասուլիսում



արված հայտարարությունում Սովետական Միության այդ քայլը գնահատեց որպես սովետա-ամերիկյան հարաբերությունների բարելավման ճանապարհին կանգնած լուրջ խոչընդոտի վերացում։

Թվում էր, սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերություններում շատ շուտով շոշափելի առաջընթաց է կատարվելու։ Բայց այդ, ինչպես հայտնի է, տեղի չունեցավ, չնայած սովետա-ամերիկյան դիվանագիտական կոնտակտների զգալի ակտիվացմանը, այդ թվում նաև բարձր մակարդակով Վիեննայում 1961 թվականի հունիսի հանդիպումը։ Դա մի քանի պատճառներով էր բացատրվում։

Նախ և առաջ չափից ավելի ծանր դուրս եկավ «սառը պատերազմի» վատագույն ժամանակների դալլեսյան քաղաքականության և դիվանագիտության ժառանգության բեռը, որպեսզի նոր պրեզիդենտը կարողանար խուսափել նրա ազդեցությունից։ Բացի այդ, Քենեդիի կառավարության շատ հայտնի անդամներ բացահայտ ետ էին տանում նրան դեպի հին ուղին։ Այդ բարդ իրադրությունում անձամբ Քենեդին չհաջողվեց արագ կողմնորոշվել։ Եվ ինքն էլ իր կառավարության գործունեության առաջին ամիսներին ակնհայտորեն ձգտում էր գնալ «տորոված ճանապարհով», որ նրան առաջարկում էր պետական ապարատը, այդ թվում նաև ԿՀՎ-ն ու պենտագոնը։ Հետևանքն այն եղավ, որ նոր պրեզիդենտը հենց սկզբից, Կոչինոս ծովախորշում (1961 թ. ապրիլ) ավանտյուրայի ձախողումից հետո, հայտնվեց հին կուրսի եռանդուն պաշտպանի բավական ոչ հաճելի վիճակում։

Քենեդիի կառավարության գործունեության առաջին ամիսներին սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների՝ «Դալլեսի ժառանգության» սառույցների հալեցման պրոցեսը շատ դանդաղ էր ընթանում։ Կարևոր է, սակայն, նշել, որ ՍՄԿԿ-ի, սովետական կառավարության և դիվանագիտության՝ 60-ական թվականների սկզբին սովետա-ամերիկյան հարաբերությունների կարգավորման և միջազգային սուր պրոբլեմների լուծման ուղղությամբ կատարած մեծ աշխատանքն անհետևանք չմնաց։ Հետագայում այն դրական տեղաշարժերի հանգեցրեց միջազգային մի շարք ակտուալ պրոբլեմների լուծման հարցում և նպաստեց սովետա-ամե-

րիկյան հարաբերությունների որոշ զարգացմանը, առանձնապես 1963 թվականին և 70-ական թվականների սկզբներին։

1961—63 թվականների սովետա-ամերիկյան հարաբերություններում սովետական դիվանագիտության հանդես բերած դիվանագիտական ակտիվության խնդիրն էր ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի դիրքորոշումներում շփման հնարավոր կետերի որոնումը և փոխադարձ շահերի շոշափումը։ Այդ քրտնաջան աշխատանքի նպատակն էր աշխարհում խաղաղության պահպանումը, սոցիալիստական նվաճումների պաշտպանությունը Եվրոպայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում ու ազգային-ազատագրական շարժումներին աջակցելը։ ՍՍՀՄ-ի դիվանագիտական ակտիվության դրական պտուղները 60-ական թվականների սկզբներին, երբ քննարկվում էին սովետա-ամերիկյան հարաբերությունների հարցերը, ձեռք էին բերվում ԱՄՆ-ի կառավարության քաղաքականության մեջ բացասական, իսկ հաճախ և չափազանց վտանգավոր ու ագրեսիվ տենդենցների դեմ պայքարում։

1961 թվականի հունվարի 20-ին, արդեն պաշտոն ստանձնելիս, Քենեդին ընդամենը մի քանի ընդհանուր հայտարարություն արեց հօգուտ սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացման։ Նա նշում էր, որ ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը պետք է նորից սկսեն դեպի խաղաղություն տանող ճանապարհների որոնումը, նախքան գիտության բացահայտած կործանարար ուժերը կկլանեն ամբողջ աշխարհը պատահական կամ կանխամտածված ինքնաոչնչացման հեռանկարով[16]։ 1961 թվականի փետրվարի 15-ին նա սովետա-ամերիկյան հարաբերությունների մասին արդեն ավելի որոշակի արտահայտվեց. «Ես հուսով եմ,— ասաց պրեզիդենտը,— որ ԱՄՆ-ի և Սովետական Միության հարաբերությունները կզարգանան այնպիսի ուղղությամբ, որպեսզի խաղաղություն պահպանվի, և որպեսզի մեզ հաջողվի մեր երկրների ջանքերը օգտագործել խաղաղասիրական արդյունավետ և բեղմնավոր զարգացման համար»[17]։ Պրեզիդենտի այդ բարի ցանկությունները երկար ժամանակ, սակայն, չէին լրացվում ամերիկյան դիվանագիտության գործողություններով, քանի որ նրա ղեկավար Դին Ռասկն այն տեսակետին էր, որ «ամ-



բողջ մարդկությանը կլանելու սպառնացող պրոբլեմների լուծումն արագացնելու հարկ չկա»։

Այսպես, 1961 թվականի փետրվարի 9-ին պետական քարտուղար Դին Ռասկը հարցազրույցի ժամանակ սովետա-ամերիկյան հնարավոր համագործակցության հարցում շեշտը դրեց բավական յուրատեսակ մոտեցման վրա։ ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի միջև կոնստրուկտիվ հարաբերությունների հաստատումը, պնդում էր նա, հարկավոր է սկսել «ավելի մանր հարցերից», որոնք «ավելի հեշտ է հաղթահարել», քան խոշոր պրոբլեմները։ Այդպիսով, սովետա-ամերիկյան հարաբերություններին էր, ըստ էության, հարմարեցվում երկրորդական հարցերի գծով «սահմանափակ» համաձայնությունների տեսությունը։ Եվ դրանից եզրակացություն էր արվում, որ այդ հիմք կդնի միջազգային ակտուալ և խոշոր պրոբլեմների գծով հետագա համաձայնությունների համար։

Այլ կերպ ասած, ամերիկյան դիվանագիտությունը գիտակցաբար մի կողմ էր դնում ՍՍՀՄ-ն ու ԱՄՆ-ը բաժանող և խաղաղությանը սպառնացող միջազգային առավել կարևոր պրոբլեմների քննարկումը։

Բնորոշ է, որ ամբողջ 1961 թ. ընթացքում Քենեդիի կառավարությունը սովետա-ամերիկյան պրոբլեմների կարգավորմանը ուղղված և ոչ մի այս կամ այն չափով լուրջ առաջարկությամբ հանդես չեկավ (ինչպես միջազգային քաղաքականության, այնպես և երկկողմանի հարաբերությունների բնագավառում)։ Դրա հետ մեկտեղ նա բազմիցս հայտարարում էր, որ պատրաստ է ՍՍՀՄ-ի հետ բանակցություններ վարել միջազգային լարվածության թուլացման ուղիների որոնման շուրջը։ Առկա էր այն յուրատեսակ պարադոքսը, երբ սովետա-ամերիկյան հարաբերությունների բարելավման անհրաժեշտության մասին խոսքերը չէին ամրապնդվում գործերով, կոնկրետ մտածված պոզիտիվ առաջարկություններով։ Հաղթում էր հռետորությունը և ոչ թե գործը։

Այդ իրավիճակում ավելի ակներև էր դառնում, որ ՍՍՀՄ-ի հանդեպ ամերիկյան ստրատեգիայում և տակտիկայում կարևոր գործոն են դարձել «ժամանակ շահելու», միջազգային կարգի այնպիսի գործողություններ իրագործելու ձգտումը, Սպիտակ տանը, պետդեպարտամենտում, պենտագոնում ու

ԳՖՀ-ում մշակած այնպիսի ծրագրերի անցկացումը, որոնք հնարավորություն ընձեռեին մեկ-երկու տարի անց ՍՍՀՄ-ի հետ բանակցությունները վարել ավելի ամուր դիրքերից։

60-ական թվականների սկզբներին այդ ամերիկյան ընդհանուր արտաքին քաղաքական ստրատեգիայում առանձնակի մի քանի պրոբլեմ կար՝ Լաոսինը, մասամբ զինաթափման և գերմանական խաղաղ կարգավորման պրոբլեմները, որոնցում Քենեդու կառավարությունը ստիպված էր ՍՍՀՄ-ի հետ մոտեցման եզրեր փնտրել։ Այդ ուղղությամբ դիվանագիտական աշխատանք տարվում էր, սակայն, մյուս բազմաթիվ միջազգային պրոբլեմների գծով ԱՄՆ-ի կառավարության ուղիղ հակառակ ուղղությամբ ներդրած անհամեմատ ավելի եռանդուն ջանքերի հետ մեկտեղ։ Կուբայի դեմ ձեռնարկած 1961 թվականի ապրիլյան ավանտյուրան, պրեզիդենտ Քենեդու հետ Վիեննայի հանդիպման ժամանակ ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը բաժանող սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացման պրոբլեմների լուծման ռեալիստական ուղիներ որոնելու ձգտման բացակայությունը, սպառազինությունների մրցավազքի նոր փուլի սանձազերծումը, միջուկային փորձարկումների լիակատար արգելման մասին համաձայնության վավերացնելուց հրաժարվելը՝ այդ բոլորը միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի կառավարության գործողությունների միայն այն շղթայի առանձին օղակներն են, որոնք Քենեդու պրեզիդենտության տարիներին չէին կարող տագնապի չենթարկել սովետա-ամերիկյան հարաբերությունները։

Սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացման վրա առանձնապես նեգատիվ դրոշմ էր թողնում Քենեդու կառավարության բացասական դիրքը գերմանական խաղաղ կարգավորման հարցերի գծով սովետական առաջարկների նկատմամբ։

ԱՄՆ-ի կառավարության ցանկության բացակայությունը ընդունելու 60-ական թվականների սկզբներին Կենտրոնական Եվրոպայում ստեղծված իրավիճակի ռեալությունը, ամենից սոցիալիստական պետությունը՝ ԳԴՀ-ը, քայքայելու ձգտումը, Բոննի ռևանշիստական նկրտումների թողտվությունը, եթե ոչ ուղղակի աջակցումը, Եվրոպայում անվտանգության ամրապնդումից հրաժարվելու քաղաքականությունը՝



այդ բոլորը ծանր բեռի նման կախված էր սովետա-ամերիկյան հարաբերությունների վրա, խիստ արգելակում էր նրանց զարգացումը։

Իհարկե, Եվրոպայի խաղաղության և անվտանգության պրոբլեմներն այնքան ակտուալ էին, որ ԱՄՆ-ի կառավարությունը չէր կարող դրանք լրիվ անտեսել, չնայած այդպես էր նրան խորհուրդ տալիս վարվել Աչեսոնի խումբը, որը դեմ էր Սովետական Միության հետ եվրոպական պրոբլեմների շուրջ բանակցություններին։ Պրեզիդենտ Քենեդին, և այստեղ հարկ է արժանին մատուցել նրան, այլ կուրս ընտրեց։ Նա զգալի տատանումներից հետո գնաց Սովետական Միության հետ Արևմտյան Բեռլինի շուրջը բանակցությունների։ Սակայն Վաշինգտոնի ստրատեգիական պլաններում իշխող ելման դիրքերը նրա լուծումը չափազանց դժվարացնում էին։

Եթե խոսելու լինենք գերմանական խաղաղ կարգավորման հետ կապված հարցերի ամբողջ կոմպլեքսի շուրջը ամերիկյան կառավարության պրոպագանդիստական տակտիկայի մասին, ապա այն հանգեցվեց Սովետական Միության խաղաղասիրական մտադրությունների խեղաթյուրմանը և Արևմտյան Բեռլինի «զավթումը» սովետական կառավարությանը վերագրելուն, Գերմանիայի վերաբերյալ ետպատերազմյան համաձայնագրերը միակողմանիորեն վերացնելուն։ Այդ, իհարկե, իրականությանը չէր համապատասխանում։

Կարելի է, սակայն, նշել, որ արդեն 1961 թվականին ԱՄՆ-ում հանդես եկան այն բանի կողմնակիցներ, որպեսզի ամերիկյան կողմը որոշ «զիջումներ» անի Սովետական Միությանը Արևմտյան Բեռլինի և ԳԴՀ-ի սահմանի միջազգային իրավական հաստատման հարցում։ Մասնավորապես, նկատառումներ էին արտահայտվում Արևմտյան Բեռլինում ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի զորքերի հնարավոր կրճատման, Լեհաստանի արևմտյան սահմանը Օդեր-Նեյսե գծով ճանաչելու մասին։

1961 թվականի մարտ ամսին Ժնևում Ա. Ա. Գրոմիկոյի և Դ. Ռասկի միջև տեղի ունեցան բանակցություններ գերմանական խաղաղ կարգավորման հարցի շուրջը։ Պարզվեց, որ Քենեդու կառավարությունը գտնում էր, որ գերմանական խաղաղ կարգավորման պրոբլեմները հարկավոր է չարտահա-

վել։ Ամերիկյան կողմը «ցանկանում» էր Սովետական Միության հետ «ժամանակավոր համաձայնության» հասնել Արևմտյան Բեռլինի հարցում։ Ըստ այդմ նա գտնում էր, որ արևմտյան պետությունների օկուպացիոն զորքերը մնալու են Արևմտյան Բեռլինում։ ԱՄՆ-ի կառավարությունն այդ պայմաններով «պատրաստ էր որևէ ձևով ճանաչելու ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի, ինչպես նաև ԳԴՀ-ի ու Արևմտյան Բեռլինի միջև սահմանները»։ Քեննեդիի կառավարությունը շոշափում էր նաև ՆԱՏՕ-ի և Վարշավայի պայմանագրի երկրների չհարձակման փոխադարձ պարտավորությունների փոխանակման մասին հարցը, հասկացնել տալով, որ Արևմտյան Բեռլինի վերաբերյալ համապատասխան պայմանավորվածության հասնելու դեպքում նա պատրաստ է այդ քայլին գնալ։ Անհրաժեշտ է, սակայն, նկատի ունենալ, որ վերը թվարկված բոլոր «կոմպրոմիսային առաջարկությունները» ներկայացնում էին ԱՄՆ-ի կառավարության միայն զոնդաժը։

Ըստ էության, ամերիկյան կողմը Վիեննայում հրաժարվեց լուրջ բանակցություններ վարել երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքները հանրագումարի բերելու շուրջը։ Բայց Սովետական Միության դիվանագիտական ակտիվությունն այնուամենայնիվ ստիպեց ԱՄՆ-ի կառավարությանը 1961 թվականի աշնանը բանակցություններ սկսել սովետական ներկայացուցիչների հետ միջազգային այդ պրոբլեմի կարգավորման ուղիների վերաբերյալ։

Պրեզիդենտ Քեննեդիի այդ որոշման դեմ առարկում էին ամերիկյան քաղաքական գործիչներ Ռիչարդ Նիքսոնը, Դին Աչեսոնը, սենատորներ Գոլդուոթերը, Դոդդը, Քիթինգը։ Նրանք հանդես էին գալիս Սովետական Միությանը որևէ զիջում անելու դեմ։ Պենտագոնն ու ԿՀՎ-ն նույնպես Քեննեդիի վրա ուժեղ ճնշում էին գործադրում Սովետական Միության հետ գերմանական խաղաղ կարգավորման պրոբլեմի շուրջը բանակցություններում ԱՄՆ-ի դիրքը խստացնելու նպատակով։ Այդ նույն ուղղությամբ էր գործում ԱՄՆ-ում 1961 թվականի ամառն ու աշնանը խստացվող ռազմական փսիխոզի մթնոլորտը։ Ռուսներին «զսպելու» պահանջով հանդես եկավ Թանկը։ Այդ իրադրությունում, իհարկե, դժվար էր սպասել, որ Քեննեդիի կառավարությունը իսկապես ռեալիստա-



կան մոտեցում հանդես բերեր գերմանական խաղաղ կարգավորման պրոբլեմի հարցում։ Այդպես էլ պատահեց։ 1961 թվականի աշնանը տեղի ունեցած սովետա-ամերիկյան բանակցություններում ամերիկյան կողմը շարունակում էր արգելքներ հարուցել գերմանական խաղաղ կարգավորման պրոբլեմի լուծման ուղղությամբ խաղաղասիրական պետությունների ջանքերին։

Քեննեդիի կառավարության քաղաքականությունը հույսեր չէր ներշնչում սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների ավելի լայն զարգացման առումով։ Այդ առանձնապես ակներև է դառնում Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների հանդեպ ԱՄՆ-ի կառավարության տակտիկան ուսումնասիրելու ժամանակ։

Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների «փափկացման» և ՍՍՀՄ-ից նրանց անջատելու նոր մեթոդների որոնումը զուգակցվում էր «սառը պատերազմի» հին դոգմաներին դիմելու հակվածության հետ։ Պրեզիդենտը և նրա հիմնական օգնականները գերի էին այդ դոգմաներին և նրանցից չէին հրաժարվում։ Դրանով իսկ բնորոշվում էր Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների հանդեպ նրանց քաղաքականության ժառանգորդությունը Էյզենհաուեր—Դալլես գծի վարած քաղաքականության հարցում։

Դեռևս 1960 թվականի նախընտրական կամպանիայի ժամանակ Քեննեդին իր ելույթներից մեկում ասել է. «Մենք սպասում ենք այն օրվան, երբ ստրկացած երկրների ժողովուրդները կրկին հայտնվեն ազատության և արդարության պայմաններում։ Դեմոկրատական ղեկավարության օրոք մենք կկատարենք մեր պլատֆորմում շարադրված պարտավորությունը՝ բոլոր միջոցներով հասնելու այդ օրվան»[16]։ Երկերեսանի՛ և, անկեղծ ասած, անմի՛տ խոսքեր։

1961 թվականի մարտի 7-ին ԱՄՆ-ի կառավարությունը կոնգրեսին նոր օրենքի նախագիծ ներկայացրեց, որը նախատեսում էր թե պրեզիդենտն իրավունք ունի տնտեսական և ֆինանսական օգնություն ցույց տալ ցանկացած պետությանը կամ շրջանին, բացառությամբ ՍՍՀՄ-ի..., այն դեպքում, երբ պրեզիդենտը որոշի, որ նման օգնությունը կարևոր է Միացյալ Նահանգների անվտանգության համար։ Այդ

դրույթի հակասովետական ուղղվածությունը կասկած չի հարուցում։ Հետագա տարիները ցույց տվեցին, որ Քեննեդիի կառավարությունը ձգտում էր ամենատարբեր մեթոդներով անջատել սոցիալիստական երկրները ՍՍՀՄ-ից։ Այդ նպատակի իրագործումը շարունակեց Ջոնսոնը, երբ դարձավ ԱՄՆ-ի պրեզիդենտ։ «Կամուրջներ անցկացնելու» քաղաքականությունը հանդիսանում էր «ճկուն մեթոդների» օգտագործման Քեննեդիի գծի զարգացումը, որի նպատակն էր հասնել «սոցիալիստական համագործակցության էրոզիայի»։

Քեննեդիի կառավարությունը ոչ միայն նոր լծակներ էր որոնում սոցիալիստական համագործակցությունը «փափկացնելու» համար, այլև ակտիվորեն դիմում էր հին միջոցներին։ Այսպես, Քեննեդիի կառավարության օրոք շարունակում էր գործել դեռ 1951 թվականին ընդունված «փոխադարձ անվտանգության ապահովման» մասին օրենքում «Քերստենի կատարած ուղղումը»։ Քերստենի ուղղման համաձայն ԱՄՆ-ը տարեկան մինչև 100 մլն դոլար էր ծախսում Սովետական Միությունում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Ալբանիայում կամ «կոմունիստների կողմից օկուպացված» մյուս շրջաններում կամ այնտեղ, ուր իշխում են կոմունիստները, կամ «Սովետական Միության կողմից կլանված» ամեն մի երկրում, կամ այդ երկրներից փախած անձանց քայքայիչ գործունեության համար, կամ նրանց Հյուսիսատլանտյան պայմանագիրը պաշտպանող զինված ուժերի ստորաբաժանումների մեջ միավորելու, կամ այլ նպատակներով օգտագործելու համար, երբ պրեզիդենտը որոշի, որ այդպիսի օգնությունը կարող է նպաստել Հյուսիսատլանտյան շրջանի պաշտպանությանը և Միացյալ Նահանգների անվտանգությանը։ Եվ Քեննեդիի կառավարությունը գործում էր ԱՄՆ-ի համար այդ խայտառակ օրենքին համապատասխան, օրենք, որը սոցիալիստական երկրների նկատմամբ քայքայիչ գործունեությունը պետական քաղաքականության մակարդակի էր բարձրացնում։

Առևտրատնտեսական հարաբերությունների բնագավառում Քեննեդիի և այնուհետև Ջոնսոնի կառավարությունները հետևվում էին սովետա-ամերիկյան առևտրի կրճատման և սառեցման դեռևս 50-ական թվականների կուրսին։



Ինչպես հայտնի է, բոլոր ժամանակներում արտաքին առևտուրը դիտվում էր որպես երկկողմանի հարաբերությունների ամրապնդման հուսալի միջոց։ Տնտեսական կապերն ամրապնդում, ավելի կայուն են դարձնում քաղաքական կապերը։ Այդ պրոցեսում կոչված են մեծ դեր խաղալու նաև քաղաքագետները, որոնք օգնում են պետությունների հարաբերությունների փոխշահավետ հիմքով զարգացմանը և ամրապնդմանը։ Փոխշահավետ տնտեսական կապերի ակտիվ զարգացումն առանձնապես մեծ նշանակություն ունի սոցիալական տարբեր բազիս ունեցող՝ սոցիալիստական և կապիտալիստական երկրների համար։ Սոցիալիստական և կապիտալիստական աշխարհը, ինչպես հայտնի է, անհաշտ գաղափարախոսություններ ունեն։ Սոցիալիստական և բուրժուական քաղաքականությունն ու դիվանագիտությունը շատ հարցերի շուրջ են ընդհարվում միջազգային ասպարեզում։ Այդ նրանց միջև լարվածության որոշակի վիճակ է պահպանում։ Այդ պայմաններում երկու կողմերի համար շահավետ տնտեսական և գիտատեխնիկական կապերը բնական կայունացնող գործոն են դառնում։ Խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքներին հավատարիմ Սովետական Միությունը միշտ ձգտել է կապիտալիստական աշխարհի հետ փոխշահավետ տնտեսական կապերի զարգացմանը։ Դրան են ձգտում նաև սոցիալիստական մյուս երկրները։ Ինքնըստինքյան այդ առողջ պրոցես է։ Ապագան նրանն է։

60-ական թվականներին սոցիալիստական և կապիտալիստական պետությունների միջև տնտեսական կապերի զարգացման մեջ նոր «ստորջրյա քարեր», նոր բարդություններ ի հայտ եկան։ Դրանք, նախ և առաջ, կայանում էին նրանում, որ մի շարք կապիտալիստական երկրների կառավարություններ ձգտում էին տնտեսական, այդ թվում և առևտրական, լծակներն օգտագործել իրենց քաղաքական նպատակներին հասնելու, սոցիալիստական համագործակցության միասնությունը խախտելու համար։ Առանձնապես մեծ հակվածություն էին հանդես բերում այդ քաղաքականության նկատմամբ ԱՄՆ-ի կառավարությունն ու դիվանագիտությունը։

Տակտիկական առումով, երբ հարցը վերաբերում էր տընտեսական և գիտատեխնիկական կապերին, ԱՄՆ-ը փորձում էր սոցիալիստական երկրների նկատմամբ ընտրողականության քաղաքականություն անցկացնել։ Այդպիսի քաղաքականությամբ ԱՄՆ-ը ձգտում էր սոցիալիստական երկրների միջև սեպ խրել։ Այդ ստրատեգիայում նշմարվում է հին, իրեն չարդարացրած մոտեցումից հրաժարվելը, երբ ԱՄՆ-ը պարզապես ձգտում էր շրջափակել ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ առևտրի զարգացումը։ Եվ այսօր ամերիկյան արտաքին քաղաքականությունը զինվում է ընտրողականության մոտեցման ավելի «հնարամիտ տակտիկայով»։ Սոցիալիստական որոշ երկրների հետ ԱՄՆ-ը առևտուր է անում, իսկ մյուսների հետ՝ բաց էության, ոչ։ Ոմանց նա առաջարկում է առավելագույն բարենպաստության ռեժիմ, իսկ մյուսներին՝ ոչ, վերջիններիս հետ առևտուրը սահմանելով խտրականության օրինածներով և միջոցառումներով։ ՍՍՀՄ-ի նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնն ընդհուպ մինչև 60-ական թվականների վերջերը արտաքին առևտրի հարցում զուտ նեգատիվ դիրք էր բռնում։

ԱՄՆ-ի կառավարող շրջաններում Քեննեդիի պրեզիդենտության տարիներին չկար, սակայն, միասնական կարծիք տնտեսական լծակների օգտագործման տակտիկայի մասին, երբ հարցը վերաբերում էր սոցիալիստական երկրներին։ Բավական է նշել, որ 1962 թվականին առևտրի մասին կոնգրեսի ընդունած օրենքը կրկին հաստատեց այն դրույթը, համաձայն որի առավելագույն բարենպաստության ռեժիմը սոցիալիստական երկրներին չպետք է տրամադրել։ Այս առումով առևտրի զարգացման մասին նոր օրենքը 1951 թվականի առևտրի մասին օրենքի դրույթների ուղղակի շարունակությունն էր։ Նոր օրենքի 231-րդ հոդվածում ասվում էր, որ սոցիալիստական երկրների հանդեպ խտրականության քաղաքականությունը տարվում է ԱՄՆ-ի պրեզիդենտի կողմից այն ժամանակ, երբ հարցը վերաբերում է «ցանկացած երկրի կամ ռեգիոնի, որտեղ իշխում կամ հսկողություն է իրականացնում կոմունիզմը»[17]։

Պրեզիդենտ Քեննեդին և նրան շրջապատող ազդեցիկ շատ անձինք այդպիսի խիստ տակտիկան ԱՄՆ-ի համար առավել



նպատակահարմար չէին գտնում։ Արդյունքը եղավ այն, որ երբ 1963 թվականին ադմինիստրացիան կոնգրեսի միջոցով կարողացավ անցկացնել տարեկան «օգնության» մասին օրենքը, 402-րդ հոդվածը պրեզիդենտին իրավունք էր վերապահում առավելագույն բարենպաստության ռեժիմը տարածել սոցիալիստական երկրների վրա, «եթե նա որոշի, որ այդպիսի մոտեցումը համապատասխանելու է ազգային շահերին (ԱՄՆ-ի— Ա. Գ.), նպաստելու է երկրի կամ ռեգիոնի անկախությանը, թուլացնելու է այնտեղ կոմունիզմի իշխումը կամ հսկողությունը...»[18]։

1965 թվականի փետրվարին, պրեզիդենտ Ջոնսոնի օրոք, ԱՄՆ-ի սենատի արտասահմանյան գործերի գծով հանձնաժողովը հրապարակեց Արևելքի ու Արևմուտքի միջև առևտրական քաղաքականության փաստաթղթերի հավաքածուն և վերլուծության զեկուցագիրը[19]։ Այդ հրատարակության նախաբանում հանձնաժողովի նախագահ Ջ. Ֆուլբրայթը խոստովանեց, որ «ազատ աշխարհի երկրների և կոմունիստական երկրների միջև առևտուրը վերջին տարիներին արագ ընդարձակվում է, ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների համար հարուցելով բազմաթիվ քաղաքական պրոբլեմներ»[20]։ Երրորդ բաժնում, որ կրում էր «Ընտրողականության հսկողության քաղաքականությունն ամրապնդում է ազատ աշխարհը» խորագիրը, զեկուցագրի հեղինակներն արձանագրում էին, որ տնտեսական գործողություններն ունեին իրենց «ազդեցության սահմանը» և կոչ էին նում ընդլայնել սոցիալիստական երկրների հետ ԱՄՆ-ի «ոչ ստրատեգիական ապրանքներիս առևտուրը»։ Նրանք ստիպված էին խոստովանել, որ ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ի արևմտաեվրոպական դաշնակիցները ՍՍՀՄ-ի հետ ակտիվ առևտուր են անում։

Զեկուցագրում նշվում էր նաև, որ «1962 թվականին արդյունաբերական երկրներից ներմուծումը կազմում էր սովետական համախառն ազգային արտադրանքի ընդամենը 0,5%-ը»[21]։ Այստեղից եզրակացություն էր արվում, որ «սովետական բլոկի հետ ոչ ստրատեգիական ապրանքներով Արևմուտքի առևտուրը կամ նրա բացակայությունը չեն կարող անդրադառնալ սովետական ռազմական հնարավորությունների վրա»[22]։ Սակայն, նման եզրակացության գալով, զեկու-

ցացրի հեղինակները ոչ թե փոխշահավետ առևտրի զարգացման, այլ սոցիալիստական համագործակցությունը «փափկացնելու» ուղղությամբ ավելի ճկուն տակտիկայի կոչ էին անում: 101-րդ հոդվածը, որն ընդգրկում էր դեռևս 1951 թվականին ընդունված Բեթլի հակակոմունիստական օրենքը, կոչ էր անում «օգնել օտարերկրյա ագրեսորների տիրապետության տակ գտնվող պետությունների ժողովուրդներին վերականգնելու իրենց ազատությունը... Ներկայումս այնպիսի շրջան է սկսվում, երբ Արևելյան Եվրոպայի երկրներում առկա է ճիշտ այդպիսի զարգացման հնարավորություն. այդ արդարացնում է ԱՄՆ-ի քաղաքականության մոդիֆիկացումը դրանցից մի քանիսի հանդեպ: Ուստի ընտրողականության հսկողության քաղաքականությունը չի կարող անցողիկ նշանակություն ունենալ»[23]: Արտասահմանյան գործերի գծով հանձնաժողովի զեկուցագրում անկեղծ արտահայտված հենց այդ նպատակն էլ իրագործվեց 50-ական—60-ական թվականներին:

Սոցիալիստական երկրների հետ առևտրի ոլորտում ԱՄՆ-ի կառավարության վերը նշված մոտեցման հետևանքով 1962 թվականին ամերիկյան արտահանումը ՉՍՍՀ կազմեց ընդամենը 7172 հազ. դոլար, իսկ ՉՍՍՀ-ից ներմուծումը՝ 9989 հազ. դոլ., 1963 թվականին՝ համապատասխանաբար 9790 հազ. և 10 357 հազ. դոլար[24]:

Հունգարիայի հետ ԱՄՆ-ի առևտուրը 1962 թվականին կազմում էր. արտահանումը՝ 836 հազ. դոլ., ներմուծումը՝ 1813 հազ. դոլ., 1963 թվականին՝ համապատասխանաբար 17 280 հազ. և 1585 հազ. դոլ.[25]:

Ռումինիայի հետ ԱՄՆ-ի առևտուրը 1962 թվականին կազմում էր. արտահանումը՝ 802 հազ. դոլ., ներմուծումը՝ 626 հազ. դոլ., 1963 թվականին՝ համապատասխանաբար 1249 հազ և 789 հազ. դոլ.[26]:

ԳԴՀ-ի հետ ԱՄՆ-ի առևտուրը 1962 թվականին կազմում էր. արտահանումը՝ 1698 հազ. դոլ., ներմուծումը՝ 3096 հազ. դոլ., 1963 թվականին՝ համապատասխանաբար 6403 հազ. և 3131 հազ. դոլ.[27]:

Բոլորովին այլ է պատկերը ամերիկա-լեհական առևտրում, որտեղ գործում էր առավելագույն բարենպաստության սկզ-



բունքը: 1962 թ. ամերիկյան արտահանումը ԼԺՀ հավասար էր 94 454 հազ. դոլ., իսկ ներմուծումը՝ 45 836 հազ. դոլ., 1963 թ.՝ համապատասխանաբար 108 397 հազ. և 43 119 հազ. դոլ.[28]:

Ինչ վերաբերում է սովետա-ամերիկյան առևտրին, ապա Քենեդիի պրեզիդենտության տարիներին այն արտահայտվում էր հետևյալ թվերով: 1962 թվականին արտահանումն ԱՄՆ-ից ՍՍՀՄ կազմում էր ընդամենը 15 297 հազ. դոլ., իսկ ներմուծումը՝ 16 136 հազ. դոլ., 1963 թվականին՝ համապատասխանաբար 28 մլն. և 25 մլն. դոլար[29]:

1962 թվականի մայիսին ԱՄՆ-ի առևտրի մինիստրությունը ՍՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների մեծ մասի նկատմամբ առևտրական քաղաքականությունն է՛լ ավելի խստացրեց: Կազմվեց ապրանքների լրացուցիչ ցուցակ, որոնք կարող էին սոցիալիստական երկրներ արտահանվել միայն հատուկ լիցենզիաներ ստանալուց հետո: 1962 թվականի հունիսի 1-ից այդ լիցենզիաների հանձնման բուն ընթացակարգն է՛լ ավելի բարդացվեց:

1962 թվականի հունիսի վերջերին Վաշինգտոնը նոր ջանքեր գործադրեց սովետա-ամերիկյան առևտրի խոչընդոտման ուղղությամբ: ԱՄՆ-ի կոնգրեսը հավանություն տվեց «Արտահանման նկատմամբ հսկողության մասին 1949 թվականի օրենքի» երեք տարով հերթական երկարացմանը: Այսպիսով, սովետա-ամերիկյան առևտուրը շրջափակելու դեմոկրատների ջանքերը լրացվեցին ԱՄՆ-ի կոնգրեսի այդ ուղղությամբ ընդունած համապատասխան որոշումներով: Արտահանման նկատմամբ հսկողության մասին օրենքի տեքստում ուղղում մտցվեց, որի համաձայն սոցիալիստական երկրներ առաքվող ամերիկյան ապրանքներին լիցենզիա տալիս հաշվի էր առնվում դրանց ոչ միայն «ռազմական», այլև «տնտեսական» նշանակությունը: Նման պայմաններում սովետա-ամերիկյան տնտեսական հարաբերությունները, ինչպես և սոցիալիստական երկրների հետ ԱՄՆ-ի տնտեսական կապերը, իհարկե, չէին կարող արդյունավետ զարգանալ:

Ամերիկյան այդպիսի քաղաքականությանն ակնհայտ հակադրության մեջ էր գտնվում Արևմտյան Եվրոպայի կա-

ցիալիստական պետությունների և սոցիալիստական երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման պոզիտիվ տենդենցների հետ։ Եթե, օրինակ, վերցնենք ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ի նույնիսկ մերձավոր դաշնակիցների հետ սոցիալիստական երկրների արտաքին առևտրական տվյալները, ապա դրանք 1963 թվականին միանգամայն այլ պատկեր են ներկայացնում։ ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ի արևմտաեվրոպական դաշնակիցների արտահանումը սոցիալիստական երկրներ[30] 1963 թվականին կազմում էր, ամերիկյան տվյալներով, 2 117 900 հազ. դոլ., այն դեպքում, երբ ԱՄՆ-ի նույնանման արտահանումը հազիվ 203 100 հազ. դոլարի էր հասնում։ Ինչ վերաբերում է սոցիալիստական երկրներից ՆԱՏՕ-ի արևմտաեվրոպական երկրներ կատարվող ներմուծմանը, ապա 1963 թվականին այն կազմում էր 2663 մլն. դոլ., այն դեպքում, երբ ԱՄՆ-ի նույնանման ներմուծումը հավասար էր ընդամենը 91.800 հազ. դոլարի[31]։

Այսպիսով, 1963 թվականին, Քենեդիի պրեզիդենտության վերջին տարում, ԱՄՆ-ի արտահանումը սոցիալիստական երկրներ զիջում էր ՆԱՏՕ-ի անդամ արևմտաեվրոպական երկրների արտահանմանը 10 անգամ, իսկ ներմուծումը՝ 29 անգամ։ Այդպիսի փաստի առաջ կանգնեցրեց ԱՄՆ-ի կառավարության քաղաքականությունը 60-ական թվականների կեսերին ամերիկյան գործարար աշխարհը սոցիալիստական երկրների հետ հարաբերություններում։

Եվ այսպես, սոցիալիստական երկրների հետ փոխշահավետ առևտրի զարգացման հարցում ԱՄՆ-ը Քենեդիի և այնուհետև Ջոնսոնի պրեզիդենտության տարիներին հիմնականում մնաց նախորդ ամերիկյան կառավարությունների խտրականության հին դիրքերում։ Դեռ ավելին, մի շարք հարցերում դեմոկրատների կառավարությունները խստացնում էին հսկողությունը սովետա-ամերիկյան առևտրի վրա, այն ավելի բարդ պայմանների մեջ դնելով։ 50-ական և 60-ական թվականներին սովետա-ամերիկյան առևտրի և տնտեսական կապերի մեջ դիտվող երկար կանգառման պատճառը հետևանք էր ԱՄՆ-ի պաշտոնական շրջանների, այդ թվում և Քենեդիի պրեզիդենտության շրջանում, խտրականության դիրքորոշ-



ման։ Կառավարության առանձին, կարծես թե սովետա-ամերիկյան առևտրին խթանող միջոցառումները չէին փոխում ընդհանուր խտրականության քաղաքականությունը։

1961 թվականի փետրվարին ԱՄՆ-ի կառավարությունը օրենքի նախագիծ է ներկայացնում կոնգրես (ուղղում Բեթլի օրենքում), որը ԱՄՆ-ի պրեզիդենտին իրավունք էր ընձեռում տնտեսական «օգնություն» ցույց տալ սոցիալիստական առանձին երկրների։ 1961 թ. մարտի 11-ին օրենքի այդ նախագիծը հաստատվեց սենատում։ 1961 թվականի մարտ ամսին ԱՄՆ-ի ֆինանսների մինիստր Դ. Դիլոնը հրաման արձակեց սովետական ծովախեցգետնի պահածոները ԱՄՆ ներմուծելու արգելքը վերացնելու մասին։ 1961 թվականի ապրիլին ԱՄՆ-ի առևտրի մինիստրությունը հավանություն տվեց «Սովֆրախտ» արտաքին առևտրական ընկերության հետ ամերիկյան խոշորագույն «Յունայթեդ Սթեյթս Լայնզ» նավագնացության կամպանիայի՝ սովետական ապրանքներ փոխադրելու մասին համաձայնագրին։ 1961 թվականի մայիսին պրեզիդենտ Քենեդին հատուկ կոլեգիա ստեղծեց դեպի սոցիալիստական երկրներ արտահանման լիցենզիաներ տալու հարցերի վերջնական լուծման համար։ Այդ կոլեգիայում ընդգրկվեցին առևտրի մինիստրության, պետական դեպարտամենտի և պաշտպանության մինիստրության ներկայացուցիչները։

Վերջին միջոցառման նպատակը, սակայն, ոչ թե սոցիալիստական երկրների հետ առևտրի զարգացմանն աջակցելն էր, այլ նրանց հետ առևտրի հարցում կառավարական մարմինների երաշխավորությունների շաղկապումն ու կոորդինացումը մինչև այս կամ այն որոշման պաշտոնական հայտարարությունը։ Կոլեգիայի ստեղծման համար անմիջական պատրվակ հանդիսացավ այն տարաձայնությունը, որ առաջացավ ԱՄՆ-ի առևտրի և պաշտպանության մինիստրությունների միջև, երբ նրանցից առաջինը 1961 թվականի փետրվարին հանդես եկավ ՍՍՀՄ արտահանվող հղկման հաստոցների լիցենզիա տալու օգտին, իսկ երկրորդը՝ նման որոշման դեմ էր։

1961 թվականի գարնանը սովետա-ամերիկյան առևտրի

պրոբլեմները ակտիվորեն քննարկվեցին ԱՄՆ-ի կոնգրեսում։ Մարտ ամսին հրապարակվեց «Միացյալ Նահանգները և միջուկային աշխարհը» զեկուցագիրը։ Նրանում հատուկ տեղ էր հատկացվում սոցիալիստական երկրների հետ ԱՄՆ-ի առևտրին։ Այդ զեկուցագրում ԱՄՆ-ի քաղաքականությունն առևտրի բնագավառում գնահատվեց իբրև «ստատիկ» և «պաշտպանողական»։ Ամերիկյան քաղաքական և գործարար շրջաններին կոչ էր արվում «իրենց ձեռքը վերցնել» «Արևելք—Արևմուտք» առևտրի իրականացումը։ Դրա հետ մեկտեղ զեկուցագիրը խորհուրդ էր տալիս այդ առևտուրը այնպիսի «կանոնների» հիմքի վրա կառուցել, որոնք հակասության մեջ լինեն ՍՍՀՄ-ի արտաքին առևտրի մոնոպոլիայի հետ։

Կարելի է ընդհանուր առմամբ նշել, որ Քենեդիի և Ջոնսոնի կառավարությունների գործունեության շրջանում ԱՄՆ-ի կոնգրեսը արգելակի դեր էր կատարում սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացման գործում։ Սենատորների և կոնգրեսականների այսպես կոչված «լիբերալ թևը» (Ֆուլբրայթ, Մենսֆիլդ, Մորզե, Ջերչ) սկզբունքորեն ՍՍՀՄ-ի հետ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության պոզիտիվ ակտիվացման դիրքերի վրա էր, հանդես էր գալիս հօգուտ միջազգային լարվածության թուլացման։ Բայց ամերիկյան լիբերալների մեծամասնությունն այդ հարցերում բավարար հետևողական չէր, ավելի շատ ձգտում էր սովետական արտաքին և անգամ ներքին քաղաքականությունը տանել ԱՄՆ-ի համար շահավետ ուղղությամբ, քան իրոք պայքարել միջազգային լարվածության թուլացման համար։ Բացի այդ, կոնգրեսում ամուր դիրքերի վրա էին շարունակում մնալ այն սենատորներն ու կոնգրեսականները, որոնք հանդես էին գալիս ընդդեմ ՍՍՀՄ-ի հետ որևէ կարգի հարաբերությունների բարելավման, մշտապես հակակոմունիստական և հակասովետական հիստերիա էին սանձազերծում (Ջեքսոն, Դոդդ, Քիթինգ և ուրիշներ)։

Սակայն, հարց է ծագում, իսկ ինչպիսի՞ն էր Ամերիկայի գործարար աշխարհի վերաբերմունքը այդ ռեակցիոն ստրատեգիական գծի հանդեպ։ Միակողմանի պատասխան այստեղ



չի կարող լինել։ Գաղտնիքը նրանում է, որ ԱՄՆ-ի ֆինանսաարդյունաբերական առաջատար խմբավորումները, որ զգալի չափով հսկում էին Սպիտակ տան և կոնգրեսի գործունեությունը, շարունակում էին իրենց համար շահավետ համարել, առաջին հերթին քաղաքական նկատառումներով, սովետա-ամերիկյան հարաբերությունները սառեցված վիճակում պահելը։ Բայց այդպիսի մոտեցումը գնալով ավելի մեծ հակասության մեջ էր ընկնում ռեալ իրականության և արդի միջազգային կյանքում երևան եկող նոր տենդենցների, 70-ական թվականների սկզբներին միջազգային ասպարեզում ուժերի բաշխման, ամերիկյան շատ ֆիրմաների և ընկերությունների շահերի հետ, որոնք գիտակցում էին, որ քաղաքական նկատառումներով փակում են իրենց մուտքը դեպի հեռանկարային սոցիալիստական շուկա։ Երբ 1964—1965 թվականներին ԱՄՆ-ի սենատի արտասահմանյան գործերի գծով հանձնաժողովը քննարկման դրեց Արևմուտքի և Արևելքի, ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև առևտրի պրոբլեմները, ապա պարզվեց, որ այդ քանավեճին մասնակցող մեծ թվով գործարար անձինք, խոշոր ֆիրմաների ներկայացուցիչներ հանդես եկան հօգուտ սոցիալիստական երկրների հետ առևտրի։

Հանձնաժողովն ԱՄՆ-ի գործարար աշխարհի 214 ներկայացուցիչների նամակ ուղարկեց, խնդրելով կարծիք հայտնել Արևելքի և Արևմուտքի միջև առևտրի պրոբլեմների շուրջը։ Նա ստացավ 125 պատասխան։ Նրանցից 105-ում խոշոր բիզնեսմենները հանդես էին գալիս հօգուտ սոցիալիզմի երկրների հետ առևտրի ընդարձակման և միայն դրանցից իննում էր հակառակ կարծիք հայտնվում[32]։ Մյուսները որոշակի տեսակետ չունեին։ Ըստ որում բնորոշ է, որ մի շարք նամակներում գործարար մարդիկ, ինչպես նշվում է զեկուցման մեջ, «կարծիք հայտնեցին, որ հույս ունեն ստանալ կառավարության խորհուրդն այդ կարգի առևտրի նպատակահարմարության առթիվ»[33]։ Սովետական կողմի հետ գործեր վարող 47 բիզնեսմեններ բավարարվեցին դրանց ընթացքով, և միայն երեքը բացասաբար արտահայտվեցին «իրենց փորձի» մասին։

Գործարար մարդկանց կարծիքը բաժանեցին նաև շատ

ամերիկյան բանկիրներ։ Հարցումներ ուղարկվեցին 31 բանկիրի. պատասխանեցին 20-ը։ Հօգուտ այն բանի, որպեսզի արտահանման-ներմուծման բանկը մասնակցի սոցիալիստական երկրների հետ ամերիկյան ֆիրմաների գործարքների ֆինանսավորմանը, արտահայտվեցին 13-ը և միայն չորսը բացասաբար վերաբերվեցին դրան[34]։

Բերված տվյալները խոսում են այն մասին, որ ամերիկյան գործարար աշխարհի ընդերքում, անգամ ռազմաարդյունաբերական կոմպլեքսի ճնշման տակ իրականացվող կառավարական բացասական մոտեցման պայմաններում, արդեն այն ժամանակ ի հայտ եկան կայուն տրամադրություններ հօգուտ սոցիալիստական երկրների հետ առևտրի։ Ընդհանրապես կարելի է նշել, որ սոցիալիստական երկրների հանդեպ ԱՄՆ-ի կառավարության երկար տարիների ընթացքում վարած խտրականության քաղաքականությունը չափազանց բարդացրեց այդ առևտրի պրոբլեմներն ու նրա զարգացումը։

Սովետա-ամերիկյան տնտեսական կապերի կրճատման և սառեցման Քենեդիի և Ջոնսոնի կառավարությունների ընտրած կուրսը մեծ վնաս հասցրեց նրանց և միայն հետագայում, հանրապետականների օրոք, սկսեց շտկվել, սակայն, ռազմաարդյունաբերական կոմպլեքսի, սիոնիստական լոբբիների և նրանց հետ կապված այլ ուժերի՝ կոնգրեսում սանձազերծած ակտիվ օպոզիցիայի պայմաններում։

## ԳԼՈՒԽ V

# ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿՈՒՐՍՆ ԱՍԻԱՅՈՒՄ՝ ԼԱՅՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՆԱԽԱՍԿԻԶԲ

60-ական թվականներին մեծ դավաղանի հին քաղաքականությունը, որը դեռևս XX դարի սկզբին անցկացնում էր Թեոդոր Ռուզվելտը, սկսեց հաճախակի վերհիշումներ թույլ տալ։ Պլայա Խիրոնում, Կուբայի դեմ ագրեսիայի ժամանակ, ԱՄՆ-ի վարձկանները ջախջախվեցին։ Վիետնամում ԱՄՆ-ը ավելի ու ավելի խորն էր խրվում հակաժողովրդական պատերազմի ճահճում։ Միաժամանակ, գիտակցելով բացառապես ռազմական մեթոդների օգտագործման անհեռանկարությունը, ԱՄՆ-ի կառավարությունը մի շարք ռեգիոններում փորձում էր զարգացող երկրների նկատմամբ վարած արտաքին քաղաքականության մեջ ճկունության տարրեր մտցնել։ Միջազգային հարաբերությունների մոտեցման մեջ այդ նոր տարրերը չէին նշանակում, իհարկե, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության որևէ արմատական փոփոխություն, բայց վկայում էին, որ նրա հին ժանդարմական դոկտրինաներն ու մեթոդները ժամանակի փորձությանը չէին դիմանում։

Ո՞րն էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմքը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի զարգացող երկրների հանդեպ։

Փաստերը ցույց են տալիս, որ այդ հիմքը կազմում էին ամերիկյան բուրժուազիայի դասակարգային շահերը։ Նրա էությունը կայանում էր հետևյալում՝ ԱՄՆ-ը իրավունք ունի, երբ ցանկանա, միջամտել մյուս պետությունների ներքին գործերին՝ «կոմունիստների հաղթանակն այնտեղ թույլ չտալու» նպատակով (պաշտոնական Վաշինգտոնում հաճախ կոմունիստ են անվանում բոլոր նրանց, ովքեր պայքարում են իրենց երկրի իսկական անկախության համար)։ ԱՄՆ-ն իրեն «ազատությունը պաշտպանելու» կամ, այլ խոսքերով ասած, մյուս երկրներում ամերիկյան մենաշնորհների համար ցանկալի և հարմար կարգեր հաստատելու իրավունք էր վերապահում։ «Ազգային շահերի» նման դոկտրինա էր անդադար պրոպագանդում պետական քարտուղար Դ. Ռասկը։

Այդպիսի դոկտրինան, բնականաբար, չէր կարող դուր գալ անկախ պետություններին։ Այն միայն փտած, հակաժողովրդական, ամերիկյան իմպերիալիստների հաշվին գոյությունը պահպանող ռեժիմների սրտով էր։ Հենց նրանց էլ ամերիկյան կապիտալիզմը միշտ հաճույքով ռազմական և տնտեսական մեծ «օգնություն» էր ցույց տալիս տվյալ երկրում «ազատությունը պահպանելու համար»։ Ամերիկյան արտաքին քաղաքականությունը՝ «համաշխարհային ժանդարմի» քաղաքականությունը խոր հակասության մեջ էր դրվում XX դարի միջազգային հարաբերությունների ոգու հետ՝ ժողովուրդների դեպի սոցիալիզմ, անկախություն և սոցիալական առաջընթաց ձգտման դարաշրջանում։

Զարգացող երկրների հանդեպ ամերիկյան քաղաքականության վրիպումները խորը անհանգստություն էին առաջացնում դեմոկրատների կառավարության շրջանում։ Բացառություն չէր կազմում և Քենեդիի կառավարությունը։ Ձգտելով իր ազդարարած «նոր սահմանագծերը» գրավիչ դարձնել զարգացող երկրների համար, Քենեդին փորձեց, ինչպես իրեն էր թվում, ԱՄՆ-ը ավելի համոզիչ տեսքով ներկայացնել տնտեսական, սոցիալական և քաղաքական առաջընթացի պաշտպանի դերում։ Նա ինքն էլ ձգտում էր ժողովուրդների առաջ ներկայանալ որպես ռեֆորմների և դեմոկրատիայի կողմնակից։ Աշխարհով մեկ տարածվում էր այն վերսիան, որ ամերիկյան նոր պրեզիդենտն ու նրա կառավարությունը հավանություն չեն տալիս տիրանական ռեժիմներին։ Ամերիկյան արտաքին քաղաքականության պրակտիկան այլ բան էր վկայում։ Գործնականում ԱՄՆ-ը ձգտում էր հանդարտեցնել հեղափոխական ալիքը Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում, պատրանքներ ստեղծել ԱՄՆ-ի քաղաքական կուրսի արմատական փոփոխությունների մասին։



Ինչ վերաբերում է աջ ռեակցիոն ռեժիմներին, ապա դեմոկրատների դիրքը նրանց նկատմամբ կախված էր հանգամանքներից։ Եթե դա ԱՄՆ-ի կառավարական շրջաններին ցանկալի էր, ապա այս կամ այն դիկտատորական ռեժիմի նկատմամբ երբեմն ցուցադրական քայլեր էին ձեռնարկվում, ավելի շատ աղմկալի, քան գործնական։ Դրա հետ մեկտեղ ԱՄՆ-ի պատմության մեջ, այդ թվում և Քենեդիի պրեզիդենտության շրջանում, չի եղել դեպք, որ նա իր տնտեսական, քաղաքական և ռազմական աջակցության ուժով նպաստի գաղութատիրական կարգերի և ռեակցիոն ռեժիմների տապալմանը, օգնի առաջադեմ կառավարության իշխանության հաստատմանը։ Փոխարենը հակառակ ուղղությամբ գործողությունների օրինակներ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ որքան ասես կարելի է բերել։ Հիշենք Գվատեմալայն և Կուբան, Դոմինիկյան հանրապետությունը և Վիետնամը, գեներալ Ֆրանկոյին և դիկտատոր Սալազարին, Կոնգոն (Քինշասան) և Հարավային Ռոդեզիան։ Ամերիկյան արտաքին քաղաքականությունն իրականում ամենևին էլ «ազատության պաշտպանությունը չէր», այլ այն, որպեսզի ի շահ մենաշնորհների դոլարի օգնությամբ և անգամ զենքի կիրառմամբ պաշտպանել և տարածել ռեակցիոն ռեժիմները, կանխելով կապիտալիզմի համար «վտանգավոր» սոցիալական ռեֆորմները։

Քենեդիի օրոք ԱՄՆ-ի կառավարությունը սկսեց ակտիվորեն սիրաշահել մի շարք զարգացող երկրների կառավարող խմբավորումներին և օպոզիցիայի ազդեցիկ ներկայացուցիչներին։ Վաշինգտոն են հրավիրվում պետական գործիչներ, որոնց հետ Ջոն Ֆոսթեր Դալլեսի ժամանակներում ոչ մեկի մտքով էլ չէր անցնի հանդիպել։

Զարգացող երկրները միջազգային ասպարեզում սկսում էին մեծ դեր խաղալ։ Անտեսել չեզոք պետություններին, գտնում էին Վաշինգտոնում, առավել ևս վանել նրանց ԱՄՆ-ից նշանակում էր սխալ ճանապարհով գնալ։ Աստիճանաբար նոր մոտեցում է հաստատվում՝ պահպանել նրանց կապիտալիստական Արևմուտքի ոլորտում, բայց որում, հնարավորության սահմաններում «դեմոկրատական» և «ճկուն» մեթոդներ կիրառելով։

Ելնելով միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի ստրատեգիական նպատակներից, դեմոկրատների կառավարությունն իր ասիական արտաքին քաղաքականության ակտիվացման կուրս վերցրեց։ Դեմոկրատները նպատակադրվեցին ավելի լայնորեն օգտագործել դիվանագիտական, տնտեսական և, հարկ եղած դեպքում, ռազմական միջոցների զինանոցը, քան այդ արվում էր Էյզենհաուերի կառավարության ժամանակ։ Ասիայում Քենեդու կառավարության գործունեության սկզբունքների ու մեթոդների այդ ամբողջ տարապատկերն ակներևաբար դրսևորվում է այն ժամանակի այնպիսի հանգուցային պրոբլեմներում, ինչպես լաոսյանը և վիետնամականը, Հնդկաստանի և Պակիստանի նկատմամբ վարած քաղաքականությունը։ Լաոսում և Վիետնամում առաջին պլան էին մղվում ռազմական ճնշման մեթոդները։ Հնդկաստանում և Պակիստանում ակտիվորեն կիրառվում էին նեոգաղութատիրական ստրատեգիա և տակտիկա։

1961 թվականի մայիսին Քենեդին փոխպրեզիդենտ Ջոնսոնին պատասխանատու քաղաքական ուղերթի է ուղարկում, որը նպատակ ուներ անցկացնել Ասիայի՝ ամերիկյան ազդեցության կարևորագույն «կենտրոնում» գործերի վիճակի առաջին հետախուզությունը։ Ջոնսոնն այցելեց Հարավային Վիետնամ, Ֆիլիպիններ, Տայվան, Տաիլանդ, Հնդկաստան և Պակիստան։ Ամենուր Ջոնսոնը հանդես էր գալիս որպես «ԱՄՆ-ի պրեզիդենտի անձնական էմիսար»։ Ասիայի երկրներ կատարած այդ այցելությունն ավելորդ անգամ ընդգծեց, որ դեմոկրատների ադմինիստրացիան գործունեության հենց սկզբից կուրս վերցրեց, որպեսզի փորձի ոչ միայն պահպանել, այլև ամրապնդել ԱՄՆ-ի դիրքերն այդ ռեգիոնում։



Ջոնսոնի այցելած առաջին «կետը» Հարավային Վիետնամն էր։ Սայգոնում փոխպրեզիդենտը հանդիպեց դիկտատոր Նգո Դիեմի հետ։ Նրանց բանակցությունների ավարտից հետո հրապարակվեց համատեղ կոմյունիկե, որը ոչ մի կասկած չէր թողնում, որ ամերիկյան նոր կառավարությունը շարունակելու է պահպանել Վիետնամի ժողովրդի գործերին միջամտելու կուրսը։ Կոմյունիկեում, մասնավորապես, նշվում էր, որ Վաշինգտոնն ու հարավվիետնամական ռեժիմը պայմանավորվեցին ընդարձակել Հարավային Վիետնամին ԱՄՆ-ի ռազմական և տնտեսական «օգնության» գոյություն ունեցող ծրագիրը։ Հայտարարվեց նաև սայգոնյան ռեժիմի կանոնավոր բանակի ավելացման և այն մասին, որ ԱՄՆ-ը «ամեն անհրաժեշտ» օգնությունը ցույց կտա լրացուցիչ ստորաբաժանումների սպառազինության ուղղությամբ՝ ազգային-ազատագրական շարժման ուժերի դեմ պայքարելու համար։ Նշվում էր, որ ԱՄՆ-ը սպառազինելու է նաև հարավվիետնամական ոստիկանությունը։ Հայտարարվում էր նաև, որ երկու կառավարությունները հանդես են գալիս մյուս «ազատ պետությունների» կողմից Սայգոնին ցուցաբերվող «օգնությունը» ընդարձակելու օգտին՝ Վիետնամի հայրենասերների դեմ պայքարն ուժեղացնելու համար։

Դրա հետ մեկտեղ Սայգոնում տեղի ունեցած բանակցություններում ամերիկյան կողմը որոշակի ուշադրություն նվիրեց Հարավային Վիետնամի սոցիալական և տնտեսական պրոբլեմներին։ Որոշում ընդունվեց «ֆինանսական հատուկ պլան» մշակելու մասին, որը նախապատրաստելու էին ամերիկյան մասնագետները հարավվիետնամական ռեժիմի ներկայացուցիչների հետ միասին։ Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, սայգոնյան կլիկի ներկայացուցիչների հետ Ջոնսոնի բանակցություններում հիմնական տեղը զբաղեցնում էին հենց ռազմական հարցերը, իսկ սոցիալ-տնտեսական պրոբլեմների լուծման ուղիները շոշափվում էին ավելի շատ ԱՄՆ-ի ինտերվենցիոնիստական կուրսից համաշխարհային հասարակայնությանը շեղելու համար։ Պրոպագանդիստական նպատակներով հայտարարվեց նաև, որ երկու կառավարությունները ձգտելու են նաև Հարավային

Վիետնամի գյուղատնտեսության, առողջապահության, կրթության, ձկնորսության և արդյունաբերության «հետագա առաջընթացին»։ Զարմանալի չէ, որ կոմյունիկեում նշված այդ տնտեսական և սոցիալական խնդիրներից ոչ մեկն այդպես էլ չկատարվեց։ Այդ բոլորը մոռացնել տվեցին Հարավային Վիետնամում ծավալված ռազմական գործողությունները։ Հարավային Վիետնամ փոխպրեզիդենտ Ջոնսոնի կատարած այցելությունը, այդպիսով, այդ երկրի գործերին ԱՄՆ-ի միջամտության էսկալացման ևս մի նոր աստիճան հանդիսացավ։

Ֆիլիպինների պրեզիդենտ Կառլոս Գարսիայի հետ Ջոնսոնի հանդիպումը նվիրված էր Հարավ-Արևելյան Ասիայում իրադրության և Ֆիլիպինների ու ԱՄՆ-ի միջև տնտեսական հարաբերությունների պրոբլեմների քննարկմանը։ Այդ բանակցությունների ժամանակ ԱՄՆ-ի փոխպրեզիդենտը փորձում էր Ֆիլիպինները ներքաշել Վիետնամում ամերիկյան ավանտյուրայի մեջ, փաթաթել այդ երկրին ԱՄՆ-ի ռազմական քաղաքականությունը Հարավ-Արևելյան Ասիայում։ Դրա հետ մեկտեղ ԱՄՆ-ի կառավարությունը ստիպված էր համաձայնություն տալ քննարկել տնտեսական բնույթի մի շարք պրոբլեմներ, որ առաջ քաշեց Գարսիայի կառավարությունը։ Օգտագործելով տնտեսական նպաստները, ԱՄՆ-ի կառավարությունը ձգտում էր ստիպել ֆիլիպինցիներին ներգրավվել ասիական մայրցամաքում բորբոքվող ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարին։

Ջոնսոնի ուղևորությունը շարունակվում էր։ 1961 թվականի մայիսի 15-ին, Չան Կայշիի հետ բանակցություններից հետո հրապարակվեց համատեղ կոմյունիկե։ Այստեղ առանձնապես վառ դրսևորվեցին ԱՄՆ-ի էքսպանսիոնիստական պլանները Ասիայում։ Այդ բանակցությունների գլխավոր թեման «Ասիայի ազատ պետությունների դեմ կոմունիստական ագրեսիայի սպառնալիքն էր»։ Ջոնսոնը Չան Կայշիին խոստացավ, որ Միացյալ Նահանգները շարունակելու են հանդես գալ Ասիայում իրենց դաշնակիցների կողմում, որ ՉԺՀ-ն ճանաչելու մտադրություն չունեն և, առավել ևս, շարունակելու են հանդես գալ ՉԺՀ-ն ՄԱԿ-ի անդամ ընդունելու դեմ։ Պատմությունը



ցույց տվեց, թե որքան անբարեխիղճ էին պաշտոնական Վաշինգտոնի այդ խոստումները։ Ջոնսոնը և Չան Կայշին եզրակացության եկան, որ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները Ասիայում պետք է նոր միջոցներ ձեռնարկեն իրենց միջև համագործակցությունն ամրապնդելու համար։

Ջոնսոնի այցելած հաջորդ երկիրը Տաիլանդն էր։ Այստեղ նույնպես խոսակցություն գնաց այն մասին, որ ասիական ժողովուրդների «ազատությանը» սպառնում են կոմունիստները։ 1961 թվականի մայիսի 18-ին հրապարակված համատեղ կոմյունիկեում ընդգծվում էր, որ երկու կառավարությունները գտնում են, որ ՀԱԱ-ում «լուրջ իրավիճակ է» ստեղծվել։ Նշվում էր, որ նրանք լի են ՍԵԱՏՕ-ի գծով վերցրած պարտավորությունները կատարելու վճռականությամբ։ Հայտարարվում էր նաև, որ պետք է ուժեղացվի «Տաիլանդի պաշտպանությունը» և հետագայում ԱՄՆ-ի օգնությամբ Տաիլանդի բանակի ամրապնդման հնարավորությունները։ Ինչպես և Ֆիլիպինների հետ բանակցությունների ժամանակ, որոշակի ուշադրություն հատկացվեց Տաիլանդի տնտեսական և սոցիալական պրոբլեմներին։ Սակայն Բանգկոկում նույնպես ԱՄՆ-ի փոխպրեզիդենտ Ջոնսոնը բանակցությունների առավել կարևոր ասպեկտը համարում էր ռազմական հարցերը։

Սայգոնում, Մանիլայում և Բանգկոկում, ինչպես նաև Տայվանում Ջոնսոնի բանակցությունների արդյունքները ասում էին այն մասին, որ նրանց հիմնական նպատակը Հարավ-Արևելյան Ասիայում ԱՄՆ-ի ռազմաստրատեգիական դիրքերի ամրապնդումն էր։ Նշմարվեց Վիետնամում միջամտությունն ընդարձակելու ԱՄՆ-ի ակնհայտ կուրսը։ Այդ կուրսի «առավելագույն արդյունավետությունը» ապահովելու համար ԱՄՆ-ը անհրաժեշտ էր համարում Հարավ-Արևելյան Ասիայում, ու նախ և առաջ Հարավային Վիետնամում ու Տաիլանդում, ռազմաստրատեգիական ընդարձակ պլացդարմ ստեղծել Հարավային Վիետնամում ու Լաոսում ազգային-ազատագրական շարժման ուժերի դեմ պայքարն ուժեղացնելու համար։

Այսպիսով, 1961 թվականի գարնանը ԱՄՆ-ի կառավարող շրջաններում ՀԱԱ-ի ժողովուրդների ազգային-ազատա-

դրական շարժման հետ ռազմական ուժի օգնությամբ հաշվեհարդար տեսնելու պլաններ էին մշակվում։

Հարավ-Արևելյան Ասիայում Քենեդիի կառավարությունը որպես ժառանգություն էյզենհաուերի կառավարությունից երկու առանձնապես բարդ միջազգային պրոբլեմ ստացավ՝ Լաոսին ու Վիետնամին։

### ԼԱՈՍԻ ՊՐՈԲԼԵՄԸ

Լաոսի պրոբլեմը միջազգային առաջին սուր հարցերից էր, որոնցով հենց սկզբում ստիպված էր զբաղվել դեմոկրատների կառավարությունը։

Պրեզիդենտ Քենեդին ասիական գործերում որոշակի փորձ ուներ։ Դեռևս 1951 թվականին նա այցելեց Լաոս, Կամբոջա և Վիետնամ, որոնք մտնում էին «ֆրանսիական» Հնդկաչինի մեջ։ ԱՄՆ վերադառնալով, Քենեդին այն կարծիքը հայտնեց, որ Արևմուտքն իր քաղաքականությունը Ասիայում պետք է ավելի ճկուն դարձնի, այն անցկացնի ոչ թե ռազմական ուժի օգնությամբ, այլ ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարի քաղաքական մեթոդներով։ «Առանց տեղական բնակչության աջակցության,— հայտնեց մեկ անգամ Քենեդին մամուլի աշխատողներին,— Հարավ-Արևելյան Ասիայի երկրներից որևէ մեկում հաջողության հասնելու հույս չի կարող լինել»[1]։ Այսպիսով, ապագա պրեզիդենտը, ըստ էության, հակվում էր նեոգաղութատիրական մեթոդների կիրառման կողմը, տալով նրանց նախապատվություն գաղութարարների դասական հին մեթոդի՝ ռազմական ուժի առաջ։

50-ական թվականներին ԱՄՆ-ի կառավարության ստրատեգիական նպատակն այն էր, որպեսզի Լաոսը վերածի իր ռազմական բազայի։ Ջ. Դալլեսի առաջարկությամբ Լաոսում «ազատության պաշտպանության» պատրվակով ամերիկյան փողերով սկսեց ստեղծվել վարձկանների մեծ բանակ, որի վրա մինչև 1960 թվականը ծախսվել էր ոչ թե 300 մլն դոլար[2]։ Ընդհանուր առմամբ 1955—1962 թվականներին ԱՄՆ-ի կառավարությունը Լաոսի իր դրածոներին 450 մլն. դոլարի «օգնություն է» տրամադրել[3]։



1961 թվականի հունվարի 7-ին ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը հրապարակեց հայտարարություն, որում նշվում էր, որ «Լաոսը կարող է անկախ մնալ, եթե աշխարհի ոչ կոմունիստական պետությունները համապատասխան օգնություն ցույց տան նրա անկախությունը պահպանելու համար»[4]։ Այդ Լաոսի ներքին գործերին կոլեկտիվ կերպով միջամտելու ՆԱՏՕ-ի երկրներին ուղղված ուղղակի կոչ էր։

Դեմոկրատների կառավարության իշխանության գլուխ անցնելուց հետո, 1961 թվականին, ԱՄՆ-ի պրեզիդենտի աշխատանքային սեղանին գրեթե ամեն օր զեկուցագրեր էին դրվում Լաոսում իրադարձությունների «վտանգավոր» զարգացման մասին։ Պենտագոնի դրածոներն այնտեղ պարտություն էին կրում։ Պրեզիդենտի խորհրդականները մշտապես պնդում էին, որ Լաոսը հնարավոր է «փրկել» միայն և միայն ուժով, առաջարկելով ընդարձակել ԱՄՆ-ի միջամտության շրջանակներն այդ երկրի գործերին։ Այսպես, Ազգային անվտանգության խորհրդի նիստերից մեկում գեներալ Լեմնիցերը նույնիսկ հայտարարեց. «Եթե մեզ միջուկային զենք կիրառելու իրավունք տան, ապա մենք կարող ենք երաշխավորել հաղթանակը»։ Հետագայում Ռ. Քենեդին գրում էր. «Ես հիշում եմ Լաոսի վերաբերյալ խորհրդակցությունը 1961 թվականին, երբ զինվորականները միաձայն խորհուրդ էին տալիս այդ երկրում վիճակը կայունացնելու համար զգալի քանակությամբ ամերիկյան զորքեր ուղարկել։ Այդ զորքերը ենթադրվում էր Լաոս փոխադրել ինքնաթիռներով»։ Այնուհետև Ռ. Քենեդին ուղղակիորեն խոստովանում է, որ ամերիկյան զորքերի հնարավոր պարտությունը Լաոսում կանխելու համար ամերիկյան զինվորականության ներկայացուցիչները պատրաստ էին նրան, որպեսզի ԱՄՆ-ի ռազմա-օդային ուժերը հարձակում կատարեն Հանոյի վրա և «հնարավոր է, միջուկային զենքի դիմեն»[5]։ Սակայն Վաշինգտոնում ոչ բոլորն էին Լեմնիցերի տեսակետին։ Անգամ մի շարք բարձրաստիճան զինվորականներ համոզված էին, որ ԱՄՆ-ը չպետք է բացեիբաց միջամտի Լաոսի կոնֆլիկտին։

Քենեդիի կառավարության առաջին ամիսների քաղաքականությունը Լաոսի նկատմամբ կարելի է երկակի անվանել՝

գործադրվում էին բոլոր ջանքերը ռազմական ատումով Բուն Ումի-Նոսավանի ուժերին ամրապնդելու ուղղությամբ, բայց առաջարկություններ էին արվում նաև Լաոսի պրոբլեմը միջազգային խաղաղ ճանապարհով կարգավորելու օգտին։ Այս խնդրում անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ կարևոր հանգամանքը։ Տաիլանդի, Հարավային Վիետնամի, Հարավային Կորեայի պրոամերիկյան ռեակցիոն ուժերը, չանկայշիականները ձգտում էին ուժեղացնել ամերիկյան ինտերվենցիան Լաոսում։ Դրանում նրանք ստանում էին նաև Վաշինգտոնի՝ իրենց աջակցելու երաշխիքը։ Ինչ վերաբերում է ՍԵԱՏՕ-ի արևմտաեվրոպական մասնակիցներին, հատկապես Ֆրանսիային, ապա նրանք Լաոսում մեծ կռիվ սանձազերծելու ոչ մի խանդավառություն չէին ցուցաբերում և, անգամ հակառակը, Վաշինգտոնի վրա որոշակի ազդեցություն էին գործում։ Եվ պատահական չէ, որ Լաոսի գործերին ամերիկյան ռազմական լայն միջամտության «հօգուտ» և «դեմ» տարբեր կարգի գործոնների ազդեցության հետևանքով ԱՄՆ-ի կառավարությունը որոշ ժամանակ տատանվում էր Լաոսում քաղաքականության կուրս ընտրելու հարցում։ Մի քանի ամիս շարունակ ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ երկու միմյանց բացառող տենդենցների պայքար էր գնում։

1961 թվականի մարտի 23-ին պրեզիդենտ Քենեդին մասնակցեց հեռուստատեսային հարցազրույցին, որի ժամանակ արժանին մատուցեց ինչպես «Լաոսի չեզոքությանը», այնպես և «ազատ աշխարհի անվտանգությունը» պաշտպանելու ԱՄՆ-ի «վճռականությանը»։ Լաոսի գլխին եկած բոլոր փորձանքների համար Քենեդին մեղադրեց Պաթեթ Լաոյին։ Նա կոչ արեց ՍԵԱՏՕ-ին կատարել Լաոսի չեզոքությունը պաշտպանելու ուղղությամբ պարտավորությունները։ «Լաոսը հեռու է գտնվում Ամերիկայից, բայց չէ՞ որ մեր աշխարհը փոքր է..., ամբողջ Հարավ-Արևելյան Ասիայի անվտանգությունը սպառնալիքի տակ կդրվի, եթե Լաոսը կորցնի իր չեզոքությունն ու անկախությունը»։ Այդպես ոտքից գլխի վրա էր շրջում պրեզիդենտը անկախ Լաոսի պրոբլեմը։ Միաժամանակ պրեզիդենտ Քենեդին հանդիպում է ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստրի հետ, արտահայտվելով այնտեղ հօգուտ անկախ և չեզոք Լաոսի»[6]։



Անհրաժեշտ կուրսի որոնման ճանապարհին Քենեդիի կառավարությունը համառորեն ձգտում էր Լաոսում ձեռք բերել ամերիկյան քաղաքականության դաշնակից երկրների անվերապահ աջակցությունը։ Առաջին հերթին Քենեդին դիվանագիտական ճանապարհով դիմեց Անգլիայի պրեմիեր մինիստր Մակմիլանին, որը խոստացավ միայն «բարոյապես» աջակցել ամերիկյան գործողություններին։ Բայց ԱՄՆ-ի կառավարությանը այդպիսի պատասխանը չէր կարող բավարարել։ Նա ավելին էր պահանջում։

Քենեդին անմիջապես թռչում է Ֆլորիդա՝ հանդիպելու Անգլիայի պրեմիեր մինիստրի հետ։ Այդժամ Բերմուդյան կղզիներում գտնվող Մակմիլանը նույնպես մեկնում է այնտեղ։ ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ղեկավարների հանդիպումը տեղի ունեցավ Քի-Ուեսթ ամերիկյան ռազմական բազայում։ Քենեդիի գլխավոր նպատակն էր՝ ձեռք բերել Մակմիլանի ռազմական աջակցությունը, եթե Վաշինգտոնը վճռեր Լաոսում ռազմական լայն ինտերվենցիա իրագործել։ Մակմիլանն, ի վերջո, զիջում է և համաձայնվում անգլիական ուժերի մասնակցությանը Լաոսում, ճիշտ է այն վերապահումով, որ եթե դա «անհրաժեշտ լինի»[7]։

Քննարկելով Լաոսում ստեղծված իրավիճակը, Քենեդին և Մակմիլանը կշռադատում են ազգային-ազատագրական ուժերի դեմ ՍԵԱՏՕ-ի բլոկի ակտիվացման հնարավորությունը[8]։ Անգլիայի պրեմիեր մինիստրը Քենեդիին խորհուրդ է տալիս զգուշություն հանդես բերել լաոսյան գործերում և ավելի ակտիվորեն օգտագործել 1954 թվականի Ժնևի խորհրդակցության նախագահների ինստիտուտը (ՍՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի)։ Բացի այդ, Մակմիլանը արտահայտվեց Սովետական Միության կողմից առաջարկված լաոսյան պրոբլեմի լուծման հարցով կոնֆերանս հրավիրելու օգտին, որի մասին անգլիական կառավարությունը հայտնել էր իր համաձայնությունը 1961 թ. մարտի 23-ին ՍՍՀՄ-ին ուղարկած իր հիշարժան կարճ նամակում[9]։

1961 թվականի մայիսի 16-ին բացվեց Լաոսի պրոբլեմին

նվիրված կոնֆերանսը: Ամերիկյան պատվիրակության ղեկավարն էր պետական քարտուղար Դին Ռասկը: Արդեն իր առաջին ելույթում նա վերացականորեն խոսում էր ՀԱԱ-ում «կոմունիստական սպառնալիքի» մասին, ապացուցում, որ ԱՄՆ-ը Լաոս զենք ուղարկելու «ցանկություն չունի», շարադրում Լաոսում «խաղաղության ապահովելու գծով մեխանիզմի» ստեղծման պլանը և անգամ այդ երկրին տնտեսական լայն «օգնություն» ցույց տալու առաջարկություն արեց: Ժնևի բանակցությունների ընթացքում պարզ դարձավ, որ ԱՄՆ-ը չի շտապում կարգավորել Լաոսի պրոբլեմը: Ռասկը շուտով հեռացավ Ժնևից: 1961 թվականի գարնանն ու ամռանը ԱՄՆ-ի կառավարությունը շարունակում էր տատանվել Լաոսի պրոբլեմի լուծման խիստ և խաղաղ ուղիներ ընտրելու հարցում: 1962 թվականի ամառը, Ժնևում տեղի ունեցող երկարատև բանակցություններից հետո, վերջապես ձեռք բերվեց համաձայնություն Լաոսի պրոբլեմը կարգավորելու ուղղությամբ: Ամերիկյան շատ պատմաբաններ այն կարծիքին են հայտնում, որ եթե Պլայա Խիրոնի ձախողումը չլիներ, ապա անհայտ է, կգնար արդյոք ԱՄՆ-ի կառավարությունը Լաոսի գծով Ժնևյան համաձայնագրերի վավերացմանը: Համենայն դեպս, 1961 թվականի մայիսի 3-ին Քենեդին իր խորհրդականներից մեկին հայտնել է. «Եթե Կուբան չլիներ, մենք կարող էինք Լաոս ներխուժելու նախօրյակին լինել»[10]:

Եվ այսպես, 1961 թվականի հունվար—մայիս ամիսներին ամերիկյան ադմինիստրացիայի ջանքերի զգալի մասը ուղղված էր Լաոսի պրոբլեմի՝ ռազմական ճանապարհով լուծման ուսումնասիրմանը և նախապատրաստմանը: Իրադարձությունների հենց այդպիսի զարգացման ընթացքի հնարավորություններն էին մանրազնին ուսումնասիրվում պրոբլեմը խաղաղ ճանապարհով լուծելու հնարավորությունների հետ մեկտեղ: Անտարակույս, Լաոսի պրոբլեմի ռազմական տարբերակով լուծման հնարավորությունների կշռադատումը (Հարավային Վիետնամի օրինակով), ինչպես այդ արվում է քաղաքականության հանգուցային հարցերը քննարկելիս, անցնում էր հույժ գաղտնի պայմաններում: Լաոսի



պրոբլեմի ռազմական ճանապարհով լուծման հնարավորությունը հիմնավորապես նվազեց 1961 թվականի ապրիլին Կուբայում ավանտյուրայի ձախողման ենթարկվելուց, Լաոսում ռազմական գործողությունների ուժեղացնելու կուրսի վերաբերյալ Դը Գոլի բացասական պատասխանից հետո: Լաոսյան իր՝ խաղաղ և ռազմական քաղաքականության երկու հնարավոր տարբերակների միջև Քենեդիի կառավարության տատանումներում, ի վերջո, որոշ ժամանակ հաղթանակեց Լաոսի չեզոքացման խաղաղ գիծը:

Լաոսի պրոբլեմին ԱՄՆ-ի կառավարության մոտեցման այդպիսի երկվությունը ընդհանրապես բնորոշ է միջազգային պրոբլեմների նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնի մոտեցմանը: Դա ԱՄՆ-ի քաղաքական և ռազմական բարձր ոլորտներում ակտուալ և միջազգային սուր պրոբլեմների խաղաղ կամ ռազմական միջոցներով լուծման արդյունավետության սահմանի վերաբերյալ տարբեր տեսակետների պայքարի արտացոլումն է:

Ընդ որում բնորոշ է, որ ռազմական տարբերակի մշակման ժամանակ, որպես պաշտոնական քայլ լայնորեն ընկալվում էր Լաոսի պրոբլեմի լուծման խաղաղ ճանապարհը: Օրինակի համար կարելի է հիշատակել պրեզիդենտ Ջ. Քենեդիի 1961 թ. մարտի 23-ի և ապրիլի 1-ի հայտարարությունները, ԱՄՆ-ի պետական քարտուղար Դ. Ռասկի Դելիում մարտի 30-ին և Վաշինգտոնում մարտի 31-ին և ապրիլի 2-ին արված հայտարարությունները: Մարտի 23-ի իր հայտարարության մեջ պրեզիդենտ Քենեդին, օրինակ, նշում է. «Մենք հաստատապես պաշտպանում ենք Անգլիայի ներկա առաջարկը ռազմական գործողությունների անհապաղ դադարեցնելու և անհապաղ բանակցություններ սկսելու մասին»[11]:

Իրադարձությունների հետագա զարգացումը լավ հայտնի է: Վիեննայում տեղի ունեցած հանդիպման ժամանակ ամերիկյան կառավարությունը ստիպված էր համաձայնվել Լաոսի չեզոքացման գաղափարին: Այդ հարցում մեծ դեր խաղաց Սովետական Միության հաստատուն դիրքը, որը բազմիցս հայտարարում էր, թե Լաոսի հայրենասիրական ուժերը մենակ չեն, նրանց աջակցում են սոցիալիստական երկրները:

Լաոսի պրոբլեմի կարգավորմանը նվիրված միջազգային կոնֆերանսը (Ժնև, 1961 թ. մայիսի 16—1962 թ. հուլիսի 23) ընդունեց դեկլարացիա և նրան կից արձանագրություն, որոնցով Լաոսը չեզոք պետություն էր հռչակվում։ Դեկլարացիայում ծանուցվում էր, որ այդ երկրի գործերին այլևս դրսից միջամտություն չպետք է լինի (կետ 5)։ Դեկլարացիային կից արձանագրությունում պարզաբանվում և ճշտվում էր առավել կարևոր դրույթների մի մասը, մասնավորապես դիտելու և հսկելու գծով միջազգային հանձնաժողովի ֆունկցիաները (Կանադա, Հնդկաստան, Լեհաստան)[12]։

Հարկավոր է, սակայն, նշել, որ Հարավ-Արևելյան Ասիայում ԱՄՆ-ի արտաքին քաղաքական էքսպանսիոնիզմն ու ագրեսիվությունը, Լաոսում աջ շրջաններին աջակցելու և միաժամանակ այդ երկրի վերաբերյալ Ժնևի համաձայնագիրը խախտելու մեջ առաջադեմ ուժերին մեղադրելու ամերիկյան քաղաքական վերնախավի մշտական ձգտումը, Լաոսի գործերին «չմիջամտելու» իր գիծը վերանայելու ԱՄՆ-ի կառավարության ժամանակ առ ժամանակ արվող սպառնալից հայտարարությունները մթագնում էին մթնոլորտն այդ երկրում և ամբողջությամբ Լաոսի պրոբլեմը բավական «շիկացած» վիճակում պահում։

1963 թվականի փետրվարին պրեզիդենտ Քենեդին Վաշինգտոնում հանդիպում է Լաոսի թագավորին և հավաստիացնում նրան այդ երկրի չեզոքության վերաբերյալ Ժնևի համաձայնագրերը պաշտպանելու մասին[13]։ Բայց արդեն ապրիլի 8-ին ԱՄՆ-ի կառավարությունը հանդես է գալիս հայտարարությամբ, որում ասվում է, որ Լաոսի հակակառավարական ուժերը վերսկսել են ռազմական գործողությունները ընդդեմ թագավորական կառավարության։ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը նյարդայնացած տոնով հայտարարում է, որ Լաոսի վերաբերյալ Ժնևի համաձայնագրերին ձախողում է սպառնում[14]։ Սովետական Միությունը դարձյալ հաստատուն դիրք է գրավում Լաոսի չեզոքության հարցում, կոչ անելով ԱՄՆ-ին այդ երկրի տեղական նշանակության ներքին հակամարտությունները միջազգային կոնֆլիկտի աստիճանի չհասցնել։ Իրավիճակը Լաոսում 1963 թվականի գարնանն ու ամռանը



չափազանց բարդ էր մնում։ ԱՄՆ-ի կառավարությունը, ստանալով Անգլիայի կառավարության աջակցությունը, շարունակում էր մանևրել, բայց Լաոսի ազգային-ազատագրական շարժման ուժերի հետ անմիջական ընդհարման այդպես էլ չհամարձակվեց։

Այն, ինչի չհասավ Քենեդին, իրագործեց Ջոնսոնի կառավարությունը։ 1964 թվականի գարնանը նա օդային պատերազմ ծավալեց Լաոսի հայրենասիրական ճակատի ուժերի կողմից վերահսկվող շրջաններում։ Ըստ էության, ԱՄՆ-ը տորպեդեց Լաոսի վերաբերյալ Ժնևի համաձայնագրերը։ Սակայն դա չխանգարեց Լաոսի հայրենասերներին հաղթանակի հասնել։ Այսօր Լաոսը սոցիալիստական ճանապարհով ընթացող անկախ պետություն է։

## ՎԻԵՏՆԱՄՈՒՄ ԱՄՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ամենադժվար պրոբլեմը, որին դեմոկրատների կառավարությունը բախվեց Ասիայում, Վիետնամի պրոբլեմն էր։

ԱՄՆ-ի պրեզիդենտը, ճիշտ է, հայտարարեց այսպես կոչված «նոր կուրսի» մասին Հարավ-Արևելյան Ասիայում։ ԱՄՆ-ի պաշտոնական անձինք և նրանց պրոպագանդիստական ծառայությունները համառությամբ ջանում էին տպավորություն առաջացնել, որ այսուհետև իրենց կամքը չեն փաթաթելու Ասիայի ժողովուրդներին։ Սակայն գործերը միանգամայն այլ բան էին վկայում։ Դեմոկրատների քաղաքականությունը շատ քիչ էր տարբերվում հանրապետականների, դալլեսյան կուրսից։

Նախքան Վիետնամում 60-ական թվականներին դեմոկրատների կառավարության քաղաքականության վերլուծությանն անցնելը, անհրաժեշտ է ընդգծել, որ ամերիկյան իմպերիալիզմի այդ ագրեսիվ ավանտյուրան, ըստ էության, սկզբից և ամերիկյան ժողովրդից գաղտնի էր իրականացվում։ Դրա հետևանքով ամերիկացիների ոչ միայն ճնշող մեծամասնությունը, այլև ոչ քիչ թվով ամերիկյան քաղաքական գործիչներ Վիետնամում կատարվող իրադարձությունների մասին բավական աղոտ պատկերացում ունեին։ Այս առումով հետաքրքրական է ամերիկ-

յան հայտնի ժուռնալիստ Ջեյմս Ռեստոնի հոդվածը։ «Մի կողմից,— գրել է նա,— ավելի քան 400 հազար ամերիկացիներ, որոնց մեծ մասը զորակոչիկներ են, ներկայումս կռվում են Վիետնամում։ Մյուս կողմից՝ նրանց մեծ մասը չգիտի, ինչպես այն սկսվեց և անգամ պաշտոնական շատ անձինք չափազանց թույլ պատկերացում ունեն այն մասին, ինչպես այդքան խորը ներքաշվեցին այդ պատերազմի մեջ։ Չի կարելի ասել, որ ժողովուրդը, նախքան ռազմական պարտավորություններ վերցնելը, դրանց մասին լավ տեղեկացված էր կամ որ նրա ներկայացուցիչները կոնգրեսում իսկապես քննարկել են այդ կարգի պատերազմ վարելու որոշումը այն ժամանակ, երբ ներքաշվում էին նրա մեջ»[15]։

Ասիայում ԱՄՆ-ի քաղաքականության ձևավորման հարցում որոշակի նշանակություն ուներ օգտակար հանածոների նկատմամբ Վաշինգտոնի շահագրգռվածությունը։ Այդ թեման Հարավ-Արևելյան Ասիայում ամերիկյան ագրեսիայի էսկալացման տարիներին բավական խնամքով շրջանցվում էր երկրի մամուլում։ Տեղին է, սակայն, նշել, որ մամուլը միշտ չէ, որ այդքան նրբանկատ է եղել՝ երբ Վիետնամում գործում էին ֆրանսիական գաղութարարները, նա այս հարցում անհամեմատ ավելի անկեղծ էր։ Ահա թե ինչ է գրում, օրինակ, «Նյու Յորք թայմսը» 1950 թվականի փետրվարի 12-ին. «Հնդկաչինը մեծ որսի պահանջող մրցանակ է։ Նրա հյուսիսում կա անագ, վոլֆրամ, ցինկ, մանգան, ածուխ, սղոցանյութ և բրինձ, իսկ հարավում՝ բրինձ, կաուչուկ, թեյ, պղպեղ։ Դրանք բոլորն արտահանման ապրանքներ են»[16]։

Իր ժամանակ Դալլեսը բացեիբաց հանդես էր գալիս Ժնևի 1954 թվականի համաձայնագրերի դեմ։ Նա անգամ չբարեհաճեց մասնակցել բանակցություններին և ցուցադրաբար թողեց Ժնևը նախքան դրանց սկսվելը։ Իսկ երբ 1954 թվականի հուլիսի 21-ին համաձայնագիրը վավերացվեց, ամերիկյան պատվիրակությունը հայտնեց, որ նա ընդամենը ի գիտություն է ընդունում այդ։ Սակայն, այնուհետև, հայտարարություն արվեց, որ ԱՄՆ-ը «ձեռնպահ է մնալու ուժի սպառնալիքից կամ նրա կիրառումից այն խախտելու նպատակով»։ Գործնականում էյզենհաուերը անմիջապես ի չիք դարձ-



րեց այդ պարտավորությունը, հայտնելով, որ «ԱՄՆ-ը որոշումների ընդունմանը չի մասնակցել»։ Դա այն սուր պայքարի հետքերն էին, որ ծավալվել էր ԱՄՆ-ի վերնախավում այդ հարցի շուրջը։ Իսկ այդ հատկանշական է։ Չէ՞ որ 50-ական թվականներին ԱՄՆ-ի կառավարող շրջանները սովորել էին միջազգային գործերը վարել «սառը պատերազմի» ոճով և ոչ թե միջազգային պրոբլեմները կոմպրոմիսի հիման վրա լուծելու ճանապարհ որոնելով։

Այդ պայքարի հետևանքներն արտահայտվեցին և նրանում, որ 1954 թվականին, շրջանցելով Ժնևի համաձայնագրերը, ԱՄՆ-ը համառորեն ձգտում էր «իրավաբանական բազա» հորինել Վիետնամի գործերին ուղղակիորեն միջամտելու համար։ Էյզենհաուերը 1954 թվականի հոկտեմբերի 23-ին Նգո Դին Դիեմին ուղերձ հղեց, որում հայտնում էր, որ ԱՄՆ-ը օգնելու է սայգոնյան կլիկին «քայքայիչ գործունեության և ագրեսիայի» դեմ պայքարում, այսինքն՝ հայրենասիրական ուժերի դեմ պայքարում[17]։ ԱՄՆ-ը պատրաստվում էր օգնել Դիեմին և նրա կլիկին սպանելու հարավվիետնամական գյուղացիներին, նրանց «ագրեսորներ» անվանելով իրենց սեփական հողում։

1955 թվականի հունվարից ԱՄՆ-ը, ի խախտումն Ժնևի համաձայնագրերի 16 և 17-րդ հոդվածների, էլ ավելի ուժեղացրեց ռազմական օգնությունը սայգոնյան ռեժիմին։ 1955-ից մինչև 1960 թվականը ռազմական մատակարարումները Հարավային Վիետնամին, միայն պաշտոնական տվյալներով, կազմում էին 571,3 մլն. դոլար։ Իսկ եթե հաշվի առնենք Պենտագոնի ծախսերը այսպես կոչված «պաշտպանական միջոցառումների» և տնտեսական «օգնության» գծով, ապա Վաշինգտոնի ընդհանուր ծախսերը Հարավային Վիետնամում 1955-ից մինչև 1962 թվականն ընկած ժամանակաշրջանում գերազանցեցին 2 մլրդ. դոլ.-ից[18]։

Հարավային Վիետնամ ուղարկվող զինվորականների թիվն գնալով աճում էր։ 1960 թվականի վերջերին այն հասավ արդեն 2 հազար մարդու։ Սայգոնյան նավահանգստում ամերիկյան ռազմապաշարով հարյուրավոր նավեր էին բեռնաթափվում։

ԱՄՆ-ը Հարավային Վիետնամն աստիճանաբար իր ռազմական բազայի է վերածում: Ամերիկյան ինտերվենցիոնիստների գործողությունները առաջացրին Վիետնամի ժողովրդի ցասումն ու զայրույթը: 1960 թվականի վերջին Հարավային Վիետնամում ստեղծվեց Ազգային ազատագրման ճակատ (ԱԱՃ): Նրանում միավորվեցին երկրի այդ մասի բոլոր հայրենասիրական ուժերը, սկսած քաղաքական կուսակցություններից և վերջացրած կրոնական աղանդները: ԱԱՃ-ի կողմն էին Վիետնամի բոլոր հայրենասերները: Դիմադրությունը ամերիկյան ինտերվենցիոնիստներին և նրանց մարիոնետներին սկսեց արագորեն աճել:

1961 թվականի մայիսին Ռասկն իր ելույթում նշեց, որ Հարավային Վիետնամի մարիոնետային ռեժիմի դեմ պայքարը պետք է դիտել իբրև «կոմունիստական ագրեսիա»: ԱՄՆ-ի պրեզիդենտը հրաման արձակեց Հարավային Վիետնամի իշխանությունների ռազմական օգնությունն ավելացնելու և այնտեղ ռազմական հրահանգիչներ ուղարկելու մասին[19]: ԱՄՆ-ի կառավարությունը ակնհայտ պաշտպանության տակ է վերցնում դիկտատոր Նգո Դին Դիեմի ռեժիմը: Բավական է ծանոթանալ Քեննեդիի 1961 թվականի հոկտեմբերի 24-ին Նգո Դին Դիեմին հղած ուղերձին, համոզվելու համար, որ ընտրություններում իր հաղթանակից մեկ տարի անց Քեննեդին սկսեց Վիետնամում տիրող իրավիճակը գնահատել միանգամայն կեղծ դիրքերից: Գովաբանելով հարավվիետնամական ռեժիմի գործունեությունը, Քեննեդին խոստանում է Սայգոնին, որ ԱՄՆ-ի կառավարությունը լի է «Վիետնամի անկախությունը պաշտպանելու վճռականությամբ»[20]: Պետական քարտուղարը էլ ավելի հեռուն է գնում: Ռասկը իր նոր հայտարարությամբ կոչ էր անում մյուս երկրներին միանալու իրենց Հարավային Վիետնամի օգնությունն ապահովելու գործում[21]:

Ամերիկյան ռազմական խորհրդականների ղեկավարությամբ Նգո Դին Դիեմի կլիկը հարավվիետնամական բնակչության նկատմամբ անց էր կացնում տեռորի և ճնշման քաղաքականություն: Հարավային Վիետնամում ժողովրդին խորթ ապրելակերպ էր արմատավորվում, մինչդեռ սոցիալական պրոբլեմները մնում էին չլուծված: Երկրում, հատկապես Սայգոնում, տիրում էին պաշտոնյաների ու զինվորականության կոռուպցիան և կաշառակերությունը: Հետևանքը եղավ այն, որ հարավվիետնամցիները դիմեցին զենքի, անդիմելով ամերիկյան մարիոնետային ռեժիմը: Ազգային-ազատագրական պայքարը գնալով ուժեղանում էր: Ճգնաժամը Վիետնամում շարունակում էր խորանալ: 1961 թվականի մայիսի 10-ին ամերիկյան հայտնի քաղաքական մեկնաբան Ուոլթեր Լիպմանը Դիեմի մասին գրել է. «Մեր մարդը արտակարգ հեղինակազուրկ է, նա ռեակցիոն է և ծախու»[22]: Անգամ ամերիկյան գեներալ Թոմաս Ֆիլիպսը խոստովանում էր, որ «Դիեմը կառավարում է ոստիկանական պետություն, որտեղ հալածանքն իրագործում է գաղտնի ոստիկանությունը, անօրինական ձերբակալություններ են կատարվում, առկա են ոստիկանության դաժանությունը, քաղաքական բանտարկյալները և ֆավորիտիզմը լկտիանում»[23]: Երկար ժամանակ Վիետնամում աշխատած ամերիկյան լրագրող Ռոբերտ Բրաունը «Նյու Յորք Թայմսին» ուղարկած նամակում գրում էր, որ Հարավային Վիետնամում տեղական բնակչությունը աջակցում է ապստամբներին, որ Դիեմի կառավարությունը կաշառված է, որ Հարավային Վիետնամում որևէ ռեֆորմ անցկացնելու մասին հայտարարությունները իրականությանը չեն համապատասխանում: Ընդհակառակը, որ սոցիալական և քաղաքական մթնոլորտը Հարավային Վիետնամում ավելի խեղդող է դառնում[24]: Դիեմի «կառավարությանը» Սայգոն օգնության էին ուղարկվում անգամ ԱՄՆ-ի դեպարտամենտում հատուկ ընտրված գիտնականներ: Եվ այնուհանդերձ, ԱՄՆ վերադառնալով, հաճախ ժամկետից շուտ, այդ «դրված թեկնածուներից» շատերը անկեղծության պահին հայտարարում էին՝ «Դիեմի ռեժիմը կոռումպացված և բռնապետական կառավարություն է»[25]: Այդ բոլոր փաստերը, անտարակույս, հայտնի էին Քեննեդիի կառավարության անդամներին, որոնք Վիետնամում իրենց վարած քաղաքականությունը քողարկում էին բռնակալությունից «ազատությունը» պաշտպանելու պատրվակով: Իսկ իրականում Վաշինգտոնը հենց բռնա-

կալությունն էր պաշտպանում ազատությունից, Վիետնամի ժողովրդի համար ազատությունից։

1961 թվականի վերջին Քենեդին Հարավային Վիետնամ ուղարկեց իր ռազմական խորհրդական գեներալ Մաքսուել Թեյլորին։ Հարավային Վիետնամից վերադառնալով, գեներալը ոչինչ չգտավ լավ, քան սկսել ԱՄՆ-ի ռազմական ուժերի ավելացումն այդ երկրում։ Պրեզիդենտին նույնպիսի խորհուրդ տվեց նաև շտաբների պետերի միացյալ կոմիտեն[26]։ Քենեդին ընդառաջեց այդ խորհուրդներին։ Ինչպես ցույց տվեց պատմությունը, նա կոպիտ սխալ կատարեց։

ԱՄՆ-ի կառավարությունը զարկ տվեց Վիետնամի գործերին ամերիկյան միջամտության ընդլայնմանը։ «Խորհրդականների» թիվը նախատեսվեց հասցնել մինչև 15 հազար մարդու, որը Քենեդիի պրակտիկայում ամենաանհեռատես քայլերից մեկը հանդիսացավ։ ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ Ջորջ Բոլը կանխատեսեց, որ «եթե Միացյալ Նահանգներն այդքան շատ զինծառայող ուղարկեն Վիետնամ, ապա դրանով նրանք դրա հետ կկապեն երկրի հեղինակությունը, կփոխեն պատերազմի բնույթը և չափազանց կդժվարացնեն կոնֆլիկտի լուծումը»[27]։ Բոլն իր տարակուսանքները հայտնեց պետական քարտուղար Ռասկին և պաշտպանության մինիստր Մաքնամարային։ Նա գտնում էր, որ դրված նպատակին հասնելու՝ «վիետկոնգցիներին» ջախջախելու համար հարկ կլինի Վիետնամ ուղարկել 300 հազար զինվոր ու սպա։ Ռասկը և Մաքնամարան չընդունեցին Բոլի փաստարկները, գտնելով, որ անհրաժեշտ է գործել։ Ինչպես խոստովանեց Ջ. Ռեսթոնը, «ամերիկյան ժողովրդին այդ մասին չհայտնեցին» և, այդպիսով, տեղի էր ունենում «ամերիկյան հասարակայնությանը «կանխամտածված խաբելու» նման մի բան»։ Իսկ իրականում՝ ժողովրդի խաբկական մոլորեցում։ Ռեսթոնը նաև նշում էր, որ պրեզիդենտ Քենեդին իբր ենթադրում էր, թե Վիետնամում ամերիկյան խորհրդականների թիվը մինչև 15 հազար մարդ հասցնելը «կայունացնելու է իրավիճակը», այսինքն՝ «ռիսկի» դիմելու համաձայնությունն տալով, նա հույս ուներ խուսափել դրա հետևանքներից։ Ռեստոնը, որը լավ տեղեկացված տեսաբան էր, հավաստիացնում էր, թե Քենեդին 1961 թվականին չէր ձգտում Վիետնամի հարցում հեռուն տանող որոշում ընդունել, Վիետնամը Միացյալ Նահանգների «անվտանգության» համար կարևոր չէր համարում և չէր պատրաստվում այդ երկիր ռազմական մեծ ուժեր ուղարկել[28]։

Եթե այդպես է, ապա ավելի չարագուշակ են այն մարդկանց գործողությունները, ովքեր ԱՄՆ-ի պրեզիդենտին մղում էին անհեռատես որոշումներ ընդունելու։ Եվ ահա արդյունքը։ Դիեմին հղած 1961 թ. դեկտեմբերի 14-ի ուղերձում Քենեդին հաստատում է կառավարության պատրաստակամությունը «օգնել Վիետնամի Հանրապետությանը պաշտպանելու իր ժողովրդին և պահպանելու իր անկախությունը։ Մենք արագ կերպով կավելացնենք մեր օգնությունը ձեր պաշտպանական ջանքերին...»[29],— գրում էր դեմոկրատ պրեզիդենտը սայգոնյան մարիոնետին։

Քենեդին ոչ միայն ռազմական նոր խորհրդականներ և զենքի նոր պարտիաներ ուղարկեց Հարավային Վիետնամ և Լաոս, այլև ավելացրեց ռազմական օգնությունը ՍԵԱՏՕ-ի գծով դաշնակից Տաիլանդին։ 1962 թվականի մայիսի 15-ին պրեզիդենտը հայտարարեց, որ ԱՄՆ-ը շտապ լրացուցիչ ամերիկյան զորամասեր, զորքեր և ավիացիա է փոխադրում Տաիլանդ[30]։ Այդ արվում էր Տաիլանդի «տերիտորիալ ամբողջականությունը» պահպանելու պատրվակով։ Իրականում ԱՄՆ-ը շահագրգռված էր, որպեսզի աստիճանաբար Տաիլանդը վերածի «անխոցելի ավիակրի», ամերիկյան ռազմաօդային ուժերի ռազմաստրատեգիական բազայի Հարավ-Արևելյան Ասիայի ազգային-ազատագրական ուժերի դեմ պայքարելու համար։

Այսպիսով, «ուժի դիրքերից» քաղաքականություն վարելու կողմնակիցների ճնշման տակ Վիետնամի պրոբլեմի լուծումը դրվում էր ռազմական ռելսերի վրա։ Պրեզիդենտ Քենեդին էյզենհաուերից հետո դարձավ վիետնամական ողբերգության սերմնացանը։ Վիետնամում ֆրանսիական գաղութարարների վարած քաղաքականության քննադատության նրա ամբողջ ապլոմբը չբավականացրեց, որպեսզի ընդունի

մյուս ժողովրդի ներքին գործերին չմիջամտելու. Միակ ճիշտ որոշումը:

Քենեդիի կառավարության վիետնամական քաղաքականության «սխալներն» արդարացնելու ձգտումն արտահայտվեց արդեն այն բանից հետո, երբ այդ քաղաքականության ստրատեգիական հիմնական նպատակը՝ Հարավ-Արևելյան Ասիայում ազգային-ազատագրական շարժման ջախջախումը լրիվ ձախողվեց 60-ական թվականների երկրորդ կեսին[21]: Հենց այդ ժամանակ էլ ԱՄՆ-ում արագորեն երևան եկան հետազոտություններ, որոնք քննադատաբար էին մեկնաբանում ամերիկյան քաղաքականությունը Վիետնամում: Ընդ որում այդ քննադատությունը բխում էր ոչ թե առաջադեմ շրջաններից, այլ ԱՄՆ-ի «գիտական էլիտայի» ներկայացուցիչներից, որոնք ասես պատսպարում էին պաշտոնական Վաշինգտոնին միջազգային ասպարեզում վարած իր սխալ գործողությունների համար:

Օրինակի համար վերցնենք ամերիկացի-միջազգայնագետ Գ. Մորգենթաուի «Վիետնամը և Միացյալ Նահանգները» գիրքը[22]: Նրանում Մորգենթաուն ուղղակի խոստովանում է, որ Հարավային Վիետնամում կանգնած էին, մի կողմից, արհեստական գվարդիայով շրջապատված Դիեմի ընտանիքը և, մյուս կողմից, վիետնամական ժողովուրդը, որին պաշտպանում են երկիրը օտարերկրյա տիրապետությունից և բռնությունից իրենց ազատարար հռչակած կոմունիստները: Պարզ է, որ Մորգենթաուն ընդունում է Հարավային Վիետնամի ժողովրդի և ժողովրդաազատագրական ճակատի գործողությունների միասնությունը: «Քաղաքացիական պատերազմի արմատները,— նշում է նա,— Դիեմի ռեժիմի բուն բնույթի մեջ են»[23]:

Վիետնամում ԱՄՆ-ի քաղաքականությունը Քենեդիի պրեզիդենտության շրջանում մշակում էին այն նույն մարդիկ, որոնք ոչ հեռավոր անցյալում նախապատրաստում էին զավթիչների ներխուժումը Կուբա, հանդես էին գալիս Լաոսում Սուվաննա Ֆումայի չեզոք կառավարության դեմ, իսկ հետագայում, կարիբյան ճգնաժամի շրջանում, աշխարհը կանգնեցրին ջերմամիջուկային պատերազմի անդունդի եզրին:



Նրանք ԱՄՆ-ի պրեզիդենտից համառորեն պահանջում էին ավելի շատ «ամերիկանացնել» հարավվիետնամական պատերազմը:

Ովքե՞ր էին այդ մարդիկ: Նրանց թվին առաջին հերթին պատկանում էին այնպիսի ազդեցիկ գործիչներ, ինչպես պաշտպանության մինիստր Մակնամարան, պրեզիդենտի հատուկ օգնական գեներալ Մ. Թեյլորը, ազգային անվտանգության գործերի գծով պրեզիդենտի հատուկ օգնական Մակջորջ Բանդին, պենտագոնի և ԿՀՎ-ի բազմաթիվ ներկայացուցիչներ:

Ինչպես պնդում են, Քենեդիի վրա իր խորհուրդներով առանձնապես մեծ ազդեցություն էր գործում Մ. Բանդին: Ամերիկյան ժուռնալիստ Մ. Ֆրենքելը 1966 թվականին նշում էր, որ իր խորհուրդներով Բանդին կարևոր դեր խաղաց «Վիետնամում ամերիկյան ինտերվենցիայի էսկալացիայում»: Ընդ որին, Բանդիին մոտիկից ճանաչող անձինք նրան «դաժան մարդ էին» համարում: Բանդին Սպիտակ տանը հայտնի էր որպես Հարավ-Արևելյան Ասիայում միլիտարիստական քաղաքականության ամենակատաղի ապոլոգետներից մեկը: Այդպիսին նա մնաց և պրեզիդենտ Քենեդիի մահվանից հետո: Պրեզիդենտ Լ. Ջոնսոնի օրոք նա հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկեց Վիետնամում ագրեսիայի հետագա ընդլայնման համար:

Բանդին Վաշինգտոնում հայտնի էր իբրև Նյու-Յորքի ֆինանսական խմբի ներկայացուցիչ: Նա սերտորեն կապված էր Լովեթի և Մաքլոյի հետ: Հենց այդ խումբն էր խորհուրդ տալիս Քենեդիին մինիստրներ նշանակել Մակնամարային և Ռասկին: Նրանցից առաջինը ավելի մեծ, երկրորդը փոքր-ինչ նվազ եռանդով Քենեդիին ռազմական էսկալացիայի էին մղում Վիետնամում: Այդ ջանքերի վերջնական արդյունքները, ինչպես այժմ միանգամայն պարզվեց, ԱՄՆ-ի համար տխուր եղան: Միաժամանակ ԱՄՆ-ը նյութական մեծ վնաս և հոգեկան տանջանքներ պատճառեց Վիետնամի ժողովրդին:

Պրեզիդենտ Քենեդիի վարած քաղաքականության, Ասիայում ազգային-ազատագրական շարժման ուժերի դեմ ամե-

րիկյան զորամասերի օգտագործման լրիվ անհնարավորության գիտակցման վրա որոշակի զսպող ազդեցություն ունեցան մի շարք ամերիկյան քաղաքական և ռազմական գործիչների նախազգուշացումները: Քենեդին, հավանաբար, երբեք չէր մոռանում 1954 թվականի փետրվարի 10-ին պրեզիդենտ Էյզենհաուերի արած հայտարարությունը. «Միացյալ Նահանգների համար դժվար է ավելի մեծ ողբերգություն պատկերացնել, քան ներքաշված լինել Հնդկաչինում անցկացվող լայն պատերազմին»[34]: Այդ պատերազմին ԱՄՆ-ի ներքաշվելու դեմ էր Քենեդիին անձնական զրույցում նախազգուշացնում նաև գեներալ Մակարթուրը[35]: Պրեզիդենտ Էյզենհաուերի և Մակարթուրի դիրքը հավանաբար բացատրվում էր կորեական պատերազմի դասերով, երբ ԱՄՆ-ին չհաջողվեց հասնել իր ագրեսիվ նպատակներին:

Եթե պրեզիդենտ Քենեդին որոշակիորեն տարակուսում էր հարավվիետնամական բնակչության դեմ ռազմական գործողություններում ամերիկյան բանակի անմիջական մասնակցության արդյունավետության հարցում, ապա Վիետնամում ԱՄՆ-ի նպատակների վերաբերյալ նա պենտագոնի և պետդեպարտամենտի հետ համակարծիք էր:

1961 թվականի ձմռանը Վաշինգտոնում մշակվեց Հարավային Վիետնամում ազգային-ազատագրական շարժման ճնշման հատուկ պլան: Նախատեսվում էր սայգոնյան ռեժիմին ռազմական օգնության ակտիվացում: Պլանի հեղինակները պնդում էին, որ եթե իրենց նպատակները կենսագործվեն, ապա Դիեմը մեկուկես տարում կարող է շահել պատերազմը[36]:

Տեղում գործերի վիճակն ուսումնասիրելու համար Քենեդին Հարավային Վիետնամ է ուղարկում փոխպրեզիդենտ Ջոնսոնին: Սայգոնում փոխպրեզիդենտը նախ և առաջ զբաղվեց նրանով, որ սկսեց գովաբանել դիկտատոր Դիեմին, հայտարարելով, որ նա «Չերչիլն է Հարավային Ասիայում»[37]: Վերադառնալով Վաշինգտոն, նա սկսեց համոզել Քենեդիին «կարևոր որոշումներ» ընդունել Հարավ-Արևելյան Ասիայի վերաբերյալ, ներդնել բոլոր միջոցները Դիեմի ռեժիմին օգնելու համար:



Փոխպրեզիդենտ Ջոնսոնի Վիետնամից վերադառնալուց հետո շուտով այնտեղ ուղարկվեց տնտեսական միսիա պրոֆ. Ե. Սթեյլիի գլխավորությամբ[38]: Միսիան մշակեց հարավվիետնամական հայրենասերների ռազմական ջախջախման պլան, որը քողարկվում էր Հարավային Վիետնամի «տնտեսական օգնության» ծրագրով: Սթեյլիի միսիան Քենեդիի կառավարությանը խորհուրդ էր տալիս ավելացնել սայգոնյան բանակը մինչև 200 հազ., «քաղաքացիական միլիցիա» զորակոչել 100 հազար մարդ: Դրա ֆինանսավորման համար առաջարկվում էր ամեն տարի Սայգոնին տրամադրել 100 մլն. դոլար[39]:

Այնուհետև նոր միսիայով Վիետնամ մեկնեց գեներալ Մ. Թեյլորը: «Հետաքննությունն» անցկացնելով, նա հայտնեց, որ Հարավային Վիետնամի պրոբլեմը կարելի է լուծել միայն ռազմական ճանապարհով: Գեներալը պահանջեց ավելի ակտիվորեն օգտագործել ամերիկյան ավիացիան: Նա խորհուրդ էր տալիս 10 հազար ամերիկյան զինվոր ուղարկել, որոնք հետագայում մասնակցելու էին ռազմական գործողություններին[40]:

ԱՄՆ-ի ռազմական էսկալացիայի կուրս վերցնելու հարցում իր դերը խաղաց նաև Ալեն Դալեսը, որն այդ ժամանակ արդեն հեռացվել էր ԿՀՎ-ն ղեկավարելուց: 1962 թվականի ապրիլին խոշոր գործարար Կարլոս Բենդեթսենի գլխավորած «Պենտագոնի հետազոտական խմբի» կազմում Ալեն Դալեսը ժամանեց Հարավային Վիետնամ՝ հակաժողովրդական պատերազմ վարող սայգոնյան ռեժիմին օգնություն ցույց տվող ամերիկյան զինծառայողներին հրահանգավորելու համար: Կարելի է չկասկածել, որ Բենդեթսեն—Դալեսի խումբը ԱՄՆ-ի կառավարությանը խորհուրդ տվեց ընդլայնել ռազմական ինտերվենցիան:

Քենեդիի պրեզիդենտության ժամանակ ԱՄՆ-ի պաշտոնական շրջաններում բավական լայն էր տարածված այն կարծիքը, որ իրենց այնուամենայնիվ կհաջողվի Վիետնամում նպատակին հասնել: Բավական է ասել, որ արդարադատության մինիստր Ռ. Քենեդին 1962 թվականի սկզբներին խոստովանել է, որ ԱՄՆ-ը պատերազմի մեջ է գտնվում Հարա-

վային Վիետնամում, որ այնտեղ իրենց հեղինակությունը դրված է խաղաքարտի վրա, և որ այդ պատճառով պետք է մարտնչեն մինչև հաղթանակ։ Այդ հայտարարությունները ուղեկցվում էին ամերիկյան զորքերի դեպի Հարավային Վիետնամ փոխադրումով։ 1962 թվականի առ հունիսը, ամերիկյան տվյալներով, այնտեղ 6500 մարդ կար։ Բնորոշ է նաև, որ ամերիկյան մամուլի այնպիսի ազդեցիկ օրգաններ, ինչպես «Նյու Յորք Թայմս» թերթը և «Յու. Ս. նյուս էնդ ուորլդ ռիպորտ» ամսագիրը, այն ժամանակ միաբերան պնդում էին, որ ԱՄՆ-ը պատրաստ է Վիետնամում երկարատև և ուժասպառ պատերազմի, եթե անգամ այն 10 տարի տևի։

Սակայն ոչ բոլորն էին այդ տեսակետին։ Ամերիկյան լայն հասարակայնությունը արդեն Քենեդիի պրեզիդենտության ժամանակ անհանգստացնում էր ինտերվենցիան Վիետնամում, և նա հանդես էր գալիս դրա դեմ։ Ըստ որում այդ պայքարը տարվում էր տարբեր ձևերով։ Այսպես, օրինակ, 1962 թվականին հրապարակվեց 16 անվանի ամերիկյան գիտնականների և իրավաբանների կողմից ստորագրված «ռեկլամային հայտարարությունը»։ Այդ բաց նամակ էր պրեզիդենտ Քենեդիին։ Պրեզիդենտի ուշադրությունը, մասնավորապես, հրավիրվում էր 1954 թվականին իր արտահայտած մտքերի վրա, երբ Քենեդին ընդունում էր Հնդկաչինում հաղթանակի հասնելու՝ ֆրանսիական գաղութարարների ջանքերի անհեռանկարությունը։ Քենեդիին խորհուրդ էին տալիս ետ կանչել ԱՄՆ-ի ռազմական ուժերը Հարավային Վիետնամից և կատարել 1954 թվականի Ժնևի համաձայնագիրը»[11]։

Ամերիկյան քաղաքական որոշ գործիչներ արդեն հասկանում էին, որ գեներալ Թեյլորի առաջարկած և պենտագոնի ակտիվ ագրեսիվությունը գտած կուրսը սխալ է։ Դելիում ամերիկյան դեսպանն ակնարկում էր Քենեդիին, որ առանց Դիեմին «հեռացնելու» ԱՄՆ-ը չի կարող հաջողության որևէ հույս ունենալ Հարավային Վիետնամում։ Այդ տեսակետն էր պաշտպանում ամերիկյան հայտնի քաղաքական գործիչ Ավերել Հարրիմանը[12]։

Սակայն Քենեդիի կառավարությունն ավելի էր շեղվում դեպի վտանգավոր կուրս։ 1962 թվականի հունվարի 31-ին,



ելույթ ունենալով մամուլի կոնֆերանսում, ԱՄՆ-ի պրեզիդենտն ասաց. «Միացյալ Նահանգները ուժեղացրել են օգնությունն այդ կառավարությանը (Հարավային Վիետնամին.— Ա. Գ.)[13]։ Ըստ որում, ԱՄՆ-ի կառավարությունն այս հարցում մեծ հույսեր էր կապում ԱՆԶՅՈՒՍ՝ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի բլոկի անդամների վիետնամական ավանտյուրայի մեջ ներքաշվելու հետ։ 1962 թվականի մայիսի 8-ին և 9-ին Կանբերայում տեղի ունեցավ Ավստրալիայի, Նոր Զելանդիայի արտաքին գործերի մինիստրների և պետական քարտուղար Ռասկի հանդիպումը։ Հրապարակված կոմյունիկեում նշվում էր, որ մինիստրները իրենց լրիվ աջակցությունն արտահայտեցին Վիետնամի Հանրապետության կառավարությանը պաշտպանության նպատակով ցուցաբերվող օգնության միջոցներին ընդդեմ ապստամբների։ «Ապստամբներ» ասելով նրանք նկատի ունեին, ինչպես նշվում էր կոմյունիկեում, Հյուսիսային Վիետնամի աջակցությամբ «կոմունիստական ապստամբությունը»[14]։ Վիետնամական ավանտյուրային ներքաշվելու Ավստրալիայի և Նոր Զելանդիայի կառավարությունների համաձայնությունը կարևոր էր ԱՄՆ-ի համար, քանի որ ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ի արևմտաեվրոպական դաշնակիցներն այդ հարցում ընդհանուր առմամբ զգույշ դիրք էին գրավում։

1963 թվականի սկզբին Հարավային Վիետնամում արդեն 12 հազար ամերիկյան «խորհրդականներ» կային, որոնք ակտիվորեն օգնում էին Դիեմի ռեժիմին պայքարելու ազգային-ազատագրական շարժման ուժերի դեմ։ ԱՄՆ-ն իր «օգնությունը» սայգոնյան ռեժիմին հասցրեց տարեկան մինչև 400 մլն. դոլարի[15]։ Չնայած դրան, ազգային-ազատագրական շարժման մարտիկները շարունակում էին հարվածներ հասցնել Դիեմի մարիոնետային զորքերին։ Քենեդիի պրեզիդենտության շրջանում Հարավային Վիետնամի հայրենասիրական ուժերը ոչնչացրել կամ գերի էին վերցրել հակառակորդի 300 հազար մարդ, ինչպես նաև ամերիկյան ավելի քան 2 հազար զինվոր ու սպա։ Հարավվիետնամական զինվորականությունը գզվռտում էր իրար։ Դիեմի կլիկը հետզհետե բաժանվում էր իրար թշնամի խմբավորումների։

ԱՄՆ-ում հրապարակվեց Սայգոնում ամերիկյան թղթակից Դեյվիդ Հալբերսթեմի հոդվածաշարը, որտեղում կասկածի տակ էր վերցվում Հարավային Վիետնամում դեմոկրատների կառավարության կուրսը։ Քենեդին, պետդեպարտամենտի խորհրդով, պահանջեց Սայգոնից ետ կանչել Հալբերսթեմին[46]։ Ջանալով հանգստացնել ամերիկյան հասարակական կարծիքը, պրեզիդենտը 1963 թվականի հունվարին անգամ հայտարարեց կոնգրեսին, որ «Դիեմի ռեժիմի և ԱՄՆ-ի գործերը վատ չեն ընթանում»[47]։ Դա, իհարկե, պատրանք էր։ Վիետնամում վիճակի գունազարդումը դարձել էր պաշտոնական անձանց ելույթների բնորոշ գիծը։ Այսպես, օրինակ, 1963 թվականի ապրիլի 18-ին ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռասկը հայտարարություն արեց, որում նշեց, որ հարավվիետնամական զորքերը «լավ են մարտնչում», և որ «նախաձեռնությունը կառավարական զորքերի կողմն է»[48]։

1963 թվականի փետրվարի 25-ին վերադառնալով Հարավ-Արևելյան Ասիայից, սենատորների խումբը Մենսֆիլդի գլխավորությամբ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի գծով հանձնաժողովին զեկուցագիր ներկայացրեց, որում բավական քննադատաբար գնահատեց ԱՄՆ-ի կառավարության քաղաքականության կուրսը Վիետնամում[49]։ Զեկուցագրում հոռետեսորեն էին գնահատվում ամերիկյան նոր ստրատեգիայի շանսերը Վիետնամում և նշվում, որ այն ամենևին էլ նոր չէ։ Սենատորները նախազգուշացնում էին ԱՄՆ-ի կառավարությանը, որ նրա քաղաքականությունը Վիետնամում հանգեցնում է այն բանին, որ այնտեղ ընթացող պատերազմը վերածվում է ամերիկյան պատերազմի։ Իրադարձությունների այդպիսի զարգացումը «կարող է հանգեցնել ամերիկացիների կյանքերի այնպիսի կորուստների և ռեսուրսների այնպիսի մասշտաբով վատնումների, որ դա արդեն Միացյալ Նահանգների շահերի հետ քիչ առնչություն կունենա»[50]։

1963 թվականի կեսերին ամերիկյան մամուլում սկսում են տպագրվել հոդվածներ, որտեղ Հարավային Վիետնամում տիրող իրավիճակի մասին ճշմարտության հատիկներ են նշմարվում։ Հրապարակվում են ի նշան Դիեմի ռեժիմի դեմ բողոքի իրենց այրող բուդդայական կրոնավորների լուսանկարները։ Դիեմի հետ հարաբերությունները սկսեցին սրվել։ Հուլիսի 17-ին իր մամուլի կոնֆերանսում պրեզիդենտ Քենեդին անգամ դժգոհություն հայտնեց, որ բուդդայականների հետ կոնֆլիկտը սրվում է ճիշտ այն պահին, երբ, ինչպես նա արտահայտվեց, «ռազմական գործողություններն ավելի լավ են ընթանում», քան առաջ։ Այդ հանդիմանություն էր սայգոնյան ռեժիմին։ Դրա հետ մեկտեղ ԱՄՆ-ի կառավարությունը շարունակում է հուսալ, որ ԱՄՆ-ի օգնությունը Սայգոնին կարող է հաղթանակ բերել։ Պրեզիդենտը հայտարարում է. «Մենք չենք դադարի այս ուղղությամբ գործելուց։ Ըստ իս, եթե մենք դուրս գայինք այնտեղից, ապա ձախողման կենթարկվեինք ոչ միայն Հարավային Վիետնամում, այլև Հարավ-Արևելյան Ասիայում, այդ պատճառով էլ մնալու ենք այնտեղ»[51]։ Այս խոսքերի տակ թաքնված էր սարսափ ազգային-ազատագրական շարժման ուժերի հաջողությունների նկատմամբ։

Զգալով մոտալուտ կրախը, Վաշինգտոնում սայգոնյան ռեժիմի դեսպանը «հրաժարական տվեց»։ Սայգոնում ամերիկյան դեսպանությունը մեկը մյուսից տագնապալի հեռագրեր էր ուղարկում Վաշինգտոն, որոնք վկայում էին, որ Նգո Դին Դիեմը զրկված է որևէ աջակցությունից անգամ կաշառակերության մեջ խրված տեղական շրջաններում։

1963 թվականի օգոստոսի 21-ին Քենեդին Սպիտակ տանը Վիետնամի պրոբլեմին նվիրված արտակարգ խորհրդակցություն է հրավիրում։ Նրանում որոշում ընդունվեց սահմանազատվել Դիեմի կառավարության առավել անճոռնի գործողություններից։ Օգոստոսի 23-ին պետդեպարտամենտը հանդես եկավ հայտարարությամբ, որ «Հարավային Վիետնամի կառավարությունը խախտել է հավաստիացումներն այն մասին, որ նա բուդդայականների հետ հաշտեցման քաղաքականություն է անցկացնում, և որ ԱՄՆ-ը դատապարտում է այդ կարգի ռեպրեսիվ միջոցները»[52]։

Քենեդին անձնական գաղտնի ուղերձ է հղում Դիեմին, որում նշվում է, որ վերջինս կորցնում է «հասարակայնության աջակցությունը»։ Նա Դիեմից պահանջում է «ավելի ճկուն ներքին քաղաքականություն» վարել, նախազգուշացնելով, որ հակառակ դեպքում ԱՄՆ-ի կառավարության հա-

մար դժվար կլինի «օգնություն» ցույց տալ սայգոնյան ռեժիմին[53]։

Շուտով Սայգոն է ժամանում ամերիկյան նոր դեսպան Հենրի Քեբոտ Լոջը։ Այնուհետև Քենեդին Հարավային Վիետնամից ետ է կանչում ԿՀՎ-ի ներկայացուցչին, որը հայտնի էր իբրև Դիեմի կողմնակից[54]։ Իր տագնապալի ուղերձներով Լոջը համոզում է Քենեդիին, որ ԱՄՆ-ի համար ավելի շահավետ կլինի Դիեմին վերացնելը։ Դիեմին այլ մարդկանցով փոխարինելու կողմնակից էին պետդեպարտամենտը, պետական քարտուղարի օգնական Ռ. Հիլսմանը։ Պենտագոնը և ԿՀՎ-ն, սակայն, համառում էին փոխարինման հարցում[55]։ Պրեզիդենտի օգնական Սորենսենի խոստովանությամբ, զինվորականությունն ու ԿՀՎ-ն պաշտպանում էին պատերազմական գործողությունները ու Դիեմի ռեժիմը և կասկածի տակ էին դնում նման որևէ այլ պարագլուխ գտնելու հնարավորությունը, որը կարողանար նման եռանդով կազմակերպել ռազմական գործողությունները[56]։

1963 թվականի նոյեմբերի 2-ին տեղի ունեցավ Հարավային Վիետնամում տիրող իրավիճակին նվիրված Ազգային անվտանգության խորհրդի հատուկ նիստ։ Այնտեղ իրավիճակի գնահատմամբ ելույթներ ունեցան պաշտպանության մինիստր Ռ. Մակնամարան և գեներալ Մ. Թեյլորը։ Խորհուրդը հավանություն տվեց նրանց առաջարկություններին։ Ինչի՞ն էին դրանք հանգում։ Հայտարարվեց, որ ԱՄՆ-ը շարունակելու է «օգնել» սայգոնյան ռեժիմին, այլ կերպ ասած, միջամտել Վիետնամի ներքին գործերին։ Սայգոնին ցուցաբերվող ռազմական «օգնության» ծրագիրը դիտվեց «ակնառուորեն խելամիտ»։ Մակնամարան և Թեյլորը հայտնեցին, և այդ պաշտոնապես նշվեց մամուլում լայն տարածված որոշման մեջ, որ ԱՄՆ-ի «ռազմական խորհրդականները» Հարավային Վիետնամում «կլուծվեն» 1965 թվականի վերջին։ Նույնիսկ խոստում էր տրվել, որ մինչև 1963 թվականի վերջը Հարավային Վիետնամից դուրս կբերվեն ամերիկյան 1000 «խորհրդականներ»[57]։

1963 թվականի աշնանը ամերիկյան կառավարության անդամներն իրենց անձնական դատողություններում անհամեմատ ավելի հոռետես էին, քան հրապարակային ելույթներում։ Լավ ծանոթ լինելով ամերիկյան «քաղաքական խոհանոցին», «Նյու-Յորք թայմս» թերթի ժուռնալիստ Թոմ Ուիքերը, որը Քենեդիի պրեզիդենտության ժամանակ հավատարմագրված էր Սպիտակ տանը, ուղղակիորեն գրում էր, թե «1963 թվականի ընթացքում անընդհատ ավելանում էին պատերազմական և քաղաքական ծախսերը... և համապատասխանաբար Քենեդիի կառավարությունում ավելանում էին տարակարծությունները»[58]։ Ուիքերը նշում էր, որ պենտագոնը և Հարավային Վիետնամում ամերիկյան զորքերի գլխավոր հրամանատար Փոլ Հարքինսը շարունակում էին համառել հարցի ռազմական լուծման վրա։ Դեռ ավելին, վերջինս համոզված էր, որ ամեն տեսակի «քաղաքական ռեֆորմները» կքայքայեն Դիեմի ռեժիմը և կթուլացնեն Հարավային Վիետնամում ԱՄՆ-ի ռազմական ջանքերի արդյունավետությունը։ Ըստ Ուիքերի, պրեզիդենտ Քենեդին 1963 թվականի աշնանը, սակայն, սկսեց ունկնդրել նրանց, ովքեր այն տեսակետն էին արտահայտում, որ Վիետնամի պրոբլեմը լուծելու համար ԱՄՆ-ը պետք է ուժեղացնի ջանքերը «քաղաքական լծակների» կիրառման ուղղությամբ։ Միևնույն ժամանակ, նկատում է Ուիքերը, եթե պրեզիդենտ Քենեդին մտորում էր Վիետնամում արտաքին քաղաքականության այլընտրանքների վրա, ապա պրեզիդենտ Ջոնսոնն այդ չարեց։ Ընդունելով, որ Քենեդիի կառավարությունը սկզբունքորեն «կարող է այն նույն քաղաքականությունը վարել, ինչ որ Ջոնսոնը», Ուիքերը հայտնում է, որ Սայգոնում ամերիկյան դեսպան Լոջը[59] նրանց թվում էր, ում հետ հանգամանորեն, Քենեդիի սպանությունից հետո, առաջին զրույցը ունեցավ Ջոնսոնը։ Լսելով նրա զեկուցումը, Ջոնսոնը հայտարարեց. «Ես ցանկություն չունեմ կորցնելու Վիետնամը... Չեմ կարծում, թե կոնգրեսը ցանկանա, որ կոմունիստները տիրեն Հարավային Վիետնամին»[60]։ Լոջին տրվեցին համապատասխան հրահանգներ, և Դիեմի փոխարինողներին խոստացվեց ամենայն աջակցություն։

1963 թվականի աշնանը Դիեմի ռեժիմից դժգոհությունը Վաշինգտոնում հասավ իր գագաթնակետին։ Նգո Դին Դիեմի ռեժիմը ընկավ, ինքը դիկտատորը սպանվեց, բայց նրան

փոխարինելու եկավ զինվորական նոր խունտան։ ԱՄՆ-ի կառավարությունը Դիեմի տեղը նոր մարիոնետ նստեցրեց։

Ռազմական ինտերվենցիայի քաղաքականությունը շարունակվում էր։

Արդեն 1963 թվականի նոյեմբերի 8-ին, ելույթ ունենալով մամուլի կոնֆերանսում, ԱՄՆ-ի պետական քարտուղար Դին Ռասկը հայտարարեց, որ «այժմյան ռեժիմը արագորեն սկսեց ձգտել հասնելու հասարակայնության աջակցությանը, և որ ԱՄՆ-ի կառավարությունը «վստահություն է զգում ստեղծված հնարավորություններից»։ Նա համոզում էր, որ Սայգոնի կառավարության և Հարավային Վիետնամի ժողովրդի միջև «խզումը» սկսում է վերանալ, իսկ «համագործակցությունը»՝ վերականգնվել[61]։ Դրանից մեկ օր առաջ, նոյեմբերի 7-ին, ԱՄՆ-ը հայտնեց այն մասին, որ «մտադրվում է ճանաչել» «հեղափոխական ռեժիմը», որի գլուխ նոյեմբերի 2-ին կանգնեց գեներալ Դուոնգ Վան Մինը[62]։ Իհարկե, Սայգոնում «հեղափոխական և ոչ մի ռեժիմ» չկար։ Պարզապես այնտեղ նոր մարիոնետ հայտնվեց։ Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ Քեննեդին ի վերջո եկավ այն մտքին, որ Վիետնամում հին քաղաքականությունը շարունակելն անմտություն է։ Ողբերգական մահից մի քանի շաբաթ առաջ նա ասել է. «Մենք կարող ենք օգնել նրանց, մենք կարող ենք նրանց ռազմամթերք տրամադրել, մենք կարող ենք մեր մարդկանց ուղարկել այնտեղ որպես ռազմական խորհրդատուներ, բայց պատերազմը նրանք իրենք պետք է շահեն»[63]։ Պրեզիդենտի այս խոսքերում դեմագոգիկ տոնի հետ մեկտեղ այնուամենայնիվ նկատելի են Վիետնամի պրոբլեմին նոր մոտեցման սաղմնավորման որոշակի առկայծումներ։ Քաղաքականապես հասունացած պրեզիդենտը սկսել էր, ըստ երևույթին, հասկանալ, որ Հարավային Վիետնամի գործերին անմիջական ամերիկյան միջամտությունը ձախողման է դատապարտված։

Ինչո՞վ է սակայն բացատրվում այն, որ ԱՄՆ-ի կառավարող էլիտան այդպիսի համառությամբ էր կառչում վիետնամական հողից։ Գործոններից մեկն այն էր, որ ռազմաարդյունաբերական կոմպլեքսն այդ ավանտյուրայից մեծ շահույթ էր ստանում և չէր ուզում այն ձեռքից բաց թողնել։



Մեկ անգամ պատասխանելով մամուլի աշխատակցի այն հարցին, թե արդյոք շահավետ բիզնես է Վիետնամի պատերազմը, ամերիկյան հայտնի քաղաքական գործիչ Դ. Քենանը խոստովանեց, որ այդ պատերազմից մեծ շահ, անկասկած, ունեն այն արդյունաբերական ճյուղերը, որոնք բանակին զենք և համապատասխան նյութեր են մատակարարում։ Այդ արդյունաբերական ճյուղերը, ըստ նրա, կհամաձայնեին ռազմական գործողությունները դադարեցնել միայն այն դեպքում, եթե երաշխավորություն ստանային, որ շարունակելու են մատակարարումը բանակին։

ԱՄՆ-ի քաղաքականությունը Վիետնամում, քաղաքականություն, որը երկար ժամանակ բացառապես ռազմական ուժի վրա էր հենվում, ռազմաքաղաքական հին դրույթների խոր ճգնաժամի վառ օրինակը, նրա ղեկավարների կողմից հասարակական զարգացման պրոցեսները, աշխարհում արմատապես փոփոխված իրադրությունը չըմբռնելու վկայություն հանդիսացավ։ Այդ կոպիտ իմպերիալիստական քաղաքականությունը սակայն նոր պրեզիդենտ Լինդոն Ջոնսոնի ղեկավարությամբ անցկացվում էր ավելի լավ կիրառման արժանի մղումով։ Պենտագոնի ռազմական էսկալացիան Վիետնամում Ջոնսոնի օրոք սկսեց արագ թափ վերցնել։

Ամերիկյան ռազմական էսկալացիան Վիետնամում բնութագրվում է հետևյալ տվյալներով։ 1955 թվականի փետրվարի 12-ին Հարավային Վիետնամում սկսեց իրականացվել ֆրանսիական զորքերի փոխարինումը ամերիկյան «խորհրդականներով»։ 1960 թվականին, պաշտոնական տվյալներով, նրանց թիվն այնտեղ արդեն հասել էր 685-ի։ 1961 թվականի վերջին պրեզիդենտ Քեննեդին ռազմական «խորհրդատուների» թիվը ավելացրեց հասցնելով մինչև 3200-ի, իսկ 1962 թվականի վերջին՝ մինչև 11 300-ի։ 1963 թվականի դեկտեմբերին Ջոնսոնը «խորհրդականների» թիվը հասցրեց մինչև 23 300 մարդու։ Վաշինգտոնի կազմակերպած «Տոնկինյան միջադեպից» հետո, 1965 թվականի փետրվարից ԱՄՆ-ը սկսեց ՎԴՀ-ի ինտենսիվ ռմբակոծությունները։ 1965 թվականի մարտի 8-ին ամերիկյան մարտական ստորաբաժանումները դե-

սանտ բջան Հարավային Վիետնամում և սկսեցին պայքարը ժողովրդաազատագրական ճակատի ուժերի դեմ։ 1965 թվականի դեկտեմբերին պրեզիդենտ Ջոնսոնը հայտարարեց, որ ԱՄՆ-ը Վիետնամ է ուղարկելու 400-հազարանոց բանակ։ 1968 թվականի մարտ ամսին Վիետնամում հաշվվում էր 543 հազար ամերիկյան սպա և զինվոր[64]։

Վերը բերված տվյալներից հետևում է, որ ամերիկյան ռազմական էսկալացիան առանձնապես լայն բնույթ ընդունեց, երբ Ջոնսոնը, հաղթելով 1964 թվականի պրեզիդենտական ընտրություններում, ամուր հաստատվեց Սպիտակ տանը։ Մի կողմ թողնելով ամեն տեսակի տատանումները, Ջոնսոնը սկսեց խոնարհաբար իրագործել ամերիկյան «անգղների» գրեթե բոլոր պահանջները։ Վիետնամում ԱՄՆ-ի նոր կառավարությունը դիմեց այն քայլին, որին խիստ տատանվում էր գնալ Քենեդին։ Ջոնսոնի կառավարությունը ձգտում էր հաղթանակի, ուստի Հարավային Վիետնամ ուղարկեց ռազմական մեծ ուժեր։

Դեռ ավելին, Ջոնսոնի կառավարությունը հասավ այն բանին, որ կոնգրեսը Վիետնամի գործերին ամերիկյան միջամտության սանկցիա տվեց։ ԱՄՆ-ը 1964 թվականին կազմակերպեց «Տոնկինյան միջադեպը» և ուռճացրեց այդ հնարովի «իրադարձությունը», որը ամերիկյան կոնգրեսականների վրա որպես ճնշման միջոց օգտագործվեց՝ ընդունելու համապատասխան բանաձև («Տոնկինյան բանաձևը»)։ Հետագայում, չորս տարի անց, 1968 թվականին, արտաքին գործերի գծով սենատական հանձնաժողովը հատուկ հետաքննություն անցկացրեց, որը ցույց տվեց, որ ամերիկյան ռազմանավերի վրա ՎԴՀ-ի ռազմանավերի հարձակման «ապացույցները» չկան։ Պարզվեց նաև, որ ամերիկյան նավերը «Տոնկինյան միջադեպի» ժամանակ իսկապես խախտել են ՎԴՀ-ի տերիտորիալ ջրերը[65]։

Մի քանի խոսք 60-ական թվականներին ԱՄՆ-ում այդքան տարածված տխրահռչակ «դոմինոյի տեսության» մասին։

Հետագայում, արդեն 1969 թվականին, Մաքնամարայից հետո պաշտպանության մինիստրությունը ղեկավարող Կլարկ



Քլիֆորդը նոր փաստեր բացահայտեց։ Մեկ անգամ նա ներկա է եղել Էյզենհաուերի և Քենեդու հանդիպմանը։ Ըստ Քլիֆորդի, Էյզենհաուերը համոզելիս է եղել Քենեդուն, որ «հենց Լաոսն է ամբողջ Հարավ-Արևելյան Ասիայի բանալին» և որ ԱՄՆ-ը «պետք է հնարավոր ամեն բան անի, որպեսզի ՍԵԱՏՕ-ի մեջ մտնող պետությունների համոզի համաձայնել Լաոսի պաշտպանությունը մեզ հետ համատեղ պաշտպանելու ծանր բեռի հետ»։ Ավելին, Էյզենհաուերը Քենեդուն խորհուրդ էր տալիս, որպեսզի «Միացյալ Նահանգները հաստատուն դիրք գրավեն Հարավ-Արևելյան Ասիայում»։ Քլիֆորդը խոստովանեց, որ նման խորհուրդների հետևանքով Քենեդին ընկնում էր «դոմինոյի տեսության» մեծ ազդեցության տակ, որի համաձայն ենթադրվում էր, որ Վիետնամի կամ Լաոսի անկումով Հարավ-Արևելյան Ասիայի երկրները մեկը մյուսի ետևից դուրս կգան ԱՄՆ-ի ենթակայությունից, ինչը որպես «կոմունիստական սպառնալիք» էր մեկնաբանվում։ Ելնելով այդ ենթադրությունից, պրեզիդենտ Քենեդին 1961 թվականի գարնանը հայտնեց, որ «Վիետնամից կամ Տայլանդից հեռանալը (ԱՄՆ-ի — Ա. Գ.) ամբողջ շրջանի կորուստ կնշանակի»։ Քլիֆորդը գտնում է, որ Քենեդին «երբեք չէր տատանվում այդ դիրքավորման հարցում»[66]։

Հարավ-Արևելյան Ասիայում, Լաոսում և Վիետնամում Քենեդու կառավարության արտաքին քաղաքականությանը նման մեկնաբանություն տալով, Քլիֆորդը որոշակի հակասության մեջ է մտնում պրեզիդենտ Քենեդու քաղաքականության՝ ամերիկյան պատմաբան Ա. Շլեզինջերի մեկնաբանման հետ, որը այնպիսի մի վերսիա առաջ քաշեց, թե պրեզիդենտ Քենեդին իբր չէր ձգտում Հարավ-Արևելյան Ասիայում, առանձնապես Վիետնամում, ամերիկյան միջամտության էսկալացման։ Լրիվ համոզվածությամբ կարելի է ասել, որ ինչպես Քլիֆորդի, այնպես և Շլեզինջերի հայացքները բավական կանխակալ էին։ Եթե առաջինը ձգտում էր արդարացնել ամերիկյան ագրեսիայի էսկալացումը Վիետնամում, միևնույն ժամանակ այն սխալ համարելով, ապա երկրորդը ձգտում էր անմեղ դուրս բերել Քենեդուն, նրան ավելի ողջա-

միտ, քան այդ իրականում էր, մտադրություններ վերագրելով։

1968 թվականին Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպան գեներալ Ջեյմս Հևինը ամերիկյան «Սատերդեյ իվնինգ պոստ» ամսագրում հրապարակված հոդվածում և ԱՄՆ-ի կոնգրեսում ունեցած ելույթում նշել է, որ «1963 թվականի նախօրյակին պատերազմը Վիետնամում շատ վատ էր ընթանում։ Պրեզիդենտ Քենեդին մեծ կասկածանքով էր նայում գործողությունների մեր կուրսին։ Բավական շատ ենթադրություններ կան, թե ինչ կաներ և չէր անի պրեզիդենտը Վիետնամում, եթե կենդանի մնար։ Ես տասնհինգ տարի նրա հետ միասին մանրակրկիտ կերպով ռազմական հարցեր էի քննարկում և գիտեմ, որ նա ամբողջապես դեմ էր Հարավ-Արևելյան Ասիա ամերիկյան զորքեր ուղարկելուն։ Սպանությունից առաջ նրա հրապարակային ելույթները հաստատում են այդ տեսակետը։ Եկեք մեռածների վրա չբարդենք մեր սեփական մեղքերը»[67]։ Հևինը Վիետնամում ամերիկյան քաղաքականության հետագա ձախողումների համար մեղքը լրիվ գցեց Ջոնսոնի կառավարության վրա։

Արդեն Քենեդու սպանությունից հետո ամերիկյան քաղաքականության շուրջը Վիետնամում սկսեց քննադատական ալիք բարձրանալ, որը հատկապես սաստկացավ 1967—1968 թվականներին։ Ջոնսոնի կառավարության ընտրած «ռազմական հաղթանակի» կուրսը ամերիկյան ավելի մեծ թվով քաղաքական գործիչներ միանգամայն անհեռանկար էին համարում։ Կոնգրեսի անդամները, այդ թվում սենատորները, կառավարությունից պահանջում էին, որպեսզի ԱՄՆ-ը Վիետնամից «պատվավոր հեռանալու» ճանապարհ գտնի, և այնուհետև երբեք ամերիկյան ռազմական ստորաբաժանումները Ասիայում տեղի ունեցող ցամաքային պատերազմներին չներգրավվեն։ Այդ կարծիքին, մասնավորապես, հանգեց հրահանգավորման նպատակով Հարավային Վիետնամ մեկնած և վերադարձած Ջոզեֆ Կլարկը, որը հատուկ զեկուցագիր պատրաստեց արտասահմանյան գործերի սենատական հանձնաժողովի համար[68]։

Այսպիսով, բուն ԱՄՆ-ում, 60-ական թվականների երկ-



րորդ կեսին, արտակարգ սաստկացավ Վիետնամում ամերիկյան քաղաքականության հիմքերի քննադատությունը։ Սակայն այդ քննադատներից շատերը այն ժամանակ գտնվում էին ինտերվենցիոնիստական դիրքերում, քանի որ, նախ և առաջ, ԱՄՆ-ի կողմից հետապնդվող նպատակներն ու կիրառվող մեթոդները արդարացի էին համարում և, երկրորդ, չէին պատկերացնում բացասական այն բոլոր հետևանքները, որ կարող է ունենալ Քենեդու կառավարության քաղաքականությունը հենց ԱՄՆ-ի համար։

ԱՄՆ-ում 1968 թվականին լույս տեսավ կոլեկտիվ մենագրություն. «Կարո՞ղ ենք արդյոք մենք հաղթել Վիետնամում» ընդհանուր խորագրով, որտեղ ամերիկյան հետազոտող Հերման Կանը, մասնավորապես, ուղղակի հանգում է այն եզրակացության, որ Վիետնամում ամերիկյան քաղաքականության բացասական հետևանքներն այնքան լուրջ բնույթ են ընդունում ԱՄՆ-ի համար, որ ո՛չ պրեզիդենտ Քենեդին, ո՛չ պրեզիդենտ Ջոնսոնը երբեք չէին միջամտի (Վիետնամի գործերին.— Ա. Գ.), եթե կարողանային կանխատեսել։ Սակայն, գտնում է Կանը, Վիետնամի գործերին լայնորեն միջամտելու որոշումը, ըստ էության, ընդունել է Քենեդու կառավարությունը։ Այնուհետև Կանը, հակասելով իրեն, պնդում է, որ, չնայած ԱՄՆ-ի կառավարությունը «ընդհանուր առմամբ սխալ էր հասկանում Ասիայում կոմունիզմի զսպման պրոբլեմը, այդուհանդերձ նրա ստրատեգիայի հիմնական ուղղությունները անմիտ չէին և չէին կարող անմիտ արդյունքների հասցնել»[69]։ Հետևաբար, Կանը ուղղակիորեն Քենեդու կառավարության վրա գցեց Վիետնամի գործերին ամերիկյան միջամտության էսկալացման պատասխանատվությունը։ Նա գրում էր. «Պրեզիդենտ Քենեդին, ի՛հարկե, պարզապես ավելացրեց ամերիկյան խորհրդականների թիվը՝ 600-ից հասցնելով 1700-ի (իսկ այնուհետև նույնիսկ ավելի)։ Կարծում եմ, որ հենց այդ որոշումը այն ժամանակի պայմաններում պատերազմի հանգեցրեց, որը մենք այսօր վարում ենք, այն իմաստով, որ այն գրեթե անհնարին դարձրեց մեզ համար՝ պրոբլեմի սրման հետ մեկտեղ չավելացնել մեր պարտավորությունները»[70]։

Վիետնամում ամերիկյան ինտերվենցիայի էսկալացման համար Քեննեդիի կառավարության պատասխանատվության չափի գնահատմանը Կանի նման մոտեցումը, ինչպես, այդ հարցում ամերիկյան հետագա ամբողջ քաղաքականությունը արդարացնելու միտում էր, այն իբրև «անխուսափելիություն» ներկայացնելով։ Նա, օրինակ, պնդում էր նաև, որ Վիետնամում Ջոնսոնի կառավարության նպատակներն «ամենևին ագրեսիվ չէին» և անհեթեթ միտք էր արտահայտում, որ ԱՄՆ-ը «դեռ կարող է շահել այդ պատերազմը»[71]։ Միջուկային էսկալացիայի և «անմտության մասին մտքերի» այդ տեսաբանին հետագայում պատմությունը մերժեց որպես անհաջողակ ֆանտազյորի։

Ամերիկյան մեկ ուրիշ բուրժուական գիտնական էդմունդ Սթիլմանը այդ նույն մենագրությունում անկեղծորեն խոստովանում է. «Քննադատների մեջ (վիետնամական ագրեսիայի.—Ա. Գ), անտարակույս, կան շատերը, ովքեր այժմ Վիետնամում մեր պարտավորությունները հենց սկզբից սխալ էին համարում։ Բայց եթե ազնիվ լինենք, ապա պետք է խոստովանենք, որ կոնգրեսի դահլիճում եղած քննադատներից կամ Քեննեդիի կառավարության նախկին անդամներից քչերի ձեռքերն են այդ առումով մաքուր։ Տխուր փաստն այն է, որ Վիետնամում մեր ներկայիս քաղաքականության «հարգարժան» քննադատների մեծ մասը ժամանակին պաշտպանում էր մեր նպատակներն այդ երկրում և տարակարծիք էր միայն տակտիկայի հարցերում։ Նրանց համար այդ առավելապես տնտեսական և սոցիալական, քան ռազմական պրոբլեմ էր։ Բայց ինչպես ներկայիս քաղաքականության ջատագովները, այնպես և նրա քննադատները համակարծիք էին, որ Վիետնամում ամերիկյան միջամտության որևէ ձև անհրաժեշտ էր և համապատասխանում էր մեր ազգային նպատակներին»[72]։

Այսպիսով, դեմոկրատների ադմինիստրացիայի անդամները 60-ական թվականների աստիճանաբար սկսում էին գիտակցել Վիետնամի գործերին ԱՄՆ-ի միջամտության անհեռանկարությունը, բայց դա չազդեց ամերիկյան ռազմական ինտերվենցիայի շարունակմանը Ասիայի այդ շրջանում։ Ուժի



միջոցով Վիետնամի պրոբլեմը «լուծելու» Քեննեդիի և հատկապես Ջոնսոնի կառավարությունների ստրատեգիական գիծը հանգեցրեց Վիետնամի ժողովրդի դեմ լայն ագրեսիայի ծավալմանը։

Ներկայումս, երբ Վիետնամը լրիվ անկախ և որպես սոցիալիստական միասնական պետություն ՄԱԿ-ի անդամ է դարձել, այդ քաղաքականության հեղինակների և իրականացնողների սնանկությունն արդեն պատմական փաստ է։ Մեկ անգամ ևս ապացուցվեց, որ սոցիալիզմի և ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման դեմ նկրտումները չեն կարող հաջողություն ունենալ։ Այդ դասն այսօր երկու համաշխարհային հասարակական-քաղաքական սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի պայքարի պայմաններում տեղի ունեցող համաշխարհային հեղափոխական պրոցեսի իրականություն է։ Այդ ամենը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը ստիպում է հարմարվել աշխարհում ստեղծված նոր իրադրությանը, օգտագործելով նեոգաղութատիրության ավելի ճկուն միջոցներ։

## ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻՆ ԱՄՆ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ «ՕԳՆՈՒԹՅԱՆ» ՆՈՐ ՏԵՆԴԵՆՑՆԵՐԸ

Քեննեդիի կառավարության օրոք Վաշինգտոնում սկսեցին մշակվել Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության ավելի ճկուն միջոցներ համաշխարհային հեղափոխական պրոցեսն արգելելու, զարգացող երկրներում սոցիալիստական տենդենցների աճը դժվարացնելու և այդ երկրները դեպի զարգացման կապիտալիստական ուղիներ մղելու նպատակով։ Ամերիկյան «օգնության» հին ձևերը, որոնք իրականացվում էին 50-ական թվականներին, ԱՄՆ-ի կառավարությունը համարեց ոչ բավարար արդյունավետ։ Այդ դիրքորոշումը պրեզիդենտ Քեննեդին ներկայացրեց կոնգրեսին՝ 1961 թվականի մարտի 22-ին արտասահմանյան երկրների օգնության հարցերին նվիրված ուղերձում։ Վերջինում ասվում էր. «Օտարերկրյա օգնության գոյություն ունեցող ծրագրերն ու

կոնցեպցիաները զգալի չափով անբավարար են և մեր պահանջներին չեն համապատասխանում»[72]։ Այդպիսի եզրակացությունը թելադրել էին 50-ական թվականների ամերիկյան «օգնության» ունալ արդյունքները։ 1950-ից մինչև 1960 թվականը արտասահմանյան «օգնության» վրա ԱՄՆ-ի ծախսած 45,8 մլրդ. դոլ.-ից 24,7 մլրդ. դոլ. կամ 54%-ը կազմել է ռազմական «օգնությունը»։ Ըստ որում նման օգնություն ստացան հիմնականում ասիական այն երկրները, որոնք համաձայնեցին իրենց կապել ռազմական բլոկների սայլին։ Ըստ որոշ հաշվարկների, նրանց էր բաժին ընկնում Ասիայի երկրներին ԱՄՆ-ի ցույց տված «օգնության» ամբողջ գումարի մոտ 90%-ը[74]։ Նույն վիճակն էր նաև մյուս մայրցամաքներում։ Կոնգրեսին հղած իր ուղերձում Քենեդին խոստովանում էր, որ «երկրների մեծ մասը, որոնց մենք օգնում ենք, իրականում գրեթե չի մոտեցել տնտեսական կարգավորված զարգացման, եթե համեմատելու լինենք այն ժամանակաշրջանի հետ, երբ օգնություն ցույց տալու մեր գործողությունները դեռ նոր էին սկսվում»[75]։

60-ական թվականների սկզբներին դեմոկրատների կառավարության ծրագրային որոշ հայտարարություններում ավելի մանրամասն են բնորոշված զարգացող երկրների վրա ԱՄՆ-ի «տնտեսական հարձակման» նպատակները։ Արդեն 15 տարուց ավելի են շարունակվում այդ հարձակումը զարգացնելու փորձերը։ Սակայն այդ ջանքերի արդյունքներն ավելի քան համեստ են։

Դեմոկրատների կառավարությունը գտնում էր, որ ամերիկյան «օգնության» հին ձևերը դադարել են արդյունավետ լինելուց։ Ուստի առաջարկվում էր ուղղում մտցնել զարգացող երկրների տնտեսական «օգնության» պրոբլեմների հանդեպ ԱՄՆ-ի մոտեցման մեջ։ Այդ հարցի վերաբերյալ առաջարկությունների էությունը հանգում էր հետևյալին։ Ամերիկյան կառավարության ղեկավարը Վաշինգտոնում միմյանց հետ մրցող կառավարական մի քանի մարմինների փոխարեն ուղղություն տվող կենտրոն ստեղծելու կուրս վերցրեց, մի կենտրոն, որը գլխավորեր արտասահմանյան «օգնության» հարցերը[76]։ Նպատակահարմար համարվեց պետդեպարտամենտի



իշխանության ներքո միավորել այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք էին Միջազգային համագործակցության վարչությունը, Տնտեսական զարգացման ֆոնդը, «Պարեն խաղաղության համար»-ը, «Արտահանման-ներմուծման բանկը», «Խաղաղության կորպուսը»։ Այսպիսով, պետդեպարտամենտի վրա էր դրվում օտարերկրյա պետությունների տնտեսական «օգնության» ծրագրերի կոորդինացման խնդիրը։ Կազմակերպական այդ կառուցվածքին այնուհետև կոնգրեսը հիմնականում հավանություն տվեց։

Մյուս միջոցներից, որոնց օգնությամբ Քենեդիի կառավարությունը մտադրվում էր «կարգ հաստատել» զարգացող երկրներին ամերիկյան «օգնություն» ցույց տալու գործում, կարելի է հիշատակել հետևյալները՝ «առանձին, մեկը մյուսի հետ կապ չունեցող նախագծերի փոխարեն... մանրակրկիտ կերպով մտածված ծրագիր», «երկարաժամկետ պլանավորում և ֆինանսավորում», «հատկապես հենվել տնտեսական զարգացման համար դոլարներով փոխհատուցվող փոխառությունների վրա», չնայած, ինչպես նշվում էր, որոշ դեպքերում անխուսափելի են տեղական վալյուտաներով փոխհատուցվող հատկացումները, ինչպես նաև փոխառությունները։ «Առանձնահատուկ ուշադրություն էր նախատեսվում դեպի այն պետությունները, որոնք ի վիճակի են մոբիլիզացնել սեփական ռեսուրսները, ինչպես նաև բազմակողմանի մոտեցում, այսինքն՝ զարգացող երկրներին օգնություն ցույց տալուն մյուս ինդուստրիալ պետությունների ներգրավում, տնտեսական և ռազմական օգնության առանձնացում այն դեպքում, երբ տնտեսական «օգնությունն» առանձին նշանակություն ունի մեր անվտանգության կարիքները բավարարելու համար»[77]։

Հետևելով այդ դրույթներին, պրեզիդենտ Քենեդին 1961 թվականի մարտի 22-ին կոնգրեսին հղած ուղերձում օտարերկրյա «օգնության» համար 4 մլրդ. դոլար էր խնդրում։ 1961/1962 ֆինանսական տարում այդ գումարից ռազմական կարիքների համար նախատեսվում էր 1600 մլն. դոլար։ Հատկապես նշվում էր, որ տնտեսական «օգնության» համար նախատեսվելիք 2400 մլն. դոլարից 2 մլրդ. դոլարը ծախսվելու

է ամերիկյան էկոնոմիկայի խթանմանը նպաստող ապրանքների և ծառայությունների վրա[78]։

Զարգացող երկրներին «օգնություն» հատկացնելու հարցերում Քեննեդու կառավարության նեոգաղութատիրական ստրատեգիան և տակտիկան սկզբից ևեթ սերտ կապի մեջ էին դրանվում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական գլոբալ ամբողջ ստրատեգիայի հետ, որի հիմնական նպատակը որոշվում էր հակակոմունիստական ուղղվածությամբ։ Բնորոշ է, որ զարգացող երկրներին «օգնության» ավելացման պրոբլեմը, նրա նոր ձևերի հաստատումը ԱՄՆ-ը սկսեց ամենայն լրջությամբ քննարկել միայն այն բանից հետո, երբ սոցիալիստական երկրները, և առաջին հերթին Սովետական Միությունը, սկըսեցին նրանց իրական, հնարավոր արդյունավետ տնտեսական և գիտատեխնիկական օգնություն ցույց տալ։ Ընդ որում, ինչպես հայտնի է, սոցիալիստական երկրները երիտասարդ պետություններին այդ օգնությունը առաջարկում էին առավել բարենպաստ պայմաններով և ուղղում դեպի էկոնոմիկայի այն ճյուղերի զարգացումը, որոնք կարող էին օտարերկրյա մոնոպոլիաներից անկախ ազգային արդյունաբերության զարգացման հիմքը դառնալ։

Զարգացող պետություններին սոցիալիստական երկրների անշահախնդիր օգնությունը չէր կարող չարտահայտվել այդ երկրներում իմպերիալիստական պետությունների, այդ թվում ԱՄՆ-ի, տակտիկայի վրա։ Բուրժուական, և առաջին հերթին ԱՄՆ-ի, կառավարություններն ավելի հաճախակի էին բացահայտորեն ակնարկում, որ զարգացող երկրների մի շարք կառավարություններ այլևս Արևմուտքից օգնություն չեն ստանա, եթե չպայքարեն «ծայրահեղ կոմունիստների» դեմ։ Դրանով իսկ դեռ նոր ոտքի կանգնող պետությունները ընտրության առաջ հայտնվեցին. «օգնության» նկատմամբ Արևմուտքի մենաշնորհ կամ կապիտալիստական երկրներից տնտեսական ողորմություններից երկար ժամանակով զրկվելու հնարավորություն։ Սակայն իմպերիալիստական պետությունների միայն սպառնալիքներն ու պրոպագանդիստական խոստումները բացահայտ անբավարար եղան իրենց դիրքերը զարգացող երկրներում պահպանելու համար։



Զարգացող երկրներում զարգացման առաջավոր տենդենցների վրա պրոպագանդիստական հարձակումներին այս կամ այն չափով հակահարված էին տալիս հենց իրենք, ազգային կառավարությունները և հատկապես կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչները։ Հնդկաստանի կոմունիստական կուսակցության ազգային խորհրդի գլխավոր քարտուղար Աջոյ Գհոշը կուսակցության 6-րդ համագումարում ասաց. «Մենք երբեք չենք գտել և այժմ էլ չենք գտնում, որ Հնդկաստանը չպետք է փոխառություններ ստանա սոցիալիստական լագերի մեջ չմտնող երկրներից։ Բայց հնդիկ ժողովուրդն իրավունք ունի պահանջելու, որպեսզի այն փոխառությունները, որ Հնդկաստանը վերցնում է այս կամ այն երկրից, տրամադրվեն այն նույն բարենպաստ պայմաններով, ինչպես և սոցիալիստական երկրներից ստացվող փոխառությունները, որպեսզի դրանք բոլորը տրամադրվեն պետական սեկտորին, որպեսզի Հնդկաստանի կառավարությունն ինքը և ոչ թե օտարերկրյա կազմակերպությունները որոշեն, թե արդյունաբերության ինչպիսի ճյուղեր են զարգանալու ի հաշիվ այդ փոխառությունների»[79]։

Քեննեդու կառավարության օրոք զարգացող երկրներին ամերիկյան տնտեսական «օգնության» ակտիվացումը զգալի չափով բացատրվում էր իրենց անկախությունը նվաճած Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երիտասարդ երկրների վրա սոցիալիստական երկրների բարեկամական քաղաքականության ազդեցությունը թուլացնելու ձգտումով։

Զարգացող երկրներին տնտեսական «օգնություն» տրամադրելու հարցերում արտահայտված խոր անհանգստությունը դրսևորվեց 60-ական թվականներին՝ այդ հարցերի գծով ամերիկյան հայտնի մասնագետներ Չեսթեր Բոուլսի, Արթուր Շլեզինջերի, Էդլայ Սթիվենսոնի, Մեննեն Ուիլյամսի և ուրիշների կողմից։ Նրանք բոլորը հանդես էին գալիս ոչ միայն հօգուտ զարգացող երկրներին տնտեսական «օգնության» ակտիվացման, այլև այդ բնագավառում զարգացած բոլոր պետությունների ջանքերի համախմբման։ Քեննեդու կառավարությունը, ըստ էության, զարգացող երկրներում համաշխար-

հային իմպերիալիզմի տնտեսական ջանքերի համախմբման կողմնակից էր։

ԱՄՆ-ի կառավարության որոշ անդամներ չէին թաքցնում անգամ, որ այդ բոլոր գործողությունների ետևում բավական որոշակի քաղաքական նպատակ կա։ Այս կապակցությամբ բավական պարզորոշ արտահայտվեց ԱՄՆ-ի պետական քարտուղար Դին Ռասկը. «Մենք հույս ունենք աջակցել տնտեսական օգնության ծրագրի ավելի սերտ միաձուլմանը մեր արտաքին քաղաքականության հետ»[32]։ Զարգացող երկրների նկատմամբ ամերիկյան տնտեսական քաղաքականության չափման ետևում երևում այնքան պարզորոշ էին զգացվում քաղաքական նպատակները, որ ինքը պահանջում էր վերձում ժամանակ առ ժամանակ բողարկել զարգացող երկրներին ԱՄՆ-ի կողմից հատկացվող տնտեսական օգնության նոր ծրագրի իսկական քաղաքական նպատակները։ Օրինակ, պարզաբանելով միջազգային տնտեսական զարգացման մասին օրենքի նախագիծը, Քեննեդին ասում էր. «Տնտեսական զարգացման համար օգնությունը չի կարող այլևս չենթարկվել ժամանակավոր քաղաքական նպատակներին կամ գիտակել միայն որպես այդ նպատակների իրականացման համար միջոց... Մեր նպատակն է՝ աջակցել թույլ զարգացած երկրների մշտական ինքնուրույնությանը»[33]։ Այստեղ առկա է բացահայտ հակասությունը Ռասկի ավելի ուշ արված անկեղծ արտահայտությանը։

Իհարկե, Քեննեդու կառավարության քաղաքականությունը զարգացող երկրների էկոնոմիկայի անկախության ամրապնդումը չէր։ Այդ տարատեսակի արտաքին քաղաքական նպատակների մասին արդեն խոսվել է։ Կարևոր է նշել և այն, որ այդ երկրներին ԱՄՆ-ի օգնությունն զգալի չափով ուղղված էր հենց ամերիկյան էկոնոմիկայի կայունացմանը։

Ամերիկյան ադմինիստրացիայի ներկայացուցիչները բազմիցս ԱՄՆ-ի կոնգրեսի ուշադրությունը հրավիրում էին այն բանի վրա, որ օտարերկրյա պետություններին օգնության ծրագրի կրճատումը կհանգեցնի ամերիկյան ձեռնարկատերերի շուկաների կորստի և շահույթների անկման։ Փրեզիդենտը 1961 թվականի մարտի 22-ի իր ելույթում ուղղակի ասաց, որ



ամերիկյան տնտեսական ծրագրերում զարգացող երկրներին ինչպես փոխառություններ, այնպես և անշահախնդիր հատկացումներ տրամադրելիս ԱՄՆ-ի կառավարությունը առավելագույն չեշտը դնում է նրանց կողմից ամերիկյան արտադրության ապրանքների գնման վրա։ Քեննեդին, բացի այդ, կոչ էր անում նաև անշահախնդիր հատկացումներից որքան հնարավոր է շուտ անցնել ցածր տոկոսներով կամ գրեթե առանց տոկոսների երկարաժամկետ փոխառությունների հատկացմանը։ Նա ասում էր. «Մարման ժամկետները պետք է տարբեր լինեն՝ 50 տարի զարգացման ճանապարհին հենց նոր կանգնած երկրների, և զգալիորեն ավելի պակաս ժամկետներ այն երկրների համար, որոնք մոտենում են ինքնապահովման փուլին»[34]։

1961 թվականի օգոստոսի 31-ին ԱՄՆ-ի կոնգրեսը հավանություն տվեց այն օրենքին, համաձայն որի օտարերկրյա պետություններին օգնություն ցույց տվող բոլոր ամերիկյան հաստատությունները մտան մի միասնական վարչության մեջ, որը ենթարկվում էր պետական դեպարտամենտին։ Յուրաքանչյուր երկրում ստեղծվեց տնտեսական օգնության գծով միասնական միսիա, որի ղեկավարն անմիջականորեն ենթարկվում էր ամերիկյան դեսպանին։ Դեսպանատունը կոորդինացնում էր և՛ տնտեսական, և՛ ռազմական օգնության ծրագիրը, որը մշակում էր ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրությունը։

Իհարկե, զարգացող երկրներին ամերիկյան կապիտալիզմի տնտեսական օգնության ծրագրերը, ինչպես ցույց տվեցին հետագա տարիները, ինքնուրույնության չէին տանում և չէին կարող տնտեսական և, առավել ևս, սոցիալական առաջընթացի հասցնել այն երկրներում, որտեղ դրանք իրականացվում էին։ Միանգամայն հասկանալի է, որ նման առաջընթացի համար զարգացող երկրներին միայն տնտեսական և ֆինանսական օգնությունը բավական չէ։ Դրա համար, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, անհրաժեշտ են սոցիալական և քաղաքական կյանքի բնագավառներում միմյանց հետ շաղկապված գիտակցական և հետևողական մի ամբողջ շարք հեղափոխական վերափոխություններ։ Ասիայի, Աֆրիկայի և

Լատինական Ամերիկայի պետությունների սոցիալական հաջող զարգացման համար անհրաժեշտ է նրանց կյանքը կառուցել գիտական սոցիալիզմի հիմունքներով։ Քենեդիի կառավարության կողմից հատկացվող տնտեսական «օգնությունը» զարգացող երկրներին կարող էր օգտակար լինել միայն այն դեպքում, եթե նրա սերմերը սոցիալական առաջընթացի հողի վրա ընկնեին։ Սակայն հենց դա երբեք չէր մտնում ամերիկյան կապիտալիզմի պլանների մեջ[83]։

Այդ երկրներում կապիտալիզմի, և առաջին հերթին ամերիկյան, դիրքերի համար անհանգստությունն իր արտահայտությունը գտավ Քենեդիի կառավարության մի շարք անդամների ելույթներում։ Այսպես, օրինակ, ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ Չեսթեր Բոուլսը 1961 թվականի ապրիլի 26-ին հայտնեց, որ ԱՄՆ-ը աշխարհի բոլոր երկրների հետ փոխհարաբերություններում յուրատեսակ «խաչմերուկի» առաջ է կանգնած։ Նա գտնում էր, որ պետք չէ տարվել միջազգային ասպարեզում կապիտալիզմի դիրքերով ինքնահրապուրմամբ, ըստ այդմ մեջբերելով պրեզիդենտ Քենեդիի խոսքերն այն մասին, որ ԱՄՆ-ի կառավարությունը մտադիր է օգտվել Կուբայում, Լաոսում և Լատինական Ամերիկայում ստացած դասերից, և կոչ արեց նոր ձևով նայել միջազգային ասպարեզում ամերիկյան նպատակներին և «այն միջոցներին, որոնց օգնությամբ ԱՄՆ-ը ձգտում է դրանք իրականացնել»[84]։

Այն, թե որքանով էր Քենեդիի կառավարությունն անհանգստացած զարգացող երկրներում ստեղծված իրադրությունից, կարելի է զգալ Բոուլսի հետևյալ խոստովանությունից։ Նա ասում էր, որ ԱՄՆ-ին «նետած տնտեսական մեծ մարտահրավերն է Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների պատմության մեջ ամենավիթխարի և անգամ ավելի նշանակալից ու հեռուն տանող հեղափոխությունը իրագործելու ձգտումը, քան Արևմուտքում XVIII և XIX հարյուրամյակներում կատարված արդյունաբերական հեղափոխությունն էր։ «Այդ հեղափոխությունը,— գրում էր Բոուլսը,— կոմունիստները կամ սոցիալիստները չեն կազմակերպել։ Այդ հեղափոխությունն իր արմատներով բխում է ժողովուրդների կարիքներից ու միտումներից, և նրան բնորոշ է իր դինամիկու-



թյունը։ Նրա հիմնական նպատակներն են՝ ազատությունը, տնտեսական առաջընթացը և մարդկային արժանապատվությունը»[85]։

Ի՞նչն էր այդպես հուզում Բոուլսին և պետդեպարտամենտի նրա կոլեգաներին զարգացող երկրներում։ Պարզվում է, դեպի սոցիալիզմ առաջ շարժվելու նրանց հնարավորությունը։ Դժգոհելով, որ գաղութատիրական լծից ազատագրված ժողովուրդները ցանկանում են որքան հնարավոր է շուտ բարելավել իրենց կյանքը, «չեն ցանկանում մի փոքր էլ սպասել», Բոուլսն ուղղակի նախազգուշացնում էր. «Եվ այսուհանդերձ այն նպատակները, որ իրենց առջև դրել են Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդները, ազատության պայմաններում չեն իրագործվի, եթե արտասահմանից նրանց կապիտալներ և տեխնիկական օգնություն չտրամադրվեն։ Եթե այդ օգնությունը չստանան, միակ ելքը կարող է լինել՝ միջոցներ ձեռնարկել արդեն սնանկացած ժողովրդից զարգացման համար անհրաժեշտ խնայողություններ քամելու տոտալ մեթոդներով»[86]։ Տեսնո՞ւմ եք, որքան պարզ է ստացվում ըստ Բոուլսի։ «Ազատության պայմանների» պահպանումը զարգացող երկրներում անհնարին է առանց ինչ-որ չափով տեխնիկական «օգնությամբ» ուղեկցվող օտարերկրյա կապիտալների մշտական ներարկումների։ Մյուս բոլոր ուղիները, պարզվում է, տանում են դեպի «տոտալիտարիզմ», որի տակ բուրժուական գաղափարախոս Բոուլսը սոցիալիզմ էր ենթադրում։

Կապիտալիզմի գաղափարախոսների նման մոտեցումը վաղուց հայտնի է և առանձին մեկնաբանությունների կարիք չի զգում։ Բոուլսի վերը բերված խոսքերով շեշտը դրվում է զարգացող երկրներում հենց սոցիալիստական տենդենցների ամրապնդման «վտանգավորության», այլ ոչ թե նրանց տընտեսական աճի համար ուղիների որոնման բուն պրոբլեմի վրա, առանց որի խոսք չի կարող լինել տեղական բնակչության կենսամակարդակի բարձրացման մասին։

Նույնպիսի «առաքինի» փիլիսոփայությամբ էր, ըստ էության, թափանցված զարգացող երկրներին ամերիկյան տնտեսական «օգնության» ամբողջ տեսությունն ու պրակտի-

կան Քեննեդիի կառավարման ժամանակաշրջանում։ Այդ երկրների նկատմամբ իր վարած քաղաքականության ընթացքում նա, առաջին հերթին, ղեկավարվում է գաղափարական և ռազմաստրատեգիական նպատակներով և միայն վերջում տուրք տալիս Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական և տեխնիկական զարգացման պրոբլեմներին։

60-ական թվականների առաջին կեսը, երբ ԱՄՆ-ի կառավարությունը ձեռնամուխ եղավ տնտեսական «օգնության» նոր մեթոդների որոնմանը, նշանավորվել է նոր անկախ պետությունների թվի առանձնապես արագ աճով, որոնք մեկը մյուսի ետևից թոթափում էին իրենց վրայից օտարերկրյա քաղաքական կախվածության շղթաները։ Զարգացող երկրներին տնտեսական «օգնության» ծրագրի իրագործման նոր մեթոդներն աչքի էին ընկնում նաև ձգտումով հնարավորին չափ արագ սկսելու զարգացող երկրների քաղաքական, տնտեսական և տեխնիկական էլիտայի գաղափարական մշակումը։ ԱՄՆ-ի, մյուս զարգացած պետությունների կառավարությունները Աֆրիկայի մի շարք երկրների քաղաքական և սոցիալական խնդիրների ֆինանսավորման և խնամակալության ուժեղացման կուրս վերցրեցին, մեծ ուշադրություն դարձնելով նրանց համար պետական ծառայողների պատրաստմանը։ Քեննեդիի կառավարությունը հրապարակեց ԱՄՆ-ի պահանջները իր կողմից պաշտպանվող ռեժիմների նկատմամբ՝ իրենց երկրներում ներքին տնտեսական «սոցիալական կարգի» որոշ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու այն հաշվով, որպեսզի ամերիկյան «օգնությունն» ավելի արդյունավետ դառնա։ ԱՄՆ-ի կառավարությունը սկսեց հաստատուն կերպով պաշտպանել նաև այն կուրսը, որպեսզի «օգնության» նոր ծրագրերի իրականացման ժամանակ տարբեր գործակալությունների գործունեությունը միավորվի և ղեկավարվի միասնական կենտրոնից[87]։ Վաշինգտոնը ՆԱՏՕ-ի գծով իր պարտնյորներից պահանջեց ավելի ակտիվորեն օգտագործել տնտեսական լծակները Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում կապիտալիստական էվոլյուցիայի նպատակներին հասնելու համար։ «Այդ չպետք է միայն Միացյալ Նա-



հանգների գործը լինի»[88],— հայտարարվում էր պետդեպարտամենտի պաշտոնական հրապարակումներում։

Այսպես էր 60-ական թվականներին մշակվում և ամրապնդվում ԱՄՆ-ի նեոգաղութատիրական քաղաքականության արտաքին քաղաքական պլատֆորմը զարգացող երկրներում, կատարելագործվում նրա մեխանիզմը, ընդլայնվում նախկին գաղութատիրական եվրոպական պետությունների հետ ամերիկյան կապիտալիզմի համագործակցությունը հանուն մեկ նպատակի՝ թույլ չտալ ստեղծված նոր պայմաններում արևմտության համաշխարհային կապիտալիստական սիստեմից զարգացող երկրների կախվածության թուլացում, և նրանց էկոնոմիկայի ու քաղաքականության զարգացման ճանապարհին սոցիալիստական տենդենցների առջև պատնեշ կանգնել։

## ՔԵՆԵԴՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻԾԸ ԱՄԵՐԻԿԱ-ՀՆԴԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հիմնական նպատակներից մեկը, որը Քեննեդիի կառավարությունը դրել էր իր առջև Ասիայում, ուժի կիրառման հետ մեկտեղ ԱՄՆ-ի ձգտումն էր համոզելու իր կողմից պաշտպանվող ռեժիմներին իրենց երկրներում անցկացնել տնտեսական և սոցիալական թեկուզ նվազագույն անհրաժեշտ ռեֆորմներ, որպեսզի նվազեն ժողովրդական զանգվածների՝ սոցիալական և տնտեսական արմատական վերափոխություններ կատարելու պահանջները։

Քեննեդիի կառավարությունը մեծ ուշադրություն էր նվիրում նաև Հնդկաստանի նկատմամբ իր քաղաքականության «կատարելագործմանը»։ 1961 թվականին նա մեծ ջանքեր է գործադրում, որպեսզի չեզոք Հնդկաստանը չեզոք կուրսից, ընդամենը գործելով ավելի ճկուն մեթոդներով, քան էյզենհաուեր—Դալլեսի կառավարությունը։ Այդ մեթոդներն էր, օրինակ, կիրառում Լ. Ջոնսոնը, երբ իր քաղաքական շրջագայության ժամանակ 1961 թվականի մայիսին այցելեց Հնդկաստան և Պակիստան։

Հնդկաստանի պրեմիեր մինիստր Ջ. Ներուի հետ բանակ-

ցությունների ընթացքում հիմնականում քննարկվում էին Հնդկական էկոնոմիկայի սոցիալական և տնտեսական բարդ ցավոտ պրոբլեմների լուծումը: Ջոնսոնը Ներուին հայտնեց, որ պրեզիդենտ Քեննեդին «մեծ հետաքրքրությամբ է» հետևում Հնդկական երրորդ հնգամյա պլանի կենսագործմանը և դրական է վերաբերվում Հնդկաստանին ցույց տրվող ամերիկյան տնտեսական «օգնության» ընդլայնման հարցին: Բացի այդ, նշվեց, որ մարդկության ընդհանուր թշնամին, որի դեմ պետք է ուղղված լինի հիմնական պայքարը, աղքատությունն ու հիվանդություններն են: Դրանց դեմ պայքարում պետք է նվաճվեն «խաղաղությունն ու ազատությունը»: ԱՄՆ-ի փոխպրեզիդենտն արտահայտվեց գյուղատնտեսական ռեֆորմների, ինչպես նաև Հնդկաստանի կրթության սիստեմի ընդլայնման և բարելավման օգտին: Զրույցների ժամանակ շոշափված միջազգային կարևոր հարցերից էր Լաոսի պրոբլեմը: Հնդկաստանի պրեմիեր մինիստրն ամբողջ կառավարության անունից հայտնեց, որ Հնդկաստանը ցանկանում է չեզոք և անկախ տեսնել Լաոսը: Ջոնսոնը համաձայնեց այդ տեսակետին, չնայած, ինչպես հայտնի է, ԱՄՆ-ի կառավարության գործողությունները այդ շրջանում այլ ուղղվածություն ունեին:

Այնուհետև ԱՄՆ-ի փոխպրեզիդենտն այցելեց Պակիստան: Ջոնսոնը Պակիստանի պրեզիդենտ Մուհամեդ Այուբ Խանին հանձնեց պրեզիդենտ Քեննեդիի անձնական նամակը: 1961 թվականի մայիսի 20-ին տեղի ունեցած զրույցի և հրապարակված կոմյունիկեի տեքստը վկայում էին, որ ինչպես Հնդկաստանում, այստեղ նույնպես բանակցությունների ժամանակ կենտրոնական տեղը գրավեցնում էին տնտեսական և սոցիալական հարցերը: Ճիշտ է, կոմյունիկեում ընդգծվում էր, որ կողմերը ողջունում են ՍԵՆՏՕ-ի և ՍԵԱՏՕ-ի շրջանակներում ռեգիոնալ կոլեկտիվ անվտանգության սիստեմում համագործակցության շարունակումը: Սակայն հենց այստեղ նշվում էր նաև այդ բլոկների անդամների համագործակցության հույժ կարևորությունը տնտեսական և սոցիալական բնագավառներում: Բանակցություններում զգալի տեղ հատկացվեց Պակիստանի զարգացման երկրորդ հնգամյա պլա-



նին, նրա գյուղատնտեսական պրոբլեմներին, կրթության, բնակելի շինարարության և առողջապահության հարցերին: Համատեղ կոմյունիկեում խոսվում էր անգամ այն մասին, որ «ազատ աշխարհի» ժողովուրդների անվտանգությունը պետք է կառուցվի ժողովուրդների համար ավելի լավ կյանք ապահովող առաջընթացի հիման վրա[32]:

Հարավային և Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում փոխպրեզիդենտ Լ. Ջոնսոնի շրջագայությունը ցույց տվեց, որ ԱՄՆ-ը պրեզիդենտ Քեննեդիի օրոք մտադիր չէր հրաժարվել ասիական մի շարք երկրների ներքին գործերին միջամտելու քաղաքականությունից: Վաշինգտոնը «կոմունիզմի դեմ պայքարի» պատրվակով, ըստ էության, Հարավ-Արևելյան Ասիայի երկրների գործերին ռազմական միջամտությունն ընդարձակելու կուրս վերցրեց: Միաժամանակ, կենսագործելով «նոր սահմանագծերի» քաղաքականությունը, ԱՄՆ-ի կառավարությունը ասիական այնպիսի խոշոր երկրների նկատմամբ, ինչպիսին Հնդկաստանն ու Պակիստանն էին, ավելի ճկուն դիրք գրավեց, հրաժարվելով ազգային-ազատագրական շարժման ուժերի դեմ պայքարում նրանց անմիջական հովանավորությունը և առավել ևս աջակցությունը ստանալու չափազանց բացահայտ մտադրությունից: Հիմնական ուշադրությունը նվիրվեց այդ պետություններին «փաղաքշելուն»՝ նեոգաղութատիրական հնարքների, նրանց տնտեսական «օգնության» ավելացնելու և նրանց տնտեսական ու սոցիալական պրոբլեմներին որոշակի ուշադրություն դարձնելու միջոցով: Դա ըստ էության, նեոգաղութատիրական քաղաքականություն էր, որի վերջնական նպատակն էր՝ չեզոքության սկզբունքներից Հնդկաստանի աստիճանական հեռացումը և որպես ՍԵՆՏՕ-ի ու ՍԵԱՏՕ-ի ռազմաքաղաքական բլոկների անդամ Պակիստանը պահելը:

Ասիայում Քեննեդիի կառավարության վարած այդ նեոգաղութատիրական ստրատեգիայի հիմնական օղակը դարձավ Հնդկաստանը:

Հնդկաստանի «փաղաքշման» քաղաքականության շրջանակում ԱՄՆ-ի ձեռնարկած նկատելի ակցիան հանդիպումն Հնդկաստանի պրեմիեր մինիստր Ջ. Ներուի 1961 թվականի

նոյեմբերին ԱՄՆ այցելելու հրավերը: Վերջինիս Վաշինգտոն այցելելուց մի քանի ամիս առաջ այնտեղ էր եղել Պակիստանի պրեզիդենտ Այուբ Խանը: Ընդհանրապես կարելի է նշել, որ ամերիկա-հնդկական հարաբերություններն այդ շրջանում զգալի չափով զարգանում էին Վաշինգտոնի և Կարաչիի միջև հարաբերությունների ֆոնի վրա: Ուստի համառոտակի կանգ առնենք Քենեդիի պրեզիդենտության ժամանակաշրջանում Պակիստանի նկատմամբ ամերիկյան քաղաքականության հիմնական գծերի վրա:

ԱՄՆ-ի կառավարությունը Պակիստանին նայում էր որպես ռազմական մի երկրի, որին անհրաժեշտ է օգտագործել ռազմակայան, հատկապես ՍԵՆՏՕ-ի և ՍԵԱՏՕ-ի ռազմական բլոկների քաղաքականության ամրապնդելու, ինչպես նաև Հնդկաստանին հակազդելու համար: Քենեդիի կառավարության տակտիկային բնորոշ էր հնդկա-պակիստանյան, հատկապես Քաշմիրի պրոբլեմի հարցում հակասությունները օգտագործելը:

1961 թվականի հուլիսին պրեզիդենտ Քենեդին ընդունում է Պակիստանի պրեզիդենտ Այուբ Խանին: Հանդիպումից հետո հրապարակված կոմյունիկեում հիմնական ուշադրությունը նվիրված է արտաքին քաղաքականության հակակոմունիստական և նեոգաղութատիրական ասպեկտներին: Այսպես, օրինակ, նշված էր, որ Հարավային Ասիան միջազգային կոմունիզմի գլխավոր նպատակն է: Հաստատվում էր գոյություն ունեցող անվտանգության կոլեկտիվ համաձայնագրերի նշանակությունը, որպես ագրեսիայից պաշտպանվելու գործիքի: Հայտարարվում էր, որ ԱՄՆ-ը ավելացնում է իր ռազմական «օգնությունը» Պակիստանին: Ընդ որում Պակիստանը ռազմական բլոկների և հակակոմունիստական ակտիվության դրսևորելու մեջ ավելի խորը ներքաշելու ԱՄՆ-ի կառավարության ձգտումը լրացվում էր տնտեսական և ֆինանսական «օգնության» տալու խոստումներով: Պրեզիդենտ Քենեդին հավաստիացնում էր Այուբ Խանին, որ ԱՄՆ-ը ամբողջական հետաքրքրություն է ցուցաբերելու Պակիստանի զարգացման հնգամյա պլանի շրջանակներում նրա տնտեսական զարգացման համար «լրացուցիչ ֆոնդեր» հայթայթելու նկատմամբ[90]:



ԱՄՆ-ը 1962 թվականին հայտարարեց Հնդկաստանի և Պակիստանի միջև Քաշմիրի պրոբլեմը կարգավորելու իր «ձգտման» մասին: Սակայն այդ գիծը Քենեդիի կառավարության գործողություններում անցկացվում էր առանց դիվանագիտական որևէ լուրջ նախապատրաստման և ցուցադրական բնույթ էր կրում: Դրա համոզիչ ապացույցն է ԱՄՆ-ի կողմից ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1962 թվականի հունիսի 22-ի բանաձևի պաշտպանությունը: Բանաձևը, որ Հնդկաստանի և Պակիստանի կառավարություններին կոչ էր անում Քաշմիրի պրոբլեմի վերաբերյալ սկսել բանակցություններ, մերժվեց[91]: Հնդկաստանի դիրքորոշումն այդ բանաձևի նկատմամբ խիստ բացասական էր: Այդպիսի պայմաններում ԱՄՆ-ի «հաշտարարի դերը» ավելի քան կասկածելի տեսք էր ընդունում: Ավելին, նա ավելի շատ Հնդկաստանի և Պակիստանի միջև անտագոնիզմ բորբոքելու նպատակ էր հետապնդում: ԱՄՆ-ի կառավարությունը 1962 թվականի նոյեմբերի 30-ին հանդես է գալիս Քաշմիրի պրոբլեմի «լուծման» ուղղությամբ հօգուտ Հնդկաստանի և Պակիստանի նոր ջանքերի վերսկսման[92]: Իրադարձությունների նման զարգացումը, ինչպես հայտնի է, տեղի ունեցավ Չինաստանի և Հնդկաստանի միջև ռազմական գործողություններ սկսվելուց անմիջապես հետո: Կարելի է նաև նշել, որ այնուհետև, 1963 թվականի ընթացքում, Քենեդիի կառավարությունը Քաշմիրի պրոբլեմի հարցում ակտիվություն չէր դրսևորում, աշխատելով չսրացնել իր հարաբերությունները Հնդկաստանի հետ: Ամերիկյան դիվանագիտությունը մեծ ջանքեր էր գործադրում, որպեսզի ակտիվացնի տնտեսական և հատկապես ռազմական լծակների օգտագործումը Հնդկաստանի արտաքին քաղաքականության վրա ազդելու համար՝ չեզոքության քաղաքականության կուրսից նրան հեռացնելու նպատակով:

Հիմնական նպատակը, որ հետապնդում էր Քենեդիի կառավարությունը 1961 թվականի նոյեմբերին ընդունելով Հնդկաստանի պրեմիեր մինիստր Ջ. Ներուին, կայանում էր

ոչ միայն կուտակված վրիպումները «հարթեցնելու» և Հնդկաստանի հանդեպ դալլեսյան ձախողված կուրսը «թարմացնելու» մեջ, այլև աշխատել, այնուամենայնիվ, հասնել չեզոքության կուրսից հնդկական կառավարության քաղաքականության շրջադարձին։ Ամերիկյան պաշտոնական անձանց և մամուլի ջանքերով 1961 թվականի ամռանը ու աշնանը Հնդկաստանի շուրջը ստեղծված «բարենպաստ քաղաքական կլիման», Դելիին ամերիկյան տնտեսական «օգնության» հետագա ավելացման խոստումները. թվում էր նոր ադմինիստրացիային այդ նպատակին հասնելու հույսեր էին ներշնչում։ Սակայն Ներուի հետ Քենեդիի բանակցություններն անհամեմատ ավելի դժվար ընթացան, քան այդ սպասվում էր։ Դրանք չհանգեցրին ամերիկահնդկական հարաբերություններում սուր պրոբլեմների լուծմանը։ Այդ մասին էր, մասնավորապես, վկայում 1961 թվականի նոյեմբերի 9-ին այդ հանդիպման մասին հրապարակված կոմյունիկեն[93]։ Հետագայում Քենեդիի և Ներուի հանդիպմանը դժգույն դնահատական տվեցին նաև մեմուարային գրականությունում այդ հարցը լուսաբանող հեղինակները։

Այդ բանակցությունների ժամանակ Հնդկաստանի պրեմիեր մինիստրը բացասաբար արձագանքեց ամերիկյան դիրքորոշումը Վիետնամում պաշտպանելու ԱՄՆ-ի պրեզիդենտի ձգտմանը։ Ներուն չշեղվեց չեզոքության դիրքորոշումից, որին նրան բացահայտորեն մղում էին ամերիկացիները։ Քենեդիի խորհրդականներ Սորենսենի և Շլեզինջերի վկայությամբ, պրեզիդենտը Ներուի հետ բանակցություններից հետո համոզվեց, որ վերջինս Ասիայում «կոմունիզմի դեմ» պայքարում ԱՄՆ-ի դաշնակից չի դառնա։ «Պրեզիդենտը Վիետնամի մասին շատ էր խոսում, բայց պրեմիեր մինիստրն ի պատասխան միայն լռում էր»,— խոստովանում է Շլեզինջերը։ Բայց դրա փոխարեն Ներուն կասկած հայտնեց այն բանում, որ ԱՄՆ-ը անկեղծ է զինաթափման հարցերում, վկայակոչելով ընդամենը ամերիկյան ռազմաարդյունաբերական կոմպլեքսի շահերն ու ազդեցությունը։ Հետագայում Քենեդին կարծիք հայտնեց, որ իր հանդիպումը Ներուի հետ ձախողվեց։ «Իմ հիշողությամբ դա պետության ղեկավարի ամենից անհաջող այցելությունն էր»[94],— ասաց նա։



Հիասթափվելով Ներուից, Քենեդին, սակայն, շարունակում էր գտնել, որ ԱՄՆ-ը պետք է իր շահերից ելնելով Հնդկաստանին տնտեսական զգալի «օգնություն» ցույց տա։ Դա Ասիայում «կապիտալիզմի» և «կոմունիզմի» միջև սոցիալտնտեսական առճակատման դիրքորոշումից բխող մոտեցում էր, որի կողմնակիցն էր ԱՄՆ-ի պրեզիդենտը։

«Մեղրամիսն» ամերիկահնդկական քաղաքական հարաբերություններում համեմատաբար կարճատև եղավ։ Դրանք առանձնապես լարված բնույթ ստացան այն բանից հետո, երբ Քենեդիի կառավարությունը հրաժարվեց աջակցել Հնդկաստանի գործողություններին երկրում պորտուգալական գաղութատիրության հետևանքները վերացնելու և, առավել ևս, դիվանագիտական բուռն գործունեություն ծավալեց Գոայի, Դիուի և Դամանի տերիտորիաների ազատագրումը կանխելու ուղղությամբ։

Պրեզիդենտ Քենեդին 1961 թվականի դեկտեմբերի 13-ին անձնական ուղերձ հղեց Ներուին, որով Հնդկաստանին կոչ էր անում Գոայի ազատագրման համար ուժի չդիմել[95]։ Այդ մասին ավելի ուշ հաղորդեց ՄԱԿ-ում ամերիկյան ներկայացուցիչ Էդլայ Ստիվենսոնը՝ Անվտանգության խորհրդի դեկտեմբերի 18—19-ին տեղի ունեցած նիստում, Հնդկաստանի կողմից ազատագրական ակցիան կատարելուց հետո։ ԱՄՆ-ը այդ հարցում, ըստ էության, ՆԱՏՕ-ի անդամ Պորտուգալիայի շահերը լրիվ պաշտպանելու դիրք գրավեց[96]։ ԱՄՆ-ն ակտիվ մասնակցություն ունեցավ ՄԱԿ-ում արևմտյան պետությունների մանյովրներին, ձգտելով խանգարել Հնդկաստանի ազգային-ազատագրական առաքելությանը։ Նրանք պաշտպանեցին և քվեարկեցին հօգուտ շուտափույթ կազմված բանաձևի նախագծի, որով Հնդկաստանի կառավարությունից պահանջում էին, որպեսզի նա անհապաղ իր զորքերը ետ տանի մինչև 1961 թվականի դեկտեմբերի 17-ը զբաղեցրած դիրքերը[97]։ Անվտանգության խորհրդում այդ բանաձևի դեմ քվեարկեցին մի շարք պետություններ, այդ թվում և Սովետական Միությունը, և այն մերժվեց։

Միաժամանակ ԱՄՆ-ը դեմ քվեարկեց Ցեյլոնի, Լիբերիայի և Միացյալ Արաբական Հանրապետության բանաձևի նա-

խաղծի, երբ Պորտուգալիային կոչ էր անում համագործակցել Հնդկաստանի հետ գաղութների վերացման գործում[98]։

Ամերիկա-հնդկական հակասությունների խորացումն անմիջապես անդրադարձավ Վաշինգտոնի կողմից Հնդկաստանին տրամադրվող «օգնության» ծավալի վրա։ Հետաձգվեց Հնդկաստանին «օգնություն» ցույց տալուն նվիրված միջազգային կոնսորցիումի մասնակից երկրների հանդիպումը։ Դեռ ավելին, ԱՄՆ-ի կոնգրեսը 1962 թվականին պարզապես հրաժարվեց ավելացնել տնտեսական «օգնությունը» Հնդկաստանին։

Եվ այսպես, 1962 թվականին քաղաքական բնագավառում ամերիկա-հնդկական հարաբերություններն ուժեղ բախումների ոլորտ մտան, չնայած կողմերը դրանք հարթեցնելու ջանքեր էին գործադրում։ Այդ շրջանում Հնդկաստանում ամրապնդվում էր առաջադեմ ուժերի ազդեցությունը։ Նրանց դիրքերին, սակայն, 1962 թվականին հարված հասցրեցին մաոյականները, երբ Պեկինը հնդկա-չինական սահմանում զինված մեծ ընդհարում սանձազերծեց։

Բարդ իրադրության խորացման ընթացքում, հնդկական տերիտորիա չինական զորքերի ներխուժումից հետո, Հնդկաստանի կառավարությունը դիմեց ԱՄՆ-ին ռազմական օգնության խնդրանքով։ 1962 թվականի նոյեմբերի 20-ին պրեզիդենտ Քեննեդին հանդես եկավ հայտարարությամբ, որով «օգնության» համաձայնություն տալով, միաժամանակ հավաստիացրեց Պակիստանին, որ այդ «օգնությունը» վերջինիս դեմ չի ուղղված, այլ, հակառակը, պաշտպանում է Չինաստանից[99]։ Ստեղծված իրադրությունում Հնդկաստանի աջ ուժերն ուժեղացրին հարձակումները Ներուի կառավարության չեզոքության կուրսի դեմ։ Հնդկաստանի պաշտպանության մինիստրի պաշտոնից հեռացվել գաղութատիրության հետևողական հակառակորդ Քրիշնա Մենոնը։ Պաշտոնական Վաշինգտոնը չէր թաքցնում իր գոհունակությունն իրադարձությունների այդպիսի զարգացմամբ։

Հույս ունենալով ամրապնդել Հնդկաստանի աջ ուժերին, Քեննեդիի կառավարությունը այդ երկրին տրամադրվող ռազմական մատակարարումներն օգտագործում էր իրեն իր ազ-



դեցությունն այնտեղ ուժեղացնելու լրացուցիչ լծակ։ Արևմտյան Եվրոպայում գտնվող ԱՄՆ-ի զինանոցներից 1962 թվականի նոյեմբերին Հնդկաստան փոխադրվեց մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք։ Հնդկաստանի ու ԱՄՆ-ի միջև երկկողմանի համաձայնագիր կնքվեց հնդկական կողմին ամերիկյան ռազմական մատակարարումների մասին[100]։

Ռազմաքաղաքական պրոբլեմների քննարկման համար 1962 թվականի նոյեմբերի 21-ին Դելի ժամանեց ԱՄՆ-ի կառավարական պատգամավորությունը պետական քարտուղարի տեղակալ Ա. Հարիմանի և պաշտպանության մինիստրի տեղակալ Պ. Նիտցեի գլխավորությամբ։ Ըստ էության Վաշինգտոնը Հնդկաստանի և դրա հետ մեկտեղ Պակիստանի հետ, որը լրջորեն անհանգստացած էր Հնդկաստանի ռազմական պոտենցիալի ուժեղացմամբ, ռազմաքաղաքական փոխգործողության աստիճանական ընդարձակման կուրս վերցրեց։ Այդ կուրսի մշակման գործում ակտիվ դեր էր կատարում Դելիում ամերիկյան դեսպան Հելբրեյթը[101]։ Քեննեդիի կառավարությունը փորձում էր օգտագործել հնդկա-պակիստանյան հակասությունները, հատկապես Քաշմիրի հարցում, կոչ անելով երկու կառավարություններին նրա լուծման ուղի որոնել։ Իրականում ԱՄՆ-ի կառավարությունը, որոշ չափով իր դիրքերը Հնդկաստանում ամրապնդելով, ձգտում էր այդ մոտեցմամբ պահպանել քաղաքական կայունությունը նաև Պակիստանում[102]։

Պրեզիդենտ Քեննեդին շուտափույթ կերպով Պակիստանի Այյուբ Խանին անձնական ուղերձ է հղում, որով հավաստիացնում է նրան, որ Հնդկաստանին տրամադրվող օգնությունը չի օգտագործվի Պակիստանի դեմ և խորհուրդ է տալիս հավաստիացնել Դելիին չհարձակվելու մասին, որպեսզի հնդկական կառավարությունը հնարավորություն ունենա հետ քաշելու իր զորքերը հնդկա-պակիստանյան սահմանից իր հյուսիս-արևելյան սահմանները պաշտպանելու համար։ Այյուբ Խանին նույնպես խոստումներ էին տրվում, որ ամերիկյան ռազմական մատակարարումները Պակիստանին շարունակվելու են[103]։

Կարելի է բավական որոշակի եզրակացություն անել, որ

կարիբյան ճգնաժամի օրերին Հնդկաստանի վրա մաոյականների ձեռնարկած հարձակումը Վաշինգտոնին քաղաքական խուսանավման համար լայն ասպարեզ ընձեռեց, հարություն տվեց Հարավային Ասիայում սոցիալիստական երկրների դեմ միացյալ դաշինք ստեղծելու ԱՄՆ-ի կառավարության հույսերին, միաժամանակ թուլացրեց Ներուի կառավարության պոզիտիվ դերը միջազգային ասպարեզում։

Մի քանի խոսք Հնդկաստանի նկատմամբ ԱՄՆ-ի կառավարության տնտեսական քաղաքականության նեոգաղութատիրական ասպեկտի մասին։

Դեռևս 1958 թվականին սենատոր Դ. Կուպերի հետ միասին Քեննեդին ԱՄՆ-ի կոնգրես ներկայացրեց բանաձև Հնդկաստանին ամերիկյան «օգնությունը» ավելացնելու մասին[104]։ Դրա հիման վրա սենատը 1959 թվականի փետրվարի 19-ին կառավարությանը խորհուրդ էր տալիս միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համատեղ ուսումնասիրել Հնդկաստանի պահանջմունքները, որոնց բավարարման համար միջոցները հնարավոր լինեն բավարարել արտաքին աղբյուրներից[105]։ Քեննեդու այդ նախաձեռնությունը նկատելի շարժառիթ հանդիսացավ 1961 թվականին միջազգային կոնսորցիումի կամ «Հնդկաստանի օգնության ակումբի» գործունեությունն ակտիվացնելու համար։

1959 թվականի մայիսին ԱՄՆ-ի պրեզիդենտին առընթեր խորհրդակցական մարմինը՝ միջազգային տնտեսական զարգացմանն աջակցող կոմիտեն Հնդկաստանի զարգացման պրոբլեմներին նվիրված կոնֆերանս հրավիրեց։ Նրանում անմիջական մասնակցություն ունեցավ նաև սենատոր Ջ. Քեննեդին։ Ելույթ ունենալով կոնֆերանսում, նա ընդգծեց հնդկական էկոնոմիկայի զարգացման տեմպերի ավելացման անհրաժեշտությունը և կապիտալիստական երկրներին առաջարկեց միավորել իրենց ռեսուրսներն այդ նպատակին հասնելու համար[106]։ Բնորոշ է, որ Քեննեդին Հնդկաստանի վիճակին նայում էր, առաջին հերթին, ամերիկյան կապիտալիզմի շահերի պրիզմայով։

Անհրաժեշտ է նշել, որ զարգացող երկրներին օգնություն տրամադրելու հարցում ամերիկյան կառավարության և կոնգրեսի միջև հաճախ տարակարծություններ էին առաջանում։



Դրա պատճառներից մեկը մոնոպոլիստական տարբեր խմբավորումների միջև պայքարն էր, որոնց շահերը ներկայացնում էին կոնգրեսում նստած համապատասխան օրենսդիրները։ Ամերիկյան շատ կոնգրեսականներ և սենատորներ, օրինակ, նպատակահարմար չէին գտնում զարգացող երկրների տնտեսական «օգնության» համար կառավարության պահանջած ծավալները։ Դեմոկրատների կառավարության օրոք կոնգրեսի կողմից զարգացող երկրներում տնտեսական գործողությունների ավելի ծավալուն ծրագրի ընդունումը հիշյալ երկրներում, այդ թվում և Հնդկաստանում, ԱՄՆ-ի տնտեսական էքսպանսիայի նախկինից ավելի լայն մասշտաբների անցում էր նշանակում։ Դալլեսի ուղղագիծ տակտիկայի ձախողումից հետո, երբ ձգտում էր, մասնավորապես, ռազմական խմբավորումների մեջ ներքաշել Հնդկաստանին, Քեննեդիի կառավարությունը վճռեց դիմել ԱՄՆ-ի ազդեցությունն այդ երկրում ամրապնդելու ավելի նուրբ և քողարկված մեթոդների։ Այդ կուրսի նախապատրաստումը մասամբ սկսվել էր արդեն հանրապետականների կառավարության տարիներին։

Քեննեդիի կառավարության իշխանության գլուխ անցնելու արդեն առաջին տարում Հնդկաստան ուղարկվեցին ամերիկյան հայտնի քաղաքական գործիչներ՝ Հնդկաստանի ղեկավարների և գործարար մարդկանց հետ զրույցներ և բանակցություններ վարելու համար։ Պաշտոնական այցով Հնդկաստանում եղան պրեզիդենտի հատուկ ներկայացուցիչ Ավերել Հարրիմանը, փոխպրեզիդենտ Լինդոն Ջոնսոնը, պետական քարտուղարի տեղակալ Չեսթեր Բոուլսը, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի և Սթեյտ Բյուլետինի տնտեսական հանձնաժողովը[107]։

1961 թվականի ապրիլին Վաշինգտոնում տեղի ունեցավ կապիտալիստական պետությունների կոնսորցիումի նիստ, որտեղ Քեննեդիի կառավարությունը հայտնեց, որ պատրաստ է Հնդկաստանի տնտեսական զարգացման կարիքների համար 1 մլրդ. դոլար տրամադրել։ Դիվանագիտական կարճատև խուսանավումից հետո կոնսորցիումի մյուս անդամները նույնպես համաձայնվեցին մասնակցելու Հնդկաստանին «օգնություն» տալուն։ Վերջում, 1961 թվականի հունիսի 2-ին կոնսորցիումը որոշում ընդունեց 1961-ից մինչև 1962 թվա-

կանք ներառյալ Հնդկաստանին ֆինանսական օգնություն ցույց տալ 2225 մլն. դոլար ծավալով[108]։ Երկարատև բանավեճերից հետո, այդ թվում և կոնգրեսում, որը դժգոհություն էր հայտնում Ներուի կառավարության վարած արտաքին քաղաքական կուրսից, կոնսորցիումն այնուհանդերձ գնաց Հնդկաստանին 1052 մլն. դոլար գումարով օգնություն տրամադրելուն[109]։

60-ական թվականների սկզբներին Հնդկաստանին տրամադրվող ամերիկյան տնտեսական «օգնության» զգալի ավելացումը պատահական բնույթ չէր կրում։ Այն առաջացել էր ազատագրված երկրներում երկու՝ սոցիալիստական և կապիտալիստական տենդենցների միջև ծավալված սուր պայքարի հետևանքով։ Միջազգային ֆինանսական, առաջին հերթին ամերիկյան, կապիտալը կրկնակի եռանդով նետվեց «փրկելու» զարգացող երկրները սոցիալիզմից, ժամանակ առ ժամանակ ստիպված որոշ զիջումներ անելով զարգացող երկրներին։

ԱՄՆ-ի կառավարության գործունեության ակտիվացումը Հնդկաստանում շարունակվեց նաև Քենեդիի սպանությունից հետո։ Հնդկաստանի համար պլանավորված և տրամադրված «օգնությունը» հնդկական էկոնոմիկայի զարգացման երրորդ հնգամյա պլանի ժամանակաշրջանում (1961/1962—1965/66 թթ.) ավելի քան երկու անգամ գերազանցեց Վաշինգտոնի՝ Հնդկաստանի նախորդ, երկրորդ հնգամյա պլանի կարիքների համար տրամադրված «օգնությանը»։

Անտարակույս, կոնսորցիումը, կամ «Հնդկաստանի օգնության ակումբը», այն միակ ուղին չէր, որով ԱՄՆ-ը իրագործում էր այդ երկրում իր ազդեցությունն ամրապնդելու փորձերը։ Գոյություն ունեին նաև այլ ուղիներ։ Օրինակ, «Պարեն խաղաղության համար» ծրագիրը։ Ընդ որում այդ լծակը նույնպես բավական լայնորեն էր օգտագործվում։ Բավական է ասել, որ համապատասխան այդ ծրագրի, 1960-ից մինչև 1964 թվականը ԱՄՆ-ի կառավարությունն ավելի քան 2 մլրդ. դոլարի պարենային «օգնություն» է տրամադրել Հնդկաստանին, ընդ որում պարենային հատկացումների մի մասի համար Հնդկաստանն ազգային վալյուտա էր վճարում։

Դեմոկրատների կառավարությունը ոչ միայն ավելացրեց



Հնդկաստանին ամերիկյան «օգնության» ընդհանուր ծավալը, այլև ձգտում էր իր քաղաքականությունն ավելի ճկուն, ընդունելի դարձնել հնդկական կառավարության համար։ Այսպես, նա գնաց փոխատվությունների և վարկերի զեղչման ու տոկոսային դրույքների իջեցմանը, դրանց մարման ժամկետների երկարացմանը, այսպես կոչված «չկապված փոխատվությունների» թվի ավելացմանը, նրանց մեծ մասն ազգային վալյուտայով մարելու հնարավորության ընձեռմանը։ Քենեդու պրեզիդենտության վերջում Հնդկաստանը ամերիկյան «օգնության» շուրջ կեսը պետք է վճարեր ազգային վալյուտայով՝ ռուփիներով[110]։ Քենեդիի կառավարությունն անգամ այն քայլին գնաց, որպեսզի Զարգացման միջազգային ասոցիացիայի միջոցով Հնդկաստանին նաև անտոկոս փոխատվություններ տրամադրվի։

Բնորոշ է, որ Քենեդիի կառավարության նեոգաղութատիրական քաղաքականության մեջ այդ տակտիկական քայլերը Հնդկաստանի հանդեպ հաճախ էին ձեռնարկվում, քան ասիական մյուս երկրների նկատմամբ։ Վաշինգտոնը Հնդկաստանն ասիական մյուս զարգացող երկրների թվում առավել կարևոր օբյեկտ էր համարում և, բնականաբար, նրան մեծ ուշադրություն էր հատկացնում։ Համեմատելու համար կարևոր է, օրինակ, նշել, որ երբ ամերիկյան փոխատվությունները Հնդկաստանին տալիս էին Արտահանման-ներմուծման բանկը կամ Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկը, այսինքն՝ ամերիկյան մասնավոր մոնոպոլիաների մեծ ազդեցության տակ գտնվող կազմակերպությունները, ապա առանձին ոչ մի առավելություն Հնդկաստանը այդ փոխատվություններից չէր ունենում։ Այն ժամանակի համար զեղչատոկոսային դրույքն այստեղ բավական բարձր էր (մինչև 5,5%)[111]։

ԱՄՆ-ի կառավարությունը համաձայնվեց նաև միջուկային էներգիայի օգտագործման բնագավառում Հնդկաստանին աջակցելուն։ ԱՄՆ-ը և Հնդկաստանը 1963 թվականի օգոստոսին համաձայնագիր վավերացրին ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման համագործակցության մասին[112]։

Քենեդիի կառավարության որոշ մեծ կիրառություն ստացավ

ազդեցության այնպիսի կարևոր լծակի օգտագործումը, ինչպես Հնդկաստան առաքվող ամերիկյան ապրանքների վարկավորումը և դեպի ԱՄՆ այդ երկրների հումքի ու ապրանքների ներմուծման ավելացումը։ Նույնպիսի վարկավորում էր կիրառվում նաև արդյունաբերական սարքավորման հանդեպ։ Այդ քաղաքականությանը սկիզբ դրեց դեռևս էյզենհաուերի կառավարությունը։ 1959-ից մինչև 1963 թվականը ամերիկյան սարքավորման Հնդկաստան արտահանման ընդհանուր ծավալը աճեց երեք անգամ։ Ինչ վերաբերում է Հնդկաստան ամերիկյան արտահանման ընդհանուր ծավալին, ապա Քեննեդիի կառավարման շրջանում այն ընդլայնվելու բացահայտ տենդենց ուներ։ Եթե 1960 թվականին ամերիկյան արտահանումը Հնդկաստան կազմում էր 641,9 մլն. դոլար, ապա 1963 թվականին այն հասավ մինչև 816,7 մլն. դոլարի[113]։

Քեննեդիի կառավարության կողմից նեոգաղութատիրական լծակների ակտիվ օգտագործումը երբեմն լուրջ առարկություններ էր առաջացնում ամերիկյան քաղաքական վերնախավում և գործարար շրջաններում։ Պատահում էր, որ ամերիկյան արդյունաբերողների՝ հումքի որոշակի տեսակներ կամ լայն սպառման ապրանքներ թողարկողների շահերը հակասության մեջ էին դրվում ԱՄՆ-ում հնդկական ապրանքների ներմուծման խթանման ուղղությամբ Քեննեդիի կառավարության ներդրած ջանքերի հետ։ Ամերիկյան մոնոպոլիստական կապիտալն ընդհանուր առմամբ դժկամությամբ էր վերաբերվում հնդկական էկոնոմիկայում պետական սեկտորի ամրապնդմանը։ Ուստի Քեննեդիի կառավարության նեոգաղութատիրական խորամանկ տակտիկան միջազգային ասպարեզում միշտ չէ որ նրա առանձին ներկայացուցիչների հավանությունն էր ստանում։ Նրանք գտնում էին, որ պրեզիդենտ Քեննեդին զարգացող երկրների նկատմամբ չափազանց լիբերալ է, շուտ է հրաժարվում իշխելու հին մեթոդներից։

Հավատարիմ իր «նոր սահմանագծերի» փիլիսոփայությանը, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը զարգացող երկրներում հիմնելով ամերիկյան բուրժուազիայի ամբողջ դասակարգի, այլ ոչ թե նրա առանձին ներկայացուցիչների, շահերի լայն հաշվառման վրա, Քեննեդիի կառավարու-



թյունը շարունակում էր խրախուսել, զարգացնել և «կատարելագործել» զարգացող երկրները ԱՄՆ-ին և համաշխարհային տնտեսության կապիտալիստական սիստեմին ենթարկելու նեոգաղութատիրական քաղաքականությունը։ Քեննեդին, օրինակ, Հնդկաստանում ԱՄՆ-ի մասնակցությամբ պետական սեկտորի արդյունաբերական ձեռնարկությունների, մասնավորապես Բոկարոյում մետալուրգիական գործարանի կառուցման կողմնակից էր։ Նրա այդ գիծը դեմ առավ կոնգրեսի և գործարար որոշ շրջանների դիմադրությանը, որոնք գտնում էին, որ ԱՄՆ-ի նման օգնությունը խոչընդոտում է ամերիկյան արտահանման հնարավորություններին և օգնում սոցիալիստական տենդենցների զարգացմանը[114]։

Քեննեդիի պրեզիդենտության օրոք էր նաև, որ ամերիկյան մասնավոր կապիտալի գործունեությունը Հնդկաստանում ակտիվացավ։ 1957 թվականին ամերիկյան մասնավոր ներդրումների 2 մլրդ. դոլար ընդհանուր գումարից, որ ամերիկյան կապիտալիստները հատկացրել էին Ասիայի երկրների էկոնոմիկայի զարգացմանը[115], Հնդկաստանին ընդամենը 113 մլն. դոլար բաժին էր հասնում։ 1963 թվականին ամերիկյան մասնավոր կապիտալի ներդրումները հնդկական էկոնոմիկայում հասան 205 մլն. դոլարի[116]։ Իհարկե, ներդրումների ընդհանուր ծավալում դա այնքան էլ շոշափելի աճ չէր, և այն չէր կարող Հնդկաստանում ամերիկյան մասնավոր կապիտալին առավելություն տալ անգլիական մասնավոր կապիտալի նկատմամբ։ 1965 թվականի նախօրյակին ԱՄՆ-ը, օրինակ, Հնդկաստանում իր մասնավոր ներդրումների ընդհանուր ծավալով շարունակում էր ետ մնալ Անգլիայից մոտ չորս անգամ։ Սակայն, կարևոր է, այնուամենայնիվ, նշել, որ հենց 60-ական թվականների սկզբներին, այսինքն՝ Քեննեդիի պրեզիդենտության տարիներին, Հնդկաստանում ամերիկյան մասնավոր կապիտալի ֆինանսական քաղաքականության մեջ զգալի տեղաշարժեր նկատվեցին։ 60-ական թվականների կեսերին ամերիկյան մասնավոր կապիտալի արտահանման չափերը Հնդկաստանում իրենց բացարձակ ծավալով սկսեցին մոտենալ անգլիական մոնոպոլիաների համապատասխան արտահանման մակարդակին։ Ամերիկյան կապիտալը ձգտում

էր իշխող դիրք գրավել հնդկական էկոնոմիկայի առավել ժամանակակից և շահութաբեր ճյուղերում։

Թեև Քեննեդիի պրեզիդենտության ժամանակաշրջանում ամերիկա-հնդկական հարաբերությունների զարգացումը բավական հակասական բնույթ էր կրում, 1963 թ. ընդհանուր առմամբ նկատվում էր ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդում Հնդկաստանում։ ԱՄՆ-ի դեսպան Չեսթեր Բոուլսը, որը զարգացող երկրների հանդեպ նեոգաղութատիրական տակտիկայի կողմնակից էր, այնտեղ բուռն գործունեություն ծավալեց։ Իրենց ջանքերն ակտիվացրին մոնոպոլիստական շահերին ծառայող ամերիկյան զանազան մասնավոր ֆոնդերը։

1963 թվականի հունիսին պաշտոնական այցով ԱՄՆ մեկնեց Հնդկաստանի պրեզիդենտ Ս. Ռադհակրիշնանը։ Իր ելույթներում նա հայտարարեց հնդկական չեզոքության կոնցեպցիան դեմոկրատիայի ֆունդամենտալ արժեքների ընդհանրության և ԱՄՆ-ի ու Հնդկաստանի համագործակցության մասին վերացական դատողություններում[117]։ Մյուս կողմից, պետք է նշել, որ Ներուի կառավարությունը, ավելի հաճախ, քան այդ ցանկանում էր ԱՄՆ-ի կառավարությունը, շարունակում էր պաշտպանել հնդկական արտաքին քաղաքականության անկախ բնույթը, չէր զիջում Քաշմիրի հարցում ԱՄՆ-ի ճնշմանը։

Հնդկաստանը դեմոկրատների կառավարության նեոգաղութատիրական ստրատեգիայի և տակտիկայի միակ, թեև առավել կարևոր օբյեկտն էր Ասիայում։ Այդ քաղաքականության բնորոշ գծերն ի հայտ էին գալիս նաև զարգացող մյուս երկրների հարցում։ Դրա հետ մեկտեղ Քեննեդիի կառավարության քաղաքականությունն աշխարհի տարբեր ռեգիոններում (Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում), ինչպես և տարբեր երկրների նկատմամբ հատկանշական է և առանձնահատուկ։ Արտաքին քաղաքական կոնկրետ գիծը տվյալ ռեգիոնում կամ երկրում որոշվում էր ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի արմատական շահերի և հնարավորությունների, ազգային-ազատագրական շարժման ուժերի ակտիվության աստիճանի հաշվառումով։ Նկատի էին առնվում ԱՄՆ-ի դեսպանությունների զեկույցները, պետդեպարտամենտի և նրա հետ կապված դիտահետազոտական ինստիտուտների առաջարկությունները, ԿՀՎ-ի և պենտագոնի պլանները։ Ի վերջո, Քեննեդիի կառավարության գործողությունների ընդգրկումը զարգացող երկրներում բազմազան և հաճախ բավականաչափ ճկուն էր։ Դա երբեմն որոշակի տակտիկական հաջողություններ էր բերում, բայց, իհարկե, չէր կարող վերացնել միջազգային ասպարեզում ամերիկյան կապիտալի էքսպանսիոնիստական գործողությունների և անկախության ու առաջընթացի ձգտող ազատագրված ժողովուրդների միջև առկա խորը հակասությունները։

ԳԼՈՒԽ VI

# ՔԵՆԵԴԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Քեննեդիի կառավարության քաղաքականությունն Աֆրիկայում այլ բնույթ էր կրում, քան Հարավ-Արևելյան Ասիայում։ Աշխարհի այդ շրջանում նա առանձնապես համառորեն էր նեոգաղութատիրական մեթոդներ կիրառում։ Դրա հետ մեկտեղ, ինչպես ցույց տվեց բելգիական նախկին Կոնգոյի (այժմ Զաիր) ողբերգությունը, ինչպես նաև Վաշինգտոնի անմիջական և անուղղակի աջակցությունն Աֆրիկայի հարավի ռասիստներին, ԱՄՆ-ի կառավարությունը աֆրիկյան ժողովուրդների հանդեպ չէր հրաժարվում նաև ռազմաքաղաքական ճնշման և ահաբեկման միջոցներից։ 50-ական և 60-ական թվականների սկզբում կյանքում այդ գիծն անցկացնելու հարցում խոնարհ գործիք էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Դագ Համարշելդը։

Համաշխարհային պատմության զարգացման ընթացքն այնպես ստացվեց, որ իմպերիալիստական երկրների կողմից սև մայրցամաքի բաժանման սեղանից ամերիկյան իմպերիալիզմն ուշացավ և ստիպված էր բավարարվել միայն «ըլիթի» կտորտանքներով, որն արդեն գրեթե ամբողջությամբ «կերել էին» այնպիսի պետություններ, ինչպիսիք են Անգլիան, Ֆրանսիան, Բելգիան, Իսպանիան և Պորտուգալիան։



Ֆաշիզմի նկատմամբ երկրորդ համաշխարհային պատերազմում հակաֆաշիստական կոալիցիայի երկրների հաղթանակը ուժեղ թափ հաղորդեց ազգային-ազատագրական շարժման զարգացմանը։ Ալեկոծվեց Աֆրիկան։ Ոչ թե գաղութարարների ողորմածությամբ, այլ ժողովուրդների կամքով և սոցիալիստական երկրների աջակցությամբ սկսեց քայքայվել գաղութային բանտը Աֆրիկայում։ Գաղութարարները ստիպված էին նահանջել՝ նախ անգլիացիները, այնուհետև՝ ֆրանսիացիներն ու բելգիացիները։

Ներկայումս Աֆրիկայում գոյություն ունի 49 անկախ պետություն, այսինքն՝ ավելի, քան որևէ մի այլ մայրցամաքում։ Բնականաբար, աֆրիկյան պետությունների նկատմամբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության տակտիկական հնարքները միանման չեն։ Դրա տարբերակները մշակվում են կախված աֆրիկյան այս կամ այն կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունից, երկրի բնական հարստությունների շահագործման հարցում ամերիկյան մոնոպոլիաների շահագրգռվածության աստիճանից, պենտագոնի համար նրա ռազմաստրատեգիական նշանակությունից։ Հենց այսպիսի գործոններով էլ որոշվում է ԱՄՆ-ի կառավարող շրջանների դիֆերենցված մոտեցումն աֆրիկյան առանձին երկրներին և շրջաններին, այդ թվում և Հարավ-Աֆրիկյան հանրապետությանը՝ ռասիստական այն պետությանը, որին աջակցում է միջազգային իմպերիալիզմը։

Նվաճողական պետությունների դիրքերի թուլացումն Աֆրիկայում 50—60-ական թվականներին ԱՄՆ-ի քաղաքական և գործարար աշխարհն ընկալեց ոչ միայն որպես այդ մայրցամաքում կապիտալիզմի ճակատագրի համար տագնապալի ազդանշան, այլև որպես ռեալ հնարավորություն ստեղծված իրավիճակն օգտագործելու ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի դիրքերն Աֆրիկայում ամրապնդելու համար։ Վաշինգտոնն սկսեց ամեն ձևով պրոպագանդել Աֆրիկայում ինչ-որ վակուումի գոյացման վարկածը, որը ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ի օգնությամբ, իբրև ազգերի «ազատ» համագործակցության առավել ուժեղ անդամ, պետք է լրացներ։ Քենեդին ճիշտ այդպիսի մոտեցման ակտիվ կողմնակից էր։

Սոցիալիստական կողմնորոշման պետությունների ամրա-

ընդում Աֆրիկայում՝ ահա թե ինչից են այսօր սարսափում Վաշինգտոնում։ Նկատի ունենալով այն, որ հակաիմպերիալիստական հեղափոխությունն Աֆրիկայում տեղի է ունենում պատմական նոր պայմաններում, երբ այնտեղ ամրապնդվում են սոցիալիստական տենդենցները, Վաշինգտոնը վաղուց ի վեր այս մայրցամաքում նույնպես գործի է դրել նեոգաղութատիրության ստեղծված միջոցների ամբողջ զինանոցը։ Քենեդիի կառավարության գլխավոր ստրատեգիական նպատակն այն էր, որպեսզի Աֆրիկան մղի «պերիֆերիական» կապիտալիստական զարգացման ուղիով։

Չի կարելի, իհարկե, մոռանալ նաև Աֆրիկայի բնական հարստությունների հանդեպ ԱՄՆ-ի մեծ շահագրգռվածության մասին։ Ամերիկյան (ինչպես և եվրոպական) մոնոպոլիաներն Աֆրիկայում արդյունահանում են ադամանդ և կոբալտ, պլատին և ոսկի, մագնիում և քրոմ, մանգան ու պղինձ, ինչպես նաև այլ օգտակար հանածոներ։ Մայրցամաքը երկար ժամանակ նրանց համար արժեքավոր հումքապաշարների գանձարան է ծառայում, և մոնոպոլիաները, անտարակույս, մտադրություն չունեն նրա բանալին թողնել աֆրիկացիների ձեռքում։

Աֆրիկայում ԱՄՆ-ի վարած քաղաքականության մեջ որոշակի ուղենիշ դարձավ 1960 թվականը։ Հենց այդ ժամանակ ազգային-ազատագրական շարժումն Աֆրիկայի շատ երկրներում շոշափելի արդյունքների հասավ, որն արտահայտվեց մեծ թվով անկախ աֆրիկյան պետությունների ստեղծմամբ։ Այդ անդառնալի պրոցեսն իր արտահայտությունը գտավ, մասնավորապես, պրեզիդենտ Քենեդու ժամանակ ԱՄՆ-ի աֆրիկյան քաղաքականության ակտիվացման, և այնուհետև պրեզիդենտ Ջոնսոնի կառավարության այդ նույն էքսպանսիոնիստական կուրսի զարգացման մեջ։

Դեռևս 1959 թվականի հունիսի 28-ին, ելույթ ունենալով աֆրիկյան մշակույթի ամերիկյան ընկերության ամենամյա կոնֆերանսում, Քենեդին նշեց, որ Աֆրիկայի զարգացումը վատ կամ լավ իմաստով լրջորեն ազդելու է Միացյալ Նահանգների ապագայի վրա[1]։ Քենեդին սուր քննադատության ենթարկեց Էյզենհաուերի կառավարության «անտարբերությունը» Աֆրիկայում։ Նա նշեց, որ աֆրիկյան երկրներին 100 մլն դոլար գումարով ԱՄՆ-ի «օգնությունը» 50-ական



թվականների վերջում կազմում էր ամերիկյան «օգնության» ընդհանուր ծավալի ընդամենը 3%-ը։ 1945-ից մինչև 1955 թվականը Աֆրիկայի երկրները, օրինակ, ստացել են ամերիկյան արտաերկրյա օգնության մեկ վեցերորդ տոկոսը, որի մեծ մասը տրամադրվել էր Հարավային Աֆրիկային և Ռոդեզիային։ ԱՄՆ-ի ապագա պրեզիդենտը կոչ արեց ուժեղացնել ամերիկյան մասնավոր կապիտալի արտահանումը Աֆրիկա։

1959 թվականի հոկտեմբերի 13-ին Քենեդին ԱՄՆ-ի կառավարության ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ Աֆրիկայում տեղի է ունենում հեղափոխություն[2]։ Նա կարծիք հայտնեց, որ իրադարձությունների զարգացումն Աֆրիկայում անհրաժեշտ է Արևմուտքի հսկողության տակ դնել, իսկ ԱՄՆ-ը պետք է ռազմավարական դոկտրինա մշակի Աֆրիկայի վերաբերյալ, որն այնուհետև հարկավոր է կենսագործել գաղափարական և տնտեսական լծակների միջոցով։ Քենեդին նշում էր, որ 10 տարի հետո աֆրիկյան պետությունները ՄԱԿ-ում կունենան ձայների 35%-ը[3]։ Միայն 1960 թվականին ունեցած ելույթներում Քենեդին հարյուրավոր անգամներ շոշափել է Աֆրիկայի թեման[4]։ Նրա ըմբռնումը մեկն էր՝ Արևմուտքը կորցնում է իր ազդեցությունը Աֆրիկայում, ԱՄՆ-ը ավելի ակտիվորեն պետք է պայքարի նրա համար։

1961 թվականին ամերիկյան դիվանագիտական ծառայությունն Աֆրիկայում ընդարձակվեց։ Պետդեպարտամենտում նոր աֆրիկյան բաժիններ ստեղծվեցին։ Որպես կառավարական հյուրեր բազմաթիվ աֆրիկյան պատվիրակություններ են հրավիրվում ԱՄՆ։ 1961 թվականին Վաշինգտոն են այցելում աֆրիկյան 11, իսկ 1962 թվականին՝ 10 երկրների ղեկավարներ։ Դեմոկրատական ադմինիստրացիայի ղեկավարներն աֆրիկյան պետությունների ղեկավարների հետ անձնական կոնտակտների զարգացումն այդ մայրցամաքում ամերիկյան արտաքին քաղաքականության ակտիվացման արդյունավետ միջոց էր համարում։

1961 թվականի օգոստոսին ԱՄՆ-ում ստեղծվում է Առևտրի և զարգացման աֆրիկա-ամերիկյան ասոցիացիա։ 1961 թվականի վերջին Աֆրիկայում արդեն 220-ից ավելի ամերիկյան մասնավոր կոմպանիա էր գործում։ Ամերիկյան կապիտալ ներդրումների ծավալն աֆրիկյան երկրների էկոնո-

միկայում 1961 թվականի վերջում կազմում էր մոտավորապես 1,1 մլրդ. դոլար։

ԱՄՆ-ը բացառիկ կարևոր նշանակություն էր տալիս գաղափարական էքսպանսիային Աֆրիկայում։ Ամերիկյան արտաքին քաղաքականության այդ լծակին դեմոկրատների կառավարության ժամանակ առավել մեծ ուշադրություն էր հատկացվում։ 1961 թվականի մարտ ամսին ԱՄՆ-ում ստեղծվում է «Խաղաղության կորպուս», որը նպատակ ուներ ամրապնդել ԱՄՆ-ի դիրքերը զարգացող երկրներում, անցկացնել նրա բնակչության գաղափարական մշակում։ 1963 թվականի կեսերին «կորպուսի» անձնակազմի թիվն Աֆրիկայում կազմում էր 1500 մարդ։ 1966 թվականի հուլիսին «կորպուսի» աֆրիկյան կոնտինգենտում արդեն 4670 մարդ կար։ ԱՄՆ-ը համառորեն ներթափանցում էր աֆրիկյան երկրների կրթության սիստեմը, դիտելով այդ գործողությունները որպես հեռանկարային «սոցիալական կապիտալ ներդրումներ», որոնք ուղղված են մայրցամաքում ամերիկյան ազդեցության ամրապնդմանն ու զարգացմանը։ Ներկայումս ԱՄՆ-ում տասնյակ գիտահետազոտական կենտրոններ են գործում, հիմնականում համալսարաններին կից, որտեղ բուրժուական աֆրիկագետներ են պատրաստում։

Քենեդիի կառավարությունը խնամքով քողարկում էր իր աֆրիկյան քաղաքականության էքսպանսիոնիստական բնույթը։ Եթե էյզենհաուերի կառավարությունը այս կամ այն չափով ուղղակիորեն էր պաշտպանում ՄԱԿ-ում եվրոպական գաղութարարներին, ապա դեմոկրատների Սպիտակ տուն գալով ամերիկյան ներկայացուցիչների վարքագիծը զգալի էվոլյուցիա ապրեց։ ԱՄՆ-ը դեպքից դեպք սկսեց արտաքուստ ասես հաշվի չնստել ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների, օրինակ, Պորտուգալիայի և Բելգիայի շահերի հետ, որպեսզի ստեղծի գաղութատիրության դեմ «պայքար մղելու» իր երևութական պատրաստակամությունը։ Իրականում ԱՄՆ-ը օգնում էր ՆԱՏՕ-ի իր դաշնակիցներին պայքար մղելու ազգային-ազատագրական շարժման դեմ Աֆրիկայում։

Հարկավոր է նշել ևս մեկ հանգամանք։ ԱՄՆ-ը համառորեն ձգտում էր օգտագործել եվրոպական գաղութատիրական պետությունների դիրքերի թուլացումը Աֆրիկայում։ Ամերիկյան կառավարությունը սևեռուն ուշադրություն էր հատկացնում, օրինակ, ամերիկյան կապիտալի ներդրմանը բելգիական Կոնգոյում, մտադրվելով դուրս մղել այնտեղից բելգիացիներին ու անգլիացիներին։

Արևադարձային Աֆրիկայում ԱՄՆ-ը առանձնապես ակտիվորեն էր «փաղաքշում» Նիգերիային, օգտագործելով Բալևայի կառավարության պրոարևմտյան կողմնորոշումը։ Քենեդիի կառավարությունը Արևադարձային աֆրիկյան երկրներ թափանցելու համար սկսեց ակտիվորեն օգտագործել տնտեսական «օգնության» լծակը։ 1961 թվականին նա, օրինակ, ավելացրեց այդ շրջանների երկրների տնտեսական «օգնության» հատկացումները 1960 թվականի համեմատությամբ չորս անգամ։ 1962 թվականին աֆրիկյան երկրներին ամերիկյան «օգնության» ծավալը (որի զգալի մասը կազմում էին ռազմական հատկացումները) է՛լ ավելի աճեց, այն հասավ 500 մլն. դոլարի։ ԱՄՆ-ի տնտեսական «օգնությունը» Աֆրիկային 1963 թվականին անցավ 526 մլն. դոլարից։ Ինչ վերաբերում է Աֆրիկային ամերիկյան ռազմական «օգնությանը», ապա այն միայն 1963 թվականին կազմում էր 75 մլն. դոլար և հիմնականում տրամադրվում էր հետևյալ երկրներին՝ Կոնգո (Քինշասա), Եթովպիա, Լիբերիա, Լիբիա, Մարոկո, Նիգերիա, Սենեգալ և Թունիս։

Եվ այսպես, դեմոկրատների կառավարման 60-ական թվականների շրջանի համար բնորոշ է ամերիկյան արտաքին քաղաքականության ակտիվացումն Աֆրիկայում։ Նրա խնդիրն էր՝ փորձ անել այդ մայրցամաքում թուլացնել սոցիալիստական գաղափարների ազդեցությունը, ինչպես նաև դուրս մղել այնտեղից ԱՄՆ-ի կապիտալիստական մրցակիցներին։ ԱՄՆ-ի աֆրիկյան քաղաքականության ռեակցիոն էության մեջ կարելի է համոզվել թեկուզ ամերիկա-պորտուգալական հարաբերությունների օրինակով։

ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ի դաշնակից սալազարյան Պորտուգալիան հսկայական համակենտրոնացման ճամբարի էր վերածել Անգոլան։ Գաղութարարները մասսայական հաշվեհարդար էին տեսնում ազատություն և անկախություն պահանջող աֆրիկացիների հետ։ Իսկ ի՞նչ էր անում ԱՄՆ-ի

կառավարությունը։ Նա լռեց այնքան ժամանակ, մինչև որ զարգացող սոցիալիստական երկրների ջանքերի շնորհիվ ՄԱԿ-ում քվեարկության դրվեց մի բանաձև, որով պահանջվում էր Անգոլայի բնակչության «իրավունքների և ազատության պաշտպանության համար միջոցներ ձեռնարկել»։ ՄԱԿ-ի 73 անդամ հանդես եկավ հօգուտ բանաձևի[7]։ Նրանց միացավ նաև ամերիկյան ներկայացուցիչ Էդլայ Սթիվենսոնը, որին, ինչպես պնդում են, «սարսափի մեջ էին գցել» մահապատիժների մասին հաղորդումները։ Հետագայում նա քվեարկեց անգամ Պորտուգալիային պարսավելու օգտին[8]։

ՄԱԿ-ում ԱՄՆ-ի ներկայացուցիչների ճառերի վերլուծությունը ցույց է տալիս, որ, հանդես գալով անգոլական ժողովրդին ինչ-որ հեռավոր ինքնորոշման իրավունք տալու օգտին, նրանք միաժամանակ նախազգուշացնում էին, որ պետք է շտապել, ըստ այդմ վկայակոչելով «Կոնգոյում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները»[7]։ Հազիվ թե միջազգային մեկ այլ պրոբլեմ գտնվեր, որտեղ Վաշինգտոնի դիրքորոշումը 60—70-ական թվականների ընթացքում այդչափ երկերեսանի լիներ, ինչպես Անգոլայի հարցում։ Վճռական խոսքն այստեղ պենտագոնինն էր։ Ամերիկյան զինվորականությունը շահագրգռված էր այն բազաներով, որոնք նրանց տրամադրել էր Սալազարը։ Իսկ երբ վերջինս ակնարկեց, որ Պորտուգալիան կարող է վերանայել իր տերիտորիայում գտնվող բազաները ամերիկացիներին վարձակալության տալու հարցը, ԱՄՆ-ի կառավարությունը գաղութատիրության դեմ «պայքարում» անմիջապես հետքայլ կատարեց։ ԱՄՆ-ը Պորտուգալիային զենք էր տրամադրում, այդ թվում նապալմային ռումբեր, որոնք գործի էին դրվում անգոլական ժողովրդի դեմ[9]։

Քենեդու կառավարության իսկական նպատակներն Աֆրիկայում առանձնապես վառ էին դրսևորվում առավել սուր իրավիճակներում, ինչպես այդ պատահեց, օրինակ, Կոնգոյում (Քինշասա)։

Նախկին բելգիական Կոնգոյի ողբերգությունը, ինչպես հայտնի է, սկսվել էր Քենեդու ԱՄՆ-ի պրեզիդենտ դառնալուց շատ առաջ։ Նրա սկիզբը դրել էր Էյզենհաուերի կառավարությունը։ Քենեդու կառավարությունը դարձավ այդ քաղաքականության ոչ միայն ժառանգորդը, այլև ակտիվ շարունակողը։ Ամբողջությամբ իրականությանն էր համապատասխանում Քենեդու օգնականներից մեկի՝ Սորենսենի խոստովանությունն այն մասին, որ «Քենեդու քաղաքականությունը Կոնգոյում հիմնականում Էյզենհաուերի քաղաքականության շարունակությունն էր հանդիսանում»[8]։



Նշենք, որ իմպերիալիստների սանձած իրադարձությունները Կոնգոյում սրվեցին ԱՄՆ-ում պրեզիդենտական նախընտրական կամպանիայի ժամանակ։ Իմպերիալիստների միջամտությունը աֆրիկյան այդ երկրի գործերին իր գագաթնակետին հասավ, երբ Էյզենհաուերը հանձնում էր գործերը Քենեդուն։ Այն ժամանակ, երբ վարձկանների խումբը Էլիզաբեթվիլի ծայրամասում սպանում էր Լումումբային և նրա մերձավորներին, Քենեդին, ճիշտ է, դեռևս ԱՄՆ-ի պաշտոնական պրեզիդենտ չէր։

Պատրիս Լումումբայի սպանության մասին համաշխարհային հասարակայնությունն իմացավ 1961 թվականի փետրվարի 13-ին։ Իսկ փետրվարի 15-ին Քենեդին մամուլի կոնֆերանսում հանդես եկավ հայտարարությամբ, որով պաշտպանեց Համարշելդի խայտառակ գործողությունները Կոնգոյում, որն, ըստ էության, օգնեց իմպերիալիստների դավադրության հաջողությանը։ Քենեդին հայտնեց, որ ԱՄՆ-ը հանդես է գալիս Կոնգոյի ներքին գործերին որևէ երկրի «միջամտության դեմ»[10]։ Սակայն այդ հայտարարության իսկական նշանակության մասին էր խոսում այն, որ 1961 թվականին Կոնգոյի գործերին հենց ԱՄՆ-ի միջամտության հետևանքով տապալվեց այդ երկրի օրինական կառավարությունը։ Հայտարարության մեջ Քենեդին դատապարտեց և ոչ մի խոսք չասաց Լումումբային սպանողների հասցեին։ Նրա ամբողջ ճարտասանությունն ուղղված էր Արևմուտքի դրածո Կասավուբուի կառավարության պաշտպանությանը։

Այնուհետև ԱՄՆ-ի կառավարությունը Կոնգոյում իր դիրքերի ամրապնդման ուղղությամբ պայքարը փոխադրեց ՄԱԿ։ Կոնգոյի վերաբերյալ ՄԱԿ-ի որոշումները ծայրահեղ հակասական բնույթ էին կրում[11]։

Պատրիս Լումումբայի սպանությունից հետո ԱՄՆ-ի կառավարությունը հիմնական հույսը կապում էր «Սթիվենսոնի պլա-

նիզ» հետ։ Այդ պլանի հիմնական նպատակը ոչ թե Կոնգոյի ճգնաժամի կարգավորումն էր, այլ Լումումբայի հետևորդ Անտուան Գիզենգայի կառավարության մեկուսացումը։ «Սթիվենսոնի պլանում» իր արտացոլումն էր գտել նաև Կոնգոյի համար ԱՄՆ-ի, Բելգիայի և Անգլիայի միջև ծավալված սուր պայքարը։ Սթիվենսոնը պահանջում էր հսկողություն սահմանել Կոնգոյից առանձնացած Կաթանգայի կառավարիչ Չոմբեի նկատմամբ։ Մինչդեռ Չոմբեն արդեն հսկողության տակ էր, բայց դա ոչ թե ամերիկյան, այլ բելգիական հսկողություն էր։ Համարշելդն արագորեն արձագանքեց ամերիկյան պլանին, ՄԱԿ-ում այն ձևակերպելով իր անունով։ «Սթիվենսոնի պլանը» և «Համարշելդի նախագիծը» երկվորյակներ էին, քանզի և՛ մեկը, և՛ մյուսը ծնունդ էին առել ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ընդերքում։ Երկուսն էլ Կոնգոյի նկատմամբ ՄԱԿ-ի «խնամակալության» սահմանման նպատակ էին հետապնդում, որն այն օրերի կոնկրետ իրադրությունում այդ երկրի ժողովրդի սուվերեն իրավունքների սահմանափակում էր նշանակում։

Կոնգոյում իրադրության բարդությունն ու հակասականությունն իրենց արտացոլումը գտան նաև ՄԱԿ-ի ընդունած մի շարք բանաձևերում։ Այսպես, օրինակ, 1961 թվականի փետրվարի 21-ին Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևը պահանջում էր Կոնգոյից անհապաղ դուրս բերել և էվակուացնել ամբողջ բելգիական և մյուս արտասահմանյան զինվորական և կիսազինվորական անձնակազմը[12]։ Իրադարձությունների նման շրջադարձը բելգիական գաղութարարների սրտով չէր։

ՄԱԿ-ի զորքերի գործողությունները Չոմբեի դեմ լուրջ անհանգստություն առաջացրեցին Բրյուսելում և Լոնդոնում։ Նրանք հայտնվեցին ազդեցության նոր ակտի շեմին։ Այդ շրջանում ամերիկյան դիվանագիտությունը Կոնգոյի հայրենասերների դեմ ուղղված բարդ մանևրներ էր անցկացնում։

1961 թվականի օգոստոսին Կոնգոյում ԱՄՆ-ի դեսպան նշանակվեց Էդմունդ Հալիոնը։ Այդ երկրում տիրող իրադրության վերաբերյալ նոր դեսպանի հայացքները ուշագրավ էին։ Կոնգոյի հայրենասիրական ուժերի գործողություններում նա «կոմունիստական սպառնալիք» է նկատում։ Հալիոնը



զեկույց է ուղարկում Վաշինգտոն այն մասին, որ Կոնգոն ավելի մասերի բաժանելու դեպքում «կարմիրների մեծ մասը կոմունիստներն իրենց ձեռքը կվերցնեն»։ Դեսպանն առաջարկում էր վճռական գործողությունների դիմել «դրությունը փրկելու» համար[13]։ Պետդեպարտամենտում Հալիոնի պլաններն ընդունվեցին առանց որևէ խանդավառության, գտնելով, որ Կոնգոյում, և հատկապես Կաթանգայում, ԱՄՆ-ի նման քաղաքականությունը կարող է զգալիորեն քայքայել ՆԱՏՕ-ն։ Այդպիսի գիծ էր պաշտպանում նաև Ա. Հարիմանը, որը հանդիպում էր ունեցել Չոմբեի հետ Ժնևում։ Պետական քարտուղար Դ. Ռասկը Կոնգոյի պրոբլեմին «մռայլ կասկածամտությամբ» էր նայում, գտնելով, որ իրադրությունն այնտեղ չափազանց անորոշ է Կաթանգայի սեպարատիզմի վերացման հարցում շտապելու համար[14]։

Որոշ տատանումներից հետո ԱՄՆ-ի կառավարությունը, այնուամենայնիվ, հավանություն է տալիս Հալիոնի պլանին. ԱՄՆ-ը, քողարկվելով ՄԱԿ-ի անվան տակ և հենվելով Համարշելդի վրա, ակտիվ գործունեություն է ծավալում։ Վճռվեց ուժեղացնել պայքարը Գիզենգայի և նրա կողմնակիցների դեմ։ 1961 թվականի նոյեմբերի 16-ին Է. Սթիվենսոնը հայտարարեց, որ Արևելյան նահանգի իրադրությունն ավելի լուրջ է, քան Կաթանգայի առանձնացման հարցը»[15]։

Կոնգոյում ազգային-ազատագրական շարժման ուժերի դեմ պայքարի քաղաքականությունը Քենեդիի կառավարությունը տակտիկական լրացումներով բավական ճարպկորեն քողարկում էր հօգուտ «Կոնգոյի միասնության», այդ երկրի գործերին ռազմական միջամտություն թույլ չտալու և անգամ այնտեղից վարձկաններին դուրս բերելու, կենտրոնական իշխանությանն ամրապնդելու պահանջներով։ Այդ կարգի տակտիկայի օրինակ կարող է հանդիսանալ Անվտանգության խորհրդի նիստում Սթիվենսոնի վերը հիշատակված հայտարարությունը։ Այդ տակտիկան վկայում էր Կոնգոյի գործերին Քենեդիի կառավարության ճկուն մոտեցման մասին։ Նա չէր ցանկանում կրկնել եվրոպական գաղութարարների սխալները։

1961 թվականի վերջին ամիսներին ԱՄՆ-ը ավելի վճռական դիրք գրավեց Չոմբեի նկատմամբ, ձգտելով ստիպել բելգիական դրածոյին ավելի մեծ զիջողություններ անելու։ Այդ նպատակով ՄԱԿ-ի զորքերը նոր գործողություն սկսեցին

այդ ռեժիմի դեմ։ Դեկտեմբերի 8-ին Չոմբեի հասցեին նախազգուշացմամբ հանդես եկավ ԱՄՆ-ի պետական քարտուղար Դին Ռասկը։ Նա Չոմբեին առաջարկեց բանակցությունների մեջ մտնել «կենտրոնական կառավարության» պրեմիեր մինիստր Սիրիլ Ադուլայի հետ։ Ռասկը նախազգուշացրեց, որ հակառակ դեպքում Կոնգոն կհայտնվի «անարխիայի» հորձանուտում և «բաց կլինի կոմունիստական ներթափանցման համար»[16]։

Կաթանգայի նկատմամբ Քենեդիի քաղաքականությունը սրեց Բրյուսելի ու Լոնդոնի հետ Վաշինգտոնի հակասությունները։ Ամերիկյան գործողությունների քննադատությամբ հանդես եկավ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր լորդ Հյումը։ Կոնգոյի հարցի վերաբերյալ Փարիզում ՆԱՏՕ-ի անդամ երկրների արտաքին գործերի մինիստրների շուտափույթ հրավիրված խորհրդակցությունում դաշնակիցները մեկը մյուսի հասցեին բավական սուր արտահայտություններ էին շպրտում։ Սակայն ԱՄՆ-ի համար Կոնգոն այնքան բաղձալի պլացդարմ էր, որ անգամ իր գործողությունների ՆԱՏՕ-ի որոշ դաշնակիցների հավանությունը չստանալը չփոխեց ամերիկյան քաղաքականության հիմնական կուրսը։ Ամերիկյան դիվանագիտության սպառնալիքները Չոմբեի վրա որոշակի ազդեցություն գործեցին։ 1961 թվականի դեկտեմբերի 14-ին պրեզիդենտ Քենեդին Չոմբեից հեռագիր է ստանում, որում նա Ադուլայի հետ բանակցություններ վարելու համաձայնություն էր տալիս։ Չոմբեն դիմում է Քենեդիին որպես «ազատ մարդու և քրիստոնյայի» և խնդրում օգնել դադարեցնելու «անմիտ արյունահեղությունը»։ Պետդեպարտամենտի դեկտեմբերի 15-ին արված հայտարարությունում նշվում է, որ «պրեզիդենտ Քենեդին Էլիզաբեթվիլում ամերիկյան հյուպատոսի միջոցով արագ պատասխան է ուղարկել, որ ԱՄՆ-ը անմիջապես սկսում է այդպիսի հնարավորությունների պարզաբանումը և հետագայում հնարավորին չափ արագ կկապվի նրա հետ (Չոմբեի — Ա. Ե. Գ.)»[17]։ Պետդեպարտամենտը դեկտեմբերի 17-ին նոր հայտարարություն արեց, որում նշվում էր, որ ամերիկյան դեսպան Հալիոնը կապվել է Ադուլայի հետ և վերջինս հայտնել է, որ «պատրաստ է հանդիպել Մոիզ Չոմբեի հետ, քննարկելու համար Կաթանգայի նահանգի ռեինտեգրացումը Կոնգոյում՝ Լեոպոլդվիլում գտնվող



ազգային կառավարության գլխավորությամբ»[18]։ Էլիզաբեթվիլում ամերիկյան հյուպատոսը Չոմբեին հանձնեց Քենեդիի հեռագիրը, որով նրան առաջարկվում էր անմիջապես ամերիկյան ինքնաթիռով դեսպան Հալիոնի ուղեկցությամբ մեկնել բանակցություններ վարելու։ Հատուկ նշվում էր, որ դեսպանը միջնորդի դեր չի կատարելու, այլ օգնելու է հանդիպմանը։ Իրականում Հալիոնը ղեկավարում էր հանդիպումը, իսկ «Կիթոնյան համաձայնությունը» ամերիկյան դիվանագիտության ծնունդ էր[19]։

Վաշինգտոնի ճնշումը զգացնել տվեց նաև Չոմբեի դիրքորոշման վրա։ 1961 թվականի դեկտեմբերի 21-ին ստորագրվեց «Կիթոնյան համաձայնագիրը», որով Չոմբեն «ճանաչում էր» Լեոպոլդվիլի կառավարության իշխանությունը Կոնգոյի ամբողջ տերիտորիայում[20]։ Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Չոմբեն «Կիթոնյան համաձայնագիրը» զգալի չափով ձևականորեն էր ընդունել։ Քենեդիին այդ մասին տեղեկացրեց Հալիոնը, հաղորդելով, որ Չոմբեն «ձգտում է ժամանակ շահել» և համաձայնագրի պայմաններին չի հետևելու[21]։ Եվ իրոք, Չոմբեն, իր թիկունքում զգալով Բելգիայի և Անգլիայի ուժեղ աջակցությունը, սկսեց սաբոտաժի ենթարկել «Կիթոնյան համաձայնագիրը»։

Հետագա մի շարք ամիսների ընթացքում Քենեդիի կառավարության ջանքերն ուղղված էին Կոնգոյի հարցի վերաբերյալ ՆԱՏՕ-ի պետությունների միջև հակասությունների մեղմացմանը։ 1962 թվականի ամառը ամերիկյան, անգլիական և բելգիական ներկայացուցիչները համատեղ ջանքերով «Կոնգոյի միավորման» նոր պլան են մշակում։ Եվ չնայած նոր «համատեղ պլանը» ձևականորեն պատրաստ էր, սակայն արևմտաեվրոպական մայրաքաղաքներից Չոմբեին ուղարկվող գաղտնի հրահանգները զանազանվում էին Վաշինգտոնի «խորհուրդներից»։ Չոմբեն ձևականորեն ընդառաջում էր «համաձայնեցված պլանին», իսկ իրականում դարձյալ անտեսում էր այն։ 1962 թվականի նոյեմբերին ԱՄՆ-ի կառավարությունը Չոմբեի մոտ է ուղարկում իր հատուկ էմիսար Գ. Մաքգիին։ Նա սպառնում է Չոմբեին «ռազմական առճակատումով»[22]։ Չոմբեն, սակայն, շարունակում է ձգձգել բանակցությունները։

Ավելի վաղ, 1962 թվականի ամռանը, որոշվեց նաև Ու Տանի դիրքորոշումը, որը ՄԱԿ-ի կառավարման ղեկն ընդունեց բավական խորհրդավոր հանգամանքներում զոհված Համարշելդի փոխարեն: Հուլիսի 31-ին և օգոստոսի 20-ին Ու Տանը հանդես եկավ հայտարարություններով, որտեղ ՄԱԿ-ի անդամներին կոչ էր անում վերջ դնել «Կաթանգայի սեպարատիզմին», դադարեցնել Չոմբեի ռեժիմին ռազմական և ոչ ռազմական ամեն կարգի օգնությունը: Ու Տանը Չոմբեի ռեժիմի դեմ վճռական գործողությունների դիմելու կողմ արտահայտվեց[23]: ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը պաշտպանեց Ու Տանի առաջարկությունը[24]: ԱՄՆ-ը ձգտում էր օգտագործել Համարշելդի հաջորդի գործողությունները Բելգիայի դեմ պայքարում իր դիրքերն ամրապնդելու համար:

Քենեդին, գիտենալով ով է կանգնած կաթանգյան սեպարատիստների թիկունքում, որոշեց հանդիպել Բելգիայի պրեմիեր մինիստր Սպաակի հետ: Այդ հանդիպումը տեղի ունեցավ 1962 թվականի նոյեմբերի 27-ին, որին հետևեցին մի շարք հանդիպումներ: Քենեդու և Սպաակի հրապարակած համատեղ կոմյունիկեում երկու կողմերը հաստատեցին Ու Տանի պլանի պաշտպանությունը: Իրականում կոմյունիկեի հղկված ֆրազները թաքցնում էին Կոնգոյում միջիմպերիալիստական պայքարի մեծ շիկացումը[25]: Բելգիացիները ժամանակ էին շահում, միաժամանակ ուժեղացնելով Կաթանգայում իրենց վարձկանների բանակը: Դրանում նրանց ակտիվորեն աջակցում էին Անգլիան և Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունը: Թվում էր, որ ամբողջ 1962 թվականի ընթացքում Կոնգոյում ավելի սուր պայքար է հասունանում ԱՄՆ-ի մրցակցող մոնոպոլիստական խմբավորումների, մի կողմից, ու Բելգիայի, Անգլիայի, Հարավ-Աֆրիկյան Հանրապետության և Կաթանգայում նրանց վարձկանների միջև, մյուս կողմից:

1962 թվականի դեկտեմբերին Սպիտակ տանը լարված մթնոլորտ էր տիրում: Դեսպան Հալիոնը համառորեն խնդրեց Քենեդիին Կաթանգայում ուժ գործադրել: Միայն դա, գտնում էր ամերիկյան դեսպանը, կօգնի ամրապնդել Կոնգոյում ամերիկյան ազդեցությունը, որը հակառակ դեպքում կվերանա: Քենեդին պաշտպանում է Հալիոնին[26]:



1962 թվականի դեկտեմբերի 18-ին ՄԱԿ-ի զորքերը նոր գործողություն սկսեցին Կաթանգայի սեպարատիզմը վերացնելու ուղղությամբ: Չոմբեի ուժերը բավական արագ ջախջախվեցին, և դեկտեմբերի 30-ին ՄԱԿ-ի զորքերը դրության տերը դարձան[27]:

Սկսվում է ԱՄՆ-ի կառավարության ջանքերի նոր շրջանը, ջանքեր, որոնք ուղղված են մեղմացնելու իրենց գործողությունների հետևանքով Լոնդոնում և Բրյուսելում առաջացած դժգոհությունը: Այդ նպատակով ԱՄՆ-ի պրեզիդենտը 1962 թվականի դեկտեմբերի 18-ին Նասաուում (Բահամյան կղզիներ) հանդիպում է Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր Մակմիլանի հետ: Իմպերիալիստական պետությունների հակասությունների սրումը Կոնգոյում, ինչպես նաև Անգլիայի միջուկային «անկախ» ուժերի ճակատագիրը դարձան երիտասարդ պրեզիդենտի և զառամյալ պրեմիեր մինիստրի բանակցությունների թեման: Միաժամանակ Քենեդին Բրյուսել ուղարկեց պետական քարտուղարի տեղակալ Մաքգիին: Այդ բանակցությունների ընթացքում կողմերը պայմանավորվածության եկան Կոնգոյում շահույթների «արդարացի» բաժանման շուրջը:

Եվ այսպես, 60-ական թվականների սկզբներին ԱՄՆ-ը իրականում ցուցադրեց, նույնիսկ ի հաշիվ ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների, Աֆրիկա թափանցելու իր «իրավունքը»:

Քենեդու կառավարության արտաքին քաղաքական ստրատեգիայում և տակտիկայում մեծ տեղ էր հատկացվում Աֆրիկայի հարավին, Հարավ-Աֆրիկյան Հանրապետության նկատմամբ քաղաքականությանը:

## ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ ՀԱՐԱՎ-ԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Հարավ-Աֆրիկյան Հանրապետության նկատմամբ դեմոկրատների կառավարության վարած քաղաքականությունը 60-ական թվականների առավել քողարկված քաղաքականությունն էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքական կուրսում: Քենեդու կառավարության կուրսի հետևանքները վկայում են, որ այն

նպաստում էր Աֆրիկայի հարավում ռասիստների և գաղութարարների բլոկի ամրապնդմանը։

ԱՄՆ-ը ամեն միջոցով ընդառաջում էր Ֆոսթերի, Սալազարի և Սմիթի՝ հարավաֆրիկյան գաղութարարների և ռասիստների բլոկին։ ԱՄՆ-ի, Անգլիայի և ԳՖՀ-ի հովանու տակ կազմակերպված այդ ռեակցիոն միությունը 60-ական թվականների կեսերին ամրացավ և տնտեսապես, և ռազմական առումով։ Քենեդիի պրեզիդենտության ժամանակաշրջանում, եթե բացառենք ճարտասանությունը, Աֆրիկայի հարավում գործող ռեակցիայի ուժերի դեմ ոչինչ չձեռնարկվեց։ Աֆրիկյան հարավի ռասիստների հարվածային ուժերը միշտ ուղղված էին անկախ աֆրիկյան երկրների դեմ։ Այդպիսին էր մնում իրավիճակը և 70-ական թվականների երկրորդ կեսում, երբ առաջատար ուժերի ճնշման տակ փլուզվեց սալազարյան կայսրությունը, բայց Հարավ-Աֆրիկյան Հանրապետության և Ռոդեզիայի ռասիստական ռեժիմները, իսկ այնուհետև Մուզորևայի մարիոնետային ռեժիմը և անգլիական վերականգնված գաղութատիրական ադմինիստրացիան ամեն ջանք գործադրում էին, որպեսզի Աֆրիկայի հարավում պահպանեն սոցիալական անոմալիան՝ ռասիզմը և ապարտեիդը։

Դրա հետ մեկտեղ Վաշինգտոնի քաղաքականության վրա ոչ պակաս չափով դրոշմ էր դնում նաև ՀԱՀ-ի ներքին քաղաքական իրադրության բուն յուրահատկությունը։ Երկրում վաղուց ի վեր անմարդկային ռասիստական ռեժիմ է հաստատված և ամենայն պետական լծակների միջոցով իրագործվում է սևամորթների մեծամասնության դիսկրիմինացիան։ Ամերիկյան ստրատեգները գտնում են, որ կապիտալիստական կարգերը ՀԱՀ-ում այնքան խոր արմատներ են թողել, որ երկիրը կարող է աֆրիկյան մայրցամաքի հարավում կապիտալիզմի յուրատեսակ ամրոց դիտվել։ Եվ քանի որ Աֆրիկայում իր գլխավոր ստրատեգիական նպատակը ԱՄՆ-ը համարում է նրա շրջադարձը թեկուզև չզարգացած, ինչպես այժմ ասում են «պերիֆերիական», սակայն կապիտալիզմի ուղղությամբ, ապա ՀԱՀ-ում իր դիրքերն ամրապնդելու ԱՄՆ-ի հետաքրքրաշարժությունը կարևոր է հասկանալ։



Իր հերթին ՀԱՀ-ի կառավարությունը պատրաստակամությամբ է իր դռները բացում օտարերկրյա կապիտալի առաջ, ընդառաջում ԱՄՆ-ի կառավարության ռազմաստրատեգիական պլաններին։ Այնպես որ իր արտաքին քաղաքականության կարևորագույն ասպեկտներում ԱՄՆ-ը, ինչպես 60-ական թվականների առաջին կեսին, այնպես էլ ներկայումս հասնում է ՀԱՀ-ի ռասիստական ռեժիմի հետ փոխըմբռնման և իր հերթին, ըստ էության, օգնում է նրան։ ԱՄՆ-ի և ՀԱՀ-ի միջև հարաբերությունների նման բնույթը ամերիկյան մենաշնորհների համար բարենպաստ «քաղաքական կլիմա է» ստեղծում, որի պայմաններում և իրագործվում է հարավաֆրիկյան մայրցամաքում նրանց էքսպանսիան։

Բնորոշ է, որ երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո ամերիկյան կառավարությունն այնպիսի կուրս վերցրեց, որպեսզի հարավաֆրիկյան իշխանությունների օգնությամբ Աֆրիկայի հարավում ԱՄՆ-ի մենաշնորհատական կապիտալի համար պոտենցիալ կարևոր պլացդարմ ապահովի։ Այդ նպատակով, մասնավորապես, լայնորեն օգտագործման մեջ դրվեցին տարբեր կարգի միջկառավարական համաձայնությունները։ 1945 թվականի ապրիլին համաձայնագիրը ստորագրվեց օգնության բոլոր տեսակների դիմաց փոխադարձ հաշվարկների, իսկ 1947 թվականի մարտ ամսին՝ լենդլիզով հաշվարկների կարգավորման մասին։ Այնուհետև հետևեցին մի շարք ուրիշ, հեռուն տանող պայմանավորվածություններ, որոնց թվում առաջին հերթին անհրաժեշտ է նշել 1951 թվականի նոյեմբերի 9-ի «փոխադարձ պաշտպանության համար օգնության» մասին համաձայնագիրը, ինչպես նաև ավիացիայի բնագավառում համաձայնագրերը, որոնք վավերացվեցին 1947 թվականի մայիսին և 1955 թվականի փետրվարին։ «Վարկերի մասին պայմանավորվածությունների» անվան տակ հայտնի ֆինանսական համաձայնագրերի շարքը երկու կողմերի կառավարությունները վավերացրին 1946 և 1952 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում։ Վերջապես, 1957 թվականի օգոստոսի 22-ին ՀԱՀ-ի և ԱՄՆ-ի միջև պայմանագիր ստորագրվեց ատոմային էներգիայի «խաղաղ օգտագործման» բնագավառում համա-

գործակցության մասին, իսկ 1960 թվականի սեպտեմբերի 13-ին՝ պայմանագիր, որը նախատեսում էր տիեզերքում հսկելու կայանների ստեղծում։ ԱՄՆ-ի և ՀԱՀ-ի միջև նաև արձանագրություններ ստորագրվեցին կրթության, առևտրի, հյուպատոսական հարաբերությունների, ինֆորմացիայի և փոստի վերաբերյալ[20]։ Այսպիսով, ՀԱՀ-ի հետ ԱՄՆ-ի երկկողմանի հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դուրս եկան հարաբերական պասիվության վիճակից, որում նրանք նախկինում գտնվում էին, և սկսեցին զարգանալ բավական արագ տեմպերով։ Ընդ որում այդ նպատակով առանձնապես լայնորեն էին օգտագործվում պետական լծակները։

ԱՄՆ-ի համար ՀԱՀ-ը մշտապես այնպիսի կարևոր ստրատեգիական նյութերի ստացման աղբյուր է հանդիսացել, ինչպես, օրինակ՝ ուրանային հանքաքար, պլատին, բերիլիում, լիթի, ցիրկոնիում։ ՀԱՀ-ից ԱՄՆ-ը իր էկոնոմիկայի, այդ թվում ռազմաարդյունաբերական կոմպլեքսի համար թանկարժեք հանքանյութեր էր ստանում, ինչպես նիկել, տանտալ, վանադիում, քրոմ, արդյունաբերական ադամանդներ։ Բացի այդ, մեծ ծավալով ոսկի էր գնվում։

ՀԱՀ-ի էկոնոմիկայում մասնավոր կապիտալ ներդրումների աճի տեմպը 60-ական թվականների առաջին կեսին գրեթե երկու անգամ գերազանցեցին 50-ական թվականների այդ կապիտալ ներդրումների աճի տեմպերը։ Ուշադրության էր հրավիրում նաև այն, որ յուրաքանչյուր հաջորդ տարում ամերիկյան մոնոպոլիաները ՀԱՀ-ի էկոնոմիկայում ավելի մեծ ներդրումներ էին կատարում, քան նախորդ տարում։ Այդ ամենամյա աճի դինամիկան այսպիսին է. 1960 թվական՝ 286 մլն. դոլ., 1961 թվական՝ 311 մլն. դոլ., 1962 թվական՝ 357 մլն. դոլ., 1963 թվական՝ 411 մլն. դոլ., 1964 թվական՝ 468 մլն., 1965 թվական՝ 528 մլն. դոլ.։ Պորտֆելային հատկացումների հաշվառումով ՀԱՀ-ում ԱՄՆ-ի հատկացումների ընդհանուր գումարը 1965 թվականի սկզբին կազմեց 655 մլն. դոլար, այսինքն՝ օտարերկրյա բոլոր կապիտալ ներդրումների շուրջ 14%-ը։ Ամերիկյան կապիտալ ներդրումների աճը ՀԱՀ-ի էկոնոմիկայում շարունակվեց նաև



հաջորդ տարիներին։ 1967 թվականին դրանց մակարդակը հասավ 750 մլն. դոլարի[23]։

ՀԱՀ-ի էկոնոմիկայում ամերիկյան մասնավոր կապիտալի գործադրման հիմնական ոլորտներն էին հանդիսանում էկոնոմիկայի հետևյալ ճյուղերը. մշակման (192 մլն. դոլ.), լեռնահանքային (68 մլն. դոլ.), առևտուր (51 մլն. դոլ.), մյուս ճյուղերը, ներառյալ տեքստիլ, թղթի և նավթի (157 մլն. դոլ.)։ 1968 թվականի սկզբում ՀԱՀ-ում գործում էին 275 ամերիկյան ընկերություններ, որոնք այդ երկրում ավելի քան 100 մլն. դոլար տարեկան շահույթ էին ստանում[24]։ Շահույթի այդպիսի մեծ գումարը ինքնին արդեն 70-ական թվականներին ՀԱՀ-ում ամերիկյան մոնոպոլիաների հետագա էքսպանսիայի համար ուժեղ խթան էր հանդիսանում։ Ռազմաստրատեգիական բնագավառում շահագրգռվածության հետ միասին ԱՄՆ-ի քաղաքականությունը ՀԱՀ-ում ներկայանում է որպես ամերիկյան պետական մոնոպոլիստական կապիտալի նպատակամղված գործունեություն Աֆրիկայի հարավում ամերիկյան իմպերիալիզմի ամուր բազա ստեղծելու ուղղությամբ։ Այլ կերպ ասած, 60-ական թվականներին ԱՄՆ-ը ՀԱՀ-ում հող ստեղծեց, որպեսզի հետագայում այդ երկրի էկոնոմիկայում վճռական դիրքեր գրավի, երկրորդ պլան մղելով Անգլիային։ 60-ական թվականների կեսերին ՀԱՀ-ի շուկայում իշխում էին ամերիկյան «Ֆորդ», «Ջեներալ մոտորս» և «Կրայսլեր» ընկերությունները, թողարկելով երկրում արտադրվող բոլոր ավտոմեքենաների 60%-ը[25]։ 1966 թվականի նախօրյակին Պորտ Էլիզաբեթում գտնվող «Ջեներալ մոտորս» գործարանը արտադրեց 750 հազ. ավտոմեքենա[26]։

Աֆրիկյան երկրների հետ ԱՄՆ-ի ապրանքաշրջանառության մեջ ՀԱՀ-ը հաստատապես առաջին տեղն է գրավում։ Բավական է ասել, որ 60-ական թվականների կեսերին ՀԱՀ-ին բաժին էր ընկնում Աֆրիկայում ամերիկյան արտահանման մոտ 35%-ը և այդ մայրցամաքի երկրներից ներմուծման 25%-ը։

1950-ից մինչև 1965 թվականները ընկած ժամանակաշրջանում ՀԱՀ-ի հետ ԱՄՆ-ի առևտրի վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ, ինչպես և ուղղակի կապիտալ ներ-

դրումների բնագավառում, մեծ աճ է նկատվում։ 1965 թվականին ՀԱՀ-ում ամերիկյան արտահանումների ծավալը 3,5 անգամ ավելի էր, քան 1950 թվականին։ Եթե 1950 թվականին ԱՄՆ-ի արտահանումը ՀԱՀ-ում 125,4 մլն. դոլ. էր կազմում, ապա 1965 թվականին այն հասավ պատկառելի գումարի՝ 437 մլն. դոլ.։ Ավելի դանդաղ տեմպերով էր աճում ՀԱՀ-ից ԱՄՆ ներմուծումը (1950 թ.՝ 141,5 մլն., 1965 թ.՝ 225,1 մլն. դոլ.)։ Ի տարբերություն ՀԱՀ-ում ուղղակի ամերիկյան կապիտալ ներդրումների մշտական աճի, ՀԱՀ-ի հետ ԱՄՆ-ի առևտրում կատարվող արտահանումն ու ներմուծումը առանձին տարիների, նախորդների համեմատությամբ, պակասում էր։ Սակայն երկու երկրների միջև առևտրի ընդլայնման ընդհանուր տենդենցը պահպանվում էր, ընդ որում ԱՄՆ-ի համար առևտրի դրական բալանսով։

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱԺԻՆԸ ՀԱՀ-Ի ՀԵՏ ԱՌԵՎՏՐՈՒՄ[33] (%-ՈՎ)

| | 1950 թ. | 1955 թ. | 1960 թ. | 1964 թ. | 1965 թ. |
|---|---|---|---|---|---|
| Անգլիա | 29,7 | 32,9 | 28,3 | 28,5 | 28,2 |
| ԱՄՆ | 15,3 | 21,4 | 15,9 | 19,0 | 18,8 |
| Ճապոնիա | 2,9 | 2,2 | 4,1 | 5,3 | 5,7 |
| ԳՖՀ | 2,4 | 5,9 | 10,0 | 10,8 | 10,9 |
| Կանադա | 4,5 | 4,1 | 3,5 | 3,0 | 2,8 |
| Իտալիա | 2,2 | 1,6 | 2,8 | 3,0 | 4,0 |
| Ֆրանսիա | 1,6 | 1,4 | 2,1 | 2,2 | 2,7 |

60-ական թվականների կեսերին ԱՄՆ-ը ՀԱՀ-ի հետ արտաքին առևտրի բնագավառում Անգլիայից հետո երկրորդ տեղը դուրս եկավ։ Եթե այդ տարիներին ՀԱՀ-ի հետ արտաքին առևտրում Անգլիայի բաժինը 30% էր կազմում, ապա ԱՄՆ-ին արդեն մոտ 20%-ի բաժին էր ընկնում։ Բնորոշ է, ՀԱՀ-ի գլխավոր առևտրական պարտնյորները, Անգլիայի և ԱՄՆ-ի հետ մեկտեղ, դարձան նաև մյուս առաջատար արևմտաեվրոպական պետությունները, նախ և առաջ, ԳՖՀ-ը, որն, օրինակ, 1965 թվականի սկզբում ՀԱՀ-ի արտաքին առևտրում գրավում էր երրորդ տեղը։

Աղյուսակը ակներև կերպով պատկերացում է տալիս



50-ական և 60-ական թվականների ընթացքում ՀԱՀ-ի առևտրական շուկայի համար իմպերիալիստական մյուս ախոյանների հետ ԱՄՆ-ի ծավալած պայքարի մասին։

Անգլիական գործարար շրջանների շահերը պաշտպանող «Սանդի թայմս» թերթը նշում էր, որ Անգլիայի դիրքերը ՀԱՀ-ի հետ առևտրում սիստեմատիկաբար վտանգված են, և որ ՀԱՀ-ի կառավարությունն այլևս առաջին հերթին Անգլիային, որպես առևտրական պարտնյորի, չի դիմում[34]։ ՀԱՀ-ի առևտրական շուկայում Անգլիայի դեռևս առաջատար դիրքերի ճակատագրի համար գործարար շրջանների անհանգստության հիմնական աղբյուրը, ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, ԱՄՆ-ն է։ Դրա հետ մեկտեղ, և ԱՄՆ-ը, որպեսզի կարողանա պահպանել ՀԱՀ-ի առևտրական շուկայում Անգլիայից խլած դիրքերը, ստիպված է ներկայումս մրցակցային պայքար մղել Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի երկրների մոնոպոլիստական շրջանների հետ։

ՀԱՀ-ը միշտ էլ կարևոր բազա է եղել ԱՄՆ-ի ռազմածովային նավատորմի համար։ Աֆրիկյան գործերի գծով պետական քարտուղարի նախկին օգնական Մ. Ուիլյամսը, ելույթ ունենալով ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատի արտասահմանյան գործերի գծով հանձնաժողովում, 1966 թվականի մարտ ամսին հայտարարեց, որ ՀԱՀ-ի գտնվելը Բարեհուսո հրվանդանի շուրջը անցնող ծովային ուղու մոտերքում, անչափ շահավետ է դարձնում նրա նավահանգիստների օգտագործումը ԱՄՆ-ի ռազմածովային նավատորմի համար, հատկապես դեպի Վիետնամ և այնտեղից վերադարձող Ատլանտյան նավատորմի նավերին օգնություն ցույց տալու հարցում[35]։

Այն պայմաններում, երբ արաբական երկրների դեմ Իսրայելի ագրեսիայից հետո երկարատև ժամանակով փակվեց Սուեզի ջրանցքով անցնող ճանապարհը, Բարեհուսո հրվանդանի մոտերքով անցնող ծովային ճանապարհի նշանակությունը ԱՄՆ-ի համար էլ ավելի մեծացավ։ ՀԱՀ-ի տերիտորիայում տեղադրված են ԱՄՆ-ի նաև ռազմական հաղորդակցության բազաները։ Դրանք կարևոր դեր են խաղում տիեզերքի յուրացման ուղղությամբ ամերիկյան ծրագրերի համար, որտեղ,

ինչպես հայտնի է, ռազմական ասպեկտին մեծ տեղ է հատկացվում։

1965 թվականի մարտ ամսին գործնական այցով ՀԱՀ ժամանեց ամերիկյան «Օուէնս-կորնինգ Ֆայբերգլաս» կորպորացիայի պրեզիդենտ Նորսթեդը, որը ժամանակին ՆԱՏՕ-ի զորքերի գլխավոր հրամանատարն էր։ Նորսթեդը բանակցություններ էր վարում ՀԱՀ-ի էկոնոմիկայում իր կողմից ներկայացվող կորպորացիայի նոր կապիտալ ներդրումների ուղղությամբ և ըստ այդմ հայտարարություն արեց, որ ամերիկյան գործարար աշխարհը լիակատար վստահություն է տածում Հարավային Աֆրիկայի նկատմամբ։ Նորսթեդը դատապարտեց ՄԱԿ-ի ձեռնարկած տնտեսական սանկցիաները ՀԱՀ-ի նկատմամբ[36]։ ՆԱՏՕ-ի զորքերի նախկին գլխավոր հրամանատարի այդպիսի «հուզիչ» հոգատարությունը Պրետորիայի կառավարության մասին բավական ցուցադրական էր, քանի որ հարավաֆրիկյան գաղութարարների և ռասիստների բլոկը, ըստ էության, միշտ էլ հենվել է ՆԱՏՕ-ի երկրների աջակցության վրա։

Եվ այսպես, ՀԱՀ-ի հետ ԱՄՆ-ի սերտ կապերն ունեն քաղաքափարական, տնտեսական և ռազմաստրատեգիական բնույթի մի շարք պատճառներ։ Դրանց շարքին ավելի ամերիկյան մոնոպոլիստական կապիտալն է, որի շահերին ընդառաջելով, ԱՄՆ-ը 70-ական թվականներին նույնպես շարունակում է ավելի խոր ներխուժել ՀԱՀ-ի էկոնոմիկայի մեջ։

ՀԱՀ-ի նկատմամբ Քենեդիի կառավարության վարած կուրսում անհրաժեշտ է ընդգծել նաև պրոպագանդիստական կողմը։ Քենեդիի կառավարությունը, առաջին հերթին պրեզիդենտը, ինչպես դժգոհ էր այն ուղուց, որը Ֆերվուրդի ռասիստական կառավարությունն ընտրել էր ՀԱՀ-ի ներքին պրոբլեմները «լուծելու» համար։ Ուստի նա ՄԱԿ-ում պաշտոնապես հանդես եկավ ապարտեիդի դեմ, այդ քաղաքականությունն ընդհանուր առմամբ ոչ շահավետ համարելով կապիտալիստական տերությունների համար։ Բնորոշ է, սակայն, որ, քննադատելով ապարտեիդը, ամերիկյան ներկայացուցիչները ՄԱԿ-ում միաժամանակ ելույթ էին ունենում ՀԱՀ-ում վիճակը փոխելուն ուղղված վճռական որևէ միջոց ձեռք առնելու դեմ։ Բերենք Քենեդիի պրեզիդենտության ժամանակաշրջանում ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դիրքորոշման միայն մեկ օրինակ։ Երբ ամերիկյան ներկայացուցիչ Ֆրենսիս Պլիմպտոնը 1961 թվականի մարտի 30-ին հանդես եկավ ապարտեիդի պրոբլեմի քննարկմանը նվիրված ՄԱԿ-ի հատուկ քաղաքական կոմիտեում, ապա նա ձևականորեն դատապարտեց ճնշման այդ դաժան սիստեմը, բայց երբ հարցը հասավ նրան, որ ՄԱԿ-ը պետք է որոշակի հանձնարարականներ ընդուներ ՀԱՀ-ում աֆրիկացիների վիճակը բարելավելու համար, ապա Պլիմպտոնը սահմանափակվեց երկչոտ առաջարկություններով ՀԱՀ-ի կառավարության հետ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կոնտակտները շարունակելու մասին։ Ինչ վերաբերում է ավելի վճռական գործողությունների դիմելուն, ապա նա ասաց հետևյալը. «Իմ գործընկերներից ոմանք (ՄԱԿ-ում մյուս երկրների ներկայացուցիչները։—Ա. Գ.) առաջարկեցին ապարտեիդի քաղաքականության դաժանությունը հակադրել ՀԱՀ-ի կառավարության դեմ ուղղված վճռական գործողությունների դաժանությանը։ Կասկած է առաջանում՝ արդյոք այդպիսի վճռական միջոցներին դիմելը կոնստրուկտիվ քայլ է լինելու, ինչպես մենք հուսով ենք, այդ դժվարին և վտանգավոր պրոբլեմի խաղաղ լուծման ճանապարհին»[37]։ ՀԱՀ-ի կառավարության դեմ ձեռնարկված վճռական միջոցները, եզրափակեց Պլիմպտոնը, կշրջվեն ապարտեիդի զոհերի դեմ։ Այդ գլխիվայր շրջված տրամաբանության միջոցով ամերիկյան դիվանագիտությունը փորձում էր, ինչպես ասում են, մի ձեռքով երկու ձմերուկ բռնել՝ զարգացնել ՀԱՀ-ի հետ հարաբերությունները և միևնույն ժամանակ ձևացնել, որ ԱՄՆ-ը ՀԱՀ-ում ռասիզմի դեմ պայքարում անկախ Աֆրիկայի կողմն է։

ՀԱՀ-ի հանդեպ ամերիկյան դիրքորոշման իրական բնույթն ակներև արտահայտվեց 1962 թվականին, երբ ԱՄՆ-ը ձևականորեն պաշտպանեց այն բանաձևը, համաձայն որի ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունները պետք է իրենց հայեցողությամբ ՀԱՀ-ի նկատմամբ մի շարք վճռական միջոցներ ձեռնարկեին։ Բանաձևով հանձնարարվում էին խզել ՀԱՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները, փակել ազգային նավահանգիստները այդ երկրի նավերի համար, բոյկոտի ենթարկել ՀԱՀ-ի ապրանքները, արգելել զենքերի մատակա-

թարումը, Հարավաֆրիկյան նավահանգիստներ ՄԱԿ-ի անդամ երկրների նավերի մուտքը արգելելու մասին օրենքներ ընդունել[38]։ ԱՄՆ-ի կառավարությունը, սակայն, իրականում այդ քայլերին չգնաց։ Նրա ձևական գիրքորոշումը էապես տարբերվում էր պրակտիկ գործողություններից։ Ամերիկյան ներկայացուցիչ է. Սթիվենսոնը 1963 թվականի օգոստոսի 2-ին, ելույթ ունենալով ՄԱԿ-ում, ճիշտ է հայտարարեց, որ ԱՄՆ-ը 1964 թվականի հունվարի 1-ից մտադիր է դադարեցնել ՀԱՀ-ի կառավարությանը ամեն տեսակի ռազմական սարքավորումների վաճառքը[39]։ Դրա հետ մեկտեղ իր ելույթում Սթիվենսոնը ՀԱՀ-ի հանդեպ Քենեդիի կառավարության գիրքորոշման համար մի շարք հատկանշական փաստեր բերեց։ Այսպես, օրինակ, նա, բառ էության, ընդունեց, որ Քենեդիի պրեզիդենտության ամբողջ ընթացքում ԱՄՆ-ը, հանդես գալով ընդդեմ ապարտեիդի, ՀԱՀ-ին զենք էր տրամադրում, այդ թվում և «երկիր-երկինք» տիպի հրթիռներ և սուզանավերի համար տորպեդներ[40]։ ԱՄՆ-ը գործնականում հետագա տարիներին նույնպես չէր դադարեցնում ՀԱՀ-ի ռազմական պոտենցիալի ամրապնդումը։

Ազգային-ազատագրական շարժումն աֆրիկյան հարավում, չնայած բոլոր դժվարություններին, շարունակում էր տարածվել։ Աֆրիկյան ժողովուրդները տարբեր ձևերով պայքարում էին ընդդեմ ռասիստական և գաղութատիրական ռեժիմների։ Ուժեղ թափ էր ստացել ազգային-ազատագրական շարժումը հենց ռասիստական պետություններում, պորտուգալական գաղութներում։ Հաճախակի ռասիստներն ու գաղութարարները մեկուսացված վիճակում էին հայտնվում, այդ թվում և ՄԱԿ-ում։ Սոցիալիստական և աֆրիկյան անկախ երկրների համագործակցությունը վերածվեց Աֆրիկայի հարավում ռասիստներին և գաղութարարներին ընդդիմացող ուժի։

Եվ որքան էլ 60-ական թվականներին տնտեսական ու ռազմական առումով պատկառելի թվար գաղութարարների և ռասիստների հարավաֆրիկյան ալյանսը, պարզ էր հետևյալը, որ նրա մասնակիցներն անպայմանորեն պարտություն են կրելու։ Այդպես էլ պատահեց՝ ազգային-ազատագրական շարժումը Աֆրիկայում կես ճանապարհին չկանգնեց, Աֆրիկայի հարավի երկրների հայրենասերները ստրուկների դեր կատարելու հետ չհամակերպվեցին։ Ժողովրդական զանգվածների պայքարը հաղթանակով պսակվեց Անգոլայում և Մոզամբիկում, Գվինեա-Բիսաուում։ Զիմբաբվեի հայրենասերների հարվածների տակ քաղաքական ասպարեզից հեռացան Սմիթի ռեժիմն ու գաղութարարների կողմից փաթաթված Մուզորևայի մարիոնետային կառավարությունը և ներկայումս Զիմբաբվեի Հայրենասիրական ճակատը լայն քաղաքական հարձակում է սկսել երկրում ստեղծելու մեծամասնության իսկական դեմոկրատական կառավարություն։



Քարտերի ադմինիստրացիայի քաղաքականությունն աֆրիկյան մայրցամաքի երկրների նկատմամբ բխում է աֆրիկյան ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ պայքարի այն նույն նպատակներից և խնդիրներից, ինչը և Քենեդիի քաղաքականությունն էր։ Ինչպես 60-ական թվականներին, արդի շրջանում ամերիկյան դիվանագիտությունը Աֆրիկայի ազատագրական շարժումները սիրաշահելու քաղաքականությունը զուգակցում է մայրցամաքի հարավում ռասիստական ռեժիմների, որպես իմպերիալիզմի և նեոգաղութատիրության ամրոցների, պաշտպանության կուրսի հետ։ ԱՄՆ-ի ինտերվենցիոնիստական կուրսը Աֆրիկայում կրկին իր արտահայտությունը գտավ 1978 թվականի մայիս-հունիս ամիսներին, երբ ՆԱՏՕ-ի մի շարք անդամ պետությունների զորքերը միջամտեցին Զաիրի ներքին գործերին, ճնշելով ժողովրդական ապստամբությունը Շաբա (նախկին Կաթանգա) նահանգում։ ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ նրա պրեզիդենտը 1978 թվականի ապրիլի սկզբին Սև Աֆրիկա այցելեց (Նիգերիա և Լիբերիա), որը կապվում էր Քարտերի կառավարության՝ Աֆրիկայում ամերիկյան քաղաքական կուրսն ակտիվացնելու ձգտման հետ։

ԳԼՈՒԽ VII

# ՔԵՆԵԴԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՈՒ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Հյուսիսամերիկյան իմպերիալիզմի հիմնական նպատակը, ինչպիսի ձև էլ ընտրելիս լինի իր քաղաքականության համար Լատինական Ամերիկայում՝ «մեծ գավազանի», «դոլարի դիվանագիտության», թե «բարի դրացիության», միևնույնն է՝ ձգտում է այդ մայրցամաքի երկրների բնական հարստությունների ավելի լայն շահագործման, ի վնաս լատինաամերիկյան պետությունների ազգային շահերի։

50—60-ական թվականներին Լատինական Ամերիկայի երկրների հետ ԱՄՆ-ի փոխհարաբերություններում առաջացան խոր ճեղքվածքներ։

ԱՄՆ-ի կառավարող շրջանների քաղաքականության նկատմամբ լատինաամերիկյան երկրների ժողովուրդների պայքարի վառ դրսևորում էին, օրինակ, 1958 թվականին այդ ռեգիոնի երկրներ փոխպրեզիդենտ Նիքսոնի այցելության հետ կապված իրադարձությունները։ Նույնիսկ ամերիկյան պետական գործիչները, այդ թվում և պրեզիդենտ Էյզենհաուերը, ամերիկյան մամուլը չէին կարող չընդունել, որ Լատինական Ամերիկայի երկրներ Նիքսոնի այցելության ձախողման հիմնական պատճառը կանաչ մայրցամաքի ժողովուրդների խորը դժգոհությունն էր ԱՄՆ-ի մենաշնորհների վարած քաղաքականությունից։ Դրա հետ մեկտեղ դեռ այն ժամանակ ԱՄՆ-ի կառավարության ազ-



դեցիկ ներկայացուցիչները փորձում էին Լատինական Ամերիկայում ստեղծված այդպիսի իրադրությունը բացատրել «կոմունիստների դավերով»։

Պրեզիդենտ Էյզենհաուերը, 1958 թվականի մայիս ամսին, մամուլի կոնֆերանսում ելույթի ժամանակ, ստիպված եղավ խոստովանել, որ Նիքսոնի այցելության ժամանակ Լատինական Ամերիկայում տեղի ունեցած հակաամերիկյան ցույցերի հիմնական աղբյուրը «տնտեսական պատճառներն էին»[1]։ Դրա հետ մեկտեղ նա պնդում էր, որ «Հարավային Ամերիկայում և այլ տեղերում... պլան գոյություն ունի», որի միջոցով «կոմունիստները փորձ են անում յուրաքանչյուր դժգոհություն... վերածել խռովության»[2]։ Հակակոմունիստական պրոպագանդայի մեջ իր ավանդը ներդնելու առիթը բաց չթողեց Հետախուզության ֆեդերալ բյուրոյի ղեկավար Էդգար Հուվերը, որը հայտարարեց, թե Լատինական Ամերիկայի ժողովուրդների դժգոհությունը «որոշակիորեն» կազմակերպում են կոմունիստները» և «այն միջազգային կոմունիզմի պլաններից մեկն է»։ ԱՄՆ-ի պետական քարտուղար Դալլեսը 1958 թվականին դեպի Բրազիլիա իր այցելության ժամանակ ստերեոտիպ ձևով կրկնեց, որ «միջազգային կոմունիզմը ձգտում է տիրել աշխարհին»։

50—60-ական թվականների վերջին Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական վիճակը, ԱՄՆ-ում տեղի ունեցող ճգնաժամային երևույթների հետևանքով, վատթարացավ։ Ինչպես նշում էր ամերիկյան մամուլը «ԱՄՆ-ի արդյունաբերական արտադրության նվազումը նպաստեց պղնձի, արճճի, անագի, սուրճի, նավթի, բամբակի և բրդեղենի գների իջեցմանը, որոնցից է կախված Հարավային Ամերիկայի երկրների մեծամասնության տնտեսական վիճակը»[4]։ Լատինական Ամերիկայի երկրներում ամերիկյան մենաշնորհների քաղաքականության նկատմամբ սաստկացող դժգոհության օրինակ էր Չիլիի պրեզիդենտ Իբանյեսի հրաժարվելը ԱՄՆ այցելությունից։ Ամերիկյան մամուլն ընդունում էր, որ այցից հրաժարվելու պատճառ ծառայեց «ինֆլյացիայով բռնկված Չիլիի զայրույթը չիլիական պղնձի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության նկատմամբ»[5]։

1958 թվականի սկզբում ԱՄՆ-ի պետական քարտուղարի

տեղական Ուորթոմը մի շարք հոդվածներ գրեց, որոնցում քննադատում էր գործերի իսկական վիճակը Լատինական Ամերիկայի երկրների հետ ԱՄՆ-ի հետ փոխհարաբերություններում: Նրանցից մեկում նա ընդգծում էր, որ Լատինական Ամերիկայի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունները «գերազանց» են, որ նրանք դիմացան ժամանակի փորձությանը[6]: Ուորթոմը հավաստիացնում էր նաև, որ Լատինական Ամերիկայի երկրների հանդեպ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության «անկյունաքարերից» մեկը՝ «ինտերվենցիան բացառող քաղաքականությունն էր»[7]: Սակայն Գվատեմալայում, իսկ այնուհետև Կուբայում և Դոմինիկյան Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունները ամենայն ակներևությամբ ցույց տվեցին, որ հենց այդպիսի քաղաքականություն էր պահվում ԱՄՆ-ի զինանոցում:

Այն ժամանակ, երբ 60-ական թվականներին ամերիկյան պետական գործիչների մեծ մասը Լատինական Ամերիկայի և ԱՄՆ-ի միջև փոխհարաբերություններին «վարդագույն ակնոցով» էր նայում, լատինաամերիկյան երկրների տնտեսական վիճակը շարունակում էր արագորեն վատանալ: Տեղի էր ունենում Լատինական Ամերիկայի երկրների ավանդական արտահանման ապրանքների մեծ մասի, հատկապես գունավոր մետաղների և լատինաամերիկյան արտահանման հիմնական ապրանքի՝ սուրճի գների հաստատ անկում: ԱՄՆ-ի և Լատինական Ամերիկայի միջև առեղծված «փոխկախվածության» հետևանքով վերջինս մշտապես վնասվում էր իր ավանդական արտահանման ապրանքների գների անկումից: Լատինաամերիկյան երկրների ոսկու պաշարները գնալով նվազում էին: Մինչդեռ ԱՄՆ-ը, լոկ խոսքերով պրոպագանդելով «ազատ ձեռնարկատիրությունը», անցկացնում էր առևտրական պատնեշների բարձրացման քաղաքականություն, որը դժվարացնում էր ամերիկյան շուկա այն ապրանքների ներմուծումը, որոնք Լատինական Ամերիկայի երկրների արտահանման հիմնական առարկաներն էին: «Նյուսուիկ» ամսագիրը խոստովանում էր, որ Վաշինգտոնի լատինաամերիկյան գործերի «մասնագետները» միաժամանակ առաջադրանք էին ստացել պարզելու, թե ինչպես կարող են Միացյալ Նահանգներն առավել արդյունավետորեն խանգարել



Եվրոպայի և ՍՍՀՄ-ի հետ Լատինական Ամերիկայի երկրների առևտրին[8]:

1958 թվականին ամերիկյան հեղինակավոր «Ֆորչուն» ամսագիրը խոստովանում էր, որ Լատինական Ամերիկայի երկրների հետ ԱՄՆ-ի առևտրական հարաբերությունները կրիտիկական մակարդակի են հասել: Ընդգծվում էր, որ Լատինական Ամերիկան այլևս չի ցանկանում ԱՄՆ-ի կամ որևէ երկրի համար նավթի և պղնձի պահեստի վիճակում մնալ, որ նա ձգտում է իր սեփական արտադրողական ուժերի զարգացմանը և դիմում է քայլերի, որպեսզի իր էկոնոմիկան կախվածության մեջ չգտնվի հումքի գների համաշխարհային տատանումներից[9]:

Լատինական Ամերիկայի երկրներում տիրող էկոնոմիկայի ծանր վիճակի մասին կարելի է դատել բրազիլական «Վիզաոն» ամսագրի հետևյալ արտահայտությունից: Նրանում նշվում էր, որ «Հարավային Ամերիկայի սուրճի, պղնձի և բամբակի շուկաները բացառապես կախված են Միացյալ Նահանգներից, և այդ ապրանքների գների յուրաքանչյուր տատանումը թողարկող երկրներին ծանր պայմանների մեջ է դնում: Ահա վիճակում, երբ փաստորեն գոյություն ունի մոնոպոլիա, գնորդ երկիրը կարող է իր գները թելադրել մատակարարողներին: Դրա հետևանքով հարուստ պետությունն ավելի է հարստանում, մինչդեռ աղքատ պետությունները անշեղորեն աղքատանում են»[10]:

50-ական թվականների վերջին Լատինական Ամերիկայի երկրների հետ հարաբերությունները վերանայելու անհրաժեշտության մասին ԱՄՆ-ի կառավարության առաջ հարցի բարձրացման նախաձեռնողը Բրազիլիայի կառավարությունն էր: Պրեզիդենտ Էյզենհաուերին հասցեագրած նամակում Բրազիլիայի պրեզիդենտ Կուբիչեկը 1958 թվականի հունիսի 6-ին հայտարարեց. «Համաշխարհային հասարակական կարծիքից դժվար է թաքցնել այն փաստը, որ պանամերիկյան միասնության իդեալին լուրջ վնաս է հասցվել: Որևէ բան պետք է ձեռնարկել համերաշխությունը վերականգնելու համար...»[11]: 1958 թվականի հունիսի 9-ին Էյզենհաուերը պատասխան ուղարկեց Կուբիչեկին, որով ընդունեց արագորեն միջոցներ ձեռնարկելու նպատակով շտապափույթ կոն-

սոցիալական անհրաժեշտությունը, որոնց վերջնական արդյունքը պետք է լիներ ամբողջ մայրցամաքում պանամերիկանիզմի գաղափարների հաղթանակը լինելու հավաստումը[12]։ Այդ բոլոր խոստումները մնացին թղթի վրա։

1958 թվականի օգոստոսին դեպի Բրազիլիա իր այցի ժամանակ պետական քարտուղար Դալլեսը միայն հարևանցիորեն անդրադարձավ Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական պրոբլեմներին։ Հիմնականում նա զբաղվում էր հակակոմունիստական պրոպագանդա բորբոքելով։ Նա գովաբանում էր այն դերը, որ լատինաամերիկյան երկրներում խաղում է ամերիկյան կապիտալը։ Լատինական Ամերիկայի տնտեսական սուր պրոբլեմների լուծման ուղիների մասին Դալլեսը մի քանի դատարկ ֆրազներ ասաց, օրինակ, որ «պետության տնտեսական բարեկեցությունը մշտապես կախված է քաղաքական ռեժիմի կայունությունից։ Այն կախված է ֆինանսական, վալյուտային և վարկային խելամիտ քաղաքականությունից»։ Այդ կարգի տնտեսական առաջընթացի հասնելու համար, Դալլեսի կարծիքով, լատինաամերիկացիները պետք է կարգապահ լինեն և շատ աշխատեն[13], այլ կերպ ասած, խոնարհաբար տանեն իմպերիալիստական շահագործման լուծը։

Լատինական Ամերիկայում հանրապետականների այդ ուղղագիծ քաղաքականության ժառանգորդը դարձավ Քենեդիի կառավարությունը։ Իր գործողություններում նա ջանում էր քողարկել Վաշինգտոնի նեոգաղութատիրական մեթոդները և իմպերիալիստական հին նպատակները։ Հիմնական միջոցը, որի օգնությամբ դեմոկրատների կառավարությունը ձգտում էր շտկել ԱՄՆ-ի գործերը Լատինական Ամերիկայում, դարձավ այսպես կոչված «Հանուն առաջընթացի միությունը»։ Դա Լատինական Ամերիկայի սոցիալական և տնտեսական «զարգացման» տասնամյա պլան էր, որին ամերիկյան պրոպագանդան լատինաամերիկյան «Մարշալի պլան» անունը կնքեց։ «Հանուն առաջընթացի միության» գաղափարը առաջ քաշեց Քենեդին 1961 թվականի մարտի 13-ին[14]։ Սպիտակ տանը ընդունելության ժամանակ արտասանած ճառում պրեզիդենտն ասաց. «Մեր չիրականացած խնդիրն է ամբողջ աշխարհին ցուցադրելը, որ դեպի տնտեսական առաջընթաց



և սոցիալական արդարության՝ մարդու չբավարարված տենչանքը կարող է առավելագույն չափով լուծվել ազատ մարդկանցով՝ դեմոկրատական ինստիտուտների շրջանակում»։ Նա առաջարկեց ԱՄՆ-ին «ավելի համարձակ մոտեցում» ցուցաբերել լատինաամերիկյան պրոբլեմների նկատմամբ։ Նման մոտեցման ավելի խոր վերլուծությունը տալիս էր, սակայն, այն մասին, որ դրա նպատակը սոցիալական մեծ փոփոխությունների կանխումը, կապիտալիզմի դիրքերի պահպանումն էր Լատինական Ամերիկայում։ Ամերիկյան դիվանագիտությունն անմիջապես բուռն գործունեություն ծավալեց, ձգտելով հասնել այդ պլանի արագորեն հավանությանը Լատինական Ամերիկայի երկրներում։ «Հանուն առաջընթացի միության» ծրագրի պաշտոնական ձևակերպման արագացմանը ԱՄՆ-ի կառավարությանը ստիպեց, մասնավորապես, Կուբայի դեմ ապրիլյան ավանտյուրայի ձախողումը։

1961 թվականի օգոստոսին ուրուգվայական Պունտա-դել-Էստե փոքրիկ քաղաքում հրավիրվեց ամերիկյան պետությունների կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհրդի հատուկ նստաշրջան։ Նրանում հայտարարվեց «Հանուն առաջընթացի միության» հինգ սկզբունքները և «Պունտա-դել-Էստեի խարտիայի» մասին[15]։ Այդ փաստաթղթերում էլ շարադրվեցին «Հանուն առաջընթացի միության» նպատակները և նրա գործունեության ծրագիրը։ Ինչո՞ւմն էին դրանք կայանում։

Նախ և առաջ նրանում, որ, ըստ էության, Լատինական Ամերիկայի երկրների ժողովուրդներին առաջարկվում էր չշտապել կատարել սոցիալ-տնտեսական վերափոխություններ։ Դեմոկրատների կառավարությունը հույսը կապում էր այն բանի հետ, որ այդ ծրագիրը կօգնի կասեցնելու ազգային-ազատագրական շարժման թափը, նվազեցնելու Կուբայի հեղափոխական օրինակի ազդեցությունը։ Վերջին հաշվով «Հանուն առաջընթացի միության» ծրագիրը նպատակ էր հետապնդում պահպանել և ուժեղացնել ԱՄՆ-ի ազդեցությունը Լատինական Ամերիկայում։ Այդ իմաստով վերջինիս յուրատեսակ «մեղրաբլիթ» էր առաջարկվում։

Համաձայն «Հանուն առաջընթացի միության» ծրագրի, Քենեդիի կառավարությունը խոստանում էր Լատինական

Ամերիկային տասը տարվա ընթացքում տարեկան մոտ 2 մլրդ. դոլար հատկացնել: Դրանցից 1,1 մլրդ. դոլար պետք է տրամադրվեր կառավարական գործին և 900 մլն. դոլար՝ ամերիկյան և արևմտաեվրոպական մասնավոր կապիտալ ներդրումներին, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների փոխառությունների գծով[16]: Ամերիկյան պետությունների կազմակերպությանը կից հիմնվել էր «Էքսպերտների հատուկ կոմիտե», որին լատինաամերիկյան բոլոր երկրների կառավարությունները պետք է ներկայացնեին տնտեսական և սոցիալական զարգացման իրենց երկարաժամկետ պլանները: «Էքսպերտների կոմիտեի», որտեղ ի դեպ իշխում էր ԱՄՆ-ը, ֆունկցիաների մեջ էր մտնում հավանություն տալ կամ մերժել այս կամ այն պլանը, առանձնացնել կամ չառանձնացնել նրա համար համապատասխան հատկացումներ «Հանուն առաջընթացի միության» շրջանակներում[17]: Բացի այդ, Քեննեդին պաշտոնապես հայտնում էր կիսատ ռեֆորմների անցկացման անհրաժեշտության մասին, որոնք կօգնեին վերացնել առավել ցայտուն սոցիալական ժամանակավրիպումները լատինական Ամերիկայի երկրներում[18]: Այդպիսի տակտիկայի միջոցով դեմոկրատների կառավարությունը ձգտում էր ավելի կայուն դարձնել կապիտալիստական հարաբերությունները այդ մայրցամաքի երկրներում: Մասնակի հողային, վարկային և ուրիշ ռեֆորմների միջոցով նա ձգտում էր դրա հետ մեկտեղ թուլացնել ազգային-ազատագրական շարժումը լատինական Ամերիկայում:

Պետք է նկատել, որ այդ ժամանակաշրջանի համար ԱՄՆ-ի կառավարության այդպիսի անսովոր դիրքորոշումը լատինական Ամերիկայում որոշակի սոցիալական ռեֆորմներ անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ զգալի չափով բացատրվում էր լատինաամերիկյան ժողովուրդների սոցիալական և տնտեսական վերափոխությունների վրա Կուբայում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը թուլացնելու ձգտումով: Բայց պրեզիդենտ Քեննեդու անգամ «մեղրաբլիթի» այդ բավական զգուշավոր տակտիկան ամերիկյան կառավարող շրջանների աջակցությունը չստացավ: Շատ հեղինակավոր մարդիկ Վաշինգտոնում գտնում էին, որ լատինական Ամերիկայում նախկինի պես ԱՄՆ-ը պետք է հենվի



կալվածատիրական օլիգարխիայի և կոմպրադորական բուրժուազիայի, ինչպես նաև քաղաքական և ռազմական հին, փորձված մեթոդների վրա: Ինչ վերաբերում է Քեննեդուն, ապա նա, իր արտաքին քաղաքականությունից դեն չնետելով այդ միջոցները, գտնում էր, որ ի լրումն հների անհրաժեշտ են նաև նոր մեթոդներ լատինական Ամերիկայում ԱՄՆ-ի տիրապետությունն ամրապնդելու համար: Ճիշտ այդպիսի միջոց էր դիտվում նաև «Հանուն առաջընթացի միությունը»:

Այդ ծրագիրը լատինական Ամերիկայի և ոչ մի արմատական պրոբլեմ չլուծեց: Նրա էկոնոմիկան նախկինի պես ամերիկյան կապիտալի հսկողության տակ էր մնում, այդ ռեգիոնի երկրները մնում էին հիմնականում ամերիկյան մոնոպոլիաների հումքային կցուկի վիճակում: «Հանուն առաջընթացի միությունը» լատինական Ամերիկայի երկրներին ամերիկյան «օգնության» չափի որոշ ավելացում էր նախատեսում, բայց այդ օգտագործվում էր հյուսիսային հարևանից նրանց ավելի կախյալ վիճակի մեջ դցելու նպատակով:

Ամերիկյան արտաքին քաղաքականությունը լատինական Ամերիկայի երկրներում մասսայականացնելու և հատկապես «Հանուն առաջընթացի միությունը» գովազդելու համար պրեզիդենտ Քեննեդին 1961 թվականի դեկտեմբերին լայնորեն ռեկլամված ուղևորություն է կատարում Վենեսուելա և Կոլումբիա[19]: Այդ ընտրությունը պատահական չէր: Հիշյալ երկրների կառավարությունները առավել պատրաստակամությամբ էին ընդառաջում «Հանուն առաջընթացի միության» ծրագրի պահանջներին: Նրանց էկոնոմիկայում մեծ էին նաև ամերիկյան մասնավոր կապիտալի շահերը: Վենեսուելայում ամերիկյան հատկացումները հասնում էին 3 մլրդ. դոլարի, իսկ Կոլումբիայում՝ 400 մլն. դոլարից ավելի:

Վենեսուելա և Կոլումբիա իր ճամփորդության ժամանակ Քեննեդին ոչ միայն գովաբանում էր «Հանուն առաջընթացի միությունը», այլև անում էր ոչ քիչ հակակոմունիստական և հակակուբայական հայտարարություններ[20]: Բնորոշ է, սակայն, որ հենց այդ նույն օրը, երբ նա փառաբանում էր Վենեսուելայի դեմոկրատիան, պետական քարտուղար Ռասկը Իսպանիայում դիկտատոր Ֆրանկոյի հետ գործնական ճաշկերույթ էր կազմակերպում: «Դեմոկրատիայի պաշտպանու-

թյան» հարցերում Քենեդիի կառավարության «հետևողականության» ինչպիսի՜ հոյակապ դրսևորում:

Լատինական Ամերիկայում 1962 թվականի ընթացքում Քենեդիի կառավարության պրակտիկ գործերը հաստատում էին, որ նրա գործունեության ընթացքում առաջին պլան էին մղվում «կոմունիստական ապառնալիքի» դեմ պայքարի պրոբլեմները, որը ամենատարբեր ձևերով և մեթոդներով ազգային-ազատագրական շարժման հետ ամերիկյան իմպերիալիզմի հաշվեհարդար տեսնելու մտադրությունը քողարկող առերևույթ լոզունգ էր:

Գործունեության այդ կողմին ԱՄՆ-ի կառավարության կողմից հատկացվող մեծ ուշադրության մասին է վկայում, օրինակ, Պունտա-դել-Էստեում 1962 թվականի հունվարի 22-ից մինչև 31-ը տեղի ունեցած ամերիկյան պետությունների արտաքին գործերի մինիստրների հանդիպումը: Այդ խորհրդակցությունում պետական քարտուղար Ռասկի ելույթը ցույց տվեց, որ ԱՄՆ-ը Լատինական Ամերիկայից Կուբայի մեկուսացման կուրս էր վերցրել: «Մենք այսօր հավաքվել ենք այստեղ ազատությունն ու անկախությունը ապահովող միջոցներ ձեռնարկելու համար այն նպատակով, որպեսզի ապագայում մենք կարողանանք մեր ջանքերն ուղղել դեպի սոցիալական առաջընթացն ու տնտեսական աճը»[21]: Եվ այսպես, սկզբում՝ պայքար կոմունիզմի դեմ, իսկ այնուհետև՝ սոցիալական առաջընթաց: Այդպիսին էր առաջնությունների սխեման, որին դիմում էր դեմոկրատների կառավարությունը Լատինական Ամերիկայում:

ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռասկի 1962 թվականի հունվարի 25-ի ճառը արժանի է, որպեսզի նրա մասին փոքր-ինչ մանրամասն խոսենք: Այն բացահայտեց ամերիկյան դիվանագիտության ղեկավարի մտադրությունների մեծ մասը, որոնց ծանոթանալը կարող է օգնել ավելի լավ հասկանալու Քենեդիի կառավարության արտաքին քաղաքական ուղղվածության բնույթը և դրանում իր՝ Ռասկի դերը:

Պետական քարտուղար Ռասկը հանդես եկավ խորհրդակցությունում, ըստ էության, ոչ թե դիվանագետի, այլ, ավելի շուտ, պրոպագանդիստի դերում: Նա բարբառում էր այն մասին, որ «կոմունիզմը չի բավարարում մարդկանց կարիքները», որ «Կուբան ողբերգություն է ապրում»: Այնուհետև նա հավաստիացնում էր, որ Կուբան մտադիր է «տապալել մյուս պետությունների կառավարությունները», ՄԱԿ-ում պաշտպանում է սոցիալիստական երկրների դիրքորոշումը[22]: «Այդ կիսագնդում կոմունիստական ինտերվենցիայի դեմ ամերիկյան հանրապետությունների համախմբվելու ժամանակն է, բայց «Հանուն առաջընթացի միությունը» ինքնին ի վիճակի չէ ապահովել «կոմունիստական ապառնալիքի» դեմ պայքարը... Որպեսզի այն հաջող լինի..., մեզ վահան է պետք»[23]: Այդ «վահանը», պահանջում էր Ռասկը Ամերիկյան պետությունների կազմակերպության անդամներից, պետք է լինի Կուբայի վտարումը այդ ռեգիոնալ միավորումից, նրա բոլոր մարմիններից, այդ երկրի հետ առևտրի դադարեցումը: «Սառը պատերազմը,— ասում էր նա,— մրցություն չէ Սովետական Միության և Միացյալ Նահանգների միջև, որը վերջինը մղում է իր ազգային նպատակներով: Այդ պայքար է ազատության կողմնակիցների և հակառակորդների միջև»: Հետևաբար Ռասկը պահանջում էր, որ ամբողջ Լատինական Ամերիկան ավելի ակտիվորեն օգնի ԱՄՆ-ին «սառը պատերազմ» մղելու ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների դեմ: Միայն այդ դեպքում է, եզրակացրեց պետական քարտուղարը, Արևմտյան կիսագնդին «փայլուն ապագա» սպասում[24]:

Ռասկի գլխավորած ամերիկյան պատգամավորության ջանքերով 1962 թվականի հունվարի 31-ին արտաքին գործերի մինիստրների կոնսուլտատիվ խորհրդակցությունն ընդունեց 10 բանաձև, որոնց հիմնական նպատակն էր կոմունիստական գաղափարների և Լատինական Ամերիկայի երկրներում սոցիալիստական պրակտիկայի դեմ իմպերիալիզմի ուժերի պայքարի ակտիվացումը[25]: Առաջին բանաձևը հենց այդպես էլ կոչվում էր՝ «Կոմունիստական հարձակումը Ամերիկայում»: ԱՄՆ-ի մեծ ճնշման տակ ընդունված վեցերորդ բանաձևը պահանջում էր վտարել Կուբային միջամերիկյան պետությունների սիստեմից (բանաձևի կողմ քվեարկեց 14 պետություն, դեմ Կուբան, լատինաամերիկյան վեց հեղինակավոր խոշոր երկրներ՝ Արգենտինան, Բոլիվիան, Բրազիլիան, Չիլին, Էկվադորը և Մեքսիկան ձեռնպահ մնացին)[26]:

Ամերիկյան պետությունների կազմակերպությունից Կուբայի վտարումը և հավատարիացման այն փորձը, որ լատինաամերիկյան երկրների ռեգիոնալ կազմակերպություններում գրանցվեր «մարքսիզմ-լենինիզմի հետ անհամատեղելի էր», բացահայտեցին ԱՄՆ-ի կառավարության սարսափը Լատինական Ամերիկայում ազգային-ազատագրական պայքարի տարածման նկատմամբ։ Վերադառնալով ԱՄՆ, Ռասկը գոհունակությամբ զեկուցեց, որ Կուբայի նկատմամբ մի շարք խորական բնույթի միջոցներ են ձեռնարկված, և «Արևմտյան կիսագնդում կոմունիզմի դեմ պայքարը շարունակվելու է»[27]։ Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ ժողովրդական Կուբայի նկատմամբ իսկապես ռազմական սպառնալիքների քաղաքականություն է իրականացվում։

Եթե ամբողջությամբ վերցնենք Քենեդիի քաղաքականությունը Լատինական Ամերիկայում, ապա այն երկարժամանակ հիմնվում էր, նախ և առաջ, Կուբայում հեղափոխական նվաճումները վերացնելու և, երկրորդ, լատինաամերիկյան երկրներում «Հանուն առաջընթացի միության» օգնությամբ ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի դիրքերը պահպանելու և ամրապնդելու ձգտման մեջ։

ԱՄՆ-ի կառավարությանը, ինչպես հայտնի է, առաջին նպատակին չհաջողվեց հասնել, չնայած դրա համար նա տարբեր մեթոդներ կիրառեց՝ սկսած ռազմական ներխուժումից և վերջացրած Ազատության կղզու տնտեսական բլոկադայով։ Վերջիվերջո, 1962 թվականի հոկտեմբերին, կարիբյան ճգնաժամի օրերին, Քենեդին ստիպված եղավ, չնայած և վերապահումներով, հավատարացնել Կուբայի վրա հարձակում չգործելու մասին։ Այն ժամանակից ԱՄՆ-ը շեշտը դնում էր Կուբայի տնտեսական բոյկոտի և նրա նկատմամբ քայքայիչ գործունեության ծավալելու վրա։

Ինչ վերաբերում է «Հանուն առաջընթացի միության» ծրագրին, ապա այն նույնպես չարդարացրեց սպասելիքները։ Ամերիկյան գիտնականներ Ֆերգյուսոնը և Մարհենրին, օրինակ, խոստովանեցին, որ ««Հանուն առաջընթացի միության» արդյունքները հիասթափեցնող էին»[28]։ Լատինական Ամերիկայի երկրներում այդ ծրագրի մասին բավական դիպուկ ասում էին. «Միություն կա, առաջընթաց չկա»։



Հանուն առաջընթացի ծրագրի» անկարողությունը սկսեց արտահայտվել արդեն 1962 թվականին, այսինքն՝ նրա գործունեության առաջին իսկ տարում, չնայած Քենեդիի կառավարության այդ ծրագրին հատկացվող մեծ ուշադրությանը։ Պրեզիդենտ Քենեդին ընկերության այդ ծրագիրը «պատմական» էր համարում, առիթը բաց չէր թողնում կրկնելու, որ այն կոչված է անգամ «եզրափակելու հեղափոխությունը» Ամերիկայի երկրներում[29]։

Ծրագրի ազդարարման առաջին տարելիցին պրեզիդենտը 1962 թվականի մարտի 12-ին հատուկ ուղերձ հղեց ԱՄՆ-ի կոնգրեսին։ Նրանում Քենեդին «Հանուն առաջընթացի միության» նպատակը համարեց «ամբողջ կիսագնդի մասշտաբով խաղաղ հեղափոխությունը»[30]։ Պրեզիդենտը ամերիկյան կոնգրեսականներին և սենատորներին նախազգուշացնում էր. «Այդ հեղափոխությունը սկսվել է նախքան Միության ծրագրի մշակումը։ Այն շարունակվելու է նաև նպատակն իրականացնելուց հետո։ Բայց եթե այդ նպատակները չիրականացվեն, հեղափոխությունը շարունակվելու է, բայց նրա մեթոդները ու արդյունքները ողբերգական կլինեն։ Պատմությունը նկարագրել է կառավարությունների անվտանգության այն աստիճանը, որը առանձնացնում է խաղաղ հեղափոխությունը նրա բռնի ձևից։ Հարմար ինտերվալ այլևս գոյություն չունի»[31]։ Այս խոսքերում խոր անհանգստություն էր արտահայտվում Լատինական Ամերիկայում կապիտալիզմի և ամերիկյան շահերին նրա ենթարկման ամբողջ սիստեմի ճակատագրի համար։ Գործնականում ծրագիրը Լատինական Ամերիկայի երկրների ազգային անկախության ամրապնդմանն ուղղված հեղափոխական և ոչ մի վերափոխություն չէր նախատեսում. նրա հիմնական նպատակն էր՝ արգելակել սոցիալական հեղափոխությունների ճանապարհը այդ մայրցամաքում։

Պրեզիդենտ Քենեդին և լատինաամերիկյան գործերով նրա խորհրդականներն իրենք էլ համոզված չէին «Հանուն առաջընթացի միության» ծրագրի հաջողության մեջ։ Համենայն դեպս, արդեն 1962 թվականի մարտ ամսին Քենեդին հայտարարում է. «Ինչպիսի ներդրում էլ Միացյալ Նահանգները անեն, վերջին հաշվով, հաջողության համար պատաս-

խանդավառությունը կրում է իրեն ղարգացող պետությունը։ Միայն նա կարող է մոբիլիզացնել իր ռեսուրսները, նախանշել նպատակները և ապահովել այն պայմանները, որոնք մեր արտաքին օգնությունը կվերածեն մայրցամաքի առաջընթացի գործում արդյունավետ ներդրման»[32]։ «Միայն դուք,— ասաց Քենեդին, դիմելով լատինաամերիկյան երկրների կառավարություններին,— կարող եք էկոնոմիկայի ոլորտում վստահություն ներշնչել, որը նպաստելու է ինչպես ազգային, այնպես և օտարերկրյա կապիտալի ազատ շարժմանը և որը հատկացումների նկատմամբ պատասխանատու մոտեցման դեպքում և հասարակական ֆոնդերի հետ համատեղ կապահովեն մշտական տնտեսական առաջընթացը։ Միայն դուք կարող եք վերացնել քայքայող ինֆլյացիայի, առևտրի խրոնիկ դեֆիցիտի և լայն տարածված գործազրկության չարիքը»[33]։ Բայց այդ չարիքը, որի մասին այդպես մանրամասն էր խոսում ԱՄՆ-ի պրեզիդենտը, ծնվում էր ԱՄՆ-ի և կիսագաղութային Լատինական Ամերիկայի միջև ստեղծված տնտեսական և քաղաքական հարաբերությունների բնույթից։ Այն վերացնելու համար անհրաժեշտ էր արմատապես վերափոխել հարաբերությունները։ Ինչպես հայտնի է, և՛ դեմոկրատ պրեզիդենտներ Քենեդիի ու Ջոնսոնի, և՛ հանրապետական Նիքսոնի, և՛ նորից դեմոկրատ Քարտերի օրոք այդ տեղի չունեցավ։ Ամերիկյան իմպերիալիզմն իր բնույթով այդ անել չէր ցանկանում և չէր կարող։

Բայց մի շարք հարցերում պրեզիդենտ Քենեդին Ամերիկայի կառավարող վերնախավի ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունից ավելի հեռուն էր տեսնում։ Այդ են վկայում նրա հետևյալ խոսքերը. «Շատ երկար ժամանակի ընթացքում իմ երկիրը, ամենաաղքատ մայրցամաքի ամենահարուստ պետությունը, իր քույր հանրապետությունների նկատմամբ պատասխանատու քաղաքականությունը լրիվ չափով չէր անցկացնում։ Այժմ մենք (ԱՄՆ-ը։— Ան. Գ.) մեզ վրա ենք վերցնում այդ պատասխանատվությունը։ Ճիշտ այդպես նրանք, ովքեր ազատ երկրներում տիրապետում են հարստության և ուժի, պետք է պատասխանատվության մի մասը իրենց վրա վերցնեն։ Նրանք պետք է ղեկավարեն արմատական ռեֆորմների համար պայքարը, որոնք էլ միայն



կարող են պահպանել իրենց սեփական հասարակարգի կառուցվածքը։ Նրանք, ովքեր խաղաղ հեղափոխությունը անհնարին են դարձնում, անխուսափելի են դարձնում բռնի հեղափոխությունները»[34]։ Հենց վախը ժողովրդական հեղափոխությունից, որը վերջ կտար Լատինական Ամերիկայում ամերիկյան իմպերիալիզմի տիրապետությանը, պրեզիդենտ Քենեդիին մղում էր սոցիալական հեղափոխությունների «դեմն առնելու» ավելի ճկուն գիծ անցկացնելուն, քան Էյզենհաուերի կառավարությունն էր այդ անում։

Եվ, այնուամենայնիվ, չնայած ԱՄՆ-ի և Լատինական Ամերիկայի երկրների միջև փոքր-ինչ մեղմացված փոխհարաբերությունների նոր հիմք ստեղծելու պրեզիդենտ Քենեդիի կոչերին, կարելի է ասել, որ այդ մտահղացումը նույնպես ձախողվեց։

Դրա պատճառներից մեկն այն է, որ 60-ական թվականների սկզբներին ամերիկյան մոնոպոլիստական կապիտալը և նրան ծառայող քաղաքական շրջանների ազդեցիկ շատ ներկայացուցիչներ պարզապես պատրաստ չէին այն շրջադարձին, որին կոչ էր անում ԱՄՆ-ի պրեզիդենտը։ Լատինական Ամերիկայում սոցիալական հեղափոխության հեռանկարը, իհարկե, վախեցնում էր, բայց չէր կարող փոխել նրանց հայացքները այն ձևերի ու մեթոդների հանդեպ, որոնց միջոցով ԱՄՆ-ը թափանցում և իրեն էր ենթարկում Լատինական Ամերիկան։ Ավելին, ԱՄՆ-ի կառավարության անցկացրած «Հանուն առաջընթացի միության» ծրագրի միջոցառումների վերլուծությունը վկայում է, որ Լատինական Ամերիկայում ավելի ճկուն սոցիալական քաղաքականություն վարելու պրեզիդենտ Քենեդիի կոչերը, ըստ էության, չէին կենսագործվում։ Դրա հետևանքով «արմատական ռեֆորմների» համար առանձնացված միջոցները գնում էին այն բանին, որպեսզի գոնե ժամանակավորապես բուժեն Լատինական Ամերիկայի երկրների ազգային էկոնոմիկային լատինաամերիկյան լատիֆունդիստների և կոմպրադորական բուրժուազիայի հետ համատեղ ամերիկյան մոնոպոլիաների հասցրած ցավոտ վերքերը, այդ երկրների ժողովուրդների սոցիալական ու տնտեսական վիճակի բարելավմամբ։

1961 թվականին, երբ սկսեց կյանքում կենսագործվել

«Հանուն առաջընթացի միության» ծրագիրը, գյուղատնտեսական արտադրության աճը Լատինական Ամերիկայում ընդամենը 2,5% էր կազմում: Շարունակվում էր լատինաամերիկյան արտահանման գլխավոր արտադրանքների գների անկումը: Չափազանց սահմանափակ էր իրեն անհրաժեշտ ապրանքներ գնելու Լատինական Ամերիկայի երկրների կարողությունը: 1962 թվականի հոկտեմբերին արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությանը հավաքված ներկայացուցիչները ստիպված եղան արձանագրել, որ «միության ծրագրի առաջին տարին ուղեկցվում էր բազմաթիվ դժվարություններով...»[35]: Այդ կարգի խորհրդակցություններում շատ էր խոսվում նաև միության «նվաճումների» մասին, բայց, ինչպես ցույց տվեցին հետագա տարիները, այդպիսի գնահատականներն անհիմն էին:

«Հանուն առաջընթացի միության» ծրագրի ճակատագրի համար ԱՄՆ-ի կառավարության մեծ անհանգստությունը իր ելույթներում արտահայտեց պրեզիդենտը արդեն 1962 թվականին: Այսպես, դեկտեմբերի 12-ին կազմակերպված մամուլի կոնֆերանսում Քեննեդին նշեց, որ Լատինական Ամերիկայի պրոբլեմները «ցնցում են»: Պրեզիդենտը ստիպված էր ընդունել, որ լատինաամերիկյան արտահանման ապրանքների գները վերջին երեք-չորս տարում ընկել են: «Կոլումբիայի կողմից արտահանվող հումքի արժեքը,— նշեց Քեննեդին,— ավելի մեծ տոկոսով է ընկել, քան մեր տրամադրած օգնության ամբողջ ծավալն է»: «Ես վախի զգացում եմ ապրում... և կարծում եմ պետք է գիտակցենք, որ գործ ունենք ցնցող պրոբլեմների հետ»[36],— հանրագումարի բերեց պրեզիդենտ Քեննեդին «Հանուն առաջընթացի միության» երկրներում գործերի վիճակի իր գնահատականը: Նա, հավանաբար, հույս ուներ, որ եթե ոչ առաջին, ապա իր պրեզիդենտության գոնե երկրորդ ժամանակաշրջանում ԱՄՆ-ի կառավարությանը կհաջողվի Լատինական Ամերիկան դնել «ամուր հիմքի վրա», որը կվերացներ նրա էկոնոմիկայում և սոցիալական հարաբերություններում անկայուն տենդենցների զարգացման «վտանգը»:

1963 թվականի նոյեմբերին, Քեննեդիի պրեզիդենտության վերջին ամսում, նոր ուժով արտահայտվեց «Հանուն առաջընթացի միության» ծրագրի անարդյունավետությունը: Նոյեմ-



բերի 11-ից մինչև 15-ը Բրազիլիայում տեղի ունեցած «Հանուն առաջընթացի միության» երկրների արտաքին գործերի մինիստրների ամենամյա երկրորդ հանդիպման ժամանակ ամերիկյան պատգամավոր Ավերել Հարիմանը ստիպված էր հայտարարել. «Կարելի՞ է համարել, որ մեր կառավարություններից կամ ժողովուրդներից որևէ մեկը լրիվ բավարարված չէ «Հանուն առաջընթացի միությունում» ընթացող գործերով: Մենք, Միացյալ Նահանգներում, անտարակույս, այդպես չենք կարծում»[37]: Այնուհետև նա քննադատության ենթարկեց լատինաամերիկացիների մեջ տարածված Լատինական Ամերիկայի զարգացման «անիրական ալտերնատիվները»: Հարիմանն ապացուցում էր, որ անհրաժեշտ է բարելավել այդ երկրներ ամերիկյան մասնավոր կապիտալի արտահանման պայմանները: «Օտարերկրյա պետական օգնությունը և ներքին ռեսուրսները,— նախազգուշացրեց նա,— չեն կարող բավարարել կապիտալի հարցում Լատինական Ամերիկայի բոլոր կարիքները»: Ամերիկյան դիվանագետն անգամ վերջում պատկերավոր համեմատություն էր պահել լատինաամերիկյան երկրների ղեկավարների համար: «Մասնավոր միջոցների հանդեպ խոչընդոտող գործողությունները հիշեցնում են այն իրավիճակը, երբ հարևանիդ խնդրում ես օգնել կառուցելու տունդ, բայց դրա հետ նաև նախազգուշացնում, որպեսզի նա այդ մի ձեռքով անի, իսկ մյուսը՝ մեջքին կապված լինի»[38]: Այդ կարգի հարցադրումը, իհարկե, մեղմ ասած, տարօրինակ էր, քանի որ Հարիմանը չանդրադարձավ լատինաամերիկյան էկոնոմիկայի համար ԱՄՆ-ի մասնավոր կապիտալ ներդրումների հետևանքներին: Իսկ դրանք շատ տխուր էին:

«Հանուն առաջընթացի միության» ծրագրի մասին պրեզիդենտ Քեննեդիի վերջին ելույթը տեղի ունեցավ 1963 թվականի նոյեմբերի 18-ին, Դալլասում կատարված սպանությունից չորս օր առաջ: Այդ ելույթում նույնպես ԱՄՆ-ի կառավարության ղեկավարը ստիպված էր խոսել ոչ այնքան «Հանուն առաջընթացի միության» «հաջողությունների», որքան Լատինական Ամերիկայի տնտեսական ծանր վիճակի մասին: Պրեզիդենտը տվյալներ բերեց, որոնք այդ մայրցամաքում ամերիկյան մոնոպոլիաների «անտնտեսվարության» յուրատեսակ

դատավճիռ էին։ Նա ընդունեց, որ տասնյակ միլիոնավոր լատինաամերիկացիներ ապրում են աղքատության մեջ, և մեկ մարդու հաշվով նրանց տարեկան շահույթը 100 դոլարից էլ պակաս է, որ Լատինական Ամերիկայի երկրների կեսում կյանքի միջին տևողությունը 50 տարուց էլ պակաս է, որ երեխաների 50%-ը չի սովորում, քանի որ դրա համար մասնավորապես դպրոցներ չկան, և մեծահասակ բնակչության 50%-ը գրել ու կարդալ չգիտի, որ հիվանդությունները հյուծում են մարդկանց, իսկ բժշկական սպասարկումը լատինաամերիկացիների ճնշող մեծամասնության համար բացակայում է[39]։

Պրեզիդենտ Քեննեդու սպանությունից հետո արդեն չորս օր անց, 1963 թվականի նոյեմբերի 26-ին պրեզիդենտ Ջոնսոնը ելույթ է ունենում լատինաամերիկյան պետությունների ներկայացուցիչների առաջ, որոնք Վաշինգտոն էին ժամանել «Հանուն առաջընթացի միության» ոգեշնչողի թաղմանը։ Ջոնսոնը հաստատեց Միացյալ Նահանգների հանգուցյալ պրեզիդենտի պարտավորությունը շարունակելու և ամրապնդելու Միացյալ Նահանգների դերը «Հանուն առաջընթացի միության» մեջ։ Հիշատակելով իր առջև ծառացած դժվարությունները, Ջոնսոնը վստահություն հայտնեց, որ «Հանուն առաջընթացի միությունը» կենդանի հուշարձան կհանդիսանա պրեզիդենտ Քեննեդիին[40]։ Իրականում այդ ծրագիրը դարձավ Լատինական Ամերիկայում դեմոկրատների կառավարության քաղաքականության ձախողման հուշարձան։

Քեննեդու և այնուհետև Ջոնսոնի կառավարման վերջում ԱՄՆ-ը դուրս էր բերում Լատինական Ամերիկայում մասնավոր կապիտալ ներդրումներից ստացվող գրեթե ամբողջ շահույթը (որոշ տվյալներով շահույթի ընդհանուր գումարի շուրջ 97—98%-ը)։ Լատինական Ամերիկայում ամերիկյան ընկերությունների ձեռնարկություններում 2 մլն. բանվոր և ծառայող էր աշխատում։ Այդ ձեռնարկությունները թողարկում էին Լատինական Ամերիկայի արդյունաբերական արտադրանքի 22%-ը։ Համաձայն «Հանուն առաջընթացի միության», նախատեսվում էր Լատինական Ամերիկայի էկոնոմիկայի տարեկան աճը հասցնել 2,5%-ի։ Ութ տարում (1961—1968 թթ.) այն տարեկան ընդամենը 1,5% կազմեց։



Ագրարային ռեֆորմ ըստ էության չիրականացվեց (բացառությամբ Պերուի)։ Ամերիկյան մասնավոր կապիտալը շարունակում էր շահագործել գրեթե ամբողջ մայրցամաքը։ Չիլիի արտաքին գործերի մինիստր Գաբրիել Վալդեսը 1969 թվականի հունիսին իր ելույթում ասաց. «Մասնավոր կապիտալ ներդրումները այսօրվա Լատինական Ամերիկայի համար նշանակել և նշանակում են, որ մեր մայրցամաքից դուրս եկող գումարները մի քանի անգամ ավելի են նրա էկոնոմիկայի մեջ ներդրվող գումարից։ Մի խոսքով, մենք գտնում ենք, որ Լատինական Ամերիկան ավելի շատ է տալիս, քան վերցնում է»[41]։ Այդ նույն օրերին «Թայմս» ամսագիրը նշում էր՝ վերջին տարիներին մայրցամաքի (Լատինական Ամերիկայի երկրների։— Ան. Գ.) համար առևտրի պայմանները խիստ վատացել են։ Լատինաամերիկյան արտահանման ապրանքների, գլխավորապես հումքի, գները համաշխարհային շուկայում իջան, մինչդեռ միևնույն ժամանակ ներմուծման ապրանքների գները բարձրացան։ Գլխավորապես ԱՄՆ-ում ընդամենը 1 ամերիկյան ցենտով սուրճի գնի անկումը Կոլումբիայի տարեկան բյուջեն նվազեցնում է 8,7 մլն. դոլարով, Կենտրոնական Ամերիկայի երկրներինը՝ 8 մլն. դոլ., Բրազիլիայինը՝ 24 մլն. դոլ.։ Կոլումբիայի պրեզիդենտը, մասնագիտությամբ տնտեսագետ, նկատել է. «Ստեղծված վիճակի համար պատասխանատվություն են կրում խաղի միջազգային կանոնները, որոնց միջոցով աղքատներից խլում են և տալիս հարուստներին»[42]։

1969 թվականի հունիսի 11-ին լատինաամերիկյան երկրների արտաքին գործերի մինիստրները և դեսպանները Սպիտակ տանը Նիքսոնին դեկլարացիա հանձնեցին, որում հարց էր բարձրացվում, որպեսզի ԱՄՆ-ը փոխի տնտեսական «օգնության» տրամադրման պայմանները, առևտրի, կապիտալ ներդրումների, ֆինանսավորման բնագավառում փոխգործակցության նոր ձևեր ստեղծի...»[43]։ Լատինական Ամերիկայի երկրների ներկայացուցիչները հայտնեցին, որ «օտարերկրյա ընկերությունների մասնավոր կապիտալ ներդրումները Լատինական Ամերիկայում, որոնցից ամերիկյան ընկերությունների բաժինը 12 մլրդ. դոլ. է կազմում, ֆինանսական օգնություն չեն հանդիսանում»[44]։ 60-ական թվական-

ների վերջին, ինչպես և Քենեդիի պրեզիդենտության տարի-ներին ամերիկյան մամուլը լի էր տագնապալի խորագրե-րով. «Լատինական Ամերիկայում Միացյալ Նահանգների նկատմամբ թշնամանքը պայթյունի կետի է հասել», «Սպառ-նում է խորը ճգնաժամ»։ Այդ բոլորը վկայում էր Քենեդիի կառավարության «Հանուն առաջընթացի միության» ծրագրի ձախողման մասին։

Դրա հետ մեկտեղ «Հանուն առաջընթացի միության» գոր-ծունեության պատմությունը ասում է այն մասին, որ ԱՄՆ-ի կառավարող շրջանների մի շարք ներկայացուցիչներ, այդ թվում նաև պրեզիդենտ Քենեդին, գտնում էին, որ առաջա-ցած անհրաժեշտության առիթով ամերիկյան իմպերիալիզմը պետք է նոր և ավելի ճկուն միջոցներ մշակի Լատինական Ամերիկայում իր տիրապետության նեոգաղութատիրական ձևերը պահպանելու համար։ Բայց Քենեդիի կառավարության գործերը կտրուկ տարբերվում էին այդ մայրցամաքում «դե-մոկրատիային» աջակցություն ցույց տալու խոստումներից։ 1962 թվականին դեմոկրատների կառավարությունը ճնշում էր Կենտրոնական Ամերիկայի առաջավոր ուժերի ելույթները, հրաժարվում էր բավարարել Պանամայի կառավարության պահանջները Պանամյան ջրանցքի գոտու վերաբերյալ հա-մաձայնությունների անարդարացի պայմանները վերանայե-լու մասին, դիմում էր մեքենայությունների Բրազիլիայի նկատմամբ, որի արտաքին քաղաքականության մեջ ուժեղա-նում էին չեզոքության տենդենցները։

Հայտարարելով լատինաամերիկյան սահմանադրական կառավարություններին աջակցելու մասին, Քենեդիի մտքով էլ չէր անցնում դիմակայել նրանց տապալող «գորիլաներին»։ Այս իմաստով Սպիտակ տան խոսքերի և գործերի միջև տար-բերությունն առանձնապես ակնհայտ էր։ Այդ չէին կարող քողարկել ո՛չ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ներկայացուցիչնե-րի հերթապահ հայտարարություններն այն մասին, որ իրենք «ցավում են» այս կամ այն լատինաամերիկյան կառավարու-թյան ճակատագրի համար, ո՛չ տնտեսական բնույթի ժամա-նակավոր կիսամիջոցները, որոնց ԱՄՆ-ը երբեմն դիմում էր, որպեսզի դժգոհության պատրանք ստեղծի ռեակցիոն զինվո-րականության գործողություններից։ Բոլորն ի սկզբանե գի-



տեին, որ երկու-երեք ամիս էլ չանցած ամեն ինչ դարձյալ նույն վիճակում է մնալու. լատինաամերիկյան նոր «գորիլան» ամերիկյան պրոպագանդայի թեթև ձեռքով կվերածվի «դե-մոկրատիայի համար մարտիկի», որին հանգամանքները ստիպեցին «կոմունիզմին դիմակայելու համար» զենք վերց-նել։

Որպես օրինակ կարելի է վկայակոչել Պերուի իրադար-ձությունները։ 1962 թվականին Պերուում կայացան համընդ-հանուր ընտրություններ, որոնք պետք է հանգեցնեին սահ-մանադրական կառավարության ստեղծմանը։ Քանի որ ԱՄՆ-ի պաշտպանած և ոչ մի կուսակցություն ձայների ճնշող մեծամասնություն չստացավ, որը հնարավորություն ընձեռեր հսկելու երկրում տիրող վիճակին, իսկ առաջավոր ուժերի հեղինակությունը շարունակում էր աճել, Վաշինգտո-նից հետևեցին համապատասխան ցուցումներ։

Բանակը իշխանությունը գլուխ կարգեց գեներալ Ռիկարդո Հոդոյին։ Այդ նպատակով օգտագործվեցին վաղօրոք ստացված ամերիկյան տանկերը և ԱՄՆ-ում պատրաստված անձնակազ-մը։ Այնուհետև սկսվեց ներկայացման երկրորդ գործողու-թյունը։ Պրեզիդենտ Քենեդին խզեց դիվանագիտական հա-րաբերությունները Պերուի հետ և անգամ, ինչպես հայտա-րարվեց, դադարեցրեց ռազմական «օգնություն» ցույց տալ նրան։ Սակայն ուղիղ մեկ ամիս անց դիվանագիտական հա-րաբերությունները վերականգնվեցին։ ԱՄՆ-ի կառավարու-թյունը Հոդոյի ռեժիմին 30 մլն. դոլ. «օգնություն» տրամա-դրեց, իսկ արտահանման-ներմուծման բանկը ևս 36,9 մլն. դոլ. հատկացրեց փոխառությունների ձևով։ Դրանից հետո ամերիկյան մոնոպոլիաներն արդեն իրենց համար խաղաղ պայմաններում կարող էին մշակել Պերուի հետագա առաջ-շարժման պլանները «դեմոկրատիայի ուղիով»։

Այդ կարգի բազում փաստեր կարելի է բերել։ Օրինակ, 1962—1963 թվականներին տեղական ռեակցիոներներին հա-ջողվեց ԱՄՆ-ի կառավարության օգնությամբ ճնշել Էկվադո-րի և Պարագվայի ժողովուրդների զինված ելույթները։ Նշա-նակալի է, որ 1963 թվականի ապրիլի 3-ին հանդես գալով մամուլի կոնֆերանսում, պրեզիդենտ Քենեդին դատողու-թյուններ էր անում այն մասին, որ Լատինական Ամերիկա-

յում «անչափ դժվար է կառավարման դեմոկրատական ձև պահպանել», և որ այդ պատճառով ԱՄՆ-ի կառավարությունը պետք է հաշվի նստի նման վիճակի հետ։ Դեռ ավելին, ամերիկյան կառավարության ղեկավարը հասկացնել տվեց, որ դիկտատորական ռեժիմների հարցում՝ նրանց ճանաչման կամ չճանաչման իմաստով ԱՄՆ-ից հետևողական քաղաքականություն չպետք է սպասել։ Նման իրավիճակը նա բացատրում էր Լատինական Ամերիկայի իրադրության «անհետևողականությամբ»[45]։

ԱՄՆ-ի պրեզիդենտը ստիպված էր այդպիսի դիրք գրավել կապված ռազմական հեղաշրջումների հետ։ 1963 թվականի ապրիլի 17-ին պետական դեպարտամենտը հայտնեց այն մասին, որ ԱՄՆ-ը ճանաչում է Գվատեմալայի նոր ռեժիմը գնդապետ Էնրիկե Պերալտայի գլխավորությամբ։ 1963 թվականի հուլիսի 31-ին պետական դեպարտամենտը հայտնեց մեկ ուրիշ դիկտատորական ռեժիմ՝ այս անգամ արդեն Էկվադորում ճանաչելու մասին։ Իսկ երբ 1963 թվականի հոկտեմբերին ռազմական հեղաշրջումներ տեղի ունեցան Դոմինիկյան Հանրապետությունում և Հոնդուրասում, Քեննեդիի կառավարությունը պետք է կամ նորից ընդուներ «կառավարման դեմոկրատական ձևերի պահպանման սկզբունքի վերաբերյալ իր անսկզբունքային մոտեցումը կամ էլ լատինաամերիկյան հասարակական կարծիքը չփոթեցնող որևէ մանևր ձեռնարկեր։ Այս անգամ նա գերադասեց վերջինը։ 1963 թվականի հոկտեմբերի 4-ին պետական քարտուղար Ռասկը հատուկ հայտարարություն արեց, որում հայտնեց այն մասին, որ ԱՄՆ-ի կառավարությունը Դոմինիկյան Հանրապետության և Հոնդուրասի հետ դիվանագիտական հարաբերությունները նորմալացնելու հնարավորություն չի տեսնում և դադարեցնում է ամեն տեսակի ռազմական և տնտեսական օգնությունն այդ երկրներին, ինչպես նաև ետ է կանչում իր անձնակազմը[46]։ 1963 թվականի հոկտեմբերի 9-ին, «պարզաբանելով» ԱՄՆ-ի կառավարության այդ քայլերը, պրեզիդենտ Քեննեդին ասաց, որ «մենք (ԱՄՆ-ը— Ա. Գ.) հանդես ենք գալիս սահմանադրական սիստեմի գործողության պրոցեսը ռազմական հեղաշրջմամբ խափանելու դեմ և



հենց այդ պատճառով «խզեցինք մեր հարաբերությունները Դոմինիկյան Հանրապետության և Հոնդուրասի հետ»[47]։ Բնորոշ է, սակայն, որ, երբ ամերիկյան մամուլի ներկայացուցիչները հարց տվեցին պրեզիդենտին, թե պլանավորում է արդյոք ԱՄՆ-ը ռազմական ռեժիմների նկատմամբ մի ընդհանուր գիծ, Քեննեդին միայն ընդհանուր ձևով նշեց, որ ԱՄՆ-ը խորհրդակցում է լատինաամերիկյան երկրների հետ այն մասին, թե ինչպես վերականգնել սահմանադրական կառավարումը Դոմինիկյան Հանրապետությունում և Հոնդուրասում։ ԱՄՆ-ի կառավարության ղեկավարի նման «զգուշավորությունը» բավական հասկանալի դարձավ Լինդոն Ջոնսոնի՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ հռչակվելուց հետո։ 1963 թվականի դեկտեմբերի 14-ին պետական դեպարտամենտը հայտնեց Դոմինիկյան Հանրապետության և Հոնդուրասի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու մասին[48]։ Պետք է նշել, որ այդ քայլի նախապատրաստումը սկսվել էր դեռևս Քեննեդիի կառավարության օրոք, երբ զինվորական խունտաներից պահանջում էր միայն իրենց ռեժիմներն ավելի հարմարավետ դարձնել և գոնե խոստանալ որոշակի ժամկետներում համընդհանուր ընտրություններ անցկացնել[49]։

ԱՄՆ-ի կառավարության կողմից դիկտատորական ռեժիմների հովանավորության պայմաններում Բրազիլիայում հաստատվեց զինվորական իշխանություն։ Լատինաամերիկյան աջերը լկտիացան և ուրիշ շատ երկրներում։ Եվ այնուհանդերձ գլխավոր նպատակը՝ ազատության և անկախության համար լատինաամերիկացիների պայքարի ալիքը հանդարտեցնել ԱՄՆ-ին այդպես էլ չհաջողվեց։

Եթե Ջ. Քեննեդին, այս կամ այն չափով ճկուն քաղաքագետ լինելով, չէր վախենում ժամանակ առ ժամանակ մի փոքր թուլացնել «լատինաամերիկյան սանձերը», ապա այս առումով բոլորովին այլ կարծիքի էին նրանից հետո։ Հարավային հարևանների հետ փոխհարաբերությունների ոլորտում Ջոնսոնի կառավարության մոտեցումը հանգում էր հետևյալին՝ Լատինական Ամերիկայում անգամ «դեմոկրատիա» խաղալը վտանգավոր է։ Պատահական չէ ամերիկյան մամուլի անկեղծ խոստովանությունը, որ, Ջոնսոնի կառա-

վարության կարծիքով, այդ երկրներում տեղի ունեցող ռազմական հեղաշրջումները ինքնին վերցրած «վատ գործ չեն»։

Քեննեդիի և Ջոնսոնի պրեզիդենտության շրջանի վերլուծությունը վկայում է այն մասին, որ ԱՄՆ-ը ամեն գնով խոչընդոտում է զարգացող երկրների ազգային էկոնոմիկայի բնական զարգացմանը, ամենուր, որտեղ այդ հնարավոր է, պաշտպանում սոցիալական ռեակցիոն ուժերին ու խմբավորումներին։ ԱՄՆ-ի կառավարության անմիջական մասնակցությամբ տապալվեց Սալվադոր Ալյենդեի օրինական ժողովրդական կառավարությունը Չիլիում։ Այդ ամենը, բնականաբար, Լատինական Ամերիկայի զայրույթը, օտարերկրյա մոնոպոլիաներից կախվածության լուծը թոթափելու ձգտում է առաջացնում։ Կասկածից վեր է, որ որոշ ժամանակ անց այդ պրոցեսներն Արևմտյան կիսագնդում ավելի ցայտուն կդրսևորվեն։

Միաժամանակ ԱՄՆ-ի կառավարությունը 60-ական թվականներին սկսեց ակտիվորեն օգտագործել նեոգաղութատիրական ստրատեգիան և տակտիկան, որը կոչված էր օգնելու ամերիկյան իմպերիալիզմին իր նպատակներին հասնել այնտեղ, որտեղ վրիպում են տիրակալության հին մեթոդները։ Հետևաբար, կարելի է եզրակացություն անել, որ զարգացող երկրներում ինչպես ժողովրդական սոցիալական հեղափոխությունների «դեմն առնելու» համար ԱՄՆ-ը օգտագործում է ինչպես «մտրակը», այնպես և «մեղրաբլիթը», որոնք, ինչպես հայտնի է, գաղութատիրության և նեոգաղութատիրության մեթոդներն են։

1977 թվականի հունվարին իշխանության գլուխ անցած Քարտերի կառավարությունը ակտիվացրեց քաղաքականությունը լատինաամերիկյան ուղղությամբ։ Քարտերը դրալի ուշադրություն էր հատկացնում ամերիկյան գաղութի՝ Պանամայի ջրանցքի գոտու ապագայի վերաբերյալ հարցի մասին Պանամայի հետ պայմանագրերը սենատով անցկացնելուն և վավերացնելուն։ ԱՄՆ-ի լատինաամերիկյան քաղաքականության ուղղությամբ այդ հարցի առաջնայնությունը բացատրվում էր նրանով, որ նրա լուծումից էին շատ բանով կախված Լատինական Ամերիկայի երկրների հետ ԱՄՆ-ի հարաբերությունները։ 1978 թվականի մարտ ամսին պրեզիդենտ Քենեդին այց կատարեց Վենեսուելա և Բրազիլիա։ Դրանով Լատինական Ամերիկայում դեմոկրատների կառավարության քաղաքականության մեջ նոր էջ բացվեց։ Նրանում իրենց արտահայտությունն են գտնում 60-ական թվականներին Քեննեդիի և Ջոնսոնի ադմինիստրացիաների գործունեության կանխադրույթներն ու մեթոդներն այդ մայրցամաքում։

## ԳԼՈՒԽ VIII

# ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՒԺԵՐԻ ԻՆՏԵԳՐԱՑՄԱՆ ԿՈՒՐՍԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

*Ետպատերազմյան բոլոր տարիներին ամերիկյան բուրժուազիան մեծ ուշադրություն էր նվիրում եվրոպական մայր ցամաքի խնդրությանը: Արևելյան Եվրոպայի գործերին միջամտելու ԱՄՆ-ի փորձերն ապարդյուն անցան: Բայց Արևմտյան Եվրոպայում նա կարողացավ այս կամ այն չափով գործուն հսկողություն սահմանել: Այդ նպատակներին ամերիկյան կառավարությունը հաջողվեց հասնել ինչպես անտեսական, այնպես և ռազմաքաղաքական լծակների միջոցով: Բայց, իհարկե, այդ երկար շարունակվել չէր կարող: Արևմտյան Եվրոպայում 60-ական թվականներին սաստկանում էր դժգոհությունը եվրոպական գործերի վրա ամերիկյան ճնշման նկատմամբ: Արևմտաեվրոպական մոնոպոլիստական կապիտալն ամրապնդել էր դիրքերը և սկսել լրջորեն մրցակցել ամերիկյան կապիտալի հետ:*

*Քեննեդիի իշխանության գլուխ անցնելու շրջանում արևմտաեվրոպացիների դժգոհությունը ԱՄՆ-ի վարած քաղաքականության նկատմամբ է՛լ ավելի էր սաստկացել: Արևմտյան Եվրոպայում արդեն շատերին չէր բավարարում ԱՄՆ-ի այդ նմանօրինակ արտաքին քաղաքականությունը: Այսպիսով, դեմոկրատների կառավարությունն սկսեց իր գործունեությունը, երբ նրա եվրոպական քաղաքականությունը խորը ճեղքված էր ավելի, որը գնալով լայնանում էր: Արևմտյան Եվրոպայում իր տիրապետող դիրքը պահպանելու համար ԱՄՆ-ը պետք է իր արտաքին կուրսի իրականացման նոր ձևեր փնտրեր:*



*Քեննեդիի կառավարությունը հատուկ ուշադրություն նվիրեց արևմտաեվրոպական առաջատար երկրների հետ հարաբերությունների ամրապնդմանը:*

*60-ական թվականներին Վաշինգտոնի նկատմամբ առանձնապես հնազանդ դիրք էր բռնել Մեծ Բրիտանիայի պահպանողական կառավարությունը: Նա ձգտում էր ամեն գնով պահպանել ԱՄՆ-ի հետ «առանձնահատուկ հարաբերությունները», որոնք, ինչպես գտնում էին Լոնդոնում, Անգլիային արևմտաեվրոպական ասպարեզում գործունեության որոշ ազատություն էին ընձեռում: 1961—1963 թվականների ընթացքում տեղի ունեցավ ամերիկյան պրեզիդենտի և անգլիական պրեմիեր մինիստրի յոթ հանդիպում (նրանք միմյանց ավելի հաճախ էին հանդիպում, քան ՆԱՏՕ-ի երկրների մյուս ղեկավարների հետ), որտեղ եվրոպական և համաշխարհային քաղաքականության կարևոր պրոբլեմների վերաբերյալ փոխադարձ ջանքերի բավական սերտ կոորդինացման էին հասնում:*

*Ավելին, ԱՄՆ-ի կառավարությանն այդ շրջանում հաջողվում էր անգլիական արտաքին քաղաքականությունը շատ պրոբլեմների հարցում ամերիկյան շահերի հունով մղել, եթե անգամ անգլիական կառավարության կարծիքը ամերիկյանի հետ չէր համընկնում: Այդ է, օրինակ, վկայում, 1961 թվականի ապրիլի 8-ին Վաշինգտոնում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Լաոսում Քեննեդիի կառավարության դավթողական կուրսը պաշտպանելու վերաբերյալ Մակմիլանի համաձայնությունը[1]: Հանդիպման մասին կոմյունիկեում այդ դիրքորոշումը չէր բացահայտվում: Մակմիլանը գիտակցում էր, որ ԱՄՆ-ի պլանները Լաոսում դատապարտում են անգլիական հասարակայնությունը, քաղաքական և գործարար շրջանների ներկայացուցիչները, որոնք կողմ էին ավելի մեծ զգուշավորության, հիշելով Եգիպտոսի դեմ 1956 թվականի ագրեսիայի հետևանքները: Մեկ ուրիշ օրինակ՝ 1962 թվականի դեկտեմբերի 18—21-ը Նասաուում հանդիպման ժամանակ անգլիական կառավարության կապիտուլյացիան*

ԱՄՆ-ի ճնշման տակ, երբ Ամերիկայի պրեզիդենտն ուլտիմատիվ ձևով Մակմիլանին հայտնեց, որ ԱՄՆ-ը դադարեցնում է աշխատանքները «Սքայբոլտ» հրթիռի վրա։ ԱՄՆ-ի այդ որոշումը խոչընդոտում էր իր «անկախ» միջուկային ուժերն ամրապնդելու անգլիական կառավարության ձգտմանը[2]։

Անգլիայի նկատմամբ Վաշինգտոնում լայնորեն տարածված տրամադրությունները բավական անկեղծորեն արտահայտեց Վեստ Պոյնթի ռազմական ակադեմիայում իր արտասանած ճառում ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղար Դին Աչեսոնը։ Նա հայտարարեց. «Մեծ Բրիտանիան կորցրել է կայսրությունը, բայց նոր դեր դեռևս չի գտել։ Սեպարատ պետության դեր խաղալու փորձը, այսինքն՝ մի դեր, որը չի կապված Եվրոպայի հետ, մի դեր, որը հիմնված է ԱՄՆ-ի հետ «առանձնահատուկ փոխհարաբերությունների» վրա, այն բանի վրա, որ ինքը ղեկավարն է ազգերի համագործակցության, որը չունի ոչ մի քաղաքական կառուցվածք կամ միասնություն, կամ ուժ... այդ դերը նա խաղացել է գրեթե մինչև վերջ»։ Սա Անգլիայի բնութագրությունն էր ազից։ Անգլիական կառավարությունից պահանջվում էր՝ ավելի սերտորեն ենթարկվել ԱՄՆ-ին, արագորեն դառնալ «Ընդհանուր շուկայի» անդամ անգամ մի շարք զարգացող երկրներում ազդեցությունը կորցնելու գնով։ Լոնդոնում այն կարծիքին էին, որ Աչեսոնի ելույթը կազմակերպել է Քենեդիի կառավարությունը[3]։

ՆԱՏՕ-ի «բազմակողմանի միջուկային ուժերի» ստեղծման պրոբլեմի գծով ԱՄՆ-ի պահանջների հետ Անգլիայի պահպանողական կառավարության համաձայնվելը Արևմտյան Եվրոպայի մի շարք պետություններում, հատկապես Ֆրանսիայում, դիտվեց որպես արևմտաեվրոպական գործերում Անգլիայի քաղաքականության մեջ ինքնուրույնության բացակայություն, Լոնդոնի ենթարկումը Վաշինգտոնին։ Ֆրանսիական կառավարող շրջանները Նասաուում ռազմաքաղաքական բնագավառում ընդունած որոշումները գնահատեցին որպես ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կողմից Ֆրանսիայի անկախ միջուկային ուժերը վերացնելու փորձ, «եվրոպական շահերից» Անգլիայի հետագա հեռացում։



Աղմուկ հանած իր մամուլի կոնֆերանսում, որը տեղի ունեցավ 1963 թվականի հունվարի 14-ին, Ֆրանսիայի պրեզիդենտ դը Գոլը հայտարարեց, որ ստեղծված իրավիճակում Անգլիան «Ընդհանուր շուկա» չի կարող մտնել։ Բացի այդ, նա մերժեց ՆԱՏՕ-ի միացյալ միջուկային ուժերում Ֆրանսիայի մասնակցելու մասին Քենեդիի կառավարության առաջարկը[4]։

Իհարկե, անգլո-ամերիկյան հարաբերություններում հակասություններն առկա էին նաև 1961—1963 թվականներին։ Առանձնապես դրանք խորը դրսևորվեցին Կոնգոյի հարցում, Կաթանգայի համար իմպերիալիստական տերությունների պայքարի ժամանակ։ Սակայն հիմնական տենդենց էին մնում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դիրքորոշումների համընկնումը, սկսած Վիետնամից և վերջացրած ՆԱՏՕ-ով, միջազգային պրոբլեմները քննարկելիս նրանց փոխըմբռնումը, որն արտահայտվեց նաև 1963 թվականի հունիսի 30-ին պրեզիդենտ Քենեդիի և պրեմիեր մինիստր Մակմիլանի վերջին հանդիպման ժամանակ։

Քենեդիի կառավարությունն Արևմտյան Եվրոպայում կիրառվող արտաքին քաղաքական ստրատեգիայում մեծ տեղ էր տալիս ԳՖՀ-ի հետ հարաբերություններին։ ԳՖՀ-ն աստիճանաբար ԱՄՆ-ի գլխավոր դաշնակիցն էր դառնում Արևմտյան Եվրոպայում, և Վաշինգտոնը մտածում էր նրան որպես ՆԱՏՕ-ի համար ցամաքային զորքերի հիմնական մատակարարող, «ատլանտյան համագործակցության» շրջանակներում «Ընդհանուր շուկայի» ինտեգրացիոն պրոցեսի գլխավոր հենարան և, վերջապես, Եվրոպայում ամերիկյան ռազմական և քաղաքական ներկայության կատաղի կողմնակից։ ԱՄՆ-ի կառավարությունը մեծ հույսեր էր կապում ԳՖՀ-ի հետ՝ իբրև պարտնյորի, զարգացող երկրներում կապիտալիզմի դիրքերն ամրապնդելու համար։ Իր հերթին Ադենաուերի կառավարությունը ենթադրում էր, որ դեմոկրատների կառավարությունն ակտիվորեն նպաստելու է Բոննի ռևանշիստական նկրտումներին, որն այդ շրջանում եվրոպական սահմանների վերանայման էր ձգտում։

Ամերիկյան ու արևմտագերմանական քաղաքականության այդ ասպեկտներն անփոփոխ քննարկվում էին կանցլեր Կոնրադ Ադենաուերի հետ պրեզիդենտ Ջ. Քենեդիի բանակցու-

թյուններում։ Ադենաուերի հետ Քենեդին չորս հանդիպում ունեցավ, որոնց մասին կոմյունիկեներ հրապարակվեցին 1961 թվականի ապրիլի 13-ին և նոյեմբերի 22-ին, ինչպես նաև 1962 թվականի նոյեմբերի 15-ին և 1963 թվականի հունիսի 24-ին[5]։ Ըստ որում, ԳՖՀ-ին միջուկային զենք հատկացնելու մասին հարցը քննարկելիս ԱՄՆ-ը մշտապես զգուշավորություն էր հանդես բերում։ ԱՄՆ-ի կառավարությունը չէր ցանկանում Արևմտյան Գերմանիան ինքնուրույն միջուկային տերություն տեսնել, քանի որ դա Վաշինգտոնից կախվածության նվազեցում էր նշանակելու։ Սակայն, այդ հարցում անկայուն դիրք գրավելով, Քենեդիի կառավարությունը դեմ չէր ՆԱՏՕ-ի շրջանակներում ԳՖՀ-ին միջուկային զենք տալու գաղափարին այն հաշվով, որ այդ դեպքում Վաշինգտոնին կհաջողվի բավարարել Բոննի պահանջը և պահպանել ԱՄՆ-ի հսկողությունն ատոմային զենքի նկատմամբ։ Այդ անհեռատես քաղաքականություն էր, որը կարող էր թանկ նստել Եվրոպային և ամբողջ աշխարհին, եթե Սովետական Միությունը համառ պայքար չմղեր միջազգային ասպարեզում Արևմտյան Գերմանիային հանդարտեցնելու Վաշինգտոնի վտանգավոր պլանների դեմ։

Արդեն 60-ական թվականների սկզբում դեմոկրատների կառավարությունը ՆԱՏՕ-ի «մոդեռնացման» կուրս վերցրեց։ Նա ձգտում էր, որպեսզի ռազմական այդ կազմակերպությունն ընդլայնի իր ֆունկցիաները և միաժամանակ ավելի ճկունորեն և օպերատիվությամբ ծառայի ամերիկյան արտաքին քաղաքական ստրատեգիային։ Դեմոկրատների կառավարության հիշյալ կուրսն իր արտացոլումն է գտել ՆԱՏՕ-ի մի շարք կոմյունիկեներում, այդ կազմակերպության հետ կապված Քենեդիի ուղերձներում և ելույթներում։ Արդեն 1961 թվականի փետրվարի 15-ին ՆԱՏՕ-ի Մշտական խորհրդին հղած իր առաջին ուղերձում պրեզիդենտը ՆԱՏՕ-ի անդամներին հավաստիացրեց, որ ԱՄՆ-ը մտադրություն ունի հետագայում նույնպես պահպանել իր ռազմական ներկայությունը Արևմտյան Եվրոպայում։ Նա, օրինակ, ասում էր, որ «ատլանտյան համագործակցությունը տարբեր գործիքների միջոցով պետք է իր համար ապահովի տարբեր իրադարձությունների արագ և միասնական դիրքերից արձագանքելու հնարավորություն՝ համատեղ կոնսուլտացիաների և մեր համագործակցության բնագավառի ընդարձակման պրոցեսի կատարելագործման ճանապարհով, որը պետք է ընդգրկի առևտրի և ֆինանսների մեջ հետաքրքրող պրոբլեմները, ինչպես նաև ամբողջ ոչ կոմունիստական աշխարհի համար առողջ և աճող էկոնոմիկայի ստեղծման ուղղությամբ մեր ջանքերի համախմբման ուղիով»[6]։

1961 թվականի ապրիլի 10-ին ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեում արված իր մեկ ուրիշ հայտարարության մեջ ամերիկյան պրեզիդենտը նշում է, որ ՆԱՏՕ-ն գտնվում է «իր ռազմական պլանավորման խաչմերուկում» և որ անհրաժեշտ է ընդունել քաղաքականության և ռազմական ուժի միջև աճած փոխադարձ կապը, հատկապես միջուկային զենքի կիրառման հարցում։ Նա կոչ արեց ավելացնել ՆԱՏՕ-ի սովորական ուժերը, խոստանալով, որ ԱՄՆ-ը համաձայն է դաշնակիցների հետ կոնսուլտացիաներ վարելու այն «հատուկ ձևերի մասին, որ հետագա տարիներին ստանալու է միջուկային զսպող զենքը»[7]։ ԱՄՆ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ ընդունված ՆԱՏՕ-ի հետագա փաստաթղթերում դրսևորվեց ՆԱՏՕ-ի ֆունկցիաներն ընդարձակելու Քենեդիի կառավարության ձգտումը, ինչպես նաև «ատոմային պատվարի» տեսության և ավելի ուշ ՆԱՏՕ-ի «սրի» և «վահանի» կոնցեպցիան հաստատելու ամերիկյան պրեզիդենտի մտադրությունը, որտեղ առաջինի դերն էին կատարելու ՆԱՏՕ-ի արևմտաեվրոպական երկրների ցամաքային ուժերը, իսկ երկրորդի՝ ամերիկյան ստրատեգիական ռազմա-օդային ուժերը և բալիստիկ հրթիռները[8]։ Արևմտյան Եվրոպայում ՆԱՏՕ-ի սպառազինման մրցավազքն ավելացնելու ԱՄՆ-ի ռազմաքաղաքական պլանները հույսեր էին ներշնչում արևմտագերմանական ռևանշիստների շրջանում, որ ԳՖՀ-ն այս կամ այն չափով կմասնակցի միջուկային զենքին։ ՆԱՏՕ-ի ծովային միջուկային նավատորմի (ծովային միջուկային ուժերի նախագիծ) ստեղծման ուղղությամբ ԱՄՆ-ի կառավարության հետագա գործողությունները կոչված էին բավարարել Բոննի միջուկային ախորժակը։ Շուտով դրա մեջ ներգրավվեց նաև Մեծ Բրիտանիան՝ ՆԱՏՕ-ի «միացյալ միջուկային ուժերը» ստեղծելու իր պլանով։ Այսպիսով,

սուր պրոբլեմի շուրջը ռազմաքաղաքական վտանգավոր խաղ էր տարվում, որտեղ մասնակիցներից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ նպատակն էր հետապնդում:

Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի քաղաքականության իրագործման նոր ձև էր այսպես կոչված «ատլանտյան համագործակցության» կոնցեպցիան: Նրա երևան գալը կապված էր այն բանի հետ, որ միայն ՆԱՏՕ-ի և տնտեսական միջոցների ճնշման միջոցով ամերիկյան ազդեցության պահպանումը յուրաքանչյուր առանձին վերցրած երկրում դժվարանում էր: Անհրաժեշտ էր նոր մոտեցում, որը խոչընդոտեր Արևմտյան Եվրոպայում ազգային ուժերի արթնանալուն, և որոնց նկատմամբ ԱՄՆ-ը ի վիճակի չէր լինի արդյունավետ հսկողություն սահմանել:

«Ատլանտյան համագործակցություն»՝ ահա այն, ինչը, ամերիկյան ստրատեգների կարծիքով, պետք է կանգնեցներ արևմտաեվրոպական պետությունների «շեղումը» դեպի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունից տարբերվող ինքնուրույն քաղաքականության վարելը: Եվ ամերիկյան պետական գործիչներն իրենց բազմաթիվ ելույթներում սկսում են ավելի ակտիվորեն զարգացնել այն միտքը, որ ԱՄՆ-ը Արևմտյան Եվրոպայի պետությունների հետ ռազմական պարտնյորությունը կցանկանար «նոր կապեր» ավելացնել: «Ատլանտյան սկզբունքների» վրա հիմնված այդ կապերը, նշում էին նրանք, Ատլանտյան օվկիանոսի երկու կողմերում գտնվող երկրների դաշինքը վերածելու են «հավասար պարտնյորների» դաշինքի, որտեղ որոշումներն ու պատասխանատվությունը հիմնվելու են ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի «լրիվ հավասարության» վրա:

Վաշինգտոնը պատրաստ էր ընդունել «Փոխկախվածության դեկլարացիան», որը կոչված էր «ձևակերպելու ատլանտյան պարտնյորությունը Եվրոպայում ամրապնդվող նոր միության և 175 տարի առաջ հիմնված ամերիկյան միության միջև»: ԱՄՆ-ի կառավարությունը կապիտալիստական բոլոր երկրներին կոչ արեց համախմբել ջանքերը, առանց որի, հայտարարեց Քենեդին, «մենք չենք կարող աշխարհում արդարություն հաստատել»[9]: Այն մասին, որ «ատլանտյան համագործակցության» պլանները ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրո-



պայի կապիտալիստական աշխարհի ուժերի որակապես նոր միավորում էր նախատեսում, խոսում է թեկուզ այն, որ երբ ԱՄՆ-ը առաջարկեց դրանք, Արևմտյան Եվրոպայում արդեն գործում էին և «Ընդհանուր շուկան», և ՆԱՏՕ-ն: Բայց ԱՄՆ-ի կառավարությունն այդ ամենով չէր բավարարվում: Նա ձգտում էր թուլացնել արևմտաեվրոպական քաղաքականության մեջ դրսևորվող անկախ տենդենցները:

Կանադայի պառլամենտում 1961 թվականի մայիսի 17-ին Քենեդիի ելույթն առաջիններից էր, որում զարգացվում էին «ատլանտյան համագործակցության» ստեղծման անհրաժեշտության մասին դրույթները: Մեծ ուշադրություն հատկացնելով ՆԱՏՕ-ի ամրապնդման թեմային, ամերիկյան պրեզիդենտն այդ ռազմաքաղաքական կազմակերպության առջև «Հարավային կիսագնդում գտնվող զարգացող երկրների կողմը թեքվելու» խնդիր դրեց: Քենեդին ոչ միայն սոցիալիզմի երկրների դեմ պայքարում Արևմտյան Եվրոպայի երկրների տնտեսական ինտեգրացման կողմ արտահայտվեց, այլև ՆԱՏՕ-ի երկրներին կոչ արեց ավելի գլոբալ քաղաքականություն անցկացնել, քան այդ 50-ական թվականներին էր արվում: Նա ասաց, որ ՆԱՏՕ-ի երկրների «տնտեսական պոտենցիալ ռեսուրսները» ոչ միայն «ազատությունը պաշտպանելու», այլև, ըստ էության, կապիտալիստական կարգերը տարածելու հնարավորություն են ընձեռում: Դա ամերիկյան և արևմտաեվրոպական կապիտալիզմի «հավասարազոր պարտնյորության» և «լիիրավ հավասարության» լոզունգով քողարկվող էքսպանսիոնիստական ծրագիր էր[10]:

Ամերիկյան կառավարությունը գտնում էր, որ այդ կոնցեպցիայում ԱՄՆ-ի արևմտաեվրոպական պարտնյորների անհանգստությունն առաջացնող ոչինչ չկար: Սակայն, ինչպես հայտնի է, «ատլանտյան համագործակցության» գաղափարը 60-ական թվականներին ժամանակի փորձությունը չդիմացավ: Չդիմացավ այն պատճառով, որ արևմտաեվրոպական շատ ղեկավարներ հասկացան նրա էությունը և սկըսեցին անտարբերություն հանդես բերել: Առանձնապես պարզորոշ էր գիտակցում «ատլանտյան համագործակցության» գաղափարների վտանգն իր երկրի անկախության համար

Ֆրանսիայի կառավարությունը պրեզիդենտ դը Գոլի գլխավորությամբ։

Իրոք, ԱՄՆ-ի կառավարության գործողություններում դըժվար չէր նկատել արևմտյան պետությունների սուվերենության նկատմամբ ակնհայտ ոտնձգությունը։ Բնորոշ է, որ դաշնակից երկրին հղած իր ուղերձում պրեզիդենտ Քենեդին անկեղծորեն նկատել էր. «Եվրոպայում մեր միությունները լրիվ չափով չեն կատարում իրենց ֆունկցիաները և խուճապային վիճակում են։ ՆԱՏՕ-ի միասնությունը թուլանում է առևտրական մրցակցությունից և մասամբ էլ էրոզիայի է ենթարկվել ազգային շահերի հետևանքով։ Նա գնում իր ռեսուրսները լրիվ չի մոբիլիզացրել և պրոբլեմներին մոտեցման հարցում միասնության չի հասել։ Միևնույն ժամանակ ատլանտյան և ոչ մի տերություն չի կարող ինքնուրույն լուծել պաշտպանության, օտարերկրյա օգնության, ֆինանսական քաղաքականության բնագավառում մեր առջև ծառացած փոխադարձ պրոբլեմները։ Քենեդին կոչ է անում ամրապնդել «սերտ կապերը» ՆԱՏՕ-ի երկրների միջև[11]։

ԱՄՆ-ի մամուլում առկա պատվերով ծնունդ առնող բազմաթիվ հոդվածներում, ամերիկյան պետական գործիչների ելույթներում կարմիր թելով այն միտքն էր զարգացվում, որ Արևմտյան Եվրոպան «դերաճել էր» մի շարք սուվերեն պետություններից կազմված լինելու վիճակից։ Պետական սուվերենությունը գրեթե անաքրոնիզմ էր հայտարարվում։ Նրանք պնդում էին, որ և՛ առաջին, և՛ երկրորդ համաշխարհային պատերազմները ընդամենը «ազգային մրցակցության» հետևանք են։

Արևմտյան Եվրոպան «ատլանտացնելու» ԱՄՆ-ի կառավարության ձգտման շարժառիթը, ինչպես, բացատրվում էր ոչ միայն այդ երկրների արտաքին քաղաքականության մեջ ի հայտ եկած անկախ տենդենցները լիկվիդացնելով, այլև Եվրոպայից դուրս, Ասիայում և Աֆրիկայում, արևմտաեվրոպական տնտեսական, ֆինանսական և ռազմական ռեսուրսները ամերիկյան արտաքին քաղաքական ստրատեգիայի նպատակներին ծառայեցնելու փորձերով։ Այս կապակցությամբ ահա թե ինչ է գրում ամերիկյան հայտնի քաղաքական գործիչ Ջորջ Բոլը իր «Ուժի կարգապահությունը» մենա-



գրությունում. «Այն ժամանակ, երբ Ամերիկան ընդլայնում էր իր միջազգային պարտավորությունները, եվրոպական էկոնոմիկան ավելի հզորանում, ԱՄՆ-ը միացյալ Եվրոպայի կարիքը զգաց, որը պետք է ընդհանուր ծախսերի արդարացի բաժինն իր վրա վերցներ և գործեր իբրև մեկ «իրավահավասար պարտնյորը»[12]։ Բոլի այդ բավականաչափ անկեղծ խոսքերում դրսևորվել ամերիկյան արտաքին քաղաքական ստրատեգիայի նպատակներից մեկը։ Արևմտյան Եվրոպայի, հատկապես ՆԱՏՕ-ի մեջ ընդգրկված երկրները պետք է ամերիկյան կառավարության հետ սերտ համագործակցված արագորեն օգտագործեին տնտեսական և ռազմական լծակները՝ զարգացող երկրները «սանձած վիճակում» պահելու համար։

Արևմտյան Եվրոպայի երկրների հանդեպ նոր մոտեցումը պաշտոնապես հայտարարվեց ԱՄՆ-ի անկախության օրը, 1962 թվականի հուլիսի 4-ին։ Այդ օրը Քենեդին իր ելույթում կոչ արեց ստեղծել «միացյալ Եվրոպայի» և Միացյալ Նահանգների «ատլանտյան համագործակցություն»։ Արևմտաեվրոպական երկրներին «իրավահավասար պարտնյորի» ստատուս էր առաջարկվում։ Նա ասում էր. «Մենք հավատում ենք, որ միացյալ Եվրոպան մեծ դեր կարող է խաղալ համատեղ պաշտպանության հարցում, ավելի շռայլորեն արձագանքել չքավոր ազգությունների կարիքներին... Այդպիսով Եվրոպայում մենք տեսնում ենք մի պարտնյորի, որի հետ հնարավոր է իրավահավասարության լրիվ հիմունքներով մեծ և դժվար գործեր վարել ազատ ազգությունների համագործակցության ստեղծման և պաշտպանության բնագավառում»։ Այդ նույն միտքը պրեզիդենտ Քենեդին համառորեն կրկնում էր Արևմտյան Եվրոպայի երկրներով 1963 թվականի ամռանը ուղևորության ժամանակ։ «Եվրոպայի միավորումը... շարունակելու է Միացյալ Նահանգների հաստատուն աջակցությունը ստանալ»։ ԱՄՆ-ի պրեզիդենտը, ճիշտ է, հարկադրված եղավ հետևյալ կերպ ուղղել իր այդ միտքը. «Ամերիկացիների գործը չէ ցույց տալ եվրոպացիներին, թե ինչ ձևով առաջ մղել այդ ջանքերը»[13]։

Քենեդիի կառավարության արտաքին տնտեսական ստրատեգիան այս կամ այն չափով հստակորեն սահմանվեց 1961 թվականի վերջին, երբ պրեզիդենտ Քենեդին հանդես եկավ

ԱՄՆ-ի Արդյունաբերողների ազգային ասոցիացիայում[14]: Իր ելույթում նա դիմեց արևմտաեվրոպական, հատկապես «Ընդհանուր շուկայի» երկրների կապիտալիստներին՝ իրենց ուժերը «միավորել և կոորդինացնել» ամերիկյան կապիտալիզմի հետ: Իր կողմից դեմոկրատների կառավարությունն իրեն Եվրոպայի կապիտալիստական երկրների հետ ֆինանսական և առևտրական հարաբերություններում «լայն լիբերալացման» կողմնակից հռչակեց: Ենթադրվում էր, որ «ատլանտյան համագործակցության» ստեղծումը կմեղմացնի դոլարային ճգնաժամը, կդադարեցնի ամերիկյան ոսկու պաշարի նվազումը, որի զգալի մասը գնում էր օտարերկրյա պետություններին «օգնելու» ծրագրին ու արտասահմանում ռազմական պարտավորությունները կատարելուն: Դեմոկրատների կառավարությունն այն եզրակացության է հանգում, որ ԱՄՆ-ը չափից ավելի շռայլորեն է փակում «կոմունիստական սպառնալիքի» դեմ պայքարի ծախսերի արտասահմանյան հաշիվները: Ինչո՞ւ այս գործում չներգրավել ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակիցներին: Սոցիալիզմի և ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարում ԱՄՆ-ի հետ ծախսերը հավասար կրող «իրավահավասար պարտնյորի» գաղափարը լրիվ չափով համապատասխանում էր այդ նպատակներին:

Առաջ քաշելով ԱՄՆ-ի վալյուտա-ֆինանսական վիճակի ամրապնդման խնդիրը, պրեզիդենտ Քեննեդին նշեց, որ ամերիկյան կապիտալիզմը, չնայած վերջին 3 տարում 5 մլրդ. դոլարով իր ոսկու պաշարի կրճատմանը, տիրում է կապիտալիստական աշխարհի ոսկու պաշարի 43%-ին և կապիտալ ներդրումների 45 մլրդ. դոլարին: Այդ հնարավորություն է տալիս «մեղմացնել» վալյուտա-ֆինանսական դժվարությունների բացասական հետևանքները: Սակայն, նախագուշացրեց պրեզիդենտը, նման համեմատաբար կայուն վիճակը կարող է պահպանվել միայն այն դեպքում, երբ ԱՄՆ-ի վճարման հաշվեկշռում գոյացած դեֆիցիտը ոչ թե մշտական, այլ ժամանակավոր բնույթ կրի[15]:

ԱՄՆ-ի պրեզիդենտը նաև հայտնեց Արևմտյան Եվրոպայի երկրների հետ առևտրի վերաբերյալ բանակցությունների համար օրենսդրական նոր հիմք ստեղծելու մտադրության մա-



սին, որն ավելի ճկունորեն էր հաշվի առնելու ԱՄՆ-ի շահերը, քան 1934 թվականից փոխադարձ հիմունքներով առևտրական համաձայնությունների մասին գործող օրենքը[16]: Նոր օրենսդրությունը կոչված էր նպաստելու ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի միջև տարիֆային արգելքների նվազմանը, որն, ինչպես ուղղակիորեն խոստովանվում էր, պետք է հանգեցներ առաջին հերթին ամերիկյան արտահանման և նվազ չափով՝ ներմուծման աճին:

Իրոք, 1962 թվականին ԱՄՆ-ի կառավարությունը մշակեց և կոնգրեսին ներկայացրեց առևտրաքաղաքական նոր ծրագիր, որը նախատեսում էր պրոտեկցիոնիզմի հնացած որոշ ձևերից հրաժարում, սակայն միաժամանակ սահմանում մի շարք նոր տեսակներ: Ծրագիրն ուղղված էր Արևմտյան Եվրոպայում ամերիկյան արտահանման ակտիվացմանը[17]: Պրեզիդենտը կապիտալիստական երկրների հետագա միավորման, բաց էության, ոչ միայն ռազմական, այլև առևտրական և ֆինանսական ոլորտում ինտեգրացման կոչ էր անում: «ԱՄՆ-ի հետ որպես առևտրական պարտնյոր միավորված, ինտեգրացված Արևմտյան Եվրոպան ուժերի համաշխարհային հաշվեկշիռը էլ ավելի է շեղելու ազատության կողմը»[18],— նշում էր Քեննեդին: Այդ արդեն նրա կառավարության գործունեության ծրագրային հիմնադրույթն էր: Առևտրական նոր քաղաքականությունը 1962 թվականի հոկտեմբերի 11-ին արժանացավ ԱՄՆ-ի կոնգրեսի հավանությանը և վավերացվեց առևտրի ընդլայնման մասին օրենքով[19]:

«Ուժի կարգապահություն» մենագրությունում Ջորջ Բոլը բավական մանրամասն է նկարագրում զարգացող երկրներում վիճակը «կայունացնելու» համար արևմտաեվրոպական երկրների ռեսուրսները մոբիլիզացնելու ուղղությամբ Քեննեդու կառավարության գործադրած ջանքերի արձագանքը այդ երկրներում: Բոլը խոստովանում է, որ Ասիայի և Աֆրիկայի երկրներին «օգնություննե» ավելացնելու ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակիցներին ուղղված Վաշինգտոնի համառ պահանջներն Արևմտյան Եվրոպայում վրդովմունք էին առաջացնում: Բոլը այդ հանգամանքը բացատրում է նրանով, որ «եվրոպացիները հազիվ թե ընդունակ լինեին իրենց շահերն այնպիսի

գլոբալ մաշտաբով պատկերացնել, ինչպես մենք ենք այդ տեսնում, չափերի և ռեսուրսների անհավասարության հետևանքով։ Ուստի, մայլորեն եզրակացնում է նա, եվրոպայի սահմաններից դուրս քաղաքականության հարցերում «եվրոպացիներն իրենց ավելի շատ հանդիսական են զգում, քան խաղացող»[20]։ Որպեսզի այդ տեղի չունենա, ըստ Բոլի, պետք է ստեղծվի «քաղաքական իմաստով Եվրոպա», այսինքն՝ որպես մի ամբողջություն կազմող Արևմտյան Եվրոպա[21]։

60-ական թվականների վերջերին հանրագումարի բերելով «ատլանտյան համագործակցություն» ստեղծելու Քենեդիի, այնուհետև և Ջոնսոնի կառավարությունների ներդրած ջանքերը, Բոլը ստիպված էր խոստովանել, որ «բացառությամբ քաղաքագետների նեղ շրջանի, ատլանտիզմի գաղափարը մարդկանց սրտերին չի ստիպում արագորեն բաբախել։ Օվկիանոսի երկու կողմում գտնվող քաղաքագետները վերամբարձորեն են խոսում «ատլանտյան համագործակցության» մասին, բայց այդ տերմինը վերացական է և հեռավոր իրականությունից»։ Նա այն եզրակացությանն է հանգում, որ արևմտաեվրոպացիների մոտ առկա է այն վախը, որ «եթե նրանք չափից ավելի մոտենան մեզ, ապա մենք կհաշտենք նրանց... և անգամ փորձանքի մեջ կգցենք»[22]։

1963 թվականի սկզբին, երբ պարզ դարձավ, որ այսպես կոչված «ատլանտյան մեծ պլանը» պատրանք դուրս եկավ, լույս աշխարհ է գալիս սենատորների և Բոննի կողմից վերամշակված, այն ժամանակ «բազմակողմանի միջուկային ուժեր» անվամբ հայտնի պլանը։ Այդ պլանը միջուկային բնագավառում արևմտաեվրոպական ուժերի լայն միավորման օրինակ էր ծառայելու։ Պետդեպարտամենտում գտնում էին, որ այդ դեպքում ավելի հեշտ կլինի արևմտաեվրոպացիների հետ պայմանավորվել էկոնոմիկայի և քաղաքականության հարցերում։ ՆԱՏՕ-ի եվրոպական անդամներին առաջարկվում էր ԱՄՆ-ի հետ միասին մասնակցել միջուկային զենքով հագեցված ռազմածովային նավատորմի ստեղծմանը։ Պլանը կազմողների մտահղացմամբ, նավերի (ատոմային կամ սովորական) անձնակազմերը բաղկացած էին լինելու եվրոպացիներից։ Նավատորմը ենթարկվելու էր ՆԱՏՕ-ի ամերիկյան գլխա-



վոր հրամանատարին։ Արևմտյան Եվրոպայի երկրները ֆինանսավորելու էին նավերի կառուցումը, օգտագործումն ու սպասարկումը։ Կարելի է ասել, որ Քենեդիի կառավարությանը այս դեպքում նույնպես չհաջողվեց համոզել իր դաշնակիցներին։ ՆԱՏՕ-ի «բազմակողմանի միջուկային նավատորմը» խորտակվեց նախքան ջուր մտնելը։ Նրա վտանգավոր բնույթը մերկացրին սոցիալիստական երկրները։ Իսկ Ֆրանսիան այդ պլանը բազմազգ ֆարս անվանեց։ Նորվեգիան և Դանիան հայտնեցին, որ նրանում մասնակցություն չեն ունենա։

Եվ այսպես, 1962—1963 թվականներին ԱՄՆ-ի կառավարության արտաքին քաղաքական քայլերում, պրեզիդենտ Քենեդիի և նրա մերձավոր խորհրդականների պաշտոնական հայտարարություններում ավելի պարզորոշ էր դրսևորվում քաղաքական, տնտեսական և ռազմական բնագավառում կապիտալիստական պետությունների ջանքերի հետագա ինտեգրացման գիծը։ Այդ ամենը տեղի էր ունենում այն շրջանում, երբ իմպերիալիզմը կորցրել էր պատմական նախաձեռնությունը։ Այդ հանգամանքը նշեց 1969 թվականի հունիսին Մոսկվայում կայացած կոմունիստական և բանվորական կուսակցությունների խորհրդակցությունում Լ. Ի. Բրեժնևը. «Իմպերիալիզմի քաղաքականությունն ավելի մեծ չափով է որոշվում համաշխարհային սոցիալիզմի, ազգային-ազատագրական հեղափոխությունների և բանվորական շարժման հետ ընդհանուր պայքարի դասակարգային նպատակներով»[23]։ Անտարակույս, այդ տենդենցը չէր վերացնում միջիմպերիալիստական հակասություններում գոյություն ունեցող սուր պրոբլեմները, ավելին, հաճախ ավելի էր սրում, ինչպես, օրինակ, կապիտալիստական տնտեսությունների տնտեսական ինտեգրացման պրոցեսի ընթացքում։

Կապիտալիստական ինտեգրացման գաղափարների ԱՄՆ-ի կառավարության պրոպագանդայում առանձնակի տեղ էր զբաղեցնում 1963 թվականի հունիսին Քենեդիի ուղևորությունը Արևմտյան Եվրոպայի երկրներ։ ԱՄՆ-ի պրեզիդենտը այցելեց ԳՖՀ, Իռլանդիա, Անգլիա և Իտալիա։ Դա Քենեդիի համար դժվար ուղևորություն էր։ Նա մտահոգված էր ամերիկյան ոսկու պաշարի վիճակով, դոլարի տատանումներով,

«ատլանտյան համագործակցության» մտահղացումների նկատմամբ եվրոպացիների սառը վերաբերմունքով։

ԳՖՀ այցի ժամանակ Քեննեդին ստիպված էր Ադենաուէրին հաղորդել, որ «ինտեգրացված միջուկային ուժերի» ստեղծման պլանի իրականացումը պետք է հետաձգել[24]։ Բացի Բոննից, Արևմտյան Եվրոպայում ոչ ոք այդ պլանով չհետաքրքրվեց։ Փոխկանցլեր Էրհարդին Քեննեդին կրքոտությամբ ապացուցում էր, որ «Միացյալ Նահանգները եվրոպական հարուստ պետությունների օգնության կարիքն են զգում, որոնք պետք է ազատ աշխարհի պաշտպանության համար իրենց վրա անհամեմատ ավելի մեծ ծախսեր վերցնեն։ Եթե դոլարի հետ որևէ բան պատահի, բոլորի գործերը կվատանան»։ Ի պատասխան Էրհարդը նկատեց, որ եթե դոլարի հետ դժբախտություն պատահի, ապա հավասարապես կլինի «արեգակնային համակարգության խախտման»[25]։

Գտնվելով Արևմտյան Գերմանիայում, Քեննեդին առանձնապես մեծ դժգոհություն հայտնեց Ֆրանսիայի վարած արտաքին քաղաքականությունից։ Իր խոսքերը հասցեագրելով դը Գոլին, Քեննեդին ասաց. «Նրանք, ովքեր կասկածի տակ են վերցնում մեր պարտավորությունները, նրանք, ովքեր ձգտում են առանձնացնել Եվրոպան Ամերիկայից կամ մի դաշնակցին հեռացնել մյուսից, միայն օգնում և հանգստություն են բերում այն մարդկանց, ովքեր մեր իսկական հակառակորդներն են դարձել և ողջունում են Արևմուտքում տեղի ունեցող ցանկացած պառակտումը»[26]։ Դրգռվածությունը պետության ղեկավարի վատ խորհրդականն է, սակայն այդ ուղևորության ընթացքում այն մշտապես հետապնդում էր Քեննեդիին։

Հանդես գալով արևմտագերմանական պառլամենտում, ԱՄՆ-ի կառավարության ղեկավարն ասաց. «Մենք ապրում ենք ինչպես փոխկախվածության, այնպես և անկախության, ինչպես ինտերնացիոնալիզմի, այնպես և նացիոնալիզմի դարաշրջանում»[27]։ Քեննեդին ԱՄՆ-ին և ԳՖՀ-ին «ատլանտյան համագործակցության շրջանակներում» պարտնյոր անվանեց։ Նա Բոննը «եվրոպական դեմոկրատական համագործակցության ամուր հիմք» անվանեց և ընդունեց ԳՖՀ-ի «առաջատար դերը ՆԱՏՕ-ում»։ Դրական գնահատական տալով «Մարշալի



պլանին», ՆԱՏՕ-ին, «Շումանի պլանին» և «Ընդհանուր շուկային», Քեննեդին կրկնեց, որ կապիտալիզմի աշխարհին անհրաժեշտ է «կանգնել մեծ միասնության ճանապարհին»։ Տրանսատլանտյան կապերը, «ատլանտյան համագործակցությունը»,— հայտարարեց ԱՄՆ-ի պրեզիդենտը,— շուտ չեն հանգեցնի գերպետության ստեղծմանը (superstate)։ Բայց ընդհանուր նպատակի ուղղությամբ գործնական քայլերը մեր հնարավորությունների սահմաններում են»։ Այդ կապակցությամբ նա դիմեց արևմտաեվրոպական երկրներին «ընդլայնելու ջանքերը պաշտպանության բնագավառում, եռապակելու փոխգործողությունը էկոնոմիկայի ոլորտում, որն անխուսափելիորեն կհանգեցնի մեր քաղաքական կապերի ամրապնդմանը»։ ԱՄՆ-ի պրեզիդենտը կապիտալիստական երկրների ապագան տեսնում էր «նոր մեծ միության» մեջ։ Այդ ամերիկյան իմպերիալիզմի ստրատեգիական նպատակն էր Արևմտյան Եվրոպայում։ Քեննեդին այն հանդիսավորապես հայտարարեց նաև Իտալիա իր այցի ժամանակ։ «Սկսվել է փոխկախվածության դարաշրջանը»[28],— ասաց նա Նեապոլում։

Հանրագումարի բերելով վերը ասվածը, կարելի է եզրակացնել, որ 60-ական թվականների ընթացքում, հատկապես Քեննեդիի պրեզիդենտության շրջանում, ԱՄՆ-ը բավական ուղղագծորեն փորձում էր Արևմտյան Եվրոպային վերազգային քաղաքական և տնտեսական կազմակերպություն փաթաթել, որն ԱՄՆ-ին հնարավորություն տար քաղաքական և տնտեսական կախվածության մեջ պահել արևմտաեվրոպական երկրներին, նպաստեր սոցիալիզմի դեմ պայքարում իմպերիալիզմի ուժերի համախմբմանը։ Պրեզիդենտ Քեննեդիի առաջ քաշած «ատլանտյան համագործակցության» գաղափարը, ըստ էության, ուղղված էր եվրոպական պետությունների սուվերենության դեմ, նրա կենսագործումը կյանքում պետք է արտացոլվեր Արևմտյան Եվրոպան ԱՄՆ-ին ենթարկելու մեջ։ ԱՄՆ-ի հետ Արևմտյան Եվրոպայի ինտեգրացիան, ամերիկյան ստրատեգների կարծիքով, պետք է խոչընդոտեր, այնուհետև և վերջ տար այս կամ այն չափով ինքնուրույն արտաքին քաղաքականություն անցկացնելու արևմտաեվրոպական մի շարք պետությունների ձգտմանը ինչպես եվրոպական, այնպես և միջազգային մյուս պրոբլեմների հարցում։

Վաշինգտոնում 60-ական թվականներին մեծ անհանգստություն էր առաջացնում Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը։ Դը Գոլի պրեզիդենտության առաջին տարիներին Ֆրանսիայի վարած արտաքին քաղաքականության մեջ դրսևորվող անկախ տենդենցներն ԱՄՆ-ի կառավարությունը բացատրում էր դը Գոլի «քմահաճույքներով»։ Այդ տեսակետն այնքան լայնորեն էր տարածված Վաշինգտոնի և Լոնդոնի քաղաքական շրջաններում, որ անգամ բարձրաստիճան կառավարական և դիվանագիտական գործիչները լրջորեն պնդում էին, որ դը Գոլի «կամակորությունը»՝ իբր երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ու. Չերչիլի և Ֆ. Ռուզվելտի՝ նրան հասցրած «վիրավորանքների» արդյունք են։

Ֆրանսիայում և Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում քաղաքական կյանքի հետագա զարգացումը ցույց տվեց, որ գործերն անհամեմատ ավելի լուրջ են, քան դա պատկերացնում էին Վաշինգտոնում։ Վաշինգտոնից անկախ արտաքին քաղաքականություն վարելու արևմտաեվրոպական երկրների և, առաջին հերթին, Ֆրանսիայի ձգտումն ավելի ուժեղ էր արտահայտվում։ Այսուհանդերձ այդ պրոցեսի խորությունն ըմբռնելու համար Միացյալ Նահանգների կառավարությանը հարկ եղավ 60-ական թվականների գրեթե ամբողջ առաջին կեսը։

ԱՄՆ-ի և Ֆրանսիայի միջև զգալի տարաձայնությունները ի հայտ եկան դեռևս 1961 թվականի մայիսին, դը Գոլի հետ պրեզիդենտ Քեննեդիի հանդիպման ժամանակ, երբ Ֆրանսիայի պրեզիդենտը հրաժարվեց պաշտպանել պենտագոնի և ԿՀՎ-ի Լաոսում սանձազերծած ամերիկյան ռազմական ինտերվենցիայի ընդարձակման պլանները։ Արդեն այդ ժամանակ Ֆրանսիայի պաշտոնատար անձինք բավական պարզորոշ հասկացնել տվեցին, որ Ֆրանսիայի կառավարությունը հոռետեսորեն է վերաբերվում Հարավային Վիետնամում ԱՄՆ-ի կառավարության գործողություններին։ Բայց, թերևս, 1963 թվականին ԱՄՆ-ի կառավարությունն ամենից շատ անհանգստացած էր դը Գոլի այն հայտարարություններից, որ Ֆրանսիան մտադիր է դուրս գալ ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպությունից։ Նման կարգի «վտանգավոր տենդենցները», ինչպես գտնում էր Վաշինգտոնը, անհրաժեշտ էր ան-



միջապես խեղդել։ Ուստի Քեննեդիի պրեզիդենտության շրջանում ամերիկյան դիվանագիտությունը բավական ակտիվ գործունեություն ծավալեց ուղղված Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մեջ անկախ քայլերի դեմ պայքարին։ Քեննեդին, իսկ հետագայում նաև պրեզիդենտ Ջոնսոնի քաղաքական խորհրդական Մ. Բանդին 1966 թվականին Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը բնորոշեց որպես իր ոճով հիասթափեցնող, իր հպարտության հետևանքով թանկ նստող, ստեղծվող հնարավորությունները շռայլող, իր դրամատիկությամբ անտեղի և իր հիմքում անտանելի[20]։

Արևմտյան Եվրոպայի երկրների քաղաքականության մեջ անկախ տենդենցները խեղդելուն ուղղված ակտիվ դիվանագիտական գործունեության ժամանակ ԱՄՆ-ը սկսեց ավելի շատ հենվել ԳՖՀ-ի վրա։ 60-ական թվականների կեսերին այնպիսի իրավիճակ ստեղծվեց, երբ արդեն ոչ թե Անգլիան Վաշինգտոնի հետ իր այսպես կոչված «առանձնահատուկ հարաբերություններով», այլ ԳՖՀ-ն էր դառնում ԱՄՆ-ի հիմնական հույսը Արևմտյան Եվրոպայում։ ԳՖՀ-ի վրա հենվելը, մասնավորապես, Վաշինգտոնին ստիպեց մի շարք տարիների ընթացքում համառորեն ձգտել ՆԱՏՕ-ի շրջանակներում «բազմակողմանի միջուկային ուժերի» ստեղծմանը։

ՆԱՏՕ-ի նկատմամբ ԱՄՆ-ի ստրատեգիան աստիճանաբար էվոլյուցիա ապրեց այդ ռազմական կազմակերպությունը ռազմաքաղաքականի վերածելու ուղղությամբ։ Ամերիկյան քաղաքական շատ գործիչներ անկեղծ ընդունում էին, որ ՆԱՏՕ-ի կառուցվածքը հնացել է և այլևս լրիվ չափով չի համապատասխանում ԱՄՆ-ի շահերին։ ԱՄՆ-ի կոնգրեսի արտասահմանյան գործերի հանձնաժողովի անդամ սենատոր Ֆրենկ Չերչը 1966 թվականին Արևմտյան Եվրոպայի երկրներ կատարած իր ուղևորությունից հետո ասաց. «Մեր մոտեցման մեջ (հանդեպ ՆԱՏՕ-ն.— Ան. Գ.) սխալն այն է, որ պետական դեպարտամենտը տենդենց ունի մեր դաշնակիցների պրոբլեմները դիտել գլխավորապես որպես ռազմական և ոչ թե քաղաքական պրոբլեմներ»[21]։ Չերչն այն կարծիքը հայտնեց, որ զուտ ռազմական հարցերը, ինչպես, օրինակ, միջուկային զենքին տիրապետելը, ՆԱՏՕ-ի ռազմական ծրագրերը և հրամանատարության մեխանիզմը, այլևս

արևմտաեվրոպական շահերի էպիկենտրոնում գտնվող պրոբլեմներ չեն հանդիսանում: Սենատորը նշեց, որ Արևմտյան Եվրոպան ավելի քիչ շահագրգռվածություն է հանդես բերում «Արևելքից պատնեշներով» անջրպետվելուն և ավելի մեծ ակտիվություն է ցուցաբերում սոցիալիստական Եվրոպայի հետ փոխգործողությունները կարգավորելուն: Չերչը դիմեց ամերիկյան դիվանագիտությանը ավելի լրջորեն մտածել «բաժանված Եվրոպայի» պրոբլեմներին, ավելի խորն ըմբռնել եվրոպական հողում տեղի ունեցող քաղաքական պրոցեսները, և համապատասխանորեն այդ մայր ցամաքի և ՆԱՏՕ-ի նկատմամբ «ավելի ճկուն քաղաքականություն» մշակել:

Հետագա տարիներին Արևմտյան Եվրոպայի և ՆԱՏՕ-ի նկատմամբ ամերիկյան արտաքին քաղաքական ստրատեգիայի կարևորագույն նպատակներից էր՝ արևմտաեվրոպական հասարակայնության և կառավարական շրջանների հետ ԱՄՆ-ի շահերի թույլատրելի զուգակցման ուղիների որոնումը: Եվ պատահական չէ, որ պրեզիդենտ Ջոնսոնը 1966 թվականին, ակնհայտորեն հարմարվելով արևմտաեվրոպական հասարակայնության տրամադրություններին, նշեց. «Այսօրվա Եվրոպան նոր Եվրոպա է: Անորոշակիությունը տեղը զիջել է վստահությանը, քայքայումը՝ առաջընթացին, մեկուսացումը՝ պարտնյորությանը, պատերազմը՝ խաղաղությանը»[31]: Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ը այնպիսի կուրս վերցրեց, որպեսզի, ի տարբերություն Քենեդիի պրեզիդենտության ժամանակաշրջանի, աշխատել բարձր մակարդակով կոնֆլիկտի մեջ չմտնել արևմտաեվրոպական մի շարք երկրների, և առաջին հերթին Ֆրանսիայի, ավելի կամ պակաս չափով անկախ արտաքին քաղաքականություն անցկացնելու ձգտման հետ:

Այսպիսին էին դեմոկրատների կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները Արևմտյան Եվրոպայում:

Ամբողջ վերը շարադրվածից հետևում է, որ ԱՄՆ-ի եվրոպական քաղաքականությունը հանդիսանում է այդ ռեգիոնի ներկայի և ապագայի վրա ազդող կարևոր տարր: Ետպատերազմյան շրջանում հենց այստեղ էր նկատվում Վաշինգտոնի ինտենսիվ արտաքին քաղաքական ակտիվությունը: Դրա հետևանքով Եվրոպայում «սառը պատերազմի» քաղաքականությամբ և դիվանագիտությամբ ծնված հակասություններից ամուր հանգույց առաջացավ: Եվ հարկ եղավ գործադրել Սովետական Միության, սոցիալիստական երկրների, եվրոպական մի շարք պետությունների համար ջանքերը այն մասամբ հանգուցալուծելու համար:



Եվրոպայում միջազգային իրադրության պոզիտիվ զարգացման համար 60-ական թվականներին առանձնապես մեծ նշանակություն ունեցավ Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականությունը, որն ուղղված էր Եվրոպայի անվտանգության ամրապնդմանը, մայր ցամաքի բոլոր երկրների միջև հարցերի լայն շրջանակի շուրջը համաձայնությունների և կոնստրուկտիվ համագործակցության ուղիների որոնմանը: Այդ ամենը չէր կարող չազդել, ընդ որում էապես, ամերիկյան մայր ցամաքում իշխող տրամադրությունների վրա:

Եվրոպայում տեղի ունեցող լիցքաթափման պրոցեսը մայր ցամաքում կարևոր պոզիտիվ տեղաշարժեր առաջ բերեց, որը էապես սահմանափակեց «ուժի դիրքերից» քաղաքականություն վարելու հնարավորությունները: Այդ պայմաններում ԱՄՆ-ի կառավարությունը ստիպված եղավ իր եվրոպական քաղաքականությունը հարմարեցնել նոր իրադրությանը: Բուն ԱՄՆ-ում ակտիվացան քաղաքական տարբեր խմբավորումները, որոնք միանշանակ չէին մեկնաբանում ամերիկյան շահերը Եվրոպայում, և դրանց պաշտպանության ուղիները:

Վաշինգտոնին հարկ եղավ հաշվի նստել համընդհանուր եվրոպական հիմունքներով, պետությունների կոլեկտիվ ջանքերով Եվրոպայում անվտանգության պրոբլեմների լուծման համար շարժման աճող ուժի հետ: Սոցիալիստական երկրները հետևողականորեն և ակտիվորեն անցկացնում էին համընդհանուր եվրոպական խորհրդակցություն հրավիրելու գիծ, հաշվի առնելով միաժամանակ եվրոպական պետություններում հօգուտ այդպիսի խորհրդակցության հրավիրման լայն տարածում ստացած տրամադրությունները: «Եվրոպայի ժողովուրդները,— նշում է Լ. Ի. Բրեժնևը,— բացի իրենց յուրահատուկ պրոբլեմներից, ունեն ընդհանուր շահեր՝ անկախության պահպանման համար պայքարը, ընդդեմ արտաքին ուժերի միջամտության, որոնց նպատակներն ու շահերը խորթ

են եվրոպական ժողովուրդներին, միմյանց միջև տնտեսական, մշակութային և այլ խաղաղ կապերի հաստատմանը[32]։ Եվրոպական հասարակական կարծիքը դժվարով շրջվեց դեպի խաղաղության ամրապնդման պրոբլեմները, չնայած Արևմուտքի այն շրջանների ջանքերին, որոնք բացի «սառը պատերազմի» տրորված ուղուց, ներառյալ Արևմտյան և Արևելյան Եվրոպայի միջև բազմապլանային առճակատումը, միջազգային հարաբերությունների զարգացման այլ ուղի չէին ճանաչում և առայսօր չեն տեսնում։

1970—1971 թվականներն անցան սոցիալիստական պետությունների, ինչպես նաև արևմտաեվրոպական երկրների առավել ռեալիստորեն դատող շրջանների կողմից եվրոպական անվտանգության ապահովման ուղիների որոնման նշանաբանով։ ԱՄՆ-ի դիվանագիտությունը երկար ժամանակ իրեն հեռու էր պահում այդ ջանքերից։ Ավելին, նրա ղեկավարները բազմիցս հոռետեսություն էին հանդես բերում այդ, անկասկած, կարևոր պրոբլեմին նվիրված բանակցությունների հաջողության վերաբերյալ։

1969 թվականի հոկտեմբերին սոցիալիստական երկրների առաջադրած համընդհանուր եվրոպական խորհրդակցության օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռոջերսն անհիմն կերպով «մառախլապատ և ոչ հստակ» անվանեց։ Նա դիմեց Արևմտյան Եվրոպայի երկրների կառավարություններին լիցքաթափման զգացումով չմտնել։ Այդպիսի դիրքորոշումը վկայում էր, որ Վաշինգտոնը, չնայած «բանակցությունների դարաշրջան» սկսվելու իր հայտարարություններին, երկար ժամանակ հանդես էր գալիս համընդհանուր եվրոպական խորհրդակցություն հրավիրելու դեմ։

Սակայն իրադարձությունների զարգացումն ստիպեց Վաշինգտոնին վերանայել իր հռետորական վերաբերմունքն անվտանգության և համագործակցության հարցերին նվիրված համընդհանուր եվրոպական խորհրդակցության նկատմամբ։ 1971 թվականի մարտ ամսին Ռոջերսն ԱՄՆ-ի սենատի արտասահմանյան գործերի հանձնաժողովին զեկույց ուղարկեց, որում արձանագրվում էր, որ «Արևմտյան Եվրոպան, միանգամայն ակներևաբար, ցանկանում է այնպիսի դարաշրջան,



որում սառը պատերազմի ոգով մրցակցությունը պետք է վերանա և տեղի է ունենալու լարվածության թուլացում»։ Պետական քարտուղարը կարծիք հայտնեց, որ նման տրամադրությունները դրական գործոն են եվրոպական գործերում[33]։ Հարկավոր է նշել, որ Վաշինգտոնի՝ դեպի երկխոսություն փոխելու շրջադարձը շատ բանով արագացվեց Արևմտյան Եվրոպայի օրինակով, որն առաջինը՝ ի դեմս Ֆրանսիայի, ԳՖՀ-ի և մյուս երկրների, ՍՍՀՄ-ի և Եվրոպայի սոցիալիստական մյուս երկրների հետ կոնստրուկտիվ տնտեսական համագործակցության ձգտում ցուցաբերեց և դրանով իսկ ասես իր ետևից տարավ Վաշինգտոնին, որն այդ շրջանում հեռու էր մնացել միջազգային իրականությունում տեղի ունեցող բազմաթիվ դրական երևույթներից։

Ետպատերազմյան առաջին տարիների կանխադրույթների վրա հիմնված ԱՄՆ-ի ստրատեգիայի ռազմական ասպեկտը Եվրոպայում զգալի չափով սահմանափակում էր ԱՄՆ-ի եվրոպական քաղաքականությունը։ Սակայն, չնայած դրան, 60-ական թվականների վերջում և 70-ական թվականների առաջին կեսում սովետա-ամերիկյան հարաբերություններում, այդ թվում և Եվրոպայում, առողջացումն աստիճանաբար առաջ էր ընթանում։ Մի շարք պրոբլեմների գծով կողմերը բավական շոշափելի արդյունքների հասան, հատկապես պրեզիդենտ Ռ. Նիքսոնի հետ ՍՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի 1972 թվականի մայիսին, 1973 թվականի հունիսին և 1974 թվականի հունիս-հուլիսյան հանդիպումներից հետո։ Սակայն, ստիպված ենք խոստովանել, որ Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի ստրատեգիան դեռևս ետ է մնում արդի միջազգային իրադրությունից, քանի որ իր գործնական քաղաքականությունում Վաշինգտոնը համառորեն հույսը դնում է Եվրոպայում արևմտյան տերությունների մեկուսացած ռազմական բլոկների ուժեղացման և ԱՄՆ-ի նկատմամբ իր մեծ համակրանքի վրա։

Ամերիկյան ղեկավարության մեջ գտնվող մի շարք ազդեցիկ գործիչներ մշտապես փորձ են անում ապացուցել, որ ՆԱՏՕ-ում ամերիկյան ռազմական ներդրման կրճատումը կարող է այդ միության «ուժերի ղեճկալացմանը», նրա քայքայման սկիզբը դառնալ։ Այդ հնացած դրույթների առավել

կրթոտ կողմնակիցները Արևմտյան Եվրոպայում ամերիկյան ցամաքային, ռազմաօդային, ռազմածովային և գործողության միջին շառավիղի հրթիռամիջուկային զենքի «բավականաչափ» ուժերի ներկայությունն իբրև «անվտանգության կառուցվածքի» անխախտելի տարր են համարում։ Համաձայն այդ տեսակետի, Արևմտյան Եվրոպայում տեղաբաշխված ամերիկյան զորքերը և հրթիռները «խաղաղության պահպանման» համար «անհրաժեշտ գնի» իբրև թե յուրատեսակ մասն են դառնում։ Ամերիկյան մի շարք ազդեցիկ քաղաքական գործիչների և բարձրաստիճան զինվորականների նման դիրքորոշումը երբեմն «ատլանտյան ամրոցի» կոնցեպցիա են անվանում։ Այդ կոնցեպցիան հակասության մեջ է մտնում եվրոպական հողում զարգացող լիցքաթափման պոզիտիվ տենդենցների հետ։

Չնայած Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի «ռազմական ներկայության» կողմնակիցների դիրքերը Վաշինգտոնում բավական ամուր են, այսուհանդերձ նրանք ստիպված են մանևրել, նորանոր փաստարկներ հորինելով այն մարդկանց հետ բանավեճում, ովքեր կասկածի տակ են դնում եվրոպական գործերին ավանդական միլիտարիստական մոտեցումը և անհանգստացած են Ամերիկայի Միացյալ Նահանգներում ներքին քաղաքական պրոբլեմների սրմամբ՝ սպառազինության ավելացող բեռի հետևանքով։

ԱՄՆ-ի եվրոպական քաղաքականության քննադատները, մասնավորապես, ընդգծում են, որ ամերիկյան հարկատուների փողերը կարող էին ավելի լավ կիրառություն գտնել, քան Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի զգալի (մոտ 300 հազ. մարդ) ռազմական ստորաբաժանումների խնամելու ծախսերն են, և պահանջում են կրճատել ամերիկյան ռազմական ներկայությունն այնտեղ։

Նրանք, ովքեր ԱՄՆ-ի ռազմական ներդրման կրճատման կողմ են հանդես գալիս, գտնում են, որ «վերջին 25 տարում աշխարհը փոխվել է, ուստի պետք է փոխվի նաև քաղաքականությունը։ 40-ական թվականների քաղաքականությունն անհարիր է 70-ականի պայմաններում։ ԱՄՆ-ը չպետք է կառչի անցած օրերի քաղաքականությանն ու սառը պատերազմի ժամանակների առասպելներին»[34]։



Վաշինգտոնի եվրոպական քաղաքականության մեջ գոյություն ունի որոշակի անոմալիա։ Մի կողմից, այդ, ինչպես հայտարարում են Վաշինգտոնում, Արևելյան Եվրոպայի, ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունների բարելավման, առևտրի և տնտեսական համագործակցության զարգացման քաղաքականություն է, մյուս կողմից, ռազմական ոլորտում, ՆԱՏՕ-ի կառուցվածքում բարացած տարրերի պահպանությունը, վաղուց անցած տարիների փաստարկների օգտագործումը»[35]։ Անհեթեթություն է ստացվում, իր ժամանակ նշում էր սենատոր Մենսֆիլդը. «Արտասահմանում մեր ռազմական ուժերի պահպանումը և դրանց մակարդակն են որոշում մեր քաղաքականությունը, մինչդեռ մեր քաղաքականությունը պետք է որոշեր ամերիկյան զորքերի մակարդակն արտասահմանում»[36]։

Եվրոպական գործերում ԱՄՆ-ի արտաքին քաղաքական կուրսը այսօր նույնպես կանգնած է երկընտրանքի առաջ։ ԱՄՆ-ը հանդես եկավ լիցքաթափման, եվրոպական անվտանգության, երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքները հանրագումարի բերելու օգտին, բայց միևնույն ժամանակ ՆԱՏՕ-ում ռազմական շինարարության ուժեղացման գիծ է վարում, իսկ այդ կազմակերպության ամերիկյան հրամանատարները արևմտաեվրոպացիներին «սովետական սպառնալիքով» են վախեցնում, ներշնչելով նրանց, որ ռազմական հակամարտությունը ոչ միայն չի թուլացել, այլ, ընդհակառակը, սրվել է։ Զգաստություն է պահանջում և այն, որ ԱՄՆ-ը ոչ միայն չի հրաժարվել Արևմտյան Եվրոպայում նեյտրոնային զենք տեղադրելու պլաններից, այլև իրենց արևմտաեվրոպական պարտնյորների վզին են ուղղակիորեն փաթաթել ՆԱՏՕ-ի մի շարք երկրներում ամերիկյան նոր հրթիռներ տեղաբաշխելու մասին որոշումը։

ԱՄՆ-ը համաձայնվեց քննարկել Կենտրոնական Եվրոպայում ռազմական ուժերի և սպառազինությունների կրճատման պրոբլեմը, բայց իր պարտնյորներից զորքերի ավելացում, սպառազինությունների արտադրության ընդլայնում է պահանջում և Վիեննայում ընթացող բանակցություններում զորքերի և սպառազինությունների «հավասարակշռված» կրճատման պլաններ առաջադրում, որոնք կարող են խախտել Եվ-

րոպայում ստեղծված ռազմական հավասարակշռությունը։ ԱՄՆ-ը անհիմն ճանաչեց «ատլանտիզմի» նախկին կոնցեպցիաները, որոնք Արևմտյան Եվրոպայի իր պարտնյորների ռազմական, տնտեսական և այլ կարգի խարականության փաստացի հիմնավորում, ամերիկյան հեգեմոնիզմի վարագույր էր, բայց նրանք առաջ են քաշում «հասուն պարտնյորության» զանազան վերանայված տարբերակներ, նոր ցուցանակի տակ գործի են դնում ամերիկյան տիրապետության նույն հին գաղափարը, որը նոր հակասություններ և կոնֆլիկտներ է ծնում։

ԱՄՆ-ի ձեռքում, անտարակույս, այնպիսի լծակներ կան, որոնց միջոցով նա կարող է արգելակել և, ինչպես տեսնում ենք, արգելակում է լիցքաթափման պրոցեսը Եվրոպայում։ Սակայն այս ուղղությամբ նրա հնարավորությունները արդեն բացահայտ սահմանափակ են։ Շատ բան, իհարկե, կախված կլինի նրանից, թե որքան արագ տեղի կունենա Եվրոպայում քաղաքական կլիմայի նորմալացումը, որի համար ուժեղ շարժառիթ եղավ ՍՍՀՄ-ի և ԳՖՀ-ի, Լեհաստանի և ԳՖՀ-ի միջև պայմանագրերի վավերացումը, ԳՖՀ-ի և Չեխոսլովակիայի միջև հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև Արևմտյան Բեռլինի վերաբերյալ չորսկողմանի համաձայնությունը։ Եվրոպայում քաղաքական կլիմայի հետագա ջերմացումը շատ բանում կախված կլինի եվրոպական անվտանգության պրոբլեմների արդյունավետ լուծումից, մասնավորապես ամերիկյան նոր հրթիռամիջուկային զենքի տեղաբաշխումից հրաժարվելուց, Կենտրոնական Եվրոպայում սպառազինությունների և ռազմական ուժերի կրճատման մասին բանակցությունների արդյունքներից, Եվրոպայի արևմուտքի և արևելքի միջև տնտեսական և այլ կարգի համագործակցության զարգացումից։ ԱՄՆ-ի կառավարությունն անխուսափելիորեն ստիպված կլինի հարմարվել այդ նոր իրավիճակին, հին աշխարհն այլևս չդիտել որպես բացառապես ուժերի պերմանենտ փորձարկման ասպարեզ՝ ի վնաս ժողովուրդների անվտանգության շահերի։ Վերջին հաշվով դրանից կշահեն բոլորը, այդ թվում և ԱՄՆ-ը։ Պատահական չէ, որ Քարտերի ադմինիստրացիան որպես ամերիկյան արտաքին քաղաքականության կարևոր խնդիր առաջ էր քաշում Արևմտյան Եվ-



րոպայի երկրների հետ հարաբերությունների զարգացման պրոբլեմը։

Սովետական Միությունը, Հելսինկիում ստորագրած համաձայնագրերի ոգուն և տառին հավատարիմ, ինչպես հայտարարեց Լ. Ի. Բրեժնևը Եվրոպայի կոմունիստական և բանվորական կուսակցությունների Բեռլինի կոնֆերանսում, գտնում է, որ «Եվրոպան սկզբունքորեն նոր դարաշրջան է թևակոխել, որն արմատապես տարբերվում է նախկինում եղածներից։ Այդ չհասկանալը եվրոպացիների համար կնշանակեր աղետին ընդառաջ գնալ»[37], այդ թվում աղետ և ԱՄՆ-ի համար։ Ահա թե ինչու Սովետական Միությունը, կենսագործելով ՍՄԿԿ XXIV համագումարում ընդունված և XXV համագումարի որոշումներում հետագա զարգացում ստացած խաղաղության ծրագիրը «վճռական «ոչ» է ասում «սառը պատերազմին» և նույնչափ վճռական «այո»՝ լիցքաթափմանը։

ԳԼՈՒԽ IX

# ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վրա ազդող տարբեր ուժերի վերլուծությունը հանգեցնում է այն նոր երևույթների ու գործոնների գնահատման անհրաժեշտությանը, որոնք մեծ դրոշմ են դնում միջազգային հարաբերություններում առկա արդի տենդենցների վրա։ Այդպիսի գործոններից է գիտատեխնիկական հեղափոխությունը (ԳՏՀ), որը միջազգային հարաբերություններում երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո առաջին տասնամյակում գերիշխող իրավիճակից զանազանվող վիճակ է ստեղծում։

ԳՏՀ-ը ընդհանուր առմամբ լիցքաթափմանը օբյեկտիվորեն նպաստող, սոցիալական տարբեր իրավակարգերով պետությունների առջև համագործակցության համար նոր հնարավորություններ բացող գործոն է։ ԳՏՀ-ը լայնորեն ընդլայնում է մարդկության տնտեսական և գիտատեխնիկական պոզիտիվ փոխգործողության հորիզոնները ռեգիոնալ և գլոբալ մասշտաբներով։ Այն նաև հնարավոր է դարձնում արդյունաբերական և գիտատեխնիկական նշանակության բազմաթիվ երկկողմանի պլանների իրականացումը։ Այլ կերպ ասած, ԳՏՀ-ն ամրապնդում է պետությունների խաղաղ գոյակցության հիմքը, բայց դրա հետ մեկտեղ նրա առանձին արդյունքները, հատկապես ռազ-



մատեխնիկական նվաճումների բնագավառում, կարող են օգտագործել խաղաղության և լիցքաթափման հակառակորդները։ Այդ լավ էին հասկացել և հասկանում են իմպերիալիստական պետություններում այդ բնագավառում աշխատող գիտնականները, որոնց միլիտարիզմը քաղաքականության շարժիչ ուժերի անբաժանելի մասն է։ Ականավոր ֆիզիկոս Ա. Էյնշտեյնն իր մահվան նախօրյակին պատրաստվում էր հրապարակորեն սուր քննադատությամբ հանդես գալ ամերիկյան իմպերիալիզմի կողմից ատոմային ռումբ լույս աշխարհ բերելու հետևանքների և այն նպատակների վերաբերյալ, որոնց էլ ԱՄՆ-ի որոշակի շրջանները ձգտում էին այն ծառայեցնել։

Գիտատեխնիկական հեղափոխությունը, նրա քաղաքական, տնտեսական և սոցիալական հետևանքները գրավում են տարբեր երկրների քաղաքական գործիչների, գիտնականների և հասարակայնության սևեռուն ուշադրությունը։ Առավելապես խորն է այդ պրոցեսի ուսումնասիրում սովետական գիտությունը։ Արդի ԳՏՀ-ն հարաճուն պրոցես է, որը մեկ կամ երկու կարևոր գիտատեխնիկական հայտնություններով չի սահմանափակվում, ինչպես նախկինում (օրինակ, շոգեքարշի ստեղծումը կամ էլեկտրականության գործնական օգտագործման հնարավորությունների հայտնությունը)։ XX դարի երկրորդ կեսին միանգամայն այլ վիճակ է նկատվում՝ գիտության և տեխնիկայի բնագավառում կարևոր նորամուծություններն ու հայտնագործությունները ավելի լայն ու արագ թափով են առաջ ընթանում։

Մարդկային իմացության և հասարակական արտադրության զանազան բնագավառներում կուտակված գիտատեխնիկական նվաճումները հանգեցրին արմատական, որակական տեղաշարժերի, որոնք և արտացոլում են գիտատեխնիկական հեղափոխության էությունը։ Նրա բնույթը կայանում է հասարակական արտադրության և հասարակական կյանքի մյուս ոլորտներում գիտության և կառավարման գիտական մեթոդների ներթափանցման, բարդ մեխանիզմի ստեղծման մեջ, որը պետք է ապահովի արտադրողական ուժերի, պետության մտավոր պոտենցիալի և օգտակար աշխատանքի գործակցի կազմակերպման ու մոբիլիզացման նոր, ավելի բարձր մակարդակը։

Գիտատեխնիկական հեղափոխությունը փոխում է հասարակական կյանքի բոլոր ոլորտների մասին ավանդական հասկացությունները ու պատկերացումները, այդ թվում և պետության հզորության ուժի մասին պատկերացումը։ Շատ հանգամանքներ, որոնք նախկինում որոշիչ էին պետության ուժի ու հզորության գնահատման ժամանակ, օրինակ, բնական ռեսուրսների առկայությունը, զարգացած արդյունաբերական պոտենցիալը, այսօր, պահպանելով իրենց մեծ նշանակությունը, այնուհանդերձ այլևս չեն կարող իրական պատկերացում տալ պետության ուժի, արտաքին քաղաքական բնագավառում նրա հնարավորությունների մասին։ Դեռ ավելին, հավանաբար, կարելի է եզրակացություն անել, որ ավելի մեծ դեր են խաղում այնպիսի ցուցանիշները, ինչպես գիտահետազոտական և փորձնական կոնստրուկտորական աշխատանքների ծավալը, բնակչության կրթական մակարդակը, գիտնականների և մասնագետների պատրաստման որակն ու քանակը, արտադրության մեջ գիտության նվաճումներն արագորեն և արդյունավետորեն ներդնելու հասարակության ունակությունը։

Եվ այսպես, այս կամ այն պետության հզորությունը որոշող ցուցանիշների թիվը վերջին տարիներին արագորեն աճել է։ Ի հայտ են եկել նոր հանգամանքներ, որոնք նախկինում առկա էին, բայց այդչափ մեծ ծավալով չէին ներգործում պետության գիտատեխնիկական պոտենցիալի և արտաքին քաղաքականության վրա։

Գիտատեխնիկական հեղափոխության կարևոր առանձնահատկությունն այն է, որ նա մեկուսացված պրոցես չէ։ Այն սերտորեն կապված է ոչ միայն հասարակության սոցիալական կառուցվածքի, այլև աշխարհում տիրող իրադրության հետ։ Վերջինս էլ հենց այն միջավայրն է, որտեղ ծավալվում է ԳՏՀ-ն։ Եթե գիտության և տեխնիկայի նվաճումները որոշակի չափով ազդում են անձի հոգևոր զարգացման, պետության քաղաքականության և էկոնոմիկայի վիճակի վրա, ապա իրենց հերթին հասարակության սոցիալական կառուցվածքը, աշխարհում տիրող իրադրությունը, այն միջազգային մթնոլորտը, որտեղ ընթանում է գիտության և տեխնիկայի զարգացումը, նույնպես ներազդում են գիտատեխնիկական հե-



ղափոխության վրա։ Առանձին պետություններում ԳՏՀ-ի ներկայիս նվաճումները տիրող շահագործող դասակարգերի գործիք են, նրա արդյունքները լայնորեն օգտագործվում են միջազգային ասպարեզում և, ցավոք, ոչ միշտ խաղաղ նպատակներով, ոչ հանուն սոցիալական առաջընթացի։ Ուստի արդի միջազգային հարաբերությունների ամբողջ սիստեմի վրա գիտատեխնիկական հեղափոխության ազդեցության անգամ ամենաընդհանուր գնահատականը հնարավոր է միայն աշխարհում տիրող սոցիալական և քաղաքական իրադրության, այստեղ ընթացող սուր և բարդ պայքարի վերլուծության հետ սերտ կապի դեպքում։ ԳՏՀ-ն միջազգային հարաբերություններում ծնում է պետությունների միջև լայն համագործակցության կարգավորմանը նպաստող և միաժամանակ առանձին դեպքերում նրանց միջև հարաբերությունները սրող ամենատարբեր գործոններ։

Մարդկության առջև ծառացած մի շարք ակտուալ պրոբլեմների, ինչպես, օրինակ, Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում սովի վերացումը, հիվանդությունների կանխումն ու վերացումը, մարդկանց աշխատանքի պայմանների բարելավումը, շրջապատող միջավայրի պահպանումը, համաշխարհային օվկիանոսի ռեսուրսների, տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման բնագավառում միջազգային համագործակցության կարգավորումը, լուծման համար անհրաժեշտ է գլոբալ և ռեգիոնալ հիմունքներով միջազգային լայն համագործակցություն։ Աշխատանքի միջազգային բաժանմանը նպաստող նման համագործակցությունը կարող է կարգավորվել խաղաղության, միջազգային իրադրության բարելավման, 40—60-ական թվականների նեգատիվ շատ տենդենցների, երբ միջազգային հարաբերությունների սիստեմը զարգանում էր առճակատման և «սառը պատերազմի» պայմաններում, գործողության նվազեցման և անգամ ի չիք դարձնելու դեպքում։ Միջազգային լարվածության թուլացում կարող է ըստ ամենայնի տեղի ունենալ միջազգային հարաբերություններում արդի դարաշրջանի օբյեկտիվ հակասությունների և առկայությամբ, քանզի դրանց լուծման համար պատերազմներ պետք չեն։ Սակայն չի կարելի թույլատրել, որպեսզի այդ հակասություն-

ները լուծվեն ռազմական ընդհարման, ուժային առճակատումների, ճգնաժամային դիվանագիտության ճանապարհով և միջազգային սուր վեճեր ու տարաձայնություններ առաջացնեն։

Եվ այսպես, խաղաղության պահպանության ուղղությամբ նոր հնարավորությունները ԳՏՀ-ի պայմաններում կարող են իրականացվել խաղաղ գոյակցության՝ միջազգային իրավահավասար համագործակցության կարգավորման, խաղաղության կայունացման, միջազգային լարվածության հետագա թուլացման համար մեծ հնարավորություններ ընձեռող միջազգային հարաբերությունների առաջընթացի սկզբունքի ուղիներով։

Լավ հայտնի է, որ 1972 թվականի մայիսին բարձր մակարդակով ընթացող մոսկովյան բանակցությունների ժամանակ առաջին անգամ հետպատերազմյան շրջանում ամերիկյան կառավարությունը պաշտոնապես ընդունեց խաղաղ գոյակցության սկզբունքների մեծ նշանակությունը խաղաղության գործի համար, Սովետական Միության հետ խաղաղասիրական հարաբերություններն ամրապնդելու և դրանց համար ամուր հիմք ստեղծելու ձգտում ցուցաբերեց։ Այդ պայմանավորվածություններից ոչ ոք իրավունք չունի հրաժարվել։

70-ական թվականների սկզբին սահմանվեցին ԳՏՀ-ի պայմաններում միջազգային համագործակցության այնպիսի կարևոր ուղղություններ, ինչպես բնական միջավայրի պահպանումը, էներգետիկ և բնական մյուս ռեսուրսների յուրացումը, տրանսպորտի և կապի զարգացումը, առավել վտանգավոր և տարածված հիվանդությունների կանխումն ու վերացումը, տիեզերքի և Համաշխարհային օվկիանոսի հետազոտումն ու յուրացումը, երկրագնդի մի շարք շրջաններում եղանակի և կլիմայի նպատակամղված փոփոխման վերահսկումը։ Արդեն այժմ ակնհայտ է, որ առանց միջազգային համագործակցության անհնար է ձեռք առնել երկրի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, մեր երկրագնդում բնակվելու համար բարենպաստ պայմանների պահպանմանն ուղղված արդյունավետ միջոցներ[1]։

Զարգացող երկրների համար առավել կարևոր պրոբլեմները, որոնք հնարավոր կլինի լուծել արդյունաբերական



զարգացած երկրների հետ իրավահավասար համագործակցության հիման վրա, հանդիսանում են. հիմնական հացահատիկային կուլտուրաների բարձր բերքատու տեսակների ստեղծումը, սննդի սպիտակուցի պրոբլեմի լուծումը, ձկնորսության առաջատար եղանակների մշակումը բաց ծովում, գյուղատնտեսական վնասատուների և հիվանդություններ տարածողների դեմ պայքարը, ջրերի աղազրկման պրոբլեմի լուծումը։

Շատ երկրներ են օգուտ քաղում միջազգային համագործակցությունից, սակայն նրա ձևերի կատարելագործման պրոցեսը շարունակվում է, և այդ թույլ է տալիս լավատեսորեն նայել նրա հեռանկարների ու հետագա զարգացման տեմպերին։ Միջազգային համագործակցության և աշխատանքի բաժանման ձևերը ԳՏՀ-ի պայմաններում կարող են, իհարկե, տարբեր լինել։ Այն կարող է իրականացվել գլոբալ հիմունքներով՝ միջազգային զանազան կազմակերպությունների, այդ թվում ՄԱԿ-ի շրջանակներում, ռեգիոնալ հիմունքով և միջպետական երկկողմանի կոնտակտներով։

Մասնավորապես, գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում տեղի ունեցող սոցիալիստական տնտեսական ինտեգրացման պրոցեսում մեծ դեր է խաղում ռեգիոնալ այնպիսի կարևոր կազմակերպություն, ինչպես Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ)։ ՏՓԽ-ի միջոցով սոցիալիստական երկրները կոորդինացնում են իրենց ժողովրդատնտեսական գործունեությունը, ուժեղացնում են գիտատեխնիկական, տնտեսական և սոցիալական առաջընթացի տեմպերը, ընդլայնում համագործակցությունը նյութական արտադրության, գիտության ու տեխնիկայի, արտաքին առևտրի փոխանակման բնագավառներում և այլն։

ՏՓԽ-ի նպատակն է՝ սոցիալիստական երկրների միջև բազմակողմանի համագործակցությունը ԳՏՀ-ի պայմաններում և նոր հաջողությունների ապահովումը երկու սիստեմների տնտեսական մրցության, ինչպես նաև տեխնիկայի ու գիտության զարգացման վճռական ուղղություններում։

Սովետական արտաքին քաղաքականության նպատակները Եվրոպայում պարզ են։ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության հիսնամյակին նվիրված ՍՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի զեկուցման

մեջ ժամանակին նշվել է. «Խաղաղության ամրապնդումը Եվրոպայում անչափ կարևոր և մեծ հարց է ամբողջ մարդկության ճակատագրի համար։ Ամբողջ եռանդով և նպատակասլացությամբ մենք պայքարում ենք հանուն նրա, որպեսզի Եվրոպան, որը երկար ժամանակ հրաբխի օջախ էր, չկարողանա նոր պատերազմ ծնել»[2]։ Այդ ժամանակից Սովետական Միությունը բազմիցս ապացուցել է դա հանուն խաղաղության պաշտպանության իր եռանդուն ակտիվությամբ։ Եվրոպայում մեծ դեր է խաղում սովետա-ֆրանսիական ամրապնդվող համագործակցությունը։ Շատ հարցերում ավելի են նորմալանում և զարգանում ԳՖՀ-ի հետ հարաբերությունները, չնայած հենց այդ երկրում են առանձնապես ուժեղ այդ դրական պրոցեսի հակառակորդները, առաջին հերթին կառավարության նկատմամբ ընդդիմադիր քրիստոնյա-դեմոկրատական կուսակցության շարքերում։

Խաղաղության ամրապնդումը Եվրոպայում տեղի է ունենում խաղաղ գոյակցության սկզբունքի հիման վրա, սկզբունքը, որն ավելի է դրսևորվում եվրոպական պետությունների քաղաքականություններում։ Հելսինկիի խորհրդակցությունը հսկայական ներքին մղում ավեց ԳՏՀ-ի պայմաններում տեղի ունեցող միջազգային համագործակցության պրոցեսում կուտակված փորձի զարգացմանը։ Այն բանից, թե դա ինչպես կընթանա հետագայում, շատ բանում է կախված ԳՏՀ-ի ստեղծած նոր հնարավորությունների օգտագործումը ընդհանուր եվրոպական համագործակցության ընդլայնման ուղղությամբ։

Եվրոպական միջպետական համագործակցության սիստեմի կարևորագույն տարրերից են եվրոպական երկրների տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային կապերը։ Եվրոպական երկրների միջև համագործակցության վրա ԳՖՀ-ի ազդեցության առանձնահատկությունն այն է, որ դա դուրս է գալիս առևտրական ավանդական փոխանակումների շրջանակներից։ Սովետական Միության և Ֆրանսիայի կառավարությունները մեծ ջանքեր են գործադրում ոչ միայն առևտրական փոխանակումների, այլև գիտատեխնիկական և արդյունաբերական համագործակցության զարգացման համար։ Այդ նպատակին հասնելու համար Սովետական Միու-



թյունը և Ֆրանսիան հատուկ մեխանիզմ են ստեղծել, որը լուծում է առաջացող պրոբլեմները, հաշվի առնելով սովետական և ֆրանսիական էկոնոմիկայի, գիտության և տեխնիկայի կառավարման կազմակերպման մեջ եղած տարբերությունները։ Լայն և բազմազան է սովետական և ֆրանսիական գիտնականների համագործակցությունը տիեզերքի ուսումնասիրման բնագավառում։

Սովետական և ֆրանսիական գիտնականներն ակտիվորեն համագործակցում են միջուկային ֆիզիկայի, ծովի հատակի հետազոտման պրոբլեմների ոլորտում, գունավոր հեռուստատեսության և գիտության ու տեխնիկայի ուրիշ շատ բնագավառներում։

Արդյունաբերական-տնտեսական հարաբերությունների զարգացման ուղղությամբ զգալի առաջընթաց է կատարվել Սովետական Միության և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության միջև։ Մոսկվայում 1970 թվականի օգոստոսին ՍՍՀՄ-ի և ԳՖՀ-ի միջև ստորագրված պայմանագիրը լավ հիմք դրեց երկու պետությունների միջև կապերի զարգացման համար։ Սովետա-արևմտագերմանական տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության զարգացման համար մշտական մեխանիզմ է ստեղծվել։ Երկու կողմերն ինչպես տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության, այնպես և դրանց իրագործման բնագավառում համատեղ նախագծերի նախապատրաստման նպատակով ձեռնարկվող ջանքերի հետագա ակտիվացման կուրս են վերցրել։ Դրա հետ մեկտեղ կողմերը ձգտում են ավելացնել ապրանքաշրջանառությունը փոխադարձ հիմունքներով։ Առանձնապես հեռանկարային է Կուրսկի շրջանում երկաթի անմիջական վերականգնման մեթոդով աշխատող մետալուրգիական կոմբինատի կառուցման հարցում սովետական և արևմտագերմանական կազմակերպությունների միջև ծավալվող համագործակցությունը։ Առկա են բոլոր պայմանները էկոնոմիկայի, գիտության և տեխնիկայի բնագավառում համագործակցության ընդլայնման համար։ Այս ուղղությամբ նշանակալի իրադարձություններ էին ՍՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Ի. Բրեժնևի այցերը ԳՖՀ։

Կոնստրուկտիվ է զարգանում տնտեսական և գիտատեխնիկական համագործակցությունը Սովետական Միության և Իտալիայի միջև. խոշոր կոնտրակտներ և համաձայնագրեր են վավերացվել Իտալիայից գազամուղների համար սարքավորումներ և խողովակներ ներմուծելու և Սովետական Միությունից նավթ և բնական գազ արտահանելու մասին։ Սովետա-իտալական փոխշահավետ համագործակցության օրինակ հանդիսացավ Վոլգայան ավտոմոբիլային գործարանի կառուցումը։ Ստեղծվեց սովետա-իտալական «Սոտանիտալյանա» խառն ընկերություն, լավ հնարավորություններ ստեղծվեցին ՍՍՀՄ-ից դեպի Իտալիա էլեկտրաէներգիա մատակարարելու, ինչպես նաև սովետական գործարաններում ատոմային էլեկտրակայանների համար իտալական բնական ուրանի հարստացման համար։ Մի խոսքով, ՍՍՀՄ-ի և Իտալիայի միջև գիտատեխնիկական և տնտեսական բնագավառներում բազմակողմանիորեն համագործակցելու համար հիրավի լայն հնարավորություններ բացվեցին[3]։

Զգալի հեռանկարներ նախանշվեցին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև տնտեսական և գիտատեխնիկական հարաբերությունների ընդլայնման, պոտենցիալ մեծ հնարավորություններ ի հայտ եկան սովետաամերիկյան առևտրի զարգացման ուղղությամբ։ Ամերիկյան մի շարք խոշորագույն ֆիրմաներ իրենց կառուցվածքներում Սովետական Միության հետ առևտրի հատուկ ապարատ ստեղծեցին և իրենց ներկայացուցչությունները բացեցին Մոսկվայում։ Այս ուղղությամբ գործում են նաև սովետական կազմակերպությունները։ Սովետաամերիկյան տնտեսական և գիտատեխնիկական կապերի զարգացման հեռանկարները, չնայած և ձգտում են դրան խանգարել, բավական մեծ են[4]։

ԳՏՀ-ի պայմաններում կարևոր նշանակություն է ստանում միջպետական տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության ուղղությամբ երկարաժամկետ կողմնորոշումը։ Սոցիալիստական և կապիտալիստական պետությունների միջև հարաբերությունները բավականին արագ տեմպերով զարգացնելու համար անհրաժեշտ է կատարելագործել սոցիալ-տնտեսական տարբեր սիստեմներին պատկանող պետությունների համար ընդունելի տնտեսական կապերի տարբեր ձևե-



րը։ ԳՏՀ-ի պայմաններում փոխշահավետ համագործակցության համար մեծ հեռանկարներ են բացում մասնավորապես կոոպերացման տարբեր ձևերը։ 70-ական թվականները դրանց իրականացման տպավորիչ քիչ արդյունքներ չեն տվել։ Իր արդյունքով պատմական նշանակություն ունեցավ «Սոյուզ» և «Ապոլոն» ունիկալ ապարատների կցման փորձը տիեզերքում, ինչպես նաև տիեզերական տարածությունում Ֆրանսիայի, Շվեդիայի և մի շարք կապիտալիստական երկրների հետ ՍՍՀՄ-ի համագործակցությունը[5]։ 1971-ից մինչև 1975 թվականը ՍՍՀՄ-ի և Ճապոնիայի միջև ապրանքաշրջանառությունն ավելացավ ավելի քան երկու անգամ։ 1971 թվականին այն կազմեց 2120 մլն. ռուբլի։ Իրականացվում է Սիբիրի և Հեռավոր Արևելքի բնական ռեսուրսների մշակման հարցում Ճապոնիայի մասնակցությամբ խոշորամասշտաբ համաձայնությունների ծրագիր[6]։

Միանգամայն հասկանալի է, որ սոցիալտնտեսական հակադիր սիստեմներով երկրների միջև գիտատեխնիկական և տնտեսական համագործակցության զարգացման վերոհիշյալ հսկայական պոտենցիալ հնարավորությունները կարող են իրագործվել միայն խաղաղության պահպանման և ամրապնդման միջոցով։ Գիտատեխնիկական հեղափոխությունն ուղեկցվում է տեխնիկայի արագ զարգացմամբ։ Այս պայմաններում չի կարելի թույլ տալ, որպեսզի նրա նվաճումներն օգտագործվեն ռազմաքաղաքական առճակատման, «սառը պատերազմի», միլիտարիզմի, ռասիզմի գաղափարների պրոպագանդման համար, ինչպես այդ ձգտում են անել մասսայական ինֆորմացիայի բուրժուական միջոցների բազմաթիվ օրգաններ, հակառակ ժողովուրդների կամքի, միջազգային իրավունքների նորմաների, ի հակադրություն Եվրոպայում անվտանգության և համագործակցության մասին Հելսինկյան համաձայնագրերի։ Այսպիսով գիտատեխնիկական նվաճումները, անտարակույս, պետք է օգտագործվեն միայն միջազգային փոխշահավետ համագործակցության զարգացման, ժողովուրդների միջև փոխըմբռնման և միմյանց ներքին գործերին պետությունների միջամտությունը թույլ չտալու նպատակներով։

ԳՏՀ-ի շնորհիվ առաջացած պրոբլեմները դրականորեն լուծելու համար անհրաժեշտ է մշակել իրավական նոր նորմաներ պետությունների փոխգործողությունների իրավաբանական հիմքը կատարելագործելու, ցամաքում, տիեզերքում, օվկիանոսում և ծովերում նրանց իրավունքներն ու պարտականությունները սահմանելու համար։ Այս գործում շոշափելի ներդրում կարող է ունենալ նաև Միավորված ազգերի կազմակերպությունը, որի ակտիվ դերը միջազգային անվտանգության ամրապնդման ուղղությամբ հանուն խաղաղության շահերի և մարդկության զարգացման ԳՏՀ-ի արդյունքների օգտագործման համար բարենպաստ հնարավորությունների ստեղծման կարևորագույն պայմաններից է։

Ամբողջ վերոշարադրյալը վկայում է, որ 70-ական թվականների սկզբում միջազգային հարաբերությունները որակապես նոր փուլ են մտել։

ՍՄԿԿ XXIV համագումարին ՍՄԿԿ ԿԿ հաշվետու զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը նշում էր, որ «արդի կապիտալիզմի առանձնահատկությունները զգալի չափով բացատրվում են նրանով, որ նա հարմարվում է աշխարհի նոր իրադրությանը... Մոնոպոլիաները գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները լայնորեն օգտագործում են իրենց դիրքերն ամրապնդելու, արտադրության արդյունավետությունը բարձրացնելու և զարգացման տեմպերն արագացնելու, աշխատավորների շահագործումն ու նրանց ճնշումը սաստկացնելու համար»[7]։ Այս դրույթը լրիվ չափով և, թերևս, առաջին հերթին, վերաբերում է ամերիկյան կապիտալիզմին։

Համաձայն պրեզիդենտ Նիքսոնի 70-ական թվականների սկզբին առաջարկած «նոր տեխնոլոգիական քաղաքականության» դոկտրինայի, արդի միջազգային հարաբերությունների համար բնորոշ է նոր պրոբլեմների ի հայտ գալը, որոնցից շատերը «ժամանակակից տեխնոլոգիայի ծնունդ են»։ Այդ պրոբլեմները հաշվի չեն նստում աշխարհագրական և գաղափարական սահմանների հետ, ուստի աշխարհը գտնվում է «աճող փոխկապվածության» պրոցեսում, որը նոր մակարդակի է բարձրացնում միջազգային համագործակցության մասին հարցը[8]։ Գիտության և տեխնոլոգիայի նվաճումից առաջացրված պրոբլեմներն ու հնարավորություններն ան-



դրադառնում են միջազգային հարաբերություններում մեր ակտիվության առավել զգալի մասի վրա»[9],— նշել է ԱՄՆ-ի պրեզիդենտը։

70-ական թվականներին ԱՄՆ-ը առանձնակի ակտիվությամբ է ձգտում խաղալ շահագործման միջազգային սիստեմի երաշխավորողի և պահպանիչի դերը, գործելով ինչպես հին, այնպես և նոր մեթոդներով՝ իր միջազգային քաղաքական, ռազմական և տնտեսական դիրքերն ամրապնդելու համար։ Նա փորձում է միջիմպերիալիստական հակասությունները իր օգտին լուծել և զարգացող երկրների էկոնոմիկան պահել տնտեսության կապիտալիստական սիստեմից կախյալ վիճակում։ ԱՄՆ-ի կառավարությունն առավելագույն չափով է օգտագործում գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները երկու սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի միջև մրցությունում։

Գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները հօգուտ ԱՄՆ-ի շահերի օգտագործելու ձգտումը բնորոշ էր հանրապետականների ադմինիստրացիայի քաղաքականությանը։ 1970 թվականի փետրվարի 18-ին պրեզիդենտ Նիքսոնը կոնգրեսին հղած իր ուղերձում, օրինակ, ասում էր. «Գիտության և տեխնիկայի աննախադեպ առաջընթացը, ինչպես նաև բնակչության բուռն աճը, կապի նոր միջոցների ստեղծումը և մեր գիտելիքների ընդլայնումը միջազգային համագործակցության նոր ձևեր են պահանջում»[10]։ Կոնգրեսին 1971 թվականի փետրվարի 25-ին հղած իր մյուս ուղերձում պրեզիդենտը կրկին ընդգծում էր, որ «մարդկության շահերը կարող են առավելագույն չափով պաշտպանվել միայն ինֆորմացիայի լայն փոխանակման միջոցով, և վերջին հաշվով մենք (ԱՄՆ-ը.— Ա. Գ.) դրանից պակաս օգուտ չենք ստանա, քան ցանկացած ուրիշ պետություն»[11]։

Ի զարգացումն արտաքին քաղաքական այդ դոկտրինայի առաջ քաշվեց միջազգային ասպարեզում «տեխնոլոգիական լայն փոխանակման» կոնցեպցիան։ Ընդունելով, որ գիտական և տեխնիկական գիտելիքների այդ կարգի փոխանակումը որոշակիորեն խոչընդոտվում է «անվտանգության նկատառումների հետ կապված ակնհայտ դժվարությունների հետևանքով»[12], այդ շրջանում ԱՄՆ-ի կառավարությունը բավական

վճռականորեն էր հանդես գալիս ընդդեմ ամերիկյան այն ներկայացուցիչների, ովքեր «տեխնոլոգիական լայն փոխանակման» կոնցեպցիայի կողմնակից չէին։ «Անվտանգության շահերից բխող մոտեցումներից մեկը,— նշել է ԱՄՆ-ի պրեզիդենտը,— «Մաժինոյի գծի» կոնցեպցիայի ոգով մոտեցումն է, որը մյուս պետություններին հատուկ գիտելիքների հաղորդման սահմանափակման նպատակ է հետապնդում։ Այդ կոնցեպցիան հիմնվում է այն բանի վրա, որ գիտատեխնիկական առավելությունը ազգային նվաճում է, ուստի պետք է խնամքով պահպանվի մյուսներից։ Մյուս մոտեցումը հանգեցվում է նրան, որպեսզի մեր առավելությունը դիտենք որպես մի նվաճում, որի միջոցով կարելի է մյուս պետությունների հետ արդյունավետ համագործակցություն զարգացնել, նպաստելով գիտատեխնիկական գիտելիքների բաց փոխանակման ուղղությամբ մարդկության զարգացման համար պայմանների ստեղծմանը»[13]։

Գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները ԱՄՆ-ի արտաքին քաղաքական նպատակներին ծառայեցնելու ամերիկյան կառավարության ձգտումը, իհարկե, ինչ-որ նոր երևույթ չէր։ Անտարակույս նախկինում էլ ամերիկյան կապիտալիզմը ձգտում էր օգտագործել գիտության և տեխնիկայի լծակներն իր ազդեցությունը աշխարհում ամրապնդելու համար։ Դեռևս պրեզիդենտ Հ. Տրումենը 1949 թվականի հունվարի 20-ին հայտարարում էր. «Մենք պետք է կանգնենք նոր ծրագրի իրականացման ուղու վրա, որը հնարավորություն կտա մեր գիտական նվաճումներն ու արդյունաբերական առաջընթացն օգտագործել թույլ զարգացած ռեգիոններում վիճակը բարելավելու համար»[14]։ Դրանք կեղծ, դեմագոգիկ խոստումներ էին։

Ամերիկյան իմպերիալիզմը 50-ական թվականների շեմին կանգնեց ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ ռազմաքաղաքական առճակատման ուղու վրա։ Այդ պայմաններում նրա բոլոր միջոցառումները, այդ թվում նաև Եվրոպայում և զարգացող երկրներում, ձևականորեն ուղղված էին այսպես կոչված «քաղաքական կայունացմանը»։ Իրականում ԱՄՆ-ի կառավարությունը ձգտում էր համաշխարհային գոր-



ծերում ամերիկյան կապիտալիզմի հեգեմոնիայի ամրապնդման գլոբալ պլանների իրագործմանը։

Քեննեդիի կառավարությունը 60-ական թվականների սկզբին հայտարարեց, որ մտադրություն ունի վերակառուցել ամերիկյան օգնությունը զարգացող երկրներին այն հաշվով, որ այն նպաստի նրանց «տնտեսական զարգացմանը»։ Պրեզիդենտ Քեննեդին, քննադատելով հանրապետականների ադմինիստրացիայի գործողություններն այդ բնագավառում, խոստացավ, որ այսուհետև ԱՄՆ-ը անցկացնելու է ազատագրված երկրների «տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագիր»։ «Նոր սահմանագծերի» քաղաքականության հեղինակի մտահղացմամբ, ամերիկյան այդ կարգի քաղաքականությունը պետք է աջակցեր զարգացող երկրների հետամնաց էկոնոմիկայի, նրանց տեխնոլոգիական հիմքի զարգացմանը։ Ներկայումս կարելի է արձանագրել, որ այդ խոստումները չկատարվեցին։

Ետպատերազմյան շրջանում ԱՄՆ-ը օտարերկրյա պետություններին 143 մլրդ. դոլ. գումարով օգնություն է հատկացրել[15]։ Չնայած այն բոլոր խոստումներին, որ դա ուղղվելու է տնտեսական զարգացման կարիքներին, գործնականում նրա առյուծի բաժինը ծախսվեց «ռազմական օգնության», ռեակցիոն ռեժիմների պաշտպանության, ազգային-ազատագրական շարժումների դեմ պայքարի վրա։ Բայց նույնիսկ նրա այն մասը, որն այսուամենայնիվ օգտագործվում է տնտեսական կարիքների և գիտատեխնիկական զարգացման համար, ընդհանուր առմամբ օգուտ չբերեց մյուս երկրներին, քանի որ նրա արդյունավետությունը զրոյի էր հավասարվում գաղութատիրական և նեոգաղութատիրական իմպերիալիստական քաղաքականության հետևանքով։

70-ական թվականների սկզբին գաղութատիրության, իսկ այնուհետև նեոգաղութատիրության «հոգսերից» ուժասպառ եղած զարգացող երկրների տնտեսական վիճակը մնում էր ծանր։ Ըստ որոշ տվյալների, Ասիայում մեկ շնչին հասնող տարեկան շահույթը կազմում էր ընդամենը 110 դոլ., Աֆրիկայում՝ 130 դոլ., Մերձավոր Արևելքում՝ 330 դոլ., Լատինական Ամերիկայում՝ 370 դոլ.[16]։ Ընդ որում, այդ միջին տվյալների ետևում թաքնված են նաև քաղցի եզրին ապրող

մարդկանց եկամուտները։ Ամերիկյան գիտնական Ջոն Ռեյլին գտնում է, որ զարգացող երկրներում ստեղծված վիճակը սարսափ է ներշնչում, քանի որ «միլիոնավոր մարդկանց ռեալ կենսամակարդակը 1971 թ. ավելի ցածր է, քան 1960 թվականին»։ Նրա հաշվարկներով, եթե 70-ական թվականների տարեկան ազգային արտադրանքը զարգացող երկրներում նույնիսկ կրկնապատկվի և 1980 թվականի նախօրյակին հասնի 600 մլրդ. դոլարի, ապա նույնիսկ այդ դեպքում «հարյուր միլիոնավոր մարդիկ ծայրահեղ աղքատության մեջ են մնալու»[17]։ Նույնիսկ 2000 թվականի նախօրյակին, կանխագուշակում էր ամերիկյան գիտնականը, և նա միակը չէր, շատերն էին այդպես կանխատեսում, զարգացող երկրների բնակչության 50%-ից ավելին մեկ շնչին տարեկան 200 դոլարից պակաս եկամուտ է ունենալու։ Եվ կյանքի այդչափ ցածր կենսամակարդակը նախագուշակվում էին (նկատի ունենալով զարգացող երկրներում բնակչության աճը) 2800 մլն. մարդու համար[18]։

Ավելին, կանխագուշակումների համաձայն զարգացող երկրներում մոտակա տասնամյակներում արագորեն աճելու է գործազրկությունը։ Միայն 70-ական թվականների ընթացքում զարգացող երկրներում 170 մլն. մարդ լրացնելու է աշխատանք որոնողների թիվը։ Ըստ որում, ինչպես ընդունում են Արևմուտքում, «գործազրկությունն առանձնապես լուրջ վտանգ է ներկայացնում քաղաքական կայունացման համար»[19]։ Իսկ ԱՄՆ-ի պաշտպանության նախկին մինիստր, Միջազգային բանկի ներկայիս պրեզիդենտ Ռ. Մակնամարան էլ ավելի անկեղծ է։ Նա «դեմոգրաֆիական պայթեցման» հետ մեկտեղ կանխագուշակում է նաև «գործազրկության պայթեցումների» խիստ ավելացում[20]։ Դժվար չէ նկատել, որ զարգացող երկրների համար այդ բոլոր մռայլ կանխագուշակումները Արևմուտքում, այդ թվում և ԱՄՆ-ում, արվում են բոլոր երկրներում, այդ թվում նաև զարգացող, կենսամակարդակի բարձրացման պրոբլեմը լուծելու գիտատեխնիկական հեղափոխության հնարավորությունների մասին հանգստացուցիչ հավաստիացումների հետ միաժամանակ։ Այդ երկրների տնտեսական զարգացման հեռանկարային կանխագուշակումը բացահայտորեն հակասում է նրա վրա գիտա-



տեխնիկական առաջընթացի ազդեցության հնարավորությունների լավատեսական բնույթին։

ԱՄՆ-ը, ինչպես ցույց տվեց նրա քաղաքականությունը 70-ական թվականներին, որպես անկյունաքար է դարձրել զարգացող երկրների հետ հարաբերությունների արդեն կազմավորված, չնայած և փոքր-ինչ «մոդեռնացված» սխեմի կայունացման անհրաժեշտությունը, որի դեպքում նախ և առաջ պետք է հաշվի առնվեին սեփական արտաքին քաղաքական ստրատեգիայի շահերը, ամրապնդվեին ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի դիրքերը։ Ինչ վերաբերում է Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներին, ապա նրանք շահագրգռված են ստեղծել հարաբերությունների այնպիսի սխեմ (այդ մասին նրանք բազմիցս հայտարարել են), որը նախ և առաջ բավարարեր իրենց շահերը։ Զարգացող երկրների շահերը պաշտպանող այդ գծի կենսագործումը հնարավոր է միայն նրանց պետական սուվերենության ամրապնդման և իմպերիալիստական քաղաքականության դեմ պայքարում ջանքերի համախմբման միջոցով, մինչդեռ մյուս, իմպերիալիստական գիծը իր նպատակներն իրականացնելու համար ենթադրում է պետությունների սուվերենության էրոզիա և անգամ նրան՝ ձևական բնույթ տալը։ Ըստ որում, վերջին հանգամանքը զարգացող երկրների տնտեսական և սոցիալական առաջընթացի ճանապարհի համարյա «գլխավոր արգելքն է» հայտարարվում։

Միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի «տեխնոլոգիական նոր քաղաքականության» դոկտրինայի շրջանակներում գործող գործոնների բազմազանությամբ հանդերձ, նրանց բոլորին մի ընդհանուր գաղափար է միավորում։ Ըստ որում միջազգային հարաբերություններին նրանցից յուրաքանչյուրի նոր մոտեցման սահմանը նախ և առաջ կախված է նրանից, թե գաղափարները սնուցող գործոնները որքանով են հեռանում «սառը պատերազմի» կանխադրույթներից և «ուժի դիրքերից» քաղաքականությունից։ Ջ. Քարտերի պրեզիդենտության ժամանակ ամերիկյան կառավարության ձեռնարկած մի շարք քայլերը կրկին հիշեցնում են այդ ռազմատենչ կանխադրույթները, մասնավորապես, ԱՄՆ-ի ռազմարդյունաբերական կոմպլեքսի ձգտումների մասին, որն իր մարդիկ ունի նաև գի-

տական աշխարհում և ուզում է ստրատեգիական սպառազինությունների մրցավազքի նոր շրջան փաթաթել ԱՄՆ-ին ու ՍՍՀՄ-ին։

«Սառը պատերազմի» արտաքին քաղաքական հին դրույթներին ամենից մոտ է կանգնած «տեխնոլոգիական պատերազմի» տեսաբանների դպրոցը։ Նրա ներկայացուցիչները պաշտպանում են սպառազինությունների անզուսպ մրցավազքի ծավալումը ռազմական բնագավառում գիտատեխնիկական նվաճումների օգտագործման միջոցով։

«Տեխնոլոգիական պատերազմի» դպրոցի տեսաբանների թվին էին դասվում, օրինակ, ամերիկյան բավականին հայտնի տեսաբաններ Ս. Պոսոնին և Դ. Պուրնելը։ 1970 թվականին ԱՄՆ-ում լույս տեսավ նրանց «Տեխնոլոգիական ստրատեգիան։ Հաղթանակը վճռական պատերազմում» աշխատությունը[21], որում հեղինակները ԱՄՆ-ին կոչ էին անում չհրաժարվել ռազմական նպատակներով գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների օպտիմալ օգտագործման միջոցով ՍՍՀՄ-ի նկատմամբ վճռական առավելության հասնելու ձգտումից։ «Միացյալ Նահանգները գտնվում են պատերազմական վիճակում,— պնդում են Պոսոնին և Պուրնելը։— Այդ պատերազմը թելադրվում է միջազգային ասպարեզում Սովետական Միության առկայությամբ և տեխնոլոգիական պայքարի օրենքներով։ Վերջինի ելքը կվճռի Ամերիկայի ճակատագիրը։ «Տեխնոլոգիական պատերազմում հաղթանակը,— այնուհետև ազդարարում էին նրանք,— սոցիալիզմի և կապիտալիզմի միջև կոնֆլիկտի բոլոր փուլերում առավելություն է նշանակում, որը կարող է նվաճվել ինչպես ջերմամիջուկային զենքի միջոցով հակառակորդի ոչնչացման, այնպես և նրան ծնկի բերելու միջոցով... Առանց գերազանցող տեխնոլոգիայի մեր գոյման ստրատեգիան անիմաստ է դառնում։ Առանց տեխնոլոգիական առավելությունների մենք չենք կարող մարտնչել և հաղթել մեր երկրից հազարավոր կիլոմետրեր հեռու տեղի ունեցող փոքր պատերազմներում կամ կանխել Եվրոպայի կամ Ճապոնիայի օկուպացումը»[22]։ Այսպիսով՝ «ուժի դիրքերից» քաղաքագետների դոգմաների մի ամբողջ փունջ կրկին իբրև սկզբունքորեն «նոր խոսք» էր ներկայացվում



ի հիմնավորումն ՍՍՀՄ-ի նկատմամբ ԱՄՆ-ի ռազմական առավելություններն ապահովելու կոչված ստրատեգիայի։

Ամերիկյան մի շարք տեսաբաններ 70-ական թվականների առաջին կեսին դեռևս «սառը պատերազմի» դիրքերում էին, գործնականում լայնորեն պրոպագանդելով սոցիալիզմի երկրների հետ ԱՄՆ-ի «ոչ ռազմական առճակատման» գաղափարը։ Այդ կարգի մոտեցման մեջ գիտատեխնիկական հեղափոխությունը դիտվում էր որպես լծակ, որի միջոցով ԱՄՆ-ը նախ և առաջ պետք է ձգտեր հասնել սոցիալիստական ընկերակցության պետությունների «ողողահարման», «սելեկտիվ», «ընտրովի մոտեցմամբ» նրանց միմյանցից բաժանման։ Հավաստելով, որ մարքսիզմը «ի վիճակի չէ հաղթահարել XX դարի զարգացած հասարակարգի պրոբլեմները», այդ տեսաբանները ԱՄՆ-ի կառավարությանը կոչ էին անում այնպիսի քաղաքականություն վարել, որը «մանևրելու» քաղաքական ճնշման, շանտաժի, ճգնաժամերի առաջացման համար բավականին ազատ տարածություն է թողնում»[23]։ «Ոչ ռազմական առճակատման» կողմնակիցները հրաժարվում էին ընդունել նաև Եվրոպայում ստեղծված իրադրությունը։ Նրանց համար առևտուրը, գիտատեխնիկական առաջընթացն ընդամենը լծակներ էին կապիտալիզմի վերականգնման համար պայքար մղելու այնտեղ, որտեղ այն հուշ է դարձել։ Ըստ էության, հենց սոցիալիզմի երկրների, առաջին հերթին ՍՍՀՄ-ի հետ ԱՄՆ-ի «ոչ ռազմական առճակատման» կողմնակիցներն էին գործնականում հանդես գալիս սոցիալիստական երկրների հետ կապիտալիստական պետությունների իրական փոխշահավետ տնտեսական և գիտատեխնիկական կապեր հաստատելու դեմ։ Առանց «պայթեցման բռնկիչի» այդ կապերը նրանց պարզապես չէին հետաքրքրում։ Կարելի է, այսպիսով, խոսել կանխակալ, սոցիալիզմի երկրների հետ՝ նրանց զարգացման օրինաչափությունները ըմբռնել չկարողանալու պատճառով յուրատեսակ հաշիվներ մաքրելու ձգտման մասին։

Ցավոք, նման հնացած մոտեցումը նորից է միջազգային կյանքի ասպարեզ հանվում ԱՄՆ-ի մի շարք բարձրաստիճան գործիչների կողմից։ Դրա հետ մեկտեղ նրանք քիչ հակառակորդներ չունեն, որոնք միջազգային հարաբերությունների, ՍՍՀՄ-ի հանդեպ իրենց մոտեցումը հիմնում են ԱՄՆ-ի ազ-

գային շահերը, աշխարհում ռեալ հարաբերակցությունը հաշվի առնող այլ կոնցեպցիաների վրա։ Այս կապակցությամբ կարելի է որպես օրինակ բերել Կոլումբիական համալսարանին կից ինֆորմացիոն կենտրոնի ղեկավար Զ. Հաթամիի ելույթը արտասահմանյան գործերի գծով սենատի հանձնաժողովում 1977 թվականի սեպտեմբերին։ Նա նշում էր, որ սովետաամերիկյան հարաբերությունները «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության առանցքն են»։ Հաթամին այն կարծիքը հայտնեց, որ վերջին ժամանակներս սովետաամերիկյան հարաբերությունները նկատելիորեն վատացել են, նա քննադատեց նրանց, ովքեր «գոյություն ունեցող վտանգի գծով կոմիտեի» նման կազմակերպություններում «հիստերիկ նախազգուշացումներ» են տեղում Սպիտակ տան վրա, կոմիտե, որը մերժում է ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունների խելամիտ մոտեցման հնարավորությունը։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վրա ԳՏՀ-ի հետևանքները վերլուծող Ամերիկայի քաղաքական մտքի ուրիշ տարածված հոսանքներից է «գլոբալ կոնվերգենցիայի» կոնցեպցիայի կողմնակիցների դպրոցը։ Նրա շարքերում մեծ թվով գիտնականներ և քաղաքագետներ կան, այդ թվում նաև այնպիսիները, որոնք նախկինում հենվում էին «ուժի դիրքերից» քաղաքականության, սպառազինությունների մրցավազքի, մի խոսքով սոցիալիզմի երկրների, առաջին հերթին ՍՍՀՄ-ի հետ ռազմաքաղաքական առճակատման վրա։ Գիտակցելով այդ ուղու անհեռանկարությունը, նրանք այլ ճանապարհ ընտրեցին։ Այսօր նրանց ուշադրության կենտրոնում են այն կոնցեպցիաները, որոնք կոչված են հիմնավորելու ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ակտիվության նոր ուղղությունները միջազգային ասպարեզում։ Նրանք տեխնոլոգիան, «գիտական հայտնագործությունների ուժեղ ազդեցությունը» զարգացած երկրների «ազգային հզորության հիմնական աղբյուրը» և զարգացող երկրների «տնտեսական աճի լավագույն հույսն են» համարում։ Գիտատեխնիկական առաջընթացը, արդի տեխնոլոգիան «անկախ փոփոխական մեծություններ», «XX դարի քաղաքակրթության հիմք» են ազդարարվում[24]։ Այստեղից էլ հետևում է եզրակացություն, որ տեխնոլոգիան վճռականապես ազդում է ոչ միայն պետությունների սոցիա-



լական կառուցվածքի, այլև ընդհանրապես բոլոր միջազգային հարաբերությունների կառուցվածքի վրա։

Միջազգային հարաբերությունների վրա գիտության և տեխնիկայի ազդեցության պրոբլեմի հանդեպ նման մոտեցումն իր հիմքում ամենևին էլ նոր չէ, քանի որ դեռևս XIX դարում, արդյունաբերական կապիտալիզմի դարաշրջանում, բուրժուազիայի գաղափարախոսները նույնպես ակտիվորեն ապացուցում էին, որ տեխնոլոգիան «ամեն տեսակ առաջընթացի շարժիչն է», «կարող է լուծել սոցիալական պրոբլեմների մեծ մասը», «ազատագրել մարդուն հասարակության ճիրաններից» և ընդհանրապես «մշտական բարեկեցության» աղբյուր է հանդիսանում[25]։ Այդ բոլոր պնդումները նպատակ էին հետապնդում շեղել աշխատավորներին դասակարգային պայքարի պրոբլեմներից, նկարագրել պետությունների, մարդկային հասարակության զարգացման ապագան, ելնելով տեխնոլոգիական ուտոպիայից։

Անցած հարյուրամյակը քար քարի վրա չթողեց այն կոնցեպցիաներից, որոնք բացարձականացնում էին մարդկային հասարակության վրա գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությունը, նենգափոխում գիտական, մարքսիստական մոտեցումը մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակարգում արտադրողական ուժերի, արտադրության միջոցների խաղացած դերին, որի բոլոր արատներն իբր վերացնելու է գիտատեխնիկական առաջընթացը։ Ավելին, որպես կապիտալիստական երկրներում ստեղծված իրական վիճակի արտացոլում, ներկայումս Արևմուտքում ծնունդ են առել այնպիսի կոնցեպցիաներ, որոնք գիտատեխնիկական առաջընթացի հետևանքները մռայլ գույներով, գիշատիչ հրեշի կերպարանքով են պատկերում, որն ամեն գնով պետք է «սանձահարվի» մարդկությունը կործանումից փրկելու համար։ «Տեխնոլոգիական դժոխքի» պատկերները, որտեղ «մարդը զրկվելու է աշխատանքից», «անձնական կյանքից» և անգամ «մարդկային արժանապատվությունից», դարձել են սոցիալական և քաղաքական, ինչպես նաև միջազգային հարաբերությունների բնագավառում արդի բուրժուական բազմաթիվ աշխատությունների մշտական ուղեկիցը։ Սակայն տեսական մտքի անգամ այդ, տեխնոլոգիայի «ուտոպիստներից» առաջին հայացքից

տրամագծորեն հակառակ ուղղությունը ըստ էության ձուլվում է վերջիններիս հետ, երբ գործը հասնում է պետական քաղաքականության իրականացնող մարդկանց հասցեագրվող գործնական եզրակացություններին և ցանկություններին։ Եվ այդ տեղի է ունենում այն պատճառով, որ, ինչպես և «ուտոպիստները», «հոռետեսներն» իրենց ենթադրություններում տեսականորեն ելնում են վերդասակարգային կատեգորիաներից, իսկ գործնականում՝ տարբեր բուրժուական երկրների պետական մոնոպոլիստական կապիտալիզմի շահերից։

Իսկ ինչի՞ են կոչում այսօր աշխարհի բոլոր պետություններին «գլոբալ կոնվերգենցիայի» դպրոցի կողմնակիցները։ «Համաշխարհային քաղաքականության մեջ տեղի ունեցող վտանգավոր բախումները պետք է իրենց տեղը զիջեն ըստ տեխնոլոգիական առաջընթացի ուժի վրա հիմնված համընդհանուր հաշտեցմանը»։ 60-ական թվականներին այդ տեսական պլատֆորմի առաջին հիմնավորողներից մեկն էր կանադացի գիտնական Մ. Մաքլյուենը[26]։ Հետո երևան եկան այդ տեսության տասնյակ, հարյուրավոր կողմնակից բուրժուական տեսաբաններ։ Ըստ որում նրանց տեսական հարձակումների հիմնական թիրախ է դառնում միջազգային իրավունքի այնպիսի ինստիտուտ, ինչպես պետական սուվերենությունը։

Ու. Քինթներն ու Գ. Սիկերմանը, օրինակ, հավաստում են, որ գիտատեխնիկական առաջընթացը «պետք է հանգեցնի պետությունների սուվերենության էրոզիայի և միջազգային սիստեմի համապատասխան փոփոխությունների»[27]։ Մոտավորապես նույն գիծն է անցկացվում Փրինստոնյան համալսարանի հրատարակած՝ «Միջազգային իրավակարգի ապագան»[28] լուրջ աշխատությունում, որտեղ, մասնավորապես, վերլուծության է ենթարկվում գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա։ «Ազգային մրցակցությունը», հայտարարում են ամերիկյան հայտնի գիտնականներ Ս. Բլեքը և Ռ. Ֆոլկը, իր դարն ապրել է և այլևս չի կարող «համընդհանուր առաջընթացի հիմնական շարժիչը լինել»[29]։ Նրանք առանձնապես անհուսալի են հայտարարում նախ և առաջ զարգացող երկրների թվից ու մեծ պետությունների վիճակը, որոնք, ինչպես նշում են նրանք, ի վիճակի չեն «ժամանակակից արդյունաբերություն ստեղծել



աշխարհի արդյունաբերական առաջատար երկրների հետ մրցակցելու շրջանակներում։ Դրանից հետևում է, որ նրանք պետք է «համագործակցեն» վերջիններիս հետ, քանի որ միայն այդ դեպքում, «միջազգային բարելավված իրավակարգի» պայմաններում, մնացածները շանս ունեն բարձրացնելու իրենց բնակչության կենսամակարդակը։

Գիտատեխնիկական առաջընթացի պտուղների հնարավոր մեծ բաժնին տիրելու համար պայքարը պետք է, ինչպես գտնում են Բլեքը և Ֆոլկը, «նսեմացնի սոցիալիզմի և կապիտալիզմի միջև մրցակցության նշանակությունը»[30]։ «Միջազգային բարելավված իրավակարգի» մեջ Բլեքը և Ֆոլկը պատրաստակամորեն ներգրավում են մոնոպոլիստական միջազգային ընկերությունները, որոնց գործունեությունը, ինչպես գտնում են նրանք, պետական իշխանության կապանքներով չի սահմանափակվում և պետք է կարգավորվի «ընկերությունների ինչ որ մի միջազգային իրավունքով»։ Վերջիններն այսօրվա իրականությունը «համաշխարհային ընկերակցության» շահերին հարմարեցնելու «նոր ձև» են հայտարարվում[31]։

Իր գիտատեխնիկական նվաճումները կապիտալիստական մյուս երկրների նույնանման նվաճումների ինտեգրացման ուղղությամբ ԱՄՆ-ի կառավարության և մոնոպոլիաների ջանքերը կյանքի կոչող գործոններից մեկը օտարերկրյա էկոնոմիկա ամերիկյան ներթափանցման մասշտաբներն են։ 1970 թվականին ԱՄՆ-ի կապիտալ ներդրումներն արտասահմանում հասան 90 մլրդ. դոլարի։ Արտասահմանյան կապիտալ ներդրումները ԱՄՆ-ում նույնպես բավական մեծ գումար՝ 40 մլրդ. դոլար կազմեցին[32]։ Ամերիկյան հաշվարկներով, 60—70-ական թվականների սահմանագծում ԱՄՆ-ի կողմից վերահսկվող ամերիկյան ֆիրմաների արտադրանքի արժեքը երեք-չորս անգամ գերազանցում էր ամերիկյան արտահանման ընդհանուր ծավալը[33]։ Արտասահմանյան կապիտալ ներդրումներից ամերիկյան մոնոպոլիաների ստացած շահույթը գերազանցում էր արտաքին առևտրից եկող ԱՄՆ-ի շահույթները։ Ի լրումն այդ բոլորի, բազմազգ մասնավոր ընկերությունները, որպես կանոն, աճում էին այն երկրների ազգային էկոնոմիկայի աճի տեմպերը երկու անգամ գերազանցող տեմպերով, որտեղ նրանք գործառնություն էին կատարել[34]։

Այս բոլորը ամերիկյան քաղաքագետներին ու գիտնականներին հանգեցրեց այն եզրակացության, որ «այդ ֆենոմենալ տենդենցի քաղաքական, ինչպես նաև տնտեսական հետևանքները մեծ ազդեցություն են գործելու միջազգային հարաբերությունների վրա մեր հարյուրամյակի ամբողջ ընթացքում»[35]:

Մյուս երկրների էկոնոմիկա ներխուժելու համար ԱՄՆ-ի կողմից օգտագործվող կարևորագույն միջոցներից մեկը դարձան, այսպիսով, «բազմազգ կորպորացիաները»: Ավելի պարզորոշ է երևում, որ հենց այդ միջոցն է ԱՄՆ-ի կառավարության և գործարար աշխարհի կողմից դիտվում որպես կարևորագույն միջոց գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում ամերիկյան կապիտալիզմի դիրքերը միջազգային շուկաներում ամրապնդելու համար: Իհարկե, նախկինում, իմպերիալիզմի դարաշրջանի սկզբին, նույնպես միջազգային ասպարեզում մասնավոր կապիտալիստական ընկերություններ էին գործում, օրինակ, Օստ-Ինդկական ընկերությունը: Բուրժուական գաղափարախոսներն ու քաղաքագետները դեռևս այն ժամանակ պնդում էին, որ այդ գաղութատիրական ընկերություններն Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում հանդիսացել են առաջընթացի շարժիչ: Այդպիսի պնդումներն իրականությանը չէին համապատասխանում, ինչպես նաև բուրժուական արդի հակագիտական այն տեսությունները, որոնք «բազմազգ կորպորացիաները» այն գործիքն են համարում, որի միջոցով «աշխարհը բարեկեցության նոր մակարդակի է հասնելու կառավարման գիտական մեթոդների, տեխնոլոգիայի բնագավառում նորագույն նվաճումների ավելի համաչափ և արագ տարածման, և իսկական միջազգային, մեծ մասշտաբների կապիտալի շուկա զարգացնելու միջոցով»[36]: Այնուհետև՝ «Միջազգային կորպորացիաները» «հասարակության սոցիալական կազմակերպման» այն ձևն են հռչակվում, որը վերջին հաշվով «հետինդուստրիալ աշխարհում» փոխարինելու է պետության ինստիտուտին: Այսպես, միանգամայն պարզորոշ է դառնում պետական սուվերենությունը «իր դարն ապրած» համարող «տեխնոլոգիական նոր քաղաքականության» դոկտրինայի և միջազգային մոնոպոլիաներում իշխող ամերիկյան կապիտալի շահերի փոխկապակցությունը:



Կապիտալիստական աշխարհում ԱՄՆ-ը առաջատար դիրքեր է զբաղեցնում գիտատեխնիկական առաջընթացն արտաքին քաղաքական նպատակներով օգտագործելու հարցում: Դրա հետ մեկտեղ իմպերիալիզմի դարաշրջանում գործող կապիտալիստական երկրների անհավասարաչափ զարգացման օրենքը ստիպում է ամերիկյան կապիտալիզմին ուշի-ուշով հետևել, որպեսզի մյուս կապիտալիստական երկրները (Ճապոնիա, ԳՖՀ, Ֆրանսիա) համաշխարհային ասպարեզում այնպիսի իրավիճակ չստեղծեն, երբ նրանց կշիռն ու ազդեցությունը, գիտատեխնիկական առաջընթացի արտաքին քաղաքական նպատակներով օգտագործման հնարավորություններն ավելի ծանրակշիռ լինեն, քան հենց իր ԱՄՆ-ի հնարավորությունները:

Ամերիկյան կապիտալիզմի անհանգստությունը համաշխարհային ասպարեզում իր դիրքերի մրցունակության համար բավական լուրջ հիմք ունի: Լավ հայտնի է, որ 1952-ից մինչև 1970 թվականը, օրինակ, Ճապոնիայի էկոնոմիկան ամերիկյանից ավելի արագ տեմպերով էր աճում: Եթե առաջինն ավելացել է 385%, ապա երկրորդն՝ ընդամենը 84%-ով: 60 թ. և 70-ական թվականի սկզբներին ամերիկյանից ավելի արագ տեմպերով էր աճում նաև Արևմտյան Գերմանիայի էկոնոմիկան[37]: «Ընդհանուր շուկայի» երկրների խմբավորման ուժեղացման հեռանկարը նրա ընդլայնման հաշվին ԱՄՆ-ի առջև արտաքին տնտեսական և ֆինանսական բնույթի նոր պրոբլեմներ դրեց: Այդ պայմաններում զարգացած երկրների միջև գիտատեխնիկական համագործակցության ընդլայնումն ամերիկյան կառավարությունը դիտում է որպես մի միջոց, որն ապագայում կօգնի չափավորել միջիմպերիալիստական պայքարում իրադարձությունների՝ ԱՄՆ-ի համար ցանկացած անբարենպաստ զարգացումը: Դա յուրատեսակ ստրատեգիական նպատակ է: Իսկ ԱՄՆ-ի անմիջական նպատակն է մյուս երկրների գիտատեխնիկական գիտելիքների նկատմամբ իր ճանապարհի էժանացումը և միաժամանակ գիտության և տեխնիկայի բնագավառում իր նվաճումները մյուսներին ավելի «թանկ» զիջելու ձգտումը:

«Նոր տեխնոլոգիական քաղաքականությունը» սկսած 70-ական թվականներից ԱՄՆ-ը իրականացնում է ոչ միայն

ամերիկյան մենաշնորհատական ընկերությունների, այլև իշխանության պետական լծակների միջոցով։ Առավելագույն չափով դա այժմ արտահայտվում է տիեզերական հետազոտությունների բնագավառում։ Ներկայումս ԱՄՆ-ի կառավարությունը հատուկ ուշադրություն է նվիրում 70-ական թվականներին մշակված պլանների իրագործմանը, որոնք ամբողջությամբ վերցրած «տիեզերական հավասարակշռված ծրագիր» են կոչվում[38]։

Նրա հիմնական գիծը գյուղատնտեսության և տրանսպորտի համար կապի օդերևութաբանության և նավագնացության ծառայությունների բարելավման գծով ամերիկյան տիեզերական ծրագրերի նվաճումները «երկրի վրա գործնականում օգտագործելու» ձգտումն էր։ Իր տիեզերական պլանները մշակելիս հանրապետական ադմինիստրացիան հատկապես ձգտում էր դրանց էժանացմանը։

Համաձայն ամերիկյան պաշտոնական տվյալների, 60-ական թվականների ընթացքում օդագնացության և տիեզերքի հետազոտության գծով Ազգային գործակալությունը (ՆԱՍԱ) մյուս երկրների հետ 250 մլն. դոլար արժողությամբ գիտահետազոտական նախագծեր էր կազմել։ Բնորոշ է, որ այդ նախագծերի վրա հենց իր ԱՄՆ-ի ծախսերը կազմեցին 20%՝ 50 մլն. դոլար[39]։ Տիեզերական իր ծրագրերը էժանացնելու նպատակով ԱՄՆ-ի կառավարությունը ձգտում է զգալիորեն ընդլայնել կապիտալիստական երկրների հետ համագործակցությունը։

70-ական թվականների սկզբին ԱՄՆ-ը տիեզերական հետազոտությունների և օդագնացության գծով 250 պայմանագիր կնքեց 35 երկրների հետ, որոնց համաձայն նա համագործակցում էր 70-ից ավելի երկրների գիտնականների հետ։ Արդեն իրագործված նախագծերի արժեքը, պաշտոնական տվյալներով, կազմում էր 200 մլն. դոլար։ Միացյալ Նահանգների ծախսերը 33 տոկոսից չէին անցնում[40]։

70-ական թվականներին ԱՄՆ-ը սկսեց մյուս երկրների հետ տիեզերքի բնագավառում համագործակցության ավելի լայն ծրագիր իրականացնել։ Ըստ ՆԱՍԱ-ի պաշտոնական տվյալների, այդ ծրագրի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ ԱՄՆ-ը խուսափում է մյուս երկրների հետ այնպիսի



պայմանագրեր կնքել, որոնք ընդհանուր բնույթ են կրում և պարտնյորներին չեն նպատակամղում տիեզերական տարածության հետազոտման կոնկրետ նախագծերի կենսագործմանը։ Մյուս երկրների հետ ԱՄՆ-ի միջազգային համագործակցության ծրագիրը այդ բնագավառում, այսպիսով, «գիտահետազոտական նախագծերի կոմպլեքսի» բնույթ էր կրում։ Յուրաքանչյուր նախագիծ նախատեսում էր նրա իրականացման գծով կողմերի պարտավորությունները, յուրաքանչյուր երկիր ֆինանսավորում էր աշխատանքի իր մասը։ Ընդ որում ԱՄՆ-ը ելնում էր այն սկզբունքից, որ այդ կարգի համատեղ նախագծերը չպետք է ֆինանսական ծանր բեռ լինեն ամերիկյան էկոնոմիկայի համար։

Անտարակույս, մյուս երկրների, գլխավորապես արևմտաեվրոպական և Կանադայի հետ համագործակցելու ԱՄՆ-ի կառավարության ձգտումը բացատրվում է ոչ այնքան էկոնոմիկայի, որքան քաղաքական բնույթի հեռուն տանող ստրատեգիական նկատառումներով, որի հիմքում ընկած է մյուս պետություններին փաթաթել ամերիկյան տիեզերական ծրագրերը, թույլ չտալ տիեզերքի հետազոտման գծով ազգային ծրագրերի զարգացումն այնտեղ։

Աշխատելով խոչընդոտել Արևմտյան Եվրոպայի երկրների ինքնուրույն տիեզերական ծրագրերի զարգացմանը, ԱՄՆ-ի կառավարությունն ինտենսիվ բանակցություններ սկսեց մի շարք արևմտաեվրոպական պետությունների հետ 70-ական թվականների ամերիկյան տիեզերական ծրագրերին նրանց ակտիվորեն մասնակցելու ուղղությամբ։ 1971 թվականի փետրվարին պրեզիդենտ Նիքսոնն իր գոհունակությունը հայտնեց այդ բանակցությունների ընթացքի առթիվ, ասելով, որ ԱՄՆ-ը «չափազանց ոգևորված է այն հետաքրքրությունից, որ եվրոպացիները հանդես են բերում «Ապոլոնից» հաջորդած տիեզերական ծրագրերի պլանավորման գծով իրենց ջանքերը մեզ հետ միավորելու հարցում»[41]։

Պրեզիդենտ Նիքսոնի ցուցումները հետագա զարգացում ստացան պետական դեպարտամենտում, որի գործունեությունը ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումները հօգուտ արտաքին քաղաքական շահերի օգտագործելու ամերիկյան դիվանագիտության համառ ձգտման վկա-

...ն է։ Ըստ էության, [illegible] պետական քարտուղար [illegible] Հենց այդ հանգամանքը նշեց [illegible] ֆեսորվարին, երբ ասաց [illegible] Ուիլյամ Ռոջերսը 1971 թվա- [illegible] քաղաքականության [illegible]. «Մեր ադմինիստրացիան ար- [illegible] խան, որը վկայում [illegible] վարում է այն դրույթի համա- [illegible] րով գիտության և [illegible] է, որ մինչ այդ երբեք գլոբալ [illegible] խնդիրներ չէին [illegible] տեխնիկայի նվաճումներն այդքան [illegible] մասը»[42]։ Ռոջերսի [illegible] այդչափ մեծ թվով մարդ- [illegible] քականության, [illegible] ությամբ, ամերիկյան արտա- [illegible] ի նվաճումները, [illegible] օգտագործելով գիտության և [illegible] եր է գնում. 1) [illegible] ևս առավել հետևյալ ընդհանուր [illegible] գործակցությունը [illegible] զարգացնել միջազգա- [illegible] օգտագործելու [illegible] գիտատեխնիկական առաջընթացի [illegible] համար. 2) զարգացող երկրներին [illegible] ության մեջ շեշտը դնել գի- [illegible] օգտագործման վրա. 3) աջակցել [illegible] միջավայրի պահպանմանն ուղղ- [illegible] րին»[43]։

[illegible] տարածվում ԳՏՀ-ի նվաճում- [illegible] ամբ ԱՄՆ-ի պրեզիդենտի և պե- [illegible] ված հիմնական դրույթներն այն [illegible] ամերիկյան պետական մի շարք [illegible]

[illegible] քաղաքականության» դոկտրինայի [illegible] խաղաց այն ժամանակ ԱՄՆ-ի [illegible] միջազգային գիտական և տեխ- [illegible] Փոլակի ղեկավարությամբ։ [illegible] ունենալով ԱՄՆ-ի կոնգրե- [illegible] միջազգային գիտատեխնիկական [illegible] վարում ԱՄՆ-ի կառավարու- [illegible] առաջին հերթին մեր ազգային [illegible] միջազգային կապերի ամրապնդ- [illegible] գործակցության բոլոր ծրագրերը, [illegible] և ազգային, հիմնվում են գի- [illegible] իքներ ձեռք բերելու և տարա- [illegible] նաև, որ գիտության ու [illegible] ԱՄՆ-ի վարած միջազգային հա- [illegible] ությունն ամենևին էլ բարե-

գործական գործունեություն չէ, այլ բացատրվում է տնտեսական, քաղաքական, մարդասիրական նկատառումների կոմպլեքսով, ինչպես նաև ազգային անվտանգության շահերով։ Այդ քաղաքականության նպատակները, որպես կանոն, բազմակողմանի բնույթ են կրում և տարափոխվում են կախված կիրառման օբյեկտից[44]։

Հիմնավորելով մյուս երկրների հետ գիտատեխնիկական լայն համագործակցության անհրաժեշտությունը, ամերիկյան արտաքին քաղաքականության ղեկավարները, այսպիսով, ելնում են այն բանից, որ այդպիսի համագործակցությունն օգտավետ է նախ և առաջ ամերիկյան գիտության և ԱՄՆ-ի գիտատեխնիկական զարգացման շահերի համար։ Երկրում գերիշխում է կառավարական օղակների կողմից ոչ միայն բաժանվող, այլև ակտիվորեն խրախուսվող այն տեսակետը, որ գիտության մի շարք բնագավառների, ինչպես, օրինակ, օվկիանագիտության, գեոֆիզիկայի, մետեորոլոգիայի, աստղաֆիզիկայի զարգացումը կարող է իրականացվել հաջող ընթանալ միայն գլոբալ հիմքի վրա։

Գիտատեխնիկական առաջընթացի օգտագործման տնտեսական նպատակները 70-ական թվականներին ԱՄՆ-ի համար հանգեցվեցին գիտահետազոտական կենտրոններում այն աշխատանքների կրկնօրինակումից խուսափելու ձգտմանը, որոնք կատարվում են կամ ըստ պայմանավորվածության պետք է կատարվեն կապիտալիստական մյուս զարգացած երկրներում. խնայել փողը, նյութերն ու գիտատեխնիկական անձնակազմը մյուս բնագավառներում օգտագործելու համար. հնարավորություն ստանալ կյանքում կենսագործելու մեկ որևէ երկրի ուժից վեր փոխշահավետ նախագծերը. արագացնել մի շարք երկրների, առաջին հերթին ԱՄՆ-ի համար արտակարգ կարևոր նշանակություն ունեցող նախագծերի ավարտումը. հնարավորություն ստանալ մյուս երկրների տաղանդավոր գիտնականների գիտելիքներն ԱՄՆ-ի շահերին ծառայեցնելու. նպաստել ամերիկյան գիտատեխնիկական նորույթների արտահանմանը, այսինքն՝ վաճառմանը։

Գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներն արտաքին քաղաքական նպատակներով օգտագործման բնագավառում ԱՄՆ-ի գործողությունների վերլուծությունը վկայում է,

յությունն է։ Ըստ էության, հենց այդ հանգամանքը նշեց ԱՄՆ-ի պետական քարտուղար Ուիլյամ Ռոջերսը 1971 թվականի փետրվարին, երբ ասաց. «Մեր ադմինիստրացիան արտաքին քաղաքականությունը վարում է այն դրույթի համապատասխան, որը վկայում է, որ մինչ այդ երբեք գլոբալ մասշտաբով գիտության և տեխնիկայի նվաճումներն այսքան մեծ հեռանկարներ չէին ունենում այդչափ մեծ թվով մարդկանց համար»[42]։ Ռոջերսի վկայությամբ, ամերիկյան արտաքին քաղաքականությունը, օգտագործելով գիտության և տեխնիկայի նվաճումները, իր առաջ հետևյալ ընդհանուր նպատակներ է դնում. 1) ձգտել զարգացնել միջազգային համագործակցությունը գիտատեխնիկական առաջընթացի պտուղներն օգտագործելու համար. 2) զարգացող երկրներին իր կողմից հատկացվող օգնության մեջ շեշտը դնել գիտության և տեխնիկայի օգտագործման վրա. 3) աջակցել միջազգային էկոլոգիական միջավայրի պահպանմանն ուղղված պետությունների ջանքերին[43]։

Արտաքին քաղաքական բնագավառում ԳՏՀ-ի նվաճումների օգտագործման ուղղությամբ ԱՄՆ-ի պրեզիդենտի և պետական քարտուղարի առաջադրած հիմնական դրույթներն այն ժամանակ մշակվում էին ամերիկյան պետական մի շարք հիմնարկություններում։

«Նոր տեխնոլոգիական քաղաքականության» դոկտրինայի մշակման գործում մեծ դեր խաղաց այն ժամանակ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի միջազգային գիտական և տեխնիկական կապերի բաժինը Գ. Պոլակի գլխավորությամբ։ 1971 թվականի մայիսին, ելույթ ունենալով ԱՄՆ-ի կոնգրեսում, Պոլակը նշեց, որ «միջազգային գիտատեխնիկական համագործակցության բնագավառում ԱՄՆ-ի կառավարության հիմնական նպատակը առաջին հերթին մեր ազգային շահերի բավարարումը և միջազգային կապերի ամրապնդումն է։ Գիտական համագործակցության բոլոր ծրագրերը, ինչպես միջազգային, այնպես և ազգային, հիմնվում են գիտությունը զարգացնելու, գիտելիքներ ձեռք բերելու և տարածելու վրա»։ Պոլակը նշեց նաև, որ գիտության ու տեխնիկայի բնագավառում ԱՄՆ-ի վարած միջազգային համագործակցության քաղաքականությունն ամենևին էլ բարե-



գործական գործունեություն չէ, այլ բացատրվում է տնտեսական, քաղաքական, մարդասիրական նկատառումների կամպլեքսով, ինչպես նաև ազգային անվտանգության շահերով։ Այդ քաղաքականության նպատակները, որպես կանոն, բազմակողմանի բնույթ են կրում և տարափոխվում են կախված կիրառման օբյեկտից[44]։

Հիմնավորելով մյուս երկրների հետ գիտատեխնիկական լայն համագործակցության անհրաժեշտությունը, ամերիկյան արտաքին քաղաքականության ղեկավարները, այսպիսով, ելնում են այն բանից, որ այդպիսի համագործակցությունն օգտավետ է նախ և առաջ ամերիկյան գիտության և ԱՄՆ-ի գիտատեխնիկական զարգացման շահերի համար։ Երկրում գերիշխում է կառավարական ոլորտների կողմից ոչ միայն բաժանվող, այլև ակտիվորեն խրախուսվող այն տեսակետը, որ գիտության մի շարք բնագավառների, ինչպես, օրինակ, օվկիանագիտության, գեոֆիզիկայի, մետեորոլոգիայի, աստղաֆիզիկայի զարգացումը կարող է իսկապես հաջող ընթանալ միայն գլոբալ հիմքի վրա։

Գիտատեխնիկական առաջընթացի օգտագործման տնտեսական նպատակները 70-ական թվականներին ԱՄՆ-ի համար հանգեցվեցին գիտահետազոտական կենտրոններում այն աշխատանքների կրկնօրինակումից խուսափելու ձգտմանը, որոնք կատարվում են կամ ըստ պայմանավորվածության պետք է կատարվեն կապիտալիստական մյուս զարգացած երկրներում. խնայել փողը, նյութերն ու գիտատեխնիկական անձնակազմը մյուս բնագավառներում օգտագործելու համար. հնարավորության սահմաններում կենսագործելու մեկ որևէ երկրի ուժից վեր փոխշահավետ նախագծերը. արագացնել մի շարք երկրների, առաջին հերթին ԱՄՆ-ի համար արտակարգ կարևոր նշանակություն ունեցող նախագծերի ավարտումը. հնարավորության սահմաններում մյուս երկրների առաջնակարգ գիտնականների գիտելիքներն ԱՄՆ-ի շահերին ծառայեցնելու. նպաստել ամերիկյան գիտատեխնիկական նորույթների արտահանմանը, այսինքն՝ վաճառմանը։

Գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներն արտաքին քաղաքական նպատակներով օգտագործման բնագավառում ԱՄՆ-ի գործողությունների վերլուծությունը վկայում է,

որ այդ գործունեությունը բարձրացված է պետական մակարդակի։ Այն իրագործվում է մի ամբողջ շարք պետական հիմնարկությունների կոմպլեքսով։ ԱՄՆ-ի կառավարությունն Արևմտյան Եվրոպայի երկրների, ինչպես նաև զարգացող երկրների հետ մշակեց և իրագործեց մի շարք խոշոր գիտատեխնիկական միջոցառումներ։ Այդ քաղաքականությունն ԱՄՆ-ին շոշափելի քաղաքական, տնտեսական և գիտական շահույթներ բերելու նպատակ է հետապնդում։

Այսպիսով, ԱՄՆ-ը ակտիվորեն օգտագործում է գիտատեխնիկական հեղափոխության պտուղները, որպես միջազգային ասպարեզում, ինչպես նաև երկու սիստեմների մրցակցությունում իր դիրքերն ամրապնդելու համար պայքարի միջոց։

Միջազգային ասպարեզում, այդ թվում և ԱՄՆ-ի համար ՍՍՀՄ-ի, սոցիալիստական մյուս երկրների հետ գիտատեխնիկական իսկապես արդյունավետ համագործակցության ռեալ հիմք է փոխշահավետ և իրավահավասար հիմունքներով համագործակցությունը։ Միայն այս ձևով է կարելի միջազգային ասպարեզում համագործակցությունը որակապես նոր մակարդակի վրա բարձրացնել, միայն այդ հիմքի վրա է հնարավոր պետական խոշորագույն տնտեսական և գիտատեխնիկական գլոբալ պրոբլեմների լուծումը 70—80-ական թվականներին։ Աշխատանքի միջազգային բաժանմանը հաջողությամբ մասնակցելու, մյուս պետություններին բացասական ռեակցիայի առիթ չտալու համար ԱՄՆ-ը ոչ թե պետք է «կատարելագործի» նեոգաղութատիրության ստրատեգիան, որը հիմնականում հատկանշական էր 70-ական թվականների «տեխնոլոգիական նոր քաղաքականությանը», այլ մյուս սուվերեն, այդ թվում նաև սոցիալիստական այլ սիստեմի պատկանող պետությունների հետ իրավահավասար համագործակցություն զարգացնի։

Փոխշահավետության և իրավահավասարության հիմունքներով մյուս երկրների հետ ԱՄՆ-ի համագործակցությունն արժանի այլընտրանքն է «նոր տեխնոլոգիական քաղաքականության», որն իր մի շարք սկզբունքներով և նպատակներով ետադարձ հայացք է և հաշվի չի առնում մյուս պետությունների շահերը։

ԳԼՈՒԽ X

# ՍՈՎԵՏԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Սովետաամերիկյան հարաբերությունների բարելավման և զարգացման հնարավոր ուղիների վերլուծությունը հեշտ խնդիր չէ։ Բայց դրանց հատկանշական որոշ գծեր ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ է հետազոտել։

70-ական թվականների վերջերի միջազգային կլիման, որի պայմաններում տեղի է ունենում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների զարգացումը, կախված է ինչպես օբյեկտիվ գործոններից, այնպես և զգալի չափով նրա վրա ազդող տարբեր ուժերի գործողություններից։

Որո՞նք են այսօր միջազգային հարաբերությունները և սովետաամերիկյան երկխոսությունը սահմանող օբյեկտիվ գործոնները։ Այդ գործոնները նախ և առաջ կապված են մարդկային հասարակության զարգացման օրենքների հետ։ Սրա հետ չեն կարող համաձայնել միայն նրանք, ովքեր գտնում են, որ այդպիսի օրենքներ գոյություն չունեն։ Բայց ի՞նչն էր այդ դեպքում առաջ շարժում այս աշխարհը։ Միգուցե՞, ինչպես պնդում է բուրժուական գիտությունը, «մարդկային անհատականության կենսաբանական էությունը» կամ գուցե «իշխանության համար պայքարը» իր բոլոր դրսևորումներով։ Անտարակույս, ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը։

Կապիտալիստական Արևմուտքում բուրժուական գաղափարախոսների ամբողջ դպրոցներ ձգտում են ապացուցել, որ մարդկային հասարակության զարգացումը տեղի է ունենում իրեն բնորոշ օրենքներով։ Նրանք սովորաբար պատմությունը դիտում են իբրև «պատահական հանգամանքների» շղթա, «բարու» և «չարի» վերացական հասկացությունների ընդհարում։ Նրանք գտնում են, որ պատմությունը ստեղծում են «մեծ անձերը» կամ «հերոսները», հաշվի չառնելով այն վճռական դերը, որ կատարում են նրա զարգացման մեջ օբյեկտիվ գործոնները։ Ավելին, այդ բուրժուական դպրոցները «ոչ գիտական» են համարում մարքս-լենինյան տեսությունը, որը հիմնեց և զինվեց մարդկային հասարակության, մասնավորապես, միջազգային հարաբերությունների զարգացման օրենքներով։

Խոսելով միջազգային հարաբերությունների զարգացմանը նպաստող օբյեկտիվ իրականությունների մասին, անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալիզմի և կապիտալիզմի միջև արմատական հակասությունները, դասակարգային պայքարը, ժողովրդական զանգվածների շարժումները, որոնք խորապես ազդում են ամբողջ միջազգային կյանքի վրա. ազգային-ազատագրական շարժման ուժերի պայքարն ընդդեմ գաղութատիրական և նեոգաղութատիրական քաղաքականության. ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ուժերի հարաբերակցությունը. միջուկային պատերազմի առաջացման պոտենցիալ վտանգը և կանխման անհրաժեշտությունը. միջազգային հարաբերությունների վրա գիտության և տեխնիկայի ազդեցությունը։

Օբյեկտիվ գործոնների վրա իր հերթին զգալի չափով ազդում են առանձին խոշոր քաղաքական գործիչների կամ մի խումբ ազդեցիկ անձանց գործունեության հետ կապված սուբյեկտիվ գործոնները։ Եթե պետական ակցիաներում դրսևորվող նրանց սուբյեկտիվ գործողությունները հակասության մեջ չեն գտնվում սոցիալ-քաղաքական, այդ թվում և միջազգային բնագավառում գլոբալ զարգացման հիմնական պրոգրեսիվ ուղղությունների հետ, ապա հասարակական տարբեր սիստեմներով պետությունների միջև հարաբերությունները համեմատաբար խաղաղ են զարգանում։ Իսկ եթե, հակառակը, սուբյեկտիվ գործողությունները հակադրվում են



զարգացման օբյեկտիվ կուրսին, այդ ժամանակ մեր մոլորակի քաղաքական կլիմայի ջերմաստիճանը կտրուկ բարձրանում է։ Առաջանում են միջազգային կոնֆլիկտներ և վտանգավոր ճգնաժամեր։

Ինչպիսի ձևեր էլ որ ընդունեն այնպիսի պետությունների, ինչպիսիք են ՍՍՀՄ-ն ու ԱՄՆ-ը, համագործակցությունն ու մրցակցությունը, մի բան պարզ է՝ նրանց բաժանող պրոբլեմները պետք է լուծվեն միայն ոչ ռազմական ճանապարհով։ Խաղաղության ալտերնատիվը պատերազմն է։ Առանձնապես վտանգավոր է միջուկային պատերազմը, որն իբրև պայքարի միջոց պետք է բացառվի միջազգային կյանքից։ 70—80-ական թվականներին բոլոր պետությունների արտաքին քաղաքականությունը պետք է ուղղված լինի այն բանին, որպեսզի միջազգային վիճելի հարցերը լուծվեն ոչ թե ուժի, այլ բանակցությունների միջոցով։

Խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքն այժմ Արևմուտքի շատ ղեկավարների կողմից որպես սոցիալիստական և կապիտալիստական պետությունների միջև փոխհարաբերությունների զարգացման հիմք է ընդունվում։ Աշխարհը, [illegible] և ոչ առանց դժվարությունների, լարվածության երկարաձգված ժամանակաշրջանից հետզհետե անցնում է գործնական համագործակցության։ Դեռևս երբեմն միջազգային կոնֆլիկտներ են առաջանում։ ՍՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևն ասում է. «Մեր խորը համոզմամբ, արդի միջազգային հարաբերությունների զարգացման գլխավոր տենդենցը՝ «սառը պատերազմից» դեպի լարվածության լիցքաթափում, ռազմական առճակատումից՝ դեպի անվտանգության ամրապնդում, դեպի խաղաղ գոյակցություն տեղի ունեցող շրջադարձն է»[1]։ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև Մոսկվայում և Վաշինգտոնում կնքված համաձայնագրերը, հատկապես միջուկային պատերազմի կանխման մասին համաձայնագիրը, կարևոր ներդրում են այդ տենդենցի զարգացման մեջ։ Այսպիսով, ամենաբարձր մակարդակով բանակցությունների շնորհիվ սովետաամերիկյան հարաբերությունները ամուր և երկարաժամկետ խաղաղասիրական հիմքերի վրա հենվող կայուն հարաբերությունների վերածելու հեռանկար առաջացավ։

Սովետաամերիկյան հարաբերությունների ներկայի և ապագայի համար անչափ կարևոր է լարվածության լիցքաթափման քաղաքականության էության հստակ գիտակցումը։ Ելույթ ունենալով Տուլայում, Լ. Ի. Բրեժնևը տվեց լարվածության լիցքաթափման խորը սահմանումը. «Լիցքաթափումը նախ և առաջ «սառը պատերազմի» հաղթահարումն է, պետությունների միջև նորմալ, հավասար հարաբերությունների անցնելը։ Լիցքաթափումը ոչ թե տարաձայնություններն ու վեճերը ուժով, սպառնալիքներով և զենքի թափահարումով, այլ խաղաղ միջոցներով, բանակցությունների սեղանի շուրջը լուծելու պատրաստակամություն է։ Լիցքաթափումը որոշակի վստահություն և միմյանց օրինական շահերի հետ հաշվի նստելու կարողություն է»[7]։

Համընդհանուր խաղաղության, միջազգային համագործակցության համար անչափ կարևոր է, որպեսզի մեր ժամանակի ամերիկյան պատասխանատու քաղաքական գործիչներն այն ըմբռնմանը հանգեն, որ լիցքաթափմանը, խաղաղ գոյակցությանը ավելի խելամիտ այտերնատիվ չկա և չի կարող լինել։ Իհարկե, սովետաամերիկյան խաղաղ հարաբերությունները, միայն այն պատճառով, որ օբյեկտիվ անհրաժեշտություն են, չեն կարող մի տեսակ ամուր միության կամ անսահման համաձայնության վերածվել։ Երկու երկրները տարբեր և իրար հակադիր սոցիալական սիստեմներ են։ ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը ապրում են բարդ, փոփոխվող աշխարհում, նրանցից յուրաքանչյուրն իր դաշնակիցներն ունի։ Լիցքաթափման հակառակորդներն ԱՄՆ-ում այս կամ այն հարցի շուրջը ԱՄՆ-ի և Սովետական Միության տարբեր և հակառակ դիրքորոշումների հիման վրա պատրաստակամությամբ հայտարարում են, որ լիցքաթափումը, սովետաամերիկյան երկխոսությունն իր ժամանակի փորձությանը չդիմացան։ Նման պնդումները ցանկացածը որպես իրականություն ներկայացնելու փորձ են, երբեմն նաև ամերիկյան հասարակական կարծիքը մոլորության մեջ գցելու մտադրություն է։ Բայց անհնարին է խաբել ամերիկացիներին այն հարցում, թե ի՞նչն է նրանց համար շահեկան՝ ուժային առճակատման քաղաքականությունը շարունակելը, թե, ընդհակառակը, այսուհետև էլ միջուկային մյուս առաջատար



պետության հետ լարվածության թուլացման ճանապարհով գնալը։ Ողջամտությունը միշտ կգերադասի երկրորդ ուղին։

Լիցքաթափումը, ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև լարվածության թուլացումը՝ դա, նախ և առաջ, միմյանց հետ հարաբերություններում ուժ գործադրելու և առավել ևս պատերազմը բացառելու նրանց երկկողմանի համաձայնությունն է։ Դա երկրների միջև խաղաղ գոյակցության անխուսափելիության ընդունումն է։ Եվ միևնույն ժամանակ՝ դա երկրների միջև համագործակցության ամրապնդման կարևորագույն կանխադրույթ է, աքսիոմա, երկու ժողովուրդների միջև տնտեսական, կուլտուրական, գիտական և այլ կապերի զարգացման համար հսկայական իմպուլս։ Բոլոր հիմքերը կան, որպեսզի լիցքաթափումը հարաճուն պրոցես դառնա, և Սովետական Միությունը ձգտում է այն անդառնալի դարձնել։

ԱՄՆ-ում ոմանք սովետաամերիկյան հարաբերությունների հետագա բարելավման պրոցեսը կապում են այսպես կոչված «լարվածության լիցքաթափման գնի հետ», որն իբր պետք է վճարի Սովետական Միությունը։ Այդ «գինը»՝ Սովետական Միության ներքին գործերին, մյուս երկրների հետ նրա հարաբերություններին միջամտելու իրավունքն է։ ԱՄՆ-ում սովետաամերիկյան այսօրվա հարաբերությունների զարգացումը որոշ մարդկանց քաղաքական մտածելակերպը կախված է նրանից, թե կկարողանան արդյոք նրանք դիմակայել լիցքաթափմանը խանգարող այդ կարգի անհեթեթ գաղափարներին և այն ամենին, ինչը քայքայում է ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի հարաբերությունները։ ՍՍՀՄ-ում հուսում և հավատում են, որ կկարողանան։

Վերջին տասնամյակները բնորոշվում են ինֆորմացիայի շարունակ աճող հոսանքով՝ ամենատարբեր, սոցիալիստական երկրների ինֆորմացիայի ճշմարիտ և բուրժուական, հաճախ ոչ օբյեկտիվ աղբյուրներից բխող և, վերջապես, զրպարտչական բնույթ կրող ինֆորմացիայով։ Վերջիններիս թվին են պատկանում ծայրահեղ հետադիմականների, սիոնիստների և մասոնականների հսկողության տակ գտնվող մասսայական ինֆորմացիայի միջոցները, ԿՀՎ-ի կողմից ֆինանսավորվող այսպես կոչված «ազատ աշխարհի» ռադիոկայանները։ Բացի այդ, երբեմն բուրժուական պատմաբան-

ների գրչի տակից դուրս են գալիս իրականությունը խեղաթյուրող հատուկտոր գրվածքներ։ Դա բարդացնում է ոչ քիչ ամերիկացիների կողմից տեղի ունեցող իրադարձությունների ճիշտ ընկալումը։ Մինչդեռ առանց պատմական պրոցեսների, այս կամ այն երկրի, այդ թվում և ՍՍՀՄ-ի քաղաքականությունը հասկանալու, անհնար է խելամտորեն ըմբռնել արդի աշխարհի ներկա և ապագա զարգացումը։ Հասկանալ ներկան ավելի դժվար է, քան կողմնորոշվել տեղի ունեցած իրադարձություններում։ Դժվար է այն պարզ պատճառով, որ այսօր տեղի ունեցող իրադարձությունները գտնվում են իրենց զարգացման պրոցեսում, դրանք կարծես թե չեն խմորվել, այս կամ այն երևույթը բացատրող ոչ բոլոր գործոններն են առայժմ հայտնի։

Անցյալի և ներկայի ըմբռնումը պետք է հանգեցնի մոտավոր և հեռավոր ապագայում իրադարձությունների զարգացման տենդենցների ընկալմանը։ Այստեղ տեղին է խոսել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխագուշակումների մասին։ Քաղաքական կամ գիտական աշխատանքով զբաղվող մարդիկ անհրաժեշտաբար պետք է այնպիսի եզրակացություններ անեն, որոնք հնարավորություն ընձեռեն դատելու, թե ինչ ուղղությամբ է զարգանալու այս կամ այն քաղաքական և արտաքին քաղաքական իրավիճակը։ Դեպի ապագան նայելու ունակությունը, քաղաքականության, այդ թվում և սովետաամերիկյան հարաբերությունների, զարգացման առավել հնարավոր տարբերակներին կշռադատված գնահատական տալը նրանց նկատմամբ, մանավանդ, մեթոդոլոգիական ճիշտ մոտեցում է պահանջում։

Ինչ վերաբերում է Սովետական Միության, ինչպես նաև սոցիալիստական համագործակցության երկրների արտաքին քաղաքականությանը, ապա այն հենվում է մարքսիզմ-լենինիզմի դրույթների սկզբունքային հիմքերի վրա։ Դա այն գիտական հիմքն է, որի վրա հենվելով այսօր հասնում են միջազգային ասպարեզում տեղի ունեցող իրադարձությունների հուսալի ըմբռնմանը, և որը կանխորոշում է այս կամ այն պետության արտաքին քաղաքականության շարժիչ ուժը։ Արդի միջազգային հարաբերությունների խճճվածքը պատկերացնելու համար անհրաժեշտ է յուրացնել մարքսիզմ-լենինիզմի դիալեկտիկան և մարքսիզմն ամբողջությամբ։



Մարքսիզմ-լենինիզմը պատմականորեն փոփոխվող, հասարակական պրակտիկայում իր անսպառ բովանդակությունը բացահայտող անընդհատ զարգացող գիտություն է։

Վ. Ի. Լենինը ստեղծեց իմպերիալիզմի գիտական տեսությունը, հետազոտեց նրա բնույթը, հակասությունները, օրինաչափությունները։ Իմպերիալիզմի լենինյան վերլուծությունը հանդիսանում է Կ. Մարքսի «Կապիտալի» գաղափարների ուղղակի շարունակությունը և հետագա զարգացումը։ Վ. Ի. Լենինն ապացուցեց, որ կապիտալիզմի մենատիրական փուլը նրա վերջին փուլն է, սոցիալիստական հեղափոխության նախօրյակը։ Համաշխարհային պատմության նոր փուլի համակողմանի վերլուծությունը Վ. Ի. Լենինին թույլ տվեց սահմանել հեղափոխական շարժման հսկայական հնարավորությունները իմպերիալիզմի դարաշրջանում։ Նա խորը վերլուծության ենթարկեց սոցիալիստական հեղափոխության շարժիչ ուժերը հեղափոխական մյուս հոսանքների հետ անխախտ միասնության մեջ, մարքսիստներին զինելով պատմական նոր պայմաններում կոմունիստական և բանվորական կուսակցությունների ստրատեգիայի և տակտիկայի մասին գիտությամբ։ Տեսական հանճարեղ վերլուծության հիման վրա, ընդհանրացնելով ժողովրդական զանգվածների ակտիվության վրա հենվող բոլշևիկների կուսակցությունը, Վ. Ի. Լենինը կարողացավ գործնականում իրականացնել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Ռուսաստանում, որի 60-ամյակը լայնորեն նշեց ամբողջ առաջավոր մարդկությունը։

Ամբողջ աշխարհում սաստկացող գաղափարական պայքարի պայմաններում մարքսիզմ-լենինիզմը արդի միջազգային, այդ թվում նաև սովետաամերիկյան հարաբերությունների ամենաբարդ հարցերին մոտեցման միակ գիտական մեթոդն է։ Ինչպես էլ փոփոխվելիս լինեն իմպերիալիստական քաղաքականության մեթոդներն ու միջազգային իրադրությունը, համեմատած Վ. Ի. Լենինի ապրած և աշխատած ժամանակաշրջանի հետ, միևնույն է, եթե նկատի ունենանք միջազգային ասպարեզում պետությունների համաշխարհային սոցիալիստական սիստեմի գոյությունը և նրա

անող դրական ներգործությունը համաշխարհային արդի զարգացման ընթացքի վրա, միանգամայն պարզ կդառնա, որ Վ. Ի. Լենինի մշակած հիմնական սկզբունքներն ու դրույթները այսօր էլ պահպանում են իրենց ուժը։

Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ պետությունների միջազգային քաղաքականության բնույթը որոշվում է նախ և առաջ նրանց սոցիալտնտեսական կարգով, պետական իշխանության գլուխ կանգնած դասակարգերով ու կուսակցություններով։ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության բնույթի վրա գլխավոր, վճռորոշ ազդեցություն են ունեցել, ունենում են և ունենալու են օբյեկտիվ սոցիալտնտեսական և դասակարգային գործոնները։ «...Ե՛վ ներքին, և՛ արտաքին քաղաքականության ամենախոր արմատները...,— նշել է Վ. Ի. Լենինը,— որոշվում են իշխող դասակարգերի տնտեսական շահերով, տնտեսական դրությամբ»[3]։ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ ժամանակակից տենդենցների բնույթի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է առաջին հերթին ղեկավարվել լենինյան այն դրույթով, որը վկայում է, թե ամերիկյան կապիտալիզմի արտաքին քաղաքականությունն օրգանապես կապված է նրա ներքին քաղաքականության հետ և նրա շարունակությունն է հանդիսանում։

ԱՄՆ-ում տիրող դասակարգը բուրժուազիան է։ Իշխանության էպիկենտրոնները գտնվում են նրա մոնոպոլիստական վերնախավի ձեռքում, որին հաջողվել է դասակարգային տիրապետության պետական մոնոպոլիստական մեխանիզմի, XX դարի երկրորդ կեսի իշխանության յուրատեսակ շահագործական մեքենայի օգնությամբ ապահովել իր ղեկավար դերը ԱՄՆ-ի պետական գործերում։ ԱՄՆ-ում իշխող վերնախավը բաղկացած է մոնոպոլիստական ընտանիքներից, խոշորագույն կորպորացիաների դիրեկտորներից, գեներալներից և բարձրաստիճան քաղաքագետներից։ Ամերիկյան պետական մոնոպոլիստական կապիտալիզմի քաղաքականության վրա չթուլացող ներգործություն է ունենում ռազմաարդյունաբերական կոմպլեքսը։ Իշխանության այդ մեքենայի մոտ ծառայության մեջ են գտնվում քաղաքական բազմաթիվ ինստիտուտներ, այդ թվում և խոշոր կապիտալի հիմնական բուրժուական՝ հանրապետական և դեմոկրատա-



կան կուսակցությունները, որոնք կանոնավոր կերպով և փոփոխական հաջողությամբ են Սպիտակ տուն մղում իրենց դրածոներին։ Իր սոցիալական բնույթով ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը պահպանողական է։

Ամերիկյան պետական նավի ղեկի մոտ կանգնած քաղաքական նավապետների ճնշող մեծամասնության հետադիմականությունը վաղուց հայտնի է։ Բավական է նշել հետպատերազմյան շրջանի ամերիկյան պետական այնպիսի գործիչների, ինչպես Հարի Տրումենի, Ջոն Ֆոստեր Դալեսի, Դուայթ Էյզենհաուերի, Լինդոն Ջոնսոնի անունները, որպեսզի «սառը պատերազմի», ագրեսիայի և արտաքին քաղաքական ավանտյուրաների ցրտաշունչ քամի փչի։

Երբեմն ԱՄՆ-ում իշխանության բուրգի կատարին հայտնվում էին քաղաքական ավելի ճկուն լիդերներ, որոնք որոշ չափով հասկանում էին, որ ամերիկյան կապիտալիզմը միջազգային ասպարեզում պարտություններ է կրում այն պատճառով, որ իր վարած քաղաքականությամբ խորը կոնֆլիկտի մեջ է մտնում օբյեկտիվ իրողության հետ, գործում է պատմության ընթացքի դեմ, ելնելով բարացած հակակոմունիստական դոգմաներից, հաշվի չառնելով աշխարհում ուժերի ռեալ հարաբերակցությունը։

Թեև ծայրահեղ անհետևողական, բայց ամերիկյան արտաքին քաղաքականությունն արդի աշխարհին հարմարեցնելու ձգտում էր ցուցաբերում, օրինակ, պրեզիդենտ Ջ. Քենեդին։ Սպիտակ տանը նրա համեմատաբար կարճատև գտնվելու ընթացքում ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ նկատվեցին պատերազմի և խաղաղության պրոբլեմներին ավելի պատասխանատու մոտեցման ուղղությամբ ոչ մեծ, բայց այնուհանդերձ դրական տեղաշարժեր։ Լ. Ջոնսոնը ցանկություն չհայտնեց շարունակելու այդ նշմարվող դրական ուղը, և վիետնամական ավանտյուրան նրան դուրս նետեց պրեզիդենտական բազկաթոռից։

Միջազգային հարաբերություններում և ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող բարդ և հակասական պրոցեսների խորը բացատրությունը տալիս են կոմունիստական և բանվորական կուսակցությունների համագումարների նյութերը և փաստաթղթերը, սովետական

պետության ղեկավարների ելույթները։ Այսպես, օրինակ, դեռևս Մոսկովյան 1969 թվականի կոմունիստական և բանվորական կուսակցությունների խորհրդակցության հայտարարության մեջ նշվեց երկու դրույթ, որոնք անչափ ակտուալ քաղաքական և գիտական նշանակություն ունեն արդի ամերիկյան արտաքին քաղաքականության վերլուծության ժամանակ։ Նախ և առաջ նշվեց, որ «միջազգային հարաբերությունների զարգացումը մեր օրերում որոշվում է երկու հասարակական սիստեմների պայքարով, իմպերիալիզմի, ռեակցիայի և ագրեսիայի ուժերի դեմ սոցիալիզմի, խաղաղության և դեմոկրատիայի ուժերի պայքարով»[4], և երկրորդ, եզրակացություն արվեց, որ խաղաղ գոյակցության կողմ է արտահայտվում «ուժերի հարաբերակցությունը և արդի պատերազմի ծանր հետևանքները ողջամտորեն գնահատող զարգացած կապիտալիստական երկրների բուրժուազիայի մի մասը»[5]։

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ ՍՄԿԿ ԿԿ-ի թեզիսներում եզրակացություն է արվում, որ իմպերիալիստները այսօր էլ «չեն հրաժարվել XX դարի պատմական ճանապարհը «վերախաղարկելու», ռևանշի հասնելու, սոցիալիզմը ազդեցության համաշխարհային բարձունքներից ցած նետելու, գաղութատիրության նոր ձևեր վերստեղծելու մտքից»[6]։ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության այդ ռեակցիոն տենդենցը ռեալ իրականություն է, և այն չի կարելի անտեսել։ Բայց պարզ է նաև մի բան։ 60-ական թվականներին ձախողվեցին ինչպես ագրեսիվ հարձակումների, այնպես և քաղաքականության ավելի ճկուն մեթոդների օգնությամբ սոցիալիզմը պարտության մատնելու ԱՄՆ-ի կառավարող շրջանների ձգտումները։ Դա սթափեցնող ազդեցություն է գործում կապիտալիստական աշխարհի, այդ թվում և ԱՄՆ-ի շատ «տաքգլուխների» վրա։ «Անցած տարիներին բազմիցս,— նշվում էր 1969 թվականի հունիսին Մոսկվայում կայացած կոմունիստական և բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցության փաստաթղթերում,— իմպերիալիզմը մարդկությանը ջերմամիջուկային ընդհարման եզրին կանգնեցնող միջազգային սուր ճգնաժամեր էր հրահրում։ Բայց ԱՄՆ-ի իմպերիալիզմը ստիպված է հաշվի



տանել միջազգային ասպարեզում ստեղծված ուժերի հարաբերակցությունը, Սովետական Միության միջուկային պոտենցիալը, հրթիռամիջուկային պատերազմի հնարավոր հետևանքները, նրա համար ավելի դժվար, վտանգավոր է դառնում նոր համաշխարհային պատերազմ սանձազերծելու վրա հույս դնելը»[7]։

Իհարկե, թեև ամերիկյան դիվանագետների որոշ մասն անցել է ավելի կշռադատված դիրքորոշման, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը սուր ծայրով ուղղված է սոցիալիզմի դեմ։ Ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ շարունակում է դրսևորվել իմպերիալիզմի բնույթը։ Նրա հին մեթոդների կողմնակիցները դիրքերը վայր չեն դնում։ Նրանք ուրախությամբ տորպեդահարում են միջազգային իրադրության հետագա բարելավման, ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև նորմալ հարաբերությունների կարգավորման յուրաքանչյուր հնարավորություն։ Այդ կարգի ուժերը, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ՝ «կոպիտ բուրժուական», «ագրեսիվ բուրժուական», «ռեակցիոն բուրժուական ճամբարի»[8] ներկայացուցիչներն են։ Միևնույն ժամանակ ԱՄՆ-ի ներքաղաքական ասպարեզում ուժերի դասավորման վերլուծությանը Վ. Ի. Լենինը միշտ կոնկրետ էր մոտենում, ընդգծելով, որ «որոշ ամերիկյան ձեռնարկատերեր կարծես թե սկսում են հասկանալ, որ ավելի խելամիտ է Ռուսաստանում շահավետ գործեր վարել, քան պատերազմել Ռուսաստանի հետ, իսկ դա լավ նշան է»[9]։

Արդի դարաշրջանը, ինչպես նշվել է ՍՄԿԿ XXIV և XXV համագումարներում, բնորոշվում է երկու հակադիր հասարակական սիստեմների պայքարով։ Այդ հակամարտության ասպարեզն ամբողջ աշխարհն է։ Իմպերիալիզմին հակադրվող հիմնական ուժը սոցիալիզմի համաշխարհային սիստեմն է։ Վերջինս գոյատևում է արդեն մոտ մի երրորդ դար։ Սոցիալիստական համագործակցության կարևորագույն բաղկացուցիչ մասն է հանդիսանում խաղաղասիրական մեծ պետությունը՝ ՍՍՀՄ-ը։

70-ական թվականներին միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի կառավարությունը իրականացնում է սոցիալիզմի և ազգային-ազատագրական շարժման ուժերին դիմակայելու և

նրանց դեմ պայքարելու քաղաքականությունն։ Այդ քաղաքականությունն անցկացվում է այնպիսի պայմաններում, երբ, ինչպես ՍՄԿԿ XXIV համագումարում ընդգծեց Լ. Ի. Բրեժնևը, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը շարունակում է խորանալ, ըստ որում հենց ԱՄՆ-ը ինֆլյացիայի ու գործազրկության և կապիտալիզմի վալյուտա-ֆինանսական սիստեմի լուրջ ճգնաժամի սաստկացման հետևանքով լուրջ տնտեսական ցնցումների է ենթարկվում։ Այդ իրադրությունում «չնայած և ագրեսիայի ու միլիտարիզմի ուժերը նահանջում են, բայց չեն վճռապես պարտված... Չի կարելի լրիվ վերացած համարել նաև նոր համաշխարհային պատերազմի սպառնալիքը»[10]։ Այսպիսին է սանձված ռեալ իրադրությունը, իրականությունը, որի պայմաններում իրականացվում է սովետական արտաքին քաղաքականությունը։

Միջազգային ներկա իրադրության առանձնահատկությունը, որի պայմաններում ստիպված է լինում գործել պաշտոնական Վաշինգտոնը, հանդիսանում է համաշխարհային քաղաքականության մեջ ՍՍՀՄ-ի կողմից անցկացվող վառ արտահայտված կոնստրուկտիվ գիծը՝ միջազգային պրոբլեմները խաղաղ միջոցներով լուծելու, «սոցիալական այլ սիստեմի պատկանող պետությունների հետ նորմալ, իսկ որտեղ թույլ են տալիս հանգամանքները՝ լավ հարաբերություններ պահպանելու ուղղությամբ»[11]։ «Ինչպես որ առաջներում,— ՍՄԿԿ XXIV համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— մենք հետևողականորեն պաշտպանել ենք պետությունների խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքը՝ անկախ նրանց հասարակարգից։ Ներկայումս այդ սկզբունքը վերածվել է միջազգային զարգացման իրական ուժի»[12]։

ՍՄԿԿ XXIV համագումարի առաջ քաշած և XXV համագումարում զարգացրած՝ խաղաղության և միջազգային անվտանգության համար պայքարի սովետական ծրագիրը հսկայական ազդեցություն է գործում համաշխարհային իրադարձությունների ընթացքի վրա։ Դա իմպերիալիստական ագրեսիայի դեմ պայքարի ծրագիր է, կայուն խաղաղության համար հուսալի հիմք։ Ամերիկյան արտաքին քաղաքականության կրած ծանր պարտությունների և ձախողումների ֆոնի վրա այդ խաղաղասիրական ծրագիրը մշտապես գրավում է



ամերիկյան հասարակայնության սևեռուն ուշադրությունը, հասարակության, որին սովետական սպառնալիքի մասին առասպելներով մշակելը գնալով դժվարանում է։

ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Գես Հոլը 1971 թվականի հունիսին, բնութագրելով ԱՄՆ-ի արտաքին քաղաքական դրությունը, նշում էր, որ ՍՍՀՄ-ի կողմից առաջադրված խաղաղության համար պայքարի ծրագիրը Ամերիկայում աշխույժ վիճաբանությունների առարկա է դարձել։ Գես Հոլն ընդգծում է, որ սովետական նոր առաջարկությունները առաջ են քաշվել այն պահին, երբ Միացյալ Նահանգներում իրադրությունը խիստ շիկացել էր։ Երկրում քաղաքական ճգնաժամ հիշեցնող բան է զարգանում։ Դա նախ և առաջ ռազմական քաղաքականության ճգնաժամի, այդ քաղաքականության մեջ բազմաթիվ հակասությունների արդյունք է»[13]։ Այդ խոսքերը լիովին հաստատվեցին։ Այսօր նույնպես ԱՄՆ-ի քաղաքականության մեջ հակասությունները և՛ խորն են, և՛ սուր։ Երկրում տիրող քաղաքական և գործարար վերնախավի զգալի և ըստ որում ազդեցիկ մասն արտահայտվում է սովետա-ամերիկյան հարաբերությունների հետագա զարգացման օգտին։ Համոզվելով, որ Սովետական Միության հետ ուլտիմատումների և ուժի լեզվով խոսելն անօգուտ է, ռեալ գնահատելով սովետական զինված ուժերի պաշտպանական պոտենցիալը, նրանք իրենց համար ռեալ եզրակացություններ են անում և ԱՄՆ-ի կառավարությանը խորհուրդ տալիս միջազգային վիճելի պրոբլեմները լուծել ոչ թե ռազմի դաշտում, այլ բանակցությունների սեղանի շուրջը։

ԱՄՆ-ի պետական քարտուղարի նախկին տեղակալ Ջ. Բոլը, պաշտպանության նախկին մինիստր Կ. Քլիֆորդը, արտասահմանյան գործերի գծով սենատական հանձնաժողովի նախկին նախագահ Ու. Ֆուլբրայթը, սենատոր Է. Քենեդին, Կորեայում ամերիկյան զորքերի նախկին գլխավոր հրամանատար, իսկ հետագայում ԱՄՆ-ի բանակի շտաբի պետ Մ. Ռիջուեյը՝ նրանք բոլորն բացեիբաց ընդունեցին ամերիկյան ստրատեգիայի ձախողումը Վիետնամում։ «Չի կարելի գնդակով կամ ռումբով սպանել գաղափարը»[14],— եզրակացնում է Ռիջուեյը, ամերիկյան քաղաքականությունը

Վիետնամում «մեծ սխալ» անվանելով։ Միջուկը նաև ԱՄՆ-ի կառավարող շրջանների ուշադրությունը հրավիրեց ներքին պրոբլեմներն անտեսելու անթույլատրելիության վրա, պրոբլեմներ, «որ ճչում են անհապաղ որոշումներ ընդունելու անհրաժեշտության մասին»[15]։ Նա քննադատում էր ԱՄՆ-ի կառավարությանը այն բանի համար, որ վերջինս շարունակում է կառչել սնանկացած, հետևյալ գաղափարը զարգացնող կոնցեպցիայից՝ «մեր կամքը կարող է թելադրվել մեր հակառակորդներին ուժի կամ ուժի գործադրման սպառնալիքի միջոցով»[16]։

Սենատոր Ֆուլբրայթը իր հերթին խոստովանեց, որ թեև անգամ ամերիկացիների տրամադրություններում պոզիտիվ բնույթի տեղաշարժեր են կատարվել, սակայն այդ փոփոխությունները բացատրվում են ոչ թե իմաստնությամբ, այլ ձախողումների հետևանքներով։ Վիետնամում ամերիկյան քաղաքականության ջախջախիչ պարտությունը առաջացրեց գիտնականների, ժուռնալիստների և քաղաքագետների անկարում պատրաստակամությունը վերանայելու ամերիկյան հետպատերազմյան քաղաքականության հիմքերը[17]։ Ֆուլբրայթը քննադատում էր ամերիկյան քաղաքական վերնախավի մի մասի կույր հակակոմունիզմը, ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ասպարեզում կրած պարտությունների ակունքները տեսնելով նրանում, որ «Տրումենի դոկտրինա» ազդարարելուց հետո «ամերիկյան յուրաքանչյուր պրեզիդենտ... գտնվում էր այն շրջանների հսկայական ճնշման տակ, որ նրանից հակակոմունիստական օրթոդոքսություն էր պահանջում»[18]։ Ֆուլբրայթը գտնում էր, որ Վիետնամը «դրեթե հաստատապես» յուրատեսակ շրջադարձ կհանդիսանա ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ, սակայն ըստ այդմ նա էլ չհամարձակվեց ճիշտ կանխագուշակել, թե ինչ ուղղությամբ է այն հետագայում զարգանալու, ասելով, որ այդ «բոլորովին անհայտ է»[19]։ Սենատորի եզրակացությունների զգուշավորությունը պատահական չէր։ Նա հասկանում էր, որ ԱՄՆ-ում գործող «սառը պատերազմի» ուժերը առանց մարտի իրենց դիրքերը զիջելու մտադրություն չունեն։

70-ական թվականների սկզբներին հանրապետականների ու դեմոկրատների կուսակցությունների բազմաթիվ հեղինակավոր քաղաքական գործիչներ սկսեցին համոզվել, որ ագրեսիվ քաղաքականության միջոցով ԱՄՆ-ի կառավարության՝ իր միջազգային դիրքերն ամրապնդելու և միաժամանակ ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների դիրքերը թուլացնելու փորձերը սնանկ դուրս եկան։ Այդ հանգամանքը նպաստեց այն բանին, որ ԱՄՆ-ի կառավարությունը ստիպված էր որոշակիորեն հաշվի առնել ռեալ իրավիճակն ու ժամանակի ոգին և զբաղվել արտաքին քաղաքական այնպիսի ստրատեգիայի և տակտիկայի որոնումներով, որոնք համապատասխանեին ամերիկյան կապիտալիզմի հնարավորություններին։ Անտարակույս, նա ըստ այդմ չէր հրաժարվում արտաքին քաղաքական հին նպատակներից և բացի այդ, ամբողջ ժամանակ գտնվում էր ուլտրառեակցիոն ուժերի ճնշման տակ, որոնք ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ ռեալիզմի կողմը որևէ դրական տեղաշարժ կատարելու հակառակորդներ էին։

Մի կողմից հանրապետականների ադմինիստրացիան բազմիցս հայտարարել էր «առճակատման դարաշրջանից» դեպի «բանակցությունների դարաշրջան» անցնելու մտադրության մասին։ Պրեզիդենտ Նիքսոնը, վերջիվերջո, հավանություն տվեց սովետա-ամերիկյան տնտեսական ու գիտատեխնիկական կապերի որոշ ակտիվացման կուրսին։ ԱՄՆ-ը համեմատաբար պոզիտիվ դիրք բռնեց նաև մի շարք միջազգային պրոբլեմներ լուծելիս։ Մյուս կողմից, հանրապետականների ադմինիստրացիան մեկ անգամ չէ, որ խաթարում էր ՍՍՀՄ-ի նկատմամբ իր քաղաքականությունը, նետվում Հարավ-Արևելյան Ասիայում տեղի ունեցող արտաքին քաղաքական նոր ավանտյուրաների հորձանուտը, հովանավորում Իսրայելի ագրեսիվ քաղաքականությունը Մերձավոր Արևելքում։ Ինչպես ՍՄԿԿ XXIV համագումարում ճիշտ նշեց Լ. Ի. Բրեժնևը. «Միացյալ Նահանգների հետ գործերի վարումը բարդացնում են նաև ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող հաճախակի զիգզագները, որոնք, ըստ երևույթին, կապված են նաև կոնյունկտուրային կարգի ինչ-որ ներքաղաքական մանևրների հետ»[20]։

ՍՄԿԿ XXIV և XXV համագումարներում մշակված հիմնական միջազգային պրոբլեմների կարգավորման կոնս-

տրուկտիվ ծրագիրն իր պտուղներն է տալիս։ Ամերիկյան հասարակայնության զգալի մասը պարզորոշ հասկացել է, որ հոգնել է «սառը պատերազմի» գեղջիզմներից և այլևս «Սովետների ագրեսիվության» առասպելին չի հավատում։ Ամերիկացիները մի տեսակ հասունացել են և արդեն հավատով չեն ընդունում «սառը պատերազմի» կանխադրույթները։ ԱՄՆ-ի քաղաքական և գործարար շրջաններում, ինչպես և Սպիտակ տանը, 70-ական թվականների առաջին կեսին սկսել են ավելի լրջորեն մտածել միջազգային չկարգավորված պրոբլեմների և սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների հարցերի լուծման ուղղությամբ ՍՍՀՄ-ի հետ համագործակցության հնարավոր ուղիներ որոնելու խնդիրներին։

Սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների բարելավման պոտենցիալ հնարավորությունները դեռ հիմա էլ խիստ զգալի են։ Այդ ուղղությամբ շատ ռեզերվներ դեռևս չեն օգտագործված։ Սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ջանքերի առյուծի բաժինը, երբ ամերիկյան ղեկավարները շեղվում են հանգամանքների տրամաբանությունից, ընկնում է միջազգային և ոչ թե սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների պրոբլեմների լուծման վրա։ Իհարկե, առաջինների նշանակությունն անչափ մեծ է, և երկու երկրների պետական գործիչները դեռ շատ են դրանցով զբաղվելու։ Բայց սովետա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների զարգացումն ամենից ակտուալ պրոբլեմներից մեկն է մնում։ Նրա աստիճանական լուծումն էլ ավելի ամուր հիմքեր կստեղծի համընդհանուր խաղաղության համար։

Եվ այսպես, սովետա-ամերիկյան հարաբերությունների՝ հենց իր իսկ ԱՄՆ-ի ճակատագրի համար կարևորության աստիճանական գիտակցումը, ՍՍՀՄ-ի, սոցիալիստական մյուս երկրների դիրքերի հետագա ամրապնդման հետևանքով նշանավորված աշխարհում ուժերի ռեալ հարաբերակցությունը, Վաշինգտոնի կողմից իր արտաքին քաղաքական հնարավորություններն ավելի ճիշտ գնահատելու անհրաժեշտությունն ընդունելու հետ մեկտեղ, ստիպեց ամերիկ-



յան կառավարող շրջաններին կանգնել ՍՍՀՄ-ի հետ խաղաղ գոյակցության ուղու վրա։ Թեև վերջին տարիների ընթացքում սովետա-ամերիկյան հարաբերություններում դրական տեղաշարժերը առաջին հերթին ՍՄԿԿ-ի և սովետական կառավարության արտաքին քաղաքական նպատակամղված և նախաձեռնող գործունեության հետևանք են, այնուհանդերձ չի կարելի արժանին չմատուցել հանրապետականների ադմինիստրացիայի ղեկավարության, վերջին հաշվով, հանդես բերած ողջամիտ մոտեցմանը, որը ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունների բարելավումը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության առավել կարևոր առաջնությունն էր համարում։ Պարզաբանելով սովետա-ամերիկյան հարաբերությունների բարելավման ուղղությամբ Նիքսոնի—Ֆորդի ադմինիստրացիայի վերցրած կուրսը, պետական քարտուղար Հ. Քիսինջերը 1974 թվականի աշնանն իր ելույթներից մեկում նշում էր, որ առանց Միացյալ Նահանգների և Սովետական Միության միջև հարաբերությունների կոնստրուկտիվ զարգացման միջազգային ասպարեզում կարգուկանոն չի կարող լինել։ Ավելին, Քիսինջերը գտնում էր, որ ՍՍՀՄ-ի հետ ավելի կոնստրուկտիվ հարաբերություններ հաստատելու նպատակով ամերիկյան կողմի գործադրած ջանքերը «իրագործվում են ոչ թե մի ինչ-որ ադմինիստրացիայի կամ կուսակցության կողմից որևէ որոշակի ժամկետով։ Այդ ջանքերն արտահայտում են միջազգային լարվածությունը թուլացնելու ուղղությամբ ամերիկյան ժողովրդի ճնշող մեծամասնության անշեղ ձգտումը և նրա այն հույսը, որ պատասխանատու յուրաքանչյուր կառավարություն պետք է խաղաղության ձգտի։ Ոչ մի այլ ասպեկտ այդչափ չի համապատասխանում մարդկության շահերին»[21]։ Հրաժարական տալով Ռ. Նիքսոնը ամերիկյան ժողովրդին իր հղած ուղերձում նշեց, որ իշխանության գլուխ իր ադմինիստրացիայի գանվելը նշանավորվեց «Սովետական Միության հետ նոր հարաբերություններ սկսելով, որ ԱՄՆ-ը պետք է շարունակի զարգացնել և ընդլայնել այդ նոր հարաբերությունները այն հաշվով, որպեսզի աշխարհի այդ երկու հզորագույն պետություններն այսուհետև համագործակցեն և ոչ թե գժտվեն»[22]։

Նիքսոնին Սպիտակ տանը փոխարինած Ջ. Ֆորդը, գի-

տանկցելով սովետա-ամերիկյան հարաբերությունների բարելավման ուղղությամբ գիծը շարունակելու կարևորությունը, հայտնեց, որ «խոստանում է չխախտել վերջին երեք տարիներին ԱՄՆ-ի վարած կուրսի ժառանգորդությունը, քանի որ «ջերմամիջուկային դարում մեր երկրների միջև պրագմատիկ և խաղաղ հարաբերություններին այլ այլընտրանքային չի կարող լինել»[23]։

Ամեն ինչ խոսում էր հօգուտ այն բանի, որ, հենվելով ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև արդեն ձեռք բերված ֆունդամենտալ պայմանավորվածությունների վրա, միանգամայն հնարավոր է առաջ շարժել ինչպես սովետական և ամերիկյան, այնպես և մյուս երկրների ժողովուրդների համար կենսական կարևոր նշանակություն ունեցող հարցերի լուծման և փոխշահավետ համագործակցության գործում։ Հանրապետական Ֆորդի ադմինիստրացիայի գործունեության արդեն սկզբնական փուլում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների զարգացումն իր արտահայտությունը գտավ ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման գծով նոր երկարաժամկետ համաձայնագրի վերաբերյալ Վլադիվոստոկում ձեռք բերված պայմանավորվածության մեջ։

Բնորոշ է, որ, ամերիկյան ղեկավարությունը, գիտակցաբար դիմելով այդ գործական քայլերին, դրանք ամենևին էլ Սովետական Միությանը «զիջում» կամ միայն սովետական կողմի համար որևէ միակողմանի օգուտ չէր համարում։ Այդ արդյունքներն ամբողջությամբ և լիովին բխում էին ԱՄՆ-ի շահերից։ Պրեզիդենտ Ֆորդը, պարզաբանելով, օրինակ, Վլադիվոստոկի պայմանավորվածության նշանակությունը, 1974 թվականի դեկտեմբերի 2-ին Վաշինգտոնում կայացած մամուլի կոնֆերանսում ընդգծում էր. «Մենք հասել ենք յուրաքանչյուր կողմի ստրատեգիական սպառազինման ուժերի հաստատուն և հավասար սահմանափակման, դրանով իսկ կանխելով սպառազինությունների մրցավազքն իր բոլոր սարսափներով, անկայունությամբ, ռազմական լարվածության ավելացմամբ և տնտեսական ռեսուրսների վատնումով»[24]։ Ըստ Ֆորդի, Վլադիվոստոկում ստեղծվեցին նախադրյալներ «ապագայում սպառազինությունների կրճատման հնարավոր իրագործման համար», «զգալի քայլ կատարվեց



հավասար, միակ հնարավոր հիմքով խաղաղություն հաստատելու ուղղությամբ, որի պայմաններում է միայն հնարավոր ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ստրատեգիական սպառազինման սահմանափակման բնագավառում համաձայնության հասնելը»[25]։ ԱՄՆ-ի պետական քարտուղար Հ. Քիսինջերը համընդհանուր եվրոպական խորհրդակցության արդյունքները գնահատեց որպես «կարևոր քայլ լարվածության թուլացման և պատերազմի կանխման ճանապարհին»[26]։

Հանրապետականների ադմինիստրացիայի կողմից ՍՍՀՄ-ի նկատմամբ իրագործվող քաղաքականության ժառանգորդության պրոբլեմն ամբողջ սրությամբ դրվեց 1977 թվականի հունվարին ԱՄՆ-ի իշխանության գլուխ Ջ. Քարտերի գլխավորությամբ դեմոկրատական կուսակցության անցնելով։ Անցած ժամանակաշրջանում Քարտերի կառավարությունը բազմիցս հայտարարություններ էր արել հօգուտ ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունների զարգացման, որոնց առաջընթացը դանդաղեց դեռ մինչև Քարտերի Սպիտակ տուն գալը ԱՄՆ-ում տեղի ունեցող ներքաղաքական իրադարձությունների պատճառով, մասնավորապես 1976 թվականին պրեզիդենտական ընտրությունների շրջանում լիցքաթափման, այդ թվում և հանրապետական կուսակցության մեջ գտնվող հակառակորդների հարձակումով։ Սակայն իրականում, երբ երկու կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող առավել սուր պրոբլեմների լուծման անհրաժեշտությունը ու նախ և առաջ ստրատեգիական սպառազինությունների մասին նոր համաձայնագրերի մշակումն ավարտելու ուղղությամբ առաջշարժումը գործնականորեն դրվեց, ԱՄՆ-ի նոր կառավարությունն ի սկզբանե ոչ ռեալիստական դիրք բռնեց, ակնհայտորեն ձգտելով հասնել միակողմանի առավելությունների և օգուտների։ Այդ ամենն ուղեկցվում էր հակասովետական ինտենսիվ կեղծ պրոպագանդայով (առանձնապես շեշտը դրվում էր սովետական «ռազմական սպառնալիքի», «մարդու իրավունքների» մասին հարցի և Պարսից ծոցի շրջանի երկրների նկատմամբ ՍՍՀՄ-ի իբրև թե ագրեսիվ պլանների վրա), լիցքաթափման հակառակորդների ակտիվացման ֆոնի վրա, որոնք Արևմուտքին կոչ էին անում ավելացնել սպառազինությունները և ձգտում սովետա-ամերիկյան հա-

հարաբերությունների պոզիտիվ զարգացումը և շրջել դեպի «սառը պատերազմի» ժամանակները։

Ինչպես խոստովանում է ամերիկյան հայտնի տեսաբան Զ. Կրաֆթը, Քարտերի կառավարությունը «հենց սկզբից սովետա-ամերիկյան հարաբերությունների հարցում վրիպում թույլ տվեց»[27]։ Բրուկինգսյան ինստիտուտի աշխատակիցներ Բ. Բլեչմանի և Ս. Կապլանի վկայությամբ, «պատմական փորձը ցույց է տալիս, որ հակասովետական անշեղ դիրքորոշումն ասես ինքնանպատակ լինի, և չնայած հնարավոր է, որ հոգեբանական բավարարություն պատճառի, միևնույն է, այն բացահայտորեն խանգարում է ճգնաժամերի կարգավորմանը»[28]։

ՍՍՀՄ-ի վրա ճնշում գործադրելու, սովետական պետության ներքին գործերին «մարդու իրավունքի պաշտպանության» պատրվակով միջամտելու նրա նախաձեռնողների փորձերը, սպասումները չարդարացան։ Ավելին, ըստ էության, լիցքաթափման արգելակմանն ուղղված Վաշինգտոնի նման քաղաքականությունը առաջացրեց կապիտալիստական մի շարք առաջատար երկրների՝ ԱՄՆ-ի դաշնակիցների ղեկավարների խոր մտահոգությունը։ Այս կապակցությամբ Հ. Շմիդտը, Ֆրանսիայի պրեզիդենտ Վ. Ժիսկար դ՚Էստենը և Կանադայի պրեմիեր մինիստր Պ. Տրյուդոն «կասկած էին հայտնում «իրավունքների» մասին հարցում Քարտերի դիրքորոշման վերաբերյալ և խոսում էին սովետա-ամերիկյան հարաբերությունների վրա նրա ներգործության մասին»[29]։ «Թայմ» ամսագրի վկայությամբ, ԱՄՆ-ի գործողությունների հետևանքով «լիցքաթափման ապագայով բացահայտորեն անհանգստացած են ԱՄՆ-ի եվրոպական դաշնակիցները և նույնիսկ Սովետական Միությամբ զբաղվող ամերիկյան որոշ մասնագետներ»[30]։

Սովետա-ամերիկյան հարաբերությունների ոլորտում «մարդու իրավունքի» մասին հարցի վերաբերյալ ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումը քննադատության ենթարկեց նախկին պրեզիդենտ Զ. Ֆորդը։ Ամերիկյան ժուռնալիստների հետ զրույցի ժամանակ նա անկեղծորեն նկատեց. «Իմ կարծիքով այդ տակտիկան պետք է քննադատության ենթարկվի,



եթե խանգարում է առաջընթացի հասնել Սովետական Միության հետ հարաբերությունների այնպիսի կարևոր բնագավառներում, ինչպես ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման երկրորդ փուլի մասին բանակցություններն են...»[31]։ ՍՍՀՄ-ի հետ փոխհարաբերությունների հարցին Քարտերի ադմինիստրացիայի մոտեցումը չէր կարող չազդել երկու երկրների միջև հարաբերությունների ընդհանուր վիճակի վրա։ Ինչպես այդ շրջանում գրում էր ԱՄՆ-ի կառավարող շրջաններին մոտ կանգնած «Յու. Ս. նյուս էնդ Ուորլդ ռիպորտ» ամսագիրը, սովետա-ամերիկյան հարաբերությունները ներկայումս ավելի սառն են, քան երբևիցե վերջին տարիների ընթացքում»[32]։

Ամերիկյան մամուլն, այսպիսով, 1977 թվականին բազմիցս մատնանշել է դեմոկրատների կառավարության գործողությունները որպես սովետա-ամերիկյան հարաբերությունների սառեցման հիմնական աղբյուր։ «Ինչ էլ խոսելիս լինեն Քարտերի քաղաքականության առանձին ասպեկտների մասին,— գրել է «Վաշինգտոն պոստը»,— անվիճելի է, որ պրեզիդենտը գործում է արտակարգ շտապողականությամբ..., անտեսելով առանձին գործոններ, բավարար ուշադրություն չդարձնելով ուրիշների հնարավոր ռեակցիային... Նրա քաղաքականությունը հազվադեպ ձևվածքի տեսք ունի։ Անգամ այն մարդկանց շատերը, որոնք բարեհաճորեն են նայում Քարտերի նպատակադրված կոնկրետ պլաններին, գտնում են, որ նրա մոտեցումը սխալ է և հակառակ արդյունքների է հանգեցնում»[33]։

Զ. Ֆորդն իր հերթին նույնպես նկատել է. «Փաստերը խոսում են այն մասին, որ լիցքաթափման գործը ներկայումս ավելի վատ է, քան ինն ամիս առաջ էր»։ Ֆորդը նշեց, որ երբ թողնում էր Սպիտակ տունը, ապա արդեն 95 %-ով մշակված էր ՍՈԼՏ-2 համաձայնագիրը, որն, «անտարակույս, կարելի էր ավարտել մինչև 1977 թվականի հոկտեմբերի 3-ը»[34], այսինքն՝ նախքան ժամանակավոր համաձայնագրի գործողության ժամկետի լրանալը։ «Կառավարող մրցակցություն» տերմինով անվանվող քաղաքականությունը շեշտը դնում է ոչ թե ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի շահերի համընկնման, այլ երկու կողմերը բաժանող հարցերի վրա։ Համագործակցության

ոգով գոյակցությունը անհամեմատ ավելի համահնչուն է XX դարի վերջին քառորդին, քան այսպես կոչված «կառավարող մրցակցությունը», որից, ինչպես ասվում է, մի քայլ է մնում մինչև ամեն կարգի կառավարման չենթարկվող «առճակատումները»:

«Կառավարվող լարվածության» կողմնակիցների այդ թեթևակշիռ կոնստրուկցիային որպես հզոր հակակշիռ հանդես է գալիս Սովետական Միության լենինյան արտաքին քաղաքականությունը: Իր բնույթով այն սկզբունքային և խաղաղասիրական է:

ՍՄԿԿ XXIV համագումարում առաջ քաշվեց խաղաղության ծրագիր, որը հետագա խաղաղ հարձակման նպատակամղեց սովետական արտաքին քաղաքականությունը: «Առաջ քաշելով այդ ծրագիրը,— Մոսկվայում կայացած խաղաղասիրական ուժերի համաշխարհային կոնգրեսում ասել է Լ. Ի. Բրեժնևը,— մենք մեր խնդիրը տեսնում ենք նրանում, որպեսզի աջակցենք լարվածության օջախների վերացմանը, օգնենք մարդկությանը ազատվելու նրա գլխին կախված ջերմամիջուկային աղետի սպառնալիքից, ամեն կերպ նպաստել լարվածության լիցքաթափմանը»[38]: Սովետական Միության, սոցիալիստական համագործակցության, խաղաղության և առաջընթացի միջազգային ուժերի խաղաղ հարձակման զարգացում նոր պատմական փուլ դարձավ ՍՄԿԿ XXV համագումարը, որն ընդունեց խաղաղության և միջազգային համագործակցության, ժողովուրդների ազատության և անկախության համար պայքարի հետագա ծրագիր: Նրանում դրված սպառազինությունների մրցավազքի սանձահարմանը, նրանց կրճատմանն ու զինաթափմանն անցնելու խնդիրը համապատասխանում է երկրագնդի ժողովուրդների անվտանգության արմատական շահերին: Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXV համագումարը այն կենսագործելու նպատակով առաջ քաշեց մի շարք միջոցառումներ.

«ա) Հնարավոր ամեն բան անել ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման և կրճատման վերաբերյալ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև նոր համաձայնագրի նախապատրաստումն ավարտելու համար, միջուկային զենքի փորձարկումների ընդհանուր և լրիվ դադարեցման, քիմիական զենքի ար-



գելման և ոչնչացման, մասսայական ոչնչացման զենքի նոր տեսակների և սիստեմների ստեղծման արգելման, ինչպես նաև ռազմական ու թշնամական այլ նպատակներով բնական միջավայրի վրա ներգործության արգելման վերաբերյալ միջազգային պայմանագրեր կնքելու համար.

բ) նոր ջանքեր գործադրել Կենտրոնական Եվրոպայում զինված ուժերի և սպառազինությունների կրճատման շուրջը վարվող բանակցությունների ակտիվացման համար: Այդ ուղղությամբ առաջին կոնկրետ քայլերի շուրջը պայմանավորվածության հասնելուց հետո հաջորդ տարիներին շարունակել հիշյալ շրջանում ռազմական լարվածության թուլացման գործը.

գ) հասնել այն բանին, որ շատ պետությունների ռազմական ծախսերի ներկայիս մշտական աճին փոխարինելու գա դրանց սիստեմատիկ կրճատման պրակտիկան.

դ) բոլոր միջոցները ձեռնարկել զինաթափման համաշխարհային կոնֆերանսի շուտափույթ հրավիրման համար...

— Ձգտել միջազգային հարաբերություններում ուժ չգործադրելու համաշխարհային պայմանագրի կնքմանը»[39]:

ՍՄԿԿ XXV համագումարն ընդգծեց այն բացառիկ նշանակությունը, որ ՍՍՀՄ-ը տալիս է ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման վերաբերյալ վարվող բանակցություններում ԱՄՆ-ի հետ համաձայնագրի կնքմանը: Սակայն ամբողջ 1976 թվականի և 1977 թվականի մեծ մասի ընթացքում այդ բանակցությունները կաթվածահար եղան ամերիկյան կողմի զիգզագանման դիրքորոշման հետևանքով:

Միջազգային լիցքաթափման պրոցեսի բաղկացուցիչ մասը Արևելքի և Արևմուտքի միջև առևտրատնտեսական և արդյունաբերատեխնիկական երկարաժամկետ և խոշոր մասշտաբային համագործակցության զարգացումն է:

Ելույթ ունենալով ՍՄԿԿ ԿԿ-ի հոկտեմբերյան (1976 թ.) պլենումում, Լ. Ի. Բրեժնևն ընդգծեց, որ «ՍՄԿԿ XXV համագումարում հաստատված ծրագրին լրիվ համապատասխան, մենք շարունակում ենք **աշխատանքը կապիտալիստական պետությունների հետ իրավահավասար փոխշահավետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ**:

Յուրաքանչյուր փուլում այդ աշխատանքն իր առանձնա-

հատկությունները ունի։ Հինգ կամ տասը տարի առաջ Ֆրանսիայի, ԳՖՀ-ի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Իտալիայի, Անգլիայի և կապիտալիստական մյուս երկրների հետ խաղաղ գոյակցության նորմալ հարաբերությունների հիմք ստեղծելու, այդ հարաբերությունները «սառը պատերազմի» գլխավոր շերտավորումներից մաքրելու խնդիրն էր դրվում։ Երբ այն հիմնականում լուծվեց, մենք առաջ գնացինք, սկսեցինք ավելի լայն համագործակցություն ծավալել քաղաքականության, էկոնոմիկայի, գիտության, տեխնիկայի, կուլտուրայի բնագավառներում»[37]։ Այդ ամենն էլ ամուր խաղաղության նյութական հյուսվածքն է, այդ թվում և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում։ Դա հասկանում են և լիցքաթափման հակառակորդները։ Ահա թե ինչու են նրանք ձգտում քայքայել այն, փորձել, այսպես ասած, նրա ամրությունը։

Միջազգային ասպարեզում տեղի ունեցած պոզիտիվ քաղաքական տեղաշարժերի արդյունք լինելով, սոցիալիստական և կապիտալիստական երկրների միջև տնտեսական և գիտատեխնիկական արագ զարգացող համագործակցությունը հակադարձ կապի օրենքով ինքն է նպաստում քաղաքական հարաբերություններում լիցքաթափման ամրապնդմանը։ Արևելքի և Արևմուտքի միջև տնտեսական համագործակցության զարգացումը կարևոր է, մի կողմից, որպես լիցքաթափման նյութական հիմք և, մյուս կողմից, որպես միջազգային տնտեսական կոոպերացիայի զարգացման գործոն։ Լիցքաթափման շնորհիվ պետությունները առաջին անգամ իրենց պատմության մեջ համապատասխան պայմաններում հնարավորություն են ստանում օգտվել աշխատանքի միջազգային բաժանման բարիքներից և առավելություններից ամբողջ մարդկության շրջանակներում։

Բավական է հիշեցնել միայն ազգային սահմանները չճանաչող բնական միջավայրի պաշտպանումը, կամ հանքաէներգետիկ ռեսուրսների աճող պակասումը, որոնք պահանջում են բոլոր պետությունների ջանքերի համախմբում գիտատեխնիկական առաջընթացի կենսական պրոբլեմների լուծման համար։ Միայն գլոբալ հիմքի վրա հնարավոր կլինի մի շարք դեմոգրաֆիական պրոբլեմների, ամբողջ մարդկու-



թյանը պարենով ապահովելու և մարդու իրավունքներն ու արժանապատվությունը նսեմացնող աղքատությունը լրիվ վերացնելու առավել ռացիոնալ լուծումը։

Միջազգային լարվածության թուլացումը բարենպաստ ազդեցություն ունեցավ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի տնտեսական հարաբերությունների վրա։ 1972—1977 թվականների ընթացքում սովետաամերիկյան առևտուրն ընդլայնվում էր բավական արագ տեմպերով, չնայած նրա աճը խոչընդոտվում էր մի շարք անբարենպաստ գործոնների պատճառով։ Սովետաամերիկյան առևտրի ծավալը 1976 թվականին ավելի քան 11 անգամ գերազանցում էր 1971 թվականի մակարդակը, ինչը վկայում է ստորև բերվող աղյուսակը[38]։

| | 1971 թ. | 1972 թ. | 1973 թ. | 1974 թ. | 1975 թ. | 1976 թ. | 1977 թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ապրանքաշրջանառություն (մլն. դոլ.) | 220 | 640 | 1415 | 960 | 2090 | 2525 | 1950 |

Եվ այսուհանդերձ, չնայած ԱՄՆ-ից ՍՍՀՄ արտահանման արագ աճին, այն 1976 թվականին այդ բնագավառում ընդհանուր ցուցանիշի միայն 2 % էր կազմում։ Այնպես որ սովետաամերիկյան առևտրի զարգացման գործում դեռ շատ ռեզերվներ կան։ Բացահայտվում են դրանք, սակայն, ոչ այնքան արագ, ինչպես կցանկանային ամերիկյան գործարար մարդիկ և սովետական կողմը, առաջին հերթին լիցքաթափման հակառակորդների մեղքով։

Դեռ 1972 թվականի հոկտեմբերին ՍՍՀՄ-ի հետ ԱՄՆ-ը առևտրական համաձայնագիր կնքեց, որը Սովետական Միությանը «առավել բարենպաստ» առևտրական ռեժիմ էր տրամադրում, ինչպես նաև ԱՄՆ-ում գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների սովետական պատվերների տարաբաշխում, երրորդ երկրներում առևտրական արբիտրաժների հիմնում, Մոսկվայում ամերիկյան ֆիրմաների ներկայացուցիչների գործունեության պայմանների բարելավում էր նախատեսում։ Բայց 1974 թվականի դեկտեմբերին առևտրի վերաբերյալ օրենքում Ջեքսոն—Վենիկի ընդունած դիսկրիմինացիոն ուղղումը, որն առևտրում «առավել բարենպաստ»

ռեժիմն ու նրա վարկավորումը կապում էր «ՍՍՀՄ-ից կատարվող արտագաղթի» հետ, խանգարեց 1972 թվականի առևտրական համաձայնագրի ուժի մեջ մտնելուն։

Եվ այնուամենայնիվ լիցքաթափման պրոցեսն ուժ էր հավաքում։ Սկսած 1972 թվականից ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը մի շարք համաձայնագրեր կնքեցին իրար միջև առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորելու և զարգացնելու նպատակով։ Դրանց թվին են պատկանում՝ 1972 թվականի համաձայնագիրը ըստ լենդլիզի հաշվարկները կարգավորելու վերաբերյալ (ըստ լենդլիզի ՍՍՀՄ-ի կողմից պարտքերի մարումը կապվում է երկրների առևտրական, տնտեսական և ֆինանսական համագործակցության հարցերի հետ). 1972 թվականի համաձայնագիրը փոխադարձաբար վարկեր տրամադրելու վերաբերյալ։ 1972 թվականի համաձայնագիրը ծովային նավագնացության որոշ հարցերի վերաբերյալ (վերակնքվել է 1975 թ.) մեղմացրեց ԱՄՆ-ի նավահանգիստներ սովետական նավերի մտնելու հետ կապված սահմանափակումները և արձանագրեց երկկողմանի առևտրի շրջանակներում իրականացվող առևտրական ծովային փոխադրումներին երկու երկրների նավերի մասնակցության սահմանը։ Բարձր մակարդակով սովետաամերիկյան հանդիպման շնորհիվ երկու կողմերը միջոցներ ձեռք առան ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի տնտեսական կապերի կազմակերպական կառուցվածքն ամրապնդելու ուղղությամբ։

1972 թվականին ստեղծվեց առևտրի հարցերի վերաբերյալ սովետաամերիկյան համատեղ հանձնաժողով, որի նիստերը պարբերաբար տեղի են ունենում Մոսկվայում և Վաշինգտոնում։ 1973 թվականին ստեղծվեցին սովետական Առևտրական ներկայացուցչություն Վաշինգտոնում և ԱՄՆ-ի դեսպանությանը կից Առևտրական բյուրո Մոսկվայում։ Այդ նույն տարում ստեղծվեց Ամերիկա-սովետական առևտրատնտեսական խորհուրդ (ԱՍԱՏԽ), որի անդամներն էին ԱՄՆ-ի ավելի քան 200 ֆիրմաներ և սովետական մի շարք կազմակերպություններ։ Ամերիկյան ավելի քան 20 ֆիրմաներ իրավունք ստացան իրենց ներկայացուցչություններն ունենալ Մոսկվայում։



Համաձայն քաղաքացիական օդափոխադրությունների վերաբերյալ համաձայնագրի (1966 թ.), 1968 թվականի հուլիսին օդային հաղորդակցության ճանապարհ բացվեց Մոսկվայի և Նյու-Յորքի միջև։ 1973 թվականին բարձր մակարդակով հանդիպումներից հետո Աէրոֆլոտն իրավունք ստացավ երթաշրջան իրականացնել Մոսկվայի ու Վաշինգտոնի միջև, իսկ «Պան Ամերիկըն» ընկերությունը՝ Լենինգրադի և Նյու-Յորքի միջև. 1974 թվականին երկարատև համաձայնագիր կնքվեց տնտեսական, արդյունաբերական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ. ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը անվտանգության և համագործակցության համընդհանուր եվրոպական խորհրդակցության մասնակիցներ են, որի եզրափակիչ ակտը կոչ է անում ակտիվացնել համագործակցությունը էկոնոմիկայի, գիտության և շրջապատող միջավայրի բնագավառներում։

1976 թվականի հունվարին ուժի մեջ մտավ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև 1973 թվականին հարկադրման հարցի վերաբերյալ կնքված կոնվենցիան։ 1976 թվականին համաձայնագիր կնքվեց ձկնորսության վերաբերյալ։

ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի հաղորդագրության համաձայն (1977 թ. հուլիս) «ՍՍՀՄ-ի հետ առևտրի ընդլայնումը շահավետ է ԱՄՆ-ին, քանի որ ավելացնում է զբաղվածությունը, բարելավում նաև առևտուրը, ապահովում արժեքավոր հումքի ստացումը և ամրապնդում կայունացման տարբեր քաղաքական հարաբերություններում»։ Անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել, որ ԱՄՆ-ի գործարար շրջաններում ընդունում են, որ երկու երկրների միջև տնտեսական համագործակցության հետագա նորմալ զարգացմանը խոչընդոտում են հենց ամերիկյան սահմանափակումները (առավել բարենպաստ ռեժիմի և Արտահանման-ներմուծման բանկի վարկերի բացակայությունը, արտահանման վերահսկողությունը, բազմաթիվ ու տարիֆային արգելքները)։ Այդ արգելքները զգալի չափով հնարավոր կլինեն հաղթահարել ի հաշիվ առևտրատնտեսական համագործակցության առավել առաջավոր ձևերի, մասնավորապես, կոոպերացման հիմունքներով համատեղ արտադրության միջոցով։ Ամերիկյան մասնագետների մեծամասնության կարծիքով կարևոր է ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի

համար արդյունաբերատեխնիկական համագործակցության փոխընդունելի նոր ձևերի որոնումների կենսագործումը։

ՍՍՀՄ-ի հետ առևտրում խտրական սահմանափակումների առկայությունը հանգեցրեց նրան, որ վերջին ժամանակներս սովետական կողմը ստիպված է մի շարք պատվերներ փոխադրել այլ երկրներ։ Դրա հետևանքով 1977 թվականին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ապրանքաշրջանառությունը 1976 թվականի համեմատությամբ պակասեց։

ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ապրանքաշրջանառության կրճատումը առաջացրել է ԱՄՆ-ի գործարար շրջանների մտահոգությունը։ Սովետաամերիկյան առևտրատնտեսական խորհրդի փոխպրեզիդենտ Յուջին Միլլերի գնահատմամբ, խտրական առևտրական օրենսդրության ուժի մեջ մնալուց հետո, այսինքն՝ 1975 թվականի հունվարից, ամերիկյան ֆիրմաները ՍՍՀՄ-ից տրվող պատվերների բացակայության պատճառով կորցրել են ամենաքիչը 2 մլրդ դոլ., ինչը ԱՄՆ-ում մոտ 80 հազ. մարդու զբաղվածության կրճատում է նշանակում, մինչդեռ մոտ 7 մլն. ամերիկացիներ չեն կարող աշխատանք գտնել[39]։ Արդեն 1976 թվականի սկզբին ԱՄՆ-ում շատերի համար ակներև դարձավ Ջեքսոն—Վենիկի ուղղման սնանկությունը։

ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ առևտրում շահագրգռված ԱՄՆ-ի գործարար շրջանները որոշակի հույսեր են կապում 1974 թվականի առևտրի վերաբերյալ օրենքի խտրական դրույթները վերացնելու հետ։ Բնորոշ է, որ Ամերիկասովետական առևտրատնտեսական խորհրդի 1976 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած հերթական, չորրորդ նիստի համագումարի բերող փաստաթղթում (նրանում ներկայացված էին ԱՄՆ-ի ազգային համախառն արտադրանքի 25 % արտադրող ամերիկյան 234 ընկերություններ) մեկ անգամ ևս հաստատվեց 1972 թվականի առևտրական համաձայնագրի աջակցությունը և, մասնավորապես, նրա այնպիսի դրույթների, ինչպես «առավել բարենպաստ ազգի» ռեժիմի փոխադարձ անվերապահ տրամադրումը, վարկերի փոխադարձ հատկացումն արտահանման գործնական պրակտիկայում կիրառվող նորմալ և ընդունված պայմաններով, ներառյալ



ԱՄՆ-ի Արտահանման-ներմուծման բանկի ֆինանսավորման և սովետական կազմակերպությունների վարկավորման հնարավորությունների օգտագործումը։

ՍՄԿԿ XXV համագումարի նյութերում ընդգծվում էր նաև արտասահմանյան երկրների հետ գիտատեխնիկական կապերի քաղաքական կարևոր նշանակությունը։ ՍՄԿԿ ԿԿ-ի հաշվետու զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը նշում է, որ «կապիտալիստական պետությունների հետ տնտեսական և գիտատեխնիկական կապերն ամրապնդում և ընդարձակում են խաղաղ գոյակցության քաղաքականության նյութական բազան»[40]։

ՍՍՀՄ-ն ու ԱՄՆ-ը հզոր գիտատեխնիկական պոտենցիալի տեր երկրներ են։ Ըստ որում, նրանց միջև գիտատեխնիկական համագործակցության հաջող զարգացումը դուրս է գալիս միայն այդ երկրների շահերի շրջանակներից։ Ինչպես նշվում է ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունների միջև գիտության և տեխնիկայի բնագավառում համագործակցության վերաբերյալ համաձայնագրի 2-րդ հոդվածում, նրա նպատակն է՝ գիտնականների և մասնագետների ջանքերը համախմբելու համար երկու կողմերին տրամադրել լայն հնարավորություններ կարևոր պրոբլեմների մշակման ուղղությամբ, որոնց կենսագործումը կնպաստի գիտության և տեխնիկայի առաջընթացին՝ ի բարօրություն բոլոր երկրների և ամբողջ մարդկության։

Սովետաամերիկյան հարաբերությունների նորմալացման ճանապարհին 1972—1974 թվականներին տեղի ունեցած առաջընթացը, ինչպես նաև գիտատեխնիկական կապերի հետագա ընդլայնումը և առավել կարևոր գիտական պրոբլեմների արագ լուծման ուղղությամբ երկու կողմերի ձգտումը հանգեցրին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև գիտության և տեխնիկայի, տիեզերական տարածության, ատոմային էներգիայի, շրջապատող միջավայրի պահպանման, գյուղատնտեսության, համաշխարհային օվկիանոսի ուսումնասիրման, տրանսպորտի, էներգետիկայի, շինարարության, բժշկության և առողջապահության բնագավառում միջպետական և միջկառավարական 10 համաձայնագրերի կնքմանը։

Այդ նույն շրջանում սովետական կազմակերպություննե-

որ կոնտակտներ հաստատեցին ամերիկյան ավելի քան 300 արդյունաբերական ֆիրմաների հետ, ընդ որում մի շարք առաջատար կորպորացիաների հետ համաձայնագրեր կնքվեցին գիտատեխնիկական համագործակցության մասին։ Այդ կարգի համաձայնագրերի թիվը 60-ից անցել է։ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի գիտության և տեխնիկայի գծով պետական կոմիտեի միջոցով սովետական կազմակերպությունների հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտած ֆիրմաների թվում կարելի է անվանել կապիտալիստական աշխարհի այնպիսի հսկաների, ինչպես «Ջեներալ էլեկտրիկը», «Կայզեր ինդաստրիզը», «Բոինգը», «Մոնսանտոն», «Դաուն օյլը», «Սպերին», «Կոնտրոլ դեյտան», «Հյուլեթ Պակարդը», «Ջինգերը», «Ստանդարտ օյլ օֆ Ինդիանան», «Դիր էնդ Կ°-ն» և ուրիշներ։

Հաշվի առնելով Սովետական Միության հետ համագործակցելու նկատմամբ ամերիկյան գործարար շրջանների աճող հետաքրքրությունը, Ամերիկասովետական առևտրատնտեսական խորհրդի շրջանակներում ստեղծվեց ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի գիտատեխնիկական համագործակցության հատուկ կոմիտե՝ սովետական կազմակերպությունների և ամերիկյան մասնավոր ֆիրմաների միջև գիտատեխնիկական և արդյունաբերական համագործակցության զարգացմանն աջակցելու համար։

Սակայն գիտության և տեխնիկայի բնագավառում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև արգասաբեր և փոխշահավետ համագործակցությունը, որը լարվածության լիցքաթափման նյութականացման անչափ կարևոր գործոն է, ամերիկյան ռեակցիոն շրջանների սրտով չէ։ Նրանք ձգտում են խանգարել ՍՍՀՄ-ի հետ նման կարգի համագործակցության զարգացմանը։ Նրանց ճնշման տակ ԱՄՆ-ի ադմինիստրացիան երբեմն միջոցներ է ձեռնարկում սովետաամերիկյան գիտատեխնիկական համաձայնագրերի շրջանակներում համաձայնեցված ծրագրերով անցկացվող համատեղ հետազոտությունների ծավալի և թեմատիկայի կրճատման ուղղությամբ։ Սակայն, չնայած այդ անբարյացակամությանը, ամերիկյան գիտնականները և մասնագետները մեծ հետա-



քրքրություն են ցուցաբերում սովետական կազմակերպությունների հետ համագործակցելու նկատմամբ։

Հետաքրքրական էին 1977 թվականի օգոստոսին հրապարակված ԱՄՆ-ի կոնգրեսի հանձնաժողովի կողմից Արևելքի և Արևմուտքի միջև առևտրի հարցում խոշորագույն ամերիկյան ֆիրմաների և մասնագետների շրջանում անցկացված անանուն անկետավորման արդյունքները։ Կոնգրեսի հանձնաժողովի հարցերին պատասխանած 88 ֆիրմաներից 85-ը արտահայտվեցին ՍՍՀՄ-ին և սոցիալիստական մյուս երկրներին «առավել բարենպաստության» ռեժիմ տրամադրելու օգտին, այսինքն՝ ԱՄՆ սոցիալիստական երկրների ապրանքների արտահանման խտրականության վերացման, որը խանգարում է նրանց և սոցիալիստական երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության նորմալ զարգացմանը։ Իսկ ամերիկյան ակադեմիական շրջանների հարցման ենթարկված 24 ներկայացուցիչներից միայն մեկը արտահայտվեց հօգուտ Ջեքսոն—Վենիկի ուղղման, որը սովետաամերիկյան տնտեսական հարաբերությունների զարգացումը կախվածության մեջ է դնում ՍՍՀՄ-ի ներքին քաղաքականությանը վերաբերող որոշ պրոբլեմներից։ Դարձյալ հաստատվեց, որ ամերիկյան գործարար և գիտական շրջանների ներկայացուցիչների մեծամասնությունը Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ գիտատեխնիկական և առևտրատնտեսական համագործակցության հետագա զարգացման կողմնակից է։

Լիցքաթափումը շարունակում է ճանապարհ հարթել դեպի ապագան, այն բազմաթիվ կողմնակիցներ ունի ԱՄՆ-ում։ 1976—1977 թվականների ընթացքում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հաջող էր զարգանում համագործակցությունն այնպիսի կարևոր բնագավառներում, ինչպես հատուկ էլեկտրամետալուրգիան, քիմիական կատալիզը, չափագիտությունը, կառավարման ավտոմատ սիստեմները, կառավարման մեջ ԷՀՄ-ի կիրառումը, տնտեսական մոդելավորումը, միկրոբիոլոգիան, երկաթուղային տրանսպորտը, Համաշխարհային օվկիանոսի ուսումնասիրումը, էներգետիկական նպատակներով ջերմամիջուկային սինթեզի ռեակցիաների օգտագործումը և այլն։ Հաջող և փոխշահավետ է զարգանում համագոր-

ծակցությունը արդյունաբերական մասշտաբի գեներատորների ստեղծման շուրջը։ Պրակտիկ մեծ նշանակություն ունեցող համատեղ աշխատանքներ են տանում սովետական կազմակերպությունները և ամերիկյան արդյունաբերական ֆիրմաները։ Այսպես, ամերիկյան «Ջեներալ էլեկտրիկ» ֆիրմայի համագործակցությամբ համատեղ արդյունաբերական մշակումներ են իրագործվում տուրբագեներատորաշինարարության, ուժային բարձրավոլտ կաբելների, կրիոգենային և գերհաղորդ սարքավորման բնագավառում։ «Դրեսեր ինդաստրիզ» ֆիրմայի հետ համագործակցված աշխատանքներ են տարվում նավթամշակման արդյունաբերության համար սարքավորման նոր տեսակների ստեղծման և փորձարկման ուղղությամբ, «Հյուլեթ Պակարդ» ֆիրմայի հետ՝ պողպատի անընդհատ ձուլման սարքերի ավտոմատացման բնագավառում։

Մեծ հեռանկարներ ունի սովետաամերիկյան համագործակցությունը գյուղատնտեսության բնագավառում։ Մոլդավական ՍՍՀ-ում ամերիկյան «ՖՄՍ—կորպորեյշն» ֆիրմայի հետ համատեղ փորձնական աշխատանքներ են տարվում բանջարեղենի բարձր մեքենայացված աճեցման ուղղությամբ։ Դա դիտվում է որպես առաջին քայլ բանջարեղենի աճեցման բարձր աստիճանի մեքենայացման և ավտոմատացման, դրանց արդյունաբերական վերամշակման և փաթեթավորման բոլոր ագրոարդյունաբերական համալիրների համատեղ ստեղծման ճանապարհին։

Լիցքաթափման հաջողությունների նկատմամբ ամերիկյան ադմինիստրացիայի պատասխանատու վերաբերմունքի դեպքում ներկայումս ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ստեղծված գիտատեխնիկական համագործակցության լուրջ բազան հնարավորություն կտա և հետագայում զարգացնելու այն կողմերի փոխադարձ շահավետության և հարգանքի հիման վրա, որը կհամապատասխաներ երկու երկրների գիտատեխնիկական պոտենցիալի մակարդակին, նրանց հնարավորություններին, շահագրգռվածությանը, ինչպես նաև գիտության, տեխնիկայի և արդյունաբերական արտադրության առաջատար ճյուղերի ընթացիկ և հեռանկարային պահանջմունքներին, որը վերջին հաշվով կնպաստի սովետաամերիկյան հարաբե-



րությունների բարելավմանը և միջազգային լարվածության լիցքաթափման պրոցեսի ամրապնդմանը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-ամյակին նվիրված ՍՄԿԿ Կկ-ի, ՍՍՀՄ Գերագույն սովետի և ՌՍՖՍՀ Գերագույն սովետի հանդիսավոր նիստում միջազգային լիցքաթափմանը վերաբերող Լ. Ի. Բրեժնևի առաջ քաշած նոր, հեռուն տանող առաջարկությունները դառնում են համաշխարհային հասարակայնության լայն արձագանքը և լրացուցիչ հիմք են ծառայում սովետաամերիկյան հարաբերությունների հետագա զարգացման համար։ Այդ առաջարկությունների նպատակն այն է, որպեսզի սկսվի «ցած թեքվել» սպառազինությունների մրցավազքի կորագիծը, աստիճանաբար իջնի ռազմական դիմակայության մակարդակը։ Մենք ուզում ենք էապես նվազեցնել, իսկ այնուհետև վերացնել միջուկային պատերազմի՝ մարդկության համար ամենամեծ վտանգի սպառնալիքը»[41]։

Առաջարկվեց պայմանավորվածության հասնել բոլոր պետությունների կողմից միջուկային զենքի արտադրությունը միաժամանակ դադարեցնելու մասին։ Միաժամանակ միջուկային տերությունները կարող էին պարտավորություն վերցնել նրա արդեն կուտակված պաշարները աստիճանաբար կրճատելու մինչև լրիվ, հարյուրատոկոսանոց վերացումը։ Առաջարկվեց նաև արգելել միջուկային զենքի՝ ոչ միայն մթնոլորտում, տիեզերքում և ջրի տակ, այլև ստորգետնյա փորձարկումները, պայմանավորվել նաև խաղաղ նպատակներով միջուկային պայթյուններ անցկացնելու վերաբերյալ մորատորիում հայտարարելու մասին։

Հենց այդ է թելադրում պետական իմաստնությունը։ Այժմ միջուկային զենքի արգի զինանոցը այնպիսի հզորության է հասել, որ նրա միջոցով, ինչպես հաշվարկներն են ցույց տալիս, կարելի է 15 անգամ ոչնչացնել ամբողջ երկրագնդի բնակչությունը։ 1976 թվականին, ըստ ամերիկյան գիտնական Լեսթեր Բրաունի հաշվարկների, համաշխարհային ռազմական ծախսերը հասել էին 350 մլրդ դոլ., իսկ բանակների շարքերում գտնվում էր 30 մլն. մարդ։ Զենքի վրա ընդամենը երկօրյա ծախսերը հավասար էին ՄԱԿ-ի և նրա բոլոր մասնագիտացված կազմակերպությունների տարեկան

բյուջեին, մինչդեռ սպառազինության նոր «ավելի արդյունավետ» սիստեմների մշակմամբ այսօր աշխարհում զբաղված է յուրաքանչյուր չորրորդ գիտական աշխատողը[42]:

ԱՄՆ-ի ռազմական գերատեսչությունները չեն հանդարտվում: Երկրի ամբողջ պատմության ընթացքում 1977/78 ֆինանսական տարում 116,6 մլրդ. դոլ. գումարով ռեկորդային ռազմական բյուջեի հասած պենտագոնը 1978/79 թվականի համար արդեն պահանջում է 134,2 մլրդ. դոլ[43]:

Միլիտարիստական նոր կամպանիային ավելի շատ տոն էին տալիս ԱՄՆ-ի կոնգրեսում եղած ռեակցիոն շրջանները: Ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման վերաբերյալ սովետաամերիկյան բանակցություններում ամերիկյան դիրքորոշումը խստացնելու կոչ էին անում ԱՄՆ-ում հայտնի «անգղները»՝ սենատորներ Բ. Գոլդուոթերը, Հ. Ջեքսոնը, մի շարք կոնգրեսականներ: Լիցքաթափման այդ հակառակորդները դեմոկրատների կառավարությունը մեղադրում էին այն բանում, որ նա իբր հանուն նոր համաձայնագրի կնքման գրեթե պատրաստ է ռուսների առաջ «կապիտուլյացվելու»: Դա ռազմաարդյունաբերական կոմպլեքսի ձայնն էր:

Եվ այսպես, 1978 թվականի գարնանը միջազգային բարդ իրավիճակ է ստեղծվում: Միջազգային լարվածության լիցքաթափման զարգացումը ձեռք էր բերվում լարված պայքարում: Այդ պայմաններում լրիվ չափով դրսևորվեց Սովետական Միության արտաքին քաղաքական լենինյան կուրսի հետևողականությունը, որն ուղղված էր սպառազինությունների մրցավազքի կանխմանը, ռեալ լիցքաթափման հասնելուն: Ինչպես ասաց ՍՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Ի. Բրեժնևը «Ծովակալ Նախիմով» ռազմանավի վրա իր ելույթում, «հենց այստեղ, այս ուղղությամբ վճռվում է արմատական հարցն այն մասին, ինչպես է այսուհետև զարգանալու միջազգային իրադրությունը, հենց այստեղ է այսօր առավել սուր պայքար ծավալվում»[44]: Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ 1974 թվականի նոյեմբերին Հեռավորարևելյան հողի վրա կայացած բարձր մակարդակով սովետաամերիկյան հանդիպում, որի ժամանակ կողմերը պայմանավորվեցին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի



միջև երկարաժամկետ համաձայնագիր կնքել ստրատեգիական հարձակողական սպառազինության սահմանափակման վերաբերյալ: Սակայն Վլադիվոստոկի հանդիպումից շատ չանցած, այդ համաձայնագրի ուղղությամբ աշխատանքը, ԱՄՆ-ի կառավարության անհետևողականության պատճառով, փաստորեն դադարեցվեց: Շնորհիվ Սովետական Միության կոնստրուկտիվ դիրքորոշման, հետագայում հաջողվեց այդ բանակցությունները վերսկսել նախկին պայմանավորվածության համաձայն: Սովետաամերիկյան երկկողմանի հանդիպումների ընթացքում գտնվեցին որոշ հարցերի սկզբունքային հանգուցալուծումներ և ամբողջությամբ զգալիորեն նեղացվեց համաձայնագրի մինչև վերջ չմշակված դրույթների շրջանակը: Դրա հետ մեկտեղ և այդ պայմաններում ԱՄՆ-ի կառավարությունը շարունակում էր խուսանավել և անգամ ձգտում էր աշխարհին մասսայական ոչնչացման նոր՝ նեյտրոնային զենք փաթաթել: «Ժամանակն է, որ արևմուտքի որոշ ղեկավարներ ինչպես հարկն է խորհեն խաղաղության բախտի համար սեփական ժողովուրդների, բոլոր ժողովուրդների հանդեպ իրենց ունեցած պատասխանատվության մասին,— ասում է Լ. Ի. Բրեժնևը,— լուրջ պատրաստակամություն ցուցաբերեն գործնական քայլեր ձեռնարկելու սպառազինությունների մրցավազքի սանձահարման համար:

Սովետական Միությունը իր կողմից կշարունակի ջանքերը ռազմական լարվածության ուղիով անշեղ առաջընթացի հասնելու, իրական լիցքաթափման անցնելու նպատակով: Սա է մեր հաստատ քաղաքականությունը, և մենք անշեղորեն այն կկենսագործենք»: Այդ խոսքերը հսկայական գոհունակությամբ ընդունեց համաշխարհային հասարակայնությունը:

1978 թվականի գարունն ու ամառը ցույց տվեցին, որ ԱՄՆ-ում ազդեցիկ շատ գործիչներ ձգտում են ընդհատել լիցքաթափման պրոցեսը և վերադառնալ եթե ոչ դեպի «սառը», ապա գոնե «զով» պատերազմը: Դա առանձնապես ցայտուն դրսևորվեց Զաիրի ներքին գործերին ՆԱՏՕ-ի երկրների, այդ թվում և ԱՄՆ-ի, միջամտելու ժամանակ: Լիցքաթափումը խեղդելու ևս մեկ փորձ արվեց: Ընդ որում, հայ-

տարածվում էր, որ Զաիրում ժողովրդական ապստամբության պատճառը «սովետական», կամ «կուբայական» կողմի մասնակցությունն է նրան: Զաիրում ՆԱՏՕ-ի որոշ երկրների իմպերիալիստական ագրեսիան արդարացնելու ոգով այդ չարանենգ պրոպագանդան, ըստ էության, վկայում էր, որ ԱՄՆ-ում գործող «սառը պատերազմի» կողմնակիցները շարունակում են կիրառել դեզինֆորմացիայի և գրպարտության այն նույն մեթոդները, որոնք երկար ժամանակ որպես «իրականություն» էին ներկայացվում, երբ ամերիկյան իմպերիալիստները ոտնատակ էին տալիս Վիետնամի հողը «Հյուսիսից կատարված ագրեսիայի», այսինքն՝ հենց իրենց սեփական երկրում վիետնամցիների «ագրեսիայի» պատրվակով, որն, ինչպես, ինքնըստինքյան պարզ է:

Իրականում ի՞նչ էր ընկած Աֆրիկայում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի մի շարք մյուս երկրների ինտերվենցիոնիստական կուրսի հիմքում: Այդ հարցի վրա անհրաժեշտ է կանգ առնել: Երբ ԱՄՆ-ի և ինտերվենցիայի գծով նրա մեղսակիցների ագրեսիվ գործողությունները արդարացվում են ի հաշիվ սովետաամերիկյան հարաբերությունների նկատելի վատացման, ապա այդ անչափ անհանգստացնող ազդակ է, որը վկայում է մի այնպիսի մտադրության մասին, որպեսզի համաշխարհային և, առաջին հերթին, ամերիկյան հասարակայնությունը մոռանա նախորդ տարիների նույնանման իմպերիալիստական գործողությունների դասերը: Ճշմարտությունն այն է, որ Աֆրիկայում սպառնալիքի տակ է ստրատեգիական կուրսը, որի նպատակն է՝ անկախ Աֆրիկային փաթաթել գաղութատիրության նոր սխեմը:

Աֆրիկայում քաղաքական սոցիալտնտեսական լուրջ տեղաշարժեր են տեղի ունենում: Աֆրիկյան մի շարք երկրներ կանգնեցին առաջադիմական սոցիալական զարգացման ճանապարհի վրա, ընտրություն կատարելով հօգուտ սոցիալիստական կողմնորոշման: Ավելի վճռականորեն է հնչում անկախ աֆրիկյան պետությունների միահամուռ ձայնը հանուն միջազգային լարվածության լիցքաթափման, խաղաղության ամրապնդման, պետությունների միջև քաղաքական և տնտեսական հարաբերություններում իրավահավասար սկզբունքների հաստատման: Օրակարգում է՝ գաղութատիրության



և ռասիզմի վերջին մնացորդների վերացումը հարավում:

Իմպերիալիզմի համար այս բարդ պայմաններում ՆԱՏՕ-ի երկրներում տագնապ առաջացավ՝ Աֆրիկայի ազգային-ազատագրական շարժման պրոցեսը կանգնեցնել ի վիճակի չեղան ոչ Վաշինգտոնում և Լոնդոնում, և ոչ էլ Փարիզում ու Բրյուսելում: Այստեղից՝ ՆԱՏՕ-ի ագրեսիվ բլոկի շրջանակներում ջանքերի համախմբումը:

Այստեղից կարևոր եզրակացություն է հետևում: Նոր գաղութատիրության նպատակները՝ ինչ-որ խնդրի լուծումը, ինչպես, օրինակ, Զաիրում ռեժիմը փրկելը չէ: Խոսքը անհամեմատ ավելի լայն նպատակադրվածության մասին է՝ կանգնեցնել ինքնուրույնությունն ամրապնդելու ուղիով աֆրիկյան պետությունների առաջշարժումը, թույլ չտալ Աֆրիկայի էկոնոմիկայում կապիտալիզմի իշխող վիճակի թուլացում: Իմպերիալիստների բլոկի՝ ԱՄՆ-ի հիմնական հարվածային ուժի ներկայիս աֆրիկյան քաղաքականության յուրահատկությունը նրանում է, որպեսզի այդ մայր ցամաքում ազատագրական պայքարի թուլացման նպատակով տեղի ունենա ջանքերի համախմբում, Աֆրիկայի հակաիմպերիալիստական միասնության պառակտում, միջազգային լիցքաթափման պրոցեսի արգելակում:

ԱՄՆ-ի վերադարձն ինտերվենցիոնիզմի քաղաքականությանը նրան ցանկալի դիվիդենդներ չի բերի: Դասական գաղութատիրության ոճով Աֆրիկայի ազգային-ազատագրական շարժման ուժերի հետ ուղղակի ընդհարումն էլ ավելի կգցի նրա հեղինակությունը զարգացող երկրներում, բացասաբար կազդի ամերիկյան պետական գործիչների հայտարարությունների հանդեպ նրանց վստահության վրա: Եվ պատահական չէ, որ Շաբայում տեղի ունեցող իրադարձությունների ժամանակ ամերիկյան մամուլում երևան եկան նախազգուշացումներ այն մասին, որ «Աֆրիկայի անկախ պետությունների հսկայական մեծամասնության հետ զժտվելու երկարաժամկետ հետևանքները աղետալի են լինելու ամերիկյան դիրքերի և ազդեցության համար»[46]: Ավելին, պետք է ասել, որ «ճգնաժամային դիվանագիտության» քաղաքականությունը Աֆրիկայում կարող էր ԱՄՆ-ում ներքաղաքական ամենալուրջ հետևանքներն ունենալ:

Ահա թե ինչու Վիետնամում կրած աղետալի ձախողումից հետո Աֆրիկայում ինտերվենցիոնիստական քաղաքականության վերադառնալը ԱՄՆ-ի կառավարող շրջաններում որոշակի տարաձայնություններ առաջացրեց։

Աֆրիկյան երկրների մեծամասնության կողմից «ճգնաժամային դիվանագիտության» կրկնմանը վճռական դիմադրությունը որոշ չափով «մեղմացրեց» Քարտերի ադմինիստրացիայի ղեկավար մի շարք գործիչների «տոնը»։ Սակայն աֆրիկյան երկրների ներքին գործերին իմպերիալիզմի հետագա ռազմական միջամտության վտանգը և՛ մայր ցամաքի հարավում, և՛ կոնֆլիկտային իրավիճակի մյուս շրջաններում պահպանվում էր։ Սոցիալիստական համագործակցության անդամների հետ աֆրիկյան պետությունների միասնության, նրանց բարեկամության և համակողմանի համագործակցության ամրապնդումը հզոր պատնեշ է զարգացող երկրներում «ճգնաժամային դիվանագիտության» կրկնման դեմ։

1978 թվականի ընթացքում ամերիկյան ադմինիստրացիան միջազգային ասպարեզում և սովետաամերիկյան հարաբերությունների հարցում որոշ այլ անհեռատես քայլեր կատարեց։ Նշենք թեկուզ հակառակ հենց իր, ԱՄՆ-ի շահերի «չինական խաղաքարտը» օգտագործելու ձգտումը։ Ըստ որում, Պեկինի հարցում ԱՄՆ-ը քաղաքական կարճատեսություն է դրսևորում, քանի որ պեկինյան ներկայիս ղեկավարությունը ձգտում է սրել սովետաամերիկյան հարաբերությունները, ռազմական առճակատում հրահրել ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև։ Եվ միայն հակասովետիզմից և հակակոմունիզմից կուրացած, ավելի շատ «քաղաքական պոկերի» ինքնամոռաց խաղացողների հիշեցնող մարդիկ չեն կարող հասկանալ այդ ակնհայտ իրականությունը։ Ընկնելով լիցքաթափման հակառակորդների ակտիվացող կոալիցիայի ճնշման ազդեցության տակ, պետական այդպիսի գործիչները դադարում են ԱՄՆ-ի ազգային շահերը պաշտպանելուց, ծառայության են անցնում ռազմաարդյունաբերական կոմպլեքսը, ուլտրաաջ շրջանները և հակահեղափոխական վտարանդիների կազմակերպությունները ներկայացնող նեղ, չնայած և ազդեցիկ անձանց խմբի մոտ։ Մենք դիտում ենք, ինչպես ԱՄՆ-ում լիցքաթափման պաշտպանության, սովետաամերիկյան կնքած պայմանագրերի



ոգին և տառը պահպանելու, փոխըմբռնման ձգտելու փոխարեն միանգամայն հակառակ բնույթի գործողություններ են ձեռնարկվում։ Նրանք ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև փոխադարձ վստահությունը վերացնելու նպատակ են հետապնդում, թեժացնում են կասկածամտության մթնոլորտը, սպառազինությունների մրցավազքը հրում են դեպի նոր փուլ, լիցքաթափումը խաթարված են հայտարարում «Սովետների ագրեսիվության» պատճառով։ Միջազգային գործերի վերաբերյալ այդպիսի կուրսը հեռու է քաղաքական իմաստությունից և պետական մտածողությունից։ Այն հղի է լուրջ վտանգներով և դա ավելի պարզորոշ են սկսում հասկանալ ԱՄՆ-ի մի շարք պատասխանատու քաղաքական գործիչներ և գործարար մարդիկ։ Լիցքաթափման կողմ է հանդես գալիս ամերիկացիների ճնշող մեծամասնությունը։ Նրանք իրենց պետական գործիչներից պահանջում են պատասխանատու վերաբերմունք մարդկության շահերի և համաշխարհային քաղաքականության պրոբլեմների նկատմամբ։ Առայժմ դժվար է ասել, թե ինչպես կյուրացնի այդ ճշմարտությունը դեմոկրատների կառավարությունը։

Սովետաամերիկյան հարաբերությունների բարելավման ճանապարհը պարզ է։ Այն ընթանում է արդի աշխարհի իրականությունները ճանաչելու, լիցքաթափման հակառակորդների քաղաքական կուրության դեմ պայքարի, դրա համար կառավարության պատասխանատվության, միջազգային հարաբերությունները, այդ թվում և սովետաամերիկյան հարաբերությունները դեպի ետ, դեպի «սառը պատերազմի» ժամանակները վերադարձնելը թույլ չտալու ուղղությամբ։ Միջազգային հարաբերությունների ապագան լիցքաթափման հակառակորդներին ներկայանում է ռազմաքաղաքական մեծ «սառցապատման» պատկերով, որի սառույցներում հենց խեղդամահ է լինելու զինաթափումը։ Նրանց չի հուզում, թե հետո ինչ է լինելու։ Ըստ երևույթին, նրանց չի անհանգստացնում մարդկանց ներկա և ապագա սերունդների ճակատագիրը։ Այդ, իհարկե, հակաբնական է, սակայն, ինչպես հայտնի է, միլիտարիզմը և հումանիզմը միշտ էլ հակապատկերներ են եղել։

Վերջին ժամանակների իրադարձությունները հաստատեցին XXV համագումարում ՍՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի ասված միջազգային իրադրության գնահատման ամբողջ խորությունը. «Լիցքաթափման և զինաթափման հակառակորդները ունեն ոչ քիչ ռեսուրսներ։ Նրանք գործում են ակտիվորեն, տարբեր ձևերով և զանազան ուղղություններով։ Չնայած և իմպերիալիզմի ագրեսիվ գործողությունների հնարավորություններն այժմ զգալիորեն պակասել են, բայց նրա բնույթը նախկինն է մնում։ Ուստի խաղաղասեր ուժերին անհրաժեշտ է բարձր զգոնություն դրսևորել։ Հարկավոր են խաղաղության և բարի կամքի բոլոր ուժերի եռանդուն գործողությունները և միասնությունը»[47]։ Հիրավի, ամերիկյան իմպերիալիզմը, ՆԱՏՕ-ն ակտիվացրել են միջազգային լարվածության սաստկացման իրենց ստրատեգիան, ճգնում են աշխարհին, սոցիալիզմի երկրներին փաթաթել «ուժի դիրքերից» քաղաքականությունը, անում են ամեն բան, որպեսզի արգելակեն ինչպես Աֆրիկայում, այնպես և Ասիայում, ինչպես Մերձավոր, այնպես և Միջին Արևելքում ազատագրված երկրների հասարակական զարգացման պրոցեսը։ Վիեննայում ՍՍՍ—2 վերաբերյալ սովետաամերիկյան պայմանագրի ստորագրումից հետո լարվածության լիցքաթափման վրա գրոհը չտեսնված մասշտաբների հասավ։ ԱՄՆ-ը իր ռազմական հզորության արագ աճի կուրս վերցրեց, պլանավորելով նոր ռազմական ծրագրեր և սպառազինման համար աննախադեպ հատկացումներ, եվրոպական երկրներին միջին շառավղի գործողության հրթիռամիջուկային նոր զենք փաթաթելով։ Սառեցվեցին նաև Եվրոպայում սպառազինությունների սահմանափակման ուղղությամբ բանակցությունները, ձգձգվեց ՍՍՍ—2 պայմանագրի վավերացումը։ Ամերիկյան վարչակազմի որոշ գործիչներ և հատկապես ազգային անվտանգության գծով պրեզիդենտի խորհրդական Զ. Բժեզինսկին, ինչպես ասաց ՍՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը Մոսկվայի Բաումանյան շրջանի ընտրողների հետ հանդիպման ժամանակ, «ամբողջ աշխարհով մեկ հիստերիկա սարքեցին»[48], կապված Աֆղանստանի իրադարձությունների հետ։ Զգտելով իր հեգեմոնիային ենթարկել Միջին Արևելքի երկրները և հսկողության տակ վերցնել նրանց



բնական հարստությունները, Վաշինգտոնում քաղաքական նոր դոկտրինա առաջ քաշեցին, որը համաշխարհային ասպարեզում հասարակայնությանը արդարացիորեն էքսպանսիոնիզմի և ագրեսիայի դոկտրինա անվանեց։ Տպավորություն է ստեղծվում, որ ԱՄՆ-ի պահպանողական ուժերը «սառը պատերազմի» ժամանակների կորսված դիրքերը վերականգնելու պատրանքային հույսեր են փայփայում։

Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում կապիտալիզմի հետագա ոտնձգությունների պատմությունը մեկ անգամ չէ, որ կրկնվել է։ Կրկնվում է այն և մեր օրերում, երբ «սովետական էքսպանսիոնիզմի», «կոմունիստական սպառնալիքի» առասպելի քողի տակ իմպերիալիստական պետությունները, և առաջին հերթին ԱՄՆ-ն ու Անգլիան, փորձում են աշխարհը մղել դեպի նոր «սառը պատերազմի», զարգացող երկրները պահելով որպես հումքի աղբյուր։ Պատկերն, անկեղծորեն ասած, զազրելի է։

Ինչպես հայտնի է, բուրժուական քաղաքագիտության մեջ վաղուց ի վեր նկատելի տեղ են զբաղեցնում միջազգային ասպարեզում կոնֆլիկտային իրավիճակների հետազոտությունները։ Ընդ որում «կոնֆլիկտային ստրատեգիայի», միջազգային կոնֆլիկտների և ճգնաժամերի «անխուսափելիության» կոնցեպցիաները մշտապես ունեցել են բուրժուական քաղաքագետների մեծ մասի առանձնահատուկ պահանջարկը։ Անգամ լիցքաթափման քաղաքականության առավել մեծ նվաճումների ժամանակ նրանք չեն դադարում պնդել, որ այն իբր խարխուլ է և անպայման տեղը զիջելու է առճակատմանը։ Եվ այդ ժամանակ միջազգային ասպարեզում տիրություն կանեն «սառը աշխարհը», «սառը պատերազմը» և անգամ տեղի կունենան «սահմանափակ պատերազմներ» (Վաշինգտոնի վիետնամական ավանտյուրայի նման)։

Ճգնելով ինչ-որ ձևով հիմնավորել իրենց «կոնֆլիկտային ստրատեգիան», բուրժուական քաղաքագետներն ու գիտնականները վաղուց արդեն դիմում են կեղծ պնդումների, որ Սովետական Միությունն իբր իր «կոնֆլիկտային ստրատեգիան» ունի, որն ուղղված է միջազգային կայունության խախտմանը, մասնավորապես, Աֆրիկայում։ Այդ կարգի «փաստարկների» ցնորամտությունը ակներև է, բայց դրանք

ամենևին էլ պատահականորեն չեն պրոպագանդվում իմպերիալիստների և նրանց քսու արբանյակների կողմից։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է ավելի հանգամանորեն կանգ առնել այսպես կոչված «կոնֆլիկտային ստրատեգիայի» որոշ ասպեկտների վրա։ Դա կարևոր է այն առումով, որպեսզի բացահայտվեն լիցքաթափման վիժեցմանն ուղղված նման կոնցեպցիաների իրական նպատակները։

Աֆրիկայում, Միջին և Մերձավոր Արևելքում «լարվածության օջախները» արևմտյան պրոպագանդիստները, ինչպես նաև բուրժուական շատ գիտնականներ հաճախ դիտում են որպես «գերպետությունների կոնֆլիկտային ստրատեգիա»։ Ըստ որում նրանք պնդում են, որ ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը պատասխանատվություն են կրում Աֆրիկայում, Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծված վիճակի համար։

Ինչ վերաբերում է միջազգային կոնֆլիկտների և ճգնաժամերի խաղաղ կարգավորմանը, ապա Սովետական Միությունը դրանից երբեք չի հրաժարվել։ Սակայն ինչ վերաբերում է միջազգային կոնֆլիկտների և ճգնաժամերի բռնկումների համար պատասխանատվությանը, ապա այս հարցում ՍՍՀՄ-ի նկատմամբ պահանջներ ներկայացնելը միանգամայն աբսուրդ կլիներ։

Սովետական Միությունը, անտարակույս, «կոնֆլիկտային» և ոչ մի «ստրատեգիա» չի վարում, նա պատրաստ է նպաստել մեր մոլորակի ցանկացած կետում խաղաղության հաստատմանը, միաժամանակ գտնելով, որ այս կամ այն երկրի, այս կամ այն ռեգիոնի ժողովուրդները լրիվ իրավունք ունեն իրենց բարեկամների և դաշնակիցների հետ միասին հակահարված տալ ԿՀՎ-ի կազմակերպած հակահեղափոխություններին և ինտերվենցիաներին։ Հեղափոխությունները, ինչպես հայտնի է, պետք է կարողանան իրենք իրենց պաշտպանել։

Իսկ ո՞րն է բուն աֆրիկացիների, արաբների, Միջին և Մերձավոր Արևելքի մյուս ժողովուրդների դերը այդ կոնֆլիկտներում։ Իրադարձությունները ցույց են տալիս, որ ժողովուրդները, անտարակույս, չեն համաձայնվի խաղալ այն դերը, որ նրանց համար կցանկանային պատրաստել պարոնայք Քարտերը և Բժեզինսկին։



Ինչպես հայտնի է, զարգացող երկրները հարուստ են հանքանյութերով։ Բայց այդ հարստություններն իմպերիալիզմը կցանկանար իր սեփականությունը հայտարարել, բոլորին ընտելացնել այն մտքին, որ արաբական նավթը կամ, օրինակ, աֆրիկյան երկրների պլատինը, կոբալտը և ուրանը Արևմուտքի էկոնոմիկայի համար «կենսականորեն անհրաժեշտ են»։ Իսկ քանի որ այդպես է, ապա վառելահումքով, արժեքավոր հանքաքարերով հարուստ շրջանները ԱՄՆ-ի անվտանգության համար «կենսականորեն կարևոր են» հայտարարվում։

Ըստ որում այն հարցը, թե ինչ են անելու զարգացած երկրները, երբ իրենց հումքի բնական պաշարներից իմպերիալիստական տերությունները քամեն վերջին հատիկները և անհնարին դառնա սնել իրենց սեփական արդյունաբերությունը, ապա այդ հարցը անգամ չի բարձրացվում։

Վերջին տարիներին զարգացող երկրների ներկայացուցիչները ավելի վճռականորեն են պահանջում նոր միջազգային տնտեսական կարգ սահմանել։ Իսկ այդ լոզունգն անհանգստացնում է իմպերիալիստներին, տրանսազգային մոնոպոլիաների մոնոպոլիստական տերերին։ Նրանց մոտ հարց է ծագում՝ ինչպե՞ս շարունակել, հաշվի չառնելով զարգացող երկրների ժողովուրդների այժմյան և առավել ևս հետագա շահերը, հսկայական չափերով արժեքավոր հումք ստանալ, ըստ որում հին պայմաններով։ Այդպիսի երբ Վաշինգտոնն ու Լոնդոնը նախ և առաջ տեսան նոր «կոնֆլիկտային ստրատեգիայի», միջազգային լարվածության ստեղծման ուղիներում արդեն ոչ միայն Եվրոպայում, այլև Մերձավոր ու Միջին Արևելքում, Աֆրիկայում։

Այդ կարգի գաղութատիրական նոր քաղաքականության տեսական հիմնավորումը դարձան ամեն տեսակ «լարվածության աղեղների» և «ճգնաժամերի» վերաբերյալ միլիտարիստական կոնցեպցիաները, որոնք անվտանգության գծով ԱՄՆ-ի պրեզիդենտի օգնական Բժեզինսկին իր դրամեդանից հանում էր երկրագնդի տարբեր ռեգիոնները։ Ամերիկյան ստրատեգների մտահղացմամբ, այդ «աղեղները» կոչված են արդարացնել զարգացող երկրների պատումը ռազմական նոր բազաներով և «հենակետերով»։ Դրանք յուրատեսակ ասպ-

մական խիստ կորսետի մեջ կկաշկանդեին զարգացող երկըր-ները և արտաքին ու ներքին քաղաքականության բոլոր դըր-սևորումներից անկախ բանի ճնշման ամենօրյա սպառնալիքի միջոց կդառնային, հատկապես բնական հարստությունները շահագործելու բնագավառում։

Անտարակույս, միլիտարիստական այդպիսի վտանգավոր մտադրության համար անհրաժեշտ էր պրոպագանդիստական քողարկում, լայնորեն ռեկլամվող մեծ հնարյուրանք։ Այդ կոն-ցեպցիայի հեղինակների մտահղացմամբ, դա կքողարկեր նեո-գաղութատիրական այն թակարդը, որ ամերիկյան իմպե-րիալիստները ձգտում են դնել զարգացող երկրների անկախ ազգայինտնտեսական առաջընթացի ճանապարհին։

Նորահայտ հեգեմոնիստները գնում են այն բանին, որ-պեսզի «արտաքին սպառնալիքի» աղբյուր «գտնեն», այդպիսի աղբյուր ազդարարեն Սովետական Միությունը, և միայն այն պատճառով, որ նա ամերիկյան և պեկինյան գործակալներին թույլ չտվեց նոր Չիլիի վերածել Աֆղանստանը։ Հենց այս-տեղից էլ Պարսից ծոցում նավերի ռազմական արմադայի չարագուշակ ներկայությամբ Իրանը սարսափեցնելու ձըգ-տումը։ Եվ վերջապես, դրանով է բացատրվում պաշտոնական Վաշինգտոնի ձգտումը, որը ոչ վերջին հերթին ղեկավարվում է նախընտրական, ամերիկացիների մեջ ոչ միայն առավե-լագույն չափով շովինիստական տենդ բորբոքելու, այլև մյուս ռեգիոններում ռազմական դրիխող առաջացնելու նկատա-ռումներով։

«Սառը պատերազմը» գալվանացման ենթարկելու վրա հիմնված ԱՄՆ-ի իմպերիալիստների հաշվարկությունները դատապարտված են ձախողման։ Եվ դա այսօր հասկանում են հօգուտ լիցքաթափման հանդես եկող զարգացող երկրների քաղաքական շատ գործիչներ։ Այսպես, Տանզանիայի պրե-զիդենտ Նյերերեն միանգամայն արդարացիորեն քննադատում էր ԱՄՆ-ի ղեկավարներին այն բանի համար, որ նրանք այն-պիսի տպավորություն են ստեղծում, «թե իբր մենք կանգնած ենք երրորդ համաշխարհային պատերազմի շեմին... Այդ հիմարություն է,— ասել է Նյերերեն։— Մենք չենք հավա-տում, որ պետք է հրաժարվել փոխըմբռնմանը և լիցքաթափ-մանը ուղղված ջանքերից»։ Լիցքաթափման պրոցեսը, սա-



կային, փորձ են անում խափանել ոչ միայն Եվրոպայում, այլև Աֆրիկայում։ Հազիվ էր հասցրել թանաքը չորանալ Ռոդեզիա-յում կրակը դադարեցնելու և այնտեղ ընտրություններ անց-կացնելու վերաբերյալ լոնդոնյան համաձայնագրերը լորդ Կարինգտոնի կողմից ստորագրելուց հետո, երբ Լոնդոնի ցուցումով գործող մեկ ուրիշ լորդի՝ Սոումսի թողտվությամբ հիշյալ համաձայնագիրը սկսեց ամենաանսանձարձակ ձևով խախտվել։ Անգլիացիները, հակառակ իրենց իսկ խոստում-ների, ՀԱՀ-ի ռասիստական զորքերին թույլ տվեցին ակտիվ գործողություններ մղել Ռոդեզիայի տերիտորիայում, ետ չքաշեցին Սոլսբերիի ռեժիմի զորքերը և եպիսկոպոս Մու-զորևայի այսպես կոչված «օժանդակ» կազմավորումները հա-մապատասխան բազաներ։ «Ուղղակի անհավատալի է,— հայտարարել է Նյերերեն,— որ անգլիացիների համար օրի-նակելի վարքագծի օրինակ են ծառայում քաղաքական մար-դասպանները»։

Հենվելով այնպիսի միջոցների վրա, ինչպես հարավաֆ-րիկյան զորամասերի ներկայությունը, ռասիստների կողմից վերահսկվող ռոդեզիական անվտանգության ուժերի առկա-յությունը, համընդհանուր ընտրությունների շրջանում սպի-տակամորթների զինծառայության զորակոչումը, լորդ Սոումսը հրաժարվեց վերացնել ռազմական և արտակարգ դրու-թյունը, ազատություն տալ հայրենասեր քաղաքական բան-տարկյալներին։ Դեռ ավելին, նա չեղյալ հայտարարեց ռազմական դրու-թյան հիման վրա բանտարկված մոտ 7000 մարդու և անգամ չվերացրեց «ռազմականացված գյուղերը», որոնք, ըստ էու-թյան, աֆրիկացիներին հնազանդ վիճակում պահելու վայ-րեր էին։ «Գեղեցիկ պատկեր է»,— տեղին է այստեղ մեջ բե-րել Կ. Մարքսի խոսքերը։

Չզսպելով գաղութատիրական իշխանության նախկին ախոր-ժակը, Լոնդոնը, խախտելով ստորագրված համաձայնագրերը, փորձում էր խանգարել Ռոդեզիայում հայրենասիրական ճա-կատի իշխանության գլուխ անցնելուն։

Մի՞թե դա իսկական ագրեսիա չէ Աֆրիկայի դեմ, մի՞թե դա Զիմբաբվեի ժողովրդի իրավունքների ոտնահարում չէ։ Առկա է բազմամյա միջազգային կոնֆլիկտի լուծման օջախ, որը բազմիցս բորբոքում էին Սոլսբերիի ու Պրետո-

րիայի ռասիստները Վաշինգտոնի ու Լոնդոնի անմիջական և անուղղակի թողտվությամբ։

Հանրագումարի բերելով ամբողջ վերը ասվածը, հարկավոր է նշել.

Նախ և առաջ, ներկայումս Վաշինգտոնի և Լոնդոնի կառավարող շրջանները անհեռատես քաղաքագետներ դուրս եկան։ Նրանք գիտակցաբար սրում են միջազգային իրադրությունը, փորձում վիժեցնել ամբողջ աշխարհում հանրաճանաչ լիցքաթափման քաղաքականությունը, ժողովուրդներին փաթաթել պենտագոնի և ԿՀՎ-ի ղեկավարներով պատրաստված «կոնֆլիկտային ստրատեգիան»։

Երկրորդ, «անգղներին» այդ ջանքերը դատապարտված են ձախողման, լիցքաթափումը խորապես մտել է բոլոր մայր ցամաքների միլիոնավոր մարդկանց գիտակցության մեջ։ Ոմանց դեռ կարելի է ինչ-որ ժամանակով խելքահան անել բուրժուական հակակոմունիստական պրոպագանդայով։ Կարելի է, պարզվում է, շուտափութորեն վերածվել «մահմեդականների բարեկամի», ինչպես այդ անում է Վաշինգտոնը, և միաժամանակ աջակցել նրանց, ովքեր արդեն տասնամյակներ շարունակ սպանում են մահմեդականներին, չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին, սրբապղծություններ անելով։ Կարելի է բարեկամանալ նոր ընկերոջ դիկտատորի հետ, նրա «գլուխը յուղելով» Աֆղանստանի և Հնդկաստանի դեմ պայքարի համար զենք հատկացնելու խոստումներով։

Կարելի է, վերջապես, վերամբարձորեն խոսել Հարավային Աֆրիկայում «մեծամասնության կառավարմանը խաղաղ ճանապարհով անցնելու» մասին, ինչպես այդ անում էր Քարտերը ԱՄՆ-ի կոնգրեսին հղած իր ուղերձում, միաժամանակ ՀԱՀ-ում ժամանակակից ռազմաարդյունաբերական կոմպլեքս ստեղծելով, որի միջոցով այդ մեծամասնությանը սպանում ու ճնշում են։

Մի խոսքով, իմպերիալիստական պրոպագանդան, իհարկե, կարող է որոշ ժամանակ առճակատման աղջամուղջը որպես զարգացող երկրների հետ համագործակցության «նոր փուլի» լուսաբաց ներկայացնել, որի հիմնական բովանդակությունն, ըստ էության՝ «Այն ամենը, ինչ իմն է՝ իմն է, և այն բոլորը, ինչ ձերն է՝ նույնպես իմն է» թեզիսն է։



Սակայն, և այդ անհրաժեշտ է ընդգծել, պետությունների ճնշող մեծամասնությունը պարզապես չի կարող համաձայնվել նման հետամնաց կովբոյական պրիմիտիվ մտածողությանը և կայսերական նկրտումներին։ Չէ՞ որ, եթե դա, այդ մտածելակերպը երկար ժամանակով որևէ ձևով իրականացվեր ամերիկյան արտաքին քաղաքական ստրատեգիայում, ապա այդ կնշանակեր, ինչպես վերջերս գրել է ալժիրյան «Ալ-Շաաբ» թերթը, որ Արևմուտքը ետ կվերադարձներ զարգացող երկրներում կորսված դիրքերը և կրկին կախվեր նրանց բնական հարստություններին։

Ոչ թե մյուս պետությունների անվտանգությունը, այլ, ընդհակառակը, Սովետական Միության, նրա բարեկամների և դաշնակիցների անվտանգությունը թուլացնելու ձգտումը, սոցիալիզմի և զարգացող երկրների դեմ պայքարում ուժերի հաշվեկշիռը փոխելու անիրականանալի ցանկությունը՝ ահա թե ինչ է մտահոգում ամերիկյան արտաքին քաղաքականության ներկայիս վայ-ղեկավարներին։

Միջազգային համագործակցության ուղիներում առճակատման թակարդներ տեղադրելով, ամերիկյան իմպերիալիստները և նրանց հետևող անգլիական տորիները, որոնք բոլորովին չեն մտածում Անգլիայի համար այդ հաճոյակատարության ռազմաստրատեգիական ծանր հետևանքների մասին, ապարդյուն կերպով ձգտում են գոնե անհույս հաջողությունների հասնել։

Բայց իմպերիալիզմին չի վիճակված իր նպատակներին հասնել։ Նոր գաղութարարության թակարդները չնայած և վտանգավոր են, սակայն իրենց նպատակին չեն հասնի։

Ոչ մի կասկած չի հարուցում այն, որ արդիականության խաղաղասիրական և առաջադիմական ուժերի միասնական կամքը, չնայած լիցքաթափման հակառակորդների բոլոր նկրտումներին, կհաղթանակի այն բարդ պայքարում, որը դիտվում է 70-ական թվականներին միջազգային ասպարեզում։ Պետությունների համաշխարհային ընկերակցության համար լիցքաթափման անհրաժեշտությունը ստեղծող օբյեկտիվ պրոցեսներն իրենց ճանապարհը կհարթեն։ «Դարձնել աշխարհն ավելի ամուր, անխախտ՝ չկա ավելի առօրյա և կենսականորեն կարևոր խնդիր... Ինչ վերաբերում է Սովետա-

կան Միությանը, ապա մենք այս հարցում չենք հապաղի»[49]։ «Ռազմական հիստերիայի և սպառազինման տենդագին մըրցավազքի «դոկտրինային» մենք հակադրում ենք աշխարհում խաղաղության և անվտանգության հետևողական պայքարի դոկտրինան»[50]։ Լ. Ի. Բրեժնևի այս խոսքերը վկայում են միջազգային լարվածության հետագա թուլացման, այդ թվում նաև ամերիկյան ժողովրդի հետ բարեկամության զարգացման և ամրապնդման հանդեպ ՍՄԿԿ-ի, սովետական ժողովրդի աննկուն կամքը։

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Առաջաբան

1 Լ. Ի. Բրեժնև, *Լենինյան կուրսով, ճառեր և հոդվածներ, հ. 4, Եր. 1975, էջ 351։*

2 «Правда», 17 июня, 1978 г.

### ԳԼՈՒԽ I

1 «Правда», 4 июля 1977 г.
2 **A. Schlesinger Jr.** Origins of the Cold War.— "Foreign Affairs", Oct. 1967, p. 22—23.
3 Ibid., p. 26—39.
4 **J. P. Warburg.** The United States in the Postwar World. L., 1966, p. 33.
5 **A. Schlesinger Jr.** Op. cit., p. 52.
6 Ibid., p. 49.
7 "American Diplomacy in a New Era", Notre Dame. Indiana, 1961, p. 300—302.
8 Ibid., p. 306—307.
9 Ibid., p. 318.
10 *Պետական քարտուղար Ջ. Դալլեսի գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս* «Дипломатия современного империализма. Люди, проблемы, методы». М., 1969.
11 **A. Berding.** Dulles on Diplomacy. N.Y., 1965, p. 157.
12 **F. Elliot, M. Summerskiel.** A Dictionary of Politics. L., 1957, p. 90.
13 **A. Berding.** Op. cit., p. 30.
14 Ibid., p. 31—32.
15 Ibid., p. 34.
16 **W. W. Rostow.** View From the Seventh Floor. N.Y., 1964.
17 Ibid., p. 35.

[18] Ibid., p. 34.
[19] Ibid., p. 48.
[20] Ibid., p. 34.
[21] Ibid., p. 35.
[22] "Journal of International Affairs", 1963, No. 1, p. 51.
[23] Ibid., p. 54.
[24] Վ. Ի. Լենին. *Երկ., հ. 32, էջ 420։*
[25] Լ. Ի. Բրեժնև. *Լենինյան կուրսով. ճառեր և հոդվածներ, հ. 2, եր. 1976, էջ 137։*
[26] **R. Straus-Hupe.** The Real Communist Threat.— "International Affairs: Oct. 1965, p. 612.
[27] Ibid., p. 619—622.
[28] **J. P. Warburg.** Op. Cit.
[29] **R. N. Gardner.** In Persuit of World Order. N.Y., 1966, p. XIII.
[30] **H. Cleveland.** The Obligations of Power. N.Y., 1966, p. 15.
[31] **G. F. Kennan.** On Dealing with the Communist World. N.Y., 1964, p. 3—4, 21.
[32] **A. Berding.** Op. cit., p. 84.
[33] Ibid., p. 84—85.
[34] **Sir. W. Hayter.** The Diplomacy of the Great Powers. L., 1960.
[35] Ibid., p. 10, 16—17.
[36] **J. L. McCamy.** Conduct of the New Diplomacy, p. 7.
[37] Ibid., p. 3—4.

## ԳԼՈՒԽ II

[1] "U.S. News and World Report", Nov. 28, 1960, p. 73.
[2] Ibid., p. 72, 75, 76.
[3] Ibid., p. 78.
[4] "U.S. News and World Report", Dec. 5, 1960, p. 44—48.
[5] Ibid., p. 81—82.
[6] "Foreign Affairs", Jan., 1961, p. 174—185.
[7] **Th. Sorensen.** Kennedy. N.Y., 1965, p. 602.
[8] "Documents on American Foreign Relations, 1961", Ed. by R. Stebbins. N.Y., 1962, p. 19.
[9] Ibid., p. 20.
[10] Ibid., p. 20—21.
[11] Message of President Kennedy to the Congress, March 28, 1961.— "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins. N.Y., 1962, p. 51—66.
[12] Ibid., p. 52.
[13] Ibid., p. 55—56.
[14] **Morton H. Halperin.** Contemporary Military Strategy. L., 1967, p. 53.



[15] **Th. Sorensen.** Op. cit., p. 609.
[16] **Morton H. Halperin.** Op. cit., p. 53.
[17] "Statistical Abstract of the United States, 1961", p. 244; "Statistical Abstract of the United States, 1968", p. 246.
[18] "Department of Defense Appropriations for Fiscal Year 1969. Hearings Before the Subcommittee of the Committee on Apropriations. U.S. Senate, 90th Congress, 2nd Session". Wash., D.C. Government Printing Office, 1968. Part 5, p. 2803.
[19] **C. Keysen.** Military Strategy, Military Forces and Arms Control in "Agenda for the Nation". Wash., D.C., 1968, p. 550.
[20] President **J. F. Kennedy.** To Turn the Tide. L., 1962, p. 59.
[21] "Department of Defense Appropriations for 1964. House Subcommittee of the Committee on Appropriations". Wash., D.C., 1963, Part 1, p. 340—341.
[22] **Th. Sorensen.** Op. cit., p. 509.
[23] Անատոլի Գրոմիկո. *Պրեզիդենտ Քենեդու 1036 օրը. Եր. 1969, էջ 217։*
[24] **A. M. Schlesinger Jr.** A Thousand Days. N.Y., 1965, p. 24; **Haynes Johnson.** The Bay of Pigs. N.Y., 1964, p. 53—54.
[25] Statement by President Eisenhower: U.S. Breaks Ties with Government of Cuba.— "Department of State Bulletin", Jan. 23, 1961, p. 103—104.
[26] **Th. Sorensen.** Op. cit., p. 294—296.
[27] "Department of State Bulletin", May 8, 1961, p. 659.
[28] "Documents on American Foreign Relations 1961". Ed. by R. Stebbins, p. 70—88.
[29] Ibid., p. 86.
[30] Ibid., p. 70.
[31] *Դը Գոլի հետ Քենեդու բանակցությունների մասին — տե՛ս* **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 349—358; **Th. Sorensen.** Op. cit., p. 559—562; **Hugh Sidey.** John F. Kennedy. Portrait of a President. N.Y., 1964, p. 175—190.
[32] Joint Communiqué of President Kennedy and President Charles de Gaule. P., June 2, 1961.— "Department of State Bulletin", June 26, 1961, p. 999.
[33] **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 360—368; **Th. Sorensen.** Op. cit., p. 547—647.
[34] President Kennedy's Report to the Nation on his Visit to Paris, Vienna and London. June 6, 1961.— "Department of State Bulletin", June 26, 1961, p. 991—995.
[35] *Վարշավյան պայմանագրի մասնակից պետությունների կառավարությունների հայտարարությունը. «Սովետական Հայաստան», 15 հուլիսի 1961 թ.*
[36] «Известия», 20 августа 1961 г.

37 *ՍՍՀՄ կառավարության նոտան ԱՄՆ-ի կառավարությանը. «Սովետական Հայաստան», 21 օգոստոսի 1961 թ.*
38 **Th. Sorensen.** Op. cit., p. 593—595.
39 Ibid., p. 589.
40 «Правда», 10 сентября 1961 г.
41 President Kennedy's Report to the Nation, July 25, 1961.— "Documents on American Foreign Relations 1961". Ed. by R. Stebbins, p. 95—105.
42 Ibid., p. 100.
43 **Hugh Sidey.** Op. cit., p. 231.
44 Ibid., p. 232.
45 *Այդ մասին էր, մասնավորապես, վկայում 1961 թ. ապրիլի 18-ին Ժնևում ներկայացված միջուկային փորձարկումների արգելման վերաբերյալ անգլո-ամերիկյան պայմանագրի նախագիծը։ Նրանում եղած «վերահսկման» մասին դրույթները ուղղված էին և ոչ իրական, սպառնալիքի տակ դնելով Սովետական Միության անվտանգությունը։ Միջուկային փորձարկումների արգելման վերաբերյալ անգլո-ամերիկյան նախագիծը համաձայնագրի համար հիմք չէր կարող դառնալ։ Անգլո-ամերիկյան պայմանագրի նախագծի հիմնական դրույթները տե՛ս.*
45 "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins, p. 124—134.
46 «Правда», 31 августа 1961 г.
47 **Th. Sorensen.** Op. cit. p. 618.
48 *ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի նամակը Հնդկաստանի պրեմիեր-մինիստրին.—«Սովետական Հայաստան», 22 սեպտեմբերի 1961 թ.*
49 «Правда», 31 августа 1961 г.
50 Resumption of Underground Testing by the United States: Statement by President Kennedy, Sept. 5, 1961.— "Department of State Bulletin", Sept. 18, 1961, p. 475; **Th. Sorensen.** Op. cit., p. 620.
51 Statement by President Kennedy, Sept. 15, 1961.— "Department of State Bulletin", Oct. 2, 1961, p. 543.
52 White House Statement, Oct. 17, 1961.—"Department of State Bulletin", Nov. 6, 1961, p. 749; White House Statement, Oct. 30, 1961.— "Department of State Bulletin", Nov. 20, 1961, p. 844.
53 Statement by President Kennedy, Nov. 2, 1961.— "Department of State Bulletin", Nov. 20, 1961, p. 844—845.
54 *ՍՍՀՄ կառավարության հայտարարությունը միջուկային զենքի փորձարկումների դադարեցման հարցի վերաբերյալ բանակցությունների վերսկսման կապակցությամբ։—«Սովետական Հայաստան», 28 նոյեմբերի 1961 թ.։ Հայտարարությանը կից ներկայացվում էր միջուկային և ջերմամիջուկային զենքի փորձարկումների դադարեցման վերաբերյալ համաձայնագրի նախագիծը, որն, ըստ էության, այդ պրոբլեմի գծով հետագա համաձայնագրի հիմքն հանդիսացավ։*



55 «Движущие силы внешней политики США», М., 1965, стр. 113.
56 Report to the President by Disarmament Adviser McCloy, Oct. 6, 1961. — "Department of State Bulletin", Nov. 6, 1961, p. 766—767.
57 *Այս հարցի վերաբերյալ տես.* «Правда», 25 сентября 1961 г., «История международных отношений и внешней политики СССР, том III (1945—1963 гг.)», М., 1964, с. 577—578.
58 *ՍՍՀՄ կառավարության հաղորդագրությունը զինաթափման հարցերի շուրջ սովետա-ամերիկյան երկկողմանի բանակցությունների մասին.—«Սովետական Հայաստան», 26 սեպտեմբերի 1961 թ.*
59 «50 лет борьбы СССР за разоружение. Сборник документов». М., 1967, с. 455 (далее: «50 лет борьбы СССР за разоружение»).
60 Adress by President Kennedy to the General Assembly, Sept. 25, 1961.—"Department of State Bulletin", Nov. 16, 1961, p. 620.
61 *Համատեղ հայտարարություն զինաթափման շուրջ բանակցությունների համար համաձայնեցված սկզբունքների մասին.—«Սովետական Հայաստան», 23 սեպտեմբերի, 1961 թ.*
62 *Հարցի այդ կողմին ուշադրություն էր դարձվում «Զինաթափման հարցերի շուրջ սովետա-ամերիկյան երկկողմանի բանակցությունների մասին Սովետական կառավարության հաղորդագրության» մեջ։*
63 *Նույն տեղը, էջ 445։*
64 *Նույն տեղը, էջ 523—544։*
65 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 474.
66 "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins. N.Y., 1963, p. 2.
67 Ibid.
68 «50 лет борьбы СССР за разоружение», стр. 456.
68 Цит. по «Международная жизнь», 1962 г., № 7, с. 23.
69 Там же, с. 27.
70 Там же, с. 25.
71 Там же, с. 20.
72 "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 3.
73 Цит. по «Международная жизнь», 1962 г., № 7, с. 52.
74 Там же.

## ԳԼՈՒԽ III

1 **R. F. Kennedy.** Thirteen Days. A Memoir of the Cuban Crisis. N.Y., 1969.
2 **A. M. Schlesinger Jr.** 1000 Days. John F. Kennedy in the White House. Boston, 1965.
3 **Th. Sorensen.** Op. cit.
4 «Внешняя политика СССР. Учебное пособие». М., 1968, с. 230.
5 Statement by the President Kennedy. Sept. 4, 1962. — "Department of State Bulletin", Sept. 24, 1962, p. 450.

«Внешняя политика Советского Союза и международные отношения. Сборник документов. 1962 год», М., 1963, с. 362.

Statement by the President. Sept. 13, 1962. — "Department of State Bulletin", Oct. 1, 1962, p. 481—482.

Ibid., p. 482.

Communiqué of the Informal Meeting of American Foreign Ministers and Special Representatives. Wash., Oct. 2—3, 1962. — "Department of State Bulletin", Oct. 22, 1962, p. 599.

Ibid., p. 600.

Joint Resolution of the U.S. Congress. — "Public Law", 87—733, approved Oct. 3, 1962.

U Thant to Premier Fidel Castro. Oct. 26, 1962. — "Documents on American Foreign Relations, 1962", Ed. by R. Stebbins, p. 404.

"Foreign Policy in the Sixties. The Issues and the Instruments", Ed. by R. Hilsman and R. Good. Baltimore, 1965, p. 128.

**Th. Sorensen.** Op. cit., p. 672.

Ibid., p. 673.

"Foreign Policy in the Sixties. The Issues and the Instruments", p. 128.

**A. M. Schlesinger Jr.** Op. cit., 80.

**R. F. Kennedy.** Op. cit., p. 31.

**M. H. Halperin.** Contemporary Military Strategy. L., 1968, p. 41—42.

**A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 803.

The Foreign Aid and Related Agencies Appropriation Act, Fiscal Year 1963: "Public Law", 87—872, approved Oct. 23, 1962. — "Documents on American Foreign Relations, 1962", Ed. by R. Stebbins, p. 373—374.

**Th. Sorensen.** Op. cit., p. 674.

**A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 802.

**Th. Sorensen.** Op. cit., p. 675; **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 804.

**J. G. Stoessinger.** The Might of Nations. World Politics in Our Time. N.Y., 1969, p. 166.

**A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 803.

**R. F. Kennedy.** Op. cit., p. 31.

**Th. Sorensen.** Op. cit., 683.

Ibid., p. 688.

АВП СССР.

Там же.

Там же.

Там же.

Там же.

Там же.

36 Там же.

37 Там же.

38 *Ռ. Քեննեդիի «Տասներեք օր» գրքում Սովետական Միության արտաքին գործերի մինիստրի հետ ԱՄՆ-ի պրեզիդենտի ունեցած զրույցը ծայրահեղ անճշտորեն է ներկայացված։ Ինչպես հաստատապես նշել է Թ. Սորենսենը, «Ռոբերտ Քեննեդին անձամբ էր թելադրում 1967 թվականի աշնանը այդ գրքի ձեռագիրը անձնական օրագրերի և հուշերի հիման վրա» (1967 թ.* «Mc Call» *ամսագրի նոյեմբերյան համարում Ռ. Քեննեդիի հրապարակված ձեռագրի վերաբերյալ Թ. Սորենսենի համառոտ ներածությունից)։ Ռ. Քեննեդիի հուշերն այդ զրույցի մասին աղոտ են և անճիշտ։ Նա, օրինակ, պնդում է, որ իբր թե, զրույցի ընթացքում Գրոմիկոն ասաց, որ Միացյալ Նահանգները պետք է վերջ տան սպառնալ Կուբային»* (R. F. Kennedy. Op. cit., p. 40)։ *Իրականում զրույցը սկսվել է եվրոպական պրոբլեմների քննարկումից։ Այդ, ի դեպ, խոստովանում են իրենց հուշերում Շլեզինգերը և Սորենսենը։ Այնուհետև Ռ. Քեննեդին գրում է, որ այն բանից հետո, երբ զրույցի ընթացքում պրեզիդենտն ընթերցեց 1962 թ. սեպտեմբերի 4-ի իր հայտարարությունը, որտեղ նշված էին ուժի լուրջ հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Սովետական Միությունը Կուբայում հրթիռներ կամ հարձակողական այլ զենք տեղադրի», Գրոմիկոն հավաստիացրեց նրան, որ այդ երբեք տեղի չի ունենա և որ Միացյալ Նահանգները չպետք է անհանգստանան»,* (Ibid., p. 41)։ *Ռ. Քեննեդիի կողմից զրույցի այսպիսի շարադրանքը ամենևին չի համապատասխանում իրականությանը։ Պրեզիդենտն իսկապես զրույցի վերջում, ընթերցեց սեպտեմբերի 4-ի իր հայտարարությունը։ Բայց հենց ինքը զրույցից հետո ասել է Սորենսենին, որ Ա. Ա. Գրոմիկոն չարձագանքեց իմ ընթերցած հայտարարությանը»* (Th. Sorensen. Op. cit., p. 691)։ *Հետաքրքրական, Ռ. Քեննեդիի վարկածը, որը հետևանք էր կարիբյան ճգնաժամի ընթացքում և նրանից հետո ԱՄՆ-ում ծավալված հակասովետական պրոպագանդիստական կամպանիայի, քննադատության չի դիմանում։*

39 АВП СССР.

40 Там же.

41 Там же.

42 Там же.

44 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 806.

45 Ibid.

46 **R. F. Kennedy.** Op. cit., p. 38.

47 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 807.

48 **R. F. Kennedy.** Op. cit., p. 36.

49 Ibid.

50 Ibid.

51 **Th. Sorensen.** Op. cit., p. 695.

6 «Внешняя политика Советского Союза и международные отношения. Сборник документов. 1962 год». М., 1963, с. 362.

7 Statement by the President. Sept. 13, 1962.—"Department of State Bulletin", Oct. 1, 1962, p. 481—482.

8 Ibid., p. 482.

9 Communiqué of the Informal Meeting of American Foreign Ministers and Special Representatives. Wash., Oct. 2—3, 1962.—"Department of State Bulletin", Oct. 22, 1962, p. 599.

10 Ibid., p. 600.

11 Joint Resolution of the U.S. Congress.—"Public Law", 87—733, approved Oct. 3, 1962.

12 U. Thant to Premier Fidel Castro. Oct. 26, 1962.—"Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 404.

13 "Foreign Policy in the Sixties. The Issues and the Instruments". Ed. by R. Hilsman and R. Good. Baltimore, 1965, p. 128.

14 **Th. Sorensen.** Op. cit., p. 672.

15 Ibid., p. 673.

16 "Foreign Policy in the Sixties. The Issues and the Instruments", p. 128.

17 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., 80.

18 **R. F. Kennedy.** Op. cit., p. 31.

19 **M. H. Halperin.** Contemporary Military Strategy. L., 1968, p. 41—42.

20 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 803.

21 The Foreign Aid and Related Agencies Appropriation Act, Fiscal Year 1963: "Public Law", 87—872, approved Oct. 23, 1962.—"Documents on American Foreign Relations, 1962", Ed. by R. Stebbins, p. 373—374.

22 **Th. Sorensen.** Op. cit., p. 674.

23 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 802.

24 **Th. Sorensen.** Op. cit., p. 675; **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 804.

25 **J. G. Stoessinger.** The Might of Nations. World Politics in Our Time. N.Y., 1969, p. 166.

26 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 803.

27 **R. F. Kennedy.** Op. cit., p. 31.

28 **Th. Sorensen.** Op. cit., 683.

29 Ibid., p. 688.

30 АВП СССР.

31 Там же.

32 Там же.

33 Там же.

34 Там же.

35 Там же.



36 Там же.

37 Там же.

38 *Ռ. Քեննեդին «Տասներեք օր» գրքում Սովետական Միության արտաքին գործերի մինիստրի հետ ԱՄՆ-ի պրեզիդենտի տվյալ զրույցը ծայրահեղ տենդենցիոզ է մեկնաբանված։ Ինչպես հետագայում նշել է Թ. Սորենսենը, «Ռոբերտ Քեննեդին անձամբ էր խմբագրում 1967 թվականի աշնանը ապագա գրքի ձեռագիրը անձնական օրագրերի և հուշերի հիման վրա» (1967 թ. «*Mc Call*» ամսագրի նոյեմբերյան համարում Ռ. Քեննեդիի հրապարակված ձեռագրի վերաբերյալ Թ. Սորենսենի համառոտ ներածությունից)։ Ռ. Քեննեդիի հուշերն այդ զրույցի մասին աղոտ են և անճիշտ։ Նա, օրինակ, պնդում է, որ իբր թե, զրույցի ընթացքում Գրոմիկոն ասաց, որ Միացյալ Նահանգները պետք է վերջ տան սպառնալ Կուբային»* (**R. F. Kennedy.** Op. cit., p. 40)։ *Իրականում զրույցը սկսվել է եվրոպական պրոբլեմների քննարկումից։ Այդ, ի դեպ, խոստովանում են իրենց հուշերում Շլեզինգերը և Սորենսենը։ Այնուհետև Ռ. Քեննեդին գրում է, որ այն բանից հետո, երբ զրույցի ընթացքում պրեզիդենտն ընթերցեց 1962 թ. սեպտեմբերի 4-ի իր հայտարարությունը, որտեղ նշվում էին այն լուրջ հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Սովետական Միությունը Կուբայում հրթիռներ կամ հարձակողական այլ զենք տեղադրի», Գրոմիկոն հավաստիացրեց նրան, որ այդ երբեք տեղի չի ունենա և որ Միացյալ Նահանգները չպետք է անհանգստանան»,* (Ibid., p. 41)։ *Ռ. Քեննեդիի կողմից զրույցի այդպիսի շարադրանքը ամենևին չի համապատասխանում իրականությանը։ Պրեզիդենտն իսկապես զրույցի վերջում, ընթերցեց սեպտեմբերի 4-ի իր հայտարարությունը։ Բայց հենց ինքը զրույցից հետո ասել է Սորենսենին, որ Ա. Ա. Գրոմիկոն «չարձագանքեց իմ ընթերցած հայտարարությանը»* (**Th. Sorensen.** Op. cit., p. 691)։ *Հետևապես, Ռ. Քեննեդիի վարկածը, որը հետևանք էր կարիբյան ճգնաժամի ընթացքում և դրանից հետո ԱՄՆ-ում ծավալված հակասովետական պրոպագանդիստական կամպանիայի, քննադատության չի դիմանում։*

39 АВП СССР.

40 Там же.

41 Там же.

42 Там же.

44 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 806.

45 Ibid.

46 **R. F. Kennedy.** Op. cit., p. 38.

47 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 807.

48 **R. F. Kennedy.** Op. cit., p. 36.

49 Ibid.

50 Ibid.

51 **Th. Sorensen.** Op. cit., p. 695.

52 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 812; **Th. Sorensen.** Op. cit., p. 702.

53 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 812.

54 *Ռ. Քեննեդիի գրքում ԱՄՆ-ի պրեզիդենտի և Սովետական կառավարության ղեկավարի միջև հոկտեմբերի 22-ից մինչև 26-ը տեղի ունեցած նամակագրությունից մի շարք տեղեր շարադրվում է ընտրովի.* (R. F. Kennedy. Op. cit., p. 79—81).

55 АВП СССР.

56 "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 374—380.

57 «Внешняя политика СССР. Учебное пособие», с. 232.

58 **J. G. Stoessinger.** Op. cit., p. 166.

59 **R. F. Kennedy.** Op. cit., p. 55—56.

60 "Documents on American Foreign Relations, 1962", Ed. by R. Stebbins, p. 380—383.

61 Ibid., p. 383—384.

62 *Ռ. Քեննեդիի այդ հայտարարությունը իրականությանը չի համապատասխանում: Նա սովետական դեսպանատուն ներկայացավ պրեզիդենտ Քեննեդիի ուղղակի հանձնարարությամբ, որպեսզի կոնտակտ հաստատի սովետական կողմի հետ և մեկ անգամ էլ փորձ արվի բացատրել ԱՄՆ-ի կառավարության ակցիաները: Այդ մասին Ռ. Քեննեդին հետագայում գրել է* "Thirteen Days" (p. 63) *գրքում:*

63 АВП СССР.

64 «Внешняя политика Советского Союза и международные отношения. Сборник документов. 1962 год», с. 399—405.

65 АВП СССР.

66 Там же.

67 Там же.

68 Там же.

69 Там же.

70 "Documents on American Foreign Relations, 1962", Ed. by R. Stebbins, p. 383.

71 U.N. Documents S/5187, Oct. 23, 1962 (ed. cit.).

72 U.N. Documents S/5190, Oct. 24, 1962 (ed. cit.).

73 U.N. Document S/PV. 1024, Oct. 24, 1962 (ed. cit.).

74 АВП СССР.

75 «Внешняя политика СССР и международные отношения. Сборник документов. 1962 год», с. 410.

76 "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 389—391.

77 «Внешняя политика СССР и международные отношения. Сборник документов. 1962 год», с. 412.

78. **Th. Sorensen.** Op. cit., p. 710.



79 "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 391.

80 Ibid.

81 «Внешняя политика СССР и международные отношения. Сборник документов. 1962 год», с. 410—419.

82 АВП СССР.

83 Там же.

84 **R. F. Kennedy.** Op. cit., p. 71.

85 АВП СССР.

86 Там же.

87 Там же.

88 Там же.

89 **R. F. Kennedy.** Op. cit., p. 86—91.

90 Ibid.

91 "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 404.

92 Ibid., p. 405.

93 Ibid., p. 405—406.

94 АВП СССР.

95 **R. F. Kennedy.** Op. cit., p. 108—109.

96 АВП СССР.

97 «Внешняя политика Советского Союза и международные отношения. Сборник документов. 1962». с. 416.

98 **R. F. Kennedy.** Op. cit., p. 101—102.

99 "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 396.

100 **J. G. Stoessinger.** Op. cit., p. 167—168.

101 «Внешняя политика Советского Союза и международные отношения. Сборник документов, 1962 год», с. 418.

102 **R. F. Kennedy.** Op. cit., p. 119.

103 «Правда», 29 октября 1962 год.

104 "Documents on American Foreign Relations. 1961". Ed. by R. Stebbins, p. 402.

105 АВП СССР.

106 «Внешняя политика СССР и международные отношения. Сборник документов. 1962 год», с. 427.

107 АВП СССР.

108 Там же.

109 "Documents on American Foreign Relations, 1963". Ed. by R. Stebbins, N.Y., 1964, p. 369.

110 «Визит Леонида Ильича Брежнева в республику Куба». М., 1974, с. 21.

[111] "Documents on American Foreign Relations, 1963". Ed. by R. Stebbins, p. 370.
[112] Ibid., p. 373.

### ԳԼՈՒԽ IV

[1] Վ. Ի. Լենին. Երկ., հ. 35, էջ 425—426։
[2] «Документы внешней политики СССР», т. II, М., 1958, с. 91—95.
[3] Այս կապակցությամբ անկեղծ խոստովանություններ է, օրինակ, արել Մ. Բանդին 1969 թվականի հոկտեմբերին.
[3] To Cap the Volcano. — "Foreign Affairs", Oct. 1969, p. 9.
[4] Լ. Ի. Բրեժնև. Լենինյան կուրսով. Ճառեր և հոդվածներ, հ. 1, Եր. 1975 թ., էջ 302—303։
[5] «50 лет советской внешней торговли», М., 1967, с. 233.
[6] «50 лет борьбы СССР за разоружение», с. 412.
[7] Там же, с. 444.
[8] Там же, с. 560.
[9] «Внешняя политика Советского Союза и международные отношения. Сборник документов. 1964—1965 годы», М., 1966, с. 120.
[10] Там же.
[11] «Внешняя политика Советского Союза и международные отношения. Сборник документов. 1966 год», М., 1967, с. 222.
[12] **Л. И. Брежнев.** Пятьдесят лет великих побед социализма. М., 1967, с. 57.
[13] Վ. Ի. Լենին. Երկ., հ. 39, էջ 437։
[14] "New York Times", Jan. 21, 1961.
[15] "New York Times", Febr. 16, 1961.
[16] "New York Times", Aug. 7, 1960.
[17] Ibid., p. 275.
[18] Ibid., p. 276.
[19] Background Documents on East-West Trade, Committee on Foreign Relations; United States Senate, Febr. 1965, U.S. Government Printing Office, Wash., 1965.
[20] Ibid., p. 111.
[21] Ibid., p. 13.
[22] Ibid.
[23] Ibid., p. 13—14.
[24] East-West Trade, Hearings before the Committee on Foreign Relations, United States, 89th Congress, First Session, Part II, Febr. 24, 25, 26, 1965. U.S. Government Printing Office, Wash., 1965, p. 287.
[25] Ibid., p. 289.
[26] Ibid., p. 282.
[27] Ibid., p. 288.
[28] Ibid., p. 290—291.



[29] Ibid., p. 280, 292—293. Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների հետ ԱՄՆ-ի արտաքին առևտրի մասին վերը բերված տվյալներում չի արտահայտված «հատուկ կատեգորիայի» ամերիկյան ապրանքների առաքումը։ Միջին վերցրած նրա ծավալն աննշան է և այդ առևտրի ընդհանուր պատկերի վրա չի ազդում։
[30] Ալբանիային, ԲԺՀ-ն-ը, ՀԺՀ-ը, ԳԴՀ-ն, ԿԺԴՀ-ը, ՉԺՀ-ն, ՄԺՀ-ը, ՎԺՀ-ը, ՍՍՀՄ-ը, ՉՍՍՀ-ը։
[31] "Statistical Abstract of the United States", 1963.
[32] East-West Trade. A Complication of Views of Businessmen; Bankers and Academic Experts. Committee on Foreign Relations, United States Senate, Nov. 1964, U.S. Government Printing Office, Wash., 1964, p. 3.
[33] Ibid., p. 3.
[34] Ibid.

### ԳԼՈՒԽ V

[1] **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 321.
[2] "International Affairs", Oct. 1965, p. 628.
[3] "Vietnam and Southeast Asia". Report of Senators M. Mansfield, J. Boogs, C. Pell and B. Smith to the Committee on Foreign Relations, U.S. Senate, Febr. 25, 1963. (Զեկուցմանը հավելված "The Vietnam Conflict: The Substance and the Shadow". Report to the Committee on Foreign Relations, U.S. Senate, Jan. 6, 1966, 89th Congress, 2nd Session, U.S. Government Printing Office. Wash., 1966, p. 24).
[4] State Department Statement. Jan. 7, 1961. — "Department of State Bulletin", Jan. 23, 1961, p. 117.
[5] **R. F. Kennedy.** Op. cit., p. 117—118.
[6] Statement by President Kennedy. March 23, 1961. — "Department of State Bulletin", Apr. 17, 1961, p. 543—544.
[7] **Hugh Sidey.** Op. cit., p. 76—77, 81.
[8] Joint Communiqué of President Kennedy and Prime Minister Macmillan-Key West, March 26, 1961. — "Department of State Bulletin", Apr. 17, 1961, p. 544.
[9] British Aide Memoire to the Soviet Union. March 23, 1961.— "Department of State Bulletin", Apr. 17, 1961, p. 545.
[10] **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 339.
[11] "New York Times", March 24, 1961.
[12] Դեկլարացիայի և արձանագրության անգլերեն տեքստը տե՛ս "Department of State Bulletin", Aug. 13, 1962, p. 259—263.
[13] Joint Communiqué of President Kennedy and King Savang Vatthana of Laos. Wash., Febr. 27, 1963. — "Department of State Bulletin", March 25, 1963, p. 447—448.

[14] "Department of State Statement", Apr. 8, 1963; "Department of State Bulletin", Apr. 29, 1963, p. 646.

[15] **James Reston.** The Artillery of the Press: Its Influence on American Foreign Policy. N.Y., 1966, p. 4.

[16] *Մեջբերումը՝* "Political Affairs", July 1962, p. 21.

[17] "Peace in Vietnam". A Report Prepared for the American Friedens Service Committee, USA, 1961, p. 43.

[18] "The Vietnam Conflict: The Substance and the Shadow". Report of Senators M. Mansfield, S. Muskie, K. Inoceye, D. Aiken and J. Boogs to the Committee on Foreign Relations, U.S. Senats, Febr. 6, 1966, 89th Congress, 2nd Session U.S. Government Printing Office, Wash., 1966, p. 19; Congressional Record. Aug. 16, 1961, p. 14886; U.S. Congress. Committee on Foreign Relations. Situation in Vietnam, July 30, 1959, p. 204.

[19] News Conference Statement by Secretary of State Rusk. May 4, 1961. — "Department of State Bulletin", May 22, 1961, p. 757—758.

[20] Letter from President Kennedy to President Ngo Dinh Diem. Oct. 24, 1961. — "Department of State Bulletin", Nov. 13, 1961, p. 810.

[21] News Conference Statement by Secretary Rusk. Nov. 17, 1961. — "Department of State Bulletin", Dec. 4. 1961, p. 920—921.

[22] *Մեջբերումը* "Political Affairs", July, 1962, p. 25.

[23] Ibid.

[24] "New York Times", Febr. 18, 1962.

[25] "New York Times", Febr. 21, 1962.

[26] **P. Salinger.** With Kennedy, p. 320.

[27] *Մեջբերումը* **James Reston.** Op. cit., p. 25.

[28] Ibid., p. 26.

[29] Letter from President Kennedy to President Ngo Dinh Diem. Dec. 14, 1961. — "Department of State Bulletin", Jan. 1, 1962, p. 13.

[30] Statement by the President. May 15, 1962. — "Department of State Bulletin", June 4, 1961, p. 904—905.

[31] "New York Times Magazine", Sept. 18, 1966.

[32] **Hans J. Morgenthau.** Vietnam and the United States. Wash., D.C., 1965.

[33] Ibid., p. 69.

[34] Ibid., p. 64.

[35] Ibid.

[36] **A. M. Schlesinger Jr.**, Op. cit., p. 541.

[37] Ibid., *ինչպես նաև տե՛ս* **R. Hilsman.** To move a Nation. N.Y., 1967, p. 420.

[38] **R. Hilsman.** Op. cit., p. 420.

[39] "Political Affairs", July 1962, p. 28.



[40] **R. Hilsman.** Op. cit., p. 421—424; **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 545—546.

[41] "New York Times", Apr. 11, 1962.

[42] **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 547—548.

[43] Press-conference of President Kennedy. Jan. 31, 1962. — "New York Times", Febr. 1, 1962.

[44] Communiqué on the Meeting of the ANZUS Council. Canberra, May 8—9, 1962. — "Department of State Bulletin", May 28, 1962, p. 869—871.

[45] "Vietnam and Southeast Asia". Report of Senators M. Mansfield, J. Boogs, C. Pell and B. Smith to the Committee on Foreign Relations, U.S. Senate, Febr., 25, 1963. *(Զեկուցմանը համեմատած՝* "The Vietnam Conflict: The Substance and the Shadow". Report to the Committe on Foreign Relations, U.S. Senate Jan. 6, 1966, 89th Congress, 2nd Session, U.S. Government Printing Office, Wash., 1966, p. 17, 21).

[46] **P. Salinger.** Op. cit., p. 325.

[47] **Th. Sorensen.** Op. cit., p. 656.

[48] Adress by Secretary of State Rusk. Apr. 18, 1963. — "Department of State Bulletin", May 6, 1963, p. 679—684.

[49] "Vietnam and Southeast Asia". Report of Senators M. Mansfield, J. Boogs, C. Pell and B. Smith to the Committee on Foreign Relations U.S. Senate, Febr. 25, 1963. *(Համեմատած՝ զեկուցմանը* "The Vietnam Conflict: The Substance and the Shadow", p. 17—32).

[50] Ibid.

[51] News Conference Statement by President Kennedy. July 17, 1963. — "New York Times", July 18, 1963.

[52] "Department of State Bulletin", Sept. 9. 1963, p. 398.

[53] **Th. Sorensen.** Op. cit., p. 658.

[54] **R. Hilsman.** Op. cit., p. 515.

[55] **Th. Sorensen.** Op. cit., p. 659; "Newsweek", Sept. 23, 1963.

[56] **Th. Sorensen.** Op. cit., p. 659—660.

[57] White House Statement. Oct. 2, 1963. — "Department of State Bulletin", Oct. 21, 1963, p. 624.

[58] **Tom Wicker.** JFK and LBJ: The Influence of Personality Upon Politics. N.Y., 1968, p. 186.

[59] Ibid., p. 185—186.

[60] Ibid., p. 205.

[61] News Conference Statement by Secretary of State Rusk. Nov. 8, 1963.—"Department of State Bulletin", Nov. 25. 1963. p. 810—817.

[62] "Documents on American Foreign Relations, 1963". Ed. by R. Stebbins, p. 297.

[63] Interview with Walter Cronkite of Columbia Broadcasting System.

Sept. 2, 1963.— "Department of State Bulletin", Sept. 30, 1963, p. 498—499.

64 "U.S. News and World Report", June 23, 1969, p. 30.

65 "The Gulf of Tonkin. The 1964 Incidents". Hearing before the Committee on Foreign Relations, U.S. Senate, 90th Congress, 2nd Session, Febr. 20, 1968. U.S. Government Printing Office, Wash., 1968.

66 **Clark Clifford.** A Vietnam Reappraisal.— "Foreign Affairs", July 1969, p. 604—605.

67 "Present Situation in Vietnam". Hearing Before the Committee on Foreign Relations, U.S. Senate, 90th Congress, 2nd Session, March 20, 1968, U.S. Government Printing Office, Wash., 1968, p. 35.

68 "Stalemate in Vietname". Report to the Committee on Foreign Relations, U.S. Senate by Joseph S. Clark, Febr., 1968, 90th Congress, 2nd Session, U.S. Government Printing Office, Wash., 1968, p. 24.

69 **Frank Armbuster, Raymond Gastil, Herman Kahn, William Praff, Edmund Stillman.** Can We Win Vietnam? N.Y., 1968, p. 44, 47.

70 Ibid., p. 208.

71 Ibid., p. 307.

72 Ibid., p. 154—155.

73 Message of President Kennedy to the Congress. March 22, 1961.— "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins, p. 38.

74 «Народы Азии и Африки», 1962 г., № 2, с. 39.

75 Message of President Kennedy to the Congress. March 22, 1961.— "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins, p. 40.

76 "Department of State Bulletin", Apr. 10, 1961, p. 507; "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins, p. 43.

77 Ibid., p. 510.

78 Ibid., p. 48—49.

79 Цит. по **М. Александров.** Экономическая экспансия США в Индии (1947—1961)». М., 1963, с. 61.

80 "Department of State Bulletin", Sept. 11, 1961, p. 454.

81 "New York Times", May 27, 1961.

82 "Department of State Bulletin", Apr. 10, 1961, p. 511; "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins, p. 46.

83 Message of President Kennedy to the Congress. Sept. 23, 1962.— "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by Stebbins.

84 "Department of State Bulletin", May 15, 1961, p. 703.

85 Ibid., p. 704.



86 Ibid., p. 705.

87 Ibid., p. 707.

88 Ibid., p. 708.

89 "Department of State Bulletin", June 19, 1961, p. 960—961.

90 "Department of State Bulletin", Aug. 7, 1961, p. 240—241.

91 U.N. Documents S/5134, June 22, 1962.

92 "Department of State Bulletin", Dec. 17, 1962, p. 918.

93 Joint Communiqué of President Kennedy and Prime Minister Jawaharlal Nehru of India. Wash., Nov. 9, 1961.— "Department of State Bulletin", Dec. 4, 1961, p. 927—928.

94 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 525—526. *Ներուի հետ Քենեդիի հանդիպման մասին տես նաև՝* **Th. Sorensen.** Op. cit., p. 578—579.

95 "American Foreign Policy. Current Documents, 1961", p. 958.

96 Statement by Ambassador Adlai E. Stevenson, Permanent Representative of the United States.— "Department of State Bulletin", Jan. 22, 1962, p. 145—146.

97 U.N. Documents S/5033, Dec. 18, 1961.

98 Ibid.

99 Statement by the President. Nov. 20, 1962.— "Department of State Bulletin", Dec. 10, 1962, p. 874.

100 "Department of State Statement", Nov. 17, 1962; Dec. 3, 1962, p. 837—838.

101 *Ամերիկյան արտաքին քաղաքականության այդ ասպեկտի մանրամասն նկարագրությունը պարունակվում է*

**John Kenneth Galbreith.** Ambassador's Journal. Boston, 1969.

102 *Քաշմիրի պրոբլեմի վերաբերյալ ԱՄՆ-ի տակտիկայի մասին տես՝* **Th. Sorensen.** Op. cit., p. 664.

103 Ibid.

104 "Congressional Record", June 27, 1962, p. 11902.

105 "Congressional Record", May 11, 1961, p. 7806.

106 **John F. Kennedy.** A Compendium of Speeches, Statements and Remarks. N.Y., 1962, p. 1093—1095.

107 "Department of State Bulletin", Febr. 12, 1962, p. 251—252.

108 "Keesing's Contemporary Archives", 1961, July 22—28, p. 18229-A.

109 "External Assistance 1965—66", p. 157—158.

110 "Keesing's Contemporary Archives". 1964, June 27, July 4, p. 20154-A.

111 "Congressional Record", Dec. 19, 1963, p. 25102.

112 U.S. Treaties and Other International Agreements. 1963, vol. 14, Part 2, p. 1484—1485.

113 "Statistical Abstract of the United States", 1966, p. 870.

114 *Քենեդիի կառավարության վերը նշված հարցի հետ բավական խիստ վիճաբանություն է պարունակվում* "Congressional Record", May-Aug., 1963, *ինչպես նաև ամերիկյան մամուլում։*

114 "Congressional Record", May-Aug., 1963.
115 "Survey of Current Business", Aug., 1964, Sept. 1966.
116 "Survey of Current Business", Aug. 1964.
117 Joint Communiqué of President Kennedy and President Sarvepalli Radhakrishnan of India. Wash., June 4, 1963. — "Department of State Bulletin", June 24, 1963, p. 969—970.

## ԳԼՈՒԽ VI

1 **John F. Kennedy.** The Strategy of Peace. N.Y., 1960, p. 125—128.
2 Ibid., p. 130.
3 Ibid., p. 131.
4 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 554.
5 United Nations General Assembly Resolution 1603 XV. Apr. 20, 1961. — "Official Records. Fifteenth Session. Supplement No 16A (A 4684/Add. 1)", p. 18—19.
6 Resolution of the Security Council, Adopted June 9, 1961 (U.N. Document S/4835).
7 Statement by Stevenson to the United Nations Security Council. March 15, 1961. — "Department of State Bulletin", Apr. 3, 1961, p. 497—499.
8 "New York Times", July 29, 1963.
9 **Th. Sorensen.** Op. cit., p. 635—636.
10 Statement by President Kennedy. Febr. 15, 1961. — "Department of States Bulletin", March 6. 1961, p. 332—333.
11 Resolution of the United Nations General Assembly, Official Records, Fifteenth Session, Supplement No 16A (A/4684/Add.1) p. 17—18. General Assembly Resolution 1599 (XV); General Assembly Resolution 1600 (XV); General Assembly Resolution 1601 (XV).
12 Resolution of the United Nations Security Council, Adopted Febr. 21, 1961 (U.N. Document S/4741).
13 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 576.
14 Ibid.
15 Statement by Ambassador Stevenson to the United Nations Security Council, Nov. 16, 1961. "Department of State Bulletin", Dec. 25, 1961, p. 1061—1063.
16 News Conference Statement by Secretary Rusk. Dec. 8, 1961.— "Department of State Bulletin", Dec. 25, 1961, p. 1053—1054.
17 State Department Statement. Dec. 15, 1961. — "Department of State Bulletin", Jan. 1, 1962, p. 10—11.
18 State Department Statement. Dec. 17, 1961. — "Department of State Bulletin", Jan. 1, 1962, p. 11.
19 Ibid.



20 The Agreement of Kitona, Dec. 21, 1961. — "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins, p. 355.
21 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 577.
22 Ibid., 578.
23 Appeal by the Acting Secretary — General of the United Nations to the State Members of the United Nations (U.N. Documents S/5053/Add. 11, Aug. 21, 1962, Annex XXV, p. 1—3); United Nations Review, Sept. 1962, p. 53; Statement by the Acting Secretary-General, Aug. 20, 1962, United Nations Review, Dec. 1962, p. 41—43.
24 State Department Statement. Aug. 25, 1962. — "Department of State Bulletin", Sept. 10, 1962, p. 379—380.
25 President Kennedy and Foreign Minister Paul Henri Spaak. Wash., Nov. 27, 1962. — "Department of State Bulletin", Dec. 17, 1962, p. 917.
26 **A. M. Schlesinger Jr.** Op. cit., p. 578.
27 Statement by Secretary-General U Thant. Dec. 31, 1962.— "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 316.
28 Union of South Africa, Treaty Series No 3(1933); The Government Printing Pretoria 1933; Union of South Africa, Treaty Series No 9 (1948), Wash., 21st March, 1947;
Treaties and Other International Acts Series 2424 (1952), 2870 (1954), 3885 (1957), 4562 (1960), 5129 (1962). U.S. Government Printing Office, Wash., USA.
29 «Бюллетень иностранной коммерческой информации (БИКИ)», 31 января 1968 г.
30 Там же.
31 "Fortune", Dec., 1966, p. 180.
32 "Time", Aug. 1966, p. 20.
33 "Sunday Times", July 30, 1967.
34 Ibid.
35 "Department of State Bulletin", March 21, 1966, p. 434.
36 "Business Report", March 26, 1965.
37 Statement by Francis T. P. Plimpton to the Special Political Committee of the United Nations General Assembly, March 30, 1961. — "Department of State Bulletin", Apr. 24, 1961, p. 280—281.
38 United Nations General Assembly Resolution 1761 (XVII), Nov. 6, 1962. "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 326—328.
39 Statement by United States Representative Adlai E. Stevenson. Aug. 2, 1963. — "Department of State Bulletin", Aug. 26, 1963, p. 333—337.
40 Ibid., p. 335.

[1] "U.S. News and World Report", May 23, 1958, p. 96.
[2] Ibid.
[3] Ibid., p. 6.
[4] Ibid., p. 44.
[5] Ibid.
[6] "Department of State Bulletin", Apr. 24, 1958, p. 608.
[7] Ibid., p. 609.
[8] "Newsweek", Apr. 28, 1958, p. 32.
[9] "Fortune", Febr., 1958.
[10] *Մեջբերումը* "American Socialist", March, 1958, p. 16.
[11] "Keesing's Contemporary Archives", Sept. 6—13, 1958, p. 16377.
[12] Ibid., p. 16378.
[13] "Department of States Bulletin", Aug. 25, 1958, p. 307.
[14] "Department of State Bulletin", Apr. 3, 1961, p. 471—474; "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins, p. 396.
[15] Alliance for Progress: Official Documents, O.A.S. Document OEA (Ser. H) XII. I, English; Washington: Pan American Union, (1961, p. 1—24; *տե՛ս նաև* "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins, p. 416—435.
[16] "Documents on American Foreign Relations, 1961". Ed. by R. Stebbins, p. 401, 406, 412.
[17] *«Էքսպերտների կոմիտեի ֆունկցիաները ու լիազորությունները շարադրված են Խարտիայի V բաժնում (կ. 1—8)։ Քեննեդին այդ կոմիտեի ստեղծումը «պատմական իրադարձություն» անվանեց»*
(Department of State Bulletin", Dec. 18, 1961, p. 999—1000).
[18] *Ելույթ ունենալով Պունտա-դել Էստեում, ԱՄՆ-ի ֆինանսների մինիստր Դ. Դիլոնը, ձայնակցելով Քեննեդիին, հայտարարում էր, որ Լատինական Ամերիկան պետք է տարեկան աճերի 5 %-ից ոչ պակաս աճ ունենա։ Այդ դեպքում բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքը տարեկան աճելու էր 2,5 %-ով։*
("Department of State Bulletin", Aug. 28' 1961, p. 356—357).
[19] "Statement at San Carlos Palace". Bogota, Columbia, Dec. 17, 1961; John F. Kennedy. The Burden and the Glory. Ed by Allan Nevins, 1964, p. 151—153.
[20] Remark During the Visit to Venezuela. Dec. 16—17. 1961 (Public Papers, 1961).
[21] "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 329.
[22] Ibid., p. 330.
[23] Ibid., p. 333.
[24] Ibid., p. 336.



[25] "Department of State Bulletin", Febr. 19, 1962, p. 278—282.
[26] "Documents on American Foreign Relations' 1962". Ed. by R. Stebbins, p. 344.
[27] Report to the Nation Secretary Rusk. Febr. 2, 1962. — "Department of State Bulletin", Febr. 19, 1962, p. 268.
[28] Ferguson and McHenry. The American System of Government. N.Y., 1967, p. 442.
[29] Adress by the President at the White House. March 13, 1962. — "Department of State Bulletin", Apr. 2, 1962, p. 539.
[30] Special Message of he President to Congress. Wash., March 12, 1962; **John F. Kennedy.** Op. cit., p. 154.
[31] Ibid., p. 154.
[32] Adress by the President at the White House. March 13, 1962.— "Department of State Bulletin", Apr. 2, 1962, p. 541.
[33] Ibid., p. 541.
[34] Ibid., p. 542.
[35] "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 366.
[36] News Conference of the President. Dec. 12, 1962; **John F. Kennedy.** Op. cit., p. 156—157.
[37] Statement by United States Representative Averell Harriman. Nov. 13, 1963. — "Documents on American Foreign Relations, 1963". Ed. by R. Stebbins, p. 398.
[38] Ibid., p. 404.
[39] Remarks by President Kennedy to the Inter-American Press Association, Florida, Nov. 18, 1963. — "Department of State Bulletin", Dec. 9, 1963, p. 900.
[40] Remarks by President Johnson to Latin American Delegates to the Funeral of President Kennedy. The White House, Nov. 26, 1963. — "Department of State Bulletin", Dec. 16, 1963, p. 913.
[41] "Time", July 11, 1969, p. 26.
[42] Ibid.
[43] "U.S. News and World Report", June 23, 1969, p. 50.
[44] Ibid., p. 50.
[45] News Conference Comments by President Kennedy. Apr. 3, 1963.— "Documents on American Foreign Relations, 1963". Ed. by R. Stebbins, p. 390.
[46] Statement by Secretary of State Rusk. Oct. 4, 1963. — "Department of State Bulletin", Oct. 21, 1963, p. 624.
[47] News Conference Comments by President Kennedy. Oct. 9, 1963.— "Documents on American Foreign Relations, 1963". Ed. by R. Stebbins, p. 392—393.

48 Department of State Statement, Dec. 14, 1963. — "Department of State Bulletin", Dec. 30, 1963, p. 997.

49 Ibid.

## ԳԼՈՒԽ VIII

1 Joint Statement by President Kennedy and Prime Minister Harold Macmillan. Wash., Apr. 8, 1961. — "Department of State Bulletin", Apr. 24, 1961, p. 579.

2 Joint Communiqué and Statement on Discussions between the President and the Prime Minister. Nassau, Bahamas, Dec. 18—21. — "Department of State Bulletin", Jan. 14, 1963, p. 43—45.

3 "Times", Sept. 11, 1962.

4 "Newsweek", Jan. 28, 1963.

5 "Documents on American Foreign Relations, 1961", Ed. by Stebbins, p. 265—269; "Documents on American Foreign Relations, 1962", p. 249—250; "Documents on American Foreign Relations, 1963", p. 201—203.

6 Message of President Kennedy to the Permanent North Atlantic Council in Paris. Febr. 15, 1961. — "Department of State Bulletin", March 6, 1961, p. 333—334.

7 Statement by President Kennedy to the NATO Military Committee. Wash., Apr. 10, 1961. — "Department of State Bulletin", May 1, 1961, p. 647—648.

8 Communiqué on the Ministerial Meeting of the North Atlantic Council Oslo, May 8—10, 1961. — "Department of State Bulletin", May 29, 1961, p. 801—802; Communiqué on the Ministerial Meeting of the North Atlantic Council. P., Dec. 13—15, 1961. — "Department of State Bulletin", Jan. 8, 1962, p. 51—52.

9 "Documents on American Foreign Policy", Ed. by R. Dyrnhins, 1962, p. 226.

10 Address by President Kennedy to the Canadian Parliament. Ottawa, May 17, 1961. — "Department of State Bulletin", June 5, 1961, p. 839—843.

11 The State of the Union: Message of President Kennedy Delivered to the Congress. Jan. 30, 1961. — "Documents on American Foreign Relations, 1961", Ed. by R. Stebbins, p. 19—20.

12 **G. W. Ball.** The Discipline of Power. L., 1968, p. 60.

13 "Department of State Bulletin", July 23, 1962, p. 131—133.

14 "Department of State Bulletin", Dec. 25, 1961, p. 1039—1047.

15 "Documents on American Foreign Relations, 1961", Ed. by R. Stebbins, p. 112.

16 Ibid., p. 117—118.

17 Message of the President to the Congress. Jan. 25, 1962. — "Documents on American Foreign Relations, 1962". Ed. by R. Stebbins, p. 482—496.



18 Ibid., p. 487.

19 Official Summary of the Trade Expansion Act, Public Law 87—794, Approved Oct. 11, 1962. — "Department of State Bulletin", Oct. 29, 1962, p. 658—660.

20 **G. W. Ball.** Op. cit., p. 63.

21 Ibid., p. 3.

22 Ibid., p. 66.

23 «Международное совещание коммунистических и рабочих партий. Документы и материалы. Москва, 5—17 июня 1969 г.», М., 1969, с. 45.

24 **Hugh Sidey.** Op. cit., p. 403.

25 Ibid., p. 403.

26 Ibid., p. 404—405.

27 Statement at Assembly Hall of Paulskirche, Frankfurt, F.R.G. June 25, 1963; **John F. Kennedy.** Op. cit., p. 114—120.

28 Ibid., p. 139.

29 "Foreign Affairs", Oct. 1966, p. 50.

30 Ibid., p. 57.

31 Ibid., p. 49.

32 **Լ. Ի. Բրեժնև.** *Ճառեր և հոդվածներ, հ. 1, էջ 490։*

33 United States Foreign Policy 1969—1970. A Report of the Secretary of State. — "Department of State Publication", March 1971, p. 111.

34 "United States Relations with Europe...", p. 135.

35 "U.S. Forces in Europe. Hearings before the Subcommittee on Arms Control International Law and Organization of the Committee on Foreign Relations. U.S. Senate 93nd Congress. 1st Session, July 25 and 27, 1973", G.P.O. Wash., 1973, p. 10.

36 "United States Relations with Europe...", p. 425, 427.

37 «Конференция коммунистических и рабочих партий Европы. Берлин, 29—30 июня 1976 года». М., 1977, с. 75.

## ԳԼՈՒԽ IX

1 *Ավելի մանրամասն տես՝* **В. Загладин, И. Фролов.** Глобальные проблемы современности. — «Коммунист», 1976 г., № 16; «Проблема окружающей среды в мировой экономике и международных отношениях». М., 1976.

2 **Լ. Ի. Բրեժնև.** *Լենինյան կուրսով. Ճառեր և հոդվածներ, հ. 4, էջ 93։*

3 *Ավելի մանրամասն տես՝* «Экономические связи Восток-Запад: проблемы и возможности», М., 1976.

4 Ավելի մանրամասն տես՝ «СССР—США: экономические отношения», М., 1976.
5 «Правда», 16 сентября 1977 г.
6 «Правда», 17 сентября 1977 г.
7 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Եր., 1972, էջ 21—22։
8 "United States Foreign Policy for the 1970's. Building for Peace. A Report by President Richard Nixon to the Congress, February 25, 1971", Wash., 1971, p. 5.
9 Ibid., p. 224.
10 "United States Foreign Policy for the 1970's. A New Strategy for Peace. A Report to the Congress by Richard Nixon President of the United States. February 18, 1970". Wash., 1970, p. 9.
11 "United States Foreign Policy for the 1970's. Building for Peace. A Report by President Richard Nixon to the Congress. February 25, 1971", p. 221.
12 Ibid.
13 Ibid.
14 "Science, Technology and American Diplomacy. The Evolution of International Technology. Subcommittee on National Security Policy and Scientific Developments. Dec. 1970". Wash., 1971, p. 57.
15 Տե՛ս «Правда», 3 ноября 1971 г.
16 "Vital Speeches of the Day", June 1, 1971, p. 497.
17 Ibid.
18 Երկրագնդի ժողովրդաբնակչության առավել տարածված կանխագուշակումը 2000 թվականին 7 մլրդ. մարդ է, ընդ որում զարգացող երկրներին ընկնում է շուրջ 80 %։ Ներկայումս բնակչությունը կազմում է մոտ 4 մլրդ. զարգացող երկրներում բնակվում է մոտավորապես 70 %։
19 "Vital Speeches of the Day", June 1, 1971, p. 497.
20 Ibid.
21 **S. T. Possony, J. E. Pournelle.** The Strategy of Technology. Winning the Decisive War. University Press of Cambridge. 1970.
22 Ibid., p. 3—4.
23 **Z. Brzezinski.** Between Two Ages. N.Y., 1970, p. 74; "U.S. Relations with Europe in the Decade of the 1970's. Hearings before the Subcommittee on Europe of the Committee on Foreign Affairs. House of Representatives, 91st Congress, 2nd Session, February, April 1970". Wash., 1970, p. 230, 233.
24 **W. R. Kinter** and **H. Sicherman.** Technology and International Politics: The Crisis of Washington. — "Orbis", Spring 1971, vol. XV, No. 1, p. 13.
25 Ibid., p. 14.
26 **M. Mcluhan.** Understanding Media: The Extensions of Man. New York — Signet, 1964.
27 **W. R. Kinter** and **H. Sicherman.** Op. cit., p. 27.



28 "The Future of the International Legal Order", vol II. — "Wealth and Resources". Princeton-New Jersey, 1970.
29 Ibid., p. IX—X.
30 Ibid., p. IX.
31 "Department of State Bulletin", March 15, 1971, p. 342.
32 Ibid.
33 Ibid.
34 Ibid.
35 **Ph. H. Trezise.** Multinational Corporation. Policy Implications. — "Vital Speeches of the Day", June 1, 1971, p. 494.
36 Ibid.
37 "Department of State Bulletin", March 15, 1971, p. 322. "International Economic Report of the President". U.S. Government Printing Office. Wash., 1974.
38 "National Aeronautics and Space Activities During 1970. Message from the President of the United States. Washington. February 2, 1971".
39 "A General Review of International Cooperation in Science and Space. Hearings before the Subcommittee on International Cooperation in Science and Space. Washington, May, 1971", p. 70.
40 Ibid.
41 "National Aeronautics and Space Activities During 1970. Message from the President of the United States. Washington, February 2, 1971".
42 "Address by William Rogers. U.S. Foreign Policy in a Technological Age. International Science Policy. A Compilation of Papers Prepared for the 12th Meeting of the Panel on Science and Technology". Wash., 1971, p. 2.
43 "A General Review of International Cooperation in Science and Space...", p. 67.
44 Ibid.

## ԳԼՈՒԽ X

1 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ և Սովետական պետության արտաքին քաղաքականության մասին։ Ճառեր և հոդվածներ. Եր., 1977, էջ 601։
2 Լ. Ի. Բրեժնև, Տուլայի պաշտպանների մեծ սխրանքը։ Եր., 1978, էջ 16։
3 Վ. Ի. Լենին. Երկ., հ. 26, էջ 356։
4 «Программные документы борьбы за мир, демократию и социализм». М., 1964, с. 57.
5 Նույն տեղը, էջ 57—58։
6 ՍՄԿԿ գաղափարական աշխատանքի մասին։ Փաստաթղթերի ժողովածու։ Եր. 1978, էջ 294։
7 «Международное совещание коммунистических и рабочих пар-

тий. Документы и материалы. Москва, 5—17 июня 1969 г.», с. 288.

[8] *Տե՛ս Վ. Ի. Լենին. Երկ., հ. 44, էջ 438։*

[9] *Վ. Ի. Լենին. Երկ. հ. 40, էջ 178։*

[10] *«ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», էջ 36։*

[11] *Նույն տեղը, էջ 30։*

[12] *Նույն տեղը։*

[13] **Гэс Холл.** Два мира.— «США: экономика, политика, идеология», 1971 г., №6, с. 4.

[14] **M. B. Ridgway.** Indochina: Disengaging. — "Foreign Affairs", July 1971, p. 591—592.

[15] Ibid., p. 587.

[16] Ibid., p. 584—585.

[17] **J. W. Fulbright.** Reflections.— "New Yorker", Jan. 8, 1972, p. 41.

[18] Ibid., p. 42.

[19] Ibid., p. 57.

[20] *«ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», էջ 35։*

[21] "Weekly Complication of Presidental Documents", Dec. 9, 1974, p. 1514.

[22] Ibid.

[23] "Department of State Bulletin", Sept. 1, 1975, p. 312.

[24] "Department of State Bulletin", Dec. 14, 1974, p. 505.

[25] "Weekly Compilation of Presidental Documents", Aug. 12, 1975, p. 1016.

[26] Ibid., p. 1034.

[27] "Washington Post", June 28, 1977.

[28] "New York Times", June 24, 1977.

[29] "Christian Science Monitor", July 29, 1977.

[30] "Time", July 18, 1977, p. 24.

[31] "Newsday", March 29, 1977.

[32] "U.S. News and World Report", July 11, 1977, p. 35.

[33] "Washington Post", July 11 1977.

[34] "International herald Tribune", July 1, 1977.

[35] Լ. Ի. Բրեժնև. *Լենինյան կուրսով, ճառեր և հոդվածներ, հ. 4, էջ 322։*

[36] *«ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», էջ 29։*

[37] Լ. Ի. Բրեժնև. *Ճառ ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի պլենումում 1976 թվականի հոկտեմբերի 25-ին. Եր. 1977, էջ 40—41։*

[38] International Economic Report of the President, January 1977. — "U.S. Trade Status with Communist Countries", Febr. 15, Aug. 8, 1977.

[39] "Journal of Commerce", May 3. 1977.

[40] *«ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», էջ 61։*

[41] Լ. Ի. Բրեժնև. *Լենինյան կուրսով, ճառեր և հոդվածներ, էջ 732։*

[42] *Տե՛ս* «Правда», 16 ноября 1977 г.



[43] Цит. по «Правда», 29 октября 1977 г.

[44] *Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի այցելությունը Սիբիր և Հեռավոր Արևելք, 1978 թվականի մարտ-ապրիլ։ Եր. 1978, էջ 38։*

[45] *Նույն տեղը, էջ 48։*

[46] "New York Times", June 1, 1978.

[47] XXV съезд КПСС. Бюллетень № 1. М., 1976, с. 53.

[48] «Правда», 23. 2. 1980.

[49] «Правда», 23. 2. 1980.

[50] Լ. Ի. Բրեժնև. *Տուլայի պաշտպանների մեծ սխրանքը, էջ 17։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*Հայերեն հրատարակության առաջաբան* . . . . . . 3
*Առաջաբան* . . . . . . . . . . . 9

Գլուխ I

ԱՄՆ-Ի ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 15

Գլուխ II

ՔԵՆԵԴԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. «ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԾԵՐ» ԵՎ ՀԻՆ ՎՐԻՊՈՒՄՆԵՐ . . 61

Գլուխ III

1962 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻԲՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ . . . . . 107

Գլուխ IV

ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ (1961—1968 ԹԹ.) . . . . . 147

Գլուխ V

ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿՈՒՐՍԸ ԱՍԻԱՅՈՒՄ՝ ԼԱՅՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՆԱԽԱՍԿԻԶԲ . . 185

Գլուխ VI

ՔԵՆԵԴԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ . . . . . . . . . . 250

Գլուխ VII

ՔԵՆԵԴԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՈՒ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ . . . . . . . . . . 274





Գլուխ VIII

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՒԺԵՐԻ ԻՆՏԵԳՐԱՑՄԱՆ ԿՈՒՐՍ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ . . . . . . . . . 298

Գլուխ IX

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ . . . . . . . . . . 324

Գլուխ X

ՍՈՎԵՏԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ . . . . . . . . . 353

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . . . . . 401

Անատոլի Անդրեևիչ Գրոմիկո

**ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Դասեր և իրականություն
60—70-ական թվականներ

Анатолий Андреевич Громыко

**ВНЕШНЯЯ ПОЛИТИКА США
УРОКИ И ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬ 60—70-е ГОДЫ**

(На армянском языке)

Ереван-1981

Издательство «Айастан»

*Հրատ. խմբագիր՝ Ի. Ս. Բոստյան*
*Նկարիչ՝ Ս. Գ. Սաֆյան*
*Գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան*
*Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան*
*Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Ն. Տատայան*

ИБ 3101

*Հանձնված է շարվածքի 14.05.81 թ.։*
*Ստորագրված է տպագրության 3.06.81 թ.։*
*Ձևաչափ $84\times108^{1}/_{32}$։ Թուղթ տպագր. № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 22,47 պայմ. տպագր. մամ.։ Հրատ. 19,72 մամ.։ Պատվեր՝ 708։ Տպաքանակ՝ 5000։ Գինը՝ 1 ռ. 90 կոպ.։*
*«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։*
*ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան փողոց № 23/1։*

Типография № 6, Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР.
Ереван, ул. Туманяна, 23/1.